ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

2018 թվական

Հատոր X

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
2019

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411
Հ 247

Խմբագիր՝

Լիլիթ Թադևոսյան
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կազմեցին՝

Էմիլյա Աբրահամյան
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական,
ՀՌՀ Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

Արմեն Հովհաննիսյան
ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ դասախոս

Ժենյա Ստեփանյան
ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ դասախոս

Տաթևիկ Սուջյան
ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ դասախոս

Առնոլդ Վարդանյան
ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ, ԵՊՀ դասախոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

Անի Կիրակոսյան
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական

Հ247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ընտրանի (Խմբ.՝ Լ.Թադևոսյան, կազմ.՝ Է.Աբրահամյան, Ա.Հովհաննիսյան, Ժ.Ստեփանյան, Տ.Սուջյան, Ա.Վարդանյան, Ա.Կիրակոսյան). – Եր.: Կոմպյուտեր Սերվիս, 2019, Հ. X. – 956 էջ:

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411

ISBN 978-9939-75-257-0

Գիրքը վաճառքի ենթակա չէ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով 2018թ. որոշումների ընտրանիի տպագրությունն իրականացվել է **«Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում»** ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի **«Գործընկերություն հանուն լավ կառավարման»** կառուցակարգի շրջանակներում: Սույն ընտրանիի մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 7
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում 11
Աղբյուրների ցանկ թիվ 1.
ՀՀ Սահմանադրության դրույթներ 23
Աղբյուրների ցանկ թիվ 2.
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ 25
Աղբյուրների ցանկ թիվ 3.
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ 28
1. Է.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0026/01/17 29
2. Ռ.Վանյանցի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0079/11/17 41
3. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0205/06/17 57
4. Հ.Գրիգորյանի և Է.Սարիբեկյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0131/01/15 70
5. Ս.Լսկավյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0303/01/16 92
6. Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0258/01/16 106
7. Լ.Զաքոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0255/11/15 121
8. Ռ.Չանախչյանի վերաբերյալ որոշում, ՍԴ1/0033/01/16 141
9. Տ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԳԴ1/0058/01/16 156
10. Գ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0006/01/17 170
11. Ս.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0018/11/17 180
12. Ք.Մանուկյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԿԴ/0056/11/17 194
13. Գ.Սերոբյանի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0077/01/16 208
14. Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0001/01/16 222
15. Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0130/06/17 235
16. Լ.Սողոմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0274/01/15 251
17. Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-17/08 262
18. Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0010/01/17 278

19. Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում (բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԷԴ/0063/01/17 290
20. Դ.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0070/06/17 301
21. Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0102/11/17 311
22. Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0231/06/17 321
23. Ս.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0210/01/16 335
24. Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0125/01/14 351
25. Ս.Բաբայանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0189/01/17 359
26. Լ.Վերանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0074/01/17 383
27. Հ.Պապիկյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ1/0018/01/17 397
28. Ա.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-05/12 408
29. Ք.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0056/11/17 421
30. Կ.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0056/01/13 431
31. Մ.Բայդակի վերաբերյալ որոշում, ԵԴ/0129/06/18 445
32. Ն.Նիկողոսյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում), ԱՐԴ/0182/01/11 457
33. Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0063/01/17 468
34. Կ.Կունգուրցևի վերաբերյալ որոշում, ԼԴ/0141/01/14 478
35. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16 494
36. Վ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0030/06/17 514
37. Հ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0007/01/17 524
38. Ա.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0051/01/17 541
39. Ս.Բերակչյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0170/01/16 562
40. Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0007/11/17 571
41. Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0008/12/17 582
42. «Հեսսար» ՍՊ ընկերության վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0006/11/17 592
43. Զ.Իբրահիմյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0099/01/10 603
44. Խ.Բեգլարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0010/01/17 611
45. Ա.Մովսեսյանի և Գ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0006/11/08 622

46. Ս.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0039/01/17 635
47. Հ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/17 646
48. Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0019/15/17 664
49. Ա.Ղուլյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0037/01/15 675
50. Է.Սերոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0753/06/17 706
51. Ն.Նիկողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0182/01/11 716
52. Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0743/06/18 725
53. Ա.Ավետյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0036/11/17 781
54. Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի վերաբերյալ որոշում,
ԵԷԴ/0042/01/16 791
55. Գ.Մանգասարյանի վերաբերյալ որոշում, ՍԴ1/0070/01/17 823
56. Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0299/01/15 838
57. Ռ.Քարամյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0104/01/17 853
58. Ն.Շիրինյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0120/06/18 864
59. Ա.Եղոյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0010/12/18 890
60. Ա.Այվազյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0040/01/16 903
61. Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0063/01/17 930
62. Ռ.Աղաբաբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0023/06/17 940



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ,
2018 ԹՎԱԿԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին կատարված սահմանադրական փոփոխություններով ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի և գործառնական դերի հստակեցումից հետո ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի գործունեությունը միտված է ոչ միայն օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովմանը, այլ նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացմանը: Միասնական իրավակիրառ չափանիշների մշակումն օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սահմանադրորեն ամրագրված սկզբունքի, իրավունքի գերակայության, իրավական որոշակիության հիմնարար արժեքների ապահովման գործուն մեխանիզմ է:

Օրենքի հետևողական և միատեսակ կիրառության և նախադեպային նշանակություն ունեցող որոշումների միջոցով իրավունքի զարգացումն ապահովելու առաքելությամբ պայմանավորված՝ վերը նշված գործունեության ուղղությունների հետևողական կենսագործման արդյունքում՝ տարեց տարի աճում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացվող որոշումների քանակը: Եթե 2017 թվականի ընթացքում կայացվել են թվով 82 որոշումներ, ապա 2018 թվականի ընթացքում դրանք հասել են 108-ի: Այդ որոշումների շարքում ծանրակշիռ նշանակություն ունեն նախադեպային բնույթի որոշումները, որոնք միջազգային լավագույն փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Միավորված ազգերի կազմակերպության բանաձևերի և հանձնարարականների հաշվառմամբ՝ միտված են իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդրահարույց հարցերով միասնական քաղաքականության ձևավորմանը: Վերջինիս կարևորությունն առանձնանում է նաև այն պատճառով, որ նշվածը նպաստում է դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձրացմանն ու խթանում արդարության և արդարադատության վերաբերյալ հանրային ընկալումը՝ այն դարձնելով առավել կանխատեսելի:

ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության ուղղությունների արդյունավետ կենսագործման գրավականն է այդ որոշումների բովանդակության մասին հանրային իրազեկումն ու դրանց մատչելիության ապահովումը: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների հրապարակվող ժողովածուները

ևս ծառայում են այդ նպատակին և արժեբանական կարևոր աղբյուր են՝ նախադեպային նշանակություն ունեցող որոշումներին ծանոթանալու համար:

Ներկայացվող ժողովածուն, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների հոբելյանական 10-րդ հատորն է, ի տարբերություն նախորդների, ներկայացված է որոշակիորեն նոր ձևաչափով: Այն իրենից ներկայացնում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2018 թվականի ընթացքում կայացված որոշումների ընտրանի, որը ներառում է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին 3 որոշումներ, ինչպես նաև նախադեպային նշանակություն ունեցող 59 որոշումներ, որոնցում մշակվել են իրավակիրառ պրակտիկայում ծագող հիմնահարցերի լուծման, նյութական և դատավարական իրավունքի մեկնաբանության առանցքային չափորոշիչներ:

Այսպես, ուշադրության է արժանի *Ռուբեն Աղաբաբյանի* վերաբերյալ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԵԱԴԴ/0023/06/17 որոշումը, որում արտացոլվել են անչափահաս տարիքում ենթադրյալ հանցանք կատարած անձի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու չափանիշները: Այդ գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչդատական վարույթի ընթացքում անչափահաս մեղադրյալի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել բացառիկ դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքներով կիերքվի այլընտրանքային միջոցներով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը չեզոքացնելու հնարավորությունը: Հատկանշական է ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ դատարանները, անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը գնահատելիս, գործի շրջանակներում պետք է հաշվի առնեն անչափահասին հատուկ իրավական երաշխիքներ տրամադրելու հիմքում ընկած պայմանները, ինչպես նաև հիմնավորեն կալանավորման հիմքերի կանխատեսելիության առավել բարձր աստիճանը:

Բացի այդ, կարևոր է հիշատակել *Արտուշ Ղուլյանի* վերաբերյալ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշումը, որի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու պայմաններում հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակման հարցին և որոշակի չափորոշիչների մատնանշմամբ ամրագրել, որ հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակման փաստը հաստատելիս դատարանները բոլոր դեպքերում պետք է փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով հիմնավորեն, որ դատաքննությանը չներկայացած վկայի նախաքննական ցուցմունքների օգտագործման պայմաններում ընդհանուր առմամբ չի խախտվում քրեական վարույթի արդարացիությունը:

Հարկ է հիշատակել նաև *Միեր Հովհաննիսյանի* վերաբերյալ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵՇԴ/0019/15/17 որոշումը, որտեղ անդրադառնալով պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալին Հայաստանի Հանրապետու-

թյունից բացակայելու թույլտվություն տալու իրավասության հարցին, ՀՀ վճռաբեկ դատարանը, անձի հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովումը երաշխավորելու անհրաժեշտությամբ պայմանավորված, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ փորձաշրջանի ընթացքում մշտական բնակության վայրը չփոխելու պարտականություն սահմանված չլինելու պայմաններում պրոբացիայի ծառայության ղեկավարը կարող է իր որոշմամբ դատապարտյալի՝ ՀՀ-ից բացակայելը և պրոբացիայի ծառայության տարածքային մարմին *բացառիկ հանգամանքներով* պայմանավորված որոշակի ժամկետով չներկայանալը համարել թույլատրելի, եթե բավարար չափով և պատշաճ կերպով պատճառաբանում է, որ այդպիսի թույլտվություն տալու հիմքում ընկած շահը *գերակա է* վերահսկողական համապատասխան գործողությունների նկատմամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է առանձնացնել *Արթուր Հակոբյանի* վերաբերյալ 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ՍԴ2/0006/11/16 որոշումը, որով ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանեց, որ քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու անկարողության մասին ստացված փորձագիտական եզրակացությունն ինքնին չի բացառում անձին՝ որպես տուժող կանչելու և հարցաքննելու հնարավորությունը: Նշված գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ փորձագիտական այդպիսի եզրակացությունն ինքնին չի կարող բավարար համարվել հոգեկան հիվանդություն ունեցող անձի լսվելու իրավունքը սահմանափակելու համար: Միաժամանակ, նույն որոշմամբ ամրագրվեց, որ անձի լսվելու իրավունքի սահմանափակման համար անհրաժեշտ է, որ ձեռք բերված տվյալների համակցությունը համոզիչ կերպով վկայի նրան կանչելու և հարցաքննելու անհնարինության ակնհայտ լինելը:

Ուշադրության է արժանի նաև *Տիգրան Գասպարյանի* վերաբերյալ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԳԴ1/0058/01/16 որոշումը, որի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը, միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ, նշել է, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձինք, որպես կանոն, պետք է մասնակից դարձվեն իրենց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին, բացառությամբ այն դեպքերի, երբ ոչ միայն մինչդատական վարույթի ընթացքում հավաքված, այլ նաև դատական քննության ընթացքում ձեռքբերված փաստական տվյալների համակցությունը համոզիչ կերպով կվկայի այն մասին, որ անձի հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրան դատարան ներկայացնել: Ընդ որում, ելնելով հոգեկան հիվանդությամբ տառապող անձի արդար դատաքննության իրավունքի երաշխիքից՝ սահմանվել է, որ այդ դեպքերում դատարանները պետք է քննարկեն բժշկական հաստատությունում արտագնա դատական նիստ անցկացնելու հնարավորության հարցը:

Բացի այդ, հարկ է հիշատակել նաև 2018 թվականի մարտի 20-ի՝ *Հասմիկ Գրիգորյանի* և *Էդուարդ Սարիբեկյանի* վերաբերյալ թիվ ԵՇԴ/0131/01/15, ինչպես նաև *Գագիկ Սարգսյանի* վերաբերյալ թիվ ԵԿԴ/0258/01/16

որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ արարքի հանցավորությունն ու պատժելիությունն իրավական որոշակիության չափանիշին համապատասխանող «օրենքով» նախատեսելու պահանջն իրավունքի գերակայության առանցքային բաղադրիչներից է, որն ունի հիմնարար նշանակություն՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս օրինականության սկզբունքն ապահովելու համար: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ փաստել է, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս «օրենքը», լինելով «հասանելի» և «կանխատեսելի», պետք է հնարավորություն ընձեռի այդ օրենքի հասցեատիրոջը գիտակցելու իր իրավունքների և ազատությունների իրացման թույլատրելի շրջանակները, հարմարեցնելու իր վարքագիծն այդ շրջանակներն ամրագրող նորմերի պահանջներին և գնահատելու իր վարքագծի իրավաչափությունը՝ կանխատեսելով ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքները:

Նախադեպային նշանակություն ունեցող որոշումների սույն ընտրանին ունի ինչպես գործնական, այնպես էլ տեսական նշանակություն: Այն լավագույն միջոց է իրավական հանրության և հասարակության լայն շրջանակների համար՝ արդյունավետորեն հետևելու ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի գործունեության ընթացքին:

Ընտրանին ներառում է նաև լազերային սկավառակ, որում առկա են հատորյակում զետեղված բոլոր դատական ակտերը, ինչն առավել դյուրին է դարձնում դրանց ծանոթանալը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ընտրանու սույն հատորի հրատարակումը հնարավոր է դարձել Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շնորհիվ:

Լ.Զ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն[1]-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականության սկզբունքը (ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդված)

Ն-I-1 Հ.Գրիգորյանի և Է.Սարիբեկյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0131/01/15 (4[2], նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1) 70

Ն-I-2 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0258/01/16 (6, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-2) 106

Ն-II Մեկնաբանվող իրավադրույթներ՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, մարդասիրության սկզբունքը, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 11-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածներ)

Ն-II-1 Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0001/01/16 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-7) 222

Ն-II-2 Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0299/01/15 (56, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-6) 838

Ն-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-III-1 Զ.Իբրահիմյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0099/01/10 (43, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1, Դ-XLII-4, Դ-XLIII-4) 603

Ն-III-2 Ռ.Քարամյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0104/01/17 (57, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-1) 853

Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթներ՝ հանցակիցների տեսակները, հանցակիցների պատասխանատվությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 38-39-րդ հոդվածներ)

Ն-IV-1 Ա.Այվազյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0040/01/16 (60, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1, Ն-XXII-1) 903

[1] Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

[2] Որոշման հերթական համարը:

Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցանքը մի խումբ անձանց, կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդված)
Ն-V-1 Ա.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0051/01/17 (38, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIII-1, Դ-XXXVII-2, Դ-XXXIX-1) 541

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանրային աշխատանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդված)
Ն-VI-1 Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0008/12/17 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-1) 582

Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդված)
Ն-VII-1 Գ.Սերոբյան վերաբերյալ որոշում, ՏԴ1/0077/01/16 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-X-1) 208

Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդված)
Ն-VIII-1 Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0010/01/17 (18) 278

Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի ժամկետները որոշելը դրանք գումարելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդված)
Ն-IX-1 Գ.Սերոբյան վերաբերյալ որոշում, ՏԴ1/0077/01/16 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-X-1) 208

Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)
Ն-X-1 Գ.Սերոբյան վերաբերյալ որոշում, ՏԴ1/0077/01/16 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-IX-1) 208
Ն-X-2 Գ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0006/01/17 (10) 170
Ն-X-3 Խ.Բեգլարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0010/01/17 (44) 611
Ն-X-4 Հ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0030/01/17 (47) 646
Ն-X-5 Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0019/15/17 (48) 664
Ն-X-6 Ա.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0299/01/15 (56, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2) 838
Ն-X-7 Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0001/01/16 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1) 222

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը (ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդված)
Ն-XI-1 Ա.Եղոյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0010/12/18 (59) 890

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը (ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդված)
Ն-XII-1 Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0008/12/17
(41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1) 582

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ծեծը (ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված)
Ն-XIII-1 Ս.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0210/01/16 (23) 335

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մարդուն առևանգելը (ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդված)
Ն-XIV-1 Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի վերաբերյալ որոշում,
ԵԷԴ/0042/01/16 (54) 791

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված)
Ն-XV-1 Ս.Բերակչյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0170/01/16
(39, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-1, Դ-XXV-1) 562

Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդված)
Ն-XVI-1 Հ.Գրիգորյանի և Է.Սարիբեկյանի վերաբերյալ որոշում,
ԵՇԴ/0131/01/15 (4, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1) 70
Ն-XVI-2 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0258/01/16
(6, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2) 106

Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ յուրացնելը կամ վատնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդված)
Ն-XVII-1 Ս.Լսկավյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0303/01/16 (5) 92

Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը) (ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդված)
Ն-XVIII-1 Ս.Բաբայանի և մյուսների վերաբերյալ որոշում,
ԵԿԴ/0189/01/17 (25, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVI-1) 359

Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելը կամ շորթելը (ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդված)
Ն-XIX-1 Գ.Մանգասարյանի վերաբերյալ որոշում, ՍԴ1/0070/01/17 (55) ... 823

Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված)
Ն-XX-1 Կ.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0056/01/13 (30) 431

Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մաս)
Ն-XXI-1 Ա.Այվազյանի և մյուսների վերաբերյալ որոշում,
ԵԷԴ/0040/01/16 (60, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-XXII-1) 903

Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կաշառք ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված)
Ն-XXII-1 Ա.Այվազյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0040/01/16
(60, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-XXI-1) 903

Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը (ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված)
Ն-XXIII-1 Ս.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0039/01/17 (46, նույն
որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1) 635

Ն-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնական փաստաթղթեր ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 326-րդ հոդված)
Ն-XXIV-1 Ս.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0039/01/17
(46, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIII-1) 635

Ն-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդված)
Ն-XXV-1 Է.Սերոբյանի վերաբերյալ որոշում, ԵՍՔԴ/0753/06/17
(50, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-4) 706

Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հրամանը չկատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդված)
Ն-XXVI-1 Ռ.Չանախչյան վերաբերյալ որոշում, ՍԴ1/0033/01/16 (8) 141

Ն-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդված)
Ն-XXVII-1 Զ.Իբրահիմյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0099/01/10
(43, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Դ-XLII-4, Դ-XLIII-4) 603

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Դ [1]-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)
Դ-I-1 Ս.Բերակչյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0170/01/16
(39, նույն որոշումը տես նաև Ն-XV-1, Դ-XXV-1) 562

Դ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված)
Դ-II-1 Ն.Շիրինյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0120/06/18
(58, նույն որոշումը տես նաև Դ-XXIII-1, Դ-XXVII-3) 864

Դ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդված)
Դ-III-1 «Հեսսար» ՍՊ ընկերության վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0006/11/17
(42, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXI-1, Դ-XXIV-2) 592

Դ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)
Դ-IV-1 Մ.Բայդակի վերաբերյալ որոշում, ԵԴ/0129/06/18 (31) 445
Դ-IV-2 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16
(35, նույն որոշումը տես նաև Դ-VI-3, Դ-IX-1, Դ-XIII-2, Դ-XIV-1,
Դ-XVI-1, Դ-XXII-1) 494
Դ-IV-3 Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0743/06/18
(52, նույն որոշումը տես նաև Դ-XVIII-5) 725
Դ-IV-4 Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0063/01/17
(61, նույն որոշումը տես նաև Դ-XV-1) 930

Դ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության լեզուն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդված)
Դ-V-1 Ռ.Վանյանցի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0079/11/17
(2, նույն որոշումը տես նաև Դ-XIII-1, Դ-XXIV-1) 41

Դ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)
Դ-VI-1 Է.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0026/01/17 (1) 29

[1] Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

Դ-VI-2 Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0102/11/17 (21, նույն որոշումը տես նաև Դ-VIII-1) 311
Դ-VI-3 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16 (35, նույն որոշումը տես նաև Դ-IV-2, Դ-IX-1, Դ-XIII-2, Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXII-1)..... 494
Դ-VI-4 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0007/11/17 (40, նույն որոշումը տես նաև Դ-XXX-2) 571

Դ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)
Դ-VII-1 Ա.Ղուլյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0037/01/15 (49) 675

Դ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)
Դ-VIII-1 Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0102/11/17 (21, նույն որոշումը տես նաև Դ-VI-2) 311
Դ-VIII-2 Հ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0007/01/17 (37, նույն որոշումը տես նաև Դ-XXXVIII-1) 524

Դ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ազատ գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդված)
Դ-IX-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16 (35, նույն որոշումը տես նաև Դ-IV-2, Դ-VI-3, Դ-XIII-2, Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXII-1) 494

Դ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու և հանցագործությունը բացահայտելու պարտականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդված)
Դ-X-1 Ա.Ավետյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0036/11/17 (53, նույն որոշումը տես նաև Դ-XX-1) 781

Դ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)
Դ-XI-1 Ռ.Քարամյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0104/01/17 (57, նույն որոշումը տես նաև Ն-III-2) 853

Դ-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործն իր վարույթն ընդունած դատարանի կողմից քրեական գործի հանձնումն ըստ ընդդատության (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդված)
Դ-XII-1 Ս.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0018/11/17 (11) 180

Դ-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված)
Դ-XIII-1 Ռ.Վանյանցի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0079/11/17 (2, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-XXIV-1) 41
Դ-XIII-2 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16 (35, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-2, Դ-VI-3, Դ-IX-1, Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXII-1) 494

Դ-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ վկան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդված)
Դ-XIV-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16 (35, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-2, Դ-VI-3, Դ-IX-1, Դ-XIII-2, Դ-XVI-1, Դ-XXII-1) 494

Դ-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ միջնորդությունների և պահանջների՝ քննության առնելու պարտադիր լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդված)
Դ-XV-1 Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0063/01/17 (61, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-4) 930

Դ-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդված)
Դ-XVI-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16 (35, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-2, Դ-VI-3, Դ-IX-1, Դ-XIII-2, Դ-XIV-1, Դ-XXII-1) 494

Դ-XVII Մեկնաբանվող իրավադրույթներ՝ իրեղեն ապացույցները և դրանց պահպանման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-118-րդ հոդվածներ)
Դ-XVII-1 Լ.Ջաքոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0255/11/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXX-1) 121

Դ-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)
Դ-XVIII-1 Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0130/06/17 (15, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-1, Դ-XXVIII-1, Դ-XXIX-1) 235
Դ-XVIII-2 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0205/06/17 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-1) 57
Դ-XVIII-3 Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0231/06/17 (22) 321
Դ-XVIII-4 Է.Սերոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0753/06/17 (50, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1) 706

Դ-XVIII-5 Ռ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0743/06/18 (52, նույն որոշումը տես նաև Դ-IV-3) 725
Դ-XVIII-6 Ռ.Աղաբաբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0023/06/17 (62) 940

Դ-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)
Դ-XIX-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0205/06/17 (3, նույն որոշումը տես նաև Դ-XVIII-2) 57

Դ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)
Դ-XX-1 Ա.Ավետյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0036/11/17 (53, նույն որոշումը տես նաև Դ-X-1) 781

Դ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ նախնական քննության ավարտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդված)
Դ-XXI-1 «Հեսսար» ՍՊ ընկերության վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0006/11/17 (42, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XXIV-2) 592

Դ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի հարցաքննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդված)
Դ-XXII-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԴ2/0006/11/16 (35, նույն որոշումը տես նաև Դ-IV-2, Դ-VI-3, Դ-IX-1, Դ-XIII-2, Դ-XIV-1, Դ-XVI-1) 494

Դ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրյալի հետախուզումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդված)
Դ-XXIII-1 Ն.Շիրինյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0120/06/18 (58, նույն որոշումը տես նաև Դ-II-1, Դ-XXVII-3) 864

Դ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննիչի գործողությունները քրեական գործով վարույթը կարճելուց և քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդված)
Դ-XXIV-1 Ռ.Վանյանցի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0079/11/17 (2, նույն որոշումը տես նաև Դ-V-1, Դ-XIII-1) 41
Դ-XXIV-2 «Հեսսար» ՍՊ ընկերության վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0006/11/17 (42, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XXI-1) 592

Դ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական եզրակացությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդված)
Դ-XXV-1 Ս.Բերակչյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0170/01/16 (39, նույն որոշումը տես նաև Ն-XV-1, Դ-I-1) 562

Դ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական վերահսկողության ոլորտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված)
Դ-XXVI-1 Ս.Բաբայանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0189/01/17 (25, նույն որոշումը տես նաև Ն-XVIII-1) 359

Դ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդված)
Դ-XXVII-1 Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0130/06/17 (15, նույն որոշումը տես նաև Դ-XVIII-1, Դ-XXVIII-1, Դ-XXIX-1) 235
Դ-XXVII-2 Վ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0030/06/17 (36, նույն որոշումը տես նաև Դ-XXXV-2) 514
Դ-XXVII-3 Ն.Շիրինյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0120/06/18 (58, նույն որոշումը տես նաև Դ-II-1, Դ-XXIII-1) 864

Դ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդված)
Դ-XXVIII-1 Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0130/06/17 (15, նույն որոշումը տես նաև Դ-XVIII-1, Դ-XXVII-1, Դ-XXIX-1) 235

Դ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված)
Դ-XXIX-1 Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0130/06/17 (15, նույն որոշումը տես նաև Դ-XVIII-1, Դ-XXVII-1, Դ-XXVIII-1) 235
Դ-XXIX-2 Դ.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0070/06/17 (20) 301

Դ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)
Դ-XXX-1 Լ.Զաքոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0255/11/15 (7, նույն որոշումը տես նաև Դ-XVII-1) 121
Դ-XXX-2 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0007/11/17 (40, նույն որոշումը տես նաև Դ-VI-4) 571

Դ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշում՝ խափանման միջոցների մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդված)
Դ-XXXI-1 Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում (բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում), ԵԷԴ/0063/01/17 (19) 290
Դ-XXXI-2 Ա.Ղուկասյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0063/01/17 (33) 468

Դ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդված)
Դ-XXXII-1 Կ.Կունգուրցևի վերաբերյալ որոշում, ԼԴ/0141/01/14 (34) 478

Դ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)
Դ-XXXIII-1 Ա.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0051/01/17 (38, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Դ-XXXVII-2, Դ-XXXIX-1) 541

Դ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված)
Դ-XXXIV-1 Լ.Սողոմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0274/01/15 (16) 251
Դ-XXXIV-2 Ն.Նիկողոսյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում), ԱՐԴ/0182/01/11 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXV-1) 457
Դ-XXXIV-3 Ն.Նիկողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0182/01/11 (51, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXV-3) 716

Դ-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)
Դ-XXXV-1 Ն.Նիկողոսյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում), ԱՐԴ/0182/01/11 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIV-2) 457
Դ-XXXV-2 Վ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0030/06/17 (36, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-2) 514
Դ-XXXV-3 Ն.Նիկողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0182/01/11 (51, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIV-3) 716

Դ-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողքը և վարույթ ընդունելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդված)

Դ-XXXVI-1 Ք.Մանուկյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում), ԵԿԴ/0056/11/17 (12) 194
Դ-XXXVI-2 Ք.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0056/11/17 (29) 421

Դ-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)
Դ-XXXVII-1 Լ.Վերանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0074/01/17 (26, նույն որոշումը տես նաև Դ-XL-1) 383
Դ-XXXVII-2 Ա.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0051/01/17 (38, նույն որոշումը տես նաև Ն-V-1, Դ-XXXIII-1, Դ-XXXIX-1) 541

Դ-XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթներ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը, դատաքննությունը վերաքննիչ դատարանում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ, 391-րդ հոդվածներ)
Դ-XXXVIII-1 Հ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0007/01/17 (37, նույն որոշումը տես նաև Դ-VIII-2) 524

Դ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտ կայացնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդված)
Դ-XXXIX-1 Ա.Մովսիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0051/01/17 (38, նույն որոշումը տես նաև Ն-V-1, Դ-XXXIII-1, Դ-XXXVII-2) 541

Դ-XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդված)
Դ-XL-1 Լ.Վերանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0074/01/17 (26, նույն որոշումը տես նաև Դ-XXXVII-1) 383

Դ-XLI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ բողոք բերելու հիքմերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդված)
Դ-XLI-1 Ա.Մովսեսյանի և Գ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0006/11/18 (45, նույն որոշումը տես նաև Դ-XLII-5, Դ-XLIII-5) 622

Դ-XLII Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդված)
Դ-XLII-1 Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-17/08 (17, նույն որոշումը տես նաև Դ-XLIII-1) 262

Դ-XLII-2 Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0125/01/14 (24, նույն որոշումը տես նաև Դ-XLIII-2) 351
Դ-XLII-3 Ա.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-05/12 (28, նույն որոշումը տես նաև Դ-XLIII-3) 408
Դ-XLII-4 Ջ.Իբրահիմյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0099/01/10 (43, նույն որոշումը տես նաև Ն-III-1, Ն-XXVII-1, Դ-XLIII-4) 603
Դ-XLII-5 Ա.Մովսեսյանի և Գ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0006/11/18 (45, նույն որոշումը տես նաև Դ-XLI-1, Դ-XLIII-5) 622

Դ-XLIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդված)
Դ-XLIII-1 Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-17/08 (17, նույն որոշումը տես նաև Դ-XLII-1) 208
Դ-XLIII-2 Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0125/01/14 (24, նույն որոշումը տես նաև Դ-XLII-2) 351
Դ-XLIII-3 Ա.Մաթևոսյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-05/12 (28, նույն որոշումը տես նաև Դ-XLII-3) 408
Դ-XLIII-4 Ջ.Իբրահիմյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0099/01/10 (43, նույն որոշումը տես նաև Ն-III-1, Ն-XXVII-1, Դ-XLII-4) 603
Դ-XLIII-5 Ա.Մովսեսյանի և Գ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0006/11/18 (45, նույն որոշումը տես նաև Դ-XLI-1, Դ-XLII-5) 622

Դ-XLIV Մեկնաբանվող իրավադրույթներ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հիմքերը, այն անձանց իրավունքները, որոնց նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ, 456-րդ հոդվածներ)
Դ-XLIV-1 Տ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԳԴ1/0058/01/16 (9) 156

Դ-XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործություն կատարած անձին օտարերկրյա պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը հանձնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 480-րդ հոդված)
Դ-XLV-1 Հ.Պապիկյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ1/0018/01/17 (27) 397

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված (2005 թվականի փոփոխություններով)	(52)
ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդված (2005 թվականի փոփոխություններով)	(52)
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(52)
ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(35)
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(16), (19), (22), (31), (50), (61), (62)
ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(32)
ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(25)
ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(7)
ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(25), (32)
ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(9), (11), (12), (21), (29), (30), (32)
ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(34), (49)
ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(32)
ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(29), (32), (37)
ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(4), (6), (30), (57)

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(18)
ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(1), (29), (32), (43)
ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(4), (6), (30)
ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(52)

Աղբյուրների ցանկ թիվ 2
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *A. and Others v. the United Kingdom*,
   2009 թվականի փետրվարի 19-ի վճիռ (19)
2. *Al-Khawaja and Tahery v. The United Kingdom*,
   2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (49)
3. *Ayvazyan v. Armenia*, 2017 թվականի հունիսի 1-ի վճիռ (17)
4. *Asatryan v. Armenia*, 2017 թվականի ապրիլի 27-ի վճիռ (49)
5. *Assenov and others v. Bulgaria*,
   1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (35)
6. *Avetisyan v. Armenia*, 2016 թվականի նոյեմբերի 10-ի վճիռ (49)
7. *Beiere v. Latvia*, 2011 թվականի նոյեմբերի 21-ի վճիռ (9)
8. *Borzhonov v. Russia*, 2009 թվականի հունվարի 22-ի վճիռ (7)
9. *Buzadji v. the Republic of Moldova [GC]*,
   2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ (22)
10. *Chember v. Russia*, 2008 թվականի հուլիսի 3-ի վճիռ (35)
11. *Coeme and others v. Belgium*, 2000 թվականի հունիսի 22-ի վճիռ (11)
12. *Dadayan v. Armenia*, 2018 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռ (49)
13. *Delcourt v. Belgium*, 1970 թվականի հունվարի 17-ի վճիռ (37)
14. *Efstathiou and others v. Greece*,
    2006 թվականի հուլիսի 27-ի վճիռ (12), (32)
15. *Ergi v. Turkey*, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռ (35)
16. *G. v. France*, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռ (4)
17. *Gabrielyan v. Armenia*, 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռ (49)
18. *Gorgiladze v. Georgia*, 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռ (11)
19. *Halford v. the UK*, 1997 թվականի հունիսի 25-ի վճիռ (25)
20. *Hermi v. Italy*, 2006 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռ (49)
21. *Hirschhorn v. Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (1), (12), (32)
22. *Ireland v. the United Kingdom*, 1978 թվականի հունվարի 18-ի վճիռ (35)
23. *Ivinović v. Croatia*, 2014 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռ (35)

24. *Jeronovičs v. Latvia*, 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ (35)
25. *John Murray v. the United Kingdom*,
1996 թվականի փետրվարի 8-ի վճիռ (22)
26. *Khachatryan and Others v. Armenia*,
2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռ (31)
27. *Khalfaoui v. France*, 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (12), (32)
28. *Khodorkovskiy v. Russia*, 2011 թվականի մայիսի 31-ի վճիռ (19)
29. *Klass and others v. Germany,* 1978 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռ (25)
30. *Kokkinakis v. Greece,* 1993 թվականի մայիսի 25-ի վճիռ (4)
31. *Kopp v. Switzerland*, 1998 թվականի մարտի 25-ի վճիռ (25)
32. *Korbely v. Hungary [GC]*, 2008 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռ (4)
33. *Kovalev v. Russia*, 2007 թվականի մայիսի 10-ի վճիռ (9)
34. *Kucera v. Slovakia*, 2007 թվականի հուլիսի 17-ի վճիռ (16)
35. *Labita v. Italy*, 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռ (35)
36. *Ladent v. Poland*, 2008 թվականի մարտի 18-ի վճիռ (58)
37. *Lučić v. Croatia*, 2014 թվականի փետրվարի 27-ի վճիռ (49)
38. *Luordo v. Italy*, 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռ (32)
39. *Malone v. the UK*, 1984 թվականի օգոստոսի 2-ի վճիռ (25)
40. *Matevosyan v. Armenia*, 2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռ (28)
41. *Mehmet Emin Yüksel v. Turkey*, 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռ (35)
42. *Mikheyev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ (35)
43. *Movsesyan v. Armenia*, 2017 թվականի նոյեմբերի 16-ի վճիռ (45)
44. *Oğur v. Turkey*, 1999 թվականի մայիսի 20-ի վճիռ (35)
45. *Paić v. Croatia*, 2016 թվականի մարտի 29-ի վճիռ (49)
46. *Poghosyan v. Armenia*, 2011 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռ (58)
47. *Savino and Others v. Italy*, 2009 թվականի ապրիլի 28-ի վճիռ (11)
48. *Schatschaschwili v. Germany*, 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (49)
49. *Scozzari and Giunta v. Italy*, 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռ (17)
50. *Sejdovic v. Italy*, 2006 թվականի մարտի 1-ի վճիռ (49)
51. *Selcuk and Asker v. Turkey*, 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռ (17)
52. *Seton v. The United Kingdom*, 2016 թվականի մարտի 31-ի վճիռը (49)

53. *Shishkov v. Bulgaria*, 2003 թվականի հունվարի 9-ի վճիռ (16)
54. *Shtukaturov v. Russia*, 2008 թվականի մարտի 24-ի (9), (16), (35)
55. *Stanev v. Bulgaria*, 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ (32)
56. *Staroszczyk v. Poland*, 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռ (32)
57. *Ter-Sargsyan v. Armenia*, 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ (49)
58. *Trutko v. Russia*, 2016 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ (9)
59. *Urechean and Pavlicenco v. The Republic of Moldova*, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ (52)
60. *Vachev v. Bulgaria*, 2004 թվականի հուլիսի 8-ի վճիռ (16)
61. *Vakhitov and others v. Russia*, 2017 թվականի հունվարի 31-ի վճիռ (58)
62. *Virabyan v. Armenia*, 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռ (35)
63. *Walchli v. France*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (11), (12)
64. *X and Y v. Croatia*, 2011 թվականի նոյեմբերի 3-ի վճիռ (35)
65. *Z and others v. United Kingdom*, 2001 թվականի մայիսի 10-ի վճիռ (35)
66. *Zagidulina v. Russia*, 2013 թվականի մայիսի 2-ի վճիռ (9)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1.	ՍԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 9	(1), (32), (52)
2.	ՍԴՈ-766, 2008 թվականի հոկտեմբերի 14	(52)
3.	ՍԴՈ-935, 2011 թվականի փետրվարի 4	(45)
4.	ՍԴՈ-936, 2011 թվականի փետրվարի 8	(1)
5.	ՍԴՈ-1008, 2012 թվականի հունվարի 24	(2)
6.	ՍԴՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16	(36)
7.	ՍԴՈ-1062, 2012 թվականի դեկտեմբերի 18	(36)
8.	ՍԴՈ-1192, 2015 թվականի մարտի 3	(1), (12), (32)
9.	ՍԴՈ-1249, 2015 թվականի դեկտեմբերի 22	(36)
10.	ՍԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(11), (12), (32)
11.	ՍԴՈ-1359, 2017 թվականի մարտի 28	(43)
12.	ՍԴՈ-1372, 2017 թվականի մայիսի 30	(2), (42)
13.	ՍԴՈ-1394, 2017 թվականի դեկտեմբերի 8	(24), (36)
14.	ՍԴՈ-1420, 2018 թվականի հունիսի 19	(29)
15.	ՍԴՈ-1421, 2018 թվականի հունիսի 26	(33)
16.	ՍԴՈ-1431, 2018 թվականի հոկտեմբերի 23	(51)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0026/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ ամբաստանյալ՝ Է.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2018 թվականի հունվարի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Էդգար Հարությունի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի և նույն թվականի հոկտեմբերի 3-ի որոշումների դեմ ամբաստանյալ Է.Գրիգորյանիվճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի հունիսի 23-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 15119215 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Էդգար Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2017 թվականի փետրվարի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 4-ի դատավճռով Է.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 2 տարի 6 ամիս ժամկետով: Նույն դատավճռով ամբաստանյալ Է.Գրիգորյանից հօգուտ տուժողի բռնագանձվել է 1.141.995 ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ փաստաբան Լ.Բալյանը բերել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունք չունեցող անձի կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ:

3.1. Նույն դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել նաև ամբաստանյալ Է.Գրիգորյանը՝ միաժամանակ միջնորդելով հարգելի ճանաչել վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը: Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ Է.Գրիգորյանի միջնորդությունը մերժվել է, իսկ վերաքննիչ բողոքը՝ թողնվել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. 2017 թվականի օգոստոսի 28-ին ամբաստանյալ Է.Գրիգորյանը միջնորդություն է ներակայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով հարգելի համարել և վերականգնել նույն դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 4-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը: Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ (դատական գործ թիվ ԵԿԴ/0073/15/17) Է.Գրիգորյանի միջնորդությունը մերժվել է:

5. Վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Է.Գրիգորյանը բերել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ մերժվել է:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի թիվ ԵԿԴ/0026/01/17 և նույն դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ ԵԿԴ/0073/15/17 որոշումների դեմ ամբաստանյալ Է.Գրիգորյանը բերել է վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ համապատասխանաբար 2017 թվականի դեկտեմբերի 15-ի և նույն թվականի դեկտեմբերի 22-ի որոշումներով վարույթ են ընդունվել: Միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ այդ երկու գործերը վերաբերում են նույն անձին և նույն հանգամանքներին, թիվ ԵԿԴ/0026/01/17 և թիվ ԵԿԴ/0073/15/17 գործերը միացվել են մեկ վարույթում՝ թիվ ԵԿԴ/0026/01/17 համարի տակ:

Վճռաբեկ բողոքների վերաբերյալ դատավարության մասնակիցների կողմից պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 9-ի որոշման համաձայն՝ *«(…) [Ք]րեական գործով վարույթի ընթացքում ամբաստանյալ Էդգար Գրիգորյանի շահերի պաշտպանությունն իրականացվել է փաստաբան Մակբեթ Կարապետյանի կողմից: 2017 թվականի հուլիսի 28-ին թիվ ԵԿԴ/0026/01/17 դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել փաստաբան Լիանա Բալյանը: Միևնույն ժամանակ, քրեական գործի նյութերում բացակայում է, իսկ վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել փաստաբան Լիանա Բալյանի՝ որպես ամբաստանյալ Էդգար Գրիգորյանի պաշտպանի իրավավիճակը հաստատող՝ ամբաստանյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը, կամ ամբաստանյալի որևէ ազգականի կողմից նրա շահերի պաշտպանությունն իրականացնելու համար փաստաբան Լիանա Բալյանին արված հրավերի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը: Հետևաբար՝ նման պայմաններում, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը:*

Վերոգրյալի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ փաստաբան Լիանա Բալյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ վերաքննիչ բողոքը բերելու իրավունք չունեցող անձի կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 25-26):

8. Ամբաստանյալ Է.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի մաս կազմող՝ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդության համաձայն՝ *«18.07.2017 թվականին եւս հայրս՝ Հարություն Գրիգորյանը, դիմել ենք ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Լիանա Վլադիկի Բալյանին (…), որ ստանձնի թիվ ԵԿԴ/0026/01/17 քրեական գործով իմ պաշտպանությունը, բողոքարկի [Առաջին ատյանի դատարանի] (…) դատավճիռը [Վերաքննիչ դատարան] և ստանձնի իմ պաշտպանությունը դատարանում: 18.07.2017 թվականին փաստաբան Լիանա Բալյանի հետ կնքել ենք թիվ 0-7 պայմանագիրը, համաձայն որի Լ.Բալյանը ստանձնել է իմ պաշտպանությունը (…): 28.07.2017 թվականին թիվ ԵԿԴ/0026/01/17 քրեական գործով դատավճռի դեմ բողոք է ներկայացրել փաստաբան Լ.Բալյանը: 09.08.2017 թվականին [Վերաքննիչ դատարանը] բողոքը թողել է առանց քննության: Հայտնում եմ, որ իմ և փաստաբանի փաստաթղթերը եղել են պատշաճ ձևակերպված, ես օրինական կարգով եմ դիմել փաստաբանին՝ ստանձնելու իմ պաշտպանությունը, որը վկայում են 2017թ. հուլիսի 18-ի դիմումները, պայմանագիրը և 27.07.2017թ. փաստաբանին վճարված գումարի անդորրագիրը: Ես ինքս հաստատում եմ և ստորագրել եմ փաստաբանի արտոնագրի պատճենի վրա: Վերը նշված փաստաթղթերը վերաքննիչ*

բողոքի հետ չէինք ներկայացրել, որպեսզի ես և փաստաբանս ներկայացնենք առաջին դատական նիստի ընթացքում ներկայանալու և իմ ու փաստաբանի անձը, տվյալները ճշտելու ժամանակ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 47-60):

8.1. Ամբաստանյալ Է.Գրիգորյանը վերաքննիչ բողոքին, ի թիվս այլ փաստաթղթերի, կցել է 2017 թվականի հուլիսի 27-ով թվագրված՝ Հ.Գրիգորյանի կողմից անհատ ձեռնարկատեր Լ.Բալյանին փաստաբանական ծառայության դիմաց վճարելու բանկային անդորրագիրը, Է.Գրիգորյանի և Հ.Գրիգորյանի անունից փաստաբան Լ.Բալյանին ուղղված դիմումները, Հ.Գրիգորյանի և Լ.Բալյանի միջև 2017 թվականի հուլիսի 18-ին կնքված պայմանագիրը, Լ.Բալյանի փաստաբանական արտոնագրի պատճենը՝ վերջինիս և Է.Գրիգորյանի ստորագրություններով (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 61-65):

9. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի որոշման համաձայն՝ *«(...) [Թ]ևև ներկայացված վերաքննիչ բողոքը պարունակում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, այնուամենայնիվ դրանում բերված պատճառաբանությունը և կից ներկայացված փաստաթղթերը չեն վկայում ամբաստանյալի կողմից դատական ակտը ստանալուց հետո բողոքարկման մեկամսյա ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու մասին: Ուստի Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ներկայացված միջնորդությունը հիմնավորված չէ, հետևաբար այն ենթակա է մերժման:*

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից չի պահպանվել (...) վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Էդգար Գրիգորյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ այն ժամկետանց լինելու պատճառաբանությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 72-74):

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման համաձայն՝ *«(...) Դատական նիստի ընթացքում ամբաստանյալ Էդգար Գրիգորյանի պաշտպանը միջնորդությունը պնդեց, խնդրեց այն բավարարել՝ պատճառաբանելով, որ Է.Գրիգորյանի պաշտպանությունը ստանձնել է վերջինիս հոր խնդրանքով, նրա հետ կնքած պայմանագրի հիման վրա, նախքան Վերաքննիչ դատարան մուտքագրելը վերաքննիչ բողոքը կազմել և ստորագրել է իր անունից՝ ամբաստանյալ Է.Գրիգորյանի վատառողջության և բողոքարկման ժամկետը լրանալու պատճառով դրան չկցելով Գրիգորյանի պաշտպանությունը ստանձնելու փաստը հաստատող փաստաթղթեր, որոնք նպատակ ուներ ներկայացնել դատարանին առաջին դատական նիստի ընթացքում: Նշեց, որ դատավճիռը բողոքարկելու համար սահմանված ժամկետը բաց են թողել վերոնշյալ հարգելի հանգամանքներով,*

սակայն օբյեկտիվորեն զրկվել են սահմանված ժամկետում այն բողոքարկելու հնարավորությունից:

(...) [Պ]աշտպան Լ.Քալյանի ներկայացրած պատճառաբանությունը բավարար և հիմնավոր չէ 2017թ. հուլիսի 4-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու վերաբերյալ:

Ավելին, տվյալ ինստիտուտը կարգավորող և սույն դատական ակտում մեջբերված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ մասի և 380-րդ հոդված 1-ին մասի համադրված վերլուծության արդյունքներով [Առաջին ատյանի դատարանը] նաև փաստում է, որ շահագրգիռ անձը վերոնշյալ միջնորդություն կարող էր ներկայացնել կամ վարույթն իրականացնող մարմին՝ ՀՀ վերաքննիչ դատարան կամ դատական ակտը կայացրած դատարան՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Տվյալ պարագայում ամբաստանյալ Է.Գրիգորյանը նախընտրել է տվյալ միջնորդությամբ վարույթն իրականացնող մարմին՝ ՀՀ վերաքննիչ դատարան դիմելու տարբերակը, որը սակայն նրա միջնորդությունը մերժել է, և այդ որոշման առկայության պայմաններում դատավճիռ կայացրած դատարանը նույնիսկ տեսականորեն զրկված է վերոնշյալ միջնորդությունը բավարարելու հնարավորությունից» (տե՛ս թիվ ԵԿԴ/0073/15/17 նյութեր, թերթեր 24-26):

11. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ (...) օրենսդիրն այս դեպքում Էդգար Գրիգորյանին հնարավորություն է տալիս վերականգնել բողոքարկման բաց թողնված ժամկետը, այն դեպքում, երբ նա կներկայացնի հարգելի պատճառներ, որոնք կախված չեն եղել իրենից, այսինքն՝ բաց թողնված ժամկետը ամեն դեպքում վերականգման ենթակա է, երբ առկա է հարգելի պատճառ:*

Հաշվի առնելով վերոգրյալը և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկելով գործում առկա նյութերը՝ Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Էդգար Գրիգորյանը դատարան չի ներկայացրել օբյեկտիվ այնպիսի փաստարկներ, որոնք թույլ կտային հետևություն անել այն մասին, որ վերջինս [Առաջին ատյանի դատարանի՝ 04.07.2017թ. դատավճիռը Վերաքննիչ դատարան բողոքարկելու ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով և որ այն ենթակա է վերականգման (...)» (տե՛ս թիվ ԵԿԴ/0073/15/17 նյութեր, թերթեր 46-51):

<u>Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Վճռաբեկ բողոքների հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանի որոշումները հակասում են «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 4-րդ, 38-րդ և 39-րդ հոդվածների պահանջներին:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ պնդումների՝ բողոքաբերը վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՈ-690 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և եզրահանգել, որ Վերաքննիչ դատարանը, կայացնելով բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, փաստացի հրաժարվել է արդարադատության իրականացումից՝ խախտելով դատարանի մատչելիության իր իրավունքը:

12.1. Բողոք բերած անձը փաստել է նաև, որ ինքն օրինական կարգով է դիմել փաստաբանին՝ իր պաշտպանությունը ստանձնելու խնդրանքով, ինչի մասին են վկայում Լ.Բալյանին ուղղված դիմումները: Բացի այդ, բողոքի հեղինակը մատնանշել է իր և փաստաբանի միջև կնքված պայմանագիրն ու վճարված անդորրագիրը՝ հայտնելով, որ նշված փաստաթղթերը պաշտպանության կողմը պատրաստվում էր ներկայացնել Վերաքննիչ դատարան առաջին դատական նիստի ընթացքում, սակայն վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու արդյունքում զրկվել է նման հնարավորությունից:

13. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է.

ա) բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության,

բ) բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Է.Գրիգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի և նույն անձի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումները:

15. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս*

դատական ատյանի կողմից վերանայման իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից (...)»:*

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:*

Դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի՝ վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ

դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելովիրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690, 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936, 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴՈ-1192 և 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշումները):

15.1. Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները»* (տե՛ս *Արթուր Այվազյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը):

Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Մարդու իրավունքների

եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դատարան դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Եվրոպական դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումները դատարան դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ դրա արդյունքում խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չհետապնդի, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև (տե՛ս *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ50):

16. ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

Մեջբերված սահմանադրական նորմը նախատեսում է իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունեցող համաչափության սկզբունքը, որի իմաստով՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար կարող են օգտագործվել միայն այնպիսի միջոցներ, որոնք պիտանի և անհրաժեշտ են այդ նպատակին հասնելու համար: Մասնավորապես՝ հետապնդվող նպատակին հասնելու համար օգտագործվող միջոցը պիտանի է, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն, իսկ հիմնական իրավունքին միջամտել անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է համարժեք կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության կարևորագույն իրավունքների սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է իրավաչափ նպատակ հետապնդի և չպետք է

անհամարժեք լինի նշված իրավունքի բունէությանն ու նշանակությանը: Այլ կերպ՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում պետք է պահպանել կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռություն՝բացառելով անհամաչափ խիստ միջոցներով հետապնդվող նպատակին հասնելու հնարավորությունը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ

- Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 4-ի դատավճռով Է.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 2 տարի 6 ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը),

- նշված դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել փաստաբան Լ.Բալյանը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը),

- Վերաքննիչ դատարանը2017 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ Լ.Բալյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որբողոք է բերել այն անձը, ով չուներ այդ իրավունքը, քանի որԼ.Բալյանը վերաքննիչ բողոքին կից չի ներկայացրել իր՝ որպես Է.Գրիգորյանի պաշտպանի իրավավիճակը հաստատող՝ ամբաստանյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ վերջինիս որևէ ազգականի կողմից նրա շահերի պաշտպանությունն իրականացնելու համար իրեն արված հրավերի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը),

- Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել նաև ամբաստանյալ Է.Գրիգորյանը՝ միաժամանակ միջնորդելով հարգելի ճանաչել վերաքննիչ բողոք բերելու՝ բաց թողնված ժամկետը: Վերաքննիչ բողոքին կից ամբաստանյալը ներկայացրել է 2017 թվականի հուլիսի 27-ով թվագրված՝ Հ.Գրիգորյանի կողմից անհատ ձեռնարկատեր Լ.Բալյանին փաստաբանական ծառայության դիմաց **վճարման բանկային անդորրագիրը,** Է.Գրիգորյանի և Հ.Գրիգորյանի անունից փաստաբան **Լ.Բալյանին ուղղված դիմումները,** Հ.Գրիգորյանի և Լ.Բալյանի միջև **2017 թվականի հուլիսի 18-ին կնքված պայմանագիրը,** Լ.Բալյանի փաստաբանական արտոնագրի պատճենը՝ վերջինիս և Է.Գրիգորյանի ստորագրություններով(տե՛ս սույն որոշման 8-8.1-րդ կետերը),

- Վերաքննիչ դատարանը 2017 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ ամբաստանյալ Է.Գրիգորյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 3.1-րդ և 9-րդ կետերը),

- 2017 թվականի օգոստոսի 28-ին ամբաստանյալ Է.Գրիգորյանը միջնորդություն է ներակայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով հարգելի համարել և վերականգնել նույն դատարանի՝ 2017 թվականի հուլիսի

4-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ մերժվել է(տե՛ս սույն որոշման 4-րդ և 10-րդ կետերը),

- Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Է.Գրիգորյանը: Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Է.Գրիգորյանի բողոքը մերժվել է(տե՛ս սույն որոշման 5-րդ և 11-րդ կետերը):

18. Վերոշարադրյալ փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-16-րդկետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը Վերաքննիչ դատարանի կողմից մերժելու և ամբաստանյալ Է.Գրիգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը մերժելու պայմաններում վերջինս զրկվել է իր իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումներըվիճարկելու հնարավորությունից, դատական պաշտպանության իրավունքի իրացման սահմանափակումները ձևական բնույթ են կրել, ինչի արդյունքում անձի իրավունքների սահամանափակման և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը չի ապահովվել:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Է.Գրիգորյանի՝ բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժելով ևամբաստանյալի վերաքննիչ բողոքը2017 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ առանց քննության թողնելով, ինչպես նաևԱռաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ բերված բողոքը 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ մերժելով,որևէ գնահատականի չի արժանացրել Է.Գրիգորյանի՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին միջնորդությամբ ներկայացված պատճառաբանությունները՝ կապված անհրաժեշտ փաստաթղթերն ավելի ուշ ներկայացնելու մտադրության հետ, ինչպես նաևչի գնահատել ամբաստանյալ Է.Գրիգորյանի կողմից վերաքննիչ բողոքին կցվածհամապատասխան փաստաթղթերը (տե՛ս սույն որոշման 7-րդ և 8.1-րդ կետերը): Մինչդեռ Վճռաբեկ դատարանի համոզմամբ վերոնշյալ փաստաթղթերի վերլուծությունը հիմք է տալիսեզրահանգելու, որ Է.Գրիգորյանի միջնորդությունը հիմնավոր է, իսկ հակառակի մասին Վերաքննիչ դատարանի պնդումները՝ոչ իրավաչափ:

19. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարաննարձանագրում է, որամբաստանյալ Է.Գրիգորյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի և նույն անձի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ

դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումներըօրինական և հիմնավորված չեն:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 69-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա,հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, հիմք ենՎերաքննիչ դատարանի դատական ակտերը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է պատշաճ քննարկման առարկա դարձնի վերաքննիչ բողոքների հիմքերն ու հիմնավորումները և դրա արդյունքում կայացնի համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Էդգար Հարությունի Գրիգորյանի բողոքների վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի և հոկտեմբերի 3-ի որոշումները բեկանել ու գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0079/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

2018 թվականի հունվարի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 28-ի որոշման դեմ Ռազմիկ Վանյանցի ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Հետաքննության մարմնի՝ 2013 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ ՌԴ քաղաքացի Ռազմիկ Վանյանցի հաղորդման և վերջինիս ներկայացուցիչ Սերգեյ Մկրտչյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 59104713 քրեական գործը:

2015 թվականի ապրիլի 20-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 12-րդ կետերով քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին:

2015 թվականի ապրիլի 29-ին Ռ.Վանյանցը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել նախաքննական մարմնի հիշյալ որոշումը: Երևան քաղաքի դատախազի՝ 2015 թվականի մայիսի 11-ի որոշմամբ Ռ.Վանյանցի բողոքը մերժվել է:

2. Նախաքննական մարմնի վերը հիշատակված որոշումը Ռ.Վանյանցը բողոքարկել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որը 2016 թվականի մարտի 16-ի որոշմամբ մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2016 թվականի մայիսի 2-ի որոշմամբ Ռ.Վանյանցի և վերջինիս ներկայացուցիչ Ս.Ամիրխանյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել Ռ.Վանյանցի իրավունքների ու ազատությունների խախտումը:

3. 2016 թվականի հունիսի 7-ին քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացվել է, և քրեական գործն ուղարկվել է նախաքննական մարմին՝ նախաքննությունը շարունակելու, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 2-ի որոշմամբ նշված խախտումները վերացնելու համար:

3.1. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 8-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և Ռազմիկ Վանյանցի, Արա Գրիգորյանի և Էմիլ Հակոբյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, Ռազմիկ Վանյանցի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ և 333-րդ հոդվածներով, Արա Գրիգորյանի, Վաղարշակ Գևորգյանի, Նարեկ Սարգսյանի և Վարդան Սահակյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով, Արա Գրիգորյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 345-րդ հոդվածով, Իգոր Վարդանյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ, 179-րդ և 322-րդ հոդվածներով, Արա Գրիգորյանի և Արտակ Մկրտչյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, Արա Գրիգորյանի և Էմիլ Հակոբյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ և 179-րդ հոդվածներով և Աննա Նարեկացյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով, քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 40-57):

Երևան քաղաքի դատախազի՝ 2017 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 2017 թվականի մարտի 8-ի որոշման դեմ Ռ.Վանյանցի բողոքը մերժվել է:

3.2. 2017 թվականի մայիսի 5-ին դիմող Ռ.Վանյանցը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել

վարույթն իրականացնող մարմիններին՝ Երևան քաղաքի դատախազությանը և Երևան քաղաքի քննչական վարչությանը, վերացնել իր՝ որպես տուժողի իրավունքների խախտումները՝ պարտավորեցնել անհապաղ իրեն հանձնել Երևան քաղաքի դատախազի՝ իր բողոքը մերժելու մասին 2017 թվականի ապրիլի 3-ի որոշման ռուսերեն թարգմանված օրինակը, Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կ.Ներսիսյանի՝ 2017 թվականի մարտի 8-ի որոշման հայերեն և ռուսերեն օրինակները, ինչպես նաև 2016 թվականի մայիսից հետո քրեական գործի ողջ նյութերի բնագրերի պատճենները և դրանց ռուսերեն թարգմանված օրինակները:

4. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 6-ի որոշմամբ Ռ.Վանյանցի բողոքը տարածքային ընդդատության կարգով ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 12-ի որոշմամբ Ռ.Վանյանցի բողոքը մերժվել է:

5. Դիմող Ռ.Վանյանցի ներկայացուցիչ Գ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 12-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ռ.Վանյանցի ներկայացուցիչ Գ.Ավետիսյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 8-ին կայացված քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ Ռ.Վանյանցի բողոքը Երևան քաղաքի դատախազի՝ 2017 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ մերժվել է (տե՛ս սույն որոշման 3.1-րդ կետը):

Երևան քաղաքի դատախազի տեղակալ Լ.Չարխիֆալակյանը 2017 թվականի ապրիլի 4-ին նախաքննության մարմնի վերոհիշյալ որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին որոշումը դիմող Ռ.Վանյանցին ուղարկելու մասին կից գրությամբ հայտնել է. *«(...) նշված որոշումը ռուսերեն լեզվով թարգմանված վիճակում կուղարկվի լրացուցիչ»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 12):

Ի պատասխան դիմող Ռ.Վանյանցի դիմումի՝ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կ.Ներսիսյանը 2017 թվականի ապրիլի 11-ի գրությամբ հայտնել է. *«(…) թիվ 59104713 քրեական գործով վարույթը ավարտվել է և համապատասխան որոշման հայերեն օրինակը ուղարկվել է (…), իսկ ռուսերեն օրինակը կուղարկվի թարգմանելուց հետո, քրեական գործը չի գտնվում Երևան քաղաքի քննչական վարչությունում, բացի դա նշված քրեական գործով (…) նամակների, միջնորդությունների և բողոքների պատասխանները, որոշումները, ծանուցումներն արդեն իսկ օրենքով սահմանված կարգով և ժամանակին ուղարկվել են (…) և կրկին անգամ նույն փաստաթղթերի օրինակները ուղարկելը նպատակահարմար չեմ համարում»* (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 29):

ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանը դիմող Ռ.Վանյանցին 2017 թվականի ապրիլի 21-ին հասցեագրված գրությամբ, ի թիվս այլոց, անդրադառնալով ՀԿԳ քննիչ Կ.Ներսիսյանի՝ 2017 թվականի մարտի 8-ի որոշման ռուսերեն թարգմանված պատճենը դիմողին հանձնված չլինելու մասին 2017 թվականի ապրիլի 12-ին ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված նամակին, հայտնել է. *«(…) Երևան քաղաքի դատախազի տեղակալի՝ 2017թ. ապրիլի 4-ի 50/5դ-17 և 2017թ. ապրիլի 6-ի 60/5դ-17 թվակիր գրություններով Ձեզ տեղեկացվել է, որ ՀԿԳ քննիչ Կ.Ներսիսյանի՝ 2017թ. մարտի 8-ի որոշման և այդ որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի դատախազի՝ 2017թ. ապրիլի 3-ի որոշման ռուսերեն թարգմանված պատճենները Ձեզ կուղարկվեն լրացուցիչ՝ պատրաստ լինելուն պես»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 13):

8. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքում Ռ.Վանյանցը, ի թիվս այլոց, նշել է հետևյալը. *«(…) 23.03.2017 թվականին (…) տեղեկացել է, որ թիվ 59104713 քրեական գործով վարույթը կարճվել է, սակայն քննիչը նշված որոշումն իր բնակության հասցեով չի ուղարկել (…):*

(…)

(…) 2017 թվականի մարտի 27-ին (…) Երևան քաղաքի դատախազին հասցեագրված առարկություն է ներկայացրել՝ խնդրելով իր՝ 2017 թվականի մարտի 23-ի բողոքի քննարկումը հետաձգել և իրեն ուղարկել նախաքննության ընթացքում քննիչի, դատախազի կողմից կայացված որոշումներն ու պարզաբանումները՝ ռուսերեն լեզվով թարգմանված վիճակում:

(…)

(…) [Ի]նձ՝ որպես տուժողի չի ուղարկվել քննիչ Կ.Ներսիսյանի և Երևան քաղաքի դատախազի ռուսերեն թարգմանված որոշումների օրինակները: (…) ՀՀ գլխավոր դատախազությունը փաստացի ընդունել է իր իրավունքների խախտման փաստը:

(...) Չունենալով կարճման որոշման, նաև իմ տիրապետած լեզվով օրինակները, ես փաստացի զրկված եմ եղել որոշման տեքստին և գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունից: (...) Գործը կարճելու մասին տեղեկացել եմ Երևան քաղաքի դատախազի տեղակալի գրությունից (...): (...) [Վ]երոհիշյալ գրությունից տեղեկանալով գործի վարույթը կարճելու մասին, այդ օրը համարել եմ, որ դատախազությունը կարող է դիտել որպես կարճման մասին տեղյակ լինելու օր, (...) այդ գրությունը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում բողոքը նախնական տեսքով ներկայացրել եմ Երևան քաղաքի դատախազություն՝ նշելով, որ հիմնական բողոքը կբերեմ որոշումը ստանալուց հետո: (...) միջնորդել եմ բողոքի քննարկումը հետաձգել, որպեսզի հնարավորություն ունենամ ստանալու քննիչի որոշման հայերեն և ռուսերեն օրինակները, գործի նյութերը և պատշաճ ուսումնասիրելով ու ծանոթանալով դրանց կարողանամ լիարժեք բողոք ներկայացնել: (...) Չնայած դրան, (...) խախտելով իմ իրավունքները (...) 03.04.2017թ. Երևան քաղաքի դատախազը (...) որոշում է կայացրել բողոքի հետաձգման իմ պահանջը մերժելով՝ բողոքը մերժելու մասին (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 2-9):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(...) 2013 թվականի նոյեմբերի 15-ին Ռազմիկ Վանյանցի կողմից ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչությունում ներկայացված հաղորդման հիման վրա 2013 թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշերով հարուցվել է թիվ 59104713 քրեական գործը, որի շրջանակներում ձեռնարկված նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների համակցված վերլուծության և գնահատման արդյունքում քրեական վարույթն իրականացնող մարմինը 2015 թվականի մարտի 8-ին որոշում է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 12-րդ կետերի հիմքով:*

(...)

Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կ.Ներսիսյանի 11.04.2017թ. թիվ 40/104դ-17 գրության համաձայն փուժողին ուղարկվել է 08.03.2017թ. «քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» որոշման հայերեն օրինակը, իսկ Երևան քաղաքի դատախազի տեղակալի 04.04.17թ. թիվ 50/5դ-17 գրությամբ փուժողին ուղարկվել է նաև 03.04.2017թ. «բողոքը մերժելու մասին» Երևան քաղաքի դատախազի որոշման հայերեն օրինակը: Հիշյալ գրություններով փուժողին հայտնվել է նաև, որ 08.03.2017թ. «քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» որոշման, ինչպես նաև Երևան քաղաքի դատախազի 03.04.2017թ.

«բողոքը մերժելու մասին» որոշումների ռուսերեն թարգմանված օրինակները վերջինիս կտրամադրվեն պատրաստ լինելուն պես:

Դատարանն արձանագրում է նաև, որ սույն բողոքը քննության առնելու ընթացքում ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Կ.Ներսիսյանի 31.05.17թ թիվ 40/-4կգ և Երևան քաղաքի դատախազության ներկայացուցիչ Գ.Գևորգյանի 01.06.17թ թիվ 50/101մ-17 գրություններին կից դատարանում ստացվել են 08.03.2017թ. «քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» որոշման, ինչպես նաև Երևան քաղաքի դատախազի 03.04.2017թ. «բողոքը մերժելու մասին» որոշումների ռուսերեն թարգմանված օրինակները և դրանք փուժող Ռ.Վանյանցին փոստային ծառայության միջոցով ուղարկելու վերաբերյալ հավաստող փաստաթղթերը (հիմք «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ անդորրագրեր), որոնք դատական նիստի ընթացքում տրամադրվեցին բողոքաբերի ներկայացուցչին:

(...) [Դ]ատարանը փաստում է, որ բողոքաբերի կողմից պահանջվող որոշումների ռուսերեն թարգմանված օրինակները Երևան քաղաքի դատախազության և ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության կողմից տրամադրվել են փուժողին առաջին իսկ հնարավորության դեպքում, իսկ այն տրամադրելու հետ կապված ողջամիտ ժամանակահատվածը պայմանավորված է եղել որոշումները համապատասխան ընթացակարգով իրավասու մարմնի կողմից թարգմանելու և քրեական վարույթն իրականացնող մարմիններին տրամադրելու հանգամանքով, որպիսի պայմաններում դատարանը գտնում է, որ սույն բողոքը քննության առնելու պահին Երևան քաղաքի դատախազ Ռ.Ասլանյանի և ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կ.Ներսիսյանի գործողությունների արդյունքում փուժող Ռ.Վանյանցի իրավունքները չեն խախտվել, այդ կապակցությամբ վերջինիս կողմից բողոքում բերված պատճառաբանությունները և հիմնավորումները եղել են վաղաժամ, իսկ տվյալ պահին ոչ փաստարկված, քանի որ չեն բխում դատական նիստի ընթացքում հետազոտված նյութերից:

Ինչ վերաբերում է բողոքաբերի և նրա ներկայացուցչի մեկ այլ պահանջին, այն է՝ տրամադրել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից 2016թ. մայիսից հետո կատարված քննչական և դատավարական գործողությունների ողջ նյութերի բնագրերի պատճենները և դրանց ռուսերեն թարգմանված օրինակները, ապա դատարանը գտնում է, որ այն ևս անհիմն է, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն փուժողն իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ, իսկ 11-րդ կետի համաձայն՝ իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու,

որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը: Այսինքն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով (1-ին մասի 11-րդ կետ) սպառիչ կերպով սահմանված են տուժողին պարտադիր հանձնման ենթակա փաստաթղթերը, և ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի վրա այլ փաստաթղթերի հանձնման պարտականություն դրված չէ, իսկ հետազոտված նյութերի համաձայն 2016թ. մայիսից հետո կատարված քննչական և դատավարական գործողությունների շարքում տուժողին պարտադիր հանձնման ենթակա փաստաթղթեր առկա չեն, որպիսի պայմաններում Ռ.Վանյանցի իրավունքները չեն խախտվել:

Բացի այդ, Դատարանը գտնում է, որ բողոքաբերը կաշկանդված չէ դիմել քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված կարգով՝ նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ (...)»:

Արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ դիմող Ռ.Վանյանցի և նրա ներկայացուցչի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 148-157):

10. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է. *«(...) [Հ]իմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կ.Ներսիսյանի՝ 08.03.2017թ. «քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին» և Երևան քաղաքի դատախազ Ռ.Ասլանյանի՝ 03.04.2017թ. «բողոքը մերժելու մասին» որոշումների ոուսերեն թարգմանված օրինակները տուժող Ռազմիկ Վանյանցին տրամադրվել են առաջին իսկ հնարավորության դեպքում, և դրանք տրամադրելու հետ կապված փաստական ժամանակահատվածը պայմանավորված է եղել որոշումները համապատասխան ընթացակարգով իրավասու մարմնի կողմից թարգմանելու և քրեական վարույթն իրականացնող մարմիններին տրամադրելու հանգամանքով:*

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի փաստարկներին առ այն, որ Առաջին ատյանի դատարանը, դուրս գալով բողոքի առարկայի շրջանակներից, արձանագրել է, որ ձեռնարկված նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների համակցված վերլուծության և գնահատման արդյունքում քրեական վարույթն իրականացնող մարմինը 2017 թվականի մարտի 8-ին որոշում է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական

հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին, դիմողը քննիչի որոշման օրինականությունը չի վիճարկել, ապա վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դատարանը նշվածով փաստել է քննիչի կողմից քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը և չի իրականացրել նշված որոշման օրինականության դատական ստուգում:

(…)

(…) Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի պատճառաբանություններին առ այն, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է դատավարության լեզվին չտիրապետող տուժողի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված հատուկ կարգավիճակը, պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի դրույթները մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համատեքստում, ապա վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն արձանագրելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով (1-ին մասի 11-րդ կետ) սպառիչ կերպով սահմանված են տուժողին պարտադիր հանձնման ենթակա փաստաթղթերը, ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի վրա այլ փաստաթղթերի հանձնման պարտականություն դրված չէ, և 2016 թվականի մայիսից հետո կատարված քննչական և դատավարական գործողությունների շարքում տուժողին պարտադիր հանձնման ենթակա փաստաթղթեր առկա չեն, դատավարական իրավունքի նորմերի խախտում թույլ չի տրվել:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքում նշված պատճառաբանություններին, վերաքննիչ դատարանը, հետազոտելով նաև ներկայացված նյութերը, հանգում է հետևության, որ բողոքաբերի ներկայացուցչի պատճառաբանությունները բավարար չափով հիմնավորված չեն, դրանք արդեն իսկ բազմակողմանիորեն ստուգվել, օբյեկտիվ վերլուծության ու գնահատման են ենթարկվել վիճարկվող որոշմամբ, հետևաբար վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանություններն Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու բավարար հիմք հանդիսանալ չեն կարող (…) (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 97-100):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոք բերած անձի կարծիքով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս չի ղեկավարվել Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* և *Լաուրա Զարյանի* վերաբերյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով:

Մասնավորապես, ստորադաս դատարանները դուրս են եկել բողոքի շրջանակներից. Առաջին ատյանի դատարանը պարզորոշ արձանագրել և հստակ իրավական գնահատական է տվել քննիչի՝ 2017 թվականի մարտի 8-ի որոշմանը՝ գտնելով, որ այդ որոշումը կայացվել է նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների համակցված վերլուծության և գնահատման արդյունքում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանն ընդամենը փաստել է որոշում կայացնելն ու չի իրականացրել նշված որոշման օրինականության դատական ստուգում:

11.1. Բողոքաբերը, անդրադառնալով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հայերեն օրինակը և ռուսերեն թարգմանված վավերացված պատճենը տուժող Ռ.Վանյանցին օրենքով սահմանված կարգով չտրամադրելու վերաբերյալ վերաքննիչ բողոքում ներկայացված պատճառաբանություններին, նշել է, որ Վերաքննիչ դատարանը մակերեսային, չպատճառաբանված պատասխաններ է տվել, չի հերքել վերաքննիչ բողոքում բերած՝ Ռ.Վանյանցի իրավունքների խախտման մասին փաստարկները: Մասնավորապես, որոշումներ կայացնելուց հետո, դատարանի նախաձեռնությամբ ու միջոցով պահանջվող որոշումների տրամադրման փաստը Վերաքննիչ դատարանը չի դիտարկել որպես Ռ.Վանյանցի իրավունքների խախտում անգամ այն պայմաններում, երբ դրանք Ռ.Վանյանցի համար առաջացրել էին բացասական հետևանքներ:

Ըստ բողոքի հեղինակի՝ քննիչն իր որոշման հայերեն օրինակը Ռ.Վանյանցին է ուղարկել որոշում կայացնելուց միայն 2 ամիս 8 օր հետո, երբ դատարանից տեղեկացել է Ռ.Վանյանցի բողոքի մասին:

11.2. Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարաններում ներկայացված բողոքներում ընդգծվել է քրեական դատավարության լեզվին չտիրապետող և արտերկրում մշտապես բնակվող, թոշակառու տուժող Ռ.Վանյանցին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ և այլ հոդվածներով նախատեսված գործի նյութերին իր տիրապետած լեզվով ծանոթանալու իրավունքից զրկելու փաստը: Նրա կարծիքով Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի դրույթները մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համատեքստում, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը կարճված գործի նյութերին ծանոթանալու իրավունք սահմանում է նաև տուժողի համար:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 28-ի որոշումը, արձանագրել Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներում բերված՝ թիվ 59104713 քրեական գործով տուժող Ռ.Վանյանցի իրավունքների խախտման փաստերը և սահմանել քրեական վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը՝ վերացնելու տուժող

Ռ.Վանյանցի իրավունքների խախտումները, կամ բեկանել նշված որոշումը և նյութերն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների դիրքորոշումներն առ այն, որ տուժող Ռ.Վանյանցը կարճված գործի նյութերին կարող էր ծանոթանալ նախաքննության ավարտման պահից:

14. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները:

3. Քրեական դատավարության լեզվին չտիրապետող համապատասխան անձանց տրվում են սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են»:

Քննարկվող հոդվածը թեև ամրագրում է, որ քրեական դատավարությունը Հայաստանի Հանրապետությունում տարվում է հայերեն, այնուամենայնիվ, իրավունք է վերապահում յուրաքանչյուրին, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, քրեական դատավարության ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին նա տիրապետում է՝ որպես երաշխիք, ի թիվս այլոց, սահմանելով, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրենց բոլոր իրավունքները:

Ընդ որում, քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց՝ իրենց համար հասկանալի լեզվով հանդես գալու իրավունքը պետք է ապահովվի դատավարության բոլոր փուլերում, քանի որ առանց հասկանալի լեզվով հանդես գալու ազատության իրացման հնարավորության անհնար է արդարադատության այնպիսի հիմնարար սկզբունքների իրականացումը, ինչպիսիք են պաշտպանության իրավունքի ապահովումը, գործի արդարացի

քննությունը, օրինականությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունը, մրցակցությունը *(տե՛ս, mutatis mutandis, Ն.Գեղաշվիլու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07, Գ.Խաչատրյանի և Ս.Քրմոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0059/01/14 որոշումները)*:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տուժողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

(…)

9) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ.

(…)

11) իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը.

12) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քննիչը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը և վարույթը կարճելու ու քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանոթանալ կարճված գործի նյութերին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու՝ տուժողի իրավունքի իրացման պահի հստակեցման կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Ս]ահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն առանձնացնում է մինչև նախնական քննության ավարտը (գործով*

մեղադրական եզրակացություն կազմելը) տուժողի և/կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի համար մատչելի՝ գործի նյութերի որոշակի ողջամիտ շրջանակ, որոնց վերաբերյալ տուժողի տեղեկացվածությունը նախնական քննության փուլում ապահովում է տուժողի՝ բացարկներ հայտնելու, միջնորդություններ հարուցելու, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքներն իրացնելու հնարավորությունը և այդպիսով երաշխավորում է նաև տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը մինչդատական վարույթի ընթացքում:

Ինչ վերաբերում է նախնական քննության այն փուլյաներին, որոնք մինչև դրա ավարտը կարող են հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ և կարող են մատչելի դառնալ տուժողին միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից իր հայեցողության իրացման արդյունքում, ապա այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչպես դա նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ի 102-րդ հոդվածով:

(...)

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ճշգրտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու՝ տուժողի իրավունքի իրացման պահը: (...)

(...) [Գ]ործի նյութերին (...) տուժողի կողմից ծանոթանալու ժամանակահատվածը կազմում է նախաքննության ինքնուրույն մաս, նախորդում է նախաքննության ավարտին, և, հետևաբար, տուժողը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածով սահմանված՝ գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքն իրացնում է մինչև նախաքննության ավարտը:

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդվածն ամրագրում է գործի նյութերին ծանոթանալուց հետո՝ լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու կամ նոր դատավարական որոշումներ կայացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունը: Ընդ որում, նույն հոդվածը հստակորեն սահմանում է միջնորդությունը բավարարելուց հրաժարվելու դեպքում հրաժարվելու մասին որոշման բողոքարկման կարգը (...)» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1008 որոշումը):

ՍԴՈ-1372 որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է. *«(...) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշատակված որոշման շրջանակում դատավարության մասնակցի՝ գործի նյութերին ծանոթանալու*

իրավունքի վերաբերյալ վերը նշված իրավական դիրքորոշումները վերաբերում են մեղադրական եզրակացություն կազմելու միջոցով նախաքննության ավարտման դեպքին, այդուհանդերձ, դրանք համապատասխան կիրառելի են նաև գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց, մասնավորապես, տուժողի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի նկատմամբ:

(…) [Հ]իշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում Սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նաև նրան, որ գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի (…)՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում (…)» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 30-ի թիվ ՍԴՈ-1372 որոշումը):

16. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով մինչդատական վարույթի շրջանակներում դատավարության լեզվին չտիրապետող տուժողի իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով տուժողին պետք է տրամադրվի այն լեզվով, որին նա տիրապետում է որպես վերջինիս հանձնման ենթակա փաստաթուղթ: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ տուժողը կարող է իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածը պարտավորեցնում է քննիչին քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենը, ի թիվս այլոց, ուղարկել նաև տուժողին: Վերոնշյալը կարևոր է տուժողի իրավունքների, հատկապես՝ բողոքարկման իրավունքի պատշաճ իրացումը երաշխավորելու տեսանկյունից:

Ինչ վերաբերում է գործի նյութերին ծանոթանալու տուժողի իրավունքին, ապա այն պետք է իրացվի մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ եթե տուժողը չի տիրապետում դատավարության լեզվին, ապա նրան ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է հնարավորություն տրվի այդ ընթացքում, պետական միջոցների հաշվին, թարգմանչի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իր իրավունքները:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը 2017 թվականի մարտի 8-ին որոշում է կայացրել քրեական հետապնդում չհրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին: Երևան քաղաքի դատախազի՝ 2017 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 8-ի որոշման դեմ Ռ.Վանյանցի ներկայացրած բողոքը մերժվել է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ռ.Վանյանցը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել անհապաղ իրեն հանձնել Երևան քաղաքի դատախազի՝ իր բողոքը մերժելու մասին 2017 թվականի ապրիլի 3-ի որոշման ռուսերեն թարգմանված օրինակը, նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 8-ի որոշման հայերեն և ռուսերեն օրինակները, ինչպես նաև 2016 թվականի մայիսից հետո քրեական գործի ողջ նյութերի բնագրերի պատճենները և դրանց ռուսերեն թարգմանված օրինակները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, ի թիվս բողոքաբերի այլ փաստարկների, անդրադառնալով 2016 թվականի մայիսից հետո կատարված քննչական և դատավարական գործողությունների ողջ նյութերի բնագրերի պատճենները և դրանց ռուսերեն թարգմանված օրինակները հանձնելու պահանջին, նշել է, որ այն անհիմն է, քանի որ հետազոտված նյութերի համաձայն՝ 2016 թվականի մայիսից հետո կատարված քննչական և դատավարական գործողությունների շարքում տուժողին պարտադիր հանձնման ենթակա փաստաթղթեր առկա չեն: Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ բողոքաբերը կաշկանդված չէ դիմելու քրեական վարույթն իրականացնող մարմնին **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված կարգով՝ նախաքննության ավարտման պահից ծանոթանալու գործի բոլոր նյութերին,** դրանցից պատճեններ հանելու և գործից դուրս գրելու ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը ներկայացված բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախքան քրեական գործով վարույթը կարճելը, գործի նյութերին տուժողին ծանոթացնելն ունի կարևոր նշանակություն՝ անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու

տեսանկյունից: Այլ կերպ՝ գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց, մասնավորապես տուժողի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը պետք է իրացվի մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում: Ընդ որում, եթե տուժողը չի տիրապետում դատավարության լեզվին, ապա գործի նյութերին ծանոթանալու ընթացքում վարույթն իրականացնող մարմինը պետք է թարգմանչի միջոցով ապահովի վերջինիս իրավունքների պատշաճ իրացումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մինչդեռ ստորադաս դատարաններն արձանագրել են, որ բողոքաբերը կաշկանդված չէ դիմելու քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ **արդեն իսկ կարճված գործի նյութերին** ծանոթանալու, դրանցից պատճեններ և ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ դուրս գրելու համար: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դիրքորոշումը չի բխում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված և սույն որոշման 16-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներից:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների դիրքորոշումներն առ այն, որ տուժող Ռ.Վանյանցը կարճված գործի նյութերին կարող էր ծանոթանալ նախաքննության ավարտման պահից, հիմնավոր չեն:

19. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վճռաբեկ բողոքում բարձրացված մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-11.1-րդ կետերը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են և բխում են սույն գործի փաստական տվյալներից:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ, 262-րդ և 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, դատական ակտերը բեկանելու հիմք են: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է վերացնի իր դատական ակտում թույլ տրված խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 12-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 28-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0205/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝	Վ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մեղադրյալ՝	Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻ
դատախազ՝	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի հունվարի 12-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 60112017 քրեական գործը:

Նախաքննական մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Արթուր Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2017 թվականի սեպտեմբերի 7-ին որոշում է կայացվել Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

1.1. 2017 թվականի սեպտեմբերի 20-ից քրեական գործով հետագա նախաքննությունը շարունակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ Ա.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամիս ժամկետով, իսկ մեղադրյալի և պաշտպանի միջնորդությունը՝ կալանավորումը գրավով փոխարինելու մասին՝ մերժվել:

2. Մեղադրյալ Ա.Հակոբյանի պաշտպան Հ.Արսենյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը բեկանել է և մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել գրավը՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցներից վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել մեղադրյալ Ա.Հակոբյանը և պաշտպան Վ.Թադևոսյանը՝ խնդրելով մերժել ներկայացված վճռաբեկ բողոքը՝ փաստարկելով, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

4. Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«Նա, 2017թ. սեպտեմբերի 5-ին, ժամը 12:30-ի սահմաններում, «Համմեր» մակնիշի 07 XX 078 հ/հ ավտոմեքենան վարել է Երևան քաղաքի Աճառյան փողոցով դեպի Մյասնիկյան պողոտայի ուղղությամբ: Մոտենալով Աճառյան փողոցի թիվ 42 հասցեին թույլ է տվել ՀՀ Կառավարության 2007թ. հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների» 67 կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման*

մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ իր ընթացքի ուղղությամբ նկատելով խոչընդոտը ժամանակին չի դիմել արգելակման արագությունն իջեցնելու ընդհուպ մինչև ավտոմեքենան կանգնեցնելը, այլ դիմել է կտրուկ մանևրման և մուտք գործել հանդիպակաց գոտի, տեխնիկական տեսակետից սխեղծել է վթարային իրադրություն, ինքն իրեն զրկելով վթարը կանխելու հնարավորությունից և ավտոմեքենայի աջ կողի մասով ընդհարվել է Կարեն Սուրենի Մկրտչյանի վարած «Օպել» մակնիշի 32 OL 127 հ/հ ավտոմեքենայի ձախ կողային մասին, որի հետևանքով անչափահաս Լարիսա Կարենի Մկրտչյանին անզգուշությամբ պատճառել մահ» (տես նյութեր, հատոր 1, թերթեր 127-128):

4.1. Ա.Հակոբյանի՝ որպես կասկածյալ, 2017 թվականի սեպտեմբերի 5-ի հարցաքննության արձանագրության համաձայն՝ *«(…) Մեքենայում ես տեսել եմ 4 անձի, որոնցից մեկն անչափահաս աղջիկ: Ղեկին եղել է տղամարդ, իսկ ուղևորները կանայք էին: (…) Ընթացքում տեսա, որ երեխան մահացել է, իսկ մյուս անձինք սպացել են մարմնական վնասվածքներ: Ես անմիջապես զանգահարեցի իմ բջջային հեռախոսից ՃՈ 177 թեժ հեռախոսահամարին և հայտնեցի կատարվածի մասին: Դեպքից որոշ ժամանակ հետո ես նկատեցի, որ լցակայանում դրված են տեսանկահարանող սարքեր և խնդրեցի նրանց, որ տեսնեմ, թե արդյոք ֆիքսվել է վթարի պահը: Երբ տեսա, որ լիցքավորման կետում առկա է վթարի պահը, ես այդ ամենին զուգահեռ իմ բջջային հեռախոսով նկարեցի տեսաձայնագրությունը, որը ձայնագրեցի լազերային սկավառակի վրա և ահա ներկայացնում եմ Ձեզ (…)»* (տես նյութեր, հատոր 1, թերթեր 63-65):

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշման համաձայն՝ *«(…) Դատարանը, գնահատելով (…) ներկայացված փաստարկները, տեղեկությունները, փաստում է, որ (…) դատաբժշկական դատաավտոտեխնիկական, տեսաձայնագրային փորձաքննությունների եզրակացությունները ստանալու, ինչպես նաև այլ անձանց հարցաքննելու ճանապարհով ապացույցների հավաքման, ձեռք բերմանն ուղղված դատավարական, քննչական գործողությունների կատարումը տվյալ դեպքում Դատարանի համար բավարար և անհրաժեշտ հիմք է հանդիսանում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը 2 ամսով երկարացնելու համար, հաշվի առնելով, որ նման պայմաններում բարձր են հավանական ռիսկերն առ այն, որ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով խոչընդոտելու մինչդատական վարույթում գործի քննությանը:*

Դատարանի վերոգրյալ հետևությունները պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ մեղադրյալին վերագրվում է այնպիսի հանրորեն վտանգավոր արարքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով (…):

Միաժամանակ, Դատարանը, քննարկելով մեղադրյալի և պաշտպանի միջնորդությունները կալանավորման այլընտրանքային խափանման միջոց հանդիսացող գրավով ազատելու մասին, գտնում է, որ այն քրեական գործի տվյալ փուլում անթույլատրելի է (…), քանի որ մեծ է հավանականությունը, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, հնարավոր է ձեռնարկի այնպիսի քայլեր, որով կխոչընդոտի մեղադրանքի կողմի գործողությունները, այդ թվում կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով խոչընդոտելու մինչդատական վարույթում գործի քննությանը, իսկ նման ենթադրություններ կատարելու համար Դատարանը հիմնվում է ներկայացված փաստերի, տեղեկությունների, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմքերի առկայության վերաբերյալ վերևում ներկայացված հանգամանքների վրա (…)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 101-108):

6. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 20-ի որոշման համաձայն՝ *«(…) Դատարանի այն պատճառաբանությունը, որ այլ ընտրանքային երաշխիքը տվյալ դեպքում չի կարող գործուն երաշխիք հանդիսանալ մեղադրյալ Արթուր Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման հիմքերի չեզոքացման համար, հիմնազուրկ է:*

Տուժողի իրավահաջորդը հայտնել է, որ Արթուր Հակոբյանի հետ թշնամական հարաբերությունների մեջ չի գտնվում, նրան մեղավոր չի համարում տեղի ունեցած վթարի հարցում, նրա նկատմամբ որևէ պահանջ չունի և խնդրել է նրան ազատել կալանքից: (…)

Որպես անձը բնութագրող տվյալներ, Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում այն, որ Արթուր Հակոբյանն ունի մշտական բնակության վայր, նախկինում դատապարտված կամ որևէ կերպ պատասխանատվության չի ենթարկվել, Հայ-Ռուսական համալսարանի ՀՌՀ-ի իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտի տնօրենի կողմից տրված բնութագրի համաձայն՝ ուսման ամբողջ ընթացքում իրեն դրսևորել է որպես բարեխիղճ ուսանող, դրական անձնային որակներ կրող և բարձր քաղաքացիական գիտակցություն ունեցող անձ, Երևանի «Գալիք» համալսարանի ռեկտորատի կողմից պարգևատրվել է շնորհակալագրերով՝ ՀՀ և ԼՂՀ սահմաններն արիաբար և անձնվիրաբար պաշտպանելու համար:

Բացի դրական բնութագրից, Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև մեղադրյալի վարքագիծը դեպքից հետո, մասնավորապես՝ մնացել է դեպքի վայրում, ճանապարհային ոստիկանությանը հայտնել պատահարի մասին, օժանդակել է նախաքննական մարմնին՝ ներկայացնելով լազերային սկավառակի վրա ՃՏՊ-ին նախորդած և ՃՏՊ-ի պահին արձանագրած տեսանյութը:

Վերը թվարկված հանգամանքներն իրենց համակցության մեջ, քննարկվող պարագայում, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ էականորեն նվազեցնում են այլընտրանքային խափանման միջոցի կիրառման պայմաններում նրա կողմից գործի քննությանն ու քրեական դատավարության խնդիրների իրագործմանը խոչընդոտելու և թաքնվելու հավանականությունը (...)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 51-60):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքի հեղինակը, վկայակոչելով կալանքը գրավով փոխարինելու մասին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ Առաջին ատյանի դատարանն իրավաչափորեն մերժել է այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման վերաբերյալ պաշտպանական կողմի միջնորդությունը՝ հաշվի առնելով, որ բարձր է եղել կալանավորման հիմքերի դրսևորման հավանականությունը:

Անդրադառնալով կալանավորումը գրավով փոխարինելու մասին Վերաքննիչ դատարանի որոշմանը՝ բողոք բերած անձը հայտնել է, որ դատարանն անտեսել է մեղադրյալ Ա.Հակոբյանի՝ ազատության մեջ մնալու դեպքում քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը, որն Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման է ենթարկել: Բողոք բերած անձի պնդմամբ՝ այդ համատեքստում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ տուժողների, մեղադրյալի ցուցմունքներում առկա են հակասություններ, որոնք պարզելու ընթացքում մեղադրյալի կողմից տուժողների վրա անօրինական ազդեցություն գործադրելու և այդ կերպ իրեն ձեռնտու ցուցմունքներ տալուն նրանց հակելու հավանականությունը չի բացառվում, իսկ գրավը՝ որպես խափանման միջոց, որևէ կերպ չի կարող կանխել Ա.Հակոբյանի անօրինական ազդեցությունը դատավարությանը

մասնակցող անձանց վրա այն դեպքում, երբ մեղադրյալն ունի տուժող կողմի վրա ազդելու իրական հնարավորություն, որի մասին են վկայում մահացած Լարիսա Մկրտչյանի իրավահաջորդի կողմից վարույթն իրականացնող մարմնին և դատարանին հասցեագրված դիմումներն առ այն, որ իրենք արդեն իսկ գնահատել և հիմնավորված են համարել Ա.Հակոբյանի մեղքի բացակայությունն առաջացած վթարի հարցում:

Միևնույն ժամանակ բողոք բերած անձը, ընդգծելով Ա.Հակոբյանին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանը, հայտնել է, որ հետագայում ստացված դատաավտոտեխնիկական եզրակացությամբ հիմնավորվել է, որ մեղադրյալը մինչ վթարն ավտոմեքենան վարել է տվյալ ճանապարհահատվածում տրանսպորտային միջոցների երթևեկության համար սահմանված թույլատրելի 70 կմ/ժ-ը գերազանցող արագությամբ, տեխնիկական տեսակետից թույլ է տվել ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների» 65-րդ և 67-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, դրանցով իսկ պայմանավորել ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից:

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմանը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք մեղադրյալ Ա.Հակոբյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի հաշվի են առնվում՝*

1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3) տարիքը և առողջական վիճակը.

4) սեռը.

5) զբաղմունքի տեսակը.

6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը.

7) գույքային դրությունը.

8) բնակության մշտական վայրի առկայությունը.

9) այլ էական հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գրավը (…) կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: (…)

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

(…)»:

11. Կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Ավետիսյանի* գործով որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով առ այն, որ *«[Ա]նձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա (…):*

(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու

կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառիչ:

Ուստի (…) գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը» (տե՛ս *Ասլան Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 34-րդ և 36-րդ կետերը):

Զարգացնելով գրավի թույլատրելիության վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը *Դ.Վարդանյանի* գործով որոշմամբ արձանագրել է, որ *«[Մ]եղադրյալին կալանքից գրավով ազատելու հարցը քննարկելիս դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե մեղադրյալի նկատմամբ ինչ հիմքով է կալանավորումը կիրառվել որպես խափանման միջոց, և արդյոք փվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործուն երաշխիք հանդիսանալ փվյալ հիմքի չեզոքացման համար:*

(…)

[Գ]րավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով» (տե՛ս *Դավիթ Վարդանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱՔԴ/0056/06/14 որոշման 16-րդ կետը):

11.1. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Ավետիսյանի և Դ.Վարդանյանի* վերաբերյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Ա.Ղուկասյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «*ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքները թվարկված են ոչ սպառիչ, և որպես այդպիսիք կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ: Այլ խոսքով՝ քննարկվող նորմով նախատեսված է կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքների բաց թվարկում, իսկ մեկնաբանման ejusdem generis հանրաճանաչ կանոնի համաձայն՝ բաց թվարկման չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրերի բովանդակությունից. անորոշ տարրը պետք է կրի այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին: Վերոգրյալի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքների բնույթի և բովանդակության հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելիս*

դատարանը կարող է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք.

ա) վերաբերում են քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելուն և բարձրացնում ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը,

բ) չեն հանգեցնում անձի այլ հիմնական իրավունքների խախտման (վերջինիս հրամայականը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներից (...))» (տե՛ս *Անդրեաս Ղուկասյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱՔԴ/0533/06/16 որոշման 15-րդ կետը):

12. *Ա.Ղուկասյանի* որոշմամբ ձևավորած նախադեպային իրավունքի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ինչպես կալանքից գրավով ազատելն անթույլատրելի, այնպես էլ թույլատրելի ճանաչելիս դատարանը կարող է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք վերաբերում են քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելուն: Միևնույն ժամանակ, ի տարբերություն գրավի կիրառումը մերժելուն՝ կալանքը գրավով փոխարինելու պատճառաբանության հիմքում ընկած հանգամանքները պետք է դիտարկվեն որպես մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում պատշաճ վարքագծի դրսևորման երաշխիք:

13. Սույն գործի նյութերից երևում է, որ Ա.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով այն ենթադրյալ հանցանքի համար, որ նա 2017թ. սեպտեմբերի 5-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, «Համմեր» մակնիշի 07 XX 078 h/h ավտոմեքենան Աճառյան փողոցի թիվ 42 հասցեով վարելիս թույլ է տվել ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների» 67-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ իր ընթացքի ուղղությամբ նկատելով խոչընդոտը՝ ժամանակին չի դիմել արգելակման՝ արագությունն իջեցնելու, ընդհուպ մինչև ավտոմեքենան կանգնեցնելը, այլ դիմել է կտրուկ մանևրման և մուտք գործել հանդիպակաց գոտի, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն՝ ինքն իրեն զրկելով վթարը կանխելու հնարավորությունից, և ավտոմեքենայի առջևի մասով ընդհարվել է Կ.Մկրտչյանի վարած «Օպել» մակնիշի 32 OL 127 h/h ավտոմեքենայի ձախ կողային մասին, որի հետևանքով անչափահաս Լ.Մկրտչյանին անզգուշությամբ պատճառել է մահ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, քննարկելով Ա.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած միջնորդությունը, արձանագրել է, որ կատարվելիք գործողությունների, մասնավորապես՝ դատաբժշկական, դատաավտոտեխ-

նիկական, տեսաձայնագրային փորձաքննությունների եզրակացությունները ստանալու, այլ անձանց հարցաքննելու, ապացույցների ձեռքբերմանն ուղղված քննչական գործողություններ կատարելու հանգամանքները բավարար են մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու համար՝ հաշվի առնելով, որ բարձր է հավանականությունը, որ ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրել, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնել կամ կեղծել, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալ կամ այլ ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Այդ պատճառաբանության հիման վրա Առաջին ատյանի դատարանը մերժել է նաև այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման վերաբերյալ մեղադրյալի և նրա պաշտպանի միջնորդությունները (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը մասնակիորեն բեկանել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել գրավը՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով՝ հիմքում դնելով ինչպես տուժողի իրավահաջորդի դիրքորոշումն այն մասին, որ Ա.Հակոբյանին մեղավոր չի ճանաչում տեղի ունեցած վթարի հարցում, նրա նկատմամբ որևէ պահանջ չունի և խնդրում է նրան ազատել կալանքից, այնպես էլ Ա.Հակոբյանի մշտական բնակության վայր ունենալու, նախկինում դատապարտված կամ որևէ կերպ արատավորված չլինելու, որպես բարեխիղճ ուսանող, դրական անձնային որակներ կրող և բարձր քաղաքացիական գիտակցություն ունեցող, ՀՀ և ԼՂՀ սահմաններն արիաբար և անձնվիրաբար պաշտպանող անձ բնութագրվելու հանգամանքները: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև, որ Ա.Հակոբյանը վթարից հետո մնացել է դեպքի վայրում, ճանապարհային ոստիկանությանը հայտնել պատահարի մասին, օժանդակել է նախաքննական մարմնին՝ ներկայացնելով լազերային սկավառակի վրա ճանապարհատրանսպորտային պատահարին նախորդած և դրա պահին արձանագրած տեսանյութը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելիս իր որոշման հիմքում ոչ իրավաչափորեն դրել է՝

ա) տեղի ունեցած վթարում Ա.Հակոբյանին մեղավոր չճանաչելու, նրա նկատմամբ որևէ պահանջ չունենալու և նրան կալանքից ազատելու խնդրանք պարունակող տուժողի իրավահաջորդի դիրքորոշումն այն դեպքում, երբ այդ

հանգամանքները կալանավորումը գրավով փոխարինելու հարցը լուծելիս չեն կարող դիտարկվել որպես մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում պատշաճ վարքագծի դրսևորման երաշխիք,

բ) վթարից հետո Ա.Հակոբյանի կողմից դեպքի վայրը չլքելու հանգամանքն այն դեպքում, երբ դա բխել է քաղաքացիական հասարակությունում հաստատված կարգը պահպանելու նրա պարտականությունից, հակառակ պարագայում նրան կարող էր մեղսագրվել նաև ճանապարհատրասպորտային վայրը թողնելու համար նախատեսված հանցանքի կատարումը: Այսինքն՝ քրեական օրենքով արգելված հնարավոր այլ արարքի չկատարումը չի կարող նվազեցնել մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը,

գ) պատահարի մասին ճանապարհային ոստիկանությանը հայտնելու հանգամանքն այն դեպքում, երբ ինքնին դեպքը տեղի է ունեցել ցերեկային ժամին, հասարակական վայրում, բանուկ ճանապարհին, այլ անձանց ներկայությամբ, ինչը բավարար է արձանագրելու համար, որ պատահարի մասին ճանապարհային ոստիկանությանը սեփական նախաձեռնությամբ չհայտնելու պարագայում այն միանշանակ հայտնի էր դառնալու համապատասխան մարմիններին: Ուստի մեղադրյալի կողմից սեփական նախաձեռնությամբ պատահարի մասին ոստիկանության աշխատակիցներին տեղյակ պահելու հանգամանքը չի կարող կանխորոշող նշանակություն ունենալ նրա հետագա վարքագծի իրավաչափությունը գնահատելու հարցում,

դ) վթարն արձանագրած տեսանյութը մեղադրյալի կողմից նախաքննական մարմնին ներկայացնելու հանգամանքն այն դեպքում, երբ այդ տեսանյութը ձայնագրառվել է դեպքի վայրին մոտ գտնվող բենզալցակայանի տեխնիկական սարքերի միջոցով և ընդամենը մեղադրյալի միջոցով հասու դարձել համապատասխան մարմիններին: Մասնավորապես՝ վթարից հետո դեպքի վայրում նկատելով բենզալցակայանի տեսանկարահանող սարքերի առկայությունը՝ մեղադրյալը խնդրել է դրանցով ձայնագրառված վթարի պահը վերարտադրել, որին զուգահեռ ձայնագրառել է այն իր բջջային հեռախոսով և դեպքից հետո ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 4.1-րդ կետը): Այսինքն՝ նման պայմաններում, երբ համապատասխան տեսանյութը ձայնագրառող տեխնիկական սարքերը տեղադրված են եղել հասարակության անդամների համար տեսանելի վայրում, այդ տեսանյութի առկայության փաստը չէր կարող գտնվել մեղադրյալի բացառիկ իմացության ոլորտում և նվազագույն ջանքերի գործադրմամբ ողջամտորեն ձեռք էր բերվելու վարույթն իրականացնող մարմնի կողմից, ինչի մասին է վկայում նաև այն, որ նախաքննական մարմնի՝ 2017 թվականի սեպտեմբերի 30-ի արձանագրությամբ զննության է ենթարկվել վերոնշյալ տեխնիկական սարքերով ձայնագրառված տեսանյութը, որն առգրավվել է «Յուգ-Գազ Գրուպ» ՍՊ ընկերությունից (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 76-79): Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից նշված

հանգամանքը ևս չի կարող կանխորոշող նշանակություն ունենալ մեղադրյալի հետագա վարքագծի իրավաչափությունը գնահատելու հարցում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից գրավի թույլատրելիության հիմքում դրված՝ Ա.Հակոբյանի մշտական բնակության վայր ունենալու և դրական բնութագրվելու հանգամանքներին, ապա Վճռաբեկ դատարանը, դրանք գնահատելով Ա.Հակոբյանին մեղսագրվող արարքի բնույթի ու հանրային վտանգավորության աստիճանի համատեքստում (մասնավորապես՝ հաշվի առնելով, որ Ա.Հակոբյանին մեղսագրվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների» և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջներին հակասող գործողությունների կատարում, որի հետևանքով անչափահաս Լ.Մկրտչյանին անզգուշությամբ պատճառվել է մահ), փաստում է, որ վերջիններս չեն կարող բավարար լինել արձանագրելու, որ գրավի կիրառումը տվյալ դեպքում կարող է գործուն երաշխիք լինել մեղադրյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման հիմքերի չեզոքացման համար (կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը գնահատման ենթարկելու անհրաժեշտության մասին տե՛ս *Սամվել Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշման 14-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա.Հակոբյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 143-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ գնահատման ենթարկելով քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը, այդ թվում՝ հաշվի առնելով Ա.Հակոբյանին մեղսագրվող արարքը, հանգել է իրավաչափ հետևության, որ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց չի կարող երաշխավորել մեղադրյալ Ա.Հակոբյանի վարքագծի պատշաճությունը նրա՝ ազատության մեջ գտնվելու դեպքում: Ընդ որում, թեև Առաջին ատյանի դատարանը Ա.Հակոբյանին վերագրվող արարքի բնույթը գնահատելիս հղում է կատարել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածին, որը մեղսագրված չի եղել նրան, սակայն վերջինիս նկատմամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելու հարցում վերջնական որոշում կայացնելիս հանգել է ճիշտ

եզրահանգման: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ մեղադրյալ Արթուր Արտուշի Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման երկու ամիս ժամկետին հաշվակցել 2017 թվականի նոյեմբերի 7-ից մինչև գրավի կիրառմամբ ազատ արձակվելը մեղադրյալ Արթուր Արտուշի Հակոբյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը վերադարձնել գրավատուին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0131/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Կ.ՔԱՄԱԼՅԱՆԻ
դատախազ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Հասմիկ Հովհաննեսի Գրիգորյանի և Էդուարդ Սերյոժայի Սարիբեկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի մայիսի 8-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11134414 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունիսի 3-ի որոշմամբ Հասմիկ Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նույն թվականի հունիսի 9-ի որոշմամբ Էդուարդ Սարիբեկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով:

2015 թվականի սեպտեմբերի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 11-ի դատավճռով Հ.Գրիգորյանը ճանաչվել է անպարտ և արդարացվել: Նույն դատավճռով Է.Սարիբեկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

3. Մեղադրող Ա.Մարգարյանի և ամբաստանյալ Է.Սարիբեկյանի պաշտպան Կ.Քամալյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի դեկտեմբերի 26-ին որոշում է կայացրել մեղադրողի բողոքը մերժելու, պաշտպանի բողոքը բավարարելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 11-ի դատավճիռը մասնակիորեն բեկանելու մասին: Է.Սարիբեկյանը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 15-ի որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Հ.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) նա, հանդիսանալով «ՀՄՄԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն և համաձայն իր ու «MAN TGA 41.480 F» մակնիշի, 035 LP 61 հաշվառման համարանիշի ավտոմքենայի վարորդ Հրաչ Մանուկյանի միջև 2013թ. հոկտեմբերի 1-ին կնքված թիվ 011013/7 աշխատանքային պայմանագրի 1.6 կետի՝ ունենալով Հ.Մանուկյանի աշխատանքի նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնելու լիազորություն, խախտել է*

տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնները, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործող 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ կետով և 12.0.004-90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերով, որի հետևանքով անզգուշությամբ առաջացրել է «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության բանվոր Վարդան Աշոտի Հովհաննիսյանի մահը, այն է՝ Հ.Մանուկյանին չի հրահանգավորել աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության կանոնների և վտանգավոր գոտում մարդկանց գտնվելու պահին բեռնաթափում չիրականացնելու վերաբերյալ, որի հետևանքով 2014 թվականի մայիսի 6-ին Հրաչ Մանուկյանն իրեն ամրակցված «MAN TGA 41.480F» մակնիշի 035 LP 61 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Երևան քաղաքի Արարատյան 95 հասցեում գործող «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության տարածքում բեռնաթափման վտանգավոր գոտում «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության բանվոր Վարդան Աշոտի Հովհաննիսյանի կանգնած լինելու պայմաններում կատարել է բեռնաթափում, որի հետևանքով «MAN TGA 41.480F» մակնիշի 035 LP 61 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի բեռնահարթակը պոկվել և ընկել է Վարդան Հովհաննիսյանի վրա, որի արդյունքում անզգուշությամբ առաջացրել է Վ.Հովհաննիսյանի մահը (...)»[1] :

5.1. Է.Սարիբեկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) նա, հանդիսանալով «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն և համաձայն իր ու Վարդան Աշոտի Հովհաննիսյանի միջև 2011թ. հունվարի 1-ին կնքված թիվ 22 աշխատանքային պայմանագրի 3.4 կետի՝ ունենալով պարտականություն սրեղծել Վ.Հովհաննիսյանի աշխատանքի անվտանգ և արդյունավետ պայմաններ, աշխատանքի վայրը կահավորել և սարքավորումներ տեղադրել անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պահպանության կանոններին համապատասխան, չի կատարել պայմանագրով իր վրա դրված պարտականությունները և խախտել է տեխնիկայի անվտանգության ու աշխատանքի պաշտպանության կանոնները, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործող 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ, 3.9-րդ կետերով և 12.0.004-90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերով, որի հետևանքով անզգուշությամբ առաջացրել է «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության բանվոր Վարդան Աշոտի Հովհաննիսյանի մահը, այն է՝ ընկերության տարածքում բարձման-բեռնաթափման աշխատանքների կատարման տեղամասում չի տեղադրել անվտանգության նշաններ և թույլացրել է հսկողությունը աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ, պատշաճ չի կազմակերպել բեռնաթափման*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 245-260:

աշխատանքները՝ Վ.Հովհաննիսյանի և «ՀՄՄԾ» ՍՊԸ-ի վարորդ Հրաչ Մանուկյանի հետ չի անցկացրել պատշաճ հրահանգավորում անվտանգության տեխնիկայի կանոնների ու հրահանգների պահպանման, վտանգավոր գոտում մարդկանց գտնվելու պահին բեռնաթափում չիրականացնելու և բեռի հնարավոր ընկնելու գոտուց անվտանգ վայրում կանգնելու վերաբերյալ, որի հետևանքով 2014 թվականի մայիսի 6-ին՝ ժամը 12:30-ին, Հրաչ Մանուկյանն իրեն ամրակցված «MAN TGA 41.480F» մակնիշի 035 LP 61 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Երևան քաղաքի Արարատյան 95 հասցեում գործող «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության տարածքում բեռնաթափման վտանգավոր գոտում «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության բանվոր Վարդան Աշոտի Հովհաննիսյանի կանգնած լինելու պայմաններում կատարել է բեռնաթափում, որի հետևանքով «MAN TGA 41.480F» մակնիշի 035 LP 61 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի բեռնահարթակը պոկվել և ընկել է Վարդան Հովհաննիսյանի վրա՝ անզգուշությամբ առաջացնելով Վ.Հովհաննիսյանի մահը (...)» [1]:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«[Գ]նահատելով գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված (...) ապացույցները՝ [Առաջին ատյանի դատարանը] հաստատված է համարում այն փաստը, որ Էդուարդ Սարիբեկյանը, հանդիսանալով «Ապավեն Տերմինալ» ՓԲ ընկերության տնօրեն, խախտել է Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործող 12.3.009-76 ԳՕՍՏ-ի 2.5-րդ, 3.9-րդ կետերով և 12.0.004-90 ԳՕՍՏ-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերով նախատեսված տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնները, որն անզգուշությամբ առաջացրել է «Ապավեն Տերմինալ» ՓԲ ընկերության բանվոր Վարդան Հովհաննիսյանի մահը:*

Անդրադառնալով ամբաստանյալ Էդուարդ Սարիբեկյանի արարքում սուբյեկտիվ կողմի բացակայության մասին պաշտպան Կարեն Քամալյանի պնդմանը՝ [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ այն անհիմն է՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Պաշտպանն իր պնդումը հիմնավորել է այն հանգամանքով, որ առաջադրված մեղադրանքում նշված չէ՝ հանցանքը կատարվել է հանցավոր ինքնավստահության, թե հանցավոր անփութության եղանակով, ինչի հետևանքով իր պաշտպանյալը զրկվել է պաշտպանությունը պատշաճ իրականացնելու հնարավորությունից:

Բացի այդ, պաշտպանը հայտնեց, որ առաջադրված մեղադրանքում նշված կանոններն ուժը կորցրած են, և իր պաշտպանյալը ստիպված է եղել դրանից պաշտպանվել, ինչը նույնպես զրկել է նրան պաշտպանությունը պատշաճ իրականացնելու հնարավորությունից:

Բացի այդ, գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց, որը կվկայեր այն

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 245-260:

մասին, որ իր պաշտպանյալը նախատեսել է նրա գործողության (անգործության) հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: Բացի այդ, առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ ամբաստանյալն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն:

(...)

Անդրադառնալով պաշտպանի հաջորդ պնդմանը՝ [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ ամբաստանյալ Էդուարդ Սարիբեկյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ վերջինիս մեղադրանք է առաջադրվել 12.3.009-76 ԳՕՍՏ-ի 2.5-րդ կետով և 12.0.004.90 ԳՕՍՏ-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ և 7.2.1-րդ կետերով նախատեսված կանոնները խախտելու համար:

2006 թվականին ընդունված «Նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ, Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներ և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մի շարք նորմատիվ իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում չեն գործում նախկին ԽՍՀՄ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև ուժը կորցրած են ճանաչվում ՀԽՍՀ օրենքները՝ բացառությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ու դրանում կատարված փոփոխությունների և լրացումների և Օսմանյան Թուրքիայում 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին ՀԽՍՀ 1988 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1401-XI օրենքի:

Տվյալ պարագայում [Առաջին ատյանի դատարանը] հարկ է համարում անդրադառնալ նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթի տարբերակմանը:

Նորմատիվ իրավական ակտի հասկացությունը սահմանված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը: Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:

Մինչդեռ, նորմատիվ-տեխնիկական փաստաթուղթը սահմանում է գործունեության տարբեր ոլորտներին և դրանց արդյունքներին վերաբերող կանոնները, ընդհանուր սկզբունքները և բնութագրերը: Նորմատիվ-տեխնիկականփաստաթղթեր են հանդիսանում ստանդարտները, կանոնները, կանոնակարգերը և այլն: Ստանդարտը, ստանդարտացման նորմատիվ

փաստաթուղթ է, որը, որպես կանոն, մշակվում է էական նշանակություն ունեցող հարցերի շուրջ շահագրգիռ կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հաստատվում է իրավասու մարմնի կողմից: Ստանդարտները հիմնվում են գիտության, տեխնիկայի ընդհանրացված արդյունքների ու գործառնական փորձի վրա և ուղղված են մարդկանց կյանքի և առողջության անվտանգության, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության ապահովմանը:

Ավելին, «Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» Համաձայնագրի (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 13-ից) 1-ին հոդվածի համաձայն՝ «Կողմերը, ունենալով ստանդարտացման, չափագիտության և հաստատագրման համակարգերի կազմավորման և իրականացման և այդ բնագավառում աշխատանքների կազմակերպման հարցերում լիարժեք ինքնուրույնություն.

-օգտագործում են ստանդարտացման և չափագիտության գործող համակարգերի հիմնական դրույթները և դրանք դարձնում շուկայական տնտեսության նկատմամբ կիրառելի՝ ներդաշնակեցնելով միջազգային նորմերի և կանոնների հետ,

- ընդունում են «ԳՕՍՏ»-ի գործող չափորոշիչները որպես միջպետական,

- պահպանում են «ԳՕՍՏ» հապավումը կրկին մտցված միջպետական չափորոշիչների համար՝ նախատեսելով դրանց պահանջների ներդաշնակությունը միջազգային, տարածաշրջանային և առաջնային ազգային չափորոշիչների հետ(...)»:

Ելնելով վերոգրյալից՝ [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ «ԳՕՍՏ»-երը չեն հանդիսանում նորմատիվ իրավական ակտեր, ուստի 2006 թվականի ՀՕ-199-Ն օրենքի ուժով դրանց գործողությունը դադարեցված չի կարող համարվել:

Բացի այդ, քրեական գործում առկա ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրենի՝ 2015թ. ապրիլի 10-ի թիվ ԵՍ-160 գրության համաձայն՝ «ՀՀ-ում Միջպետական ստանդարտի կարգավիճակով գործում են նախկին ԽՍՀՄ պետական ստանդարտներ՝ ԳՕՍՏ 12.3.009-76 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Բեռնման և բեռնաթափման աշխատանքներ. Անվտանգության ընդհանուր պահանջներ» և ԳՕՍՏ 12.0.004.90 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպում. Ընդհանուր դրույթներ», համաձայն ԱՊՀ երկրների «Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» միջկառավարական համաձայնագրի՝ կնքված 1992թ. մարտի 13-ին»:

(...)

Այսպիսով, գնահատելով գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված (...) ապացույցները, [Առաջին ատյանի դատարանը] հաստատված է համարում ամբաստանյալ Էդուարդ Սարիբեկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու փաստը:

Միևնույն ժամանակ, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվում ամբաստանյալ Համլիկ Գրիգորյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքում հետևյալ պատճառաբանությամբ:

(...) Սույն քրեական գործի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ամբաստանյալ Համլիկ Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ դիտելու համար հիմք է հանդիսացել նրա՝ որպես «ՀՄՄԺ» ՍՊ ընկերության տնօրենի, և «MAN TGA 41.480F» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Հրաչ Մանուկյանի միջև 2013թ. հոկտեմբերի 1-ին կնքված թիվ 011013/7 աշխատանքային պայմանագիրը: Նշված պայմանագրի 1.6 կետի համաձայն՝ «Աշխատողն անմիջականորեն ենթարկվում է տնօրենին»: Ինչպես սույն կետի վերլուծության, այնպես էլ, առհասարակ, ողջ աշխատանքային պայմանագրի ուսումնասիրության արդյունքում, [Առաջին ատյանի դատարանը] հանգում է հետևության, որ նրանում բացակայում է որևէ իրավաբանորեն ձևակերպված պարտականություն, որը կվկայեր այն մասին, որ սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն Համլիկ Գրիգորյանը հանդիսանում է տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնների համար պատասխանատու անձ: Բացի այդ, [Առաջին ատյանի դատարանը] փաստում է նաև, որ քրեական գործում բացակայում է որևէ այլ ապացույց, որը կհիմնավորեր ամբաստանյալ Համլիկ Գրիգորյանի պարտականությունը՝ պահպանելու Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործող 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ կետով և 12.0.004.90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ և 7.2.1-րդ կետերով նախատեսված տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնները:

[Առաջին ատյանի դատարանը] հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպահրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից և ֆիզիկական անձը»: Իսկ նույն օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ աշխատողների առողջությունը և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: «ՀՄՄԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ ամբաստանյալ Համլիկ Գրիգորյանի, և վարորդ Հրաչ Մանուկյանի միջև 2013 թվականի հոկտեմբերի

1-ին կնքված թիվ 011013/7 աշխատանքային պայմանագրի առկայության պայմաններում, [Առաջին ատյանի դատարանը] փաստում է, որ «ՀՄՄԾ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը հանդիսացել է Հրաչ Մանուկյանի գործատուն և Աշխատանքային օրենսգրքի 16-րդ հոդվածի ուժով ձեռք է բերել իրավունքներ և կրել պարտականություններ: Սակայն միայն այն փաստը, որ ամբաստանյալ Համլիկ Գրիգորյանը հանդիսացել է «ՀՄՄԾ» սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրենը դեռևս բավարար չէ հաստատված համարելու, որ վերջինս հանդիսացել է տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնների համար պատասխանատու անձ, քանի որ «ՀՄՄԾ» ՍՊ ընկերության կանոնադրությամբ սահմանված ընկերության տնօրենի միակ լիազորությունն՝ ընկերության ընթացիկ գործունեության իրականացումն է:

Ամփոփելով վերոգրյալը՝ [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ սույն գործի դատաքննության ընթացքում չհիմնավորվեց, որ ամբաստանյալ Համլիկ Գրիգորյանը պարտականություն է կրել՝ ապահովելու տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնները՝ 12.3.009-76 ԳՕՍՏ-ի 2.5-րդ կետով և 12.0.004.90 ԳՕՍՏ-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ և 7.2.1-րդ կետերով նախատեսված պահանջները, հետևաբար՝ [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ բացակայում է տվյալ հանցակազմի այնպիսի պարտադիր հատկանիշ, ինչպիսին է հանցակազմի հատուկ սուբյեկտը (...)» [1]:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(...) [Ք]րեական գործով ձեռք բերված և Առաջին ատյանի դատարանում պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցները բավարար չեն ամբաստանյալ Էդուարդ Սարիբեկյանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ նա կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք:*

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ (...) մեղադրանքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քրեական հետապնդման մարմինը, որպես մեղադրանքի հիմնավորում, վկայակոչել է 12.3.009-76 ԳՕՍՏ-ի 2.5-րդ, 3.9-րդ կետերը և 12.0.004-90 ԳՕՍՏ-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերը, որոնք Հայաստանի Հանրապետությունում դեպքի պահին չեն գործել, քանի որ նշված իրավական ակտերն ընդունվել են նախկին ԽՍՀՄ-ի կողմից՝ համապատասխանաբար 1977 թվականի հուլիսի 1-ին և 1991 թվականի հուլիսի 1-ին, իսկ 2006 թվականի նոյեմբերի 28-ի՝ «Նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ, Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներ և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մի շարք նորմատիվ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 255-262:

իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 1-2-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում չեն գործում նախկին ԽՍՀՄ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև ուժը կորցրած են ճանաչվել ՀԽՍՀ օրենքները, բացառությամբ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի և դրանում կատարված փոփոխությունների ու լրացումների, ինչպես նաև «Օսմանյան Թուրքիայում 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» ՀԽՍՀ 1988 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1401-XI օրենքի:

Իսկ ինչ վերաբերում է 1992 թվականի մարտի 13-ի «Սրտանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» համաձայնագրին, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ թեև Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է վերը նշված համաձայնագիրը, այնուամենայնիվ, այդ համաձայնագրում որևէ նշում առկա չէ մասնավորապես Էդուարդ Սարիբեկյանին առաջադրված մեղադրանքում նշված իրավական ակտի՝ 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ, 3.9-րդ կետերի և 12.0.004-90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերի, ՀՀ-ի կողմից, որպես իրավական ակտեր, ընդունված լինելու մասին:

Այսպիսով Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի դիսպոզիցիան բլանկետային է, այն է՝ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է բացահայտել, թե տվյալ դեպքում կոնկրետ ինչ հատուկ կանոն է խախտվել, իսկ սույն քրեական գործով Էդուարդ Սարիբեկյանին առաջադրված մեղադրանքում նշված են 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ, 3.9-րդ կետերը և 12.0.004-90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերը, որոնք վերոգրյալ մեկնաբանությունների պայմաններում Հայաստանի Հանրապետությունում չեն գործում, գտնում է, որ վերոգրյալ հանգամանքն ինքնին բավարար հիմք է հանդիսանում առաջադրված մեղադրանքում Էդուարդ Սարիբեկյանին արդարացնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Էդուարդ Սարիբեկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք: Այլ խոսքով՝ մեղադրանքի կողմի ապացույցների համակցությունը բավարար չէ Էդուարդ Սարիբեկյանին մեղսագրվող հանցավոր արարքի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:

(...)

Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն հաստատված համարելու, որ «Ապավեն Տերմինալ» ՓԲ ընկերության բանվոր Վարդան Հովհաննիսյանի աշխատանքի անվտանգ և արդյունավետ պայմաններ ստեղծելու պարտականությունը կրողը եղել է (...) տնօրեն Էդուարդ Սարիբեկյանը, ինչպես նաև Էդուարդ Սարիբեկյանին առաջադրված մեղադրանքում նշված 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ, 3.9-րդ կետերը և 12.0.004-90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերը Հայաստանի Հանրապետությունում չեն գործում, գտնում է, որ պետք է ճանաչել և հռչակել Էդուարդ Սարիբեկյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով:

(...)

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ կատարված վերոգրյալ եզրահանգումները, մասնավորապես՝ հանցակազմի հատուկ սուբյեկտ չլինելու և 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ կետը և 12.0.004.90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ և 7.2.1-րդ կետերը ՀՀ-ի կողմից, որպես իրավական ակտ, ընդունված չլինելու մասին, նույնպես գտնում է, որ քրեական գործով ձեռք բերված և Առաջին ատյանի դատարանում պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցները բավարար չեն ամբաստանյալ Հասմիկ Գրիգորյանի անմեղության կանխավարկածը հաղթահարելու և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ նա կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալ Հասմիկ Գրիգորյանի մեղավորության վերաբերյալ դատախազի փաստարկներին, քրեական գործի ուսումնասիրությամբ եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալ Հասմիկ Գրիգորյանի անմեղության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության:

Այսպիսով՝ ամբաստանյալ Հասմիկ Գրիգորյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքում հաստատված չէ, իսկ դատախազի պատճառաբանությունները հերքվում են

Առաջին ատյանի դատարանում պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցներով(...)» [1]:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ և 127-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչպես նաև սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածը, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Բացի այդ, բողոքաբերը, վերլուծելով ապացույցների գնահատման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՔՐԴ/0632/01/08, թիվ ՇԴ/0126/01/12 և թիվ ԵԿԴ/0168/01/12 գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, համադրել է դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և գտել, որ Հ.Գրիգորյանին արդարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի և Է.Սարիբեկյանին արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են, ոչ իրավաչափ և հակասում են նշված իրավական դիրքորոշումներին:

9. Բացի այդ, բողոքի հեղինակն իր անհամաձայնությունն է հայտնել Վերաքննիչ դատարանի այն փաստարկներին, որ տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնները՝ ԳOUS-երը, Հայաստանի Հանրապետությունում չեն գործում և չեն կարող դրվել ամբաստանյալ Է.Սարիբեկյանի մեղադրանքի հիմքում: Ըստ բողոք բերած անձի՝ ԳOUS-երը նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր են, որոնք ՀՀ-ում գործում են ԱՊՀ երկրների միջկառավարական համաձայնագրի հիման վրա, և որոնց վրա չեն տարածվում նորմատիվ-իրավական ակտերին վերաբերող «Նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ, ՀՀ մի շարք օրենքներ և ՀՀ Գերագույն խորհրդի մի շարք նորմատիվ իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի դրույթները: Բացի այդ, բողոքաբերը վկայակոչել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենի գրությունը, որի համաձայն՝ խնդրո առարկա ԳOUS-երը ՀՀ-ում ունեն միջպետական ստանդարտի կարգավիճակ:

9.1. Անդրադառնալով ամբաստանյալ Հ.Գրիգորյանին արդարացնելու հանգամանքին՝ բողոքի հեղինակը փաստել է, որ նշված անձի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտ լինելը հիմնավորվում է ինչպես Հ.Գրիգորյանի և վարորդ Հ.Մանուկյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրով, այնպես էլ՝ թիվ 12.0.004-90 ԳOUS-ի 1.1-րդև 1.3-րդ կետերով:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 155-185:

10. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն ու գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված՝ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու բլանկետային դիսպոզիցիայով նկարագրված նորմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Հասմիկ Գրիգորյանին և Էդուարդ Սարիբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով արդարացնելու վերաբերյալ համապատասխանաբար Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևությունները:

13. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել (...)»:*

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

Նույն օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեահրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով։*

(…)»։

Վերոնշյալ իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ.*«(…) [Ա]նձին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պատիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պահին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պատիժ նախատեսված լինելը։ Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով։ Անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով։*

(…) «[Չ]կա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր։ Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է» [1]։

Զարգացնելով Վ.Ավետիսյանի գործով արտահայտված վերոհիշյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Դ.Սիմիդյանի գործով նշել է.*«(…) [Մ]իայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (…)։ Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով։ Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (…)։ Որակական այս պահանջները պետք է ապահովվեն ինչպես հանցագործության, այնպես էլ դրա համար պատժի նշանակման ժամանակ (…)։ Անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանություններից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար (…)։*

(…) [Օ]րենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական

[1] Տե՛ս *Վարուժան Ավետիսյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշման 13-րդ կետը։

մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է՝ օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին (...)» [1]:

14. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի հանցավորությունն ու պատժելիությունն իրավական որոշակիության չափանիշին համապատասխանող «օրենքով» նախատեսելու պահանջն իրավունքի գերակայության առանցքային բաղադրիչներից է, որն ունի հիմնարար նշանակություն՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս օրինականության սկզբունքն ապահովելու համար: Հստակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ) ամրագրող այդպիսի օրենքը մի կողմից ապահովում է դրանում ամրագրված պահանջների հասցեագրումը համապատասխան վարքագծի դրսևորման ակնկալիք ունեցող անձանց, մյուս կողմից՝ բացառում է կամայականորեն քրեական հետապնդման ենթարկվելու ցանկացած հնարավորություն՝ երաշխավորելով օրենքի միատեսակ կիրառությունը սահմանված նորմատիվ պահանջներին հակասող վարքագիծ դրսևորող անձի նկատմամբ:

Այսինքն՝ նշված սկզբունքի ներքո իրավական պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել որդեգրած քրեական քաղաքականության արտացոլումն այնպիսի «օրենքում», որում նկարագրված կանոնները և դրանց խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքները բովանդակային առումով այնքան որոշակի կլինեն, որ հնարավորություն կտան իրավունքի հիմնական կրողին դրսևորելու սահմանված պահանջներին համապատասխանող վարքագիծ: Վերջինս կարող է ապահովված լինել «իրավական որոշակիության» երկու բաղադրիչներին, այն է՝ «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին համապատասխանող «օրենքի» առկայության պարագայում, որոնք ունեն հետևյալ բովանդակային նշանակությունը.

- «օրենքի» համապատասխանությունը «հասանելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահատել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախտումը մեղսագրվում է անձին, արդյո՞ք եղել է պատշաճ կերպով հրապարակված, ողջամտորեն հասանելի, թե ոչ: Այսինքն՝ «օրենքը» կարող է համապատասխանել հասանելիության չափանիշին, եթե այն, պետական իշխանությունների կողմից լինելով հրապարակված, նվազագույն ջանքերի գործադրմամբ եղել է հասանելի: Որպես այդպիսին, «օրենքը» կարող է հրապարակվել ինչպես դրա տպագիր տարբերակն անձանց

[1] Տե՛ս *Դավիթ Սիմիդյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշման 16-18-րդ կետերը:

հասանելի դարձնելու, այնպես էլ դրա առցանց տարբերակը համապատասխան պաշտոնական էլեկտրոնային

հարթակներում տեղադրելու միջոցով[1],

- «օրենքի» համապատասխանությունը «կանխատեսելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահատել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախտումը մեղսագրվում է անձին, արդյո՞ք բովանդակային առումով ողջամտորեն ընկալելի է եղել անձանց համար: Այլ կերպ՝ արդյո՞ք քրեական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտը, տեղեկանալով «օրենքով» նախատեսված պահանջների մասին, ծանոթանալով դրանց վերաբերյալ նորմատիվ վարքագծի կանոնների բովանդակությանը, դրանց վերաբերյալ տրված դատական մեկնաբանություններին և անհրաժեշտության դեպքում՝ ստանալով համապատասխան իրավական խորհրդատվություն, կարող էր կանխատեսել, թե որ գործողության/անգործության դրսևորումը կհանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի նշանակմանը: Այդ հանգամանքը պարզելիս անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան կանոններն ամրագրող փաստաթղթի բովանդակությունը, ոլորտը, որի կարգավորմանն ուղղված է այդ փաստաթուղթը, ինչպես նաև այն անձանց շրջանակն ու կարգավիճակը, որոնց հասցեագրված է այն[2]:

15. Նախորդ կետում վկայակոչված չափանիշների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս «օրենքը», լինելով «հասանելի» և «կանխատեսելի», պետք է հնարավորություն ընձեռի այդ օրենքի հասցեատիրոջը գիտակցելու իր իրավունքների և ազատությունների իրացման թույլատրելի շրջանակները, հարմարեցնելու իր վարքագիծն այդ շրջանակներն ամրագրող նորմերի պահանջներին և գնահատելու իր վարքագծի իրավաչափությունը՝ կանխատեսելով ոչ իրավաչափ վարքագծի դրսևորելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նշվածը վերաբերում է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած նկարագրական դիսպոզիցիայով ամրագրված հանցագործության պարտադիր և լրացուցիչ հատկանիշներին,

[1] Տե՛ս *mutatis mutandis Kokkinakis v. Greece* գործով Եվրոպական դատարանի՝ 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 14307/88, 40-րդ կետ; *G. v. France* գործով Եվրոպական դատարանի՝ 1995 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 15312/89 գանգատը, 25-րդ կետ; *Korbely v. Hungary* [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 9174/02, 74-75-րդ կետեր:

[2] Տե՛ս *mutatis mutandis Cantoni v. France* գործով Եվրոպական դատարանի՝ 1996 թվականի նոյեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 17862/91, 29-րդ կետը; *Mkrtchyan v. Armenia* գործով Եվրոպական դատարանի՝ 2007 թվականի հունվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 6562/03, 39-րդ կետը; *Kafkaris v. Cyprus* [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 21906/04, 140-րդ կետը; *Kononov v. Latvia* [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36376/04, 235-րդ կետը; *Del Rio Prada v. Spain* [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 42750/09, 79-րդ կետը):

այնպես էլ բլանկետային դիսպոզիցիայով նկարագրված հանցագործության հատկանիշները բացահայտող այլ իրավական ակտերի նորմերին, որոնց պահանջների խախտումը ևս հանգեցնում է քրեական պատասխանատվության: Միայն այդ դեպքում անձի համար կարող է երաշխավորվել իր իրավունքների և ազատությունների իրացման դիսպոզիտիվության թույլատրելի շրջանակներն ընկալելու հնարավորությունը: Հակառակ պարագայում այն իրավական նորմը, որի ենթադրյալ խախտումը մեղսագրվում է անձին, չի կարող համարվել «օրենք», քանի որ այն չի համապատասխանի իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չի լինի բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը[1]:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը՝ դրանց պահպանման համար պատասխանատու անձի կողմից, եթե մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մասնագիտական հիվանդություն՝ պատժվում է (…):*

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ՝ պատժվում է (…)»:

Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը Ա.Մանուկյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.*«Աշխատողի անվտանգությունը և առողջությունն աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանման համակարգ է, և պետությունը պարտավոր է՝*

ա) սահմանել աշխատողի անվտանգության և առողջության պահպանման իրավական կանոններ՝ ամրագրելով դրանք օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով,

բ) նախատեսել համապատասխան քաղաքացիական, վարչական, քրեական սանկցիաներ, որոնք կոչված են կանխելու աշխատողի անվտանգության և առողջության պահպանման կանոնների խախտումները:

Շարադրված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը այն հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են մարդու՝ անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքի ապահովմանը, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում մարդու կյանքը և առողջությունը:

(…)

[1] Տե՛ս *Վարդան Ղազարյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշման 20-րդ կետը, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ 630 որոշման 11-րդ կետը, 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշման 9-րդ կետը:

ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն օբյեկտիվ կողմից բնութագրվում է ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որը դրսևորվում է տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելով:

Անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն առկա է այն դեպքում, երբ՝

1) խախտվել են ՀՀ կառավարության, տարբեր նախարարությունների, գերատեսչությունների, հիմնարկների և առանձին գործատուների կողմից սահմանված՝ տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության հատուկ կանոնները,

2) առաջացել են հանրորեն վտանգավոր այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են տուժողի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի կամ մասնագիտական հիվանդության պատճառումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մաս) կամ մահվան առաջացումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մաս),

3) առկա է պատճառական կապ արարքի (գործողության կամ անգործության) և վրա հասած հետևանքների միջև (...)»[1]:

17. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից հետևում է, որ այն նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով. քրեական պատասխանատվություն նախատեսելով օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման համար՝ այն չի սահմանում այդ կանոնները և, ըստ այդմ, ենթադրում է հղում նորմատիվ իրավական այլ ակտի (ակտերի), որը պետք է ամրագրի դրանք: Դրանից հետևում է, որ տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել դրանք սահմանող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի օգնությանը, որոնք պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքի՝ սույն որոշման 13-15-րդ կետերում բացահայտված «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «ՀՄՄԺ» ընկերության տնօրեն և, համաձայն իր ու վարորդ Հ.Մանուկյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի, ունենալով Հ.Մանուկյանի աշխատանքի նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնելու լիազորություն, խախտել է տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնները, որոնք նախատեսված են

[1] Տե՛ս *Ափոմ Մանուկյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԿԴ/0032/01/12 որոշման 13-14-րդ կետերը:

Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործող թիվ 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ կետով և թիվ 12.0.004-90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերով, որի հետևանքով անզգուշությամբ առաջացրել է «Ապավեն Տերմինալ» ընկերության բանվոր Վ.Հովհաննիսյանի մահը[1]:

Է.Սարիբեկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Ապավեն Տերմինալ» ընկերության տնօրեն և, համաձայն իր ու Վարդան Հովհաննիսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի, ունենալով պարտականություն ստեղծելու Վ.Հովհաննիսյանի աշխատանքի անվտանգ և արդյունավետ պայմաններ, աշխատանքի վայրը կահավորելու և սարքավորումներ տեղադրելու անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պահպանության կանոններին համապատասխան, չի կատարել պայմանագրով իր վրա դրված պարտականությունները և խախտել է տեխնիկայի անվտանգության ու աշխատանքի պաշտպանության կանոնները, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործող թիվ 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ, 3.9-րդ կետերով և թիվ 12.0.004-90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերով, որի հետևանքով անզգուշությամբ առաջացրել է «Ապավեն Տերմինալ» ընկերության բանվոր Վ.Հովհաննիսյանի մահը[2]:

Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով ԳOUS ստանդարտների կիրառմանը, գտել է, որ դրանք ոչ թե նորմատիվ իրական ակտեր են, այլ՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր, ուստի «Նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ, Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներ և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մի շարք նորմատիվ իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի դրույթները դրանց վրա չեն տարածվում: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը վկայակոչել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ընկերության տնօրենի համապատասխան գրությունը, որի համաձայն՝ ԱՊՀ երկրների 1992 թվականի՝ «Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» միջկառավարական համաձայնագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործում են նախկին ԽՍՀՄ պետական ստանդարտներ՝ ԳOUS թիվ 12.3.009-76-ը և ԳOUS թիվ 12.0.004.90-ը:

Արդյունքում, գնահատելով գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել ամբաստանյալ Է.Սարիբեկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու փաստը:

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

Միևնույն ժամանակ ստորադաս դատարանը գտել է, որ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվում ամբաստանյալ Հ.Գրիգորյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքում, քանի որ կնքված աշխատանքային պայմանագրում բացակայում է որևէ իրավաբանորեն ձևակերպված պարտականություն, որը կարող է վկայել այն մասին, որ Հ.Գրիգորյանը տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնների համար պատասխանատու անձ է: Դատարանը փաստել է նաև, որ քրեական գործում բացակայում է որևէ այլ ապացույց, որը կհիմնավորեր ամբաստանյալ Հ.Գրիգորյանի պարտականությունը՝ պահպանելու Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործող թիվ 12.3.009-76 ԳOUS-ի 2.5-րդ կետով և թիվ 12.0.004.90 ԳOUS-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ և 7.2.1-րդ կետերով նախատեսված տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնները[1]:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ մեղադրանքի հիմքում դրված ԳOUS-երն ընդունվել են ԽՍՀՄ-ի կողմից և «Նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ, Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներ և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մի շարք նորմատիվ իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի ուժով չեն գործում Հայաստանի Հանրապետության տարածքում: Անդրադառնալով ԱՊՀ երկրների 1992 թվականի՝ «Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» միջկառավարական համաձայնագրին՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ թեև Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է վերը նշված համաձայնագիրը, այնուամենայնիվ, դրանում որևէ նշում առկա չէ այն մասին, որ թիվ 12.3.009-76 և թիվ 12.0.004-90 ԳOUS-երը՝ որպես իրավական ակտեր, ընդունվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Վերաքննիչ դատարանը, նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն հաստատված համարելու, որ տուժող Վ.Հովհաննիսյանի աշխատանքի անվտանգ և արդյունավետ պայմաններ ստեղծելու պարտականությունը կրողը եղել է ամբաստանյալ Է.Սարիբեկյանը, ինչպես նաև այն, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում նշված ԳOUS-երը Հայաստանի Հանրապետությունում չեն գործում, գտել է, որ պետք է ճանաչել և հոչակել Է.Սարիբեկյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալ Հ.Գրիգորյանի անմեղության վերաբերյալ հանգել է ճիշտ

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հետևության[1]:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-17-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալների արարքներում հանցակազմի բացակայության վերաբերյալ եկել են, ըստ էության, ճիշտ եզրահանգման, սակայն պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել, թե այն նորմատիվ պահանջները, որոնց խախտումը մեղսագրվել է Հ.Գրիգորյանին ու Է.Սարիբեկյանին, արդյո՞ք համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքի՝ «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին:

Մասնավորապես, Հ.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել թիվ 12.3.009-76 ԳՕՍՏ-ի 2.5-րդ և թիվ 12.0.004-90 ԳՕՍՏ-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերի, իսկ Է.Սարիբեկյանին՝ թիվ 12.3.009-76 ԳՕՍՏ-ի 2.5-րդ, 3.9-րդ և թիվ 12.0.004-90 ԳՕՍՏ-ի 7.1.1-րդ, 7.1.5-րդ, 7.2.1-րդ կետերի պահանջները խախտելու համար: Նշված կանոններից թիվ 12.3.009-76 ԳՕՍՏ-ը հաստատվել է ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի Ստանդարտների պետական կոմիտեի՝ 1976 թվականի մարտի 23-ի որոշմամբ, իսկ թիվ 12.0.004-90 ԳՕՍՏ-ը՝ ԽՍՀՄ Արտադրության որակի և ստանդարտների պետական կոմիտեի՝ 1990 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ: Ընդ որում, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրենի՝ 2015 թվականի ապրիլի 10-ի՝ թիվ ԵԱ-160 գրությամբ հաստատվել է, որ Հայաստանի Հանրապետությունում միջպետական ստանդարտի կարգավիճակով գործում են նախկին ԽՍՀՄ պետական ստանդարտները՝ ԳՕՍՏ 12.3.009-76 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Բեռնման և բեռնաթափման աշխատանքներ. Անվտանգության ընդհանուր պահանջներ» և ԳՕՍՏ 12.0.004-90 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպում. Ընդհանուր դրույթներ»՝ համաձայն ԱՊՀ երկրների «Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» միջկառավարական համաձայնագրի՝ կնքված 1992թ. մարտի 13-ին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել այն, որ թիվ 12.3.009-76 և թիվ 12.0.004-90 ԳՕՍՏ կանոններն անձանց համար հասանելի եղանակով պաշտոնական որևէ աղբյուրում հրապարակված չեն, այդ կանոնները կարելի է գտնել միայն համացանցային տիրույթում առկա ոչ պաշտոնական կայքէջերում, ինչը չի երաշխավորում դրանց համապատասխանությունը բնօրինակին և առաջացնում է ողջամիտ կասկած դրանցով սահմանված

[1] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

աշխատանքի պաշտպանության կանոնների արժանահավատության վերաբերյալ: Ընդ որում, հարկ է նաև ընդգծել, որ այդ կանոններն ի սկզբանե կազմված են եղել օտար լեզվով, իսկ դրանց հայերեն թարգմանված օրինակը հասանելի չէ որևէ աղբյուրում:

Ինչ վերաբերում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրենի՝ վերը մեջբերված գրությանը, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև դրա համաձայն՝ թիվ 12.3.009-76 և թիվ 12.0.004-90 ԳOUS-երը գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում, սակայն այն չի պարունակում ո՛չ այդ կանոնների բովանդակությունը, ո՛չ էլ համապատասխան հղում այդ կանոնները գտնելու պատշաճ աղբյուրին:

Այսինքն՝ վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ թիվ 12.3.009-76 և թիվ 12.0.004-90 ԳOUS կանոնները պետական իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես հրապարակված չլինելու պայմաններում ապահովված չի եղել նվազագույն ջանքերի գործադրմամբ դրանք գտնելու և ընթերցելու հնարավորությունը: Ուստի թիվ 12.3.009-76 և թիվ 12.0.004-90 ԳOUS կանոնները, որոնց խախտումը մեղսագրվում է Հ.Գրիգորյանին ու Է.Սարիբեկյանին, չեն համապատասխանել «հասանելիության» չափանիշին: Նման պայմաններում դրանք չեն համապատասխանել նաև «կանխատեսելիության» չափանիշին:

Հետևաբար նշված կանոնները չեն կարող համարվել «օրենք», քանի որ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին: Այդ պայմաններում Հ.Գրիգորյանին և Է.Սարիբեկյանին ԳOUS 12.3.009-76 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Բեռնման և բեռնաթափման աշխատանքներ. Անվտանգության ընդհանուր պահանջներ» և ԳOUS 12.0.004-90 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպում. Ընդհանուր դրույթներ» կանոնների խախտման համար դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (Nullum crimen, nulla poena sine lege) սկզբունքի խախտման:

20. Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքների փաստական կազմում ընդգրկված կանոնները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը սխալ են պատճառաբանել իրենց դատական ակտերը, այնուամենայնիվ, ամբաստանյալներ Հ.Գրիգորյանի և Է.Սարիբեկյանի արարքներում հանցակազմի բացակայության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ Հ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելու և Է.Սարիբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Հասմիկ Հովհաննեսի Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելու վերաբերյալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 11-ի դատավճիռն անփոփոխ թողնելու և Էդուարդ Սերյոժայի Սարիբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0303/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 12-ի որոշման դեմ ամբաստանյալ Սևակ Գևորգի Լսկավյանի պաշտպան Հ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2015 թվականի հունիսի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Արամայիս Ասատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Վերոնշյալ որոշումը Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի՝ 2015 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ վերացվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 63202115 քրեական գործը:

2016 թվականի հոկտեմբերի 6-ին Սևակ Լսկավյանը որպես մեղադրյալ է

ներգրավել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննական մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ս.Լսկավյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին:

2016 թվականի նոյեմբերի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճռով Ս.Լսկավյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 տարի ժամկետով: Նույն դատավճռով բավարարվել է «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքացիական հայցը՝ 837.647 ՀՀ դրամի չափով:

3. Ամբաստանյալ Ս.Լսկավյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Լսկավյանի պաշտպան Հ.Սարգսյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Սևակ Լսկավյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով այն արարքի համար, որ *«նա, ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2012 թվականի ապրիլից մինչև 2013 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում, յուրացման եղանակով «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերությունից հափշտակել է իրեն վստահված, խոշոր չափերի՝ 838.679 ՀՀ դրամ գումար:*

Այսպես՝ Սևակ Լսկավյանը, հանդիսանալով «Մեգալ» ՍՊ ընկերության տնօրեն, 2012 թվականի փետրվարի 22-ին ընկերության անունից «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքել է ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու մասին պայմանագիր և այդ

կերպ ձեռք է բերել ապահովագրական ընկերության անունից և նրա հաշվին ապահովագրական պայմանագրեր կնքելու իրավունք: Սևակ Լսկավյանը ապահովագրական ընկերությունից յուրացման եղանակով գումարներ հափշտակելու միասնական դիտավորությամբ՝ 2012 թվականի ապրիլից մինչև 2013 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում, ապահովադիրների հետ կնքելով 88 ապահովագրական վկայագրեր դրանց դիմաց ստացել է շուրջ 2.413.034 ՀՀ դրամ գումար, սակայն հավաքագրված գումարներից 838.679 ՀՀ դրամը չի մուտքագրել ապահովագրական ընկերության հաշվեհամարին և ծախսել է անձնական կարիքների համար, այդ կերպ ապահովագրական ընկերությունից յուրացրել է խոշոր չափերի՝ 838.679 ՀՀ դրամ գումար» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 150-151):

5.1 «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության իրավաբան Ա.Ասատրյանի՝ 2015 թվականի օգոստոսի 21-ի հարցաքննության արձանագրության համաձայն՝ *«(…) Գործակալական գործունեություն իրականացնելու թիվ Գ12-013 պայմանագրի հիման վրա (…) [Սևակ Լսկավյանը] պարտավորվել է մեր ընկերության անունից կնքել ապահովագրական պայմանագրեր, ստանալ դրանց կնքումից գոյացած գումարները, միջնորդավճարը մասհանած կամ առանց դրա մուտքագրել ընկերության բանկային հաշվին (…): Սևակ Լսկավյանը 2012թ.-ի ապրիլ ամսից մինչև 2013թ.-ի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում կնքել է մի շարք՝ 88 ապահովագրական վկայագրեր, դրանց կնքումից ստացել է 2.413.094 ՀՀ դրամ, որից իրեն հասանելիք միջնորդավճարը, որը կազմել է 361.955 ՀՀ դրամ, ընկերությանն է փոխանցել 556.553 ՀՀ դրամ, բացի դրանից կնքել է նաև առողջության ապահովագրության վկայագրեր, որոնց միջնորդավճարները, ի տարբերություն ԱՊՊԱ վկայագրերի, ի սկզբանե տնօրինում է ընկերությունը, հաշվարկելով պարտքից հանել է 655.780 ՀՀ դրամ, որի արդյունքում մեր ընկերությանը չփոխանցելով մնացած գումարը, ընկերության նկատմամբ վերջնական հաշվարկով չի փոխանցել ընկերության հաշվեհամարին 836.646 ՀՀ դրամ (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 234-235):

5.2 «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության աշխատակից Լ.Հակոբյանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 9-ի հարցաքննության արձանագրության համաձայն՝ *«(…) [Սևակ Լսկավյանը] կնքել է թվով շուրջ 88 ԱՊՊԱ վկայագիր, որոնց գծով ձևավորվել է շուրջ 2.413.033 ՀՀ դրամ գումար, որից վճարվել է ընդամենը 556.553 ՀՀ դրամ: (…) Մեր ընկերությունը, կատարելով Լսկավյանին հասանելիք միջնորդավճարների հաշվանցում, [հաշվարկել է, որ] Լսկավյանի պարտքը կազմել է 838.645 ՀՀ դրամ (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 237-238):

5.3 Որպես վկա հարցաքննված Սևակ Լսկավյանի 2015 թվականի հոկտեմբերի 22-ի հարցաքննության արձանագրության համաձայն՝ *«(…) Ես*

Նաիրի Ինշուրանս ընկերության ներկայացրած հաշվարկների հետ համաձայն չեմ, քանի որ ես հասանելիք միջնորդավճարներ ունեի և ձեռք բերված պայմանավորվածության համաձայն նրանք պետք է հաշվանցում կատարեին, որի արդյունքում պարտքս պետք է մարվեր և նրանք վստահեցրել էին, որ դա կատարվել է, հակառակ դեպքում ես կմարեի դա, ուստի խնդրում եմ ստուգման ենթարկել ներկայացված հաշվարկը, դրա ճշտությունը և հիմնավորվածությունը, այլ հարցերի պատասխանել չեմ ցանկանում, հիմա էլ պատրաստ եմ հիմնավորման դեպքում վճարել պարտք ունեցածս գումարը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 1):

5.4 Դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննության՝ 2016 թվականի հուլիսի 28-ի թիվ 26761609 եզրակացության հետևությունների համաձայն՝ *«(…) [Ս]ույն համալիր փորձաքննությամբ կատարված հաշվարկներով՝ «Սեգալ» ՍՊ ընկերության պարտավորությունները Ապահովագրողին կազմում է ընդամենը 838679 դրամ (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 114-118):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(…) Դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքներով Դատարանը հաստատված համարեց այն, որ Սևակ Լսկավյանը ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2012թ. ապրիլից մինչև 2013թ. հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերությունից յուրացման եղանակով հափշտակել է իրեն վստահված խոշոր չափերի՝ 838.679 ՀՀ դրամ գումար (…):*

(…) Դատարանը հաստատված համարեց այն, որ ամբաստանյալ Սևակ Լսկավյանը կատարել է իրեն վստահված ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն՝ յուրացում, այսինքն՝ հանցավոր արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին, հետևաբար՝ նա քրեական պատասխանատվության և պատժի ենթակա է այդ հոդվածի վերոնշյալ մասով և կետով» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 57-61):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Սույն գործի փաստերի վերլուծությունից երևում է, որ Սևակ Լսկավյանը, հանդիսանալով «Սեգել» ՍՊ ընկերության տնօրենը, ընկերության անունից «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքել է ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու մասին պայմանագիր՝ ձեռք բերելով ապահովագրական ընկերության անունից ապահովագրական պայմանագրեր կնքելու և գումարներ գանձելու իրավունք: Սևակ Լսկավյանը 2012 թվականի ապրիլից մինչև 2013 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում, ապահովադիրների հետ կնքելով 88 ապահովագրական վկայագրեր, յուրացման եղանակով գումարներ հափշտակելու միասնական դիտավորությամբ, վստահված 2.413.034 ՀՀ դրամ*

ապահովագրավճարներից խոշոր չափերի՝ 838.679 ՀՀ դրամ գումարն ապահովագրական ընկերության հաշվեհամարին չի մուրքագրել և յուրացման միջոցով հափշտակել է:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի հիմքում դրված և մեղադրական դատավճռում շարադրված ապացույցների շարքում առկա են փաստական տվյալներ այն մասին, որ Սևակ Լսկավյանը, օգտագործելով իրեն վստահված գույքի նկատմամբ ունեցած լիազորությունները՝ ապահովադիրներից գանձած 2.413.034 ՀՀ դրամ ապահովագրավճարներից 838.679 ՀՀ դրամն ապահովագրական ընկերության հաշվեհամարին չի մուրքագրել, հափշտակել է՝ զրկելով «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերությունը գումարներն օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու լիազորություններից, ինչի հետևանքով ընկերության գույքային ֆոնդը պակասել է: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 117-122):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 12-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որպիսի պարագայում, կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1 Մասնավորապես բողոքաբերը, հղում կատարելով Վ.Մաթևոսյանի գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին և վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված յուրացման հանցակազմի հատկանիշները, նշել է, որ անձի կողմից քաղաքացիաիրավական պարտավորության ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը չի վկայում նրա արարքում յուրացման հանցակազմի առկայության մասին:

Վերոնշյալի հիման վրա բողոք բերած անձը հայտնել է, որ սույն գործով «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական և «Սեգել» ընկերությունների միջև կնքված թիվ Գ-12-013 պայմանագրից ծագել են քաղաքացիաիրավական փոխհարաբերություններ, որոնք ենթակա էին կարգավորման բացառապես քաղաքացիադատավարական կարգով, սակայն ստորադաս դատարանները նշված քաղաքացիական գործը քննել են քրեական դատավարության կարգով՝ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերության գույքային շահերը դիտելով հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացրել են նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն, որի արդյունքում խաթարվել է քաղաքացիաիրավական ու

քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը՝ խախտելով նաև արդարադատության հիմնարար սկզբունքները:

Միևնույն ժամանակ բողոքաբերը նշել է, որ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերությունը դեռևս 2014 թվականի հուլիսի 21-ին քաղաքացիական հայցով դիմել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան «Սեգել» ՍՊԸ-ից 837.646 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով, որպիսի պարագայում ստացվում է, որ միևնույն իրավահարաբերության շրջանակներում պատասխանատվության է կանչվել, ինչպես «Սեգել» ՍՊԸ-ն, այնպես էլ Ս.Լսկավյանը:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ՝ ճանաչելով և հոչակելով Ս.Լսկավյանի անմեղությունն իրեն առաջադրված մեղադրանքում:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված յուրացման հանցակազմի մեկնաբանման, ինչպես նաև այն քաղաքացիական պարտավորությունների չկատարումից սահմանազատելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Սևակ Լսկավյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված յուրացման հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«1. Յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով՝ [պատժվում է համապատասխան պատժաչափով]:*

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

(…)

3) խոշոր չափերով՝ [պատժվում է համապատասխան պատժաչափով]»:

12.1 Յուրացումը սեփականության անվտանգությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործություն է, որը դասվում է հափշտակությունների շարքին: Յուրացման օբյեկտիվ կողմն արտահայտվում է հանցավորի կողմից իր լիազորությունների գործադրմամբ

վստահված գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելով: Այսինքն՝ յուրացման դեպքում հանցավորը գույքն առանձնացնում է դրա սեփականատիրոջ գույքային ֆոնդից և միացնում իր կամ մեկ ուրիշի գույքային ֆոնդին՝ օգտագործելով այն լիազորությունները, որոնք նրան վերապահված են եղել այդ գույքի նկատմամբ: Այդ հանգամանքն ունի առանձնահատուկ նշանակություն անձի արարքում յուրացման հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների առկայության հարցը քննարկելիս: Այդ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հափշտակության առարկան հանցավորի ունեցած լիազորությունների ուժով առնվազն պետք է հանձնված լինի հանցավորի տիրապետությանը: Ընդ որում, այդ լիազորությունները պետք է բխեն որոշակի փաստական տվյալներից և պայմանավորված լինեն հանցավորի պարտականություններով, հատուկ հանձնարարություններով կամ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի դրույթներով:

Սուբյեկտիվ կողմից հանցավորի դիտավորությունն ուղղված է լինում իրեն վստահված գույքը հափշտակելուն: Հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական դրդումներով: Այսինքն՝ հանցանք կատարող անձը գիտակցում է իր կողմից ուրիշի գույքը յուրացնելու՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսում և ցանկանում է իրեն վերապահված լիազորությունների գործադրմամբ նյութական արժեքները սեփականատիրոջ գույքային ֆոնդից միացնել իր գույքային ֆոնդին:

Յուրացման միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության և շահադիտական նպատակի առկայությունը պետք է հիմնավորվի գործով ձեռք բերված ապացույցների համակցության հիման վրա: Այդ առումով սուբյեկտիվ կողմի հատկանիշների առկայության մասին կարող է վկայել կոնկրետ գործի փաստական հանգամանքների համատեքստում հանցավորի կողմից որոշակի գործողությունների (անգործության) կատարումը: Այսպես, օրինակ՝ հանցավորի կողմից կեղծ հաշվետվությունների ներկայացումը, որոնք իբր հիմնավորում են հանձնված գույքն ըստ նպատակային նշանակության սպառելու հանգամանքը, գույքը փաստացի չստանալն այն դեպքում, երբ առկա է այն ստանալու հանգամանքը հավաստող փաստական տվյալ, վստահված գույքը հաշվեկշռում ցույց չտալը գույքագրման կամ աուդիտի ժամանակ և այլն:

Բացի այդ, էական նշանակություն ունի նաև գույքի նկատմամբ ունեցած լիազորությունների ձեռքբերման գործընթացի գնահատումը: Մասնավորապես այն, թե ով է հանդես եկել գույքի նկատմամբ լիազորությունները փոխանցելու նախաձեռնությամբ, ինչպիսի պայմանների առկայությամբ են այդ լիազորությունները փոխանցվել հանցավորին:

Վերոգրյալի համատեքստում յուրացման հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը պարզելու համար առանցքային դեր ունի նաև կողմերի

միջև ձևավորված պարտավորական իրավահարաբերության կատարման վերաբերյալ անվիճելի փաստական հանգամանքների գնահատումը: Օրինակ, յուրացման հանցակազմի հատկանիշների բացակայության մասին կարող են վկայել այն դեպքերը, երբ պարտավորական իրավահարաբերության մասնակիցը համեմատաբար փոքր մասով չի կատարել իր պարտավորությունը և կատարման ենթակա պարտավորության չափի կապակցությամբ կողմերի միջև առերևույթ առկա է գույքային վեճ: Նման դեպքերում վստահված գույքը հափշտակելու հատկանիշների առկայությունը հաստատված համարելու համար պահանջվում են առավել ծանրակշիռ փաստական տվյալներ:

Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում յուրացման սուբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը պարզելու համար անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքների համակողմանի ուսումնասիրմամբ պատշաճ իրավական գնահատականի արժանացնել ենթադրյալ հանցանք կատարած անձի դրսևորած վարքագիծը, ձեռնարկված միջոցառումների որակական և քանակական կազմը, կատարած գործողությունների (անգործության) բնույթը, որոնք ուղղված են եղել վստահված հափշտակության առարկան սեփական գույքային ֆոնդ ներառելուն:

Ինչ վերաբերում է յուրացման հանցակազմի սուբյեկտին, ապա այն հատուկ է: Մասնավորապես, որպես յուրացման հանցակազմի սուբյեկտ կարող է հանդես գալ այն անձը, ում վերապահվել են գույքի նկատմամբ որոշակի լիազորություններ, որոնց գործադրմամբ է յուրացվել վստահված գույքը:

12.2 Նախորդ կետում արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ յուրացման հանցակազմն անհրաժեշտ է սահմանազատել մասնավոր-իրավական պայմանագրով ստանձնած գույքային պարտավորությունների չկատարումից:

Մասնավորապես, հանցավորի կողմից իրեն վստահված գույքի հափշտակմամբ բնութագրվող յուրացման հանցակազմը չի կարող նույնացվել մասնավոր-իրավական պայմանագրով ստանձնած գույքային պարտավորությունների չկատարման հետ, երբ կնքված պայմանագրով սահմանված կարգին համապատասխան քաղաքացիական իրավունքի օբյեկտը պարտավորական իրավահարաբերության մի սուբյեկտի կողմից չի հանձնվում մյուսին: Քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտման դեպքերում քրեադատավարական կառուցակարգերի գործադրման իրավաչափության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ քրեադատավարական ռեսուրսները չեն կարող օգտագործվել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու և այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստերը հաստատելու ուղղությամբ: Վերջինս պայմանավորված է համապատասխան

փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ: Այսպես, եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Ուստի, ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Լ.Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 գործով 2011 թվականի փոտրվարի 29-ի որոշման 30-րդ կետը, Վ.Մաթևոսյանի վերաբերյալ թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը, Ռ.Բալասանյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0199/01/13 գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման 17-րդ կետը):

12.3 Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գույքի սեփականատիրոջ իրավունքների ենթադրյալ խախտումների կապակցությամբ քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմերի գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու, քաղաքացիական իրավահարաբերության օբյեկտի շուրջ ձևավորված վեճը լուծելու համար: Այդ համատեքստում անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 6-րդ մասի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ քրեադատավարական կառուցակարգի կիրառմամբ քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու համար անթույլատրելի է պարտապանին անձնական ազատությունից զրկելը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանի կողմից քաղաքացիական պայմանագրով ստանձնած իր գույքային պարտավորությունների չկատարումը չի կարող հիմք հանդիսանալ քրեադատավարական կառուցակարգի կիրառմամբ պարտատիրոջ հանդեպ նրա ունեցած գույքային պարտավորության չափը պարզելու, պարտատիրոջ ենթադրյալ խախտված իրավունքներն այդ կառուցակարգի կիրառմամբ վերականգնելու համար:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Սևակ Լսկավյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով այն արարքի համար, որ *«նա, ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2012 թվականի ապրիլից մինչև 2013 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում, յուրացման եղանակով «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերությունից հափշտակել է իրեն վստահված, խոշոր չափերի՝ 838.679 ՀՀ դրամ գումար:*

Այսպես, Սևակ Լսկավյանը, հանդիսանալով «Սեգալ» ՍՊ ընկերության տնօրեն, 2012 թվականի փետրվարի 22-ին ընկերության անունից «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքել է ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու մասին պայմանագիր և այդ կերպ ձեռք է բերել ապահովագրական ընկերության անունից և նրա հաշվին ապահովագրական պայմանագրեր կնքելու իրավունք: Սևակ Լսկավյանը ապահովագրական ընկերությունից յուրացման եղանակով գումարներ հափշտակելու միասնական դիտավորությամբ՝ 2012 թվականի ապրիլից մինչև 2013 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում, ապահովադիրների հետ կնքելով 88 ապահովագրական վկայագրեր դրանց դիմաց ստացել է շուրջ 2.413.034 ՀՀ դրամ գումար, սակայն հավաքագրված գումարներից 838.679 ՀՀ դրամը չի մուտքագրել ապահովագրական ընկերության հաշվեհամարին և ծախսել է անձնական կարիքների համար, այդ կերպ ապահովագրական ընկերությունից յուրացրել է խոշոր չափերի՝ 838.679 ՀՀ դրամ գումար» (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում դատական ակտով հաստատված է համարել այն, որ ամբաստանյալ Սևակ Լսկավյանը կատարել է իրեն վստահված ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություն՝ յուրացում, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին *(տե՛ս սույն որոշման 6-րդ կետը)*:

Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին, հաստատված համարելով, որ Սևակ Լսկավյանը «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքել է ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու մասին պայմանագիր՝ ձեռք բերելով ապահովագրական ընկերության անունից ապահովագրական պայմանագրեր կնքելու և գումարներ գանձելու իրավունք, գտել է, որ Սևակ Լսկավյանը, ապահովադիրների հետ կնքելով 88 ապահովագրական վկայագրեր, ապահովագրավճարներից խոշոր չափերի՝ 838.679 ՀՀ դրամ գումարն ապահովագրական ընկերության հաշվեհամարին չի մուտքագրել և յուրացման միջոցով հափշտակել է *(տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)*:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-12.3-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ս.Լսկավյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված՝ յուրացում կատարելու հանցագործության մեջ մեղավոր ճանաչելիս և նրա նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, որ Ս.Լսկավյանին մեղսագրվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը հիմնավորող փաստական տվյալներ քրեական գործում բացակայում են, ավելին՝ արարքի փաստական կազմը ներառում է քաղաքացիական իրավանորմերի գործադրմամբ լուծման ենթակա հարցեր:

Այսպես՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ի և Սևակ Լսկավյանի միջև ծագած իրավահարաբերություններն իրենց բնույթով քաղաքացիական են և ծագել են փոխադարձ համաձայնության հիման վրա կնքված՝ «Ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու մասին» թիվ Գ12-013 պայմանագրից: Այսպես՝ կողմերի միջև ծագած իրավահարաբերության քաղաքացիաիրավական բնույթի մասին է վկայում նաև «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության իրավաբան Ա.Ասատրյանի՝ 2015 թվականի օգոստոսի 21-ի ցուցմունքն այն մասին, որ գործակալական գործունեություն իրականացնելու թիվ Գ12-013 պայմանագրի հիման վրա Սևակ Լսկավյանը պարտավորվել է ընկերության անունից կնքել ապահովագրական պայմանագրեր, ստանալ դրանց կնքումից գոյացած գումարները, միջնորդավճարը մասհանած կամ առանց դրա մուտքագրել ընկերության բանկային հաշվին: Իրավաբանը հայտնել է նաև, որ Սևակ Լսկավյանը 2012 թվականի ապրիլ ամսից մինչև 2013 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում կնքել է մի շարք՝ 88 ապահովագրական վկայագրեր, դրանց կնքումից ստացել է 2.413.094 ՀՀ դրամ, որից իրեն հասանելիք միջնորդավճարը կազմել է 361.955 ՀՀ դրամ, ընկերությանն է փոխանցել 556.553 ՀՀ դրամ, բացի դրանից, կնքել է նաև առողջության ապահովագրության վկայագրեր, որոնց միջնորդավճարները, ի տարբերություն ԱՊՊԱ վկայագրերի, ի սկզբանե տնօրինում է ընկերությունը, հաշվարկելով պարտքից հանել է 655.780 ՀՀ դրամ, որի արդյունքում վերջնական հաշվարկով չի փոխանցել ընկերության հաշվեհամարին 836.646 ՀՀ դրամ *(տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը)*:

Բացի այդ, «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության և Սևակ Լսկավյանի միջև ձևավորված իրավահարաբերությունների բնույթի մասին 2015 թվականի սեպտեմբերի 9-ին նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև ընկերության աշխատակից Լ.Հակոբյանը՝ հայտնելով, որ Սևակ Լսկավյանը կնքել է թվով շուրջ 88 ԱՊՊԱ վկայագրեր, որոնց գծով ձևավորվել

է շուրջ 2.413.033 ՀՀ դրամ գումար, որից վճարվել է ընդամենը 556.553 ՀՀ դրամ՝ ընկերությանը պարտք մնալով 838.645 ՀՀ դրամ *(տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը)*:

Բացի այդ, Սևակ Լսկավյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը հասանելիք միջնորդավճարներ է ունեցել և ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ընկերությունը պետք է հաշվանցում կատարեր, որի արդյունքում պարտքը պետք է մարվեր, ընկերությունից վստահեցրել էին, որ դա կատարվել է (տե՛ս սույն որոշման 5.3-րդ կետը)։

Այսինքն՝ վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ «Սեգալ» ընկերության տնօրեն Սևակ Լսկավյանի և «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերության միջև ձևավորված հարաբերությունն ունեցել է հետևյալ բովանդակությունը. Սևակ Լսկավյանն ապահովագրական ընկերության անունից իրավունք է ունեցել կնքելու ապահովագրական վկայագրեր, որոնց արդյունքում ձևավորվող գումարից իրեն հասանելիք միջնորդավճարի մասով անձամբ կամ ընկերության կողմից հաշվանցում կատարելու արդյունքում պետք է մնացած գումարը փոխանցվեր ապահովագրական ընկերության հաշվեհամարին։ Այսինքն՝ Սևակ Լսկավյանի կնքված 88 ԱՊՊԱ պայմանագրերից ձևավորված 2.413.033 ՀՀ դրամ գումարից իր միջնորդավճարի մասով պետք է կատարվեր հաշվանցում։ Նման պայմաններում ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Սևակ Լսկավյանին մեղսագրվող յուրացման հանցակազմի սուբյեկտիվ կողմը բացակայում է, քանի որ ձեռքերված փաստական տվյալներից չի հետևում, որ ամբաստանյալը շահադիտական դրդումներով, ուղղակի դիտավորությամբ յուրացրել է ապահովագրական վկայագրերի կնքումից ապահովագրական ընկերությանը հասանելիք գումարը։

Ավելին՝ ստորադաս դատարանների կողմից պատշաճ իրավական գնահատականի չի արժանացվել այն հանգամանքը, որ տվյալ պարագայում «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության և Սևակ Լսկավյանի միջև ձևավորված իրավահարաբերությունները կրել են քաղաքացիական բնույթ, իսկ Սևակ Լսկավյանի մեղադրանքը վերաբերել է պայմանագրի ուժով ծագած գույքային պարտավորությունն ամբողջությամբ չկատարելուն՝ ընկերությանը պարտք մնալով 838.679 ՀՀ դրամ գումար, ինչը պարզվել է դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննության՝ 2016 թվականի հուլիսի 28-ի թիվ 26761609 եզրակացությամբ *(տե՛ս սույն որոշման 5.4-րդ կետը)*:

15. Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սևակ Լսկավյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված յուրացման հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն։

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սևակ Լսկավյանի նկատմամբ պետք է հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

Նման պայմաններում Սևակ Լսկավյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, ենթակա է վերացման:

Ինչ վերաբերում է «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքացիական հայցին, ապա այն պետք է թողնել առանց քննության՝ հաշվի առնելով, որ քրեական հետապնդման դադարեցումը և քրեական գործի կարճումը բացառում է քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցի քննության հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սևակ Գևորգի Լսկավյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 12-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Սևակ Գևորգի Լսկավյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայու-

թյան հիմքով և քրեական գործի վարույթը կարճել:

3. «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

4. Սևակ Գևորգի Լսկավյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, վերացնել:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0258/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ ամբաստանյալ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Գագիկ Գուրգենի Սարգսյանի պաշտպան Մարինե Թովմասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2016 թվականի հուլիսի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 15129216 քրեական գործը:

2016 թվականի սեպտեմբերի 27-ին Գագիկ Սարգսյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Գ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին:

2016 թվականի հոկտեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճռով Գ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ շինարարական գործունեությամբ զբաղվելիս ղեկավար պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Գ.Սարգսյանի պաշտպան Մ.Թովմասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճիռը թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Գ.Սարգսյանի պաշտպան Մ.Թովմասյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Գագիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ *«նա, 2006թ. նոյեմբերի 13-ից աշխատելով «Հորիզոն-95» ՍՊ ընկերությունում՝ որպես ավագ աշխողեկ և աշխատանքային պայմանագրով սպանձնած լինելով աշխատանքային և արտադրական կարգապահության, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովության պահանջների, անվտանգության տեխնիկական պահանջների պահպանման և վերահսկման, աշխատողների անվտանգության ապահովման հնարավոր ռիսկի գնահատման պարտականություն, կրելով աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովման նկատմամբ անմիջական պատասխանատվություն, չի պահպանել անվտանգության տեխնիկայի ընդհանուր կանոնները, խախտել է ՀՀ քաղաքաշինության նախարարության 01.10.2001թ. «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով հաստատված «ՍՆԻՊ lll-4-80*՝ Շինարարությունում տեխնիկայի անվտանգության» շինարարական նորմերի՝ «Շինարարական*

հրապարակի, աշխատանքային տեղամասի և աշխատատեղի կազմակերպում» 2-րդ գլխի 2.5 և 2.26* կետերի, նույն նորմատիվ ակտի 1.11* կետի պահանջները, «Հորիզոն-95» ՍՊ ընկերության հյուսն Լյովա Վիլհելմի Խաչատրյանի արտադրական վտանգավոր գործոններով օժտված աշխատավայրը՝ փայտամածը, նախապաշտպանական պաշտպանիչ, ազդանշանային կամ ժամանակավոր փակոցներով չի կահավորել, Լ.Խաչատրյանին նախապաշտպանական անվտանգության գոտիներով, ինչպես նաև պաշտպանիչ սաղավարտով չի ապահովել, ինչի հետևանքով 2016թ. հուլիսի 07-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Լ.Խաչատրյանը Երևանի Ամիրյան 1 հասցեում գտնվող «Մարիոթ» հյուրանոցի հետնամասում գտնվող կիսակառույց շինության վրա փայտամածի կառուցման շինարարական աշխատանքներ կատարելիս փայտամածից վայր է ընկել և ստանալով փակ գանգուղեղային վնասվածք՝ մահացել*[1]:

5.1 Պաշտպան Մ.Թովմասյանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Ա.Ղուլարյանը՝ 2016 թվականի հոկտեմբերի 7-ի գրությամբ հայտնել է, որ. *«(...) ՄՆԻՊ III-4-80* «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերը Հայաստանի Հանրապետությունում չեն մշակվել և ներկայումս նշված նորմերի հայկական տարբերակը գոյություն չունի: [Դրանք] հանդիսանում [են] նախկին ԽՍՀՄ նորմեր:*

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ ՄՆԻՊ III-4-80 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերը փոխարինել են 1970 թվականի ՄՆԻՊ III-A-II.70 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» նորմերին և հաստատվել ԽՍՀՄ Պետշինի 1980 թվականի հուլիսի 9-ի թիվ 82 հրամանով»*[2]:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(...) Գնահատելով դատաքննությամբ հետազոտված վերոնշյալ ապացույցները՝ Դատարանը հաստատված համարեց այն, որ ամբաստանյալ Գագիկ Սարգսյանը, հանդիսանալով տեխնիկայի անվտանգության կանոնները պահպանելու համար պատասխանատու անձ, խախտել է այդ կանոնները, որն անզգուշությամբ առաջացրել է տուժող Ա.Խաչատրյանի մահ, այսինքն՝ կատարել է հանցավոր արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին, հետևաբար՝ նա քրեական պատասխանատվության և պատժի ենթակա է այդ հոդվածի վերոնշյալ մասով:*

(...)

Դատարանը նաև փաստում է, որ «ՄՆԻՊ lll-4-80՝ Շինարարությունում տեխնիկայի անվտանգության» շինարարական նորմերը, որոնք ձևավորվել*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 150-152:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 150-152:

էին դեռևս ԽՍՀՄ օրոք և գործել նաև ՀԽՍՀ տարածքում, հաստատվել են Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, ՀՀ քաղաքաշինության նախարարության 2001թ. հոկտեմբերի 1-ի «Նորմատիվա-տեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով, հետևաբար՝ կիրառելի են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում նաև քննվող դեպքի ժամանակահատվածում: Նման պայմաններում իրր իրավական ուժը կորցնելու փաստարկով առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ պաշտպանական կողմի վիճարկումներն անհիմն են և մերժման ենթակա»[1]:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Դատաքննությամբ և գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա վերլուծելով գործի փաստական տվյալները, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Գագիկ Սարգսյանի կողմից կատարված հանցանքը հիմնավորված և նրա մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի արարքի քրեաիրավական որակման հարցում հանգել է ճիշտ հետևության և հաստատված է համարել Գագիկ Սարգսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, իսկ պաշտպանի կողմից վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները հերքվում են նաև հետևյալով:*

(…)

- Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության 1999 թվականի մայիսի 26-ի N 351 որոշման հիման վրա ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված (ընդունված) հանրապետական, ինչպես նաև միջազգային շինարարական նորմերը, որի մեջ ներառված է նաև «ՄՆԻՊ III-4-80՝ - անվտանգության տեխնիկան շինարարությունում»:*

Գագիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել վերոգրյալ շինարարական նորմերի խախտման համար, որոնք նորմատիվա-տեխնիկական բնույթի են, դրանք որևէ կերպ չի կարելի դիտարկել որպես նախկին ԽՍՀՄ օրենքներ կամ իրավական ակտեր, որոնց գործունեությունը 2006 թվականի հունիսի 28-ի ՀՀ օրենքով դադարեցվել է, առավել ևս, որ այդ նորմերը ՀՀ քաղաքաշինության նախարարի N 82 հրամանով ներառվել են ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի ցանկում և այն գործում է նաև ներկայումս (…)»[2]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 105-113:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 42-65:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որոնց պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1 Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Գ.Սարգսյանի կողմից կատարված արարքը հանցագործություն չէ, քանի որ այն սահմանված չէ «օրենքով»: Այսպես՝ բողոք բերած անձը, հղում կատարելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին և վերջինիս վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին, հայտնել է, որ Գ.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՄՆԻՊ կանոնների խախտման համար, որոնք ձևավորվել են այլ պետությունում, կազմվել են օտար լեզվով, օրենքով նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետությունում չեն հրապարակվել և իրավական նորմի հատկանիշներ ձեռք չեն բերել: Նման պայմաններում բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանները կիրառել են ՄՆԻՊ կանոնները՝ որպես իրավունքի նորմ, որոնք կիրառման ենթակա չեն եղել, քանի որ այդ կանոնները չեն համապատասխանել որոշակիության, հասանելիության, կանխատեսելիության որակական հատկանիշներին:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ՝ ճանաչելով և հռչակելով Գ.Սարգսյանի անմեղությունն առաջադրված մեղադրանքում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Գագիկ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային պաշտպանության կանոնները խախտելու մեջ մեղավոր ճանաչելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել (...)»:*

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար*

չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեահրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:*

(…)»:

12. Վերոնշյալ իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ. *«(…) [Ա]նձին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պատիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պահին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պատիժ նախատեսված լինելը: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով:*

(…) «[Չ]կա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է»[1]:

Զարգացնելով Վ.Ավետիսյանի գործով արտահայտված վերոհիշյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Դ.Սիմիդյանի գործով նշել է. *«(…) [Մ]իայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (…):*

[1] Տե՛ս *Վարուժան Գագիկի Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշման 13-րդ կետը:

Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (...): Որակական այս պահանջները պետք է ապահովվեն ինչպես հանցագործության, այնպես էլ դրա համար պատժի նշանակման ժամանակ (...): Անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար (...):

(...) [Օ]րենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է՝ օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին: (...)»[1]:

12.1 Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հ.Գրիգորյանի և Է.Սարիբեկյանի գործով արձանագրել է. *«[Ա]րարքի հանցավորությունն ու պատժելիությունն իրավական որոշակիության չափանիշին համապատասխանող «օրենքով» նախատեսելու պահանջն իրավունքի գերակայության առանցքային բաղադրիչներից է, որն ունի հիմնարար նշանակություն՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս օրինականության սկզբունքն ապահովելու համար: Հստակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ) ամրագրող այդպիսի օրենքը մի կողմից ապահովում է դրանում ամրագրված պահանջների հասցեագրումը համապատասխան վարքագծի դրսևորման ակնկալիք ունեցող անձանց, մյուս կողմից՝ բացառում է կամայականորեն քրեական հետապնդման ենթարկվելու ցանկացած հնարավորություն՝ երաշխավորելով օրենքի միատեսակ կիրառությունը սահմանված նորմատիվ պահանջներին հակասող վարքագիծ դրսևորող անձի նկատմամբ:*

Այսինքն՝ նշված սկզբունքի ներքո իրավական պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել որդեգրած քրեական քաղաքականության արտացոլումն այնպիսի «օրենքում», որում նկարագրված կանոնները և

[1] Տե՛ս *Դավիթ Սիմիդյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշման 16-18-րդ կետերը:

դրանց խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքները բովանդակային առումով այնքան որոշակի կլինեն, որ հնարավորություն կտան իրավունքի հիմնական կրողին դրսևորելու սահմանված պահանջներին համապատասխանող վարքագիծ: Վերջինս կարող է ապահովված լինել «իրավական որոշակիության» երկու բաղադրիչներին, այն է՝ «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին համապատասխանող «օրենքի» առկայության պարագայում, որոնք ունեն հետևյալ բովանդակային նշանակությունը.

- «օրենքի» համապատասխանությունը «հասանելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահատել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախտումը մեղսագրվում է անձին, արդյո՞ք եղել է պատշաճ կերպով հրապարակված, ողջամտորեն հասանելի, թե ոչ: Այսինքն՝ «օրենքը» կարող է համապատասխանել հասանելիության չափանիշին, եթե այն, պետական իշխանությունների կողմից լինելով հրապարակված, նվազագույն ջանքերի գործադրմամբ եղել է հասանելի: Որպես այդպիսին, «օրենքը» կարող է հրապարակվել ինչպես դրա տպագիր տարբերակն անձանց հասանելի դարձնելու, այնպես էլ դրա առցանց տարբերակը համապատասխան պաշտոնական էլեկտրոնային հարթակներում տեղադրելու միջոցով (տե՛ս mutatis mutandis Kokkinakis v. Greece գործով Եվրոպական դատարանի՝ 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 14307/88, 40-րդ կետ; G. v. France գործով Եվրոպական դատարանի՝ 1995 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 15312/89 գանգատը, 25-րդ կետ; Korbely v. Hungary[GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 9174/02, 74-75-րդ կետեր),

- «օրենքի» համապատասխանությունը «կանխատեսելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահատել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախտումը մեղսագրվում է անձին, արդյո՞ք բովանդակային առումով ողջամտորեն ընկալելի է եղել անձանց համար: Այլ կերպ՝ արդյո՞ք քրեական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտը, տեղեկանալով «օրենքով» նախատեսված պահանջների մասին, ծանոթանալով դրանց վերաբերյալ նորմատիվ վարքագծի կանոնների բովանդակությանը, դրանց վերաբերյալ տրված դատական մեկնաբանություններին և անհրաժեշտության դեպքում ստանալով համապատասխան իրավական խորհրդատվություն, կարող էր կանխատեսել, թե որ գործողության/անգործության դրսևորումը կհանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի նշանակմանը: Այդ հանգամանքը պարզելիս անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան կանոններն ամրագրող փաստաթղթի բովանդակությունը, ոլորտը, որի կարգավորմանն ուղղված է այդ փաստաթուղթը, ինչպես նաև այն անձանց շրջանակն ու կարգավիճակը, որոնց հասցեագրված է այն (տե՛ս mutatis mutandis Cantoni v. France գործով Եվրոպական դատարանի՝ 1996

թվականի նոյեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 17862/91, 29-րդ կետը; Mkrtchyan v. Armenia գործով Եվրոպական դատարանի՝ 2007 թվականի հունվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 6562/03, 39-րդ կետը; Kafkaris v. Cyprus [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 21906/04, 140-րդ կետը; Kononov v. Latvia [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2010 թվականի մայիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36376/04, 235-րդ կետը; Del Rio Prada v. Spain [GC] գործով Եվրոպական դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 42750/09, 79-րդ կետը):

(…) [Վերոնշյալ] չափանիշների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս «օրենքը», լինելով «հասանելի» և «կանխատեսելի», պետք է հնարավորություն ընձեռի այդ օրենքի հսացեատիրոջը գիտակցելու իր իրավունքների և ազատությունների իրացման թույլատրելի շրջանակները, հարմարեցնելու իր վարքագիծն այդ շրջանակներն ամրագրող նորմերի պահանջներին և գնահատելու իր վարքագծի իրավաչափությունը՝ կանխատեսելով ոչ իրավաչափ վարքագծի դրսևորելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նշվածը վերաբերում է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած նկարագրական դիսպոզիցիայով ամրագրված հանցագործության պարտադիր և լրացուցիչ հատկանիշներին, այնպես էլ բլանկետային դիսպոզիցիայով նկարագրված հանցագործության հատկանիշները բացահայտող այլ իրավական ակտերի նորմերին, որոնց պահանջների խախտումը ևս հանգեցնում է քրեական պատասխանատվության: Միայն այդ դեպքում անձի համար կարող է երաշխավորվել իր իրավունքների և ազատությունների իրացման դիսպոզիտիվության թույլատրելի շրջանակներն ընկալելու հնարավորությունը: Հակառակ պարագայում այն իրավական նորմը, որի ենթադրյալ խախտումը մեղսագրվում է անձին, չի կարող համարվել «օրենք», քանի որ այն չի համապատասխանի իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չի լինի բավարար ասրիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համապատեղելու իր վարքագիծը (տե՛ս Վարդան Ղազարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշման 20-րդ կետը, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ 630 որոշման 11-րդ կետը, 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշման 9-րդ կետը)»[1]:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները*

[1] Տե՛ս *Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵՇԴ/0131/01/15 որոշման 14-15-րդ կետերը:

խախտելը՝ դրանց պահպանման համար պատասխանատու անձի կողմից, եթե մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մասնագիտական հիվանդություն՝ պատժվում է (...):

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ՝ պատժվում է (...)»:

Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը Ա.Մանուկյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Աշխատողի անվտանգությունը և առողջությունն աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանման համակարգ է, և պետությունը պարտավոր է՝*

ա) սահմանել աշխատողի անվտանգության և առողջության պահպանման իրավական կանոններ՝ ամրագրելով դրանք օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով,

բ) նախատեսել համապատասխան քաղաքացիական, վարչական, քրեական սանկցիաներ, որոնք կոչված են կանխելու աշխատողի անվտանգության և առողջության պահպանման կանոնների խախտումները:

Շարադրված վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը այն հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են մարդու՝ անվտանգության և հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքի ապահովմանը, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում մարդու կյանքը և առողջությունը:

(...)

ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն օբյեկտիվ կողմից բնութագրվում է ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որը դրսևորվում է տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելով:

Անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն առկա է այն դեպքում, երբ՝

1) խախտվել են ՀՀ կառավարության, տարբեր նախարարությունների, գերատեսչությունների, հիմնարկների և առանձին գործատուների կողմից սահմանված՝ տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության հատուկ կանոնները,

2) առաջացել են հանրորեն վտանգավոր այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են տուժողի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի կամ մասնագիտական հիվանդության պատճառումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մաս) կամ մահվան առաջացումը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մաս),

3) առկա է պատճառական կապ արարքի (գործողության կամ

անգործության) և վրա հասած հետևանքների միջև (…)»[1]:

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հ.Գրիգորյանի և Է.Սարիբեկյանի գործով փաստել է. *«ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից հետևում է, որ այն նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով. քրեական պատասխանատվություն նախատեսելով օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման համար՝ այն չի սահմանում այդ կանոնները և, ըստ այդմ, ենթադրում է հղում նորմատիվ իրավական այլ ակտի (ակտերի), որը պետք է ամրագրի դրանք: Դրանից հետևում է, որ տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել դրանք սահմանող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի օգնությանը, որոնք պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքի՝ (…) «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին»*[2]:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա չի պահպանել անվտանգության տեխնիկայի ընդհանուր կանոնները, խախտել է ՀՀ քաղաքաշինության նախարարության 01.10.2001թ. «Նորմատիվա-տեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով հաստատված «ՄՆԻՊ lll-4-80*՝ Շինարարությունում տեխնիկայի անվտանգության» շինարարական նորմերի՝ «Շինարարական հրապարակի, աշխատանքային տեղամասի և աշխատատեղի կազմակերպում» 2-րդ գլխի 2.5* և 2.26* կետերի, նույն նորմատիվ ակտի 1.11* կետի պահանջները, ինչի հետևանքով 2016 թվականի հուլիսի 7-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Լ.Խաչատրյանը Երևանի Ամիրյան 1 հասցեում գտնվող «Մարիոթ» հյուրանոցի հետնամասում գտնվող կիսակառույց շինության վրա փայտամածի կառուցման շինարարական աշխատանքներ կատարելիս փայտամածից վայր է ընկել և ստանալով փակ գանգուղեղային վնասվածք՝ մահացել[3]:

Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքներով դատական ակտում հաստատված է համարել, որ Գ.Սարգսյանը, հանդիսանալով տեխնիկայի անվտանգության կանոնները պահպանելու համար պատասխանատու անձ, խախտել է այդ կանոնները, որն անզգուշությամբ առաջացրել է տուժող Ա.Խաչատրյանի մահ, հետևաբար նա ենթակա է քրեական պատաս-

[1] Տե՛ս *Այրում Մանուկյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԿԴ/0032/01/12 որոշման 13-14-րդ կետերը:

[2] Տե՛ս *Համլիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵՇԴ/0131/01/15 որոշման 17-րդ կետը:

[3] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

խանատվության և պատժի: Միևնույն ժամանակ, դատարանը փաստել է, որ «ՄՆԻՊ lll-4-80*՝ Շինարարությունում տեխնիկայի անվտանգության» շինարարական նորմերը, որոնք ձևավորվել էին դեռևս ԽՍՀՄ օրոք և գործել նաև ՀԽՍՀ տարածքում, հաստատվել են Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, ՀՀ քաղաքաշինության նախարարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով, հետևաբար կիրառելի են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ նաև քննվող դեպքի ժամանակահատվածում[1]:

Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին, հաստատված համարելով Գ.Սարգսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, հայտնել է, որ պաշտպանի կողմից վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները հերքվում են նաև այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 1999 թվականի մայիսի 26-ի N 351 որոշման հիման վրա ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված (ընդունված) հանրապետական, ինչպես նաև միջազգային շինարարական նորմերը, որի մեջ ներառված է նաև «ՄՆԻՊ lll-4-80*՝ - անվտանգության տեխնիկան շինարարությունում»[2]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Գագիկ Սարգսյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել, թե այն նորմատիվ պահանջները, որոնց խախտումը մեղսագրվել է Գ.Սարգսյանին, արդյո՞ք համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքի՝ «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին:

Մասնավորապես, Գ.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել «ՄՆԻՊ lll-4-80*՝- անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերի՝ «Շինարարական հրապարակի, աշխատանքային տեղամասի և աշխատատեղի կազմակերպում» 2-րդ գլխի 2.5* և 2.26* կետերի, նույն նորմատիվ ակտի 1.11* կետի պահանջները խախտելու համար: Նշված շինարարական նորմերը հաստատվել են ԽՍՀՄ Պետշինի 1980 թվականի հունիսի 9-ի որոշմամբ և ուղղված են եղել նոր հաստատությունների, շենքերի և շինությունների շինարարության, գործող հաստատությունների, շենքերի և

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

շինությունների վերանորոգման, ընդլայնման և տեխնիկական վերազինման ժամանակ շինարարական-մոնտաժային աշխատանքների իրականացման, նոր շինարարական նախագծերի մշակման ոլորտի համակարգմանը: ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված (ընդունված) հանրապետական, ինչպես նաև միջպետական շինարարական նորմերը, որում ներառված է նաև «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» վերտառությամբ թիվ lll-4-80* ՄՆԻՊ–ը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել այն, որ վերոնշյալ ՄՆԻՊ կանոններն անձանց համար հասանելի եղանակով պաշտոնական որևէ աղբյուրում հրապարակված չեն, այդ կանոնները կարելի է գտնել միայն համացանցային տիրույթում առկա ոչ պաշտոնական կայքէջերում, ինչը չի երաշխավորում դրանց համապատասխանությունը բնօրինակին և առաջացնում է ողջամիտ կասկած դրանցով սահմանված աշխատանքի պաշտպանության կանոնների արժանահավատության վերաբերյալ: Ընդորում, հարկ է նաև ընդգծել, որ այդ կանոններն ի սկզբանե կազմված են եղել օտար լեզվով, իսկ դրանց հայերեն թարգմանված օրինակը հասանելի չէ որևէ աղբյուրում: Այդ առումով ստորադաս դատարանների կողմից պատշաճ գնահատման չի ենթարկվել նաև ամբաստանյալի պաշտպան Մ.Թովմասյանի կողմից Առաջին ատյանի դատարանին ներկայացված՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն կատարած հարցման պատասխանն այն մասին, որ «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» վերտառությամբ թիվ lll-4-80* ՄՆԻՊ կանոնները Հայաստանի Հանրապետությունում չեն մշակվել և հայերեն չեն թարգմանվել[1]:

Ավելին՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 2001 թվականի թիվ 82 հրամանը, որով Հայաստանի Հանրապետությունում հաստատվել են «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» վերտառությամբ թիվ lll-4-80* ՄՆԻՊ կանոնները, ոչ թե ամրագրում է անվտանգության տեխնիկայի նորմեր կամ վերարտադրում այդ կանոնների ամբողջությունը մայր աղբյուրից, այլ ընդամենը կից ցանկում հղում է կատարում ԽՍՀՄ Պետշինի 1980 թվականի հունիսի 9-ի որոշմամբ ընդունված ՄՆԻՊ կանոնների վերնագրերին: Այսինքն՝ թեև նշված հրամանը հաստատում է ՄՆԻՊ կանոնների գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, սակայն այն չի պարունակում ո՛չ այդ կանոնների բովանդակությունը, ո՛չ էլ համապատասխան հղում այդ կանոնները գտնելու պատշաճ աղբյուրին:

Վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ

[1] Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

«Անվտանգության տեխնիկական շինարարությունում» վերտառությամբ թիվ lll-4-80* ՄՆԻՊ կանոնները պետական իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես հրապարակված չլինելու պայմաններում ապահովված չի եղել նվազագույն ջանքերի գործադրմամբ դրանք գտնելու և ընթերցելու հնարավորությունը: Ուստի «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» վերտառությամբ թիվ lll-4-80* ՄՆԻՊ կանոնները, որոնց խախտումը մեղսագրվում է Գագիկ Սարգսյանին, չեն համապատասխանել «հասանելիության» չափանիշին: Նման պայմաններում դրանք չեն համապատասխանել նաև «կանխատեսելիության» չափանիշին:

Հետևաբար «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» վերտառությամբ թիվ lll-4-80* ՄՆԻՊ կանոնները չեն կարող համարվել «օրենք», քանի որ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին: Այդ պայմաններում Գագիկ Սարգսյանին «Անվտանգության տեխնիկական շինարարությունում» վերտառությամբ թիվ lll-4-80* ՄՆԻՊ կանոնների խախտման համար դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (Nullum crimen, nulla poena sine lege) սկզբունքի խախտման:

16. Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային պաշտպանության կանոնները խախտելու մեջ մեղավոր ճանաչելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Գ.Սարգսյանին մեղավոր ճանաչելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ և 157-րդ հոդվածների սխալ կիրառում, հետևաբար Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա են բեկանման:

Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գագիկ Սարգսյանի նկատմամբ պետք է հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

Նման պայմաններում Գագիկ Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, Գագիկ Գուրգենի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված անշարժ գույքերի վրա դրված արգելանքը ենթակա է վերացման, իսկ որպես իրեղեն ապացույց ճանաչված սաղավարտը ենթակա է վերադարձման «Հորիզոն-95» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գագիկ Գուրգենի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Գագիկ Գուրգենի Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության հիմքով, և քրեական գործի վարույթը կարճել:

3. Գագիկ Գուրգենի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, վերացնել:

4. Գագիկ Գուրգենի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված անշարժ գույքերի վրա դրված արգելանքը վերացնել:

5. Որպես իրեղեն ապացույց ճանաչված սաղավարտը վերադարձնել «Հորիզոն-95» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0255/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ Լ.ՋԱՔՈՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի և դիմող Ն.Համբարձումյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12148415 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Արմեն Արարատի Սարգսյանը և Վազգեն Սուրենի Գաբրիելյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի որոշմամբ դիմող Լևոն Ջաքոյանը ճանաչվել է տուժող:

2. Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գրիգորյանի (այսուհետ նաև՝ Քննիչ)՝ 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ տարածքը, Երևանի Հին Երևանցու փողոցի 2-րդ շենքի 82-րդ և Երևանի Հյուսիսային պողոտայի 11-րդ շենքի 18-րդ բնակարանները ճանաչվել են իրեղեն ապացույցներ:

2015 թվականի հոկտեմբերի 24-ին Քննիչի կողմից իրականացվել է զննություն՝ քննչական գործողություն, որից հետո իրեղեն ապացույց ճանաչված՝ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ հասցեում գտնվող տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով այն կապարակնքվել է:

Լ.Զաքոյանը Քննիչի գործողությունների դեմ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազին, որն ըստ ենթակայության ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն, որտեղից այն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Հարությունյանը 2015 թվականի նոյեմբերի 30-ին կայացրել է որոշում դատավարության մասնակցի միջնորդությունը հետաձգելու մասին:

3. 2015 թվականի դեկտեմբերի 17-ին դիմող Լ.Զաքոյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել քննիչ Լ.Գրիգորյանի՝ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ հասցեում գտնվող տարածքի կապարակնքումը և հնարավորություն տալ մինչև քրեական գործի ավարտը տիրապետելու իր սեփականությունը հանդիսացող գույքը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշմամբ դիմող Լ.Զաքոյանի բողոքը մերժվել է:

4. Դիմող Լ.Զաքոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մարտի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշումը:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Լ.Զաքոյանի ներկայացուցիչ Թ.Ալեքսանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ Վճռաբեկ բողոքը բավարարվել է: Դիմող Լ.Զաքոյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 1-ի որոշումները բեկանվել են, և գործն ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

6. Նոր քննության արդյունքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հունիսի 22-ի որոշմամբ Լևոն Զաքոյանի բողոքը, կապված Քննիչի՝ 2015 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ Երևանի Թումանյան փողոցի թիվ 11 շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքի կապարակնքման արդյունքում առաջացած իր իրավունքների խախտումները վերացնելու վարույթ իրականացնող մարմնին պարտավորեցնելու հետ, մերժել է այն պատճառաբանությամբ, որ գործով նախաքննությունն ավարտվել է, և տվյալ իրեղեն ապացույցի տնօրինման հարցն իրավասու է լուծելու միայն քրեական գործով վարույթ իրականացնող մարմինը:

7. Դիմող Լ.Զաքոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի որոշումը, Լ.Զաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելը ճանաչել է ոչ իրավաչափ՝ վճռելով հիշյալ գույքը մինչև վարույթ իրականացնող մարմնի կողմից տվյալ իրեղեն ապացույցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը հանձնել Լ.Զաքոյանի պատասխանատու պահպանությանը:

8. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը և դիմող Նշան Համբարձումյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ ներկայացված բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

9. Քննիչի՝ իրեղեն ապացույց ճանաչելու մասին 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքը, ի թիվս այլոց, ճանաչվել է իրեղեն

ապացույց հետևյալ հիմնավորմամբ. «(…) *նախաքննությամբ ձեռք բերված փվյալներով պարզվել է, որ Արմեն Արարատի Սարգսյանը, ուրիշի առանձնապես խոշոր չափերի գույքին տիրանալու վերաբերյալ հանցավոր համաձայնության գալով Վազգեն Սուրենի Գաբրիելյանի հետ, վերջինիս օժանդակությամբ՝ Արա Սմբատի Թադևոսյան անձի փվյալներով պատրաստված կեղծված անձնագիրն օգտագործելով, 2015 թվականի օգոստոսի 31-ին Երևան քաղաքի Կենտրոն նոտարական գրասենյակում Նշան Հակոբի Համբարձումյանի հետ կնքելով վերջինիս՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքն ամսական 717.000 ՀՀ դրամ գումարով վարձակալելու վերաբերյալ պայմանագիր և ձեռք բերելով օգտագործման իրավունք, վարձակալության պայմանագիրը փոխանցելով Վազգեն Գաբրիելյանին, կրկին սպացել է նրա օժանդակությամբ պատրաստված կեղծ նվիրատվության պայմանագիր, որից հետո 2015 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Կենտրոն» սպասարկման գրասենյակում նշված կեղծ փաստաթղթերն օգտագործելու եղանակով հիշյալ տարածքն առքուվաճառքի պայմանագրով ձևակերպել է Լևոն Արժանիկի Ջաքոյանի անվամբ և դրա դիմաց վերջինից Երևան քաղաքի Պարոնյան փողոցի 21/1 հասցեում խաբեությամբ սպացել 97.110.000 ՀՀ դրամին համարժեք 200.000 ԱՄՆ դոլար գումար և հանցակիցների հետ հափշտակել այն:*

(…) Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքը (…) հանդիսանում [է] հանցավոր ոտնձգության առարկա և սույն գործով ուն[ի] կարևոր ապացուցողական նշանակություն» (տե՛ս նյութեր, հատոր 1-ի, թերթ 21-22):

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշման համաձայն՝ «*(…) վարույթն իրականացնող մարմինն օրենքով սահմանված կարգով առարկան՝ գույքը, ճանաչելով իրեղեն ապացույց, դատավարական կարգի պահպանմամբ կապարակնքել է այն՝ ելնելով նախաքննության իրականացման լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից:*

Սույն գործով դատարանը հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ քրեական գործը գտնվում է մինչդատական փուլում, կատարվում է նախաքննություն:

Բացի այդ, դատարանը փաստում է, որ հարուցված քրեական գործի շրջանակներում վարույթն իրականացնող մարմնի քննչական գործողությունների կատարման արդյունքում հայտնի է դարձել, որ Երևան քաղաքի Թումանյանի փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքը (…) հանդիսացել [է] հանցավոր ոտնձգության [օբյեկտ]:

Դատարանն արձանագրում է, որ գործով մինչդատական վարույթը դեռևս ավարտված չէ, կատարվում են քննչական և դատավարական գործողություններ, որոնք ուղղված են ենթադրյալ հանցագործության բացահայտմանը:

Այլ կերպ քրեական գործով ներկա պահին բացահայտված չեն մի շարք հանգամանքներ, որոնք կարող են ունենալ ապացուցողական նշանակություն գործի արդարացի ելքի համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հանգամանքները՝ դատարանը փաստարկված չի գտնում բողոքաբերի դիրքորոշումը՝ դատավարության տվյալ փուլում (մինչդատական վարույթ) լուծել իրեղեն ապացույցների տնօրինման հարցը և դրանք ի պահ հանձնել վերջինիս:

[Դ]ատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ճանաչված՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքը, ի պահ հանձնելով Լևոն Զաքոյանին, այդ կերպ խախտվում են նրա առաջնային սեփականատիրոջ՝ Նշան Հակոբի Համբարձումյանի իրավունքները, քանի որ գույքը նախապես պատկանել է նրան, և ենթադրաբար կատարված հանրորեն վտանգավոր արարքի հետևանքով է, որ այն դուրս է եկել վերջինիս իրավազորությունից և Կադաստրում գրանցվել Լևոն Զաքոյանի անվամբ: Այլ խոսքով վիճարկվող գործողություններն ուղղված են մինչև հանցագործությունը դրա սեփականատիրոջ իրավունքների խախտում թույլ չտալուն:

Դատարանը փաստում է նաև, որ թեև տարածքը ներկա պահին կապարակնքված է, և փաստացի Լևոն Զաքոյանը չի կարողանում մուտք գործել այնտեղ, այնուամենայնիվ, վարույթն իրականացնող մարմինը կատարել է օրենքի պահանջից բխող գործողությունները՝ ձեռնարկել միջոցներ՝ տարածքը վնասվելուց, փչանալուց, այլ առարկաների հետ շփվելուց կամ խառնվելուց զերծ պահելու ուղղությամբ: Բացի այդ, վերջինս իրացրել է նաև գույքի՝ մինչ հանցանքը կատարվելը սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը, ինչը կարող է վիճարկվել միայն քննվող քրեական գործից զատ՝ քաղաքացիադատավարական կարգով» (տե՛ս նյութեր, հատոր 1-ի, թերթ 53-54):

11. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 1-ի որոշման համաձայն՝ «*Քրեական հետապնդման մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսդրության պահանջների պահպանմամբ ձեռնարկված քննչական գործողություններն ուղղված են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, որոնց շրջանակում իրեղեն ապացույց ճանաչված Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44-րդ հասցեում գտնվող տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով այն կապարակնքելով՝ թեև տուժող Լևոն Զաքոյանի իրավունքները որոշակիորեն սահմանափակվում են, սակայն դա բխում է գործի օբյեկտիվ քննության պահանջից, և դրանով նրա իրավունքները և ազատությունները չեն խախտվում:*

(…)

[Ք]ննիչ Լ.Գրիգորյանի կողմից 24.10.2015թ.-ին կայացված որոշումը

հիմնավոր է, քրեական հետապնդման մարմնի կողմից Լևոն Զաքոյանի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվել, և այդ առթիվ [Առաջին ատյանի] դատարանը կայացրել է ճիշտ որոշում» (տե՛ս նյութեր, հատոր 1-ի, թերթ 105-106):

12. Վճռաբեկ դատարանը, բավարարելով դիմող Լ.Զաքոյանի ներկայացուցչի բողոքը, 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Որ վարույթն իրականացնող մարմինը, իրեղեն ապացույց ճանաչված Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Լ.Զաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելով, չի ներկայացրել պատշաճ հիմնավորում այն մասին, որ առկա է նշված անշարժ գույքը, դրա առանձնահատկությունները, հատկանիշները փոփոխելու ողջամիտ հավանականություն:*

(…)

Քննիչն իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս, ինչպես նաև սույորադաս դատարանները դրա օրինականությունը սուուգելիս, պատշաճ չեն հիմնավորել ապացուցման ընդհանուր շահի և Լ.Զաքոյանի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռության առկայությունը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը [գտել] է, որ իրեղեն ապացույց ճանաչված Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Լ.Զաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելու հետևանքով վերջինիս սեփականության իրավունքի սահմանափակումն իրավաչափ չէ (…)» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 65-66):

13. Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հունիսի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ճանաչված՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Լ.Զաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելու հետևանքով առաջացած՝ վերջինիս սեփականության իրավունքի սահմանափակումն իրավաչափ չէ, այսինքն բողոքը հիմնավոր է:*

Միաժամանակ հաշվի առնելով, որ թիվ 12148415 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, քրեական գործը՝ հատորված մեղադրական եզրակացությամբ, ըստ էության քննելու համար ուղարկվել է դատարան և 2016թ. սեպտեմբերի 24-ին ընդունվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթ, նկատի ունենալով, որ այդ գործով վարույթն իրականացնող մարմինը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն է՝ դատավոր Գ.Պողոսյանի նախագահությամբ, Դատարանը գտնում է, որ այդ քրեական գործով իրեղեն ապացույցի տնօրինման հարցը իրավասու է լուծել

միայն ԵԿԴ/0238/01/16 քրեական գործով վարույթն իրականացնող մարմինը՝ տվյալ դեպքում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը:

Այսպիսով, թեև իրեղեն ապացույց ճանաչված՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Լ.Ջաքոյանի պատասխանատու պահպանմանը չթողնելու հետևանքով վերջինիս սեփականության իրավունքի սահմանափակումն իրավաչափ չէ և այն հանգեցրել է Լ. Ջաքոյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի խախտմանը, միևնույն ժամանակ (...) Դատարանը գտնում է, որ իրավասու չէ պարտավորեցնել ԵԿԴ/0238/01/16 (12148415/1) քրեական գործով այժմ վարույթն իրականացնող մարմնին՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին, որևէ գործառույթ իրականացնել:

Այսպիսով, Դատարանը գտնում է, որ թեև բողոքը հիմնավոր է, սակայն ենթակա չէ բավարարման՝ վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հիմնավորմամբ (...)» (տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթ 38):

14. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի որոշումը, իր 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ փաստել է, որ. «*(...) դիմող Լ.Ջաքոյանի բողոքը հիմնավորված համարելու և նրա սեփականության իրավունքի խախտման փաստը ճանաչելու պարագայում, քրեական գործով մինչդատական վարույթն ավարտված լինելու (քրեական գործով վարույթն իրականացնող մարմինն այլևս դատարանն հանդիսանալու) հիմքով դիմող Լ.Ջաքոյանի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի եզրահանգումը իրավաչափ չէ. հակասում է ինչպես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին ու ՀՀ սահմանադրական դատարանի մեկնաբանություններին, և արժեզրկում է անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության հիմնարար իրավունքը* (տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթ 135):

<u>Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

15. Բողոքաբերը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, բավարարելով Լևոն Ջաքոյանի բողոքը, թույլ է տվել դատական սխալ, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջները, որն ազդել է գործի ելքի վրա: Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել Ներսես Միսակյանի և «Նարեկ» ՍՊԸ-ի վերաբերյալ գործերով որոշումներում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը որոշման եզրափակիչ մասում ընդամենը վերացական կերպով նշել է, որ խախտումը ենթակա է վերացման, իրեղեն ապացույցը Լ.Ջաքոյանի պատասխանատու պահպանությանը հանձնելով, կայացրել է անորոշ դատական ակտ, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ նման դեպքերում դատարանը պարտավոր է վարույթ իրականացնող մարմնի համար սահմանել խախտումները վերացնելու պարտականություն:

Ըստ բողոքի հեղինակի՝ այս դեպքում նախաքննության մարմինը որևէ իրավասություն և հնարավորություն չունի վերացնելու արձանագրված խախտումը, իսկ Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին իրավասություն չունի սահմանելու նման պարտականություններ, քանի որ վեճի առարկան դատարանի վարույթում գտնվող քրեական գործով իրեղեն ապացույց է (թիվ ԵԿԴ/0238/01/16), որը գտնվում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում:

15.1. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտով խախտվել է նաև Նշան Համբարձումյանի սեփականության իրավունքը, քանի որ վերջինս վեճի առարկա գույքի առաջնային և օրինական սեփականատերն է եղել, և այն Ն.Համբարձումյանի տիրապետությունից դուրս է եկել ապօրինի ճանապարհով:

15.2. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի որոշմանը:

16. Բողոքաբեր Նշան Համբարձումյանը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ խախտել է իր իրավունքները՝ թույլ տալով նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը չի պարզել և պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն հանգամանքը, որ վեճի առակա գույքը պատկանում է իրեն և վերջինիս

կամքից անկախ հանգամանքներում՝ հանցագործություն կատարելու հետևանքով է այդ տարածքը դուրս եկել իր տիրապետությունից:

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանն առանց պարզելու և համապատասխան գնահատական տալու գույքի պատկանելիության փաստի վերաբերյալ իր և Լևոն Զաքոյանի միջև առկա խնդրին՝ առանց սպասելու վարչական դատավարության կարգով Երևանի Թումանյան փողոցի թիվ 11 շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքի պետական գրանցման ակտի վիճարկման գործով վեճի դատական լուծման արդյունքին, փաստացի միջամտել է այլ դատարանին ընդդատյա վեճի լուծմանը՝ կայացնելով անօրինական և անհիմն դատական ակտ: Արդյունքում գույքը հանձնվել է ոչ իրավաչափ եղանակով սեփականատեր դարձած անձին:

16.1. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր լուծելու մեկ այլ քրեական գործով դատաքննության փուլում գտնվող իրեղեն ապացույց ճանաչված գույքի տնօրինման հարցը, քանի որ իրեղեն ապացույցի տնօրինման հարցի լուծումն արդարադատության իրականացման բաղադրիչ մասերից է և կարող է լուծվել բացառապես իրավասու դատարանի կողմից:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է իրեղեն ապացույցը Լ.Զաքոյանի պատասխանատու պահպանմանը հանձնելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշումը և մերժել Լևոն Զաքոյանի բողոքը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործով նախաքննությունն ավարտված լինելու պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված բողոքի քննության արդյունքում դատարանի լիազորությունների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

19. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով բողոքի արդյունքում իրեղեն ապացույց ճանաչված գույքը Լ.Զաքոյանի պատասխանատու պահպանմանը հանձնելու վերաբերյալ որոշում կայացնելն այն պայմաններում, երբ այդ գույքը դատական քննության փուլում գտնվող քրեական գործով իրեղեն ապացույց է:

20. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտ-*

պանվում են սեփականության բոլոր ձևերը»:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:*

(…)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումներն առ այն, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ (տե՛ս *Արթուր Արարատի Հայրապետյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշման 19-րդ կետը): Սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը պահանջելու, որ այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև պետության պարտականությունը՝ սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգություններից (տե՛ս *Արամ Այրեփանի Մկրտչյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0326/01/09 որոշման 20-րդ կետը):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Եվրոպական դատարանը կայուն նախադեպային պրակտիկա է ձևավորել առ այն, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված անձի իրավունքին միջամտությունը պետք է լինի օրինական, բխի ընդհանուր շահից և լինի համաչափ (տե՛ս, ի թիվս այլոց, *Beyeler v. Italy* գործով Մեծ պալատի 2000 թվականի հունվարի 5-ի վճիռ, գանգատ թիվ 33202/96, կետ 107, *J.A. Pye (Oxford) Ltd and J.A. Pye (Oxford) Land Ltd v. the United Kingdom* գործով Մեծ պալատի 2007 թվականի օգոստոսի 30-ի վճիռ, գանգատ

44302/02, կետ 75): Եվրոպական դատարանը Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում մասնավորապես նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև:

Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև (տե՛ս *Borzhonov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետ 59):

21. Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը պարունակում է անձանց գույքային իրավունքների հնարավոր սահմանափակումներին վերաբերող նորմեր: Դրանց շարքին են դասվում իրեղեն ապացույց ճանաչված առարկաների վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորող նորմերը:

Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել (…)*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Իրեղեն ապացույցները պահվում են քրեական գործի հետ, իսկ մեծածավալության դեպքում՝ կարող են հանձնվել հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և առանձին անձանց պատասխանատու պահպանմանը:*

(…)

3. Իրեղեն ապացույցները և առգրավված այլ առարկաները, բացառությամբ շուտ փչացող առարկաների, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են այնքան, քանի դեռ նրանց տնօրինման հարցը չի լուծվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իրեղեն ապացույցների տնօրինման մասին որոշումը կարող է ընդունվել նախքան քրեական գործով վարույթի ավարտը (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Նախքան քրեական գործով վարույթի ավարտը քրեական վարույթն իրականացնող մարմինը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին հետ է վերադարձնում*

1) շուտ փչացող առարկաները.

2) առօրյա կենցաղում օգտագործելու համար անհրաժեշտ այն առարկաները, որոնց վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել.

3) թռչունները և փնային կենդանիները, ավտոմեքենան կամ տրանսպորտային այլ միջոցը, եթե դրանց վրա քաղաքացիական հայցը, դատական ծախսերը կամ հնարավոր գույքային բռնագանձումն ապահովելու համար կալանք դրված չէ:

1.1. Գրավի առարկա իրեղեն ապացույցները և գրավի առարկա առգրավված այլ առարկաները վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ հետ են վերադարձվում դրա օրինական տիրապետողին բոլոր քննչական գործողությունները կատարելուց հետո, եթե դա չի վնասում պատշաճ ապացուցմանը (...)»:

21.1. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրեղեն ապացույց ճանաչված գույքը պատասխանատու պահպանության հանձնելու խնդրին, *Լ.Ջաքոյանի* վերաբերյալ գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել, համաձայն որի՝

«[Ո]րենսդիրը նախատեսել է առարկան իրեղեն ապացույց ճանաչելու միջոցով անձի սեփականության իրավունքի սահմանափակման օրինական հիմք, որը բխում է հասարակության ընդհանուր շահից, այն է՝ հանցագործությունների բացահայտումը: Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է սեփականության իրավունքի մի շարք երաշխիքներ, որոնցից են այն առարկաների բնութագիրը, որոնք կարող են ճանաչվել իրեղեն ապացույցներ, առարկան իրեղեն ապացույց ճանաչելու դատավարական կարգի մանրամասն կարգավորումը, իրեղեն ապացույցների պահպանման կարգի սահմանումը:

(...)

[Ի]րեղեն ապացույց ճանաչված առարկայի մեծածավալության դեպքում այն համապատասխան անձանց պատասխանատու պահպանմանը հանձնելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ելնի պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովվեն համապատասխան դատավարական

երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ (տե՛ս Borzhonov v. Russia գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60)։ Համաչափության սկզբունքը պետք է ապահովվի ոչ միայն անձի իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելիս, այլ նաև դրա աստիճանը որոշելիս։ Վերջինս արտահայտվում է իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավազորություններից որևէ մեկը կամ բոլորը սահմանափակելու հարցի որոշմամբ (...)»։ (տե՛ս Լևոն Զաքոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշման 18-րդ կետը)

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Լ.Զաքոյանի* վերաբերյալ իր նախկին որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ իրեղեն ապացույց ճանաչված մեծածավալ գույքի դեպքում, եթե ողջամտորեն բացառվում է դրա առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը։ Վերջին պահանջից բխում է նաև սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը վերոհիշյալ գույքը չթողնելու պարագայում պատշաճ հիմնավորում ներկայացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, որպիսի դեպքում միայն կապահովվի սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունն անձի կողմից վիճարկելու, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից այն գնահատելու հնարավորությունը։

22. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ներպետական և միջազգային նորմերով երաշխավորված անձի սեփականության իրավունքի պաշտպանության բովանդակային մաս է կազմում նաև իր այդ իրավունքի լիարժեք իրացման համար ենթադրյալ միջամտություն թույլ տված պետական մարմինների և պաշտոնատար անձանց որոշումներն ու գործողությունները բողոքարկելու հնարավորությունը։ Այս առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս վարույթի շահագրգիռ մասնակիցներին բողոքարկել որոշակի գույքն իրեղեն ապացույց ճանաչելու առնչությամբ՝ քրեական հետապնդման մարմինների որոշումներն ու գործողությունները (անգործությունը), այդ թվում նաև՝ իրեղեն ապացույց ճանաչված գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը պատշաճ քննարկման առարկա չդարձնելը։ Մասնավորապես՝ դրանք պետք է բողոքարկվեն նախնական քննության նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգի սահմաններում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով։

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. *Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

(…)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ պարտականությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (…)»:

Վերլուծելով մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգը նախատեսող այս նորմերը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալու անձի իրավունքների և ազատությունների անօրեն ու չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնելու խախտված իրավունքներն ու ազատությունները: Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին (Տե՛ս *Ն.Միսակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշման 12-րդ կետը, *Վ.Բաղդասարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11 որոշման 22-րդ կետը): Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգի առնչությամբ Վճռաբեկ դատարանը նաև բազմիցս ընդգծել է, որ. *«(…)*

դատական կարգով բողոքարկման ենթակա են մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունները և որոշումները, որոնք կայացվել են մինչև գործն ըստ էության լուծելու համար դատարան ուղարկելը: Սահմանելով հետագա դատական վերահսկողություն մինչդատական վարույթի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը հետաքննության և նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման որևէ սահմանափակում չի նախատեսում՝ կապված գործի քննության դատավարական փուլի հետ: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, նախաքննության ավարտված լինելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների դատական բողոքարկման համար (...)» (Տես Վճռաբեկ դատարանի՝ *«Նարեկ» ՍՊԸ-ի* գործով 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0050/11/08 գործով որոշումը, կետ 22, *Ն.Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 գործով որոշումը, կետ 12): Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով դատարանը պարտավոր է բողոքի քննության արդյունքներով կայացնել կամ ներկայացված բողոքը մերժելու որոշում, եթե գտնի, որ անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, կամ կայացնի որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, եթե հիմնավորված կհամարի, որ տեղի է ունեցել անձի իրավունքների կամ ազատությունների խախտում (Տես Վճռաբեկ դատարանի՝ *«Նարեկ» ՍՊԸ-ի* գործով վերը հիշատակված որոշումը, կետ 24, Ն.Միսակյանի գործով վերը հիշատակված որոշումը, կետ 12)

23. Հիմք ընդունելով նախորդ կետերում մեջբերված իրավական նորմերը, ինչպես նաև նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգով բողոքարկման հնարավորությունը սահմանափակված չէ նախաքննությունն ավարտված լինելու հանգամանքով, և ինքնին նախաքննության ավարտված լինելը խոչընդոտ չէ անձի իրավունքները դատական կարգով պաշտպանելու համար: Դեռ ավելին՝ հետագա դատական վերահսկողության անմիջական խնդիրներից մեկը հենց մինչդատական վարույթում նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) հետևանքով անձի իրավունքների խախտման կամ ոչ իրավաչափ սահմանափակման փաստի արձանագրումն է, ինչն էլ իր հերթին

կարող է իրավական հնարավորություն տալ անձին իրավունքի պաշտպանության այլ եղանակներով վերականգնելու իր խախտված իրավունքներն ու օրինական շահերը:

Վերոշարադրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը հիշատակված՝ «Նարեկ» ՍՊԸ-ի և Ն.Միսակյանի գործերով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելու դատարանի իրավազորության մասով գույքի վրա կալանք դնելու մասին որոշումների բողոքարկման դեպքերում, պետք է մեկնաբանվեն այնպես, որ, երբ քրեական գործը նախնական քննության փուլից դատական քննության փուլ անցնելու հետևանքով վեճի առարկա իրավահարաբերությունների առնչությամբ որոշում կայացնելու իրավասությունը նախաքննական մարմնից փոխանցվել է դատարանին՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելու դատարանի լիազորությունը դառնում է անիրագործելի և կարող է առաջացնել դատարանի համապատասխան որոշման կատարման անհնարինություն: Նշված դատողությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ մի կողմից, քրեական գործը դատարանին փոխանցված լինելու պատճառով նախաքննական մարմինը վեճի առարկա իրավահարաբերությունների առնչությամբ որոշումներ կայացնելու կամ գործողություններ կատարելու իրավասություն չունի, ուստի վերջինիս համար post factum պարտականություն չի կարող սահմանվել, մյուս կողմից՝ հաշվի առնելով, որ այդ պահին վարույթն իրականացնող մարմինը գործն ըստ էության քննող դատարանն է, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարանն իրավասություն չունի որոշակի պարտականություններ սահմանելու նույն ատյանի մեկ այլ դատարանի համար:

23.1. Բացի այդ, այս դեպքում դատարանի կողմից անձի իրավունքի խախտումը վերացնելու պարտականություն սահմանելը կարող է հանգեցնել մինչև քրեական գործով վերջնական որոշում կայացնելն իրեղեն ապացույց ճանաչված գույքի պատասխանատու պահպանության հանձնելու հարցի հետ կապված վեճերի քննությանը: Իսկ ավարտված նախաքննության պայմաններում, երբ քրեական գործը գտնվում է դատարանի վարույթում, այդ վեճերի լուծման և իրեղեն ապացույցների վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը պատկանում է քրեական գործն ըստ էության քննող դատարանին: Դեռ ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանն անդրադառնում է իրեղեն ապացույցների հետ կապված հարցերին, այսինքն՝

իրեղեն ապացույց ճանաչված գույքի տնօրինման հարցը մտնում է դատարանի արդարադատության իրականացման բացառիկ իրավազորության մեջ և կազմում է գործով եզրափակիչ դատական ակտի բովանդակային և բաղկացուցիչ մասերից մեկը: Նման պայմաններում դատական վերահսկողություն իրականացնող դատարանը չի կարող միջամտել արդարադատության իրականացմանը և մինչ գործի ավարտը որոշում կայացնել այնպիսի հարցի վերաբերյալ, որը ենթակա է լուծման միայն գործը քննող դատարանի եզրափակիչ ակտով:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավարտված նախաքննության պայմաններում, երբ քրեական գործն արդեն իսկ գտնվում է դատարանի վարույթում, մինչ այդ իրեղեն ապացույց ճանաչված գույքի վերաբերյալ նախաքննության մարմնի որոշման դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված բողոքի քննության շրջանակում դատարանը, ելնելով մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության խնդիրներից, կարող է քննարկման առարկա դարձնել և արձանագրել բացառապես մինչ գործը դատարան ուղարկելը նախաքննության մարմնի կողմից անձի սեփականության իավունքի հնարավոր խախտման փաստը՝ ձեռնպահ մնալով այս խախտումը վերացնելու պարտականություն սահմանելու մասին որոշում կայացնելուց, ինչը տվյալ դեպքում կարող է հանգեցնել նաև իրեղեն ապացույցը պատասխանատու պահպանության հանձնելու, դրա տնօրինման հետ կապված հարցերը որոշելու՝ գործն ըստ էության լուծող դատարանի լիազորության յուրացմանը: Գործը դատարան ուղարկելուց հետո գույքի շարունակական արգելադրմամբ պայմանավորված՝ անձի սեփականության իրավունքի սահմանափակման օրինականության և հնարավոր խախտման փաստը քննարկելու ու առավել ևս իրեղեն ապացույցի ճակատագիրը որոշելու իրավասությունը պատկանում է գործն ըստ էության քննող դատարանին: Ընդ որում, անձն իր իրավունքների ենթադրյալ խախտման հարցը կարող է դատարանի վարույթում գտնվող գործով քննարկման առարկա դարձնել համապատասխան միջնորդություններ հարուցելով թե՛ գործը դատական քննության նշանակելու և թե՛ դատաքննության փուլերում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև նախաքննությունն ավարտված լինելու հանգամանքն արգելք չէ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումների դեմ բերված բողոքները քննության առնելու համար, սակայն հետագա դատական վերահսկողության կառուցակարգն այս դեպքում կարող է սահմանափակվել մինչդատական վարույթում անձի իրավունքների հնարավոր խախտման փաստի արձանագրմամբ՝ առանց այդ խախտումը վերացնելու վարույթն իրակա-

նացնող մարմնի պարտականությունը սահմանելու: Դրանով իսկ, մի կողմից, ապահովվում է մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկության եղանակով անձի դատական պաշտպանության իրավունքը, մյուս կողմից՝ բացառվում է գործն ըստ էության քննող դատարանի վրա մինչ դատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողություն իրականացնող դատարանի կողմից ոչ իրավաչափորեն որոշակի պարտականություններ դնելը, ինչպես նաև մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողության գործառույթի շրջանակներում գործն ըստ էության լուծող դատարանին վերապահված իրավասությունների յուրացումը:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Երևանի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 տարածքը ճանաչվել է իրեղեն ապացույց այն հիմնավորմամբ, որ հանցավոր ոտնձգության առարկա է և գործով ունի կարևոր ապացուցողական նշանակություն: Այնուհետև իրականացվել է զննություն, և տարածքի պահպանությունն ապահովելու նպատակով այն կապարակնքվել է (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հունվարի 22-ի որոշմամբ մերժել է դիմող Լ.Զաքոյանի բողոքը կապված իրեղեն ապացույց ճանաչված Թումանյան փողոցի 11-րդ շենքի 44-րդ հասցեում գտնվող տարածքի կապարակնքումը հանելու և այն իր պատասխանատու պահապանության հանձնելու վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը): Դիմող Լ.Զաքոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2016 թվականի մարտի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշումը (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը, Լ.Զաքոյանի ներկայացուցիչ Թ.Ալեքսանյանի բողոքի հիման վրա, 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ բեկանել է ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել է Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Բողոքի նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հունիսի 22-ի որոշմամբ՝ պահպանելով սույն գործով Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, ճանաչել է Լ.Զաքոյանի սեփականության իրավունքի խախտումը, սակայն քրեական գործը դատական քննության փուլ փոխանցված լինելու պատճառաբանությամբ մերժել է ներկայացված բողոքը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Հիշյալ որոշման դեմ Լ.Զաքոյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Վերաքննիչ դատարանը 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ վճռել է խնդրո առարկա գույքը մինչև վարույթ իրականացնող մարմնի կողմից տվյալ իրեղեն ապացույցի վերաբերյալ վերջնական որոշում

կայացնելը հանձնել Լ.Ջաքոյանի պատասխանատու պահպանությանը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)։

25. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 18-23.1.-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի իրեղեն ապացույց ճանաչված Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը Վերաքննիչ դատարանի կողմից Լ.Ջաքոյանի պատասխանատու պահպանմանը հանձնելով խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջները։

Մասնավորապես՝ սույն գործով վեճի առարկա իրեղեն ապացույցը պատասխանատու պահպանմանը հանձնելու հետ կապված որոշում կայացնելու բացառիկ իրավասությունը պատկանում է գործն ըստ էության քննող դատարանին։ Ուստի, Վերաքննիչ դատարանն իրավասու չէր սույն գործով մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմաններում որևէ պարտականություն դնելու վարույթն իրականացնող մարմնի վրա՝ այն պատճառով, որ արդեն իսկ տվյալ գործով վարույթ իրականացնող մարմինը գործն իր վարույթ ընդունած և ըստ էության քննություն իրականացնող առաջին ատյանի դատարանն է։ Դեռ ավելին՝ Վերաքննիչ դատարանը, իրեղեն ապացույց ճանաչված՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքն անմիջականորեն Լ.Ջաքոյանի պատասխանատու պահպանությանը հանձնելով, դուրս է եկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ համապատասխան խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու իր լիազորության շրջանակից։

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով բողոքի քննության արդյունքում իրեղեն ապացույց ճանաչված գույքը Լ.Ջաքոյանի պատասխանատու պահպանմանը հանձնելու վերաբերյալ որոշում կայացնելն այն պայմաններում, երբ այդ գույքը դատական քննության փուլում գտնվող քրեական գործով իրեղեն ապացույց է։

26. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, իրեղեն ապացույց ճանաչված Երևան քաղաքի Թումանյան փողոցի 11-րդ շենքի թիվ 44 հասցեում գտնվող տարածքը մինչև քրեական գործով վարույթ իրականացնող մարմնի կողմից տվյալ իրեղեն ապացույցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը Լ.Ջաքոյանի պատասխանատու պահպանությանը հանձնելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված դատական վերահսկողության

սահմանների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով Լ.Զաքոյանի սեփականության իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ բնույթը և գործը դատական քննութայն փուլում գտնվելու հիմքով ձեռնպահ մնալով այդ խախտումը վերացնելու պարտականություն սահմանելուց, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ՝ մերժելով Լևոն Զաքոյանի ներկայացրած բողոքը: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի որոշմանը:

27. Ինչ վերաբերում է բողոքաբերների կողմից բարձրացված՝ Ն.Համբարձումյանի սեփականության իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ մյուս հարցերին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որն դրանք դուրս են կոնկրետ գործով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակից և, հետևաբար, քննարկման առարկա դարձվել չեն կարող:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Դիմող Լևոն Զաքոյանի բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ1/0033/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Բ.ԲԱԽՇԻՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռազմիկ Գարեգինի Չանախչյանի պաշտպան Ա.Քարամյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի հունվարի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 90850216 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 28-ի որոշմամբ Ռազմիկ Չանախչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ռ.Չանախչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողության հանձնելը:

2016 թվականի մարտի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 13-ի դատավճռով Ռ.Ազմիկ Չանախչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով, և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրող Բ.Բախշիյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հունիսի 30-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 13-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և փոփոխել է ու ամբաստանյալ Ռ.Չանախչյանին դատապարտել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռ.Չանախչյանի պաշտպան Ա.Քարամյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

4.1. 2018 թվականի մարտի 17-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ամբաստանյալ Ռ.Չանախչյանի դիմումը, որով վերջինս խնդրել է իր վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել՝ հաշվի առնելով, որ գործի ողջ քննության ընթացքում չի խուսափել քննությունից կամ դատից, և լրացել են ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի կողմից Ռ.Չանախչյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ *«(…) [Ն]ա հանդիսանալով ՊԲ 47455 զորամասի 3-րդ հրետանային դիվիզիոնի 8-րդ մարտկոցի 3-րդ հաշվարկի համար, կոչումով շարքային, 2015 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 12:00-13:00-ն, չպահպանելով ՀՀ զինված ուժերի Ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ և 41-րդ հոդվածների պահանջները՝ հրամանատարի հրամանը անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում կատարելու փոխարեն հանդուգն կերպով հրաժարվել է*

*կատարել նույն դիվիզիոնի հրամանատար, մայոր Արմեն Սմբատի Սանթրյանի օրինական և սահմանված կարգով իրեն տրված հրամանը՝ իրեն հատկացված տարածքը մաքրելու վերաբերյալ, **դրանով իսկ հեղինա-կազրկելով հրամանատարի դերը ենթակա դիվիզիոնի ողջ անձնակազմի շրջանում** և խաթարելով պետ (հրամանատար)-ստորադաս (ենթակա) սահմանված կանոնադրային հարաբերությունները, որով էական վնաս է պատճառել ծառայության շահերին (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 111-112):

5.1. Նախաքննական մարմնի կողմից կազմված մեղադրական եզրակացությունում նշվում է. *«(...) 2015 թվականի դեկտեմբերի 26-ին ժամը 12:00-ի սահմաններում ՊԲ 47455 զորամասի 3-րդ հրետանային դիվիզիոնի հրամանատար, մայոր Արմեն Սմբատի Սանթրյանը զորամասի շարահրա-պարակում նույն դիվիզիոնի ժամկետային զինծառայողներ, կրտսեր սերժանտ Տիգրան Ղազարյանին և շարքայիններ Նարեկ Կարապետյանին, Հայկ Մինասյանին և Ռազմիկ Չանախչյանին 8-րդ մարտկոցին հատկացված տարածքը մաքրելու վերաբերյալ օրինական և սահմանված կարգով հրաման է տվել, որից հետո վերջիններս սկսել են մաքրության աշխատանքը, իսկ մայոր Ա.Սանթրյանի գնալուց հետո շարքային Ռ.Չանախչյանը դադարեցրել է այն կատարել: Շուրջ 30 րոպե անց մայոր Ա.Սանթրյանը վերադարձել է շարահրապարակ և տեսնելով, որ մաքրության աշխատանքը թերի է կատարված, իր մոտ է կանչել Տ.Ղազարյանին, Ն.Կարապետյանին, Հ.Մինասյանին և Ռ.Չանախչյանին ու կրկին օրինական և սահմանված կարգով վերջիններիս հրաման տվել շարունակել մաքրության աշխատանքը, որից անմիջապես հետո Տ.Ղազարյանը, Ն.Կարապետյանը և Հ.Մինասյանը շարունակել են այն կատարել, իսկ Ռ.Չանախչյանը բացահայտ կերպով հրաժարվել և չի կատարել մայոր Ա.Սանթրյանի կողմից տրված բանավոր հրամանը՝ մաքրության աշխատանք կատարելու վերաբերյալ (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 127-128):

6. Վկա Տիգրան Ղազարյանը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ. *«(...) Դեկտեմբերի 26-ին է հրաման չկատարելու այդ դեպքը տեղի ունեցել ու դրա մասին իմացել է դիվիզիոնի հրամանատար, մայոր Սանթրյանից: Դեկտեմբերի 26-ին փողան էին կանգնած եղել, դրանից հետո գնացել են ավտոպարկ, որից հետո մաքրություն իրականացնելու համար բաժանվել են մասերի: Այդ ամենից հետո վերադարձել են «պլաց»: Այդտեղ են եղել ինքը, Ռազմիկ Չանախչյանը, Նարեկ Հայրապետյանը և Հայկ Մինասյանը՝ դիվիզիոնի հրամանատար մայոր Սանթրյանի հրամանի հիման վրա մաքրություն իրականացնելու համար: Ինքը մաքրություն է կատարել և **չի նկատել**, թե արդյոք եղել է որևէ մեկը, ով մաքրություն չի կատարել: Ինքը **չի նկատել** նաև, թե արդյոք Ռ.Չանախչյանը մաքրություն կատարել է, թե՝ ոչ, քանի որ նրան մեջքով է*

*կանգնած եղել: Ռ.Չանախչյանի մոտ կանգնած է եղել Հայկ Մինասյանը: Յուրաքանչյուրի համար նախատեսված է եղել մաքրություն իրականացնելու որոշակի տարածք: Իրենց մաքրության աշխատանքը հետո ստուգել է մայոր Սանթրյանը: Հետո տեսել է, որ մայոր Սանթրյանը և Ռազմիկ Չանախչյանը իջնում են շտաբ: Դրանից հետո է միայն իմացել, որ դա կապված է եղել Ռ.Չանախչյանի կողմից մայոր Սանթրյանի հրամանը, տարածքը մաքրելու վերաբերյալ, չկատարելու հետ: Ինքը ստուգման պահին մայոր Սանթրյանի և Ռ.Չանախչյանի միջև դրա հետ կապված **որևէ խոսակցություն չի լսել**, քանի որ իր տարածքը մաքրելիս է եղել: Ինքը **անձամբ չի տեսել**, որ Ռ.Չանախչյանը չի կատարել մայոր Սանթրյանի հրամանը (...): Ինքը Ռազմիկ Չանախչյանի կողմից մաքրություն չկատարելու մասին **իմացել է մայոր Սանթրյանից**»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 175):

6.1. Վկա Նարեկ Կարապետյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ. *«(...) 2015 թվականի դեկտեմբերի 26-ին դիվիզիոնի հավաքատնտեսային պլանի համաձայն պետք է մաքրվեր 8-րդ մարտկոցին հատկացված տարածքը: Շարահրապարակում մայոր Սանթրյանը [իրեն, Տիգրան Ղազարյանին, Հայկ Մինասյանին և Ռազմիկ Չանախչյանին] ցույց է տվել 8-րդ մարտկոցին հատկացված տարածքը: (...) Դրանից հետո մայոր Սանթրյանը սահմանված կարգով իրենց չորսին հրամայել է սկսել տարածքի մաքրությունը, այդ ժամանակ մայոր Սանթրյանը գնացել է: Դրանից հետո Չանախչյանը ավելը ձեռքից դրել է գետնին և կանգնել է այնտեղ, իսկ մինչ այդ երբ մայոր Սանթրյանը դեռ չէր գնացել, Չանախչյանը ավելով մաքրում էր անկյունաքարերի կողքերը: Իրենք գործը ավարտելուց հետո գնացել են վերև, մոտ 30 րոպե հետո՝ ժամը 13:00-ի սահմաններում, իրենց տեղեկացրել են, որ մայոր Սանթրյանը շարահրապարակում է և իր մոտ է կանչում շարահրապարակը մաքրող 4 զինվորներին: Իրենք չորսով գնացել են շարահրապարակ: Մայոր Սանթրյանը ասել է, որ մաքրությունը լավ չի արված և սահմանված կարգով բոլորին հրամայել է, որ յուրաքանչյուրը իրենց հատկացված տարածքը կրկին մաքրեն: Սկսել են մաքրությունը և չանցած 2 րոպե ինքը նկատել է, որ մայոր Սանթրյանի և Ռ.Չանախչյանի միջև առաջացել է վիճաբանություն՝ ինչ որ կոնֆլիկտային իրավիճակ, որը տևել է շատ կարճ, մի քանի վայրկյան և զգացել է, որ նրանք միմյանց չեն հասկանում, ձայները չեն բարձրացրել, միմյանց չեն հայհոյել, չեն քաշքշել և չեն հարվածել: Ինքը **կոնկրետ չի լսել**, թե ինչ թեմայի շուրջ են խոսել, քանի որ բարձր չէին խոսում և այդպես մի քանի վայրկյան խոսելուց հետո մայոր Սանթրյանը և Չանախչյանը գնացել են զորամասի շտաբ: Ինքը նույն օրը մայոր **Սանթրյանից տեղեկացել է**, որ վերը նշված վիճաբանության ընթացքում ինքը հրամայել է մաքրություն կատարել մի քանի անգամ, իսկ Չանախչյանն էլ հրաժարվել է մաքրություն կատարելուց (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 77-78):

6.2. Վկա Հայկ Մինասյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ. *«(…) 2015 թվականի դեկտեմբերի 26-ին դիվիզիոնի հավաքատնտեսային պլանի համաձայն պետք է մաքրվեր 8-րդ մարտկոցին հատկացված տարածքը: Շարահրապարակում մայոր Սանթրյանը [իրեն, Տիգրան Ղազարյանին, Նարեկ Կարապետյանին և Ռազմիկ Չանախչյանին] ցույց է տվել 8-րդ մարտկոցին հատկացված տարածքը: (…) Դրանից հետո մայոր Սանթրյանը սահմանված կարգով իրենց չորսին հրամայել է սկսել տարածքի մաքրությունը, այդ ժամանակ իրենք չորսով վերցրել են ավելները և սկսել մաքրությունը: Մայոր Սանթրյանի գնալուց հետո իրենք բոլորը շարունակել են գործը: Վերջացնելուց հետո գնացել են լվացվելու, այնուհետև իրենց կանչել է մայոր Սանթրյանը ասելով, որ տարածքը լավ չի մաքրվել և նորից սկսել են մաքրությունը: Որոշ ժամանակ անց իրենք տեղեկանում են, որ իրենց կանչել է մայոր Սանթրյանը: Նրան ներկայանալուց հետո նա հարցրել է, թե ինչ դեպք է տեղի ունեցել քիչ առաջ շարահրապարակում և ինքը պատասխանել է, որ ոչ մի բան չի նկատել: Ինքը **կոնկրետ չի հիշում** մայոր Սանթրյանի գնալուց հետո Չանախչյանը շարունակել է տարածքը մաքրել, թե ոչ, քանի որ ինքը զբաղված էր տարածքի մաքրությամբ և ուշադրություն չի դարձրել: Երբ 2-րդ անգամ մայոր Սանթրյանը իրենց հրամայել է կատարել տարածքների մաքրությունը, ինքը սկսելով մաքրել տարածությունը **չի նկատել** Չանախչյանը կատարում է մաքրություն, թե ոչ, որից հետո ինքը նկատել է, որ մայոր Սանթրյանը և Չանախչյանը գնացել են շարահրապարակից: Դա եղել է իրենց գործը սկսելուց մի քանի րոպե հետո և ինքը **չգիտի**, թե նրանց միջև ինչ խոսակցություն է տեղի ունեցել և ինչու են գնացել, քանի որ զբաղված է եղել իր աշխատանքով: Այդ մաքրությունը ավարտելուց հետո մայոր Սանթրյանը իրենց 3-ին կանչել է իր սենյակ և հարցրել, թե տեսել են արդյոք ինչ է տեղի ունեցել շարահրապարակում մաքրություն կատարելու ժամանակ, այն որ իր ներկայությամբ Չանախչյանը հրաժարվել է մաքրություն կատարել և ինքը պատասխանել է, որ **ուշադիր չի եղել, թե նրանց միջև ինչ խոսակցություն է եղել** (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 88-89):

6.3. Վկա Խաչիկ Աղաբեկյանը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ. *«(…) Ինքը **ընդհանուր խոսակցություններից լսել է,** որ շարահրապարակում Ռազմիկ Չանախչյանը չի կատարել մայոր Սանթրյանի հրամանը՝ կապված տարածքի մաքրության հետ: (…) Ինքը անձամբ ականատես չի եղել Ռազմիկ Չանախչյանի կողմից մայոր Սանթրյանի հրամանի չկատարմանը»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 175):

6.4. Վկա Արմեն Սանթրյանը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ. *«(…) [Ի]նքը որպես հրամանատար Ռազմիկ Չանախչյանին և ևս 3 զինծառայողներին խնդիր է առաջադրել տարածքի*

մաքրություն իրականացնելու վերաբերյալ՝ տարածքը բաժանելով հավասար մասերի: Մի որոշ ժամանակ հետո վերադարձել է և տեսել, որ տարածքում ոչ մեկը չկա ու տարածքը մաքրված է մասամբ՝ Ռազմիկ Չանախչյանին հանձնված տարածքը մաքրված չի եղել: Դրանից հետո նորից նրանց կանչել է շարահրապարակ և կրկին բոլորին խնդիր է առաջադրել մաքրել ամբողջ տարածքը և կանգնել է այնտեղ ու հետևել աշխատանքին: Այդ ընթացքում նկատել է, որ բոլորը կատարում են մաքրություն, բացի Ռազմիկ Չանախչյանից: Նրանից հարցրել է, թե ինչու չի կատարում հրամանը, նա էլ պատասխանել է. «Ինչ կա, եկել ես գլխիս կայնել ես, էս ինչ ձև ա»: Դրանից հետո ինքը նորից նրան հրամայել է, որ կատարի նրա տարածքի մաքրությունը, սակայն նա ասել է, որ հրաժարվում է կատարել: Այդ ամենից հետո ինքը նրան ներկայացրել է հրամանատարությանը՝ նրա վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 175-176):

6.5. Ամբաստանյալ Ռազմիկ Չանախչյանը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ. *«(…) [Դ]եպքի օրից մի երեք օր առաջ գտնվել է բուժկետում ջերմության պատճառով: Ինքը կարող է լավ մաքրած չլիներ տարածքը, բայց մաքրություն իրականացրել է: Ինքը գտնվել է բուժկետում, երբ որ Նարեկ Կարապետյանն եկել է այնտեղ և ասել, որ մայոր Սանթրյանը նորից իրենց կանչում է շարահրապարակ: Սանթրյանը իրեն ասել է, թե ինչու չի մաքրել իր տարածքը, ինքն էլ նրան ասել է, թե այդ ինչ ձև է խոսում իր հետ, բայց մայոր Սանթրյանի կողմից ասված արտահայտություններն իր կողմից չեն հնչեցվել: (…) Սանթրյանը կոնկրետ հրաման չի տվել: Եթե նրա ասածը հրաման է եղել, ուրեմն ինքը մեղավոր է, որ թերի է կատարել, բայց կատարել է: (…) Շարահրապարակի մաքրություն իրականացնելու հանձնարարությունը տալու ժամանակ ներկա են եղել մոտ 15 հոգի զինծառայող և բոլորն էլ անցել են մաքրության գործին: Ինքը թերի է կատարել մաքրությունը, քանի որ իրեն լավ չի զգացել: Սանթրյանը սահմանված կարգով հրաման չի տվել, այլ ասել է. «Գործ արեք, արա»: Իր համար դա հրաման չի հանդիսանում: Ինքը մայոր Սանթրյանին չի ասել, որ իրեն լավ չի զգում: (…) Ինքը մաքրել է մոտ 3-4 մետր ու զգացել է, որ լավ չի իրեն զգում ու գնացել է բուժկետ: (…) Շարահրապարակը ընդհանուր մաքուր է եղել և հնարավոր չէր լինի ակնհայտ ասել, որ դրա որևէ հատվածը մաքուր չէ: (…) 1-ին անգամ մաքրությունը կիսատ է թողել, քանի որ լավ չի զգացել իրեն, իսկ 2-րդ անգամ «արա» բառը լսելուց հետո չի կատարել»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 174-175):

7. Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Ռ.Չանախչյանին ճանաչելով մեղավոր, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«(…) Դատարանը գտնում է, որ Դ[ատավճռում] (…) շարադրված թույլատրելի*

և վերաբերելի ապացույցների բավարար համակցությամբ ապացուցված է, որ.

(…)

Ռազմիկ Չանախչյանի կողմից պատշաճ չի կատարվել հրամանի պահանջները.

Այսպես, չնայած ի սկզբանե Ռ.Չանախչյանի կողմից որոշակի մաքրության աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք թերի են կատարվել, իսկ երբ մայոր Արմեն Սանթրյանը աշխատանքների կատարումը ստուգելուց հետո պահանջել է պատշաճ կարգով կատարել մաքրությունը, Ռ.Չանախչյանը, խախտելով ՀՀ ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 41-րդ հոդվածների պահանջները բացահայտ հրաժարվել է նշված պահանջը կատարելուց, այսինքն՝ հրաժարվել է կատարել հրամանը:

*Ռազմիկ Չանախչյանի կողմից բացահայտ կերպով Ա.Սանթրյանի կողմից տրված հրամանի չկատարումը հանգեցրել է **ենթակա դիմիգիոնի ողջ անձակազմի շրջանում հրամանատարի դերի հեղինակազրկմանը** և պետստորադաս սահմանված կանոնադրային հարաբերությունների խաթարմանը, ինչով էական վնաս է պատճառվել ծառայության շահերին:*

Հիմք ընդունելով վերոգրյալը, Դատարանը հաստատված է համարում Ռազմիկ Չանախչյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությունը և նրան մեղավոր է ճանաչում ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով:

(…)

Դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Ռազմիկ Չանախչյանի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ հանցագործության կատարման հանգամանքներն ու նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող վերը նշված հանգամանքները, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Ռազմիկ Չանախչյանի ուղղվելը հնարավոր է առանց նրա կողմից ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու, այսինքն՝ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 178-179):

8. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, փաստել է. *«(…) Ռազմիկ Չանախչյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությանը նախորդող և ուղեկցող մի շարք հանգամանքներ, ինչպես նաև այն, որ ամբաստանյալը նախկինում երկու անգամ դատապարտվել է նույնաբնույթ հանցավոր արարքներ կատարելու համար:*

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ռազմիկ Չանախչյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունն իրավաչափ չէ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 58)։

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել դատական սխալ, այն է՝ խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, որոնք ազդել են գործի ելքի վրա և հանգեցրել օրենքի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն։

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոքաբերը, ի թիվս այլոց, նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի կատարել ամբաստանյալի անձը բնութագրող, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները հաստատող ապացույցները բարեխիղճ գնահատելու իր պարտականությունը։ Ինչ վերաբերում է Ռ.Չանախչյանի ուղղվելու, սոցիալական արդարությունը վերականգնելու և նոր հանցագործությունների կատարումը կանխելու պատժի նպատակների իրագործմանը, ապա ըստ պաշտպանի՝ պատժի նպատակներն իրագործվում են, քանի որ նա իրեն մեղավոր է ճանաչել, զղջացել է կատարած արարքի համար, տվել է խոստովանական ցուցմունք, աջակցել է նախաքննությանը, ինչպես նաև ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայում և իրավաբանական ֆակուլտետում սովորելու առկայությունը բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար։ Բացի այդ, ամբաստանյալն այս ընթացքում որևէ նոր հանցավոր արարք չի կատարել։

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, փոփոխել այն և բեկանված մասով կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ, այն է՝ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթները, և 1 տարի ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատավճռին։

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցը վերաբերում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն։ Միևնույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը և հաշվի առնելով այդ կապակցությամբ *Մ.Էլոյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները (տե՛ս *Մ.Էլոյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչ բողոքաբերի կողմից բարձրացրած իրավական խնդրին անդրադառնալն անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել Ռ.Չանախչյանին մեղսագրված արարքի որակման հարցը, քանի որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող հանգամանք: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հրաման չկատարելու հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մաս) կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով նախ պետք է քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցը. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Ռ.Չանախչյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ բովանդակությամբ. *«Պետի օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելը, որն էական վնաս է պատճառել ծառայության շահերին (…)»:*

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվություն զինծառայողները կրում են հանցագործություն կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությանը համապատասխան»:*

Նույն օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ «*Հրամանատարի (պետի) հրամանը պետք է կատարվի անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում (…)»:*

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է»:*

Նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Կարգապահական խախտում (զանցանք) է համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ուղնձգող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար սույն օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն (...)»:*

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն (...)»:*

Մեջբերված իրավանորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը նյութական է, և արարքը ենթակա է որակման քրեաիրավական այդ նորմով, եթե դրանով **էական վնաս է** պատճառվել ծառայության շահերին: Այն դեպքում, երբ **էական վնասի** պատճառումը բացակայում է, հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հրամանի չկատարումը ոչ բոլոր դեպքերում կարող է առաջացնել քրեական պատասխանատվություն. ելնելով առանձին տարրերի բացակայությունից՝ այն կարող է դիտարկվել որպես կարգապահական խախտում՝ հանգեցնելով կարգապահական պատասխանատվության:

13.1. Այսպիսով, հրաման չկատարելու՝ կարգապահական զանցանքի և զինվորական հանցագործության տարբերակման հիմքում ընկած է արարքի հանրային վտանգավորության աստիճանը (մանրամասն տե՛ս *Գարուշ Մադաթյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը): Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով որակելու համար անհրաժեշտ տարրը՝ ծառայության շահերին պատճառված **էական վնասը**, կարող է կրել ինչպես նյութական (ֆիզիկական, գույքային), այնպես էլ ոչ նյութական (բարոյահոգեբանական, կազմակերպչական և այլն) բնույթ:

Նյութական վնասը կարող է արտահայտվել, օրինակ, զինծառայողների կամ այլ անձանց առողջությանը վնաս պատճառելով (ֆիզիկական վնաս) կամ ռազմական գույքին, տեխնիկային կամ այլ գույքին վնաս պատճառելով (գույքային վնաս): Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գույքային վնասի դեպքում էական վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը գերազանցող գումարը կամ դրա արժեքը:

13.2. Առանձնակի բարդություն է ներկայացնում կատարվածի արդյունքում ծառայության շահերին էական վնաս պատճառելն արձանագրելն այն դեպքում, երբ այն ոչ նյութական բնույթ է կրում: Վճռաբեկ դատարանը հարկ

է համարում նշել, որ որպես այդպիսին կարող են համարվել, ի թիվս այլոց, մարտական կոնկրետ խնդիրների կատարման դժվարեցումը, զորամասի, ստորաբաժանման օրակարգի լուրջ խախտումը (այդ թվում՝ անձնակազմի ուսուցման, ռազմական տեխնիկայի սպասարկման համար ծրագրված միջոցառումների խափանումը), մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումը, զինծառայողների օրինական շահերի խախտումը (ինչը կարող է դրսևորվել, օրինակ, այլ զինծառայողների վրա բեռի ավելացմամբ, տվյալ անձի կողմից կատարման ենթակա պարտականությունները այլ զինծառայողների կողմից իրականացմամբ), հրամանատարի (պետի) հեղինակության կորուստը, զորամիավորումներում զինվորական կարգապահության էական անկումը:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ հրաման չկատարելը, որպես կանոն, ծառայության շահերին ոչ նյութական վնաս է պատճառում: Մասնավորապես, որոշակիորեն ազդում է հրամանատարի հեղինակության վրա, ինչ-որ առումով նվազեցնում զինվորական կարգապահության մակարդակը և այլն: Սակայն քրեորեն պատժելի է միայն այնպիսի վնասի պատճառումը, որն էական է համարվում զինվորական ենթակայության կարգի համար: Հետևաբար հրամանի չկատարման հետևանքով *ոչ նյութական էական վնասի* առաջացման հարցը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև հրամանի բնույթը, բովանդակությունը, հրամանի տրման իրադրությունը: Այլ կերպ՝ հրաման չկատարելը կարող է առաջացնել էական վնաս, եթե հրամանը տրվել է էական այնպիսի հարցի վերաբերյալ, որի չկատարելն առաջացրել է, օրինակ, լուրջ խոչընդոտ զորամասի, ստորաբաժանման մարտական հերթապահության կամ զինվորական այլ պարտականությունների կատարմանը, անհնարին դարձրել ստորաբաժանման առջև դրված խնդիրների կատարումը, ինքնին հեղինակազրկել հրամանատարի դերը, հանգեցրել զինվորական կարգապահության էական անկման և այլն:

13.3. Վերոգրյալի համատեքստում հարկ է ընդգծել, որ առանձին զինծառայողների ներկայությամբ հրաման չկատարելն ինքնին չի կարող հանգեցնել հրամանատարի հեղինակության կորստի և ազդել զինվորական կարգապահության վիճակի վրա այն աստիճան, որ ծառայության շահերին պատճառված վնասն էական գնահատվի: Ծառայության շահերին պատճառված վնասն էական գնահատելու համար ինքնին բավարար չէ զինծառայողի կողմից որևէ աշխատանք կատարելուց հրաժարվելը, եթե բացակայում են այլ հանգամանքներ, որոնք կվկայեին զինվորական ենթակայության շահերին էական վնաս պատճառելու մասին:

14. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 13-13.3.–րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծառայության շահերին պատճառված այս կամ այն վնասը որպես էական գնահատելը կախված է գործի կոնկրետ հանգամանքներից:

Յուրաքանչյուր դեպքում արարքում քննարկվող հանցակազմի առկայությունն ապացուցելու համար պետք է փաստել ոչ միայն էական վնասի առկայությունը, այլև այն, թե տվյալ գործով կոնկրետ ինչում է վերջինս դրսևորվել՝ համապատասխան ապացույցների հիման վրա մատնանշելով այդ մասին վկայող փաստական հանգամանքները: Այլ կերպ՝ դատական ակտ կայացնելիս դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է կատարի գործի կոնկրետ հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրություն՝ էական վնասի առկայության կամ բացակայության փաստը պատճառաբանված եզրահանգումների տեսքով արձանագրելու համար:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Չանախչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, չպահպանելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ և 41-րդ հոդվածների պահանջները, հրամանատարի հրամանը անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում կատարելու փոխարեն հանդուգն կերպով հրաժարվել է կատարել նույն դիվիզիոնի հրամանատար, մայոր Ա.Սանթրյանի օրինական և սահմանված կարգով իրեն տրված հրամանը՝ իրեն հատկացված տարածքը մաքրելու վերաբերյալ՝ *դրանով իսկ հեղինակազրկելով հրամանատարի դերը ենթակա դիվիզիոնի ողջ անձնակազմի շրջանում* և խաթարելով պետ (հրամանատար) - ստորադաս (ենթակա) սահմանված կանոնադրային հարաբերությունները**,** որով էական վնաս է պատճառել ծառայության շահերին (տես սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Ռ.Չանախչյանին ճանաչելով մեղավոր, իր դատավճռում, ի թիվս այլոց, նշել է, որ Ռ.Չանախչյանի կողմից բացահայտ կերպով Ա.Սանթրյանի կողմից տրված հրամանի չկատարումը հանգեցրել է *ենթակա դիվիզիոնի ողջ անձակազմի շրջանում հրամանատարի դերի հեղինակազրկմանը* և պետ-ստորադաս սահմանված կանոնադրային հարաբերությունների խաթարմանը, ինչով էական վնաս է պատճառվել ծառայության շահերին: Իսկ արդյունքում Առաջին ատյանի դատարանը հանգել է այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նրա կողմից ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու, այսինքն՝ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (տես սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Ռ.Չանախչյանի կատարած արարքի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններին, պատժի մասով բեկանել և փոփոխել է ստորադաս դատարանի դատավճիռը՝ փաստելով, որ Ռ.Չանախչյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս Առաջին ատյանի դատարանն անհիմն է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և թույլ է տվել

պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)։

16. Նախորդ, ինչպես նաև սույն որոշման 6.1.-6.5.-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքներն իրենց համակցության մեջ գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները թեև արձանագրել են, որ ամբաստանյալի կողմից Սանթրյանի հրամանի չկատարման արդյունքում ենթակա դիվիզիոնի ողջ անձնակազմի շրջանում հրամանատարի դերի հեղինակազրկման և պետ (հրամանատար) - ստորադաս (ենթակա) սահմանված կանոնադրային հարաբերությունների խաթարման տեսքով ծառայության շահերին պատճառվել է էական վնաս, սակայն չեն վկայակոչել որևէ ապացույց, ինչը կվկայեր էական վնասի դրսևորման այդ ձևի սույն գործում առկայության մասին։ Այլ կերպ՝ սույն գործով ձեռքբերված ապացույցների՝ իրենց համակցության մեջ վերլուծությունը վկայում է, որ առկա չէ որևէ փաստական տվյալ, ինչը կհիմնավորեր, թե հրամանի չկատարման արդյունքում ենթակա դիվիզիոնի ողջ անձնակազմի շրջանում հրամանատարի դերի հեղինակազրկումը կոնկրետ ինչպես կամ ինչում է արտահայտվել։ Մասնավորապես, դեպքին ականատես զինծառայողների, տվյալ գործով վկաներ Տիգրան Ղազարյանի, Նարեկ Կարապետյանի և Հայկ Մինասյանի ցուցմունքներից փաստացի հետևում է, որ վերջիններս չեն տեսել, թե ինչ է տեղի ունեցել շարահրապարակում մաքրություն կատարելու ժամանակ, քանի որ զբաղված են եղել իրենց աշխատանքով, ինչպես նաև չեն տեսել, թե ինչպես է Ռ.Չանախչյանը մայոր Ա.Սանթրյանի ներկայությամբ հրաժարվել մաքրություն կատարել, և ուշադիր չեն եղել, թե վերջիններիս միջև ինչ խոսակցություն է եղել։ Բացի այդ, ըստ էության, նշել են նաև, որ մայոր Սանթրյանից են տեղեկացել, որ վերջինս Ռ.Չանախյանին հրամայել է մաքրություն կատարել, իսկ Ռ.Չանախչյանը հրաժարվել է այն կատարելուց (տե՛ս սույն որոշման 6-6.2-րդ կետերը)։ Իսկ դեպքին ոչ ականատես վկա Խաչիկ Աղաբեկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքն ընդհանուր խոսակցություններից է լսել, որ շարահրապարակում Ռ.Չանախչյանը չի կատարել մայոր Սանթրյանի հրամանը՝ կապված տարածքի մաքրության հետ (տե՛ս սույն որոշման 6.3-րդ կետը)։

Վերոգրյալ պայմաններում փաստելը, որ հրամանի չկատարման արդյունքում տեղի է ունեցել հրամանատարի դերի հեղինակազրկում ենթակա դիվիզիոնի ողջ անձնակազմի շրջանում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի բխում սույն գործի նյութերից։ Ասվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել նաև, որ առանձին զինծառայողների ներկայությամբ հրաման չկատարելն ինքնին չի կարող հանգեցնել հրամանատարի հեղինակության կորստի և ազդել զինվորական կարգապահության

վիճակի վրա այն աստիճան, որ ծառայության շահերին պատճառված վնասն էական գնահատվի: Ծառայության շահերին պատճառված վնասն էական գնահատելու համար ինքնին բավարար չէ զինծառայողի կողմից որևէ աշխատանք կատարելուց հրաժարվելը, եթե բացակայում են այլ հանգամանքներ, որոնք կվկայեին զինվորական ենթակայության շահերին էական վնաս պատճառելու մասին (տե՛ս սույն որոշման 13.3-րդ կետը):

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ռ.Չանախչյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Նշված խախտումները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը, ճանաչելու Ռ.Չանախչյանի անմեղությունն առաջադրված մեղադրանքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճելու:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Ռ.Չանախչյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, հարկավոր է վերացնել:

19. Ինչ վերաբերում է բողոքաբերի և ամբաստանյալ Ռ.Չանախչյանի՝ համապատասխանաբար սույն որոշման 9-րդ և 4.1-րդ կետերում բարձրացրած փաստարկներին, ապա հաշվի առնելով այն, որ ամբաստանյալ Ռ.Չանախչյանի նկատմամբ քրեական հետապնդումն արդարացնող հիմքով ենթակա է դադարեցման՝ Վճռաբեկ դատարանն առարկայազուրկ է համարում դրանց անդրադառնալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ռազմիկ Գարեգինի Չանախչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 13-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Ռազմիկ Գարեգինի Չանախչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության հիմքով և քրեական գործի վարույթը կարճել:

3. Ռազմիկ Գարեգինի Չանախչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, վերացնել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴ1/0058/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Ա.ԽԱՉԻԿՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշման դեմ Տիգրան Գերասիմի Գասպարյանի պաշտպան Ա.Խաչիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2016 թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 43105516 քրեական գործը:

2016 թվականի սեպտեմբերի 9-ին Տիգրան Գասպարյանը որպես մեղադրյալ է ներգրավել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նույն օրվա որոշմամբ Տ.Գասպարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, որը 2016 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ երկարացվել է ևս 2 (երկու)

ամիս ժամկետով:

Նախաքննական մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթ:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Տ.Գասպարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ Տ.Գասպարյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց է կիրառվել հոգեբուժական հաստատությունում տեղավորելը:

2016 թվականի դեկտեմբերի 26-ին բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վերաբերյալ գործն ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ Տ.Գասպարյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից և պատժից, նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում:

3. Տ.Գասպարյանի պաշտպան Ա.Խաչիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հունիսի 27-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 28-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Տ.Գասպարյանի պաշտպան Ա.Խաչիկյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Տիգրան Գասպարյանը որպես մեղադրյալ է ներգրավել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն արարքի համար, որ *«նա, 2016 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն Գյուղի Վերին Դուրան թաղամասի 16-րդ փողոցի 6-րդ տանը վիճաբանել է իր մայր Օֆիկ Պապիվականի Խաչատրյանի հետ և ապօրինաբար վերջինիս կյանքից զրկելու դիտավորությամբ դանակով բազմաթիվ հարվածներ հասցրել Օֆիկ Խաչատրյանի*

կենսական կարևոր նշանակություն ունեցող օրգաններին՝ կրծքավանդակի հեւրին կեսին, պարանոցի և ձախ թիկունքային շրջաններին: Տիգրան Գասպարյանի հարվածների հետևանքով Օֆիկ Խաչատրյանն ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել է»[1]:

5.1 Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության 2016 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 109 եզրակացության հետևությունների համաձայն՝ *«(…) Տիգրան Գերասիմի Գասպարյանը տառապել և տառապում է «Շիզոֆրենիա պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ: (…)*

Իրավախախտումը կատարելիս փորձաքննվողը գտնվել է վերը նշված հիվանդագին խանգարված վիճակում, արարքը կատարել է ցնորազառանցական ապրումների ազդեցության ներքո, որը զրկել է նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարել դրանք:

Ներկայումս նա նույնպես չի կարող գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարել դրանք:

Ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Տիգրան Գերասիմի Գասպարյանին հարկ է ճանաչել անմեղսունակ:

Իր ներկա հոգեկան վիճակով նա չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին, սոց. վտանգ է ներկայացնում ինչպես իր, այնպես էլ շրջապատի համար, ուստի կարիք ունի բուժման հատուկ հսկողության հոգեբուժական բաժանքունքի պայմաններում»[2]:

5.2 Տ.Գասպարյանի պաշտպան Ա.Խաչիկյանը վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ և 456-րդ հոդվածները՝ 2017 թվականի փետրվարի 16-ին Առաջին ատյանի դատարան է ներկայացրել հետևյալ բովանդակությամբ միջնորդություն. «*Հարգելի դատարան, Ձեր վարույթում քննվող թիվ ԳԴ1/0058/01/16 գործով 16.02.2017թ. նշանակված է դատական նիստ: Տիգրան Գասպարյանը չի ծանուցվել դատական նիստին:*

(…) Օրենքն այս պարագայում որևէ բացառություն և սահմանափակում չի նախատեսում, ուստի միջնորդում եմ Տ.Գասպարյանին մասնակից դարձնել նրա վերաբերյալ քննվող գործին»[3]:

5.3 Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 28-ի դատական նիստի արձանագրության համաձայն՝ *«(…) Դատարանը քննարկելով միջնորդությունը, լսելով կողմերի կարծիքը, հանգում է այն եզրակացության, որ միջնորդությունը ենթակա չէ բավարարման, քանի որ համաձայն փորձագիտական եզրակացության, վերջինս չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին, քանի որ վտանգ է ներկայացնում ինչպես շրջապատի, այնպես էլ իր համար, ուստի ղեկավարվելով ՀՀ*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 76:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 209-214:
[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 83:

քր.դատ.օր.-ի 313-րդ հոդվածով, միջնորդությունը մերժել: (...)»[1]:

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Կատարված հանցագործության համար Տիգրան Գերասիմի Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:*

Նախաքննության ընթացքում, առաջադրված մեղադրանքում քրեական օրենքով արգելված արարք կատարած անձ Տիգրան Գերասիմի Գասպարյանն իրեն մեղավոր է ճանաչել և ցուցմունք է տվել (...):

Տիգրան Գերասիմի Գասպարյանի կողմից քրեական օրենքով արգելված արարքի կատարումը հիմնավորվեց նաև հետևյալ ապացույցներով.

(...)

Հանցագործության գործիք դանակն իրեղեն ապացույց ճանաչելու որոշմամբ: (...)

(...)

Այսպիսով, դատարանը հիմնավորված է համարում, որ Տիգրան Գերասիմի Գասպարյանը անմեղսունակության վիճակում կատարել է քրեական օրենքով արգելված արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:

(...)

Ինչ վերաբերում է Տիգրան Գասպարյանի պաշտպան Ա.Խաչիկյանի միջնորդությանը Տիգրան Գասպարյանի նախաքննական ցուցմունքը և դրանից բխող ապացույցներն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ, դատարանը գտնում է, որ միջնորդությունը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի պահանջներից: Դատարանը նաև արձանագրում է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցության մեջ, հիմնավորում են Տիգրան Գասպարյանի կողմից հանցավոր արարքի կատարումը: Հետևաբար պաշտպանի միջնորդությունը ենթակա է մերժման: (...)»[2]:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով պաշտպանի միջնորդությունը՝ Տիգրան Գասպարյանի ներկայությունը դատական նիստին ապահովելու մասին, իրավացիորեն գտել է, որ այն ենթակա է մերժման:*

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի փաստարկներին առ այն, որ դատարանը մերժել է Տիգրան Գասպարյանի նախաքննական ցուցմունքը և դրանից բխող ապացույցներն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը, խախտելով գործի քննությանը Տ.Գասպարյանի մասնակցելու իրավունքը՝ դրանով իսկ իրեն զրկել է ապացույցների թույլատրելիությունը ճիշտ գնահատելու հնարավորությունից՝ հանգելով չհիմնավորված եզրահանգման, ապա վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 109-114:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 115-117:

Առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ սույն գործով ապացույցներ ձեռքբերելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի խախտում թույլ չի տրվել:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի առնելով, որ Տիգրան Գասպարյանն իր հոգեկան վիճակի պատճառով չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին, վերջինիս նախաքննական ցուցմունքը գնահատելով ապացույցների համակցության մեջ՝ ապացուցված է համարել նրա կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքն անմեղսունակության վիճակում կատարելը:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի փաստարկին առ այն, որ դատարանում չի հետազոտվել իրեղեն ապացույց ճանաչված դանակը, վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այն Առաջին ատյանի դատարան չի ուղարկվել, իրեղեն ապացույց ճանաչելու մասին որոշման համաձայն՝ դանակը մանրաթելային, դատակենսաբանական, դատահեղքաբանական կրիմինալիստիկական համալիր փորձաքննության համար գտնվում է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում (...)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որպիսի պարագայում, կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1 Մասնավորապես բողոքաբերը հղում կատարելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ և 462-րդ հոդվածներին՝ նշել է, որ անմեղսունակության վիճակում գտնվող Տ.Գասպարյանին մասնակից չդարձնելով իրեն վերաբերող գործի դատական քննությանը դատարանները խախտել են Տ.Գասպարյանի իրավունքները: Այսպես, բողոք բերած անձը հայտնել է, որ Տ.Գասպարյանն իր հոգեկան հիվանդության պատճառով մասնակից չդարձվելով գործի դատական քննությանը՝ զրկվել է իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից: Մինչդեռ բողոքաբերն ընդգծել է, որ միջազգային իրավական փաստաթղթերի համաձայն՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց համար ևս պետք է երաշխավորված լինեն արդար դատաքննության իրավունքի տարրերը, այդ թվում՝ լսված

[1] Տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 191-196:

լինելու իրավունքը:

8.2 Բողոք բերած անձը նաև նշել է, որ սույն գործով պարզման ենթակա հանգամանքները հաստատելիս, ի թիվս այլոց, օգտագործվել են Տ.Գասպարյանի նախաքննության ժամանակ տրված ցուցմունքները, որոնք Տ.Գասպարյանի բացակայությամբ հրապարակվել են դատաքննության ժամանակ և համարվել արժանահավատ՝ գործի հանգամանքները հաստատված համարելու համար: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարությունում «անմեղսունակի ցուցմունք» ապացույցի տեսակ նախատեսված չէ, հետևաբար, այն անթույլատրելի է և չէր կարող օգտագործվել դատարանի կողմից Տ.Գասպարյանին մեղսագրվող քրեական օրենքով արգելված արարքի կատարման փաստը հաստատված համարելիս:

8.3 Բացի այդ, բողոք բերած անձը հայտնել է, որ Առաջին ատյանի դատարանում չի հետազոտվել իրեղեն ապացույց ճանաչված դանակը: Դրա փոխարեն դատարանը Տ.Գասպարյանի կողմից քրեական օրենքով արգելված արարքի կատարումը հիմնավորող ապացույց է դիտել «հանցագործության գործիք դանակն իրեղեն ապացույց ճանաչելու մասին որոշումը», մինչդեռ այդ որոշումը բողոքաբերի պնդմամբ ապացույցի տեսակ չի հանդիսանում:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին մասնակցելու իրավունքի իրացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Տիգրան Գասպարյանը չի կարող մասնակցել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին:

12. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական*

մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները նշանակվում են միայն այն դեպքերում, երբ հոգեկան խանգարումները կապված են այդ անձանց կողմից այլ էական վնաս պատճառելու հնարավորության կամ իր կամ այլ անձանց համար վտանգավորության հետ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Բժշկական բնույթի հարկադրական միջոցները դատարանը կիրառում է այն անձանց նկատմամբ, ովքեր քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, եթե այդ անձինք շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի համաձայն՝ *«Այն անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից: Նա իրավունք ունի, կախված հիվանդության ստորճանից և բնույթից, (…) մասնակցել դատական քննությանը»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 463-րդ հոդվածի համաձայն՝ «*[Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու] գործով որոշում կայացնելիս դատարանը պետք է լուծի հետևյալ հարցերը՝*

(…)

3) արարքը կատարվել է արդյոք անմեղսունակության վիճակում, անձը գտնվում է արդյոք տվյալ վիճակում դատական քննության պահին.

4) անձը կարիք ունի արդյոք իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու և հատկապես ինչպիսի միջոցներ»:

13. Հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց՝ բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառման միջնորդությունների քննությանը մասնակցելու իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- Բժշկական հաստատությունում տեղավորվող անձին դատական քննությանը մասնակից դարձնելը, ինչպես նաև նրան իրավաբանական օգնություն տրամադրելը, հիմնարար երաշխիքներ են կամայականության դեմ[1]: Երաշխիքների կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնագիտացված բժշկական հաստատությունում տեղավորելու արդյունքում անձի կամքին հակառակ միջամտություն է տեղի ունենում նրա անձնական կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Beiere v. Latvia* գործով 2011 թվականի նոյեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 30954/05, կետ 52, *Zagidulina v. Russia* գործով 2013 թվականի մայիսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 1173/06, կետեր 60-62:

նկատմամբ[1],

- Հոգեկան հիվանդություն ունեցող անձը դատավարությունում ունի երկբնույթ դեր, մասնավորապես՝ նա և՛ շահագրգիռ անձ է, և՛ դատաքննության օբյեկտ: Հետևաբար նրա մասնակցությունն անհրաժեշտ է ոչ միայն գործն անձամբ ներկայացնելու, այլ նաև դատավորին հնարավորություն տալու համար իր անձնական կարծիքը ձևավորել գործի և այդ անձի հոգեկան վիճակի վերաբերյալ[2]: Դատավորի համար կարևոր է առնվազն հոգեկան հիվանդություն ունեցող անձի հետ կարճ հանդիպում ունենալը և նախընտրելի է նրան հարցեր ուղղելը: Եվրոպական դատարանը գտնում է, որ դատավորի կողմից գործի լուծումը միայն փաստաթղթավորված ապացույցների հիման վրա, առանց տեսնելու կամ լսելու անձին, հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մրցակցության սկզբունքի խախտում[3],

- Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում եվրոպական դատարանը ելնում է այն հանգամանքից, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց գործերով ներպետական դատարանները նույնպես օժտված են հայեցողության հարաբերական ազատությամբ: Մասնավորապես, օրինակ՝ նրանք կարող են ընդունել դատավարական համապատասխան միջոցներ արդարադատության պատշաճ կազմակերպման, անձի առողջության պահպանման համար և այլն: Սակայն այդպիսի միջոցները չպետք է խաթարեն անձի արդար դատաքննության իրավունքի բուն էությունը՝ երաշխավորված Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Անձի մասնակցությունը բացառող կոնկրետ միջոցի կիրառման անհրաժեշտությունը քննարկելիս Եվրոպական դատարանը հիմք է ընդունում բոլոր համապատասխան հանգամանքները (ինչպիսիք են՝ ներպետական դատարանների կողմից քննարկվող հարցերի բնույթն ու բարդությունը, անձի համար դրանց կարևորությունը, նրա անմիջական մասնակցության պարագայում այլ անձանց կամ իր համար որևէ վտանգ ներկայացնելը և այլն)[4]:

- Երբ դատական քննությունը ներառում է մեղադրյալի անձնական հատկանիշների, հանցանքը կատարելու պահին նրա մեղսունակության գնահատում, որը նաև կարող է էական բացասական հետևանքներ առաջացնել նրա համար, ապա դատական քննության արդարացիության ապահովման համար վերջինս պետք է ներկա գտնվի և հնարավորություն

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Trutko v. Russia* գործով 2016 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 40979/04, կետ 39:
[2] Տե՛ս, mutatis mutandis, Եվրոպական դատարանի՝ *Kovalev v. Russia* գործով 2007 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 78145/01, կետեր 35-37:
[3] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Shtukaturov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետեր 72-73:
[4] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Shtukaturov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետ 68:

ունենա իր պաշտպանի հետ մասնակցելու դատալսումներին, բացառությամբ այն դեպքերի, երբ իր վարքագիծը, հոգեկան կամ ֆիզիկական վիճակը խոչընդոտ են նրան դատարան ներկայացնելու համար[1]:

14. Հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց իրավունքների մասին Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «(...) Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի ընթացքում (...) քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձինք, չհանդիսանալով մեղադրյալ, օգտվում են մեղադրյալի իրավունքներից»[2],

- «Անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի իրավավիճակ[ն] (...) ընդգրկում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված իրավունքները (ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդված, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված), այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածը նույնպես ամրագրում է, որ անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձն օգտվում է մեղադրյալի բոլոր (...) իրավունքներից: (...)»[3]:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումները հիմնված են նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ տարբերակված մոտեցում դրսևորելու անթույլատրելիության, նրանց՝ որպես խոցելի անձանց, իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերում ամրագրված պահանջների վրա[4]:

15. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ անմեղսունակության

[1] Տե՛ս, mutatis mutandis, Եվրոպական դատարանի՝ *Kremzow v. Austria* գործով 1993 թվականի սեպտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 12350/86, կետ 67, *Pobornikoff v. Austria* գործով 2000 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 28501/95, կետ 31, *Zana v. Turkey* գործով 1997 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ, կետեր 71-73, *Romanov v. Russia* գործով 2005 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 63993/00 , կետեր 108-109:

[2] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Մերգեյ Սրեփանյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԳԴ5/0014/01/13 որոշումը, կետ 23:

[3] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Արա Շուշանյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0030/01/15 որոշումը, կետ 14:

[4] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի սեպտեմբերի 22-ի «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» թիվ REC(2004)10 հանձնարարականի 7-րդ հոդվածի 1-ին մասը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 1999 թվականի փետրվարի 23-ի՝ «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանության մասին» թիվ R(99)4 հանձնարարականի 1-ին սկզբունքը, Միավորված ազգերի կազմակերպության՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ի «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» թիվ 46/119 բանաձևի 1-ին սկզբունքի 5-րդ մասը:

վիճակում քրեական օրենքով արգելված արարք կատարած անձինք ելնելով իրենց հոգեկան հիվանդության բնույթից և աստիճանից՝ օգտվում են այն նույն իրավունքներից և երաշխիքներից, որոնք նախատեսված են մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց համար: Նշված պահանջն օրենսդրի կողմից նախատեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածում՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց իրավունքների նկատմամբ տարբերակված մոտեցումը բացառելու նպատակով: Ավելին, նույն հոդվածում օրենսդիրը բացահայտելով նշված կարգավորման էությունը նախատեսել է նաև անմեղսունակ անձանց իրավունքների ոչ սպառիչ ցանկը:

Հետևաբար ինչպես մեղադրյալի իրավունքներից օգտվելու անմեղսունակ անձանց համար նախատեսված իրավական երաշխիքը, այնպես էլ անմեղսունակ անձանց իրավունքների ոչ սպառիչ ցանկում ներառված՝ դատական քննությանը մասնակցելու իրավունքը հիմք են արձանագրելու, որ անմեղսունակության վիճակում քրեական օրենքով արգելված արարք կատարած անձինք իրավունք ունեն մասնակցելու իրենց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին: Այդ իրավունքն անմեղսունակ անձանց արդար դատաքննության իրավունքի ապահովման հիմնական նախապայմանն է, որի միջոցով կենսագործվում են դատարանի առջև կանգնելու և լսված լինելու իրավունքները: Ավելին, այն երաշխիք է մրցակցության և «զենքերի հավասարության» սկզբունքների արդյունավետ կենսագործման համար:

Սակայն անմեղսունակ անձանց բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին մասնակցելու իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել այն բացառիկ դեպքերում, երբ անմեղսունակ անձի հոգեկան հիվանդությունն արգելք է հանդիսանում նրան դատարան ներկայացնելու և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին նրա մասնակցությունն ապահովելու համար: Այլ կերպ, անմեղսունակ անձանց բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին մասնակցելու իրավունքի իրացման հնարավորությունը սահմանափակված է նրանց հոգեկան հիվանդության բնույթով և աստիճանով:

15.1 Նախորդ կետում արտահայտված դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մինչդատական վարույթի ընթացքում նախաքննական մարմնի կողմից անձի անմեղսունակության վերաբերյալ ստացված փորձագիտական եզրակացությունն ինքնին բավարար չի կարող լինել հոգեկան հիվանդություն ունեցող անձին դատարան չներկայացնելու և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին նրա մասնակցության իրավունքը սահմանափակելու համար՝ անգամ եթե այն նշում

է պարունակում անձի՝ իր կամ իրեն շրջապատող միջավայրի համար վտանգ ներկայացնելու մասին:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի և 463-րդ հոդվածի 3-րդ կետի համադրված վերլուծությունից հետևում է, որ անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը պայմանավորվում է ոչ թե փորձաքննության անցկացման պահի դրությամբ իր կամ իրեն շրջապատող միջավայրի համար վտանգ ներկայացնելու հանգամանքով, այլ մինչև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի դատական քննության ավարտը հասարակության համար վտանգավոր լինելու շարունակականության հանգամանքով: Վերջինս սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ կարող է գնահատվել ոչ միայն բժշկական փաստաթղթերի հետազոտության, այլ նաև հոգեկան հիվանդությամբ տառապող անձի անհատական հատկանիշների, դատական նիստերի դահլիճում նրա դրսևորած վարքագծի, ունեցած հոգեվիճակի անմիջական գնահատման արդյունքում:

Ավելին, հարկ է նաև նշել, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մինչդատական վարույթի ընթացքում անձի հոգեկան առողջության վիճակին վերաբերող փորձաքննության անցկացման և գործը դատարանում քննելու պահերի միջև հնարավոր է երկար ժամկետային խզում: Ուստի անձի՝ դատարան ներկայանալու և դատական քննությանը մասնակցելու «անկարողության» վերաբերյալ դատարանի եզրահանգումը չի կարող հիմնվել բացառապես մինչդատական վարույթի ընթացքում ստացված փորձագիտական եզրակացության հետևությունների վրա:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձինք որպես կանոն պետք է մասնակից դարձվեն իրենց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին, բացառությամբ այն դեպքերի, երբ ոչ միայն մինչդատական վարույթի ընթացքում հավաքված, այլ նաև դատական քննության ընթացքում ձեռքբերված փաստական տվյալների համակցությունը համոզիչ կերպով կվկայի այն մասին, որ անձի հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրան դատարան ներկայացնել: Ընդ որում, այդ դեպքերում դատարանները պետք է քննարկեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բժշկական հաստատությունում արտագնա դատական նիստ անցկացնելու հնարավորության հարցը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը քննարկելով Տիգրան Գասպարյանին բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին մասնակից դարձնելու վերաբերյալ պաշտպան Ա.Խաչիկյանի միջնորդությունը՝ 2017 թվականի

փետրվարի 28-ի որոշմամբ գտել է, որ այն ենթակա չէ բավարարման, քանի որ համաձայն փորձագիտական եզրակացության[1], վերջինս չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին, քանի որ վտանգ է ներկայացնում ինչպես շրջապատի, այնպես էլ իր համար[2]:

Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հունիսի 27-ի որոշմամբ քննարկելով պաշտպան Ա.Խաչիկյանի վերաքննիչ բողոքը՝ գտել է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն մերժել է պաշտպանի միջնորդությունը՝ Տիգրան Գասպարյանի ներկայությունը դատական նիստին ապահովելու մասին[3]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 15-15.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Տիգրան Գասպարյանի մասնակցության վերաբերյալ պաշտպան Ա.Խաչիկյանի միջնորդությունը մերժելիս հիմնվելով միայն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մինչդատական վարույթի ընթացքում ստացված փորձագիտական եզրակացության վրա՝ միջոցներ չեն ձեռնարկել գործի դատական քննության ընթացքում Տ.Գասպարյանի հոգեկան առողջության վիճակը գնահատելու ուղղությամբ: Մասնավորապես, չի պարզվել, թե գործը դատարան ուղարկելուց հետո արդյոք Տիգրան Գասպարյանի հոգեկան հիվանդությունը շարունակում է խոչընդոտ լինել նրան վարույթին մասնակից դարձնելու համար, թե ոչ: Արդյունքում ստորադաս դատարանները Տ.Գասպարյանին բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատական քննությանը մասնակից դարձնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելիս նկատի չեն ունեցել, որ Տ.Գասպարյանի հոգեկան հիվանդության վերաբերյալ մինչդատական վարույթի ընթացքում ձեռքբերված համալիր փորձագիտական եզրակացությունն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար փաստական տվյալ է ներկայացված միջնորդության պատշաճ քննությունն ապահովելու համար:

Հետևաբար, ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Տիգրան Գասպարյանը չի կարող մասնակցել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին, հիմնավոր չեն:

18. Անդրադառնալով պաշտպանի՝ սույն որոշման 8.2-րդ կետում նշված փաստարկին, Վճռաբեկ դատարանը. հիմք ընդունելով սույն որոշման 15-15.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ արձանագրում է, որ անմեղսունակ անձն օգտվելով մեղադրյալի բոլոր իրավունքներից՝ պետք է իրավունք ունենա նաև ցուցմունք տալ, որը պետք է դիտարկվի որպես ապացույց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով: Վճռաբեկ դատարանի նշված մոտեցումը

[1] Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

պայմանավորված է այն հանգամանքով, որ անձի հոգեկան հիվանդությամբ տառապելը չի կարող ի սկզբանե կանխորոշել նրա կողմից տրված ցուցմունքի անթույլատրելիությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածում թվարկված՝ դատավարական խախտումների բացակայության պատճառով: Հոգեկան հիվանդության առկայությունը կարող է հաշվի առնվել անձի տված ցուցմունքները բովանդակային գնահատման ենթարկելիս՝ դրանց վերաբերելիությունն ու արժանահավատությունը որոշելուց:

Ինչ վերաբերում է Տ.Գասպարյանի նախաքննական ցուցմունքները դատաքննության ընթացքում հրապարակելու և որպես ապացույց օգտագործելու իրավաչափության վերաբերյալ պաշտպանի փաստարկին, ապա այն ենթակա է քննարկման mutatis mutandis ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 337-րդ հոդվածով նախատեսված կարգավորումների համատեքստում: Այսինքն՝ դրանց հրապարակման և որպես ապացույց օգտագործման հարցը կարող էր քննարկվել սույն որոշմամբ վկայակոչված ընթացակարգի պահպանմամբ Տ.Գասպարյանի՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին մասնակցությունն ապահովելուն ուղղված միջոցները սպառելուց հետո:

19. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 8.3-րդ կետում նշված փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի հետ և փաստում, որ այդ կապակցությամբ Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ իրեղեն ապացույց ճանաչված դանակը չի հետազոտվել, քանի որ Առաջին ատյանի դատարան չի ուղարկվել և գտնվում է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում, չի կարող համարվել հիմնավոր փաստարկ՝ իրեղեն ապացույց ճանաչելու մասին որոշումը որպես ապացույց դիտարկելու համար: Գործի նյութերից երևում է, որ իրեղեն ապացույց ճանաչված դանակը քննիչի կողմից ուղարկվել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ՝ մանրաթելային, դատահետքաբանական, դատակենսաբանական և դատակրիմինալիստիկական համալիր փորձաքննության անցկացման համար: Սակայն վարույթն իրականացնող մարմինը, «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից չստանալով ինչպես իրեղեն ապացույց ճանաչված դանակը, այնպես էլ փորձագիտական եզրակացությունը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար գործն ուղարկել է դատարան[1]: Մինչդեռ դանակը կարող էր որպես ապացույց օգտագործվել միայն անմիջական հետազոտման արդյունքում[2]:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 90-95:
[2] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Հակոբյանի* գործով 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱՔԴ/0128/01/09 որոշումը, կետեր 23-24, *Համլետ Սահակյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշումը, կետ 19:

ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Առաջին ատյանի դատարանի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է:

Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է լուծի Տիգրան Գասպարյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցը՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տիգրան Գերասիմի Գասպարյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց կիրառված հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը պետք է թողնել անփոփոխ, քանի որ բացակայում են այն փոփոխելու կամ վերացնելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Վճռաբեկ բողոքը բավարարել: Տիգրան Գերասիմի Գասպարյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 28-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Տիգրան Գերասիմի Գասպարյանի նկատմամբ որպես անվտանգության միջոց կիրառված հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ3/0006/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի պաշտպան Գայանե Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնում 2016 թվականի դեկտեմբերի 29-ին հարուցվել է թիվ 20184016 քրեական գործը:

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային վարչության Աբովյանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Սեդրակյանը 2017 թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել Գարիկ Նիկոլայի Հայրապետյանին որպես մեղադրյալ ներգրավելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք առաջադրելու մասին:

2017 թվականի ապրիլի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացու-

թյամբ մուտքագրվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Արագացված կարգով դատական քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մայիսի 18-ին վճռել է՝ *«Գարիկ Նիկոլայի Հայրապետյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և պատիժ նշանակել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:*

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով՝ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

(...)

Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ՝ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

(...)»:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 6-ին որոշել է՝

«Մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարել:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մայիսի 18-ի դատավճիռը՝ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, փոփոխել Գ.Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատժի մասով:

Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի նկատմամբ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մայիսի 18-ի դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ վերացնել, և թողնել կրելու պատիժ ազատազրկման ձևով՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

Ամբաստանյալ Գ.Հայրապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, պահպանել՝ մինչև սույն որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

(...)»:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Գ.Հայրապետյանի պաշտպան Գայանե Սարգսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 25-ի որոշմամբ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա *«(…) հանդիսանալով «Գարիկ Հայրապետյան» ԱՁ-ի տնօրենը և Աբովյան քաղաքի Հափխի փողոցի 1/73 հասցեում գտնվող շինությունում զբաղվելով արտարժույթի առք ու վաճառքով, 2016թ. հուլիսի 28-ին՝ ժամը 14-ի սահմաններում, նշված աշխատավայրում յուրացման եղանակով Վարդան Վոլոդիայի Հարոյանից հափշտակել է առանձնապես խոշոր չափի՝ 4.270.000 ՀՀ դրամ գումար:*

Այսպես.

Կոտայքի մարզի Ջաո գյուղի բնակիչ Վարդան Վոլոդիայի Հարոյանը 2016թ.-ի հուլիսի 28-ին գումարի փոխանակման նպատակով գնացել է Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի, Հափխի փողոցի թիվ 1/73 հասցեում գործող «Գարիկ Հայրապետյան» ԱՁ-ին պատկանող արտարժույթի փոխանակման կետ, որտեղ առաջարկել է իր ծանոթ՝ հիշյալ ընկերության տնօրեն Գարիկ Հայրապետյանին 4.270.000 ՀՀ դրամը փոխանակել ԱՄՆ դոլարով: Վ.Հարոյանը Գ.Հայրապետյանից տեղեկանալով, որ փոխանակման կետում այդքան գումար չկա, վերոնշյալ գումարը թողել է նրա մոտ, պայմանով, որ երկու օրից կվերադառնա և կվերցնի արդեն փոխանակված գումարը: Գ.Հայրապետյանը իր և Վ.Հարոյանի միջև բանավոր համաձայնությամբ օժտված լինելով այդ գումարի պահպանման և դա փոխանակելու լիազորությամբ, հանդիսանալով նյութական պատասխանատու անձ, օգտվել է նշված լիազորություններից և դիտավորությամբ ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով յուրացրել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափի՝ 4.270.000 ՀՀ դրամ կանխիկ գումարը և հաջորդող ժամանակահատվածում ծախսել է այն իր անձնական կարիքների համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 210-213):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռում արձանագրված է հետևյալը. *«(…) դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի կողմից կատարված հանցավոր արարքի համար նրա նկատմամբ պետք է պատիժ նշանակվի ազատազրկման ձևով՝ առանց գույքի բռնագրավման, սակայն հաշվի առնելով նրա անձը բնութագրող տվյալները, դրական բնութագիրը, առողջական վիճակը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով, եկավ այն համոզման, որ ամբաստանյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը կարելի է պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան, նկատի ունենալով, որ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի*

ուղղվելը հնարավոր է նաև առանց նշանակված պատիժը փաստացի կրելու:

(...)

Ինչպես երևում է գործի նյութերից, ամբաստանյալ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանը բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չի եղել, բժշկական էպիկրիզի, վերջինիս մուր ախտորոշվել է ՄԻՀ Սրտամկանի սուր ինֆարկտ, Հետինֆարկտային կարդիոսկլերոզ հիվանդությունը, ունի հաշմանդամության 3-րդ կարգ, աջակցել է հանցագործության բացահայտելուն, կատարած հանցանքի վերաբերյալ խոստովանական ցուցմունքներով հանդես է եկել, 64 տարեկան է և կատարած հանցանքի համար անկեղծորեն զղջացել է:

Դատարանը փաստում է, որ ամբաստանյալի անձը դրականորեն բնութագրող տվյալների և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մի շարք հանգամանքների կողքին Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի արարքում բացակայում է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող որևէ հանգամանք:

Հաշվի առնելով ամբաստանյալի անձը բնութագրող վերը նշված տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, դատարանը հանգում է եզրահության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 64-70):

7. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ արձանագրված է հետևյալը. *«Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գարիկ Հայրապետյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելիս թեև Դատարանը փաստել է, որ հաշվի է առնում վերջինիս կողմից կատարած հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, սակայն Գ.Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում վերլուծության չի ենթարկել հանցագործությամբ պատճառված վնասի չափը, մասնավորապես այն, որ Գ.Հայրապետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարքի կատարման արդյունքում տուժող Վ.Հարոյանին պատճառվել է 4.270.000 ՀՀ դրամի չափով վնաս, որը գերազանցում է հափշտակությունների համար նախատեսված առանձնապես խոշոր չափի նվազագույն շեմը:*

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ երևում է, որ ամբաստանյալ Գ.Հայրապետյանը թեև առաջին ատյանի դատարանում ընդունել է մեղքը և ինդրել է կիրառել արագացված դատական քննության

կարգ ու պարտավորվել է տուժողին հատուցել հանցագործությամբ պատճառված նյութական վնասը, սակայն տուժող Վ.Հարոյանին հանցագործության հետևանքով պատճառած առանձնապես խոշոր չափերի՝ 4.270.000 ՀՀ դրամի նյութական վնասը հատուցելու ուղղությամբ, ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննությունների ընթացքում որևէ միջոց չի ձեռնարկել, ինչն էական նշանակություն ունի ամբաստանյալ Գ.Հայրապետյանի կողմից կատարած հանցագործության՝ հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման համար:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի համոզմամբ ամբաստանյալ Գ.Հայրապետյանի կողմից տուժող Վ.Հարոյանին տրված բոլոր խոստումներն ու ստանձնած պարտավորությունները՝ հանցագործությամբ պատճառված առանձնապես խոշոր չափերի նյութական վնասը հատուցելու ուղղությամբ, հեռու են իրականությունից, կրում են սոսկ վերացական բնույթ:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ գույքային բնույթի հանցագործություններում արարքի վտանգավորության վրա ազդող հիմնական և կարևոր գործոնը հենց պատճառված վնասն է և այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքը, ինչը սույն գործով ամբաստանյալ Գ.Հայրապետյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելիս որևէ գնահատականի չի արժանացել Դատարանի կողմից:

Վերոգրյալից բացի՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ հանցագործությունը բացահայտելուն աջակցելը, ինչը Դատարանը հաշվի է առել որպես ամբաստանյալ Գ.Հայրապետյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, անհիմն է (...):

(...) Դատարանի կողմից չի պատճառաբանվել, թե հանցագործության բացահայտմանն աջակցելն ամբաստանյալ Գ.Հայրապետյանի հատկապես ո՞ր գործողություններով է դրսևորվել:

Այսինքն՝ Դատարանի կողմից չեն մատնանշվել կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին քննարկվող մեղմացնող հանգամանքի առկայությունը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հանցագործությունը բացահայտելուն աջակցելու մեղմացնող հանգամանքն իրական չէ, իսկ դրա առկայությունը հերքվում է գործի նյութերով:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից արձանագրված ամբաստանյալ Գ.Հայրապետյանի անձը բնութագրող տվյալներին (...) և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությանը, որոնք Դատարանը հաշվի առնելով՝ գտել է, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է նաև ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով, ապա Վերաքննիչ դատարանի համոզմամբ հանցագործությամբ պատճառված նյութական վնասը վերականգնված չլինելու

պարագայում, հանցավորի անձը բնութագրող փվյալների, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում, ամբաստանյալ Գ.Հայրապետյանի ուղղվելը հնարավոր չէ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի սանկցիայով ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու միջոցով:

(…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 132-137):

8. 2017 թվականի դեկտեմբերի 12-ին ամբաստանյալ Գարիկ Հայրապետյանի պաշտպան Գայանե Սարգսյանը Վճռաբեկ դատարան է ներկայացրել տուժող Վարդան Հարոյանի **հայտարարությունն** այն մասին, որ պատճառված գույքային վնասը Գարիկ Հայրապետյանի կողմից հատուցվել է, նրա նկատմամբ որևէ պահանջ չունի և Վճռաբեկ դատարանին խնդրում է վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել: Տուժողի վերոնշյալ հայտարարության տակ կատարված ստորագրության իսկությունը հաստատված է «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ռ.Տոնոյանի կողմից (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 165, 166):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 18-ի դատավճիռը հիմնավորված է և օրինական, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով:

Վճռաբեկ բողոքի հեղինակն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ Գ.Հայրապետյանը որևէ միջոց չի իրականացրել պատճառված վնասը հատուցելու կապակցությամբ: Բողոքաբերն ընդգծել է, որ իր պաշտպանյալը գումարը վերադարձնելու համար միջոցներ ձեռնարկել է, ավելին՝ տուժող Վ.Հարոյանի և ամբաստանյալ Գ.Հայրապետյանի միջև ձեռք էր բերվել համաձայնություն առ այն, որ վերջինս պարտավորվում է մաս-մաս վճարել գումարը, և այդ կապակցությամբ Վ.Հարոյանը դիմում էր ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ հայտնելով, որ Գ.Հայրապետյանի նկատմամբ բողոք, պահանջ չունի, քանի որ վերջինս պարտավորվել է վերադարձնել գումարը:

Բողոքի հեղինակը նշել է, որ իր պաշտպանյալն ընդունել է մեղքը և Առաջին ատյանի դատարանի առջև միջնորդել է արագացված դատական քննություն անցկացնել, իսկ Վերաքննիչ դատարանը դա հաշվի չի առել որպես մեղմացնող հանգամանք:

Բողոքի հեղինակը գտնում է, որ ամբաստանյալ Գարիկ Հայրապետյանի՝ դրականորեն բնութագրվելը, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չլինելը, վատառողջ լինելն ու հաշմանդամության 3-րդ կարգ ունենալը, հանցագործությունը բացահայտելուն աջակցելը, կատարած հանցանքի վերաբերյալ խոստովանական ցուցմունքներով հանդես գալը, 64 տարեկան լինելը և կատարած հանցանքի համար անկեղծորեն զղջալն այն հանգամանքներն են, որոնք վկայում են առանց պատիժը կրելու Գարիկ Հայրապետյանի ուղղվելու հնարավորության մասին:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 18-ի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ ամբաստանյալ Գ.Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն իրավաչափ չէ:

11. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու խնդրին, իր որոշումներում մշտապես ընդգծել է, որ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազման տեսանկյունից հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքն էական նշանակություն ունի *(տե՛ս, mutatis mutandis, Ա.Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅՔՐԴ/0109/01/08, Գ.Պետրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0126/01/10 որոշումները)*:

Ա.Հովհաննեսյանի վերաբերյալ կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է՝ *«(…) [Ո]րքան ծանր է վրա հասած հետևանքը, մեծ՝ վնասի չափը, այնքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը: Վերջինս հակադարձ համեմատական է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հնարավորությանը: Այլ խոսքով՝ որքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այնքան ցածր է դրա համար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը (…)»* (տե՛ս Արամայիս Դերենիկի Հովհաննեսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշման 15-րդ կետը):

Ս.Հովսեփյանի գործով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *«(…) [Հ]ափշտակությունների և սեփականության դեմ*

ուղղված այլ հանցագործությունների դեպքում պատճառված նյութական վնասը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող կարևոր գործոն է, ինչը դատարանի կողմից պատիժ նշանակելու գործընթացում պետք է պատշաճ գնահատականի արժանանա: Մասնավորապես, որքան մեծ է հանցագործությամբ պատճառված վնասի չափը, այնքան բարձր է արարքի հանրային վտանգավորության աստիճանը, հետևաբար վնասը վերականգնված չլինելու պարագայում ինքնին նվազում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը: Ուստի քննարկվող հանցագործություններով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը որոշելիս դատարանը պետք է, ի թիվս այլ հանգամանքների, գնահատման ենթարկի հանցագործությամբ պատճառված վնասը, դրա չափը, ինչպես նաև՝ որքանով է այն մոտ կոնկրետ հանցակազմի հասարակ կամ որակյալ տեսակի առավելագույն կամ նվազագույն չափին, վնասը վերականգնված լինելու կամ չլինելու կամ մասնակի վերականգնված լինելու հանգամանքը և այլն: Միևնույն ժամանակ, հանցագործությամբ պատճառված վնասը վերականգնված չլինելու պարագայում հանցավորի անձը բնութագրող փաստերը (տարիք, առողջական վիճակ և այլն), ինչպես նաև առկա մեղմացնող հանգամանքները սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափ սահմանելու հիմք են:

Վերոնշյալ դիրքորոշումը նաև պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գույքային բնույթի հանցագործություններում սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է ապահովել պատճառված վնասի համարժեք հատուցմամբ և նախքան հանցագործությունը եղած իրադրության հնարավորինս վերականգնմամբ, իսկ քանի դեռ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը չի հատուցվել, խոսք չի կարող լինել սոցիալական արդարությունը վերականգնված լինելու մասին: Ուստի հանցանք կատարած անձի նկատմամբ պետք է ընտրվի այնպիսի ներգործության միջոց, որը կապահովի սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև հանցավորի ուղղումը և նոր հանցագործությունների կանխումը» (տե՛ս Սամվել Անդրանիկի Հովսեփյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԼԴ/0193/01/10 որոշման 21.1-րդ կետը):

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) ամբաստանյալ Գարիկ Հայրապետյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Նշված դատավճռով որոշվել է Գ.Հայրապետյանի նկատմամբ նշանակված

պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) Վերաքննիչ դատարանը 2017 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ բավարարել է մեղադրողի վերաքննիչ բողոքը և Առաջին ատյանի դատարանի դատավճռով Գ.Հայրապետյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ վերացրել, թողնելով կրելու ազատազրկման ձևով պատիժը: **Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ հանցագործությամբ պատճառված նյութական վնասը վերականգնված չլինելու պարագայում ամբաստանյալ Գ.Հայրապետյանի ուղղվելը հնարավոր չէ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով** (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

գ) 2017 թվականի դեկտեմբերի 12-ին ամբաստանյալ Գարիկ Հայրապետյանի պաշտպան Գայանե Սարգսյանը Վճռաբեկ դատարան է ներկայացրել տուժող Վարդան Հարոյանի **հայտարարությունն** այն մասին, որ պատճառված գույքային վնասը Գարիկ Հայրապետյանի կողմից հատուցվել է, նրա նկատմամբ որևէ պահանջ չունի և Վճռաբեկ դատարանին խնդրում է վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել: Տուժողի վերոնշյալ հայտարարության տակ կատարված ստորագրության իսկությունը հաստատված է «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ռ.Տոնոյանի կողմից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

13. Նկատի ունենալով տուժող Վարդան Հարոյանին պատճառված վնասն ամբաստանյալ Գարիկ Հայրապետյանի կողմից ամբողջությամբ հատուցված լինելու, տուժողի կողմից նրա նկատմամբ այլևս որևէ պահանջ չունենալու, ինչպես նաև վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու խնդրանքով տուժողի կողմից Վճռաբեկ դատարանին դիմելու հանգամանքները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գույքային բնույթի հանցագործություններում արարքի հանրության համար վտանգավորության աստիճանի վրա ազդող հիմնական և կարևոր գործոնը հենց պատճառված վնասն է և այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքը, ինչը յուրաքանչյուր դեպքում արդարացի պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելիս պետք է համարժեք գնահատականի արժանանա: Ուստի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է գնահատական տա ամբաստանյալ Գարիկ Հայրապետյանի կողմից պատճառված վնասը վերականգնված լինելու հանգամանքին և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հաշվառմամբ գա եզրահանգման Գարիկ Հայրապետյանի

նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելու կամ չկիրառելու առնչությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գարիկ Նիկոլայի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Գարիկ Հայրապետյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0018/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման դեմ դիմող Սամվել Սուրենի Ղազարյանի ներկայացուցիչ Կարինե Գասպարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Սամվել Ղազարյանի հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում 2014 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 17808214 քրեական գործը:

Նախաքննական մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Քնարիկ Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել և քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ս.Ղազարյանի ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բերած բողոքը Երևան քաղաքի դատախազի՝2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ մերժվել է:

2. 2017 թվականի հունվարի 30-ին դիմող Ս.Ղազարյանը և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ դիմող Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բողոքն ըստ ընդդատության ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշմամբ դիմող Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բողոքը մերժվել է:

3. Ներկայացուցիչ Կ.Գասպարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշումը՝թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ս.Ղազարյանի ներկայացուցիչ Կ.Գասպարյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցներից վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել շահագրգիռ անձ Ք.Խաչատրյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը՝ խնդրելով մերժել բողոքը՝ պատճառաբանելով, որ ստորադաս դատարանների որոշումներն օրինական են և հիմնավոր:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշման համաձայն՝ *«(…) Թեև բողոքաբերը դատարանում ընթերցեց իրենց կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ, սակայն Դատարանը չի անդրադառնում բողոքում բարձրացված հարցերին ըստ էության, քանի որ ինչպես դատախազը, այնպես էլ շահագրգիռ անձ Ք.Խաչատրյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը դատարանին միջնորդեցին բողոքը մերժել այն պատճառաբանությամբ, որ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը չէր կարող Ս.Ղազարյանի և նրա փաստաբան Կ.Գասպարյանի ներկայացրած բողոքն*

ուղարկել ըստ ընդդատության, քանի որ նման դատավարական կարգ նախատեսված չէ, որի հետ դատարանն ըստ էության համամիտ է: Նման պայմաններում դատարանը նպատակահարմար չի գտնում անդրադառնալու բողոքի հիմքերին և հիմնավորումներին:

(...) Օրենսգրքի 44-51-րդ հոդվածներում ընդգրկված նորմերն ուղղակիորեն կանոնակարգում են քրեական գործերի ընդդատության վերաբերյալ հարցերը և դրանցում չկա որևէ կանոնակարգում, որը հնարավորություն կտար այդ նորմերի պահանջները տարածել նաև քրեական դատավարության կարգով լուծվող այլ հարցերի վրա: Ինչն օրենսդրական բացի արդյունք չէ, քանի որ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում բողոքների, միջնորդությունների ընդդատությունը փոխելու կարգ:

(...) Օրենսգիրքը բողոքների քննարկման վերաբերյալ, դրանք բավարարելուց և մերժելուց զատ, այլ որոշման կայացման հնարավորություն չի նախատեսում, այդ թվում ընդդատությունը փոխելու, ուստի դատարանը գտնում է, որ սույն դեպքում Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել դատավարական կարգի խախտմամբ բողոք, որն այդ հիմքով ենթակա է մերժման:

Դատարանը փաստում է, որ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշման հետ, ըստ էության, համամիտ չէր նաև բողոքաբերի ներկայացուցիչը, քանի որ նրա կարծիքով իրենք բողոքը ճիշտ են ուղարկել Կենտրոնի դատարան, որովհետև վերջին որոշումը դատախազի կողմից կայացված, կայացվել է Կենտրոն դատարանի ընդդատության տակ գտնվող դատախազության կողմից և իրենք բողոքարկել են նրանց որոշումը: (...) Ինքը համաձայն չէ, Կենտրոնի դատարանի որոշման հետ այնքանով, որ այդ դատարանը պետք է քններ բողոքն ըստ էության: Այսինքն դատախազի բողոքը կարող էր քննվել այդ տարածքում, հաշվի առնելով, որ տվյալ դատախազության տարածքը գտնվում է Կենտրոնի դատարանի տարածքում:

(...)

Դատարանը նաև փաստում է, որ պատշաճ կարգով կրկին ներկայացված լինելու դեպքում, եթե պահպանված լինեն բողոքարկման դատավարական կարգը, բողոքի հիմքերին, պայմաններին և ժամկետներին ներկայացված պահանջները, դատարանը կարող է ըստ էության անդրադառնալ և քննարկել բողոքը, այսինքն՝ սույն որոշումը, ինքնին իուչընդուր չէ բողոքաբերի համար նույն բողոքը պատշաճ կարգով (...) ներկայացնելու դեպքում ըստ էության քննության առնելու համար: (...)»[1]:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանի համար ընդունելի է Դատարանի*

[1] Տես նյութեր, հատոր 2, թերթեր 76-87:

այն եզրահանգումը, համաձայն որի՝ ՀՀ քրեական [դատավարության] օրենսգրքի 44-45 հոդվածներում ընդգրկված նորմերն ուղղակիորեն կանոնակարգում են քրեական գործերի ընդդատության վերաբերյալ հարցերը և դրանցում չկա որևէ կանոնակարգում, որը հնարավորություն կտար այդ նորմերի պահանջները տարածել նաև քրեական դատավարության կարգով լուծվող այլ հարցերի վրա, այսինքն օրենսդիրը դատարանին չի լիազորել բողոքն իրեն ընդդատյա չլինելու դեպքում այն ուղարկել ըստ ընդդատության:

(…) [Գ]նահատելով և ուսումնասիրելով գործի նյութերը, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանը մերժելով դիմողի և նրա ներկայացուցչի բողոքը հանգել է ճիշտ եզրահանգման, քանի որ վերջիններս չեն պահպանել բողոքարկման դատավարական կարգը, այն է՝ բողոք են ներկայացրել այն դատարանին, որին ընդդատյա չի եղել այն, իսկ փվյալ դատարանն էլ չունենալով դրա լիազորությունը՝ բողոքն ուղարկել է ըստ ընդդատության (…)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի կարծիքով Առաջին ատյանի դատարանը, եզրահանգելով, թե բողոքը ներկայացվել է սխալ ընդդատությամբ, իսկ Վերաքննիչ դատարանը օրինական ուժի մեջ թողնելով այդ որոշումը, թույլ են տվել դատական սխալ:

7.1. Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգով ներկայացված բողոքն ըստ ընդդատության ուղարկելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Այսպես՝ բողոք բերած անձը նշել է, որ իրավակիրառ պրակտիկայում, երբ բողոքարկվում է հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը, ընդհանուր իրավասության դատարանները, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-51-րդ հոդվածներով, համապատասխան հիմքերի առկայության դեպքում, ներկայացված բողոքն ուղարկում են ըստ ընդդատության:Մինչդեռ սույն գործով Առաջին ատյանի դատարանը, գտնելով, որ մեկ այլ դատարանի կողմից բողոքն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումն իրավաչափ չէ, հրաժարվել է այն քննության առնելուց՝ պատճառաբանելով, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ բողոքն ըստ ընդդատության ուղարկելու ընթացակարգ, ուստի այն ենթակա չէ քննության՝ սխալ ընդդատությամբ ներկայացված լինելու հիմքով: Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանի կողմից իր բողոքը ձևական նկատառումներով

[1] Տես նյութեր, հատոր 3, թերթեր 55-62:

քննության չառնելու արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքը:

7.2. Անդրադառնալով քննիչի և դատախազի որոշումների իրավաչափության հարցին՝ բողոք բերած անձը նշել է, որ ձեռք բերված ապացույցներն օբյեկտիվ գնահատման չեն ենթարկվել, ինչի արդյունքում կայացված որոշումներով խախտվել են դիմող Ս.Ղազարյանի իրավունքներն ու ազատությունները:

8. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով նախաքննական մարմնի որոշումը, և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնել դիմող Ս.Ղազարյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

9. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստացված գործերի (նյութերի) ընդդատության որոշման կարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

<u>I. Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստացված գործը (նյութերը) ըստ տարածքային ընդդատության ուղարկելը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի ներկայացրած բողոքը չէր կարող ըստ ընդդատության ուղարկվել Առաջին ատյանի դատարան:

11. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի **օրենքի հիման վրա ստեղծված** անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային **դատաքննության իրավունք**»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական վերաքննիչ դատարանին ընդդատյա են առաջին ատյանի դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտած, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին վերաբերող գործերը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը, պարզելով, որ **ստացված գործն** ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության»:*

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է, որ այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ[1]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա[2]:

13. ՀՀ Սահմանադրական դատարանը դատական մատչելիության իրավունքի կապակցությամբ նշել է, որ ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում[3]:

---

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ, *Coeme and others v. Belgium* գործով 2000 թվականի հունիսի 22-ի վճիռը, գանգատներ թիվ 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 և 33210/96, 98-րդ կետ, *Savino and Others v. Italy* գործով 2009 թվականի ապրիլի 28-ի վճիռը, գանգատներ թիվ 17214/05, 20329/05 և 42113/04, 94-րդ կետ:

[2] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[3] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշումը, 7-րդ կետ:

14. Դատարանի մատչելիության իրավունքի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Դատական մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: **Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք էձևական բնույթ կրեն**, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա»*[1]:

15. Սույն որոշման 11-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքն ունի բացառիկ նշանակություն անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանն է, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու (locus standi) և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը: Հետևաբար դատարանի մատչելիության իրավունքի իրացմանն առնչվող դատավարական կարգավորումները դատարանների կողմից պետք է ճկուն մեկնաբանման ենթարկվեն՝ ելնելով դատարանի մատչելիության իրավունքի գերակայությունից՝ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգային առանձնահատկությունների նկատմամբ:

15.1 Դատական մատչելիության իրավունքի հետ անմիջականորեն առնչվում է նաև գործերի պատշաճ ընդդատության հարցը, որի վերաբերյալ ընդհանուր բնույթի կարգավորումները նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ գլխում: Վերջինս թեև կրում է «Քրեական գործերի ընդդատությունը» վերտառությունը, սակայն դրանում ներառված կարգավորումների, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գլխում զետեղված են նաև քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործերի (նյութերի) քննության, ինչպես նաև քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրականացման՝ առաջին ատյանի դատարանների իրավազորության

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, *Լևոն Հարությունյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

վերաբերյալ ընդհանուր կարգավորումներ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարաններում գործերի ընդդատության վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ 6-րդ գլխում նախատեսված ընդհանուր բնույթի կարգավորումները ենթակա են ճկուն մեկնաբանության և կիրառելի են ոչ միայն քրեական գործերի, այլ նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստացված դատական գործերի նկատմամբ: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ առաջին ատյանի դատարանն ըստ ընդդատության կարող է ուղարկել ոչ միայն իրեն ոչ ընդդատյա քրեական գործը, այլ նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստացված ցանկացած այլ դատական գործ:

Վերոնշյալ մոտեցումը բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի մեկնաբանությունից, այնպես էլ արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի իրացման անհրաժեշտությունից: Մասնավորապես, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստացված գործն ըստ ընդդատության չուղարկելու և այն մերժելու պարագայում կարող է առաջանալ իրական վտանգ առ այն, որ իրավական պաշտպանություն հայցող անձը բաց կթողնի ընդհանուր իրավասության առաջին ատյանի մեկ այլ դատարան նոր բողոք ներկայացնելու դատավարական ժամկետը, ինչի արդյունքում կվտանգվի անձի արդար դատաքննության իրավունքը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից տարածքային ընդդատության կարգով ստացված՝ Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բողոքի հիմքերին և հիմնավորումներին՝ նշելով, որ բողոքն ըստ ընդդատության ուղարկելու կարգ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ: Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ օրենսգիրքը բողոքների քննարկման արդյունքում, դրանք բավարարելուց և մերժելուց զատ, այլ որոշում կայացնելու հնարավորություն չի նախատեսում, այդ թվում՝ ընդդատությունը փոխելու, ուստի գտել է, որ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել դատավարական կարգի խախտմամբ բողոք, որն այդ հիմքով ենթակա է մերժման: Միևնույն ժամանակ դատարանը փաստել է, որպատշաճ կարգով բողոքը կրկին ներկայացնելու դեպքում, եթե պահպանված լինեն բողոքարկման դատավարական կարգը, բողոքի հիմքերին, պայմաններին և ժամկետներին ներկայացվող պահանջները, ապա իրավասու դատարանը կարող է ըստ

էության քննարկել այն[1]:

Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս ևս դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-45-րդ հոդվածներում ընդգրկված նորմերն ուղղակիորեն կանոնակարգում են քրեական գործերի ընդդատության վերաբերյալ հարցերը և դրանցում չկա որևէ կանոնակարգում, որը հնարավորություն կտար այդ նորմերի պահանջները տարածելու նաև քրեական դատավարության կարգով լուծվող այլ հարցերի վրա: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ օրենսդիրը դատարանին չի լիազորել բողոքն իրեն ընդդատյա չլինելու դեպքում այն ուղարկել ըստ ընդդատության[2]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով ստացված գործն (նյութերը) ըստ ընդդատության ուղարկելու անհնարինության վերաբերյալ ստորադաս դատարանների պատճառաբանությունները հիմնավոր չեն: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործերով ընդդատության հետ կապված հարցերը լուծելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը պետք է մեկնաբանել քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ գլխով նախատեսված՝ ընդդատության ընդհանուր կարգավորումների հաշվառմամբ, որպիսի պարագայում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստացված գործը կարող է ուղարկվել ըստ պատշաճ տարածքային ընդդատության:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածում, ի թիվս քրեական գործերի, օրենսդիրը մատնանշել է նաև քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործերը (նյութերը), քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստացված դատական գործերը քննելու Առաջին ատյանի դատարանի իրավազորությունը, ինչպես նաև վերջինիս շրջանակներում կայացվող դատական ակտերը Վերաքննիչ դատարանի կողմից վերանայելու իրավազորությունը:Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ դիրքորոշումը բխում է ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած կարգավորումներից, այլ նաև դատական մատչելիության իրավունքի գերակայությունից:

Մինչդեռ սույն գործով Առաջին ատյանի դատարանը, փաստելով, որ դիմող Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բողոքը ՀՀ

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ գլխում սահմանված կանոնների կիրառմամբ ըստ պատշաճ տարածքային ընդդատության չէր կարող ուղարկվել, ըստ էության գնահատման է ենթարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը: Մինչդեռ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր ստանձնելու մեկ այլ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած որոշման իրավաչափությունը վերանայող դատական ատյանի դեր,այլ գտնելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, պետք է քննարկման առարկա դարձներ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված դատավարական կարգի կիրառման հարցը:

17.1. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն փաստարկին, թե բողոքը պատշաճ կարգով կրկին ներկայացված լինելու դեպքում, եթե պահպանված լինեն բողոքարկման դատավարական կարգը, բողոքի հիմքերին, պայմաններին և ժամկետներին ներկայացված պահանջները, ապա իրավասու դատարանը կարող է ըստ էության անդրադառնալ և քննարկել այն, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 15.1-րդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ բողոքը մերժելու պարագայում չի կարող պատշաճ կերպով երաշխավորվել դիմողի և նրա ներկայացուցչի՝ արդար դատաքննության իրավունքի իրացման հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի ներկայացրած բողոքը չէր կարող ըստ ընդդատության ուղարկվել Առաջին ատյանի դատարան, հիմնավոր չեն:

II. Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում համապատասխան իրավասու դատարան բողոք ներկայացնելը.

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ դիմող Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բողոքն ընդդատյա չէ իրեն:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և*

օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(…)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան (…)»:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի մասին ՀՀ սահմանադրական դատարանը *թիվ ՍԴՈ-844* որոշմամբ նշել է. *«Հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.*

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,

- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(…)»[1]:

20. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկման ենթակա որոշումների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն *Ա.Մողրովյանի* վերաբերյալ գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն»*[2]:

21. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատախազական հսկողության գործիքակազմի սպառումը նախապայման է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործադրելու համար: Որպես իրավական պաշտպանության միջոց՝ դրա շրջանակներում ստուգվում է անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշման (գործողության) օրինականությունը, որի արդյունքում դատախազը կա՛մ արձանագրում է վիճարկվող որոշման (գործողության) իրավաչափության փաստը, կա՛մ հերքում այն: Այսինքն՝ դատախազական հսկողության կառուցակարգի սպառման արդյունքում

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշումը, 8-րդ կետ:

[2] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Արևիկ Մողրովյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0076/11/09 որոշումը, 15-րդ կետ:

կայացվող որոշումը հիմնվում է անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշման (գործողության) վրա:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազական հսկողության շրջանակներում կայացված որոշումն ինքնին չի կարող հանդիսանալ բողոքարկման առարկա՝ առանց անձի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշման (գործողության) օրինականության ստուգման: Ուստի դրա իրավաչափությունը կարող է դատական ստուգման ենթարկվել նախաքննական մարմնի որոշման (գործողության) օրինականության ստուգման հետ մեկտեղ՝ նույն վարույթի շրջանակներում, որի արդյունքում կայացված որոշման հասցեատեր են դառնում ինչպես քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը (վիճարկվող որոշումը վերացնելիս, ինչպես նաև դատարանի կողմից արձանագրված՝ խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման նկատմամբ հսկողություն իրականացնելիս), այնպես էլ նախաքննությունն իրականացրած մարմինը (դատարանի կողմից արձանագրված՝ խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելիս)[1]:

Նման պայմաններում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոք ներկայացնելիս համապատասխան իրավասու դատարանը որոշելու հարցում պետք է ելակետ ընդունվի ոչ թե հսկողություն իրականացնող դատախազի, այլ դիմողի իրավունքներին ու օրինական շահերին անմիջականորեն միջամտող որոշում կայացրած մարմնի գտնվելու վայրը: Այլ կերպ՝ *«վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայր»* պետք է դիտարկվի այն դատական տարածքը, որտեղ գտնվում է դիմողի իրավունքներին և օրինական շահերին առնչվող, համապատասխան որոշում կայացրած կամ գործողություն կատարած մարմինը:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, ըստ էության քննության չառնելով ներկայացված բողոքը, համաձայնել է դիմողի ներկայացուցիչ Կ.Գասպարյանի՝ դատական նիստի ընթացքում հայտնած այն դիրքորոշմանը, թե համամիտ չեն Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ բողոքն ըստ ընդդատության Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու որոշման հետ, քանի որ իրենց կողմից բողոքարկվող դատախազի որոշումը կայացվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի տարածքում գտնվող դատախազության կողմից[2]:

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Մասիս Բաղիրյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ԵՄԴ/0004/11/16 որոշումը, 12-րդ կետ:
[2] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

23. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 19-21-րդ կետում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն, որ դիմողի իրավունքների և օրինական շահերի նկատմամբ անմիջական միջամտություն է իրականացվել ոչ թե Երևան քաղաքի դատախազի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ, այլ ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում 2015 թվականի ապրիլի 28-ին կայացված՝ քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու որոշմամբ, որի օրինականության ստուգման հետ մեկտեղ՝ միևնույն վարույթի շրջանակներում միայն կարող էր քննարկվել դատախազի որոշման իրավաչափությունը:

Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոք ներկայացնելիս համապատասխան իրավասու դատարանը որոշելու հարցումպետք է ելակետ ընդունվեր ոչ թե հսկողություն իրականացնող դատախազի, այլ դիմողի իրավունքների ու օրինական շահերի նկատմամբ անմիջականորեն միջամտող որոշում կայացրած՝ ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի գտնվելու վայրը, ինչն ընգրկված է եղել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ դիմող Ս.Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բողոքն ընդդատյա չէ իրեն, հիմնավոր չեն:

24. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Առաջին ատյանի դատարանի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանիորոշումը բեկանելուև գործը «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՀՕ-34-Ն օրենքի հաշվառմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության ուղարկելու հիմք է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով ներկայացված բողոքը, պետք է նաև անդրադառնա բողոքաբերի՝ սույն որոշման 7.2-րդ կետում նշված փաստարկին, քանի որ սույն

որոշմամբ արձանագրված խախտումների պայմաններում Վճռաբեկ դատարանը զրկված է դրա կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Սամվել Սուրենի Ղազարյանի և նրա ներկայացուցիչ Կ.Գասպարյանի բողոքի վերաբերյալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԿԴ/0056/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դիմող՝ Ք.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ դիմող Քաջիկ Համայակի Մանուկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների հաղորդումների հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2016 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62226216 քրեական գործը:

Քննիչ Ս.Մինասյանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, և քրեական գործի վարույթը կարճվել է մի շարք անձանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ, 149-րդ, 154.6-րդ, 308-րդ, 333-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ 2017 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ վերոնշյալ որոշման դեմ դիմող Ք.Մանուկյանի բողոքը մերժվել է:

2. Քննիչի և դատախազի որոշումների դեմ դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների բողոքը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ ըստ ընդդատության ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարան բողոք է ներկայացրել նաև դիմողների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 28-ի որոշմամբ դիմողների և նրանց ներկայացուցչի բողոքները մերժվել են:

3. Ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ք.Մանուկյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Վերաքննիչ դատարանը, 2017 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ առանց քննության թողնելով դիմողների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի վերաքննիչ բողոքը, հղում է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին և 2-րդ մասին՝ նշելով, որ. *«(…) Դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի կողմից Վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքում առկա չէ բողոք ներկայացնող անձի սփոփագրությունը, հետևաբար այն չի համապատասխանում վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված պահանջներին, ուստի [այն] պետք է թողնվի առանց քննության»* (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 124-125):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

6. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, քրեադատավարական օրենքի էական խախտում, որի

պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը հանգեցրել է սխալ դատական ակտի կայացմանը: Բողոքի հեղինակը հայտնել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը ստորագրված չլինելու ձևական սխալի պատճառով առանց քննության թողնելը հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության, դատական մատչելիության իրավունքների, ինչպես նաև դատական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու իրավունքի խախտման:

7. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

8. Վճռաբեկ դատարանի համոզմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *«այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի պահանջներին (...) վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»* ձևակերպման կապակցությամբ առկա է սահմանադրականության խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված ձևակերպման՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

9. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ձևական սխալների առկայության հիմքով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն արդյո՞ք չի վտանգում ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական մատչելիության իրավունքը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»*:

Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման

արգելք հանդիսանալ *(տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴՈ-1192 որոշման 7-րդ կետը)*,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում *(տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշման 7-րդ կետը)*,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը *(տե՛ս նույն տեղում)*,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները *(տե՛ս նույն տեղում)*:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատական մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով *(տե՛ս Luordo v. Italy գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, Staroszczyk v. Poland գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, Stanev v. Bulgaria գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ)*,

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը *(տե՛ս նույն տեղում)*,

- դատական մատչելիության իրավունքի սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն *(տե՛ս Khalfaoui v. France գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97,*

36-րդ կետ, Hirschhorn v. Romania գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ),

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա *(տե՛ս Walchli v. France գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ),*

- դատական մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի *(տե՛ս Efstathiou and others v. Greece գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ):* Օրինակ՝ մի շարք վճիռներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների կողմից ներկայացված բողոքն առանց քննության թողնելն այն հիմնավորմամբ, որ բողոք բերած անձի կողմից չի նշվել բողոքի հիմքը, հանդիսանում է բողոքին ներկայացվող այդպիսի պահանջի չափազանցված ձևականացում, որի արդյունքում անձը զրկվում է համապատասխան դատական ատյանի կողմից իր բողոքն ըստ էության քննության առնելու հնարավորությունից, ինչը հանգեցնում է անձի դատական մատչելիության իրավունքի անհամարժեք սահմանափակման *(mutatis mutandis տե՛ս Reklos and Davourlis v. Greece գործով 2009 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 1234/05, 28-րդ կետ, Poirot v. France գործով 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 29938/07, 46-րդ կետ, Shuli v. Greece գործով 2017 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 71891/10, 34-րդ կետ):*

12. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ *«Դատական մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է **ձևական բնույթ կրեն**, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները» (տե՛ս Արթուր Այվազյանի գործով*

Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը, Լևոն Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշման 13-րդ կետը):

13. Սույն որոշման 10-12-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական մատչելիության իրավունքն ունի բացառիկ նշանակություն անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, այն հանդիսանում է ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանը, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու *(locus standi)* և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը:

Ելնելով վերոնշյալ առանձնահատկությունից՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման չափանիշներ և պահանջներ սահմանելիս պետք է ապահովված լինի նվազագույն ջանքերի գործադրմամբ դրանք հաղթահարելու հնարավորությունը: Ընդ որում, այն դեպքերում, երբ այդ չափանիշները և պահանջները կրում են ձևական բնույթ և կարող են հաղթահարվել նաև այլընտրանքային եղանակներով, դրանց չպահպանումը չպետք է գերակայի դատական մատչելիության իրավունքի նկատմամբ: Այլ կերպ՝ ձևական բնույթ կրող կարգավորումները չպետք է այն աստիճան չափազանցվեն *(excessive formalism)*, որ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու չափանիշների և պահանջների չպահպանման արդյունքում վրա հասնող իրավական հետևանքն անհամաչափորեն սահմանափակի անձի դատական մատչելիության իրավունքը:

13.1 Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ դատական ակտը վերանայող դատարաններ ստեղծելիս պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ դատարանի մատչելիության իրավունքից *(տե՛ս Sialkowska v. Poland գործով 2007 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 8932/05, 103-րդ կետ),* ուստի ձևական նկատառումներից ելնելով՝ դատական մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակման արգելքի վերաբերյալ նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատական ատյաններին:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝*

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) տվյալներ՝ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը.

3) դատական ակտը, որը բողոքարկվում է, և այն կայացրած դատարանի անվանումը.

4) նշում այն մասին, թե դատական ակտը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով.

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5.1) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

6) առկայության դեպքում այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները.

7) բողոքին կցվող նյութերի ցանկը.

8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի պահանջներին (...) վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

Վերոնշյալ իրավադրույթի 1-ին և 2-րդ մասերի համադրված վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը մի կողմից ամրագրել է վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջները, մյուս կողմից՝ այդ պահանջների չպահպանման դեպքում վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու ձևով արտահայտվող իրավական հետևանքը: Վերջինս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի իմաստով համարվում է վերջնական որոշում, որը բացառում է գործով վարույթը Վերաքննիչ դատարանում սկսելու հնարավորությունը:

15. Հաշվի առնելով նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում գնահատել վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջների չպահպանման դեպքում այն առանց քննության թողնելով Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտության իրավաչափությունը հետևյալ չափանիշների լույսի ներքո.

ա) արդյոք դատական մատչելիության իրավունքը սահմանափակվում է օրենքով սահմանված կարգով, այսինքն՝ ներպետական օրենսդրությունում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին համապատասխան

ընդունված նորմատիվ իրավական ակտով, որը սահմանում է այդ սահմանափակման դատավարական կարգը: Նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու կարգը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի այս չափանիշը պահպանված է,

բ) արդյոք դատական մատչելիության իրավունքի սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, այսինքն՝ նախատեսված սահմանափակումներն արդյոք ուղղված են արդարադատության պատշաճ կազմակերպմանը: Նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներն ինքնին նպատակ են հետապնդում ապահովելու արդարադատության պատշաճ կազմակերպումը (օրինակ՝ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ նշումների առկայության պահանջը նպատակ է հետապնդում կանխորոշել այն սահմանները, որոնց շրջանակներում Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի համաձայն քննության է առնելու վերաքննիչ բողոքը և կայացնելու եզրափակիչ դատական ակտ *(տե՛ս այդ մասին Ա.Խուրշուդյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱՔԴ/0065/01/11 որոշման 13-րդ կետը),* կամ վերաքննիչ բողոք բերած անձին անհատականացնող տվյալների նշման, այդ թվում՝ բողոք բերած անձի ստորագրության, պահանջն ուղղված է բողոքը ներկայացրած սուբյեկտի պատշաճությունը պարզելուն, բողոքաբերներին միմյանցից սահմանազատելուն), ուստի այդ պահանջների չպահպանման պարագայում վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու ձևով արտահայտվող իրավական հետևանքը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ բացառել արդարադատության պատշաճ կազմակերպմանը խոչընդոտող, Վերաքննիչ դատարանում գործի քննության համար անհրաժեշտ տվյալներ չպարունակող վերաքննիչ բողոքների հետագա ընթացքը:

գ) արդյոք դատական մատչելիության իրավունքի քննարկվող սահմանափակումը համաչափ է հետապնդվող նպատակին:

Վերոնշյալ չափանիշը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածում, որի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

Համաչափության սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է՝

- պիտանի և անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար,

- հետապնդվող նպատակի հետ գտնվի համարժեք հարաբերակցության մեջ:

«Պիտանիության» չափանիշի համաձայն՝ միջոցը համարվում է պիտանի, եթե այն հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին: Մինչդեռ «անհրաժեշտության» չափանիշի դեպքում միջոցը համարվում է անհրաժեշտ, եթե օրենքով հետապնդվող նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, բացի այն միջոցից, որն ընտրվել է:

Ինչ վերաբերում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համարժեք հարաբերակցությանը, ապա այն նշանակում է, որ միջամտության սահմանների խորությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի արժեբանական նշանակությանը և կշռին: Այլ կերպ՝ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն, կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չպետք է լինի չափից ավելի խիստ՝ շրջանցելով այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները:

15.1 Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված՝ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները.

- մեծամասամբ տեխնիկական են, որի պատճառով հաճախ դրանց չպահպանումը զուտ անփութության արդյունք է,

- անվերականգնելի չեն և դրանք չպահպանելու, թերություններով վերաքննիչ բողոք ներկայացնելու պարագայում կարող են շտկվել բողոքաբերի կողմից:

Նման պայմաններում, «պիտանիության» չափանիշի տեսանկյունից թեև վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը հնարավորություն է տալիս հասնելու արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակին, այսինքն՝ բացառում է թերություններով վերաքննիչ բողոքներին հետագա ընթացք տալու հնարավորությունը, սակայն Վճռաբեկ դատարանի համոզմամբ Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ այդ եղանակով իրականացվող միջամտությունը prime facie չի համապատասխանում համաչափության սկզբունքի «անհրաժեշտության» չափանիշին: Մասնավորապես, եթե նույն արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակին կարելի է հասնել օրինակ բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքի ձևական բնույթ ունեցող թերությունը ուղղելուց հետո, ուստի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու ձևով Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ իրականացվող միջամտությունը չի կարող համարվել այնպիսի բացառիկ միջոց, որի կիրառմամբ է միայն հնարավոր հասնել հետապնդվող նպատակին:

Այսպիսով, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու պարագայում, երբ անձը վերաքննիչ բողոքում թույլ տված ձևական թերության արդյունքում զրկվում է իրեն առնչվող դատական ակտի իրավաչափությունը վերադաս դատական ատյանի կողմից վերանայման ենթարկելու իրավունքից խախտվում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը, քանի որ իրականացվող միջամտությունն իր բնույթով սահմանափակում է Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը: Արդյունքում խաթարվում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև արդարացի հավասարակշռությունը, քանի որ կիրառվող միջոցը հետապնդվող նպատակի համեմատ չափից ավելի խիստ է, այն շրջանցում է այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները:

Նման պայմաններում, մի կողմից արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակից ելնելով՝ վերաքննիչ բողոքի քննության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու, մյուս կողմից՝ բողոք բերած անձին դատական մատչելիության իրավունքից չզրկելու համար հնարավոր լուծումներից մեկը կարող է լինել վերաքննիչ բողոքը վերադարձնելու միջոցով բողոք բերած անձին հնարավորության ընձեռումը՝ շտկելու վերաքննիչ բողոքի թերությունները:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 414.1 հոդվածի համաձայն՝ *«Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 407 հոդված[ով նախատեսված վճռաբեկ բողոքի] պահանջներին»:* Այսինքն՝ օրենսդրի կողմից վճռաբեկ բողոքի դեպքում նախատեսվել է այն վերադարձնելու հնարավորություն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքին ներկայացվող ձևական պահանջները չեն պահպանվում բողոքաբերի կողմից: Ընդ որում, հարկ է նշել, որ այդ պահանջները, ըստ էության, համընկնում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջներին այն տարբերությամբ, որ վճռաբեկ բողոքի դեպքում բողոքի հեղինակը պետք է ներկայացնի նաև հիմնավորումներ այն վարույթ ընդունելու վերաբերյալ: Նման պայմաններում, ի տարբերություն վճռաբեկ բողոքի, չնախատեսելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու հնարավորություն՝ օրենսդրի կողմից որդեգրված տարբերակված մոտեցումը Վճռաբեկ դատարանի համոզմամբ չունի օբյեկտիվ հիմք և չի հետապնդում իրավաչափ նպատակ:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ գործող քրեադատավարական իրավակարգավորումների պայմաններում թեև օրենսդիրն օրենսգրքի ընդհանուր մասի 103-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսում է բողոքը վերադարձնելու հնարավորություն, եթե այն ստորագրված չէ բողոքաբերի կամ նրա ներկայացուցչի կողմից կամ այն չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին, սակայն այն փոխկապակցված է

դարձյալ բողոքն առանց քննության թողնելու պայմանի հետ: Այսինքն, բողոքն առանց քննության թողնելուց հետո այն կարող է վերադարձվել դատավարության մասնակցին՝ առանց հնարավորություն տալու շտկելու բողոքի համապատասխան թերությունը:

Այնուամենայնիվ, ելնելով դատական մատչելիության իրավունքի կարևորությունից՝ վերաքննիչ բողոքի ձևական բնույթ կրող թերությունները շտկելու համար չկայացնելով առանց քննության թողնելու մասին որոշում՝ բողոքը վերադարձնելու կարգավորում նախատեսված է ներկայումս շրջանառության մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 364-րդ հոդվածում, որը հնարավորություն է տալիս համապատասխան թերությունների մատնանշմամբ, հինգից տասն օր ժամկետ տրամադրելով, վերադարձնելու վերաքննիչ բողոքը:

15.2 Հարկ է նաև նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող հարցի առնչությամբ մի շարք երկրներ նախատեսել են վերաքննիչ բողոքը վերադարձնելու ինստիտուտ կամ առանց բողոքը վերադարձնելու, սակայն թերությունների առկայության մասին բողոքաբերին տեղեկացնելու և դրանք շտկելու հնարավորություն ընձեռելու կարգավորումներ: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 389.6-րդ հոդվածի 4-րդ մասը, Բուլղարիայի քրեական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու հնարավորություն: Իսկ Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածը, Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 3-րդ մասը, Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի 553-րդ հոդվածը, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 326-րդ հոդվածը, Հունգարիայի քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Շվեյցարիայի քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում են, որ վերաքննիչ բողոքի թերությունների դեպքում անձը տեղեկացվում է այդ թերությունների մասին, և բողոքը քննության չի առնվում, քանի դեռ սահմանված ժամկետում բողոքաբերի կողմից դրանք չեն շտկվում:

Բացի այդ, հարկ է նկատել, որ արտասահմանյան երկրների սահմանադրական արդարադատություն իրականացնող դատարանների որոշումների ուսումասիրությունը ցույց է տալիս, որ համանման կերպով Շվեյցարիայի դաշնային դատարանը թիվ SUI-1966-S-001 գործով դեռևս 1966 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ չափազանցված ձևականացման հիմքով Սահմանադրությանը հակասող էր ճանաչել Նեռչատել կանտոնի նախադեպային իրավունքով ձևավորված կարգավորումն այն մասին, որ բողոքաբերի կողմից բողոքին վիճարկվող որոշման բնօրինակը կամ վավերացված պատճենը չկցելու դեպքում այն թողնվում է առանց քննության:

Դատարանը գտել էր, որ բողոքն առանց քննության թողնելու՝ որպես ծայրահեղ միջոցի կիրառումն արդարացված չէ: Դատարանը նշել էր, որ կանտոնի դատարանն առնվազն պետք է հնարավորություն տար բողոք ներկայացրած անձին կարճ ժամկետում ուղղելու այն ձևական թերությունը, որը հանգեցրել էր բողոքն առանց քննության թողնելուն: Մինչդեռ նման պարագայում անձն ի սկզբանե զրկվել էր իր բողոքարկման իրավունքից, ինչը դատարանի համոզմամբ չէր համապատասխանում հետապնդվող նպատակներին և խոչընդոտում էր նյութական իրավունքի նորմերի արդարացի կիրառությանը, ինչն էլ իր հերթին հակասության մեջ էր գտնվում Սահմանադրության հետ:

15.3 Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ ձևական թերությունների պատճառով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու պարագայում անհամաչափորեն սահմանափակվում է անձի՝ Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը: Մինչդեռ ինչպես գործող օրենսդրության կարգավորումները, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ անձին դատական մատչելիության իրավունքից չզրկելու այլընտրանքային լուծում կարող է լինել վերաքննիչ բողոքը վերադարձնելու և բողոքի հեղինակին թույլ տրված թերությունները շտկելու հնարավորության ընձեռումը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 28-ի որոշման դեմ դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջներից՝ բողոքը ներկայացրած անձի ստորագրության բացակայության հիմքով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-15.3-րդ կետում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը չստորագրելու ձևական պահանջի չպահպանման արդյունքում Վերաքննիչ դատարանի կողմից դիմողների ներկայացուցչի բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակել է բողոքաբերի դատական մատչելիության իրավունքը: Արդյունքում վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական պահանջը փաստացիորեն գերակայել է անձի դատական մատչելիության իրավունքի նկատմամբ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանի համոզմամբ ձևական սխալների առկայության հիմքով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը

վտանգում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական մատչելիության իրավունքը:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *«այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի պահանջներին (...) վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»* ձևակերպման ուժով ձևական սխալների առկայության պարագայում վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակում է անձի արդար դատաքննության, այդ թվում՝ Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը:

Նման պայմաններում նկատի ունենալով, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասը, որը Վճռաբեկ դատարանի համոզմամբ հակասում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին, իսկ սահմանադրական արդարադատություն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը, ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 39-րդ, 43-րդ, 361.[1]-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ և 71-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմողներ Քաջիկ Համայակի Մանուկյանի և Սուսաննա Արամայիսի Մանուկյանի բողոքի վերաբերյալ գործի վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *«այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածի պահանջներին (...) վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»* ձևակերպման՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին համապատասխանության հարցը՝ այնքանով, որքանով ձևական սխալների առկայության հիմքով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակում է անձի՝ արդար դատաքննության իրավունքը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ1/0077/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Կ.ՆԱԶԱՐՅԱՆԻ
պաշտպան՝ Մ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
ամբաստանյալ՝ Գ.ՍԵՐՈԲՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Գոռ Գրիգորի Սերոբյանի և պաշտպան Մ.Մարգարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով և 358.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 90761516 քրեական գործը:

Նախաքննության մարմնի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 20-ին Գոռ Գրիգորի Սերոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով, 358-րդ հոդվածի 1-ին մասով, 358-րդ հոդվածի

1-ին մասով և 361-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի դեկտեմբերի 29-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճռով ամբաստանյալ Գ.Սերոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով, 361-րդ հոդվածի 1-ին մասով, 358-րդ հոդվածի 1-ին մասով և 358-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 68-րդ հոդվածների կիրառմամբ նշանակված պատիժները և նախորդ դատավճռով սահմանված 1 տարի 2 ամիս ժամկետով ազատազրկումը մասնակիորեն գումարելու միջոցով, Գ.Սերոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ, նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Գ.Սերոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ հրամանատարության հսկողության հանձնելը, վերացվել է:

Նույն դատական ակտով դատապարտվել է նաև Գևորգ Պետրոսի Խաչատրյանը:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 25-ին վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճիռը պատժի կրման մասով բեկանել ու փոփոխել է. Գ.Սերոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել է: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 68-րդ հոդվածների կիրառմամբ նշանակված պատիժները և նախորդ դատավճռով նշանակված 1 տարի 2 ամիս ժամկետով ազատազրկումը մասնակիորեն գումարելու միջոցով Գ.Սերոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Ամբաստանյալ Գ.Սերոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Գ.Սերոբյանը և պաշտպան Մ.Մարգարյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. *«(...) Ամբաստանյալ Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ոչ միայն կատարված հանցագործությունների բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը, այլև ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները՝ այն, որ երիտասարդ է, իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար, բնութագրվում է դրականորեն, Գևորգ Խաչատրյանի հետ հաշտվել են:*

Գործով ամբաստանյալի պատասխանատվությունը ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներ ձեռք չեն բերվել: Ինչ վերաբերում է ամբաստանյալի նախկին դատվածությանը, ապա դատարանն արձանագրում է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 15.12.2016թ. դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով վերջնականապես դատապարտվել է 1 (մեկ) տարի 2 (երկու) ամիս ժամկետով ազատազրկման: ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով փորձաշրջան: Սույն գործով իրեն մեղսագրված արարքները կատարել է նախքան առաջին դատավճիռը կայացնելը: Այսինքն, ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի հիմքով նախորդ դատավճռով նշանակված պատիժը լրիվ կամ մասնակիորեն պետք է գումարել սույն գործով նշանակվող պատժին:

Նշված հանգամանքների պայմաններում դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակել ազատազրկման ձևով պատիժ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66, 68 հոդվածների կիրառմամբ, և որ ուղղման առումով ամբաստանյալին հասարակությունից մեկուսացնելու կարիք չկա, ուստի, ՀՀ քրեական օրենսգրքի 360 հոդվածի 1-ին մասով, 361 հոդվածի 1-ին մասով, 358 հոդվածի 1-ին մասով, 358 հոդվածի 1-ին մասով նախատեսված ազատազրկման ձևով պատիժը նշանակելիս այն պետք է պայմանականորեն չկիրառել և սահմանել որոշակի ժամկետով փորձաշրջան (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 98):

5.1. Արդյունքում Առաջին ատյանի դատարանը վճռել է. *«Ամբաստանյալ Գոո Գրիգորի Սերոբյանին (...) ՀՀ քրեական օրենսգրքի 360 հոդվածի 1-ին մասով (...) դատապարտել 2 (երկու) ամիս ժամկետով կալանքի, ՀՀ քրեական օրենսգրքի 361 հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով կալանքի, ՀՀ քրեական օրենսգրքի 358 հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով կալանքի, ՀՀ քրեական օրենսգրքի 358 հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով կալանքի:*

ՀՀ քրեական օրենսգրքի 66, 68 հոդվածների կիրառմամբ նշանակված

պատիժները և նախորդ դատավճռով նշանակված 1 տարի 2 ամիս ժամկետով ազատազրկումը մասնակիորեն գումարելու միջոցով վերջնականապես դատապարտել 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման։

ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով փորձաշրջան (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 98)։

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել գործով մեղադրող Կ.Նազարյանը՝ խնդրելով մասնակի բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվական մարտի 17-ի դատավճիռը և Գ.Սերոբյանին դատապարտել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 7)։

6.1. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Ա]ռաջին ատյանի դատարանը (...) ամբաստանյալ Գոռ Գրիգորի Սերոբյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող հանգամանքներն՝ այն, որ երիտասարդ է, իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կատարածի համար, բնութագրվում է դրականորեն, Գևորգ Խաչատրյանի հետ հաշտվել է։*

Դատարանն արձանագրել է նաև, որ գործով ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ ձեռք չեն բերվել։

Ինչ վերաբերում է ամբաստանյալի նախկին դատվածությանը, ապա դատարանն արձանագրել է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.12.2016թ. դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով վերջնականապես դատապարտվել է 1 (մեկ) տարի 2 (երկու) ամիս ժամկետով ազատազրկման։ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով փորձաշրջան։ Սույն գործով իրեն մեղսագրվող արարքները կատարել է նախքան առաջին դատավճիռը կայացնելը։ Այսինքն, ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի հիմքով նախորդ դատավճռով նշանակված պատիժը լրիվ կամ մասնակիորեն պետք է գումարել սույն գործով նշանակվող պատժին։

(...)

Հարկ է արձանագրել, որ նախկինում՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.12.2016թ. դատավճռով Գոռ Գրիգորի Սերոբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 67, 68 հոդվածների կիրառմամբ ի վերջո դատապարտվել է 1 (մեկ) տարի 2 (երկու) ամիս ժամկետով ազատազրկման։ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը

պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով փորձաշրջան:

Հարկ է արձանագրել նաև, որ որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք առկա է հանցանք կատարելու ռեցիդիվ:

(...) [Ք]ննության առնելով ամբաստանյալ Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի հարցն այն պայմանականորեն չկիրառելու առնչությամբ, վերաքննիչ դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, կատարման հանգամանքները, վիճարկվող դատական ակտում շարադրված հանցավորի անձը բնութագրող տվյալներն, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների բացակայությունը:

(...)

(...) [Ա]մբաստանյալ Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ վիճարկվող դատական ակտով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

(...)

(...) [Ա]մբաստանյալ Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.12.2016թ. դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը պետք է վերացնել:

(...) [Վ]երաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում հանգել է ոչ ճիշտ եզրակացության, ինչը հանգեցրել է նյութական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է վիճարկվող դատական ակտն այդ մասով բեկանելու և փոփոխելու համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 81-82):

6.2. Արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշել է. *«(...) Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ (...) Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 17.03.2017թ. դատավճիռը պատժի կրման մասով բեկանել և փոփոխել:*

Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ պատիժ նշանակել. ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով՝ կալանք 2 (երկու) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ կալանք 3 (երեք) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով՝ կալանք 3 (երեք) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով՝ կալանք 3 (երեք) ամիս ժամկետով:

Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 15.12.2016թ. դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 68-րդ հոդվածների կիրառմամբ նշանակված պատիժները և նախորդ դատավճռով նշանակված 1 տարի 2 ամիս ժամկետով ազատազրկումը մասնակիորեն գումարելու միջոցով Գոո Գրիգորի Սերոբյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

(…)

Դատավճիռը մնացած մասերով թողնել անփոփոխ (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 83):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակները գտել են, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, անտեսել է Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Խուրշուդյանի*, *Գեղամ Ղազարյանի և Իլլարիոն Նունուշյանի* վերաբերյալ գործերով որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես բողոքաբերները նշել են, որ մեղադրողն իր վերաքննիչ բողոքում չի խնդրել վերացնել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատժի պայմանական չկիրառելը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը նշված դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանական չկիրառելը վերացրել է և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ ու 68-րդ հոդվածների կիրառմամբ նշանակված պատիժները և նախորդ դատավճռով նշանակված 1 տարի 2 ամիս ժամկետով ազատազրկումը մասնակիորեն գումարելու միջոցով Գ.Սերոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանել 1 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկում՝ այն պարագայում, երբ առաջին ատյանի դատարանն արդեն իսկ ազատազրկման ձևով պատիժ էր սահմանել 1 տարի 6 ամիս ժամկետով:

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները և վերացնելով նախորդ դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանական չկիրառելը, կայացրել է ակնհայտ ապօրինի դատական ակտ, քանի որ Գ.Սերոբյանը սույն քրեական գործով իրեն մեղսագրվող արարքները կատարել է ոչ թե նշված դատավճռով սահմանված փորձաշրջանի ընթացքում, այլ ավելի վաղ՝ մինչև սույն դատական ակտը կայացնելը:

Բողոքի հեղինակները գտել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների չկիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի անվերապահ բեկանմանը հանգեցնող դատավարական իրավունքի խախտում չէր, հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավասու չէր դուրս գալու վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

7.1. Բողոք բերած անձինք գտել են նաև, որ Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի և 79-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, քանի որ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք հաշվի չի առել Գ.Սերոբյանի հիվանդությունը՝ այն, որ տառապում է կրկնվող իրավիճակային ռեակցիաներ էմոցիոնալ անկայուն տիպի անձի մոտ, օրգանական անբավարար ֆոն հոգեկան հիվանդությամբ: Վերջինս ՀՀ ՊՆ 08.04.2013թ. թիվ 410 հրամանի 8բ հոդվածի 1-ին սյունակի համաձայն, ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար՝ խաղաղ ժամանակ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Գ.Սերոբյանը մինչև զինվորական ծառայության անցնելը երբևէ չի դատապարտվել, անբասիր վարքագիծ է դրսևորել, երիտասարդ է, իրեն մեղսագրվող արարքները կատարել է միայն զինվորական ծառայության ընթացքում, իսկ բժշկական հետազոտությունների արդյունքում էլ պարզվել է, որ զինվորական ծառայությունը վատ է անդրադառնում նրա վրա, և որ նա չի կարողանում այլևս ծառայությունը շարունակել: Պարզվել է նաև, որ Գ.Սերոբյանը աֆեկտիվ անկայուն է, իսկ նախքան բանակ զորակոչվելը զինկոմիսարիատի ուղեգրով հետազոտվել է «Նորք» հոգեբուժական կլինիկայում: Ըստ քրեական գործի նյութերի՝ Գ.Սերոբյանը 2016 թվականի նոյեմբերի 8-ին զորամասն ինքնակամ լքել է, իսկ հիվանդանոց է ընդունվել 2016 թվականի նոյեմբերի 13-ին, այսինքն՝ այդ արարքը կատարելուց անմիջապես հետո նրա վիճակը կտրուկ վատացել է, որպիսի հանգամանքը վկայում է այն մասին, որ սույն քրեական գործով արարքների կատարման պահին Գ.Սերոբյանի մոտ արդեն առկա են եղել առողջական խնդիրներ, որոնք նշված հանցանքների հանգամանքներով պայմանավորված խորացել են:

Բողոքաբերների կարծիքով Վերաքննիչ դատարանը պարտավոր էր պարզել՝ արդյոք Գ.Սերոբյանի հիվանդությունը չի խոչընդոտում պատիժը կրելուն, որը չի արել:

8. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճռին կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով լուծելու սույն քեական գործով ամբաստանյալ Գ.Սերոբյանին պատժի կրումից ազատելու հարցը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասո՞ւ էին արդյոք ատորադաս դատարանները Գ.Սերոբյանի նկատմամբ պատիժ նշանակելու հանցանքների համակցության կանոններով այն դեպքում, երբ նրա նկատմամբ նախորդ՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չէր կիրառվել:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով:

2. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, գումարելիս վերջնական պատիժը չի կարող գերազանցել 5 տարին:

3. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության կամ միջին ծանրության և ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասը տարին:

4. Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել քսանհինգ տարին: Եթե համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատազրկում, ապա վերջնական հիմնական պատիժը որոշվում է կլանելու միջոցով:

(…)

6. Պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ (…) պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ազատազրկման մեկ օրվան համապատասխանում է՝

1) կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը.

2) (…)

3) հանրային աշխատանքների երեք ժամը:

2. Տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, ինչպես նաև գույքի բռնագրավման ձևով պատիժները կարգապահական գումարտակում պահելու, կալանքի, ազատազրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«6. Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը:

7. Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ նշանակում սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում նաև նոր անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը»:

Մեջբերված քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանը համակարգված վերլուծության է ենթարկել *Անդրեյ Համզոյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(...) [Հ]անցագործությունների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս դատարանն իրավասու է լրիվ կամ մասնակիորեն գումարել համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցանքի համար ազատազրկման, կալանքի, կարգապահական գումարտակում պահելու, հանրային աշխատանքների, տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, ինչպես նաև գույքի բռնագրավման ձևով նշանակված պատիժները: Ընդ որում, ազատազրկման, կալանքի, կարգապահական գումարտակում պահելու, հանրային աշխատանքների ձևով նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարվում են դրանց գումարման ժամանակային միավորներին համապատասխան, իսկ տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, ինչպես նաև գույքի բռնագրավման ձևով նշանակված*

պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ի կատար են ածվում առանձին:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ մոտեցումը բխում է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու, 68-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները գումարելու կանոններից, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ քրեական օրենքն անալոգիայով կիրառելու արգելքից:

(…)

(…) Հանցանքների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս կիրառելի գումարման կանոնները հստակ սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձի նկատմամբ դատավճիռ կայացնելուց հետո պարզվում է, որ նա մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարվել է նախքան առաջին դատավճռի կայացումը, անձի նկատմամբ վերջնական պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է ղեկավարվել ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով և լրիվ կամ մասնակիորեն գումարել համակցության մեջ մտնող յուրաքանչյուր հանցանքի համար նշանակված ոեալ պատիժները:

(…)

(…) [Պ]ատիժը պայմանականորեն չկիրառելը կարող է վերացվել այն դեպքում, երբ՝

ա) դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց,

բ) դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք է կատարում,

գ) դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք է կատարում:

Պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու վերոնշյալ հիմքերը սպառիչ են, ինչը նշանակում է, որ անձի պայմանական դատապարտումը նշված հիմքերից բացի որևէ այլ հիմքով վերացվել չի կարող:

(…)

(…) ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնը կիրառելի է այն դեպքում, երբ առաջին գործով կայացված դատավճռով անձի նկատմամբ նշանակվել է ոեալ պատիժ: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառելի չէ այն դեպքում, երբ անձի նկատմամբ դատավճիռ է կայացվում և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշված դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում, սակայն հետագայում պարզվում է, որ

անձը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարվել է նախքան առաջին գործով դատավճռի կայացումը: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման անթույլատրելիության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս անձի նկատմամբ նշանակված փորձաշրջանը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժատեսակ և ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ թվարկված այն պատժատեսակների շարքում, որոնց նկատմամբ կիրառելի են լրիվ կամ մասնակիորեն գումարման կանոնները: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չի նախատեսում պայմանական դատապարտումը վերացնելու հնարավորություն այն դեպքում, երբ դատավճիռ կայացնելուց հետո պարզվում է, որ այդ անձը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարել է նախքան առաջին դատավճռի կայացումը:

Հետևաբար, այն դեպքում, երբ անձի նկատմամբ դատավճիռ է կայացվում և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում, սակայն հետագայում պարզվում է, որ անձը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը կատարել է նախքան առաջին գործով դատավճռի կայացումը, երկրորդ դատավճռով դատարանը պետք է ինքնուրույն պատիժ նշանակի՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների կիրառման, ինչը ենթադրում է, որ առաջին և երկրորդ դատավճիռները պետք է կատարվեն առանձին: (…)» (տե՛ս Անդրեյ Համզոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴ3/0046/01/13 որոշման 14-19-րդ կետերը):

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մարտի 17-ի դատավճռով Գ.Սերոբյանին դատապարտել է կալանքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 (երկու) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով՝ 3 (երեք) ամիս ժամկետով: Այնուհետև, գտնելով, որ Գ.Սերոբյանի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածը, և անտեսելով այն, որ նախորդ դատավճռով Գ.Սերոբյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չէր կիրառվել՝ Առաջին ատյանի դատարանը նշանակված պատժին մասնակիորեն գումարել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով նրա նկատմամբ նշանակված 1 (մեկ) տարի 2 (երկու) ամիս ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է սահմանել ազատազրկում՝ 1 տարի

6 ամիս ժամկետով, որը պայմանականորեն չի կիրառել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5.1-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ինչպես սույն գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճռով, այնպես էլ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմքեր չեն եղել, հետևաբար պատիժը պայմանականորեն չկիրառելը ենթակա է վերացման: Արդյունքում Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 68-րդ հոդվածների կիրառմամբ նշանակված պատիժները և նախորդ դատավճռով նշանակված 1 տարի 2 ամիս ժամկետով ազատազրկումը մասնակիորեն գումարելու միջոցով Գ.Սերոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6.2-րդ կետերը):

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Սերոբյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը և արդյունքում նրա նկատմամբ նշանակված պատժին մասնակիորեն գումարել են Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով նշանակված և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառված՝ 1 տարի 2 ամիս ժամկետով ազատազրկումը: Մասնակիորեն գումարման կանոնը կիրառելիս ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս անձի նկատմամբ նշանակված փորձաշրջանը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժատեսակ չէ և ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում սպառիչ թվարկված այն պատժատեսակների շարքում, որոնց նկատմամբ կիրառելի են լրիվ կամ մասնակիորեն գումարման կանոնները:

Բացի այդ, Տավուշի մարզի ընդհանուրիրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով Գ.Սերոբյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն փաստը, որ նշված դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ և վերաքննության առարկա չի հանդիսանում: Արդյունքում խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, քանի որ որպես Գ.Սերոբյանի պայմանական դատապարտության վերացման հիմք նշել է այնպիսի հանգամանքներ, որոնք ներառված չեն պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սպառիչ թվարկված հիմքերի շարքում:

13. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն իրավասու չէին Գ.Սերոբյանի նկատմամբ պատիժ նշանակելու հանցանքների համակցության կանոններով այն դեպքում, երբ նրա նկատմամբ նախորդ՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չէր կիրառվել:

Այս առումով ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը, 70-րդ հոդվածի 6-7-րդ մասերը, ինչը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով Գ.Սերոբյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով՝ Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու պահանջը, ինչը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեադատավարական օրենքի էական խախտում:

14. Հիմք ընդունելով վերը շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես՝ խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ և 70-րդ հոդվածի 6-7-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Նշված հանգամանքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի հիման վրա հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

15. Ինչ վերաբերում է սույն գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճռով Գ.Սերոբյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման հիմնավորվածությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները վերացնելուց հետո:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում, սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու պայմաններում, Առաջին ատյանի դատարանը պետք է համապատասխան իրավական գնահատականի արժանացնի վճռաբեկ բողոքում բարձրացված՝ ամբաստանյալ Գ.Սերոբյանի հիվանդության վերաբերյալ փաստարկները (տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 398-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գոռ Գրիգորի Սերոբյանի վերաբերյալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 17-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գոռ Գրիգորի Սերոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0001/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Լ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ
ամբաստանյալ՝ Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մարզպետունի Ադիբեկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի որոշման դեմ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Լ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի օգոստոսի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11804015 քրեական գործը:

2015 թվականի օգոստոսի 12-ին Մարզպետունի Հովհաննիսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ Մ.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նույն դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ մեղադրյալ Մ.Հովհաննիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 1 ամսով, իսկ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը ճանաչվել է թույլատրելի:

2015 թվականի դեկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի դատավճռով Մ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 տարի 4 ամիս 4 օր ժամկետով, որը նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով: Վճռվել է նաև Մ.Հովհաննիսյանի նկատմամբ ընտրված կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրող Ա.Մարգարյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի օգոստոսի 23-ինորոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման մասով բեկանելու վերաբերյալ: Ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ 3 տարի 4 ամիս 4 օր ժամկետով ազատազրկումը, թողնվել է կրելու:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերելամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Լ.Բաղդասարյանը:

2017 թվականի դեկտեմբերի 26-ին Վճռաբեկ դատարան է ստացվել ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Լ.Բաղդասարյանի դիմումն այն մասին, որ նույն թվականի դեկտեմբերի 11-ին ԼՂՀ Մարտակերտ քաղաքում տեղակայված զորամասի մարտական դիրքերում մարմնի բազմակի շրջաններն ընդգրկող հրազենային վնասվածքներից մահացել է ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի որդին՝ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Մարզպետունու Ադիբեկյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ պաշտպան Լ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) նա 2015 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Չեխովի 38-րդ շենքի բակում, իր և իր ընտանիքի վերաբերյալ տեղեկություններ ունենալու հանգամանքը պարզելու հարցի շուրջ վիճաբանել է Երևան քաղաքի բնակիչ Ռաֆայել Ասոևի հետ, որի ընթացքում ձեռքերով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, այնուհետև չպարզված ծակող-կտրող գործիքով դիտավորությամբ մեկ անգամ հարվածել է Ռ.Ասոևի որովայնի շրջանին և վերջինիս առողջությանը՝ ձախ քունքային, ձախ բազկի շրջանների արյունազեղումների, ձախ արմնկահոդի շրջանի քերծվածքի, որովայնի շրջանի ծակած-կտրած թափանցող վերքի, հատ աղու էպիպլոհկայի վնասումով, հեմատոմայի առաջացումով պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 141-149):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(...)Հաշվի առնելով (...) այն հանգամանքները, որ Մ.Հովհաննիսյանը նախկինում դատված չի եղել, վատառողջ է, նրա մոտ ախտորոշվել է «ՄԻՀ, սրտամկանի սուր ինֆարկտ ՁՓ սրտային պատին, սուր սրտային անբավարարություն, զարկերակային հիպերտենզիա, շաքարային դիաբետ՝ տիպ 2, ինսուլինի պահանջ», երրորդ խմբի հաշմանդամ է, բնութագրվում է դրական, դատական քննության ընթացքում իրեն մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել է կատարած արարքի համար, 12.08.2015 թվականից մինչև 8.10.2015 թվականը շուրջ մեկ ամիս քսանվեց օր գտնվել է անազատության մեջ, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ (...) կատարված հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանը նվազել է և հնարավոր է հանգել հետևության, որ Մ.Հովհաննիսյանի ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու(...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 120-127):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում փաստել է. *«(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը Մ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ գնահատականի չի արժանացրել կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝*

ա) վերլուծության չի ենթարկվել այն հանգամանքը, որ Մ.Հովհան-

նախանը չպարզված ծակող կտրող գործիքով մեկ հարված է հասցրել տուժողի մարմնի կենսականորեն կարևոր օրգանների շրջանում՝ վերջինի առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, ինչն օբյեկտիվորեն բարձրացնում է կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը,

բ) չի գնահատել հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողությունով տուժողի առողջությանը պատճառում է կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, նախատեսել է իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,

գ) հաշվի չի առել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը ոչ միայն խիստ բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա, այլև կարող էր առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև մահ:

(...) [Ա]մբաստանյալ Մ.Հովհաննիսյանի կողմից մեղքն ընդունելը և դրա համար զղջալը կրել է ձևական բնույթ, քանի որ (...) ողջ նախաքննության և դատաքննության ժամանակ առաջադրված մեղադրանքում նա իրեն մեղավոր չի ճանաչել: Մեղավոր է ճանաչել միայն դատական վիճաբանություններում:

Նման պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև օրս ամբաստանյալի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել հատուցելու տուժողին պատճառված վնասը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հիմնազուրկ է անբաստանյալի կողմից կատարած հանցանքի համար զղջալու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատողությունը:

Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ նաև Առաջին ատյանի դատարանի այն դատողությունը, համաձայն որի՝ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք պետք է հաշվի առնել դեպքի ժամանակ տուժողի հակաօրինական վարքագիծը, քանի որ ինչպես քրեական գործի նյութերում, այնպես էլ վիճարկվող դատական ակտում չի արտացոլվել որևէ փաստական տվյալ, որից ելնելով կարելի է գալ եզրահանգման, որ տուժողը դրսևորել է նման վարքագիծ:

Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում նաև Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումը, համաձայն որի՝ ամբաստանյալի՝ 2015 թվականի օգոստոսի 12-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 8-ը անազատության մեջ գտնվելու հանգամանքը, նվազեցնում է նրա կատարած հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, քանի որ արարքի հանրային վտանգավորության աստիճանը չի կարող որոշվել այն կատարած անձի՝ անազատության մեջ գտնվելու հանգամանքով:

(...) Առաջին ատյանի դատարանն ինչպես առանձին վերցրած, այնպես

էլ իրենց համակցության մեջ պատշաճ ուշադրություն չի դարձրել արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքին, մարմնական վնասվածքի բնույթին ու տեղակայմանը, հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին, օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթին(...)»(տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 66-76):

8. Քրեական գործի նյութերում առկա են վճռաբեկ վարույթի ընթացքում ի հայտ եկած ևչհետազոտված փաստական տվյալներ այն մասին, որ 2017 թվականի դեկտեմբերի 11-ին ԼՂՀ Մարտակերտ քաղաքում տեղակայված զորամասի մարտական դիրքերում մարմնի բազմակի շրջաններն ընդգրկող հրազենային վնասվածքներից մահացել է ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի որդին՝ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Մարզպետունու Ադիբեկյանը (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 78-80):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Պաշտպան Լ.Բաղդասարյանը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն իրավաչափ չեն և կասկածի տակ են դնում նշված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը: Բողոքաբերի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ հիմնազուրկ են Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ սույն գործով կիրառելիեն Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

9.1. Բողոքաբերը գտել է նաև, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել Մ.Հովհաննիսյանին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, մասնավորապես այն, որ դեպքը տեղի է ունեցել տուժողի հակաօրինական և հակաբարոյական վարքագծի արդյունքում, ինչպես նաև հաշվի չի առել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, այն, որ Մ.Հովհաննիսյանը նախկինում դատված չի եղել, 53 տարեկան է, վատառողջ է, տառապում է «ՍԻՀ, սրտամկանի սուր ինֆարկտ ՁՓ ստորին պատին, սուր սրտային անբավարարություն, զարկերակային հիպերտենզիա, շաքարային դիաբետ՝ 2-րդ տիպ, ինսուլինի պահանջ» հիվանդություններով, երրորդ խմբի հաշմանդամ է, գտնվելով ազատության մեջ՝ չի խուսափել քննությունից, անկեղծորեն զղջացել է կատարվածի համար, խնամքին է գտնվում ծեր մայրը:

Բողոքի հեղինակի կարծիքով ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումն Առաջին

ատյանի դատարանի կողմից մարդասիրության դրսևորում է և վկայում է առանց պատիժը կրելու Մ.Հովհաննիսյանի ուղղվելու հնարավորության մասին: Հակառակ դրան՝ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը չի բխում քրեաիրավական հանրաճանաչ սկզբունքներից և ռիսկեր է պարունակում ինչպես տուժողին պատճառված նյութական վնասի վերականգնման, այնպես էլ՝ ամբաստանյալի խնամքին գտնվող անձի գոյատևման տեսանկյունից: Ըստ բողոքաբերի՝ ազատազրկում պատժատեսակի կիրառումը կարող է բացասաբար ազդել ամբաստանյալի ընտանիքի նյութական վիճակի և նրա առողջության վրա, ինչպես նաև՝ հանգեցնել վերջինիս սոցիալական կապերի խզման ու հասարակությանը վերաինտեգրվելու դժվարության:

9.2. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Լ.Բաղդասարյանը խնդրել է մասնակիորեն՝ պատժի կրման մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. վճռաբեկ վարույթում ի հայտ եկած փաստական տվյալների պայմաններում քրեական օրենսդրության մարդասիրության սկզբունքի պահպանման տեսանկյունից արդյո՞ք շարունակվում են հիմնավոր լինել ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«1. ՀՀ քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն:*

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով (...):

Սույն քրեաիրավական նորմերի բովանդակությանն անդրադառնալիս Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որպատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները քրեական օրենքով նախատեսված այն հիմնադրույթներն են,

որոնցով պետք է ղեկավարվի դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատիժ նշանակելիս: Այդ սկզբունքներն են՝ օրինականությունը, արդարությունը, պատժի անհատականացումը և մարդասիրությունը: *(տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը)*:

11.1. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող փվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Սույն քրեահիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն անհրաժեշտ է դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու. նման հետևությունները պետք է հիմնված լինեն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա(հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տես Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, արարքում մեկից ավելի ծանրացնող հանգամանքների առկայությունը, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (տես թիվ ԵԿԴ/0039/01/15, ԱՐԴ/0031/01/15, ԵԱԴԴ/0038/01/15, ԵԿԴ/0130/01/15, ՍԴ/0094/01/15, ՍԴ3/0201/01/15, ԵԱՔԴ/0078/01/09, ԵԿԴ/0115/01/16, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՇԴ/0097/01/13 գործերով որոշումները):

Դատարանի հետևությունները, ի թիվս այլոց, պետք է հիմնված լինեն

օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի կողմից արարքի հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին(տե՛սթիվ ԵԷԴ/0132/01/13, ԵԱՔԴ/0078/01/09, ԵԿԴ/0042/01/11, ՍԴ/0109/01/12, ԱՎԴ/0082/01/12, ԵԱՔԴ/0091/01/14, ՎԲ-50/70 գործերով որոշումները):

12. Վերահաստատելով սույն որոշման 11-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարացի պատիժ նշանակելու և նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիսդատարանը պետք է ղեկավարվի հետևյալընդհանուր սկզբունքներով.

ա) օրինականության,

բ) արդարության,

գ) պատժի անհատականացման,

դ) մարդասիրության:

13. Անդրադառնալով մարդասիրությանը որպես իրավունքի սկզբունքի՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներպետական օրենսդրությունում վերջինիս ամրագրման համար հիմք ենհանդիսացել այն միջազգային իրավական ակտերը, որոնցում մարդասիրության սկզբունքն ուղղակի կամ անուղղակի կերպով ամրագրված է. այդպիսիք են Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագիրը (1948), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966), Խոշտանգումենրի և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիան(1984), Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (1965), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (1950), Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (1996):

Այսպիսով, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, հանդիսանալով որպես իրավական հիմք մարդասիրության սկզբունքի օրենսդրական ձևակերպման համար, ամրագրված են ՀՀ Սահմանադրությունում, որը սահմանադրական կարգավորումների առանցք է դիտարկում մարդուն՝ որպես բարձրագույն արժեք, նրա անօտարելի արժանապատվությունը:

Մարդասիրության սկզբունքի բովանդակությանն անդրադառնալիս Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այն ունի երկու կողմ՝ մարդասիրություն հասարակության նկատմամբ և մարդասիրություն հանցանք կատարած անձի նկատմամբ *(տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը):*

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով *Ն.Սարգսյանի գործով* արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ մարդասիրությունը՝ որպես քրեական իրավունքի հիմնարար սկզբունք, ունի երկու հիմնական ուղղվածություն.

ա) մարդասիրություն հասարակության նկատմամբ, որի էությունը տուժողի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն է,

բ) մարդասիրություն հանցանք կատարած անձի նկատմամբ, որի էությունը նախևառաջ հանցանք կատարած անձին որպես անհատ դիտելն է՝ հարգել մարդու արժանապատվությունը, այսինքն՝ պատժողական քաղաքականության նվազեցում, ինչպես նաև մարդկային վերաբերմունք նրա անձի նկատմամբ, հարգանք պատվի և արժանապատվության նկատմամբ, ֆիզիկական և բարոյական տանջանքների բացառում:

Մարդասիրության սկզբունքի վերոհիշյալ տարրերը փոխկապակցված և փոխհամաձայնեցված են, դրանցից մեկի իրացումը պայմանավորված է մյուսով՝ նկատի ունենալով, որ այս երկու բաղադրիչների միջև հավասարակշռության խախտումը մի կողմից կարող է հանգեցնել խիստ պատժի՝ անտեսելով արդարության և հավասարության պահանջները, մյուս կողմից՝ օրենսդրական պահանջներին չհամապատասխանող ակնհայտ մեղմ պատժի:

14. Սույն որոշման 13-րդ կետում արված դատողությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական իրավունքը հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատժի արդարացիության չափանիշ է համարում պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների համաչափությունն արարքի հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, հանցագործության հանգամանքներինու հանցավորի անձնավորությանը, իսկ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցում՝ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի ու բնույթի և այլ հանգամանքների ամբողջական գնահատմամբ դատարանի համոզվածությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժը կրելու: Միևնույն ժամանակ, պայմանավորված մարդասիրության սկզբունքով, անհրաժեշտության դեպքում նախատեսվում է այդ հիմնադրույթներից էական շեղում քրեական ներգործության տնտեսման ուղղությամբ՝ որպես մարդասիրական վերաբերմունք հանցանք կատարած անձի նկատմամբ: Քրեական իրավունքը, որոշակիացնելով քրեական ներգործության տնտեսման ձևերը, սպառիչ կերպով չի թվարկում այն հանգամանքները, որոնք հիմք կհանդիսանան դատարանի կողմից պատժի արդարացիության հիմքում ընկած համաչափության պահանջից շեղում թույլ տալու համար: Այլ խոսքով՝ նախատեսված է այդ հանգամանքների բաց թվարկում՝ պայմանավորված այն բանով, որ մարդասիրության դրսևորման հիմքերը ոչ թե իրավական, այլ

բարոյական կատեգորիաներ են: Հանցանք կատարած անձը չի կատարում իրավական նշանակություն ունեցող որևէ դրական վարքագիծ, սակայն հանցակազմից դուրս օբյեկտիվորեն գոյություն ունեցող նրա սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները կամ դրանց փոփոխությունը հիմք են սոցիալիզացմանը համընթաց ձևավորվող սոցիալ-բարոյական համակարգի իրացմամբ վերջինիս նկատմամբ մարդասիրություն դրսևորելու համար՝ նպատակ հետապնդելով ապահովելու հասարակությունում նրա անհատականությունը և ինքնադրսևորումը: Սա ամենևին չի նշանակում որևէ հանդուրժողականություն, ներողամտություն, թողտվություն կամ դատարանի հայեցողություն հանցանք կատարած անձի նկատմամբ:

Դատարանի կողմից մարդասիրության դրսևորումը չի ենթադրում նաև պատժի նպատակներից, տուժողի, հասարակության և պետության շահերից նահանջ, այն պատճառաբանությամբ, որ այդ շեղումը համապատասխանում է հասարակության, սահմանադրական և կոնվենցիոն պահանջին և ավելի մեծ նշանակություն ունի քան պատժիչ միջոցների կիրառումը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Մ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որնա 2015 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Չեխովի 38-րդ շենքի բակում, իր և իր ընտանիքի վերաբերյալ տեղեկություններ ունենալու հանգամանքը պարզելու հարցի շուրջ վիճաբանել է Երևան քաղաքի բնակիչ Ռաֆայել Ասոևի հետ, որի ընթացքում ձեռքերով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, այնուհետև չպարզված ծակող-կտրող գործիքով դիտավորությամբ մեկ անգամ հարվածել է Ռ.Ասոևի որովայնի շրջանին և վերջինիս առողջությանը՝ ձախ քունքային, ձախ բազկի շրջանների արյունազեղումների, ձախ արմնկահոդի շրջանի քերծվածքի, որովայնի շրջանի ծակած-կտրած թափանցող վերքի, հաստ աղու էպիպլոիկայի վնասումով, հեմատոմայի առաջացումով պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս(տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, քննարկելով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը,արձանագրել է, որ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանը նախկինում արատավորված չի եղել, վատառողջ է, նրա մոտ ախտորոշվել է «ՍԻՀ, սրտամկանի սուր ինֆարկտ ՁՓ ստորին պատին, սուր սրտային անբավարարություն, զարկերակային հիպերտենզիա, շաքարային դիաբետ՝ տիպ 2, ինսուլինի պահանջ», երրորդ խմբի հաշմանդամ է, բնութագրվում է դրական, դատական քննության ընթացքում իրեն մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, շուրջ 1 ամիս 26 օր գտնվել է անազատության մեջ,եզրակացրել է, որ ամբաստայալ Մ.Հովհաննիսյանի կողմից կատարած արարքի վտանգավորության աստիճանը նվազել է, և վերջինիս ուղղվելը հնարավոր է առանց նշանակված ազատազրկման ձևով պատիժը կրելու (տես սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը, եզրահանգել է, որ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս Առաջին ատյանի դատարանը պատշաճ ուշադրություն չի դարձրել արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքին, մարմնական վնասվածքի բնույթին, տեղակայմանը, հանրորեն վտանգավոր արարքի ու դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին, ինչպես նաև՝ օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթին: Վերաքննիչ դատարանը հիմնազուրկ է համարել նաև տուժողի հակաօրինական վարքագիծը որպես մեղմացնող հանգամանք հաշվի առնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատողությունը(տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վճռաբեկ վարույթի ընթացքում ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Լ.Բաղդասարյանը դատարանին տեղեկություն է հայտնելայն մասին, որ 2017 թվականի դեկտեմբերի 11-ին ԼՂՀ Մարտակերտ քաղաքում տեղակայված զորամասի մարտական դիրքերում մարմնի բազմակի շրջաններն ընդգրկողհրազենային վնասվածքներից մահացել է ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի որդին՝ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Մարգպետունու Ադիբեկյանը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 14-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մարդասիրության սկզբունքի պահպանման տեսանկյունից անհրաժեշտ է պատշաճ իրավական ընթացակարգով ստուգման ենթարկել նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցում ուղղորդող նշանակություն ունեցող ևսույն գործի նյութերում առկա՝ վճռաբեկ վարույթի ընթացքում բողոքաբերի կողմից ներկայացվածտեղեկությունը:

Վճռաբեկ դատարանը, փաստելով, որ դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները պետք է համապատասխանեն դատարանում հետազոտված ապացույցներին, գտնում է, որ բողոքաբերի կողմից հայտնած տեղեկության վերաբերյալ հստակ, որոշակի և համոզիչ դատողություններ անելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ապացույցներ, իսկ վճռաբեկ վարույթում այդպիսիք ձեռք բերելու իրավական անհնարինության պայմաններում հնարավոր չէ ներկայացված տեղեկությունը, մասնավորապես այն, որ մահացած զինծառայողը սույն գործով ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի որդին է, որպես հաստատված հանգամանք ճանաչելը կամ հերքելը, հետևաբար նաև բացակայում է նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ հինավոր հետևության հանգելու

հնարավորությունը:

Վերոնշյալ հանգամանքի կարևորման անհրաժեշտությունը՝ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս բխում է հասարակության սոցիալ-բարոյական համակարգի շրջանակներում ամբաստանյալի՝ որպես հասարակության անդամի նկատմամբ սպասվելիք վերաբերմունքից և հիմք է դատարանի համարառանց իրական պատիժը կրելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության վերաբերյալ համոզվածության հիմքում ընկած հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատմամբ արված հետևություններից շեղում թույլ տալու համար:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մարդասիրության սկզբունքի պահպանման տեսանկյունից ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցիվերաբերյալ Վերաքննիչ դատարանի կողմիցհիմնավոր հետևության հանգելու համար վճռաբեկ վարույթի ընթացքում ի հայտ եկած վերոհիշյալ փաստական տվյալների հետազոտության արդյունքում հաստատված հանգամանքները կարող են ուղղորդող նշանակություն ունենալ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի կրման նպատակահարմարության վերաբերյալ հիմնավոր հետևության հանգելը հնարավոր է միայն վճռաբեկ վարույթի ընթացքում ի հայտ եկած փաստական տվյալների հետազոտման արդյունքում հաստատված հանգամանքերըհաշվի առնելով, որպիսի պայմաններում կապահովվի ՀՀ Սահմանադրության 3-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 11-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածների պահանջները:

Վերոնշյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանելու Վերաքննիչ դատարանի դատական ակտը և գործն ուղարկելուևույն դատարան՝ նոր քննության: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում անհրաժեշտ է ձեռնարկել օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ վճռաբեկ վարույթի ընթացքում ի հայտ եկած փաստական հանգամանքներըհետազոտելու, հաստատված փաստական հանգամանքները սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատման ենթարկելու և դրանց արդյունքներով օրենքով սահմանված կարգովնշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցումհամապատասխան հետևության հանգելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով)

91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Մարզպետունի Ադիբեկի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասովՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Մարզպետունի Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0130/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարապետ Գևորգի Հարությունյանի վերաբեյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ մեղադրյալ Կ.Հարությունյանի պաշտպան Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի հուլիսի 9-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18107117 քրեական գործը: 2017 թվականի հուլիսի 10-ին Կարապետ Գևորգի Հարությունյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ Կ.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ մեղադրյալ Կ.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը մերժվել է:

Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշումը և գործն ուղարկել է Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Կ.Հարությունյանի պաշտպան Ա.Դավթյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Կ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«2017 թվականի հուլիսի 9-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Գյումրի քաղաքի 217/631 փնակի հարևանությամբ հանդիպել է Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու 155-րդ շենքի 37-րդ բնակարանի բնակիչ Սամվել Սմբատի Հովհաննիսյանին, նախորդ օրը վերջինիս քրոջ և իր միջև վիճաբանության առիթով տեղի ունեցած վեճի հանգամանքների շուրջ պարզաբանումներ կատարելու, որի ընթացքում ծագել է վիճաբանություն և Սամվել Հովհաննիսյանին մարմնական վնասվածք հասցնելու դիտավորությամբ իր մոտ եղած դանակով դիտավորությամբ մեկ անգամ հարվածել է Սամվել Հովհաննիսյանին՝ պատճառել կրծքավանդակի աջ կեսի կտրած, ծակած, թափանցող վերքի, հեմոպնևմոթորաքսի, տրավմատիկ շոկի ձևով մարմնական վնասվածք:»* (տե՛ս նյութեր, թերթ 20):

Առաջին ատյանի դատարանը, մերժելով մեղադրյալ Կ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն ընտրելու մասին քննիչի միջնորդությունը, նշել է. *«(...) [Դ]ատարանը գտնում է, որ ներկայացված նյութերում առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալ Կարապետ Գևորգի Հարությունյանը հնարավոր է առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարմանը:*

Քննարկելով քննիչի այն պնդումը, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթ իրականացնող մարմնից, ապա դատարանը գտնում է, որ անկախ այն հանգամանքից, թե մեղսագրվող արարքը ինչ ծանրության աստիճանի է, քննիչի ենթադրությունը, որը չի հիմնավորվում գործով ձեռք բերված նյութերից, ապացույցներից կամ այլ փաստական տվյալներից, չի կարող դրվել Կ.Հարությունյանի կալանավորման հիմքում:

Դատարանը նաև հիմնազուրկ է համարում քննիչի այն պատճառաբանությունը, թե մեղադրյալը դեպքի վայրից դիմել է փախուստի, կամավոր չի ներկայացել ոստիկանություն և հաջորդ օրը բերման է ենթարկվել, քանի որ մինչ միջնորդության քննարկումը, ձերբակալման 72 ժամը լրացած լինելու հիմքով, մեղադրյալ Կ.Հարությունյանը, ազատ արձակվելով դատական նիստերի դահլիճում, փախուստի փորձ չի կատարել:

Ինչ վերաբերում է քննիչի այն պնդմանը, որ մեղադրյալը հնարավոր է անօրինական ազդեցություն գործադրի քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա, ապա դատարանը գտնում է, որ ըստ սույն միջնորդությանը կից ներկայացված՝ կասկածյալի հարցաքննության և ձերբակալման արձանագրությունների՝ Կ.Հարությունյանը հայտնել է իրեն մերկացնող տեղեկություններ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ չկա որևէ ողջամիտ ենթադրություն ապագայում այլ բովանդակության ցուցմունքներ տալու նպատակի մասին, առավել ևս ցուցմունքներ փոխելու փոխպայմանավորվածություն ձեռք բերելու մասին, ինչպիսի նպատակի մասին քննիչը գործի նյութերից բխող լրացուցիչ այլ փաստական հանգամանքներ չներկայացրեց, ինչն էլ իր հերթին դատարանին հիմք է տալիս ենթադրելու, որ այդ հավանական գործողության մերժավախությունը ևս հիմնազուրկ է:

Ինչ վերաբերում է դեպքի նախորդ օրը տեղի ունեցած վիճաբանության պատճառով հետագայում վիճաբանությունը շարունակելու մերժավախությանը, ապա ըստ սույն միջնորդությանը կից ներկայացված նյութերի՝ այդ վիճաբանությունը տեղի է ունեցել ոչ թե տուժողի, այլ նրա քրոջ հետ, և նախահարձակը եղել է տուժողի քույրը, հետևաբար հիմնազուրկ է նաև այդ պատճառաբանությունը: (…)» (տե՛ս նյութեր, թերթ 34):

7. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, նշել է. *«[Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին] միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր պահանջելու լիազորությունը դատավորի կողմից չի կարող իրականացվել կամայականորեն, այլ պետք է նպատակ հետապնդի ապահովելու անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության լիարժեք քննությունը: Նշվածի համատեքստում Վերաքննիչ դատարանը գտնում է նաև, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության մեջ նշված հանգամանքների և փաստարկների վերաբերյալ դատավորը պետք է պահանջի լրացուցիչ նյութեր, եթե այդպիսիք չեն ներկայացվել միջնորդությանը կից:*

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, հակառակ մոտեցման պայմաններում (…) անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների դատական քննությունը կկրի ձևական բնույթ, իսկ դատարանը զրկված կլինի միջնորդությունը լիարժեք քննելու հնարավորությունից:

(…)

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ եթե անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության մեջ նշված՝ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը բնութագրող հանգամանքների և փաստարկների վերաբերյալ նյութեր կցված չլինեն միջնորդությանը և դատավորը չպահանջի լրացուցիչ նյութեր, ապա դատարանը զրկված կլինի մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն կատարելու, ինչպես նաև օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնելու հնարավորությունից:

Նույն կերպ վերադաս դատական ատյանն անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության քննության արդյունքում դատարանի կայացրած որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս զրկված կլինի մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն կատարելու և այդ կապակցությամբ բողոքաբերի փաստարկներին անդրադառնալու հնարավորությունից, ինչի արդյունքում վերադաս դատական ատյանի որոշումը չի համապատասխանի դատական ակտերին ներկայացվող օրինականության և հիմնավորվածության պահանջներին:

Վերը նշված եզրահանգումների լույսի ներքո Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ մեղադրյալ Կարապետ Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Քննիչի միջնորդության մեջ նշված են եղել մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը բնութագրող մի շարք հանգամանքներ, մասնավորապես այն, որ Սամվել Հովհաննիսյանին մարմնական վնասվածք հասցնելու դիտավորությամբ Կարապետ Հարությունյանն իր մոտ եղած դանակով դիտավորությամբ մեկ անգամ հարվածել է նրան և պատճառել կրծքավանդակի աջ կեսի կտրած, ծակած, թափանցող վերքի, հեմոպնևմոթորաքսի, տրավմատիկ շոկի ձևով մարմնական վնասվածք:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ Քննիչի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերում (...) առկա չեն եղել տվյալներ այն մասին, որ Կարապետ Հարությունյանը Սամվել Հովհաննիսյանին հարվածել է իր մոտ եղած դանակով, ինչպես նաև առկա չեն տվյալներ Սամվել Հովհաննիսյանի ստացած մարմնական վնասվածքների վերաբերյալ:

Ինչպես երևում է դատական նիստի արձանագրությունից, Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Կարապետ Հարությունյանին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը բնութագրող վերոգրյալ հանգամանքների վերաբերյալ Քննիչից չի պահանջել լրացուցիչ նյութեր, որպիսի պայմաններում Առաջին ատյանի դատարանը զրկված է եղել մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն

կատարելու, ինչպես նաև օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնելու հնարավորությունից: Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը հատկանշական է համարում նաև այն, որ Քննիչի միջնորդության մեջ նշված է եղել, որ միջադեպին ականատես է եղել նաև Մարիամ Պետրոսյանի որդի Կարենը, մինչդեռ Առաջին ատյանի դատարանը չի պարզել վերջինի հարցաքննված լինելու հանգամանքը և որպես լրացուցիչ նյութ՝ չի պահանջել նրա հարցաքննության արձանագրությունը, այլ բավարարվել է միայն միջադեպի վերաբերյալ մեղադրյալ Կարապետ Հարությունյանի և վերջինի ընկեր Արթուր Մոլեգյանի ցուցմունքներով:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը ևս զրկված է մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն կատարելու և այդ կապակցությամբ (...) [դատախազի] կողմից բերված վերաքննիչ բողոքի փաստարկներն ըստ էության քննարկելու հնարավորությունից:

(...)

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի խախտում, որը հանգեցրել է անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Այդ խախտումն իր բնույթով էական է, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է կայացած դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար: (...)» (տե՛ս նյութեր, թերթ 91-92):

8. Նախաքննության մարմնի կողմից մեղադրյալ Կ.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության կապակցությամբ դատարան են ներկայացվել հետևյալ նյութերը.

- քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին որոշումը,
- Ս.Հովհաննիսյանին տուժող ճանաչելու մասին որոշումը,
- Կ.Հարությունյանի ձերբակալման արձանագրությունը,
- Ա.Մոլեգյանի որպես վկա հարցաքննության արձանագրությունը,
- Կ.Հարությունյանի որպես կասկածյալ հարցաքննության արձանագրությունը,
- Կ.Հարությունյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը,
- Կ.Հարությունյանի որպես մեղադրյալ հարցաքննության արձանագրությունը (տե՛ս նյութեր, թերթ 2-21):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, ինչպես նաև խախտել է Վճռաբեկ դատարանի՝ Ա.Ճուղուրյանի և Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ հետևության այն հարցի կապակցությամբ, որ չնայած հանցավոր արարքի առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությանը, ներկայացված նյութերով չի հիմնավորվել քննիչի ենթադրությունն այն մասին, որ Կ.Հարությունյանը, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Մասնավորապես՝ քննիչն իր միջնորդությամբ հայտնել է, որ մեղադրյալը դեպքի վայրից դիմել է փախուստի, մեղայականով չի ներկայացել ոստիկանություն և դեպքի հաջորդ օրը բերման է ենթարկվել, բայց դատարանն այդ փաստարկներն իրավամբ համարել է որպես սոսկ քննիչի ենթադրություններ, քանի որ դրանք չեն հիմնավորվել գործում առկա ապացույցներով: Առաջին ատյանի դատարանը նաև առարկայազուրկ է համարել քննիչի այն դատողությունը, որ մեղադրյալը հնարավոր է անօրինական ազդեցություն գործադրի քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա, քանի որ Կ.Հարությունյանի որպես կասկածյալ հարցաքննության և ձերբակալման արձանագրություններում վերջինս հայտնել է իրեն մերկացնող տեղեկություններ, ինչը հիմք է տվել ենթադրելու, որ չկա որևէ ողջամիտ ենթադրություն՝ ապագայում այլ բովանդակության ցուցմունքներ տալու մեղադրյալի նպատակի մասին, հետևաբար իրավացիորեն եզրահանգել է, որ քննիչի այդ մտավախությունը ևս հիմնազուրկ է:

Բողոքաբերը փաստել է նաև, որ իր պաշտպանյալը, ավելի քան հինգ ամիս ազատության մեջ մնալով, որևէ անօրինական գործողություն չի կատարել և չի դրսևորել բացասական վարքագիծ, հետևաբար Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին որոշում կայացնելով, խաթարել է արդարադատության բուն էությունը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշումը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդության քննության արդյունքում կայացված որոշման վերաքննիչ վերանայման սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության

ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

I. Լրացուցիչ նյութեր պահանջելու իրավասությունը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս նախաքննության մարմնից լրացուցիչ նյութեր չպահանջելով, զրկել է իրեն մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն կատարելու, ինչպես նաև օրինական և հիմնավորված որոշում կայացնելու հնարավորությունից:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն: (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական*

նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Դատարանը քննում է (...) անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը» վերնագրված 285-րդ հոդվածի համաձայն՝

« (...)

4. Միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ:

5. Քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին:

(...)»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Գ. *Գալստյանի* վերաբերյալ գործով որոշմամբ, քննարկման առարկա դարձնելով մեջբերված նորմերը, անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները քննելիս դատարանի կողմից լրացուցիչ նյութեր պահանջելու լիազորության վերաբերյալ ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «*(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածով կարգավորվում է դատավարական հարկադրանքի միջոցներից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարաձգելու նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը: Մասնավորապես, հիշյալ կառուցակարգի շրջանակներում դատարանը միջնորդության և դրա կապակցությամբ ներկայացված նյութերի քննության արդյունքում կայացնում է այն բավարարելու կամ մերժելու մասին որոշում: Ընդ որում, միջնորդությունը հիմնավորող նյութերի բավարարության հարցը գնահատում է միջնորդությունը քննող դատարանը, որն անրաժեշտության դեպքում իրավասու է պահանջելու լրացուցիչ նյութեր կամ բացատրություններ: Ընդ որում, լրացուցիչ նյութեր կամ բացատրություններ պահանջելը դատարանի հայեցողական լիազորությունն է (...)» տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի Գևորգ Գալստյանի վերաբերյալ գործով թիվ ՇԴ/0182/06/16 *որոշման 14-րդ կետը):*

Վ. Գևորգյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) *[Կ]ալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաս-*

տական փոխլրացներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է:

Հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը:

(…) քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը՝

ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը,

գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյոք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը ևս պետք է հիմնավորված լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված համապատասխան տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով: (…)» (տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-րդ և 22-րդ կետերը):

14. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով մեջբերված նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ նախաքննության մարմինը մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին

ներկայացրած միջնորդության հետ պարտավոր է դատարան ներկայացնել առնվազն հետևյալ նյութերը՝

ա. անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը հավաստող նյութեր,

բ. քրեական գործ հարուցելու մասին որոշում,

գ. անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում,

դ. մեղադրյալի ինքնությունը հաստատող փաստաթղթի պատճենը,

ե. մեղադրյալի տարիքը հավաստող փաստաթուղթ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու որոշակի տարիքի հասած լինելու կասկածի դեպքում,

զ. անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորելու համար, այն հաղթահարելու մասին իրավասու մարմնի որոշում,

է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ նյութեր, ապացույցներ:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինն է կրում վերը թվարկված նյութերը դատարան ներկայացնելու պարտականությունը, որով վերջինս փորձում է հիմնավորել կալանավորման պայմանների ու հիմքերի առկայությունը: Ընդ որում, նախաքննության մարմինը կրում է ներկայացված նյութերի ամբողջականության, հավաստիության, դրանք կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար բավարարության ռիսկերը: Մինչդեռ դատարանի համար նախաքննության մարմնի կողմից միջնորդության հետ դատարան ներկայացված նյութերից բացի լրացուցիչ նյութեր պահանջելը գտնվում է դատարանի հայեցողական լիազորությունների տիրույթում: *(դատարանի հայեցողական լիազորությունների բնույթի մանրամասն վերլուծությունը, mutatis mutandis, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի Համլետ Դավթյանի վերաբերյալ գործով թիվ ՇԴ/0126/01/12 որոշումը):*

Այլ կերպ՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորման որպես խափանման միջոցի ընտրության հարցը քննության է առնվում իրավասու դատարանի կողմից նախնական քննության նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի շրջանակներում՝ ապահովելով կողմերի (մեղադրյալ և նախաքննության մարմին) մրցակցությունը: Իսկ դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող մարմին, հանդես չի գալիս մեղադրյալի կամ նախաքննության մարմնի կողմում և արտահայտելով բացառապես իրավունքի շահը՝ լուծում է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը՝ ներկայացված միջնորդության և այդ միջնորդության կապակցությամբ դատարան ներկայացված նյութերի սահմաններում: Իսկ նյութերի ոչ ամբողջական լինելու և դատարանի կողմից նախաքննության մարմնից հայցված նյութերը չներկայացնելու բացասական

հետևանքները կրում է միջնորդությունը ներկայացրած անձը:

II. Կայացված որոշումը վերանայելու օբյեկտիվ հնարավորությունը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, սույն գործով լրացուցիչ նյութեր չպահանջելով, սահմանափակել է իր կայացրած որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով:

(…)

3. Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝

«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

2. Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:

(…)

5. Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.

2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.

3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին:

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) [Դ]ատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական որոշումների բողոքարկումը և ստուգումը կատարվում են սույն օրենսգրքի 287 և 288 հոդվածներով նախատեսված կանոններով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով սահմանված կարգով իրականացվում են, ի թիվս այլոց, դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու, այդ թվում՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը քննարկելու արդյունքում կայացված դատական որոշումների բողոքարկումը և ստուգումը:

17. Հիշյալ հոդվածները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Գոո Դուրյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում՝ արձանագրելով՝ *«(…) [Վ]երաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշման դատական վերանայման սահմանները կանխորոշվում են առաջին ատյանի դատարանում քննության առարկա դարձած կալանավորման հիմքերի, դրանք հաստատող փաստական տվյալների շրջանակներով, որոնց հիման վրա էլ վերաքննիչ դատարանը ստուգում է վերանայվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնում օրենքով նախատեսված որոշումներից մեկը՝ կալանքը վերացնելու և անձին ազատելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս)»* (տե՛ս Գ.Դուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշման 20-րդ կետը):

Գ.Գալստյանի վերաբերյալ գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Վ]երաքննիչ դատարանը որպես կանոն պարտավոր է հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի կարգով քննության արդյունքում կայացված որոշումը դատական ստուգման ենթարկել այն նյութերում պարունակվող փաստական տվյալների շրջանակներում, որոնք հետազոտվել են ստորադաս դատարանում, և միայն դրանց հիման վրա գնահատական տալ համապատասխան միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին առաջին ատյանի դատարանի հետևությունների իրավաչափությանը: Այլ խոսքով՝ առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս վերաքննիչ դատարանը պետք է հիմք ընդունի ստորադաս ատյանի դատարանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համատեքստում համապատասխան գնահատական տա բողոքաբերի փաստարկներին: Գտնելով, որ դատարանի հետևությունները չեն համապատասխանում նրա տրամադրության տակ եղած նյութերին, կամ վերջիններս բավարար չեն համապատաս-*

խան խափանման միջոցի պայմանները և հիմքերը հաստատված գնահատելու համար՝ վերաքննիչ դատարանը պետք է արձանագրի դատարանի հետևության հիմնավորված չլինելու փաստը՝ կայացնելով օրենքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասով) նախատեսված համապատասխան որոշումը: (...)» (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի Գևորգ Գալստյանի վերաբերյալ գործով թիվ ՇԴ/0182/06/16 որոշման 14-րդ կետը):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ մերժել է մեղադրյալ Կ.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը: Դատարանը գտել է, որ ներկայացված նյութերում չնայած և առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարմանը, սակայն նույն ժամանակ դրանցով (ներկայացված նյութերով) չի հիմնավորվում, որ վերջինս, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթ իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն գործադրել քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա (տե՛ս սույն որոշման 2-րդ, 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, դատախազի վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերը քննարկման առարկա չդարձնելով, վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 13-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության: Իր որոշումը Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նրանով, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի խախտում, որը հանգեցրել է անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Կ.Հարությունյանին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը բնութագրող հանգամանքների վերաբերյալ քննիչից չի պահանջել լրացուցիչ նյութեր, որպիսի պայմաններում Առաջին ատյանի դատարանը զրկված է եղել մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն կատարելու, ինչպես նաև օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնելու հնարավորությունից, և բացի այդ, Առաջին ատյանի դատարանը, բավարարվելով իր տրամադրության տակ եղած նյութերով և նախաքննության մարմնից լրացուցիչ նյութեր չպահանջելով, զրկել է Վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկներն ըստ էության քննարկելու և Առաջին ատյանի դատարանի որոշմանն իրավական գնահատական տալու հնարավորությունից (տե՛ս սույն որոշման 2-րդ, 6-րդ կետերը):

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը քննարկել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը և դատարան ներկայացված նյութերի հետազոտմամբ գտել, որ դրանցով չեն հիմնավորվում նախաքննության մարմնի հետևություններն առ այն, որ մեղադրյալ Կ.Հարությունյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթ իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն գործադրել քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, նյութերի անբավարարության և լրացուցիչ նյութեր պահանջելու անհրաժեշտության պատճառաբանությամբ բեկանելով և նոր քննության ուղարկելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, վերջինիս վրա դրել է օրենքից չբխող անհամաչափ պարտականություններ, ինչպես նաև դուրս է եկել վերաքննիչ վերանայման սահմաններից:

19.1. Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով կողմերի մրցակցության իրավունքը նախնական քննության նկատմամբ դատական վերահսկողության սահմաններում, որոշում է կայացրել մեղադրյալ Կ.Հարությունյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին: Ընդ որում, այդ հարցի քննության հիմք հանդիսացող միջնորդություն հարուցելու մասին որոշման հետ միասին նախաքննության մարմինն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով սահմանված անհրաժեշտ հիմնական նյութերը: Մասնավորապես, նախաքննության մարմինը կալանավորման պայմանների և հիմքերի առկայության ապացուցման իր պարտականության ապահովման նպատակով դատարան է ներկայացրել քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին որոշումը, Ս.Հովհաննիսյանին տուժող ճանաչելու մասին որոշումը, Կ.Հարությունյանի ձերբակալման արձանագրությունը, Ա.Մոլեգյանի որպես վկա հարցաքննության արձանագրությունը, Կ.Հարությունյանի որպես կասկածյալ հարցաքննության արձանագրությունը, Կ.Հարությունյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը, Կ.Հարությունյանի որպես մեղադրյալ հարցաքննության արձանագրությունը:

Այս առումով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը նախաքննության մարմնի ներկայացրած նյութերի՝ ամբողջականության, հավաստիության, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար դրանց բավարարության տեսանկյունից հետազոտելու արդյունքում գտել է, որ դրանք բավարար չեն մեղադրյալ Կ.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար, և այս համատեքստում Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի

դատարանի համար ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված հիմքերը հիմնավորող լրացուցիչ նյութեր պահանջելու պարտականություն սահմանելը չի բխում մրցակցային դատավարության, դատարանի անաչառության ապահովման հիմնարար սկզբունքներից:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի հետևությանը, ըստ որի՝ Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա պահանջեր լրացուցիչ նյութեր, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ այդ լիազորությունը կրում է հայեցողական բնույթ, որը սահմանափակված է քրեական դատավարության մրցակցության սկզբունքով, իսկ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին վարույթ իրականացնող մարմնի ներկայացրած միջնորդության և կից նյութերի ամբողջականության, հավաստիության և դրանց բավարարության ապահովման պատասխանատվությունը կրում է միջնորդություն հարուցած մարմինը:

Հետևաբար հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս նախաքննության մարմնից լրացուցիչ նյութեր չպահանջելով, զրկել է իրեն մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն կատարելու, ինչպես նաև օրինական և հիմնավորված որոշում կայացնելու հնարավորությունից:

19.2. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը ստուգելիս դուրս է եկել իր դատավարական լիազորությունների սահմաններից:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր վերանայվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկել Առաջին ատյանի դատարանում ներկայացված նյութերի շրջանակներում և արդյունքում կա՛մ հաստատեր վիճարկվող որոշման օրինականությունը, կա՛մ, բավարարելով դատախազի վերաքննիչ բողոքը, բեկաներ որոշումը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելով նախաքննության մարմնի՝ մեղադրյալ Կ.Հարությունյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը նշված բողոքի քննության արդյունքում չի կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումներից մեկը, ուստի դատական ակտի բեկանման և նոր քննության ուղարկման հիմքում դրված Վերաքննիչ դատարանի փաստարկները չեն բխում քրեադատավարական օրենսդրության պահանջներից:

Հետևաբար հիմնավորված չէ նաև Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, սույն գործով լրացուցիչ նյութեր

չպահանջելով, սահմանափակել է իր կայացրած որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը:

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ, 285-րդ և 288-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, որի ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության պատշաճ քննարկման առարկա դարձնի դատախազի վերաքննիչ բողոքը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և կայացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան որոշումներից մեկը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Կարապետ Գևորգի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0274/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ ամբաստանյալ՝ Լ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
պաշտպան՝ Կ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ
տուժողի ներկայացուցիչ՝ Հ.ԱՆԱՆՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Լևոն Ռաֆիկի Սողոմոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի, տուժողներ Սերգեյ Մարդոյանի և «Սեյվր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Անանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնի քննիչ Վ.Բադալյանի՝ 2014 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 15134714 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ Լևոն Ռաֆիկի Սողոմոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ

մասի 1-ին կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ մեղադրյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 24-ի որոշմամբ մեղադրյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է երկու ամսով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 26-ի որոշմամբ մեղադրյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը կրկին երկարացվել է երկու ամսով, միաժամանակ, դատարանը բավարարել է պաշտպանական կողմի միջնորդությունը և թույլատրելի է ճանաչել մեղադրյալ Լ.Սողոմոնյանին գրավով ազատելը՝ գրավի չափ սահմանելով 3.000.000 ՀՀ դրամը:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2015 թվականի հունիսի 10-ի որոշմամբ բեկանել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 26-ի որոշումը՝ անթույլատրելի ճանաչելով Լ.Սողոմոնյանին գրավով ազատելը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ մեղադրյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը կրկին երկարացվել է երկու ամսով, միաժամանակ, մերժվել է Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանական կողմի միջնորդությունը:

Մեղադրյալ Լ.Սողոմոնյանի պաշտպան Կ.Կիրակոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ մասնակի բավարարել է բողոքը, Լ.Սողոմոնյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու մասով բեկանել ու փոփոխել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 5-ի որոշումը և մեղադրյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ կիրառել է գրավ՝ 5.000.000 ՀՀ դրամի չափով:

3. Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Լ.Սողոմոնյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 324-րդ հոդվածի 2-րդ մասով:

2015 թվականի նոյեմբերի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական

շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 7-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Լևոն Սողոմոնյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Նույն դատավճռով Լևոն Սողոմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 324-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ամբաստանյալ Լ.Սողոմոնյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով՝ տուգանքի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված կանոններով նշանակված պատժին հաշվակցվել է ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի կալանքի տակ գտնվելու 6 (վեց) ամիս 22 (քսաներկու) օր ժամկետը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 5(հինգ) ամիս 9 (ինը) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) դրամի չափով:

Լևոն Սողոմոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ գրավը, փոփոխվել է, նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, և Լ.Սողոմոնյանը կալանավորվել է դատական նիստերի դահլիճում:

5. Մեղադրող Ա.Մանուկյանի, ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի պաշտպան Ա.Սիրունյանի, տուժող Ս.Մարդոյանի ներկայացուցիչ Հ.Անանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հունվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն, բեկանել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 7-ի դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Որոշվել է նաև ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ:

6. Գործի նոր քննության ընթացքում ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի պաշտպաններ Ա.Սիրունյանը և Կ.Կիրակոսյանը միջնորդություն են ներկայացրել ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ մերժվել է:

7. Ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի պաշտպան Կ.Կիրակոսյանի բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հոկտեմբերի

9-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը, ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը փոխարինել է այլընտրանքային խափանման միջոց գրավով՝ գրավի չափ սահմանելով 5.000.000 ՀՀ դրամը:

8. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, տուժողներ Սերգեյ Մարդոյանի և «Սեյվր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Անանյանը, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի պաշտպան Կ.Կիրակոսյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի, տուժողներ Սերգեյ Մարդոյանի և «Սեյվր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Անանյանի վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը մերժել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

9. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո՝ քրեական գործի դատական քննության ժամանակ, քննարկելով ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպաններ Ա.Սիրունյանի և Կ.Կիրակոսյանի կողմից ներկայացված միջնորդությունը և 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ մերժելով այն, նշել է. *«(…) [Ներկայացված միջնորդությունը] ենթակա է մերժման, քանի որ շարունակում են առկա լինել Լևոն Սողոմոնյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերը (…): Ինչ վերաբերում է միջնորդությամբ հայտնված այն հանգամանքներին (որ դատաքննությունը սկսվում է նորից և նախկինում վկաները հարցաքննվել են), ապա Դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն գալու եզրահանգման, որ ամբաստանյալ Լևոն Սողոմոնյանը ազատության մեջ մնալով, չի թաքնվի վարույթ իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն չի ունենա դատավարության մասնակցող անձանց վրա:*

(…)

Դատարանը, հաշվի առնելով Լևոն Սողոմոնյանին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորող վերոգրյալ հանգամանքը (…) գտնում է, որ նրա պատշաճ վարքագիծը հնարավոր չէ ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ (…)» (տե՛ս քրեական գործի հավելված, հատոր 1-ին, թերթ 7):

10. Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը, նշել է. *«(…) Վիճարկվող դատական ակտի*

ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Լևոն Սողոմոնյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելն առաջին ատյանի դատարանը պատճառաբանել է նրանով, որ տվյալ դեպքում շարունակում են առկա լինել Լևոն Սողոմոնյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերը, մասնավորապես այն, որ նրան վերագրվում է նաև ծանր հանցագործություն, որի համար պատիժ է նախատեսված ազատազրկում հինգից ութ տարի ժամկետով, որպիսի պայմաններում ազատության մեջ մնալու դեպքում նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը բարձր է:

Անդրադառնալով պաշտպանների կողմից միջնորդությամբ հայտնած այն հանգամանքներին, որ դատաքննությունն սկսվում է նորից և վկաները նախկինում հարցաքննվել են, առաջին ատյանի դատարանը գրել է, որ դրանք բավարար չեն գալու այն եզրահանգման, որ մնալով ազատության մեջ ամբաստանյալ Լևոն Սողոմոնյանը չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն չի ունենա դատավարությանը մասնակցող անձանց վրա:

Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ առաջին ատյանի դատարանի նման եզրահանգումը, քանի որ գործով վկաների կողմից արդեն իսկ մեկ անգամ հարցաքննված լինելու պարագայում Լևոն Սողոմոնյանի կողմից նրանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հավանականությունը նվազում է:

Ինչ վերաբերում է առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությանը, համաձայն որի՝ Լևոն Սողոմոնյանին վերագրվող արարքների բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը թույլ են տալիս գալ եզրահանգման, որ մնալով ազատության մեջ Լևոն Սողոմոնյանը կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, դրանով իսկ խոչընդոտելով դատարանում գործի քննությանը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործի քննության փուլում Լևոն Սողոմոնյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գրավի կիրառմամբ, որը, որպես բավարար և ողջամիտ միջոց, կարող է հաղթահարել նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու մտավախությունը:

Նման եզրահանգման Վերաքննիչ դատարանը հանգում է հաշվի առնելով նաև այն, որ Լևոն Սողոմոնյանն ունի մշտական բնակության վայր, ամուսնացած է, բարձրագույն կրթությամբ, նախկինում դատապարտված չի եղել (...)» (տե՛ս քրեական գործի հավելված, հատոր 2-րդ, թերթեր 152-153):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքաբեր, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը, թույլ է տվել դատական սխալ, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-136-րդ, 143-րդ հոդվածների պահանջները, որոնք ազդել են գործի ելքի վրա: Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել *Դավիթ Ալիխանյանի, Ասլան Ավետիսյանի* և *Արամ Ճուղուրյանի* վերաբերյալ գործերով որոշումներում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ առկա հանգամանքների պարագայում գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելի չէ ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ, քանի որ սույն քրեական գործի նյութերով հիմնավորվել է, որ Լ.Սողոմոնյանը մինչև նախաքննության ընթացքում կալանավորվելը բազմիցս խուսափել է նախաքննական մարմին ներկայանալուց և թաքնվել է, այսինքն՝ միանշանակ կերպով առկա է եղել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը: Լ.Սողոմոնյանին մեղսագրվում են երեք հանցագործություններ՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության և ծանր, որոնցից հատկապես վերջինի պատժի խստությունն էապես բարձրացնում է վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, հետագայում՝ պատժի կրումից խուսափելու հավանականությունը, մանավանդ որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը նրան յոթ տարի ժամկետով ազատազրկման դատապարտելիս արդեն իսկ մեկ անգամ նման հետևության հանգել է:

11.1. Բողոքի հեղինակը, ի թիվս այլոց, նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն քրեական գործով դատավճիռը բեկանելու և քրեական գործն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ուղարկելու մասին որոշում կայացնելուց հետո քրեական գործով չի փոխվել որևէ հանգամանք, որը կարող է ազդեցություն ունենալ կիրառված խափանման միջոցի փոփոխության համար: Իսկ 2017 թվականի հունվարի 24-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանը որոշել էր Լ.Սողոմոնյանի նկատմամբ ընտրված կալանավորում խափանման միջոցը թողնել անփոփոխ, հետևաբար նույն Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումն անընդունելի է նաև այս տեսանկյունից:

11.2. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը և անթույլատրելի ճանաչել ամբաստանյալ Լ.Սողոմոնյանին կալանքից գրավով ազատելը:

12. Բողոքաբեր, տուժողներ Սերգեյ Մարդոյանի և «Սեյվր» ՍՊԸ-ի

ներկայացուցիչ Հ.Անանյանը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ թույլ է տվել դատական սխալ, խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ, 20-րդ հոդվածների պահանջները, որը ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես, ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը չի ծանուցել և չի տեղեկացրել տուժող Ս.Մարդոյանին, «Սեյվր» ՍՊ ընկերության տնօրենին և նրանց ներկայացուցչին դատական նիստի օրվա և ժամի մասին՝ անտեսելով, որ առաջին ատյանի դատարանում գտնվող գործով վերջիններս նույնպես դատավարության մասնակիցներ են, մասնակցել են տվյալ դատական նիստին, հայտնել են կարծիքներ, հակափաստարկներ և ողջամտորեն պետք է հնարավորություն ունենային ներկա գտնվելու նաև Վերաքննիչ դատարանում՝ իրացնելու համար լսելի լինելու իրենց իրավունքը:

Բացի այդ, բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից որպես գրավի գումար սահմանված 5 միլիոն ՀՀ դրամը այս գործով չի կարող իրական երաշխիք լինել ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի պատշաճ վարքագիծն ապահովելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս մեղսագրված է 160 միլիոն ՀՀ դրամի հափշտակություն:

12.1. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների իմաստին և բովանդակությանը, քանի որ ընդհանուր իրավասության դատարանում գործի ըստ էության քննության ժամանակ դատարանի՝ միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկումը չի կարող լինել անվերապահ և անսահմանափակ: Ըստ բողոքաբերի՝ գործնականում նշված հարցի կապակցությամբ չկա միասնական մոտեցում, գործում են երկակի ստանդարտներ: Բողոքաբերի կարծիքով՝ դատավարության այդ փուլում դատական ակտի բողոքարկման չկանոնակարգվածությունը և դրա փոխարեն այն փաստացի բողոքարկելը, որոշ դեպքերում Վերաքննիչ դատարանի կողմից վարույթ ընդունելը և քննության առնելը առաջացնում են քաոսային իրավիճակներ:

12.2. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմանը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու մասին առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո կայացրած որոշման՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման

հնարավորության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առաջնային քննարկման ենթակա է այն իրավական հարցը, թե արդյոք Վերաքննիչ դատարանն իրավասու էր վերանայելու ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը:

15. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը (...)»*:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածը սահմանում է. «*Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝*

(...)

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու (...) որոշումները.

(...)»:

Մեջբերված քրեադատավարական նորմից հետևում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են միայն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները: Այլ կերպ՝ քրեադատավարական օրենքը չի նախատեսում ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու (ներառյալ՝ կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու) մասին առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո (այլ կերպ՝ դատական քննություն նշանակելու մասին որոշման կայացումից հետո դատական նիստում դատավարության համապատասխան մասնակիցների մասնակցությամբ քննարկումների արդյունքների հիման վրա) կայացրած որոշման՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն: Օրենսդրի այսպիսի մոտեցումը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է առաջին հերթին արդարադատության արդյունա-

վետության շահով: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հակառակ մոտեցումը մի կողմից կարող է իր բացասական ազդեցությունը թողնել առաջին ատյանի դատարանում հիմնական քրեական գործի քննության հետագա ընթացքի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով նաև առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը, մյուս կողմից՝ պարունակում է վերադաս դատարանի բնականոն գործունեությունը խաթարելու վտանգ (հաշվի առնելով դատական քննության ընթացքում այդպիսի միջնորդություններ ներկայացնելու քանակի տեսանկյունից որևէ արգելքի բացակայությունը, ուստիև դրանց քննարկման արդյունքում կայացված համապատասխան որոշումների՝ վերադասության կարգով անընդմեջ և անսահմանափակ բողոքարկման հնարավորությունը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանության շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) փաստել է, որ նշյալ նորմը չի պարտավորեցնում պայմանավորվող պետություններին երաշխավորելու երկրորդ ատյանի դատարանի կողմից կալանավորման օրինականությունը ստուգելու և անձին ազատ արձակելու միջնորդությունը քննության առնելու ընթացակարգեր[1]: Ըստ Եվրոպական դատարանի՝ վերջինիս խնդիրը չէ պարզել, թե դատական վերանայման ինչպիսի եղանակն է ամենահարմար ձևը[2]: Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ իրավական պաշտպանության գոյություն ունեցող միջոցը պետք է լինի բավարար չափով որոշակի[3], իսկ կալանքի օրինականությունը պետք է ստուգվի ողջամիտ պարբերականությամբ[4]:

15.1. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, սահմանափակելով խնդրո առարկա որոշման վերադասության կարգով անմիջական բողոքարկման հնարավորությունը, ըստ էության, նպատակ է հետապնդել երաշխավորելու, ի թիվս այլոց, առաջին ատյանի դատարանում հիմնական քրեական գործի բնականոն քննության ապահովումը, ինչպես նաև ստորադաս դատարանի ներքին անկախությունը: Դրա հետ մեկտեղ նշվածը չի բացառում համապատասխան որոշման բողոքարկման հնարավորությունը, սակայն դա հետաձգվում է ավելի ուշ փուլ, այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի հետ միասնական բողոքարկման միջոցով:

[1] Տե՛ս, ի թիվս այլնի, *Kucera v. Slovakia* գործով 2007 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 48666/99, կետ 107:
[2] Տե՛ս, mutatis mutandis, *Shtukaturov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 44009/05, կետ 123:
[3] Տե՛ս, mutatis mutandis, *Vachev v. Bulgaria* գործով 2004 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 42987/98, կետ 71:
[4] Տե՛ս, mutatis mutandis, *Shishkov v. Bulgaria* գործով 2003 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 38822/97, կետ 88:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը քննող դատարանի կողմից կալանավորման օրինականությունը պարբերաբար ստուգելու, ինչպես նաև քննարկվող որոշման՝ հետաձգված կարգով բողոքարկման հնարավորության պայմաններում օրենսդիրը չի նախատեսել այդ որոշման՝ վերաքննության կարգով անմիջականորեն բողոքարկելու իրավունք:

16. Սույն գործի փաստերից հետևում է, որ ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի պաշտպաններ Ա.Սիրունյանը և Կ.Կիրակոսյանը միջնորդություն են ներկայացրել ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին, որը դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո՝ գործի դատական քննության ժամանակ, քննարկվել և Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ մերժվել է (տե՛ս սույն որոշման 6-րդ և 9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, քննության առնելով Առաջին ատյանի դատարանի նշյալ որոշման դեմ պաշտպան Կ.Կիրակոսյանի կողմից ներկայացված բողոքը, արդյունքում բեկանել է այն, ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը փոխարինել է այլընտրանքային խափանման միջոց գրավով՝ գրավի չափ սահմանելով 5.000.000 ՀՀ դրամը (տե՛ս սույն որոշման 7-րդ և 10-րդ կետերը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-15.1.-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերանայելու ամբաստանյալ Լ.Սողոմոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանական կողմի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ կետով և 381-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջները և Առաջին ատյանի դատարանի համապատասխան որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննության է առել այն պայմաններում, երբ նշված որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը ենթակա չէր քննության:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով որոշում կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի, 376.1-րդ հոդվածի 4-րդ կետի և 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Խախտումներն իրենց

բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է վերջինիս կողմից կայացված դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի որոշմանն օրինական ուժ տալու համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Վերաքննիչ դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 5.000.000 ՀՀ դրամը ենթակա է վերադարձման գրավատուին:

19. Ինչ վերաբերում է բողոքաբերների կողմից վճռաբեկ բողոքում բարձրացված մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-12-րդ կետերը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում դրանց անդրադառնալն առարկայազուրկ է, քանի որ սույն գործով Վերաքննիչ դատարանն ի սկզբանե իրավասու չէր քննության առնելու Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ ներկայացված բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Լևոն Ռաֆիկի Սողոմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը բեկանել՝ օրինական ուժ տալով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու միջնորդությունը մերժելու մասին 2017 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմանը:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 5.000.000 ՀՀ դրամը վերադարձնել գրավատուին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԲ-17/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի մարտի 20-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշման դեմ դիմող Սիլվարդ Ալավերանի Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Մխիթարյանի (այսուհետ՝ նաև Քննիչ)՝ 2006 թվականի մարտի 6-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 55200706 քրեական գործը:

Նախաքննական մարմնի՝ 2006 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Անահիտ Այվազյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Քննիչի՝ 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է ենթադրյալ հանցանք կատարած Սեյրան Այվազյանի մահվան հիմքով:

Նույն որոշման 2-րդ կետով ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի չորս աշխատակիցների նկատմամբ

քրեական գործի հարուցումը մերժվել է նրանց գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի բողոքների վերաբերյալ Լոռու մարզի դատախազության՝ 2006 թվականի նոյեմբերի 16-ի, նոյեմբերի 20-ի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության՝ 2007 թվականի հունվարի 19-ի գրություններով հայտնվել է, որ որոշումը կայացվել է օրենսդրությանը համապատասխան, և այն վերացնելու հիմքեր չկան:

2. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքի քննության արդյունքում Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է:

3. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

4. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 4-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2008 թվականի մայիսի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժել է, Վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Սիլվարդ Այվազյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2017 թվականի հունիսի 1-ին *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 56717/08) գործով վճիռ է կայացրել, որով ճանաչել է Սեյրան Այվազյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված՝ կյանքի իրավունքի խախտման փաստը:

6. Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 1-ի *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Սիլվարդ Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցվել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշման վերանայման վարույթ, և դիմող Ս.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Առաջին ատյանի դատարանը, նշելով, որ դիմողի ներկայացուցչի կողմից բողոքը բերվել է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ժամկետի բացթողումով, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. *«(…) Մեյրան Այվազյանը վնասազերծվել է ոստիկանությանը տրված լիազորությունների սահմաններում: Վնասազերծող խումբը կրակել է միայն այն ժամանակ, երբ նա դանակով հարվածել է ոստիկանության աշխատակից Հայկազ Գևորգյանին և վերջինիս ընկնելուց հետո, նրա նկատմամբ շարունակվող հարձակման պայմաններում, ոստիկանները կրակել են նրա ուղղությամբ, որը բխել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի և 33-րդ հոդվածի պահանջներից: Դատարանը գտնում է, որ ոստիկանության աշխատակիցները գործել են անհրաժեշտ պաշտպանության վիճակում, որի դեպքում կիրառման է ենթակա «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի կյանքից զրկելը չի համարվում նույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը միանգամայն անհրաժեշտ է՝ ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար: (…)»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 99-107):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է. *«(…) [Բ]ողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, ուստիև տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թունանյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց բավարարման»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 136-145):

9. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2008 թվականի մայիսի 23-ի որոշմամբ արձանագրել է, որ դիմողի ներկայացուցչի կողմից բողոք բերելու քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ժամկետը չի պահպանվել, սակայն անհրաժեշտ է համարել արտահայտել իրավական դիրքորոշումներ՝ ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառույթից, ինչպես նաև նկատի ունենալով, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները գործը քննության են առել ըստ էության և իրենց որոշումներում շարադրել են ըստ էության հիմնավորումներ:

Անդրադառնալով Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ քննություն իրականացնելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը նշել է. *«(…) [Ո]րոշակի հանգամանքներ վկայում են այն մասին, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ, (…), որոշակի քննություն իրականացվել է»:*

Գնահատելով Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի առթիվ իրականացված քննության պատշաճությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«(…) [Գ]ործով հարցաքննվել են դեպքին ականատես ոչ բոլոր ոստիկանները:*

Մասնավորապես, ոստիկանների կողմից Ս.Այվազյանի ուղղությամբ կրակելու պահին դեպքի վայրում գտնված վեց ոստիկաններից երկուսը՝ Գ.Մելքոնյանը և Ռ.Մոսինյանը, չեն հարցաքննվել: Դա նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը չի իրականացրել առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու Ս.Այվազյանին կյանքից զրկելու հետ կապված ապացույցները:

Ինչ վերաբերում է մյուս չորս ոստիկաններին, ապա Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նրանց հարցաքննության ժամկետները: Այսպես՝ վկա Հ.Գրիգորյանը հարցաքննվել է դեպքից 8 օր հետո, վկա Ն.Նանինյանը՝ 9 օր հետո, իսկ վկա Ա.Արգարյանը՝ 10 օր հետո:

Այդ ընթացքում ոչինչ չի ձեռնարկվել նրանց միմյանցից մեկուսի պահելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած չկա որևէ ապացույց այն մասին, որ ոստիկանները գաղտնի համաձայնության են եկել միմյանց հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն:

Քննության պատշաճությունը գնահատելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն, որ բավարար չափով չի պարզվել Ս.Այվազյանի ուղղությամբ կրակոցներ արձակելու մեխանիզմը. մասնավորապես, համապատասխան գնահատականի չի արժանացել Ս.Այվազյանի վրա արձակված կրակոցների ուղղությունը: Այսպես, քննությամբ ողջամիտ բացատրություն չի տրվել այն փաստին, որ Ս.Այվազյանի ուղղությամբ վեց կրակոց արձակվել է հետևից:

(...) [Վերը] շարադրվածն ինքնին բավարար է այն հետևության համար, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քննությունը պատշաճ չի եղել» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 190-199):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստել է, որ *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 1-ի վճիռը հանդիսանում է նոր հանգամանք Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը վերանայելու համար:

Շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը նշել է, որ Եվրոպական դատարանն արձանագրել է Ս.Այվազյանի՝ կյանքի իրավունքի ընթացակարգային խախտում՝ Ս.Այվազյանի մահվան հանգամանքների վերաբերյալ արդյունավետ քննություն չիրականացնելու, կյանքի իրավունքի էական խախտում՝ գործողությունների պլանավորման և վերահսկման առումով:

Մեջբերելով նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման մասին Եվրոպական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոք բերած անձը եզրահանգել է, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշման վերանայման և Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման արդյունքում հնարավոր կլինի վերացնել Ս.Այվազյանի վերաբերյալ գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքների խախտումները:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը, բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը, բավարարել բողոքը և վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 2-րդ կետը, որով ոստիկանների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել էր:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում արձանագրելու փաստն արդյոք ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը վերանայելու հիմք է:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(…)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(…):

2. Սույն հոդվածի առաջին մասի (…) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (…) Հայաստանի Հանրապե-

տության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(…)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զալյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16 որոշումները):

14. Այսպես՝ *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ թեև քննիչի՝ 2006 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ բողոքը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո, սակայն հաշվի առնելով, որ ներպետական դատարանները բոլոր երեք ատյանների մակարդակով քննել են նշված բողոքի էությունը, ուստի ներպետական իրավական պաշտպանության միջոցները չսպառված չեն կարող համարվել, և գանգատը պետք է հայտարարել ընդունելի:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատու Սիլվարդ Այվազյանի եղբոր՝ Սեյրան Այվազյանի մահվան հանգամանքների քննության մասով տեղի են ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական խախտումներ:

15. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի վերաբերյալ իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(…) [Ա]մբողջությամբ վերցրած 2-րդ հոդվածը վերաբերում է ոչ միայն դիտավորությամբ կյանքից զրկելու դեպքերին, այլ նաև այն իրավիճակներին, երբ թույլատրվում է «ուժ գործադրել», ինչը կարող է հանգեցնել կյանքից զրկելուն՝ որպես չնախատեսված հետևանք: Ցանկացած ուժի գործադրում չպետք է ենթադրի ավելին, քան «բացարձակ անհրաժեշտություն» և պետք է լինի խիստ համաչափ՝ «ա»-ից «գ» ենթակետերով սահմանված մեկ կամ ավելի նպատակների իրականացմանը (…):*

Ի կատարումն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նպատակներից մեկի՝ պետության համապատասխան մարմինների կողմից

ուժի գործադրումը կարող է արդարացվել սույն դրույթի համաձայն, եթե այն հիմնված է այնպիսի բարեխիղճ համոզմունքի վրա, որը ողջամիտ հիմքերով տվյալ պահին համարվում է օրինական, սակայն հետագայում պարզվում է, որ սխալ է եղել: Այլ որոշում կայացնելը կենթադրեր ոչ իրատեսական բեռ դնել պետության և դրա իրավապահ մարմինների անձնակազմի վրա՝ իրենց պարտականությունների կատարման հարցում, հավանաբար՝ ի վնաս իրենց և մյուսների կյանքի (…):

Եթե դիտավորությամբ գործադրվել է մահաբեր ուժ, ապա պետք է հաշվի առնել ոչ միայն պետության այն մարմինների գործողությունները, որոնք իրականում կիրառել են այդ ուժը, այլ նաև դրանց ուղեկցող բոլոր հանգամանքները, այդ թվում՝ այնպիսի հարցեր, ինչպիսիք քննության առարկա գործողությունների պլանավորումը և վերահսկողությունն են (…): Այսպիսով, երբ որոշվում է գործադրված ուժի՝ 2-րդ հոդվածին համապատասխանության հարցը, կարող է գործին վերաբերելի լինել այն հանգամանքը, թե արդյոք իրավապահ մարմինների գործողությունները պլանավորվել և վերահսկվել են այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվի մահաբեր ուժի հավանական գործադրումը կամ կյանքի պատահական կորստի հնարավորությունը (…):

Դատարանը, այնուհետև, վերահաստատում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պարունակում է դրա նյութահրավական ասպեկտի մասով ենթադրյալ խախտումների արդյունավետ քննություն իրականացնելու ընթացակարգային պարտավորություն (…)» (տե՛ս *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 73-76-րդ կետերը):

15.1. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման դեպքում արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտավորության մասին նախադեպային որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն ընդգծել է. *«(…) և՛ Սեյրան Այվազյանի վրա արձակված մահացու կրակոցից անմիջապես հետո հարուցված քրեական գործը, և՛ դրանից հետո անցկացված քննությունը, առնվազն պաշտոնապես, ավելի շատ ուղղված են եղել նախքան մահը նրա կողմից կատարված ենթադրյալ իրավախախտումների, մասնավորապես՝ երկու քաղաքացիների և ոստիկանության ծառայողների վրա զինված հարձակման, քան նրա մահվան դեպքի քննությանը: Նրա գործողությունները որակվել են որպես սպանության փորձ, և Քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնց վրա հիմնված են եղել գործերը, այդպիսի արարքների համար պատիժ նախատեսող հոդվածներն են: Դատարանը նշում է, որ դրանից կարող է հարց առաջանալ, թե արդյոք այդպիսի շինությունում իրականացված քննությունը per se (որպես այդպիսին) կարող է համարվել այնպիսի քննություն, որի նպատակը եղել է Սեյրան Այվազյանի մահվան հանգամանքների ճշգրիտ ու լիարժեք քննությունը և այդ նպատակով ապացույցներ հավաքելը:*

Այնուամենայնիվ, պարզ է դառնում, որ այդ քննության շրջանակներում ձեռնարկված մի շարք քննչական միջոցառումներով ուսումնասիրվել են Սեյրան Այվազյանի վրա արձակված մահացու կրակոցի հանգամանքները. վերջապես, որոշում է կայացվել մերժել ներգրավված ոստիկանության ծառայողների դեմ քրեական գործի հարուցումը: Դատարանն ընդունում է, որ տեղի է ունեցել պաշտոնական քննություն (...): Մնում է դիտարկել այն հարցը, թե արդյոք այդպիսի քննությունն արդյունավետ է եղել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով: Այս համատեքստում Դատարանը համաձայնում է Վճռաբեկ դատարանի դիրքորոշման հետ այն մասով, որ առկա են եղել մի շարք լուրջ թերություններ՝ հանգեցնելով այն եզրակացությանը, որ Սեյրան Այվազյանին կյանքից զրկելու կապակցությամբ քննությունը պատշաճ չի իրականացվել (...):

Նախևառաջ՝ քննություն իրականացնող մարմնի կողմից ոչ մի ջանք չի գործադրվել՝ պատահարում ներգրավված ոստիկանության ծառայողների հավանական հանցավոր համաձայնությունը կանխելու համար: Մասնավորապես, ներգրավված ոստիկանության յոթ ծառայողներից ոչ մեկը պատահարից հետո առանձին չի պահվել, և միայն նրանցից երկուսը՝ Ա.Ս.-ն և Հ.Գև.-ն են հարցաքննվել միևնույն կամ հաջորդ օրը: Մյուս երեքը՝ Հ.Գրի.-ն, Ն.Ն.-ն և Ա.Ա.-ը, հարցաքննվել են զգալի ուշացումներով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ ութ, ինը և տասը օր (...): Թեև առկա չեն ապացույցներ՝ ենթադրելու համար, որ այդ ծառայողները գործել են միմյանց կամ Թումանյանի ոստիկանության ուժերի՝ իրենց գործընկերների հետ համաձայնեցված գործողություններով, այնուամենայնիվ, զուտ այն հանգամանքը, որ նման համաձայնեցված գործողությունների վրանգը նվազեցնելուն ուղղված անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել, վկայում է քննության պատշաճ ընթացքի մեջ առկա թերությունների մասին (...):

Երկրորդ՝ պատահարում ներգրավված ոստիկանության ծառայողներից երկուսը՝ Գ.Մ.-ն և Ռ.Մ.-ն, ընդհանրապես չեն հարցաքննվել (...): Այս հարցին պետք է առանձնակի ուշադրություն դարձնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռ.Մ.-ն եղել է ոստիկանության այն չորս ծառայողներից մեկը, որը կրակ է արձակել Սեյրան Այվազյանի վրա:

Երրորդ՝ հաշվի առնելով այդ հարցաքննությունների կատարման եղանակը, Դատարանը նկատում է, որ ոստիկանության ծառայողներից պարզապես պահանջվել է հաշվետվություն ներկայացնել պատահարի մասին, և նրանց շատ քիչ թվով հարցեր են ուղղել՝ չնայած նրանց ցուցմունքներում առկա են եղել բազմաթիվ ակնհայտ հակասություններ և անհամապատասխանություններ (...): Նույնիսկ այն մի քանի հարցերը, որոնք տրվել են նրանց, կամ բավականաչափ հավատաքննչական բնույթի և մանրամասն չեն եղել, կամ դրանցով հնարավոր չի եղել պարզել մահացու կրակոցի հանգամանքները (...): Մի շարք՝ գործին չափազանց վերաբերելի

փաստեր անտեսվել են, և քննիչն առանց պատշաճ պարզաբանման զուտ ընդունել է այն ոստիկանության ծառայողների հաշվետվությունները, որոնք չէին կարող հանդես գալ որպես անաչառ վկաներ: Որևէ փորձ չի կատարվել՝ պարզելու, inter alia, այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչու են տասը գնդակից վեցն արձակվել Սեյրան Այվազյանի մեջքի ուղղությամբ, եթե ոստիկանության բոլոր ծառայողները ենթադրաբար նշան են բռնել նրա ուրքերին. պարզվել է, որ նրանցից առնվազն մեկը կրակ է արձակել ավելի բարձր՝ կրծքավանդակի հատվածի ուղղությամբ (...): Ուստի պարզվում է, որ փվ/յալ հարցաքննություները զուտ ձևական բնույթ են կրել, և Դատարանը չի կարող դրանք համարել որպես կատարված մահացու կրակոցի հանգամանքները պարզելու լուրջ և մանրակրկիտ ուսումնասիրության փորձ:

Չորրորդ՝ որևէ ցուցմունք չի վերցվել ոստիկանության ուժերին չպատկանող անձանցից, որոնք ձերբակալման գործընթացի ժամանակ ակնհայտորեն գտնվել են տան շրջակայքում, ինչպես օրինակ՝ գյուղապետը, հրշեջ ծառայության աշխատակիցները և շտապօգնության բժիշկները: Ճշմարիտ է, որ Վճռաբեկ դատարանը հայտնել է, որ ոստիկանության ծառայողներից բացի, կրակոցի ականատեսներ չեն եղել, սակայն պարզ չէ, թե ինչ ապացույցների վրա է հիմնված եղել այդ հայտարարությունը: Անհերքելի է այն փաստը, որ պատահարը տեղի է ունեցել դրսում՝ նախամուտքում, և տեսանելի է եղել նույնիսկ այն ոստիկանության ծառայողների համար, որոնք ներգրավված չեն եղել ձերբակալման գործընթացում և մահացու կրակոցներին (...): Վերը նշված անձանցից ոչ մեկին, այնուամենայնիվ, հարցաքննության չեն կանչել՝ պարզելու, թե արդյոք նրանք ականատես են եղել և ինչ չափով են ականատես եղել պատահարին: Քննիչը նույնպես չի փորձել հաստատել այն գյուղացիների ինքնությունը, որոնք, մի քանի ոստիկանության ծառայողների ցուցմունքների համաձայն (...), չնայած գտնվելով որոշակի հեռավորության վրա, հավաքված են եղել դեպքի վայրում և հավանաբար հնարավորություն են ունեցել լույս սփռել գործի հանգամանքների վրա:

Ինչ վերաբերում է այլ քննչական միջոցառումներին, ապա Դատարանը նշում է, որ համապատասխան մարմինները հրազենագիտական փորձաքննության կամ այլ միջոցով ստույգ չեն պարզել կրակոցի ժամանակ հրազեն գործադրած ծառայողների հստակ գտնվելու դիրքերը: Հետևաբար առկա է եղել պարզ հակասություն կրակոցի ժամանակ ոստիկանության ծառայող Ա.Ս.-ի՝ ոստիկանության ծառայող Հ.Գրի.-ի կողքին գտնվելու վերաբերյալ վերջինիս ցուցմունքի և պատահարի տեղանքի քարտեզի միջև, որի համաձայն՝ Հ.Գրի.-ն գտնվել է նախամուտքում, իսկ ոստիկանության ծառայող Ս.Մ.-ն՝ նրա կողքին (...): Գնդակների հստակ հետագիծը որոշելու որևէ փորձ չի կատարվել, ինչպես նաև չի իրականացվել կատարված դեպքի վերարտադրություն: Հրազենագիտական փորձաքննությամբ նույնպես չի

պարզաբանվել կարևոր տեղեկատվություն այն մասին, թե ում կողմից է արձակվել մահացու կրակոցը: Ավելին՝ ոստիկանության ծառայողների միջև առերեսումներ չեն իրականացվել: Առանց այդպիսի քննչական միջոցառումներ ձեռնարկելու, ձերբակալումն իրականացնող ոստիկանության ծառայողների հաշվետվությունները՝ դեպքերի մասին, անհնարին է եղել ստուգել: Հարկ է նաև նշել, որ որևէ գնահատում չի իրականացվել այն մասով, թե արդյոք ոստիկանության ծառայող Հ.Գև.-ի կյանքին սպառնացող ենթադրյալ վտանգին՝ ոստիկանության ծառայողի արձագանքը համաչափ է եղել. գնահատում չիրականացնելը հատկապես զարմանալի է՝ հաշվի առնելով արձակված կրակոցների (տասնհինգ, որից տասը դիպել են թիրախին) թիվը և այն փաստը, որ Մեյրան Այվազյանը զինված է եղել ոչ թե հրազենով, այլ միայն դանակով» (տե՛ս *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 77-84-րդ կետերը):

15.2. Վերոգրյալի արդյունքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ համապատասխան մարմինները չեն իրականացրել գործի հանգամանքները պարզելու, ինչպես նաև քննության արդյունավետ արդյունքի հասնելու համար կենսական նշանակություն ունեցող ապացույցների՝ ժամանակին, պատշաճ և օբյեկտիվ հավաքում ու գնահատում: Ուստի, ըստ դատարանի՝ նրանք չեն կատարել պատշաճ և արդյունավետ քննություն իրականացնելու իրենց պարտավորությունը, որպիսի պարագայում տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում (տե՛ս *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 85-86-րդ կետերը):

16. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական ասպեկտով անդրադառնալով ոստիկանության ծառայողների գործողություններին՝ Եվրոպական դատարանը նշել է. *«(…) Սույն գործով, հարկ է ի սկզբանե նշել, որ ներպետական դատարանները, որոնք քննել են ոստիկանության ծառայողներին չհետապնդելու մասին որոշման դեմ բերված բողոքը, ոչ թե իրականացրել են փաստերի անկախ հաստատում, այլ փոխարենը հիմնվել են քննությամբ պարզված՝ մահացու կրակոցի հանգամանքների վրա: Դատարանը, այնուամենայնիվ, մտահոգված է վերը նշված իր այն եզրահանգմամբ, որ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված քննությունը, այդ թվում՝ տվյալ փաստերի հաստատման եղանակը, պատշաճ և արդյունավետ չի եղել: Քննությամբ պարզված մահացու կրակոցի հանգամանքները, հետևաբար, չեն կարող համարվել բավականաչափ վստահելի և օբյեկտիվ:*

(…) Մյուս կողմից, Դատարանի մոտ ակնհայտորեն առկա չեն բավականաչափ նյութեր՝ եզրակացնելու համար, որ իրականում Մեյրան Այվազյանին դիմումատուի պնդմամբ կյանքից զրկել են ոստիկանության ծառայողները: Այստեղից հետևում է, որ Դատարանը քննության ձախողումների պատճառով այն դիրքում չէ, որպեսզի հավաստի գնահատական

տա այն հարցին, թե արդյոք ոստիկանության ծառայողների գործողությունները համապատասխանել են 2-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներին (…)։

Դատարանը, հետևաբար, չի կարող չեզրակացնել, որ այդ մասով չի եղել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իսախտում նյութաիրավական տեսանկյունից (…)» (տե՛ս *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 90-92-րդ կետերը)։

16.1. Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական ասպեկտով գնահատելով ոստիկանության ծառայողների գործողությունների պլանավորման և վերահսկման փուլը՝ Եվրոպական դատարանը նշել է. *«Դատարանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն համատեքստին, որում պատահարը տեղի է ունեցել, ինչպես նաև այն հանգամանքին, թե ինչպես է զարգացել իրավիճակը։ Դատարանի միակ խնդիրը պետք է լինի գնահատել, թե արդյոք սխեղծված հանգամանքներում, Մեյրան Այվազյանի տանն իրականացված գործողությունների պլանավորումը և վերահսկումը վկայում են այն մասին, որ համապատասխան մարմինները պատշաճ ջանքեր են գործադրել՝ ապահովելու համար, որ նրա կյանքին սպառնացող ցանկացած վտանգ հասցվի նվազագույնի, և որ նրանք անզգույշ չեն գտնվել իրենց գործողությունների ընտրության հարցում (…)։*

Դատարանն ի սկզբանե նկատում է, որ քննարկվող գործողությունների պլանավորման և վերահսկման հանգամանքների մասով կողմերի միջև առկա չի եղել վեճ։ Այն նշում է, որ ոստիկանության գործողությունները նախաձեռնվել են ի պատասխան՝ հոգեկան հիվանդությամբ տառապող Մեյրան Այվազյանի կողմից այդ օրն ավելի վաղ ցուցաբերված բռնի վարքագծի, ինչի հետևանքով վիրավորվել է երեք անձ, այդ թվում՝ երկու քաղաքացի և մեկ ոստիկան։ Ուստի ոստիկանության ծառայողները հայտնվել են այնպիսի տագնապային իրավիճակում, որի պայմաններում ստիպված են եղել վճասազերծել ու ձերբակալել հոգեկան հիվանդությամբ և բռնության հակված անձին, որի գործողությունները եղել են անկանխատեսելի։

Դատարանն, այնուամենայնիվ նշում է, որ այն ժամանակ, երբ ոստիկանական խումբը ժամանել է դեպքի վայր, Մեյրան Այվազյանն արդեն իսկ գտնվել է իր տանը, և ոստիկանության ծառայողների կողմից տարածքը շրջափակելուց հետո նա չէր կարող անմիջական և լուրջ վտանգ ներկայացնել որևէ այլ երրորդ անձի համար։ Չնայած պատուհաններից սպառնալիքներ հնչեցնելուն և սպառնալից ժեստեր կատարելուն, նա, այնուամենայնիվ, փախուստի դիմելու կամ հարձակում իրականացնելու փորձ չի կատարել։ Իրավիճակն այդպես շարունակվել է մի քանի ժամ։ Այսպիսով, կարելի է ասել, որ ոստիկանության ծառայողները ձերբակալման գործընթացը պլանավորելու համար իրենց տրամադրության տակ որոշակի ժամանակ են ունեցել՝ հակառակ պատահական գործողության հետ առնչվելու այնպիսի դեպքի, որը կարող էր հանգեցնել անկանխատեսելի զարգացումների, և որին

ոստիկանությունը ստիպված կլիներ արձագանքել առանց նախապես պատրաստվելու (...):

Պարզվում է, որ ձերբակալման գործընթացը վերահսկվել է Թումանյանի ոստիկանության բաժնի պետի կողմից: Այնուհետև պարզ է դառնում, որ ոստիկանության ծառայողները սկզբում փորձել են համոզել Սեյրան Այվազյանին հանձնվել: Պարզ չէ, թե կոնկրետ ինչ մեթոդներ են կիրառվել, սակայն չի հասկացվում նաև, որ այս գործընթացում ներգրավված է եղել որևէ բժիշկ կամ նման այլ մասնագետ: Այն պնդումը, որ այդպիսի մասնագետ ներգրավելն այլ արդյունքի կհանգեցներ, միանշանակ չէ, բայց քանի որ Սեյրան Այվազյանի բռնի վարքագիծը պայմանավորված է եղել նրա առողջական վիճակով, ոստիկանության ծառայողներն, առնվազն, պետք է փորձեին այդ տարբերակը:

Դատարանը այնուհետև նշում է, որ առկա չի եղել իրավիճակը կարգավորելու համար մոբիլիզացված հատուկ պատրաստված կամ հատուկ նշանակության խումբ. գործընթացն ավելի շատ վստահվել է մոտակա ոստիկանության բաժնի ծառայողներին և նրանց պետին (...): Չնայած «Ոստիկանության մասին» օրենքով ոստիկանության ծառայողներից պահանջվում է «հատուկ պատրաստություն» անցնել, այնուամենայնիվ, Կառավարությունը պատրաստվածության (առկայության դեպքում) մասին որևէ մանրամասներ չի ներկայացրել՝ այն է, որ տվյալ ոստիկանության ծառայողներն անցել են պատրաստություն, և արդյոք այդպիսի պատրաստությունը ներառել է համանման իրավիճակներ տիրապետելու համար նախատեսված տեխնիկա: Պարզվել է, որ ոստիկանության ծառայողները նույնպես ապահովված չեն եղել որևէ հատուկ պաշտպանիչ համազգեստով կամ պաշտպանիչ սարքերով: Ուստի նրանք ստիպված են եղել գործել իրենց տրամադրության տակ առկա միջոցներով՝ դրանով իսկ հնարավոր հարձակման դեպքում էապես ավելացնելով մահացու զենք գործադրելու վտանգը: Դատելով իրադարձությունների հետագա զարգացման եղանակից՝ չի երևում, որ ոստիկանության ծառայողները ստեղծված հանգամանքներում ձերբակալում իրականացնելու հստակ պլան են ունեցել» (տե՛ս *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 93-97-րդ կետերը):

16.2. Վերոգրյալի արդյունքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ համապատասխան մարմինները չեն կատարել կյանքի կորստի ռիսկը նվազագույնի հասցնելու իրենց պարտավորությունը: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ չի կարելի ասել, որ գործողությունների պլանավորման և վերահսկման եղանակի կիրառմամբ բավարար չափով հաշվի է առնվել կյանքի իրավունքի գերակայությունը: Հետևաբար գործողությունների պլանավորման և վերահսկման մասով տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի էական խախտում (տե՛ս *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 98-99-րդ կետերը):

17. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում արձանագրելու փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը վերանայելու հիմք է:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութաիրավական խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյոք վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

19. Այսպես, Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:*

Սկոցցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«(...) [Վ]ճիռը, որով [Եվրոպական դատարանը] խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում վերջ տալու համար [Եվրոպական դատարանի] արձանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում պայմանով, որ դրանք համատեղելի են [Եվրոպական դատարանի] վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ:*

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման կարգով գումարների տրամադրման նպատակը բացառապես կրած վնասի համար հատուցում տալն է այնքանով, որքանով որ այդ վնասը հետևանք է խախտման, որն այլ կերպ վերականգնվել չի կարող» (տե՛ս *Scozzari and Giunta v. Italy* գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250):

Մելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է. *«Կոնվենցիայի խախտում արձանագրած [Եվրոպական դատարանի] վճռով պատասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում*

տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (restitutio in integrum): Եթե restitutio in integrum-ը գործնականում հնարավոր չէ, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (…)» (տե՛ս *Selcuk and Asker v. Turkey* գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125):

19.1. Հաշվի առնելով Եվրոպական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Ժ.Սեֆիլյանի* գործով որոշմամբ արձանագրել է. *«(…) Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.*

1. վճարել նշանակված փոխհատուցումը,

2. անհրաժեշտության դեպքում հօգուտ դիմումատուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (restitutio in integrum), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ համապատասխանելի այլ միջոցներով ապահովել իր ստանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում (…)» (տե՛ս *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը):

20. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև *«restitutio in integrum»*-ն ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների գնահատումը վկայում է, որ գործի վերաբացման արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա (տե՛ս *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը): Ընդ որում, այդ առումով հատկանշական է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» հանձնարարականը, որտեղ նշվում է, որ

անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ, և դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

21. Հաշվի առնելով *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 15-16.2-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման 19-20-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային և նյութահիրավական խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

22. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշման վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 12-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Անահիտ Ալավերանի Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 23-ի որոշումը վերանայել:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ/0010/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 18-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարեն Մաքսիմի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի մարտի 27-ին ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 49154717 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Վարեն Մաքսիմի Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի մայիսի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 17-ի դատավճռով ամբաստանյալ Վ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի

268-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Վ.Ավետիսյանի և նրա պաշտպան Մ.Մկրտչյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել և պատժի մասով փոփոխել է Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 17-ի դատավճիռը և ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ է նշանակել կալանք՝ 1 ամիս ժամկետով: Դատավճիռը մնացած մասով թողել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Վ.Ավետիսյանի պաշտպան Մ.Մկրտչյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ամբաստանյալ Վ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«2016 թվականի ամռան վերջերին իր՝ Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի 3-րդ փողոցի 13-րդ փակուղու 3/1 տան հողամասում վայրի աճած կանեփի բույսի թփերից՝ առանց իրացնելու նպատակի, իր օգտագործելու համար, ապօրինի պատրաստել և իր վերը նշված տանը պահել է զգալի չափի՝ 0,1895 գրամ ընդհանուր քաշով տետրահիդրոկաննաբինոլ պարունակող թմրամիջոց, որը 2017 թվականի մարտի 28-ին տան խուզարկության ժամանակ հայտնաբերվել և առգրավվել է ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցների կողմից»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 64):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(…) Ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ պատժի տեսակը և չափը որոշելիս՝ դատարանը հաշվի է առնում ինչպես վերջինիս կողմից կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այնպես էլ նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:*

Որպես ամբաստանյալ Վ.Ավետիսյանի անձը բնութագրող տվյալներ՝ դատարանը հաշվի է առնում վերջինիս կողմից կատարված հանցանքի համար զղջալը, նախաքննության ընթացքում ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ տալն, իր նկատմամբ մեղմ վարվելու խնդրանքը,

ինչպես նաև ըստ բնակության վայրի դրական բնութագրվելը:

Որպես ամբաստանյալ Վ.Ավետիսյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ՝ դատարանը հաշվի է առնում վերջինիս առողջական վիճակը. ըստ գործում առկա բժշկական փաստաթղթերի՝ Վ.Ավետիսյանը դիսպանսեր հաշվառման մեջ է գտնվում «Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա» ՀՈՒԿ-ում «սրտի իշեմիկ հիվանդություն, լարվածության ատենոկարդիա ֆ.դ 3-4, հետինֆարկտային կարդիոսկլերոզ, զարկերակային հիպերտենզիա 3 աստիճանի, սրտային անբավարարություն, դիսցիրկուլյատոր անգգիոէնցեֆալոպաթիա, ասթենո-վեգետատիվ համախտանիշ, խրոնիկ պանկրեատիտ, խրոնիկ վիրուսային հեպատիտ» ախտորոշմամբ, ինչպես նաև 1990թ.-ից մինչև 1992թ. ԼՂՀ ազատագրական և ՀՀ պաշտպանական մարտական գործողություններին մասնակցելը:

Որպես ամբաստանյալ Վ.Ավետիսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք՝ դատարանը հաշվի է առնում հանցանքը կատարելու ռեցիդիվը:

(...)

Ելնելով պատժի արդարացիության սկզբունքից և հաշվի առնելով գործի կոնկրետ փաստական հանգամանքները՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով:

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել անձի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները:

Նույն օրենսգրքի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից:

Վերը շարադրվածի հիման վրա՝ դատարանն արձանագրում է, որ Վարեն Ավետիսյանի նկատմամբ հանցանքի կատարման ռեցիդիվի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման ձևով նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել՝ 6 ամիս ժամկետից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը մի շարք այլ հարցերի հետ միասին պետք է լուծի նաև այն հարցը, թե ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, թե ոչ:

Դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժն առանց փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու անհնարինության հանգամանքը, գտնում է, որ ամբաստանյալը պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 133-134):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(…) Վերաքննիչ դատարանն անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածով սահմանված հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգն ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ կիրառելու հարցին, գտնում է, որ նշված հոդվածով սահմանված պատիժ նշանակելու կանոններն ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ կիրառելի չեն, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածն ընդունվել է 2011 թվականի մայիսի 23-ին, իսկ նա դիպավորյալ հանցանքի համար դատապարտվել է նախքան 2011 թվականը: Այսինքն՝ մինչև վերոնշյալ նորմի ուժի մեջ մտնելն անձն ունեցել է իրավական վիճակ՝ քրեահրավական առումով նա հանդիսացել է դատվածություն ունեցող անձ, իսկ քրեադատավարական առումով դատապարտյալ: Իսկ նշված իրավադրույթները տվյալ դեպքում անձի վիճակը վատթարացնող են, քանի որ ի տարբերություն նախորդ դատապարտությունների ժամանակ գործող կարգավորումների՝ ներկայում ռեցիդիվը ոչ միայն պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է, այլև՝ անձի նկատմամբ ավելի խիստ պատիժ նշանակելու հանգամանք:*

ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Նմանատիպ նորմեր նախատեսված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի, իսկ 3-րդ մասի համաձայն՝ պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը:

Այսպիսով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ չէր կարող պատիժ

նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածով սահմանված պատիժ նշանակելու կանոնների կիրառմամբ:

Վերոգրյալ եզրահանգումների պայմաններում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի կողմից կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, ինչպես նաև նրա անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող վերոգրյալ հանգամանքները, գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ պատժի տեսակը որոշելիս հանգել է սխալ հետևության և ամբաստանյալի նկատմամբ նշանակել է խիստ պատիժ:

(…)

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժի մասով պետք է փոփոխել և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ պետք է նշանակել կալանքի ձևով: (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 33-34):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ, 13-րդ և 67.1-րդ հոդվածներով նախատեսված քրեաիրավական նորմերը:

Բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված կանոններով պատիժ նշանակելիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս դատվածություն ունի նախկինում կատարած դիտավորյալ հանցագործության համար: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ չէր կարող կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը, քանի որ այն ՀՀ քրեական օրենսգրքում լրացվել է 2011 թվականի մայիսի 23-ին, իսկ ամբաստանյալ Վ.Ավետիսյանը ռեցիդիվը կազմող առաջին արարքը կատարել է նախքան քրեական օրենքում նշված լրացումը կատարելը, այսինքն՝ նախքան 2011 թվականի մայիսի 23-ը:

Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանի կողմից արարքում ռեցիդիվի առկայությունը գնահատվել և պատիժ է նշանակվել Վ.Ավետիսյանի երկրորդ՝

այդ նորմերի գործողության ժամանակ կատարված հանցագործության համար, այլ ոչ թե առաջինի, իսկ նշանակված պատիժն էլ երկրորդ արարքի քրեաիրավական հետևանքն է: Ուստի Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման՝ տվյալ գործով ռեցիդիվի կանոնների կիրառումն անթույլատրելի համարելով:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 17-ի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու և ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը կիրառելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու կանոնն ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ կիրառելի չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար»:*

Հանցագործությունների ռեցիդիվի հատկանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանը *Սամվել Բալյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հանցագործությունների ռեցիդիվը բնութագրվում է.*

1) քանակական հատկանիշով (երկու կամ ավելի հանցանք կատարելը),

2) որակական հատկանիշներով, որոնք են՝

ա) միայն դիտավորությամբ հանցանքներ (տարաբնույթ, նույնական կամ համանման) կատարելը,

բ) այդ հանցագործությունները հաջորդաբար և ժամանակային ընդմիջմամբ կատարելը,

գ) նախկինում կատարված հանցանքի (հանցանքների) համար չհանված կամ չմարված դատվածության առկայությունը, պայմանով, որ այդ հանցանքը

(հանցանքները) կատարվել է (են) անձի տասնութ տարին լրանալուց հետո: Ընդ որում մինչև տասնութ տարին լրանալը անձի կողմից կատարած հանցանքները ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում» (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Բալյանի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԿԴ1/0059/15/13 որոշումը, 13-րդ կետը)*:*

12. Վերահաստատելով և զարգացնելով վերոնշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հանցագործությունների ռեցիդիվը ձևավորվում է քանակական և որակական հատկանիշների միաժամանակյա առկայության պարագայում, այն է՝ նախկինում կատարված դիտավորյալ հանցանքի համար չմարված կամ չհանված դատվածության պայմաններում անձի կողմից նոր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում:

Թեպետ անձի ունեցած դատվածությունը պարտադիր նախադրյալ է վերջինիս արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու համար, այնուամենայնիվ այն ինքնին՝ առանց նոր դիտավորյալ հանցագործության, չի կարող ռեցիդիվ ձևավորել: Այսպես՝ հանցագործությունների ռեցիդիվը ձևավորվում է միայն այն ժամանակ, երբ դիտավորյալ հանցագործության համար չհանված կամ չմարված դատվածության պայմաններում անձը կատարում է նոր դիտավորյալ արարք: Այլ կերպ՝ անձի արարքում ռեցիդիվի՝ որպես բազմակիության ինքնուրույն տեսակի գնահատման իրավական հիմքերն առաջանում են անձի կողմից նոր դիտավորյալ հանցանք կատարելու պահից:

13. ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:*

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: (…)»:

Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու հիմնախնդրին Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է իր նախադեպային որոշումների շրջանակներում՝

ընդգծելով, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը ենթադրում է, որ անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել, ինչպես նաև՝ հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն օրենքով, որը գործել է նրա կողմից արարքը կատարելու ժամանակ: Nullum crimen, nulla poena sine lege սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, համաձայն որի՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին *(տե՛ս Գասպար Պողոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ1/0013/01/11, Վաղարշակ Գալոյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշումները)*:

13.1. Քրեական օրենքի՝ ժամանակի ընթացքում գործողության ընդհանուր կանոնը ենթադրում է, որ կատարված արարքի հանցավորությունը, դրա համար նախատեսված պատիժները և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են տվյալ արարքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Գործող օրենք ասելով պետք է հասկանալ միայն հրապարակված և ուժի մեջ մտած օրենքը: Այսինքն՝ իրավասու մարմինը հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սահմանված կարգով հրապարակված և ուժի մեջ մտած օրենքի անհապաղ ներգործությունը ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն է՝ անկախ այն հանգամանքից՝ նոր օրենքն իր բնույթով վատթարացնող է, թե ոչ: Վերոնշյալը պայմանավորված է նրանով, որ ակտի հրապարակման պահից մինչև դրա ուժի մեջ մտնելն ընկած համապատասխան ժամանակահատվածում հասցեատերն արդեն իսկ ինարավորություն է ունենում ծանոթանալու օրենքի բովանդակությանը և իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին: Նշված ընդհանուր կանոնից միակ բացառությունը քրեական օրենքի հետադարձության կանոնն է, որի համաձայն՝ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող նոր օրենքն ունի հետադարձ ուժ:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են՝
1) հանցանքը կատարելու ռեցիդիվը (…)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները։*

2. Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից։ (…)»։

Մեջբերված նորմերի վերլուծությունից երևում է, որ հանցագործությունների ռեցիդիվը դիտվում է որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, որի դեպքում պատժի խստացումը կատարվում է ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված կարգով։ Հարկ է նկատել, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոն նախատեսող 67.1-րդ հոդվածը ՀՀ քրեական օրենսգրքում լրացվել է 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՕ-143-Ն օրենքով։ Նախքան վերոնշյալ փոփոխությունը, ռեցիդիվը դիտվում էր միայն որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք, և դատարանն անձի նկատմամբ նշանակվող պատժի տեսակն ու չափը որոշում էր իր հայեցողությամբ։ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնի նախատեսումը պայմանավորված է ռեցիդիվային հանցավորության բարձր վտանգավորությամբ, քանի որ անձը, իր նախկին հակաօրինական գործունեությանը պետության կողմից տրված բացասական գնահատականի պայմաններում նոր հանցանք կատարելով, արտահայտում է իր արհամարհական վերաբերմունքը հասարակության և պետության շահերի նկատմամբ, ցույց է տալիս, որ նշանակված պատիժն արդյունավետ չի եղել պատժի նպատակների իրացման տեսանկյունից *(տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արամայիս Հարությունյանի վերաբերյալ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՍԴ/0204/01/13 որոշումը)*։

15. Ընդհանրացնելով սույն որոշման 11-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս պետք է ղեկավարվել այն քրեական օրենքով, որի գործողության ընթացքում ռեցիդիվը ձևավորվում է, այն է՝ չհանված կամ չմարված դատվածության առկայության պայմաններում նոր դիտավորյալ հանցանք կատարելու պահին գործող քրեական օրենքով։ Այսպես՝ եթե հանցագործությունների ռեցիդիվն անձի արարքում փաստացի գնահատվում է ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո, ապա պատիժը նշանակվում է տվյալ հոդվածով սահմանված կարգով։ Մասնավորապես, դատարանն ընտրում է համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն

պատիժը, իսկ ռեցիդիվի տեսակով պայմանավորված՝ նվազագույն պատժաչափը որոշակի համամասնությամբ պարտադիր խստացվում է. ռեցիդիվի դեպքում նշանակված պատիժը չի կարող պակաս լինել օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երկու երրորդից, իսկ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երեք քառորդից: Միևնույն ժամանակ դատարանը հաշվի է առնում նախկինում կատարված հանցանքների քանակը, բնույթն ու ծանրությունը, այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները *(ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արմեն Թամարյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԼԴ/0039/01/15 որոշումը)*:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև վերջինիս անձը բնութագրող տվյալները, այն է՝ կատարված հանցանքի համար զղջալը, նախաքննության ընթացքում ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, դրական բնութագրվելը, առողջական վիճակը, 1990-1992թթ. ԼՂՀ ազատագրական և ՀՀ պաշտպանական մարտական գործողություններին մասնակցելը: Առաջին ատյանի դատարանը որպես Վ.Ավետիսյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի է առել հանցանքը կատարելու ռեցիդիվը և պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված կարգով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու կանոնը Վ.Ավետիսյանի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ այն ընդունվել է 2011 թվականի մայիսի 23-ին, իսկ ամբաստանյալը դիտավորյալ հանցանքի համար դատապարտվել է նախքան 2011 թվականը: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ մինչև վերոնշյալ նորմն ուժի մեջ մտնելն անձն ունեցել է իրավական վիճակ՝ հանդիսացել է դատվածություն ունեցող անձ, իսկ քրեադատավարական առումով եղել է դատապարտյալ: Նշված իրավադրույթները դատարանի համոզմամբ անձի վիճակը վատթարացնող են, քանի որ ի տարբերություն նախորդ կարգավորումների՝ ներկայումս ռեցիդիվը ոչ միայն պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է, այլև անձի նկատմամբ ավելի խիստ պատիժ նշանակելու հիմք: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակել է խիստ պատիժ, դատավճիռը պատժի մասով փոփոխել է և պատիժ է նշանակել կալանքի ձևով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեպետ ամբաստանյալ Վ.Ավետիսյանը դիտավորյալ հանցագործության համար դատապարտվել է նախքան 2011 թվականի մայիսի 23-ը ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները, այսինքն՝ նախքան 67.1-րդ հոդվածով օրենսգիրքը լրացնելը, այնուամենայնիվ նոր դիտավորյալ հանցանքը կատարել է վերոնշյալ փոփոխությունից հետո՝ 2016 թվականին, որն էլ իրավական հիմք է ռեցիդիվի առկայությունը փաստելու համար: Այլ կերպ՝ հանցագործությունների ռեցիդիվը ձևավորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի գործողության պայմաններում, հետևաբար Առաջին ատյանի դատարանն իրավամբ Վ.Ավետիսյանի արարքում ռեցիդիվ է գնահատել և պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված կարգով: Վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանի համոզմամբ բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կանոնից, ըստ որի՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Ուստի նկատի ունենալով, որ սույն գործով հանցավոր արարքն ամբաստանյալը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը ուժի մեջ մտնելուց հետո, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ խնդրո առարկա իրավադրույթներն անձի վիճակը վատթարացնող են, հետևաբար հետադարձ ուժ չեն կարող ունենալ, հիմնազուրկ է (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու կանոնն ամբաստանյալ Վարեն Ավետիսյանի նկատմամբ կիրառելի չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ պատժի տեսակը որոշելիս հանգել է սխալ հետևության և արդյունքում Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և պատժի մասով փոփոխելով՝ թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ, 13-րդ, 22-րդ և 67.1-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ

տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 17-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վարեն Մաքսիմի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 17-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԲՈՂՈՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԷԴ/0063/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Կ.ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 18-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Անդրիաս Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, 34-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 34-235-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ նա 2016 թվականի հուլիսի 29-ին Երևան քաղաքում կազմակերպել է զանգվածային անկարգություններ, ինչպես նաև փորձել է միանալ 2016 թվականի հուլիսի 17-ին Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 158 հասցեում տեղակայված՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի տարածքում գտնվող շենքերը, շինությունները և տրանսպորտային միջոցները զավթած, ոստի-

կաններ և բուժաշխատակիցներ պատանդ վերցրած կազմակերպված, զինված խմբին, զինվել, ապօրինի կերպով հրազեն ու ռազմամթերք կրել, պահել և խմբի անդամների հետ համակատարմամբ շարունակել պահել զավթածն ու պատանդներին, սակայն հանցագործություններն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

2017 թվականի հուլիսի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 25-ի՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ, ի թիվս այլոց, Անդրիաս Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

3. Հիշյալ որոշման դեմ Ա.Ղուկասյանի պաշտպաններ Կ.Մեժլումյանը և Ի.Պետրոսյանը ներկայացրել են վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է:

4. Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հուլիսի 25-ի՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշման եզրափակիչ մասում մասնավորապես նշել է. *«Ամբաստանյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը (...) թողնել անփոփոխ»* (տե՛ս քրեական գործի հավելված, թերթ 7):

6. 2017 թվականի հուլիսի 25-ին Ա.Ղուկասյանը և նրա պաշտպան Կ.Մեժլումյանը միջնորդություն են ներկայացրել Առաջին ատյանի դատարան, որով խնդրել են գործը դատական քննության նշանակման ենթակա լինելու դեպքում խափանման միջոցի հարցի լուծմանն անդրադառնալ դատական նիստով և իրենց մասնակից դարձնել այդ նիստին (տե՛ս քրեական գործի հավելված, թերթ 20):

6.1. Առաջին ատյանի դատարանը նույն օրվա՝ «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ վերոհիշյալ միջնորդությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ. *«(...) [Մ]իջնորդությունը քննության առնելու դրությամբ դատարանի կողմից արդեն իսկ կայացված է եղել քրեական գործը*

դատական քննության նշանակելու մասին որոշում, որով անդրադարձ է կատարվել ամբաստանյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցին և այն թողնվել է անփոփոխ: Բացի այդ, գործող օրենսդրությամբ օրենսդրի կողմից նշված հարցի լուծման համար սահմանվել է միանձնյա քննության կարգ:

(...) Միաժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված չէ նշված որոշումները կայացնել դատական նիստով դատավարության որևէ անդամի լիազորելով մասնակից դառնալ տվյալ դատական նիստին» (տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 21-22):

7. Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է. *«(...) [Հ]աշվի առնելով ամբաստանյալի անձը, նրան մեղսագրվող հակաօրինական արարքների հասարակական վտանգավորության աստիճանը, այդ արարքների համար ՀՀ քրեական օրենքով հնարավոր սպառնացող պատժի խստությունը, ինչպես նաև քրեական գործի փաստական հանգամանքները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դեռևս շարունակում են առկա լինել Անդրիաս Ղուկասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետն ըստ էության երկարացնելու հիմքերն ու պայմանները, ինչն էլ հիմք է հանդիսանում վերաքննիչ բողոքը մերժելու համար:*

Ինչ վերաբերում է պաշտպանների վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքին, որ [Առաջին ատյանի դատարանը] բողոքարկվող որոշման մեջ կալանքի ժամկետը երկարացնելու որևէ հիմքի չի անդրադարձել, չի նշել և պատճառաբանել, թե ինչու է եզրահանգում, որ այդ հիմքն առկա է, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ [Առաջին ատյանի դատարանը], անփոփոխ թողնելով ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը, ըստ էության հաստատել է, որ պահպանվում են վերջինիս կալանքի տակ պահելու նախորդ հիմքերը և պայմանները:

Այսպիսով, դատական ստուգման արդյունքում, Վերաքննիչ դատարանը հանգում է եզրահության, որ [Առաջին ատյանի դատարանի] կողմից թույլ չի տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, Եվրոպական կոնվենցիայով, Վճռաբեկ և Եվրոպական դատարանների նախադեպային որոշումներով արտահայտած իրավական դրույթների խախտումներ, ուստի պաշտպանների վերաքննիչ բողոքը բավարարելու և [Առաջին ատյանի դատարանի] (...) որոշումը բեկանելու օբյեկտիվ հիմքեր չկան» (տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 38-43):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 136-րդ հոդվածների, 2007 թվականի ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ

Սահմանադրության 27-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածների խախտումներ: Վերաքննիչ դատարանի որոշման իրավական դիրքորոշումները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան)՝ Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի գործով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը կալանքի ժամկետը երկարացնելու որևէ հիմքի չի անդրադարձել, չի նշել և պատճառաբանել, թե ինչու է եզրահանգում, որ այդ հիմքն առկա է, չի անդրադարձել Ա.Ղուկասյանի անձին և նրան բնութագրող այլ տվյալներին, նրան մասնակից չի դարձրել կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցի քննարկմանը, կայացված որոշումը պաշտպանական կողմին անմիջապես չի հանձնել, այլ ուղարկել է այն կայացնելուց մեկ ամիս հինգ օր անց՝ գրավոր դիմում ներկայացնելուց ինը օր անց: Ավելին՝ Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ հղում չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ խափանման միջոցներին վերաբերող 18-րդ գլխի որևէ հոդվածի: Նման որոշումը Կոնվենցիայի իմաստով անօրինական է, իսկ ՀՀ Սահմանադրության իմաստով՝ ոչ իրավաչափ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ հիշյալ խախտումներն իրավաչափ են:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և վերացնել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ և Ա.Ղուկասյանին անհապաղ ազատ արձակել:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

10. Վճռաբեկ դատարանի համոզմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի կապակցությամբ առկա է սահմանադրականության խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

11. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, այնքանով, որքանով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով կատարելու կարգ, արդյո՞ք չի խախտում անձի ազատության

իրավունքը՝ անհապաղ դատարանի առջև կանգնելու և իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքների տեսանկյունից:

12. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:*

Հիշյալ նորմերը կալանավորված անձանց իրավունք են վերապահում նախաձեռնելու այնպիսի վարույթ, որը համապատասխանում է ազատությունից զրկելու իրավաչափության տեսանկյունից էական դատավարական և նյութական պահանջներին: Չնայած բոլոր դեպքերում չէ, որ հիշյալ վարույթը պետք է համապատասխանի քրեական կամ քաղաքացիական դատավարությունների համար Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներին, այնուամենայնիվ, այն պետք է դատական բնույթ ունենա և տրամադրի ազատության սահմանափակման կոնկրետ տեսակին համապատասխան երաշխիքներ (տե՛ս *A. and Others v. the United Kingdom* գործով Եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ 3455/05, կետ 203):

Անձի շարունակական կալանքի վերանայման համատեքստում վարույթը պետք է լինի մրցակցային և երաշխավորի կողմերի՝ դատախազի և կալանավորված անձի միջև «զենքերի հավասարությունը» (տե՛ս *Nikolova v. Bulgaria* գործով Մեծ պալատի 1999 թվականի մարտի 25-ի վճիռ, գանգատ թիվ 31195/96, կետ 58, *Altınok v. Turkey* գործով 2011 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 31610/08, կետ 45):

Հիշյալ նորմերից հետևող առաջին հիմնարար երաշխիքը կալանավորման իրավաչափությունը վերանայելիս **դատավորի կողմից արդյունավետ քննության** իրավունքն է: Հաջորդ կարևոր երաշխիքն անձի շարունակական կալանքի անհրաժեշտության հարցի **անհապաղ որոշումն է** իրավասու մարմնի կողմից (տե՛ս վերը հիշատակված *Altınok v. Turkey* գործով վճռի 54-րդ կետը, *Knebl v. the Czech Republic* գործով 2010 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 20157/05, կետ 85):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով նախատեսված հիմքով անձին կալանավորելու դեպքում պահանջվում է անցկացնել **դատական լսում** (տե՛ս վերը հիշատակված *Nikolova v. Bulgaria* գործով վճռի 58-րդ կետը): Անձամբ կամ ներկայացուցչության որևէ ձևով լսված լինելու՝ կալանավորված անձի հնարավորությունը ազատությունից զրկելու վարույթի հիմնական երաշխիքներից է (տե՛ս *Kampanis v. Greece* գործով 1995 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 17977/91, կետ 47): Հիշյալ իրավունքը լայնորեն

ընդունված և ճանաչված է նաև մարդու իրավունքների միջազգային մի շարք այլ փաստաթղթերում[1]: Մասնավորապես, անձի՝ իր կալանքի տակ գտնվելու հարցի որոշման կապակցությամբ վարույթին ներկայանալու իրավունքը նախատեսված է ԵԽ Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի՝ թիվ Rec(2006)13 հանձնարարականի 28-րդ կետում: Իսկ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2015 թվականի հուլիսի 6-ին հաստատված՝ Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ դատարանի առջև վարույթ նախաձեռնելու իրավունքի պաշտպանության միջոցների և ընթացակարգերի վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքների և ուղենիշների 11-րդ սկզբունքի համաձայն՝ դատարանը պետք է երաշխավորի կալանավորված անձի ֆիզիկական ներկայությունը, հատկապես ազատությունից զրկելու կամայականության և իրավաչափության վիճարկման առաջին դատական լսմանը և ամեն անգամ, երբ ազատությունից զրկված անձը խնդրում է ֆիզիկապես ներկայանալ դատարանի առջև:

Նույն փաստաթղթի 3-րդ կետում ընդգծվում է, որ գործնականում հիշյալ իրավունքի արդյունավետ իրականացման համապարփակ և հստակ իրավական հիմքերի բացակայությունը հանգեցնում է ազատությունից զրկված անձանց պաշտպանության բացի:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական քննության նախապատրաստելը» վերնագրված 40-րդ գլխում զետեղված իրավանորմերը կարգավորում են գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կատարվող դատավարական գործողությունների և կայացվող որոշումների շրջանակը և կարգը: Դրանց վերլուծությունից հետևում է, որ հիշյալ փուլում դատարանն իրավասու չէ դատական նիստ հրավիրելու, իսկ այդ փուլում լուծման ենթակա հարցերը լուծվում են դատավորի կողմից միանձնյա՝ իր աշխատասենյակում: Քննարկվող փուլում կայացվող որոշումներից է գործը դատական քննության նշանակելը, իսկ լուծման ենթակա հարցերից՝ խափանման միջոցների հարցը: Մասնավորապես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

դատական քննություն նշանակելու մասին.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու

[1] Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ և 9-րդ հոդվածները, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ մասը և այլն:

մասին հանգամանքները (...):

2. Դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ պետք է բովանդակվեն՝ (...) խափանման միջոցները (...) վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին [որոշում] (...):

3. Դատական քննությունը պետք է նշանակվի դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելու պահից 10 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն՝

«Որոշում ներկայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»:

14. Վերոհիշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ դրանցով նախատեսված է գործն իր վարույթ ընդունած դատավորի պարտականությունը, ի թիվս այլոց, գործը դատական քննության նշանակելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ լուծել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում: Ընդ որում, որպես այդպիսի խափանման միջոց կարող է հանդես գալ նաև կալանքը, քանի որ այդ առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ բացառություն չի նախատեսում: Այսինքն՝ դատարանը քննարկվող փուլում հարկադրված է առանց դատական նիստ հրավիրելու լուծել նաև որպես խափանման միջոց ընտրված կալանքի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը: Ավելին՝ իրավասու է նույն կարգով անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրելու կալանքը:

14.1. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ ի տարբերություն մինչդատական փուլի՝ գործի դատական քննության փուլում նախատեսված չեն կալանք խափանման միջոցի կիրառման առավելագույն ժամկետներ, ինչպես նաև շարունակական կալանքի իրավաչափության պարբերաբար վերանայման պահանջ: Որպես դրան հակակշիռ՝ անձն իր նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ կարող է ներկայացնել դրա իրավաչափության վերանայման միջնորդություն, որը պարտադիր քննարկման առարկա է դարձվում դատարանի կողմից կողմերի մասնակցությամբ դատական նիստում:

15. Սույն որոշման 12-րդ և 14-14.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների համադրումից կարելի է եզրահանգել, որ դատական քննության նախապատրաստական փուլում առանց դատական նիստ նշանակելու հնարավորության որպես խափանման միջոց ընտրված կալանքը հիմնավոր համարելու դեպքում այն անփոփոխ թողնելը, որը հանգեցնում է կալանք խափանման միջոցի նկատմամբ դատական վերահսկողության

կառուցակարգի փոփոխման, ինչպես նաև անձի՝ անորոշ ժամկետով կալանքի տակ մնալուն, ըստ էության չի ապահովում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ անձի իրավունքի իրականացման հնարավորությունը: Այսինքն՝ անգամ անձի կողմից իր անազատությունը վիճարկելու՝ խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին միջնորդության առկայության դեպքում դատարանն իրավասու չէ դատական նիստ անցկացնել և ապահովել անձի մասնակցությունը:

Ավելին՝ անհրաժեշտ է նշել, որ *Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում առանց դատական նիստ նշանակելու կալանքն անփոփոխ թողնելու վերաբերյալ իրավական կարգավորումը, **անգամ անձի միջնորդության բացակայության պայմաններում,** գնահատել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասին հակասող (տե՛ս *Khodorkovskiy v. Russia* գործով 2011 թվականի մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետեր 58-59, 207, 235):

15.1. Ուշագրավ է, որ ՌԴ սահմանադրական դատարանը, 2004 թվականի ապրիլի 8-ի՝ թիվ 132-Օ, ինչպես նաև 2005 թվականի մարտի 22-ի՝ թիվ 4-Պ որոշումներում անդրադառնալով դատական նիստին նախապատրաստվելու փուլում առանց նիստ անցկացնելու մինչդատական վարույթում որպես խափանման միջոց ընտրված կալանավորման կապակցությամբ որոշում կայացնելու հնարավորության հարցին, գտել է, որ հիշյալ խափանման միջոցի կապակցությամբ որոշում կայացնելու ընդհանուր կանոնները սահմանող նորմերը (ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 108-109-րդ հոդվածներ) կիրառելի են նաև սույն դեպքում, հետևաբար դատարանը համապատասխան որոշում կայացնելիս պետք է դատական նիստ հրավիրի և ապահովի անձի մասնակցությունը:

ՌԴ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի հիշյալ որոշումներին հաջորդող՝ 2012 հունիսի 5-ին կատարված օրենսդրական փոփոխություններից հետո ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է, որ գրավը, տնային կալանքը կամ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, տնային կալանքի կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցերը դատարանի կողմից քննարկվում են դատական նիստում դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ մեղադրյալի, նրա պաշտպանի, եթե նա մասնակցում է վարույթին, անչափահաս մեղադրյալի օրինական ներկայացուցչի և դատախազի մասնակցությամբ նույն օրենսգրքի 108-րդ հոդվածով նախատեսված կարգով, կամ համապատասխան հիմքերի առկայության դեպքում նախնական դատական լսումների ժամանակ: Իսկ 231-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսվել է, որ դատական նիստ նշանակելու մասին որոշմամբ, ի թիվս այլոց, լուծվում է նաև խափանման միջոցի հարցը,

բացառությամբ գրավը, տնային կալանքը կամ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, տնային կալանքի կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու դեպքերի:

15.2. Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով նախատեսված է նախնական դատական լսումների ինստիտուտ, որի շրջանակներում կողմերի մասնակցությամբ դատական նիստով է լուծվում նաև խափանման միջոցների հարցը (310-311-րդ հոդվածներ):

16. Սույն գործի փաստերից հետևում է, որ 2017 թվականի հուլիսի 25-ին Առաջին ատյանի դատարանը գործը դատական քննության նախապատրաստելու փուլում քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշմամբ լուծել է նաև մեղադրյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը և, գտնելով, որ այն հիմնավոր է, կայացրել է ընտրված խափանման միջոցն անփոփոխ թողնելու վերաբերյալ որոշում (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Նույն օրն Ա.Ղուկասյանը և նրա պաշտպանը միջնորդություն են ներկայացրել գործը դատական քննության նշանակման ենթակա լինելու դեպքում խափանման միջոցի հարցի լուծմանը դատական նիստով անդրադառնալու և այդ նիստինիրենց մասնակից դարձնելու մասին: Հիշյալ միջնորդության քննարկման արդյունքում Առաջին ատյանի դատարանը մերժել է այն՝ պատճառաբանելով, որ միջնորդությունը քննության առնելու դրությամբ դատարանի կողմից արդեն իսկ կայացված է եղել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշում, որով անդրադարձ է կատարվել Ա.Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցին և այն թողնվել է անփոփոխ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ տվյալ որոշումները դատական նիստով կայացնելու կարգ (տե՛ս սույն որոշման 6-6.1-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, մերժելով վերաքննիչ բողոքը, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, Եվրոպական կոնվենցիայով, Վճռաբեկ և Եվրոպական դատարանների նախադեպային որոշումներով արտահայտած իրավական դրույթների խախտումներ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 15-րդ կետում շարադրված իրավական վերլուծության համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, քանի որ դրանով են կարգավորվում գործը դատական քննության նախապատրաստելու փուլում խափանման միջոցների լուծման հետ կապված իրավահարաբերությունները: Վճռաբեկ դատարանի համոզմամբ հիշյալ նորմում կալանքը որպես

խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով անցկացնելու հնարավորության բացակայությունը վտանգում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով երաշխավորված՝ իրեն ազատությունից զրկելը վիճարկելու անձի իրավունքի իրականացումը:

17.1. Միևնույն ժամանակ հաշվի առնելով քննարկվող հարցի համակարգային լուծման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է հարմարում նշել, որ նույն նորմով նախատեսված չէ անձի մասնակցությամբ դատական նիստ անցակցնելու հնարավորություն նաև նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում:

Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում»:*

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: (...)»*

Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, այն հաշվառմամբ, որ չի ապահովում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ 72 ժամվա ընթացքում անձի՝ դատարանի առջև կանգնելու իրավունքը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասով և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ անհապաղ դատարանի առջև կանգնելու անձի իրավունքին:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, այնքանով, որքանով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով կատարելու կարգ, խախտում է անձի ազատության իրավունքը՝ անհապաղ դատարանի առջև կանգնելու և իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքների տեսանկյունից:

Նման պայմաններում նկատի ունենալով, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, որը Վճռաբեկ դատարանի համոզմամբ հակասում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին, իսկ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը, ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով,Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ամբաստանյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին հակասող՝ այնքանով, որքանով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով կատարելու կարգ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0070/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 18-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2017 թվականի հունվարի 6-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 53150117 քրեական գործը:

2017 թվականի մայիսի 11-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 53152917 քրեական գործը:

2017 թվականի հունիսի 12-ին վերոնշյալ քրեական գործերը միացվել են, և նախաքննությունը շարունակվել է 53150117 համարի ներքո:

1.1. 2017 թվականի փետրվարի 27-ին ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 19152817 քրեական գործը:

2017 թվականի հունիսի 16-ին վերոնշյալ քրեական գործը միացվել է թիվ

53150117 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 53150117 համարի ներքո:

1.2. 2017 թվականի հուլիսի 10-ին ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով հարուցվել է թիվ 71158817 քրեական գործը:

2017 թվականի հուլիսի 11-ին վերոնշյալ քրեական գործը միացվել է թիվ 53150117 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 53150117 համարի ներքո:

2017 թվականի հուլիսի 12-ին հանցագործություն կատարած լինելու կասկածանքով ձերբակալվել է Դավիթ Աթաբեկյանը:

2017 թվականի հուլիսի 14-ին որոշում է կայացվել Դ.Աթաբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-214-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ Դ.Աթաբեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալ Դ.Աթաբեկյանին կալանքից գրավով ազատելու վերաբերյալ պաշտպան Լ.Գոգինյանի միջնորդությունը:

3. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ Դ.Աթաբեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդությունը մերժվել է:

4. Վերոնշյալ որոշման դեմ Լոռու մարզի դատախազության դատախազ Ռ.Մինասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը բեկանել է և մեղադրյալ Դ.Աթաբեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացրել երկու ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մեղադրյալ Դ.Աթաբեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոց գրավով, և գրավի չափ սահմանվել 500.000 ՀՀ դրամ գումարը:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ (մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիմքով):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

6. Դ.Աթաբեկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) [Ե]ա, քննությամբ չպարզված հանգամանքներում ձեռք է բերել 6 կտոր ոսկեզօծ զարդեր և միասնական դիտավորությամբ որոշել դրանք որպես ոսկյա զարդեր գրավադնելու միջոցով ստանալ վարկեր ու հափշտակել գումարները:*

Իր հանցավոր մտադրություններն իրականացնելու համար Դավիթ Աթաբեկյանը Կարեն Պողոսյանի հետ նախնական համաձայնության է եկել՝ ոսկյա շղթայի փոխարեն մետաղական շղթան վերջինիս անվամբ գրավադնելու միջոցով վարկ ստանալու և այն հափշտակելու շուրջ: Այնուհետև՝ 2016 թվականի մայիսի 23-ին, Կարեն Պողոսյանը և Դավիթ Աթաբեկյանը Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորիչ 38 հասցեում գտնվող «Արդշինբանկ» ՓԲ ընկերության «Վանաձոր» մասնաճյուղի ոսկերիչ Ալբերտ Տոնոյանին որպես գրավի առարկա ներկայացրել են 49,2 գրամ կշռով մետաղական շղթա, որը ոսկերիչ Ալբերտ Տոնոյանն ստուգել և համոզվել է, որ նրանց ներկայացրած շղթան ոսյա չէ, սակայն Դավիթ Աթաբեկյանի խնդրանքով ու հորդորով համաձայնել է մետաղական շղթան ներկայացնել որպես ոսկյա: Ալբերտ Տոնոյանը հիշյալ հանգամանքը թաքցրել և չի հայտնել բանկի ղեկավարությանը՝ Դավիթ Աթաբեկյանի դրդությամբ իր լիազորություններն օգտագործել է բանկի շահերին հակառակ, որի հետևանքով «Արդշինբանկ» ՓԲ ընկերությանը պատճառվել է էական վնաս՝ նույն օրը ոսկերիչ Ալբերտ Տոնոյանի, վարկային մասնագետ Ռուզաննա Թումանյանի և Կարեն Պողոսյանի կողմից կազմվել է ոսկյա իրերի գրավի ստուգման և հանձնման-ընդունման թիվ 56761237 ակտը և վերջինս ստացել է խոշոր չափերի՝ 652.800 ՀՀ դրամ վարկ, որը Դավիթ Աթաբեկյանն Ալբերտ Տոնոյանի օժանդակությամբ խաբեության եղանակով՝ խարդախությամբ, հիշյալ ընկերությունից հափշտակել է:

Շարունակելով իր հանցավոր գործունեությունը՝ Դավիթ Աթաբեկյանը, թաքցնելով վերը նշված զարդերը ոսկյա չլինելու հանգամանքը, ընկերոջ՝ Արայիկ Օհանյանի անվամբ՝ 2016 թվականի հունիսի 9-ին Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորիչ 38 հասցեում գտնվող «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունում, ծանոթ՝ Սաթիկ Գրիգորյանի անվամբ՝ 2016 թվականի հունիսի 27-ին Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Նժդեհի 9 հասցեում գտնվող «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության «Սյունիքի մարզային» մասնաճյուղում, կնոջ՝ Ռոզա Քոչարյանի անվամբ՝ 2016 թվականի հունիսի 30-ին Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորիչ 38 հասցեում գտնվող «Արդշինբանկ» ՓԲ ընկերության

«Վանաձոր» մասնաճյուղում, ընկերոջ՝ Անդրանիկ Մարգարյանի անվամբ՝ 2016 թվականի հուլիսի 8-ին Սրեփանավան քաղաքի Նժդեհի 9 հասցեում գտնվող «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության «Սրեփանավանի» մասնաճյուղում գրավադրել է վզնոցներ և ապարանջաններ, որպես գրավ համապատասխանաբար ստացել 693.600 ՀՀ դրամ, 710.000 ՀՀ դրամ, 897.600 ՀՀ դրամ և 1.099.000 ՀՀ դրամ գումարներ, փաստացի ընդհանուրը՝ առանձնապես խոշոր չափերով 4.053.000 ՀՀ դրամ գումար և վերը նշված հարեության եղանակով՝ խարդախությամբ հափշտակել այդ գումարը:

Բացի այդ, Դավիթ Աթաբեկյանը 2017 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 02:30-ին, Վանաձոր քաղաքի Շինարարներ փողոցի վերջնամասում, իր ծանոթ ունն Արշակի հասցեին վայրաբանելու պատճառով վիճաբանել է Մկրտիչ Գրիգորյանի հետ և դիտավորությամբ ձեռքերով ու ոտքերով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ ձախ այտի քերծվածք, քթոսկրերի փակ կոտրվածք, աջից վերին շրթունքի լորձաթաղանթի սալջարդ վերք» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 72-73):

7. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրությունից երևում է, որ մեղադրյալ Դ.Աթաբեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության քննության ընթացքում գրավի կիրառման հարց չի ներկայացվել և չի քննարկվել (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 83-86):

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 4-ի որոշման համաձայն՝ *«(…) Անդրադառնալով կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ քննիչի կողմից ներկայացրած հիմքերին, դատարանը գտնում է, որ այդպիսիք առկա չեն: Քննիչը (…) գործից բխող որևէ փաստ [չի ներկայացրել] այն մասին, որ մեղադրյալն ազատության մեջ գտնվելու դեպքում կարող է խոչընդոտել գործի քննությանը, իսկ մեղադրյալի կողմից մեղքը չընդունելը կամ միայն մեղսագրվող արարքի ծանրությունը չի կարող դրվել մեղադրյալի նկատմամբ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմքում:*

Դատարանը փաստում է նաև, որ քննիչի կողմից չներկայացվեցին բավարար հիմքեր, թե ինչ[ու] մինչև հիմա բանկից ոսկյա զարդերը չեն առգրավվել և փորձաքննության ներկայացվել:

Քննիչի կողմից չի ներկայացվել որևէ հիմնավորված պատճառաբանություն կալանքի ժամկետը երկարացնելու անհրաժեշտության վերաբերյալ և չեն ներկայացվել բավարար ապացույցներ կալանքի ժամկետի երկարացման հիմքերի վերաբերյալ, մասնավորապես չվկայակոչվեց որևէ դատավարական գործողություն, որ նախատեսվում է կատարել և որի կատարումը կարող է վտանգվել, եթե մեղադրյալը լինի ազատության մեջ (…)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 87-92):

9. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29–ի որոշման համաձայն՝ *«(…) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առկա են Դավիթ Աթաբեկյանին շարունակական (…) կալանքի տակ պահելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը։*

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ մեղադրյալ Դավիթ Աթաբեկյանին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցին։

(…) Դավիթ Աթաբեկյանի անձը հայտնի է, նա ունի մշտական բնակության վայր, ամուսնացած է, նրա խնամքի տակ են գտնվում կինը և մանկահասակ երեխան։

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալ Դավիթ Աթաբեկյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 500.000 ՀՀ դրամ գրավի կիրառմամբ, որը, որպես բավարար և ողջամիտ միջոց, կարող է բացառել նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքներին խոչընդոտելու հանգամանքները։ (…)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 40-51)։

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը (մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ) նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման։

Մասնավորապես բողոքի հեղինակը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածին և Տ.Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, նշել է, որ մինչդատական վարույթի ընթացքում Առաջին ատյանի դատարանի կայացրած՝ անձի կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշման բողոքարկման դեպքում կալանքը գրավով փոխարինելու հարցի լուծման իրավասությամբ վերաքննիչ դատարանն օժտված չէ։ Ուստի բողոքաբերի համոզմամբ Վերաքննիչ դատարանը Դ.Աթաբեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն այլընտրանքային

խափանման միջոց գրավով փոխարինելիս թույլ է տվել դատական սխալ, դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն՝ Դ.Աթաբեկյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, իսկ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասով որոշումը թողնել անփոփոխ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանում գրավի կիրառման հարցը ներկայացված և քննարկված չլինելու պայմաններում իրավաչա՞փ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալ Դ.Աթաբեկյանի նկատմամբ գրավի կիրառումը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:*

(…)

5. Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.

2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.

3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին:

6. Այն դեպքում, երբ նախորին ներկայացված չեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, դատարանը որոշում է կայացնում տվյալ խափանման միջոցը վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին»:

14. Վճռաբեկ դատարանը Տ.Հակոբյանի վերաբերյալ գործով վերաքննիչ դատարանի՝ կալանքը գրավով փոխարինելու իրավասության վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Կ]ալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցերում առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի իրավասությունն էականորեն տարբերվում է: Առաջին ատյանի դատարանը լիազորված է քննիչի կամ դատախազի միջնորդության հիման վրա ըստ էության լուծում տալ մեղադրյալին կալանավորելու (կալանքի*

ժամկետը երկարացնելու) կամ կալանքից ազատ արձակելու հարցին: Մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանը, ինչպես տվյալ միջնորդությունը քննարկելիս, այնպես էլ հետագայում, լիազորված է կալանքը փոխարինելու դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով:

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածին համապատասխան՝ վերաքննիչ դատարանն իրավասու է միայն իրականացնելու որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Ընդ որում, այս գործունեությունն իրականացնելիս ՀՀ քրեական վերաքննիչ դատարանն իրավասու չէ ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ բաժնի դրույթներով, քանի որ (...) մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և բողոքի քննության կարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով ստացել է առանձին օրենսդրական կանոնակարգում:

Հետևաբար՝ մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանն իրականացնում է ոչ թե գործի ամբողջ ծավալով ըստ էության քննություն (վերաքննություն), այլ ավելի սահմանափակ գործունեություն՝ համապատասխան որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Մասնավորապես՝ եթե բողոքարկվել է մեղադրյալին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, վերաքննիչ դատարանն իրավասու չէ անդրադառնալ կալանքը գրավով փոխարինելու հարցին: Մինչդատական վարույթի ընթացքում առաջին ատյանի դատարանի կայացրած՝ անձի կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշման բողոքարկման դեպքում կալանքը գրավով փոխարինելու հարցի լուծման լիազորությամբ օրենսդիրը վերաքննիչ դատարանին չի օժտել: Օրենքի այս մեկնաբանությունը հիմնված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի վրա, որը սահմանում է քննարկվող գործերով դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումների սպառիչ ցանկը, և այն չի ներառում ստորադաս դատարանի որոշման փոփոխումը և ստորադաս դատարանի ընտրած խափանման միջոց կալանքի փոխարեն գրավի կիրառումը:

Այսինքն՝ օրենսդիրն անձին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման՝ վերադասու-

թյան կարգով դատական ստուգման առարկայի մեջ գրավի հարցի լուծումը չի ներառել: Փոխարենը, այդ դեպքերում պաշտպանության կողմն ազատ է ցանկացած պահի կալանավորված անձին գրավով ազատելու (կալանքը գրավով փոխարինելու) միջնորդություն հարուցել առաջին ատյանի դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մաս), քանի որ գրավը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս)» (տե՛ս Տարոն Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-115/07 որոշումը):

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Շ.Կեշիշյանի վերաբերյալ գործով նշել է. *«(…) [Ա]յն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշում, վերաքննիչ դատարանն իրավասու չէ այն փոփոխել և ստորադաս դատարանի ընտրած խափանման միջոց կալանքի փոխարեն գրավ կիրառել, երբ վերջինիս հարցը չի ներկայացվել և չի քննարկվել առաջին ատյանի դատարանում:*

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը վերանայելու իրավասությամբ օժտված դատական ատյան: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը դատական վերանայման գործառույթի շրջանակներում բացահայտում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրելը մերժելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին որոշում կայացնելիս առաջին ատյանի դատարանի կողմից օրենքի բոլոր պահանջների պահպանման, ինչպես նաև կալանավորման հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ հետևությունների իրավաչափության հարցերը: Վերաքննիչ դատարանում դատական վերանայման առարկան սահմանափակվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ, որն էլ պետք է իրականացվի միայն առաջին ատյանի դատարանում քննության ենթարկված կալանավորման հիմքերի, հետազոտված փաստերի կամ ապացույցների շրջանակներում (…)» (տե՛ս Շահեն Կեշիշյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0097/06/17 որոշման 13-րդ կետը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանում մեղադրյալ Դ.Աթաբեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության քննության ընթացքում գրավի կիրառման հարց չի ներկայացվել և չի քննարկվել (տե՛ս սույն որոշման 7-րդ

կետը), իսկ նախաքննական մարմնի միջնորդությունը մերժվել է (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, վերանայելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, դատախազի բողոքը բավարարել է և Դ.Աթաբեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացրել երկու ամիս ժամկետով: Նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը քննարկել է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և գտել, որ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալ Դ.Աթաբեկյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառմամբ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Դ.Աթաբեկյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելիս Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանում Դ.Աթաբեկյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության քննության ընթացքում գրավի կիրառման հարց չի ներկայացվել և չի քննարկվել: Այսինքն՝ մեղադրյալ Դ.Աթաբեկյանի կալանքի ժամկետի երկարացման միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման՝ վերադասության կարգով դատական ստուգման առարկայի մեջ գրավի հարցի լուծումը ներառված չի եղել: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից:

Հետևաբար Առաջին ատյանի դատարանում գրավի կիրառման հարցը ներկայացված և քննարկված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալ Դ.Աթաբեկյանի նկատմամբ գրավի կիրառումն իրավաչափ չէ:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, այն մասնակիորեն՝ մեղադրյալ Դ.Աթաբեկյանի նկատմամբ գրավի կիրառման մասով, բեկանելու հիմք է:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2017 սեպտեմբերի 29-ի որոշումը մասնակիորեն՝ մեղադրյալ Դավիթ Աթաբեկյանի նկատմամբ գրավի կիրառման մասով, պետք է բեկանել և գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պաշտպանության կողմն զրկված չէ ցանկացած պահի կալանքն այլընտրանքային

խափանման միջոց գրավով փոխարինելու միջնորդություն հարուցել առաջին ատյանի դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Դավիթ Արմենի Աթաբեկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը վերադարձնել գրավատուին:

3. Որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0102/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 18-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման դեմ Հարություն Պետրոսյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի փետրվարի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում «Գալակտիկա Տրանսսերվիսե ՍՊԸ-ի տնօրեն Շուշանիկ Խաչատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցվել է թիվ 13115716 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ Հարություն Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի մարտի 24-ին Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ

քննիչ Շ.Գրիգորյանը որոշում է կայացրել մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ փաստաթղթեր կեղծելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ հանցագործության կատարմանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով: Նույն որոշմամբ Հ.Պետրոսյանի կողմից կեղծ փաստաթղթեր օգտագործելու և լիազորությունները չարաշահելու կապակցությամբ քրեական հետապնդում չի իրականացվել հանցակազմի բացակայության հիմքով: Վերոհիշյալ որոշմամբ նաև վերացվել է Հ.Պետրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունը:

1.1. Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 13115716 քրեական գործի վարույթը կասեցվել է որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Վերոհիշյալ որոշումների դեմ դիմող Շ.Խաչատրյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել «ընտրված խափանման միջոցը վերացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասինե և «քրեական գործի վարույթը կասեցնելու մասինե քննիչ Շ.Գրիգորյանի՝ 2017 թվականի մարտի 24-ին կայացրած որոշումները:

2017 թվականի ապրիլի 19-ին Երևան քաղաքի դատախազ Ր.Ասլանյանի որոշմամբ դիմող Շ.Խաչատրյանի բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. 2017 թվականի մայիսի 29-ին դիմող Շ.Խաչատրյանի ներկայացուցիչ Կ.Հակոբյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով որոշում կայացնել Շ.Խաչատրյանի իրավունքների ու ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին և վերացնել «ընտրված խափանման միջոցը վերացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասինե, ինչպես նաև «քրեական գործի վարույթը կասեցնելու մասինե քննիչ Շ.Գրիգորյանի՝ 2017 թվականի մարտի 24-ին կայացրած որոշումները:

Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ ներկայացված բողոքը բավարարել է, պարտավորեցրել է վարույթն իրականացնող մարմիններին վերացնել դիմող Շ.Խաչատրյանի իրավունքների խախտումները, այն է՝ վերացնել «ընտրված խափանման միջոցը վերացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասինե, «քրեական գործի վարույթը կասեցնելու մասինե քննիչ Շ.Գրիգորյանի՝ 2017 թվականի մարտի 24-ի և «բողոքը մերժելու մասինե դատախազ Ր.Ասլանյանի՝ 2017 թվականի ապրիլի 19-ի որոշումները:

3. Դատախազ Մ.Գեղամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է՝

օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Հ.Պետրոսյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Շ.Խաչատրյանի ներկայացուցիչներ Գ.Գրիգորյանը և Ս.Բոյաջյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով Հ.Պետրոսյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ կամ մերժել այն վարույթ ընդունելը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանը, բավարարելով «Գալակտիկա Տրանսսերվիսե ՍՊԸ-ի տնօրեն Շ.Խաչատրյանի ներկայացուցիչների բողոքը, նշել է. *«(…) Դատարան ներկայացված քրեական գործի ուսումնասիրմամբ հաստատված է համարում այն փաստը, որ գործով մինչդատական վարույթի ողջ ընթացքում քրեական գործի հարուցման պահից մինչև գործով վարույթի կասեցման պահը Հ.Պետրոսյանը գտնվել է մեղադրյալի դատավարական կարգավիճակում՝ օգտվելով տվյալ սուբյեկտի համար օրենսդրությամբ նախատեսված իրավունքներից և պարտականություններից: Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ մինչդատական վարույթի ընթացքում կատարվել են քննչական և դատավարական բազմաթիվ գործողություններ, այդուամենայնիվ, նախաքննական մարմինը ձեռք է բերել՝ Հ.Պետրոսյանի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցություն, այդ իսկ պատճառով Պետրոսյանին տվել է դատավարական սուբյեկտի՝ մեղադրյալի կարգավիճակ և վերջինս շարունակել է մասնակցել քրեական գործով վարույթին որպես մեղադրյալ՝ մինչ քննիչի կողմից տվյալ փուլի ավարտմանը բնորոշ որոշում կայացնելը:*

Այդուամենայնիվ, բողոքաբերների կողմից բարձրացված հարցերի համատեքստում ուսումնասիրելով դատարան ներկայացված քրեական գործի նյութերը, դատարանը փաստում է, որ վարույթն իրականացնող մարմինը, քրեական գործի հարուցումից հետո, անմիջապես ձեռնամուխ լինելով գործի քննությանը, չի կատարել գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն՝ ենթադրյալ հանցագործությունը բացահայտելու համար:

(…)

Բողոքաբերներն ու նրանց վստահորդը ինչպես նախաքննության ժամանակ, այնպես էլ սույն բողոքի քննությամբ վիճարկել են հիմնադիրների որոշումների կեղծված լինելու և դրանց օգտագործմամբ երաշխավորության

պայմանագրեր կնքելու նպատակով օգտագործելու հանգամանքների վերաբերյալ հարցերը, կասկածի տակ դնելով դրանք կեղծող անձանց ինքնությունը: Հետևաբար, բարձրացրել են այդ հարցերը պարզելու ուղղությամբ որոշակի գործողություններ կատարելու մասին խնդիրներ, ինչը վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսվել է:

(…)

Անդրադառնալով քննիչի կողմից կայացված՝ «Ընտրված խափանման միջոցը վերացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասինե որոշմանը՝ դատարանը փաստում է, որ հիշյալ որոշմամբ քննիչ Գրիգորյանն անդրադարձ է կատարել միայն նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների՝ մեղադրյալի, վկաների ցուցմունքներին և գործի քննությամբ ձեռք բերված մյուս փաստական տվյալներին:

Հատկանշականն այն է, որ քննիչը որևէ ուշադրություն չի դարձրել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասինե ՀՀ օրենքի 35-րդ և 40-րդ հոդվածներով ամրագրված՝ ընդհանուր ժողովի հրավիրման կարգին ու կազմակերպության տնօրենի լիազորություններին, որպիսի պահանջներով, ըստ էության, որպես ընկերության տնօրեն, Հ.Պետրոսյանը պարտավոր էր ղեկավարվել մինչդեռ, Հ.Պետրոսյանը պարտավոր լինելով փորձագետի հիշյալ օրենսդրական պահանջներին, այդուամենայնիվ, ընդհանուր ժողով չի հրավիրվել, իսկ հիմնադիրների չկայացած ժողովի արդյունքում ընդունված որոշումը ներկայացրել է բանկ: Այլ կերպ, վերցնելով հիմնադիրների թիվ 14 և 15 որոշումները, վերջինս արդեն իսկ տեղյակ է եղել, որ իրականում հիմնադիրների ժողով չի հրավիրվել, մինչդեռ, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը հիշյալ հարցի կապակցությամբ որևէ քննություն չի տարվել:

Այլ խոսքով՝ դատարանը փաստում է, որ քննիչը, լինելով որոշակի դատավարական լիազորություններով օժտված պետական պաշտոնատար անձ, պետք է ձեռնամուխ լիներ գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությանը, քանի որ հանցագործության բացահայտման պոզիտիվ պարտավորությունը կրում է պետությունը՝ ի դեմս իր կողմից պատվիրակված լիազոր մարմինների և անձանց՝ տվյալ դեպքում քննիչի: (…)»[1]:

6. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է. *«(…) [Հ]աշվի առնելով (…) այն, որ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ձեռնարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, որպիսի պայմաններում խախտվել են Շուշանիկ Խաչատրյանի իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի որոշման մեջ արձանագրված քննչական և*

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 101-104:

դատավարական գործողություններ կատարելու մասին հետևությունները սույն գործի լուծման համար ունեն ելակետային նշանակություն, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Մ.Գեղամյանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ առաջին ատյանի դատարանի 2017թ. հուլիսի 14-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ (...)»[1]:

7. Համաձայն Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի որոշման ներածական մասի՝ դատարանում նիստին մասնակցել են քննիչ Շ.Գրիգորյանը և բողոքաբեր Շ.Խաչատրյանի ներկայացուցիչներ Պ.Բոյաջյանը, Գ.Գրիգորյանը[2]:

Ըստ նյութերում առկա ծանուցագրերի՝ Հ.Պետրոսյանն Առաջին ատյանի դատարանում նիստի վայրի և ժամանակի մասին չի ծանուցվել, նրան չի ուղարկվել նաև դատական ակտի օրինակը[3]:

7.1. Համաձայն Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման ներածական մասի՝ դատարանում նիստին մասնակցել են դատախազ Մ.Գեղամյանը և Շ.Խաչատրյանի ներկայացուցիչներ Պ.Բոյաջյանը, Գ.Գրիգորյանը[4]:

Ըստ նյութերում առկա ծանուցագրերի՝ Հ.Պետրոսյանը Վերաքննիչ դատարանում նիստի վայրի և ժամանակի մասին չի ծանուցվել[5]: Վերաքննիչ դատարանն առաջին նիստը հետաձգել է շահագրգիռ անձ Հ.Պետրոսյանի մասնակցությունն ապահովելու նպատակով և դատական նիստը նշանակել է 2017 թվականի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 10:00-ին[6]: Հ.Պետրոսյանը ծանուցվել է 2017 թվականի սեպտեմբերի 5-ին կայանալիք նիստի մասին[7]:

7.2. Ըստ նախագահող դատավորի գործավար Լ.Հայրապետյանի կազմած տեղեկանքի՝ «Թիվ ԵԿԴ/0102/11/17 վերաքննիչ բողոքի հիման վրա նշանակված դատական նիստը 2017 թվականի սեպտեմբերի 5-ին, ժամը 10:00-ին, չի կայացել նախագահող դատավորի հիվանդության պատճառով և հետաձգվել, նշանակվել է 2017 թվականի օգոստոսի 15-ին»[8]:

7.3. Հաջորդ դատական նիստը կայացել է 2017 թվականի սեպտեմբերի 15-ին, որի վերաբերյալ կողմերի ծանուցված լինելու վերաբերյալ ապացույցները գործի նյութերում բացակայում են[9]: Հ.Պետրոսյանին չի ուղարկվել նաև Վերաքննիչ դատարանի որոշման օրինակը[10]:

---

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 52-53:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 77:
[3] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 51-64, 106-113:
[4] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 34:
[5] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 17-22:
[6] Տե՛ս Վերաքննիչ դատարանի դատական նիստի արձանագրության համառոտագրում, նյութեր, հատոր 2-րդ, թերթ 23:
[7] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 29-30:
[8] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 31:
[9] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 32-33:
[10] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 55-60:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերի կարծիքով ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են Հ.Պետրոսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասինե եվրոպական կոնվենցիայի 6-րդ և ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածներով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Մասնավորապես Հ.Պետրոսյանի իրավունքներին և օրինական շահերին անմիջականորեն առնչվող դիմող Շ.Խաչատրյանի բողոքի քննության մասին ստորադաս դատարանները տեղյակ չեն պահել տվյալ գործով շահագրգիռ անձ Հ.Պետրոսյանին, ինչի արդյունքում վերջինիս զրկել են դատավարությանը մասնակցելու և իր դիրքորոշումներն արտահայտելու իրավունքից:

Բողոքաբերն ընդգծել է, որ դիմող կողմը կայացված դատական ակտերի մասին իմացել է այն ժամանակ, երբ քրեական գործով վարույթն իրականացնող մարմինը Հ.Պետրոսյանին հրավիրել է հարցաքննության, որից հետո՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ին, ստացել է վիճարկվող որոշման պատճենը:

8.1. Բողոք բերած անձի պնդմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ ստորադաս դատարանները ղեկավարվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով, որը չի սահմանում գործով շահագրգիռ անձին ծանուցելու պարտականություն, այնուամենայնիվ վերջիններս պարտավոր էին բողոքի քննության մասին ծանուցել այն անձին, ում իրավունքներին և օրինական շահերին կարող էր առնչվել կայացված դատական ակտը: Բացի այդ, վերոհիշյալ դատական ակտերը չեն համապատասխանում Վճռաբեկ դատարանի կողմից Ս.Շահնազարյանի վերաբերյալ թիվ ԵՇԴ/0002/11/14 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Ուստի ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերն օրինական ու հիմնավորված չեն և ենթակա են բեկանման:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարաններն ապահովե՞լ են արդյոք անձի արդար դատաքննության իրավունքն այն պայմաններում, երբ գործով

շահագրգիռ անձ Հ.Պետրոսյանին չեն ծանուցել նշանակված դատական նիստերի տեղի և ժամանակի մասին:

11. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

(...)

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ (...):

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (...)»:

Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումների շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«[Մ]րցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր է. այդ սկզբունքի իմաստով դատաքննության ժամանակ ևՔ մեղադրանքի, ևՔ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավորությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Այսինքն՝ մրցակցության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել կողմերի հավասարության հիմնարար պահանջի հետ միասնության մեջ, ինչը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ կողմը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը, ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: Նշվածն արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն նախապայման է, քանի որ քննության իրականացումն առանց կողմերի հավասար տեղեկացվածության նշանակում է մրցակցության և կողմերի հավասարության հիմնարար դրույթների անհամապատասխան ձևականացում և առարկայազրկում:*

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արդար դատական քննություն իրականացնելու պահանջը հավասարապես վերաբերելի է նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անցկացվող դատական քննություններին: (...)»[1]:

11.1. Վճռաբեկ դատարանը Հ.Հարությունյանի գործով որոշմամբ արձանագրել է. *«(...) [Ա]յն դեպքերում, երբ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով քննվող բողոքն անմիջականորեն առնչվում է անձի իրավունքներին և օրինական շահերին, ապա վերջինս պետք է տեղեկացվի այդ բողոքի դատական քննության մասին, և նրան պետք է հնարավորություն տրվի մասնակցելու նշված բողոքի քննությանը»*[2]:

Վերոնշյալ դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նաև Ս.Շահնազարյանի վերաբերյալ գործով կայացված որոշման շրջանակներում[3]:

12. Սույն գործի փաստերից հետևում է, որ 2016 թվականի փետրվարի 17-ին «Գալակտիկա Տրանսսերվիս» ՍՊԸ-ի տնօրեն Շ.Խաչատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, որի շրջանակներում Հ.Պետրոսյանը 2016 թվականի օգոստոսի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ: Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ փաստաթղթեր կեղծելու կապակցությամբ քրեական հետապնդումը դադարեցվել է հանցագործության կատարմանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով, իսկ կեղծ փաստաթղթեր օգտագործելու և լիազորությունները չարաշահելու կապակցությամբ քրեական հետապնդում չի իրականացվել Հ.Պետրոսյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով[4]:

Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով Շ.Խաչատրյանի ներկայացուցչի բողոքը, պարտավորեցրել է վարույթն իրականացնող մարմիններին վերացնել Շ.Խաչատրյանի իրավունքների խախտումները, այն է՝ վերացնել «ընտրված խափանման միջոցը վերացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին», «քրեական գործի վարույթը կասեցնելու մասին» քննիչի՝ 2017 թվականի մարտի 24-ի և «բողոքը մերժելու մասին» դատախազի՝ 2017 թվականի ապրիլի 19-ի որոշումները՝ առանց այդ

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ռաֆայել Քոթանջյանի* վերաբերյալ գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ3/0010/06/15 որոշում, կետ 15, *Հակոբ Մկրտչյանի* վերաբերյալ գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0230/01/14 որոշում, կետ 10:

[2] Տե՛ս *Համբարձում Հարությունյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշում, կետ 24:

[3] Տե՛ս *Սամվել Շահնազարյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵՇԴ/0002/11/14 որոշումը:

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին և 1.1.-րդ կետերը:

բողոքի դատական քննության մասին Հ.Պետրոսյանին տեղեկացնելու[1]:

Վերաքննիչ դատարանն իր հերթին, Հ.Պետրոսյանին մասնակից չդարձնելով դատական նիստերին և քննության առնելով դատախազ Մ.Գեղամյանի վերաքննիչ բողոքը, մերժել է այն՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի որոշումը[2]:

13. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով քննվող բողոքն անմիջականորեն առնչվել է Հ.Պետրոսյանի իրավունքներին և օրինական շահերին, քանի որ վերաբերել է նրա կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու մասով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշմանը:

Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը Հ.Պետրոսյանին պատշաճ կերպով չի տեղեկացրել բողոքի դատական քննության տեղի ու ժամանակի մասին, ինչի արդյունքում վերջինս հնարավորություն չի ունեցել մասնակցելու բողոքի քննությանը, իսկ Վերաքննիչ դատարանը թեև Հ.Պետրոսյանի մասնակցությունն ապահովելու նպատակով դատական նիստը հետաձգել է, այնուամենայնիվ 2017 թվականի սեպտեմբերի 5-ին նշանակված դատական նիստը չի կայացել, իսկ հաջորդ նիստերի մասին նրան ծանուցելու վերաբերյալ տվյալներ գործի նյութերում առկա չեն[3]: Արդյունքում Հ.Պետրոսյանը զրկվել է բողոքի դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից, հետևաբար նաև հնարավորություն չի ունեցել պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկանալու և մեկնաբանելու մյուս կողմի ներկայացրած փաստարկները, այսինքն՝ մյուս կողմի համեմատությամբ հայտնվել է խիստ անբարենպաստ վիճակում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները չեն ապահովել անձի արդար դատաքննության իրավունքն այն պայմաններում, երբ գործով շահագրգիռ անձ Հ.Պետրոսյանին չեն ծանուցել նշանակված դատական նիստերի տեղի և ժամանակի մասին:

14. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 23-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա դրանք բեկանելու համար:

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ և 7-րդ կետերը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7.1-7.3-րդ կետերը:
[3] Տե՛ս սույն որոշման 7-7.3.-րդ կետերը:

15. Ինչ վերաբերում է Շ.Խաչատրյանի ներկայացուցիչներ Գ.Գրիգորյանի և Ս.Բոյաջյանի՝ վճռաբեկ բողոքի պատասխանում նշված՝ Հ.Պետրոսյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի վճռաբեկ բողոքը ժամկետանց լինելու վերաբերյալ պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Պետրոսյանը Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումն իր կամքից անկախ հանգամանքներում ստացել է օրենքով նախատեսված ժամկետի խախտմամբ, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) պետք է հաշվվի բողոքարկվող որոշումը կողմին հասանելի դառնալու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքե սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: «Գալակտիկա Տրանսսերվիս» ՍՊԸ-ի տնօրեն Շուշանիկ Խաչատրյանի ներկայացուցիչների բողոքը բավարարելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0231/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Մ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 18-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հարություն Իգիթի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի հուլիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 30102517 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ Հարություն Իգիթի Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի դեկտեմբերի

25-ի որոշմամբ մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

Մեղադրյալ Հ.Պետրոսյանի պաշտպան Մ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունվարի 26-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը և վերացրել մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը:

Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Մեղադրյալ Հ.Պետրոսյանի պաշտպան Մ.Պողոսյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը:

Տուժողի իրավահաջորդ Ն.Մուրադյանը ներկայացրել է դիմում՝ խնդրելով մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ կիրառել կալանավորումը որպես խափանման միջոց՝ չթողնելով նրան ազատության մեջ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Հ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«2017 թվականի հուլիսի 20-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, վարելով «Մերսեդես Բենցե մակնիշի 77 NT 477 հաշվառման համարանիշի ավտոմեքենան Սպիտակ-Գյումրի ճանապարհով դեպի Գյումրի քաղաք, Շիրակի մարզի Շիրակ գյուղի վարչական տարածքում՝ ավտոճանապարհի 36,3-րդ կիլոմետրի հատվածում, թույլ տալով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի ու ՃԵԿ-ի 2-րդ, 55-րդ և 65-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, ավտոմոբիլը վարելով բնակավայրերից դուրս թեթև մարդատար ավտոմոբիլների երթևեկության համար սահմանված թույլատրելի առավելագույն 90 կմ/ժ-ը գերազանցող՝ 92-93 կմ/ժ արագությամբ, բնակավայրերից դուրս ազատ աջ գոտու առկայության դեպքում տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն, ավտոմոբիլը դուրս է բերել հանդիպակաց երթևեկելի ուղեմաս և իրականացնելով ձախակողմյան երթևեկություն, իր այդ գործողություններով պայմանավորել է ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը ու, ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, բախվել է Սպիտակ քաղաքի ուղղությամբ երթևեկող Մելիքսեթ Սերյոժայի Ալեքսանյանի վարած «Օպել Աստրաե*

մակնիշի 34 CV 840 հաշվառման համարանիշի ավտոմոբիլին, որի հետևանքով անզգուշությամբ առաջացրել է Մելիքսեթ Սերյոժայի Ալեքսանյանի և վերջինիս վարած ավտոմեքենայի ուղևոր Անահիտ Վոլոդիայի Ալեքսանյանի մահը, նույն ավտոմեքենայի ուղևորներ՝ անչափահաս Անանա Արմենի Ալեքսանյանի առողջությանը պատճառել է ծանր աստիճանի տրավմատիկ շոկով, ցերեբրալ կոմայով, ցնցումային համախտանիշով զուգորդված՝ փակ գանգուղեղային վնասվածքի, ձախ ազդրի և սրունքի ոսկրերի կոտրվածքների ձևով, կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, իսկ Սոֆի Մելիքսեթի Ալեքսանյանի առողջությանը՝ աջ ազդրոսկրի միջին երրորդականի փակ կոտրվածքի, աջ բազկի, ձախ ազդրի սալջարդ վերքերի ձևով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 26-27):

Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(…) [Առաջին ատյանի դատարանը] լսելով կողմերի կարծիքները, քննության առնելով միջնորդությունը, ուսումնասիրելով միջնորդությանը կից ներկայացված նյութերը, հիմք ընդունելով քննիչի կողմից բերված պատճառաբանությունները, գտնում է, որ ներկայացված նյութերը, մասնավորապես՝*

- թիվ 60441708, 17-1504, 0141, 0146 փորձագետների եզրակացությունները, վկա Նաիրի Ալավերդյանի ցուցմունքը պարունակում են տեղեկություններ առ այն, որ մեղադրյալ Հ.Պետրոսյանը հնարավոր է առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքի՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի ու ՃԵԿ-ի 2-րդ, 55-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու եղանակով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հետևանքների առաջացմանը: Ինչ վերաբերում է թիվ 60441708 եզրակացության ոչ ամբողջական տեքստով դատարան ներկայացնելուն, ապա դատարանը փաստում է, որ այդ եզրակացության հետևություն մասից հստակ երևում է, որ այն վերաբերում է սույն գործով դեպքին.

- թիվ 60441708 փորձագետների եզրակացությունն իրենում չի պարունակում տեղեկություն, որ Հ.Պետրոսյանը հնարավոր է առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքի՝ ՃԵԿ-ի 65-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու եղանակով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հետևանքների առաջացմանը, քանի որ ըստ այդ եզրակացության՝ ընդհարմանը մասնակից ավտոմոբիլների միևչպատահարային ընթացքի արագությունների ստույգ մեծությունները որոշել տեխնիկական տեսակետից հնարավոր չէ, սակայն արագության հավանական նշումը կատարել է հաշվի առնելով ընդհարմանը մասնակից ավտոմոբիլներից յուրաքանչյուրի արագավազքաչափի վրա արագաչափի ցուցիչ սլաքի սևեռված դիրքերը: Հետևաբար տրանսպորտային միջոցների արագության վերաբերյալ դատարանին ներկայացվել է միայն այնպիսի ենթադրություն, որը որևէ գիտական մեթոդիկայով հիմնավորված

չէ, բացի այդ էլ հաշվի չի առնվել արագության ցուցիչի տեխնիկական հնարավոր սխալանքի հավանականությունը.

- Ն.Մուրադյանի դիմումը և ցուցմունքը պարունակում է տեղեկություններ հարազատների հետ հարևաններ լինելու վերաբերյալ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Հ.Պետրոսյանը, ազատության մեջ գտնվելով, հնարավոր է գործով անցնող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրի՝ վերջիններին ի պաշտպանություն իրեն ցուցմունքներ տալու կամ արդեն իսկ տված ցուցմունքներից հրաժարվելու, դրանք փոփոխելու հորդորներ տալով.

- Հ.Պետրոսյանի կողմից նմուշներ տալուց հրաժարվելու մասին նմուշներ ստանալու որոշման վերջում կատարված գրառումը պարունակում է տեղեկություններ, որ Հ.Պետրոսյանը, լինելով վկայի կարգավիճակում, օգտվելով կասկածյալի իրավունքներից ու պարտականություններից, չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, 65-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով և 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դատավարության մասնակցի պարտականությունը, որով խոչընդոտել է գործի քննությանը՝ գործով պարզման հանգամանքների ուղղությամբ անհրաժեշտ ապացույցներ հավաքելու տեսանկյունից, ուստի ազատության մեջ գտնվելով հնարավոր է նաև այլ եղանակներով շարունակի խոչընդոտել գործի բնականոն ընթացքին, ապացույցների հավաքմանը.

(...)

Ինչ վերաբերում է քննիչի այն պնդմանը, որ մեղադրյալը մնալով ազատության մեջ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, ապա դատարանը գտնում է, որ քննիչի ենթադրությունը, որը չի հիմնավորվում գործով ձեռք բերված նյութերից, ապացույցներից կամ այլ փաստական տվյալներից, չի կարող դրվել միայն ակնկալվող պատժի խստությամբ պայմանավորված, բազմիցս վարույթն իրականացնող մարմին, ինչպես նաև դատարան ներկայացած Հ.Պետրոսյանի կալանավորման հիմքում:

Ինչ վերաբերում է հաշվեհարդար տեսնելու հավանական գործողություններին վերաբերելի քննիչի այն նշումներին, որ Հ.Պետրոսյանին ազատությունից զրկելով հնարավոր է կանխվեն հասարակական անկարգություններ, ապա դրա վերաբերյալ այլ ընթացակարգ է սահմանված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործում են այլ մարմիններ, որոնք պարտավոր են կանխել այդ ենթադրյալ ակնկալվող հասարակական անկարգությունը:

Այսպիսով, (...) [Առաջին ատյանի դատարանը] հաշվի առնելով գործի փաստական բոլոր հանգամանքները, գտնում է, որ դրանք իրենց համակցության մեջ հիմք են տալիս ենթադրություն կատարելու, որ Հարություն Իգիթի Պետրոսյանն ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ ապացույցներ

հավաքելու տեսանկյունից, ինչպես նաև անօրինական ազդեցություն գործադրելով գործով անցնող անձանց նկատմամբ, և հիմք ընդունելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները, դրա վերաբերյալ ՄԻԵԴ-ի ու ՀՀ Վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները՝ վերջինիս պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով նրա նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել կալանավորումը երկու ամիս ժամկետով» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 78-79)։

7. Վերաքննիչ դատարանը, վերացնելով Հ.Պետրոսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը, իր որոշմամբ արձանագրել է. *«[Վերաքննիչ դատարանը] քննարկելով հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցը (…) գտնում է, որ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը միջնորդության քննարկման ժամանակ բավարար տվյալներ ունեցել է մեղադրյալի կողմից ենթադրյալ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևության գալու համար։*

Ինչ վերաբերում է թիվ 60441708 եզրակացությունը ոչ ամբողջական դատարան ներկայացնելուն, ապա Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ընդունելի է դատարանի այն եզրահանգումը, որ այդ եզրակացության «հետևություն» մասից հստակ երևում է, որ այն վերաբերում է տվյալ գործով դեպքին։

Անդրադառնալով բողոքաբերի այն պնդումներին, որ դատարան ներկայացված որևէ նյութով չի հաստատվում, որ Հ.Պետրոսյանն իրականացրել է ձախակողմյան երթևեկություն, իսկ եթե այդպիսին կատարել է, ապա դատարանը պատշաճ ուշադրության չի արժանացրել Հ.Պետրոսյանի ցուցմունքին, որի համաձայն՝ վերջին պահին բախումից խուսափելու նպատակով մեքենան վարել է ձախ, ինչպես նաև, որ ճանապարհի տվյալ հատվածը կահավորված է ընդհատվող գծերով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված վիճելի հանգամանքները ենթակա են պարզաբանման գործի հետագա քննության ընթացքում, հետևաբար տվյալ փուլում վերոնշյալը բավարար է փաստելու, որ մեղադրյալի ենթադրյալ գործողություններն առերևույթ կարող են պարունակել ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հետևանքների առաջացմանը։

Վերաքննիչ դատարանը հիմնավոր կասկածի առկայությունը հավաստելուց հետո հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերի հարցին։

(…)

Առաջին ատյանի դատարանը, (…) նշել է, որ քննիչի այն ենթադրությունը, որ մնալով ազատության մեջ մեղադրյալը կարող է թաքնվել վարույթն

իրականացնող մարմնից չի հիմնավորվում գործով ձեռք բերված փաստական տվյալներից և չի կարող պայմանավորվել միայն ակնկալվող պատժի խստությամբ և դրվել բազմիցս վարույթն իրականացնող մարմին, ինչպես նաև դատարան ներկայացած Հ.Պետրոսյանի կալանավորման հիմքում, որպիսի մոտեցումը Վերաքննիչ դատարանի համար նույնպես ընդունելի է:

Մինչդեռ դատարանը, հաշվի առնելով, որ Ն.Մուրադյանի դիմումը և ցուցմունքը պարունակում են տեղեկություններ՝ հարազատների հետ հարևաններ լինելու վերաբերյալ, գտել է, որ մեղադրյալը ազատության մեջ մնալով, հնարավոր է գործին մասանակից անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրի՝ վերջիններին ի պաշտպանություն իրեն ցուցմունքներ տալու կամ արդեն իսկ տված ցուցմունքներից հրաժարվելու, դրանք փոփոխելու հորդորներ տալով: Դատարանը նաև գտել է, որ մեղադրյալը ազատության մեջ գտնվելով, հնարավոր է նաև այլ եղանակներով շարունակի խոչընդոտել գործի բնականոն ընթացքին և ապացույցների հավաքմանը՝ հաշվի առնելով, որ Հ.Պետրոսյանի կողմից նմուշներ տալուց հրաժարվելու մասին նմուշներ ստանալու որոշման վերջում կատարված գրառումը պարունակում է տեղեկություններ, որ վերջինը, ունենալով վկայի կարգավիճակ, օգտվելով կասկածյալի իրավունքներից և պարտականություններից, չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատավարության մասնակցի պարտականությունը, որով խոչընդոտել է գործի քննությանը:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ եզրահանգումները ենթադրություններ են և չեն բխում դատարան ներկայացված նյութերից, հատկապես հաշվի առնելով, որ փուժողների մտերիմները հարցաքննվել են, իսկ տված ցուցմունքները վկայում են այն մասին, որ մեղադրյալի կողմից նրանց վրա ազդելու հավանականությունը գրեթե անհնար է: Բացի այդ, դեպքի վերաբերյալ տեղեկություններ ունեցող գրեթե բոլոր անձինք արդեն հարցաքննվել են, հիմնական բոլոր քննչական և դատավարական գործողությունները կատարվել են, իսկ նախաքննությունն արդեն գտնվում է ավարտման փուլում: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի գնահատմամբ քիչ է հավանականությունը, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով կարող է ազդել դատավարության մասնակիցների վրա:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ տեղին չէ դատարանի այն եզրահանգումը, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել ապացույցներ հավաքելուն, քանի որ հրաժարվել է նմուշներ տալուց, քանի որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն կասկածյալը պարտավոր է քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ, իսկ ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վկան պարտավոր է քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով համեմատական հետազոտման համար տրամադրել նմուշներ, սակայն Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ապացույցներ հավաքելու խոչընդոտելուն ուղղված գործողությունները կատարելու հավանականությունը նվազել է, հաշվի առնելով նախ պաշտպանի այն պարզաբանումները, որ վարույթն իրականացնող մարմինը պահանջել է մեղադրյալից նմուշներ ստանալ դեպքից տևական ժամանակ անց դեպքի պահին վերջինի հարբածության հավանականությունը պարզելու համար, ինչպես նաև այն, որ նախաքննությունը գտնվում է ավարտման փուլում և գործով հիմնական բոլոր քննչական և դատավարական գործողությունները կատարվել են: Ավելին՝ անձն ունի մեղադրյալի կարգավիճակ, ինչի պայմաններում իր դեմ վկայելու մոտեցումն արդարացվում է: Հատկանշական է նաև, որ դեպքից անցել է մոտ վեց ամիս և մեղադրյալի կողմից չի կատարվել որևէ գործողություն, ինչը կվկայեր հնարավոր ազդեցության վտանգի մասին: Ուստի նման պայմաններում փաստել ազդեցության հավանականության մասին՝ իրատեսական չէ» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 44-47):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, ինչպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը, մեջբերելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներում կալանավորման հիմքերի և պայմանների վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը, գնահատելով նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված և միջնորդությանը կից ներկայացված փաստական տվյալները, եկել է ճիշտ հետևության այն մասին, որ դրանք դատավարության տվյալ փուլում բավարար են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար: Ուստի անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ բացակայում են մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ քրեական գործի նախաքննության ընթացքում դեռևս կատարվում են դեպքի հանգամանքների պարզմանն ուղղված քննչական և դատավարական գործողություններ, որոնց արդյունքում

ակնկալվող փաստական տվյալների ստացման պայմաններում մեծ է հավանականությունը, որ անհրաժեշտություն կառաջանա լրացուցիչ հարցաքննելու արդեն իսկ հարցաքննված անձանց կամ կատարելու նրանց մասնակցությամբ այլ քննչական գործողություններ, ուստի մեղադրյալ Հ.Պետրոսյանի ազատության մեջ գտնվելու պարագայում շարունակում է առկա լինել հավանականությունը, որ վերջինս տվյալ փուլում ևս կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

8.1. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել նաև գործում առկա փաստական տվյալներն այն մասին, որ մեղադրյալը խոչընդոտել է գործի քննությանը՝ ապացույցներ հավաքելու գործընթացին, քանի որ հրաժարվել է նմուշներ տալուց: Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, ինչպես նաև տվյալ արարքի համար նախատեսված պատժի խստությունը:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական*

ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(…)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի (…) անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Դատարանը (…) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ձանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:

12. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն,

որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով (ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱՔԴ/0386/06/15 և այլն):

Ընդ որում, *Ա.Ճուղուրյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը փաստել է. «(…) *ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:*

(…)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ» (տե՛ս *Ա.Ճուղուրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

12.1. Ավելին՝ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), զարգացնելով իր նախադեպային իրավունքը, *Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ բացի ողջամիտ կասկածի առկայությունից, դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից կալանավորման համար «հիմնավոր» և «բավարար» պատճառներ ներկայացնելու պահանջն արդեն իսկ պետք է կիրառվի նախնական կալանք կիրառելու վերաբերյալ **առաջին որոշումը կայացնելու ժամանակ**, այսինքն՝ **ձերբակալելուց «անմիջապես» հետո** (*տե՛ս, mutatis mutandis, Buzadji v. the Republic of Moldova [GC], գանգատ թիվ 23755/07, 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ, կետեր 87 և 102)*: Այլ կերպ՝ սկսած այդ պահից անձի կալանավորման հիմքերի առկայությունը վկայող

հիմնավորումները պետք է լինեն փաստարկված, այն է՝ հիմնված կոնկրետ փաստերի, ինչպես նաև անձը բնութագրող հատկանիշների վրա՝ զերծ ընդհանուր և վերացական բնույթից *(տե՛ս, mutatis mutandis, Aleksanyan v. Russia, գանգատ թիվ 46468/06, 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ, կետ 179, Boicenco v. Moldova, գանգատ թիվ, 41088/05, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ, կետ 142, Khoudoiorov v. Russia, գանգատ թիվ 6847/02, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ, կետ 173, Piruzyan v. Armenia, գանգատ թիվ 33376/07, 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ, կետ 92):* Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «հիմնավոր» և «բավարար» պատճառներ համարվող հիմնավորումները ներառել են այնպիսի հիմքեր, ինչպիսիք են թաքնվելու վտանգը, վկաների վրա ներգործելու նպատակով ճնշում գործադրելու կամ կեղծված ապացույցների վտանգը, նախնական համաձայնության գալու ռիսկը, կրկին հանցագործություն կատարելու վտանգը, հասարակական կարգը խախտելու վտանգը և կալանավորված անձին պաշտպանելու անհրաժեշտությունը (*տե՛ս, mutatis mutandis, StÐgmÐller v. Austria, գանգատ թիվ 1602/62, 1969 թվականի նոյեմբերի 10, կետ 15, Wemhoff v. Germany, գանգատ թիվ 2122/64, 1968 թվականի հունիսի 27, կետ 14, Tomasi v.France, գանգատ թիվ 12850/87, 1992 թվականի օգոստոսի 27, կետ 95, Toth v. Austria, գանգատ թիվ 11894/85, 1991 թվականի դեկտեմբերի 12, կետ 70, Letellier v. France, գանգատ թիվ 12369/86, 1991 թվականի հունիսի 26, կետ 51, I.A. v. France, գանգատ թիվ 1/1998/904/1116, 1998 թվականի սեպտեմբերի 23, կետ 108 և Բադալյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 44286/12, 2017 թվականի հուլիսի 20, կետ 39):*

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, քննարկելով մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդությունը, փաստել է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ ներկայացված նյութերը բավարար են՝ արձանագրելու ինչպես մեղսագրվող արարքին առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածի, այնպես էլ կալանավորման հիմքերի առկայությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, իրավաչափ համարելով Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը մեղադրյալի կողմից ենթադրյալ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին, միաժամանակ գտել է, որ ստորադաս դատարանի դատական ակտը պետք է բեկանել և մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնել, քանի որ կալանավորման հիմքերի վերաբերյալ ստորադաս դատարանի եզրահանգումները ենթադրություններ են և չեն բխում դատարան ներկայացված նյութերից: Վերաքննիչ դատարանն իր դիրքորոշումն հիմնավորել է այն փաստարկով, որ տուժողների մտերիմներն

արդեն հարցաքննվել են, իսկ տված ցուցմունքները վկայում են այն մասին, որ մեղադրյալի կողմից նրանց վրա ազդելու հավանականությունը գրեթե անհնար է: Բացի այդ, ըստ Վերաքննիչ դատարանի՝ հիմնական բոլոր քննչական և դատավարական գործողությունները կատարվել են, իսկ նախաքննությունը գտնվում է ավարտման փուլում: Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել ստորադաս դատարանի նաև այն հետևությունը, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել ապացույցներ հավաքելուն, քանի որ հրաժարվել է նմուշներ տալուց՝ պատճառաբանելով, որ անձն ունի մեղադրյալի կարգավիճակ, ինչի պայմաններում իր դեմ չվկայելու մոտեցումն արդարացվում է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12.1-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են, հիմնավոր չէ:

Այսպես, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ մեղադրյալը չի կարող խոչընդոտել գործի քննությանը, քանի որ *տուժողների մյուրիմներն արդեն հարցաքննվել են, տված ցուցմունքները վկայում են այն մասին, որ մեղադրյալի կողմից նրանց վրա ազդելու հավանականությունը գրեթե անհնար է, բոլոր քննչական և դատավարական գործողությունները կատարվել են, նախաքննությունը գտնվում է ավարտման փուլում* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հիշյալ դատողությունները չեն կարող դիտարկվել որպես բավարար չափով պատճառաբանված՝ փաստացի անհիմն համարելու Առաջին ատյանի դատարանի հետևյալ եզրահանգումը. «*Ն.Մուրադյանի դիմումը և ցուցմունքը պարունակում է տեղեկություններ՝ հարազատների հետ հարևաններ լինելու վերաբերյալ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Հ.Պետրոսյանն ազատության մեջ գտնվելով հնարավոր է գործով անցնող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրի՝ վերջիններին ի պաշտպանություն իրեն ցուցմունքներ տալու կամ **արդեն իսկ տված ցուցմունքներից հրաժարվելու, դրանք փոփոխելու հորդորներ տալով***» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ Վերաքննիչ դատարանի մատնանշած հանգամանքները սույն գործում առկա համապատասխան տվյալների պայմաններում չեն չեզոքացնում մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Այդ առումով Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև բողոքաբերի այն փաստարկը, որ քրեական գործի նախաքննության ընթացքում դեռևս կատարվում են դեպքի հանգամանքների պարզմանն ուղղված քննչական և դատավարական գործողություններ, որոնց

արդյունքում ակնկալվող փաստական տվյալների ստացման պայմաններում մեծ է հավանականությունը, որ անհրաժեշտություն կառաջանա լրացուցիչ հարցաքննելու արդեն իսկ հարցաքննված անձանց կամ կատարելու նրանց մասնակցությամբ այլ քննչական գործողություններ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)։ Ինչ վերաբերում է վերը նշվածի առնչությամբ Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ Առաջին ատյանի դատարանի համապատասխան եզրահանգումները ենթադրություններ են և չեն բխում դատարան ներկայացված նյութերից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա հարցի առնչությամբ ձևավորվող դատողությունները չեն կարող չկառուցվել ենթադրությունների վրա, քանի որ կալանավորման հիմքերն ունեն կանխատեսական բնույթ, և ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ։ Իսկ այն, որ դատարանի եզրահանգումը չի բխել ներկայացված նյութերից, հիմնավոր չէ։

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ապացույցներ հավաքելու գործընթացին խոչընդոտել չի կարող համարվել Հ.Պետրոսյանի կողմից նմուշներ տալուց հրաժարվելը, քանի որ վերջինս ունի մեղադրյալի կարգավիճակ, ինչպիսի պայմաններում արդարացված են իր դեմ չվկայելու գործողությունները, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր դեմ վկայություն չտալու հիմնարար իրավունքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ վկայի, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նմուշներ տալու պարտականության կատարումից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետ, 65-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ և 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ) հրաժարվելը դիտարկվի որպես այդ հիմնարար իրավունքի իրացման դրսևորման ձև։ Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը բխում է նաև Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներից, ըստ որի՝ լռելու իրավունքը բացարձակ չէ (*տե՛ս John Murray v. the United Kingdom, գանգատ թիվ 18731/91, 1996 թվականի փետրվարի 8, կետ 47)*, անձի՝ իր դեմ վկայություն չտալու սկզբունքը չի տարածվում այնպիսի «նյութերի վրա, որոնք կարող են ձեռք բերվել մեղադրյալից հարկադիր լիազորությունները օգտագործելու միջոցով, որը գոյություն ունի կասկածյալի կամքից անկախ, օրինակ, inter alia, փաստաթղթեր, որոնք ձեռք են բերվել կարգադրության արդյունքում, շնչառության, արյան և մեզի նմուշներ և մարմնական հյուսվածք ԴՆԹ փորձաքննության նպատակով» (*տե՛ս, mutatis mutandis, Saunders v. United Kingdom, գանգատ թիվ 19187/91, 1996 թվականի դեկտեմբերի 17, կետ 69, Jalloh v. Germany, գանգատ թիվ 54810/00, 2006 թվականի հուլիսի 11, կետ 112)*։

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մեղադրյալ Հ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման

իրավաչափության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 288-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի ելնելով արդարադատության արդյունավետության շահերից՝ պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին պետք է հաշվակցել մեղադրյալ Հ.Պետրոսյանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2018 թվականի հունվարի 26-ը անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162, 163-րդ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 11-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Հարություն Իգիթի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմանը:

2. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին հաշվակցել 2017 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2018 թվականի հունվարի 26-ը մեղադրյալ Հ.Պետրոսյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0210/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման դեմ ամբաստանյալ Սուսաննա Արթուրի Գասպարյանի պաշտպան Թամարա Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 09125116 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ Սուսաննա Արթուրի Գասպարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով

2016 թվականի նոյեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ մուտքագրվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի

դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճռով Ս.Գասպարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

4. Վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Գասպարյանի պաշտպան Թ.Բաղդասարյանը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ս.Գասպարյանի պաշտպան Թ.Բաղդասարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Ս.Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«(...) 2016 թվականի սեպտեմբերի 07-ին ժամը 17:00-ի սահմաններում Երևան քաղաքի Ռուբինյանց 10 շենքի 17-րդ բնակարանում իրեն պատկանող շունը վերադարձնելու հարցի շուրջ վիճաբանել է Անահիտ Անդրանիկի Աթոյանի հետ, որի ընթացքում բռնի գործողություններ կատարելով ձեռքերով քաշել է վերջինիս մազերից և ձեռքերից, որի հետևանքով Անահիտ Աթոյանը զգացել է ֆիզիկական ցավ ու սպացել առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք՝ աջ դաստակի 3-րդ մատի շրջանի մակերեսային վերքի ձևով»*[1]:

7. **Առաջին ատյանի դատարանում տուժող Անահիտ Աթոյանը** ցուցմունքներ է տվել այն մասին, որ շանը վերադարձնելու հարցի շուրջ 2016թ. սեպտեմբերի 7-ին իր և Ս.Գասպարյանի միջև վիճաբանություն է տեղի ունեցել: Դեպքի օրը Ս.Գասպարյանը ներխուժել է իրենց տուն, բացել է սենյակների դռները, որից հետո քաշել է իր մազերից, ապա վնասել ձեռքերը և եղունգները, որի հետևանքով ձեռքերին բաց վերքեր են առաջացել: Չկարողանալով ազատվել Ս.Գասպարյանից՝ իր տատիկից՝ Եպրաքսյա Հարությունյանից է օգնություն խնդրել, ով վեճի ժամանակ տանն է եղել, սակայն չի միջամտել: Ամբաստանյալ Ս.Գասպարյանի պաշտպանի և

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 77-78:

դատարանի հարցերին Ա.Աթոյանը պատասխանել է, որ ինքը չի կարող ցույց տալ և չի հիշում, թե Ս.Գասպարյանն ինչպես է սեղմել իր ձեռքերը, որ իր եղունգները կոտրել է, նույնիսկ չի պատկերացնում դա, իսկ երբ Ս.Գասպարյանը քաշել է իր մազերը, ինքը կանչել է տատիկին: Պաշտպանի այն հարցին, թե ձեռքերը սեղմելը մինչև մազերը քաշելն է եղել, թե դրանից հետո, Ա.Աթոյանը պատասխանել է՝ մազերը քաշելուց հետո, սակայն պաշտպանի այն հարցին, թե արդյոք տատիկը տեսել է՝ ինչպես է ամբաստանյալը նրա ձեռքերը սեղմում, տուժողը բացասական պատասխան է տվել: Պաշտպանի հարցերին պատասխանելիս Ա.Աթոյանը նաև նշել է, որ ամբաստանյալը շան փաստաթղթերը երկու անգամ ցույց է տվել, անձամբ ինքը չի տեսել, սակայն իր մայրը՝ Լուսինե Աթոյանն ասել է, որ Ս.Գասպարյանն այդ փաստաթղթերը ցույց է տվել իրեն: Տուժողը նաև հայտնել է, որ իր հայրը վաղ առավոտյան իրենից թաքուն է շանը վերադարձրել Ս.Գասպարյանին: Դատարանի հարցերին պատասխանելիս Ա.Աթոյանը հայտնել է, որ երբ իր տատիկը մոտեցել է, ինքը նրան ցույց է տվել ձեռքը, որովհետև արյուն էր գալիս, և որ վկա Մարի Հակոբյանին ինքը տեսել է հաջորդ օրը իրենց խանութում[1]:

8. **Առաջին ատյանի դատարանում վկա Եպրաքսյա Հարությունյանը** ցուցմունքներ է տվել, որ տուժողն իր թոռնուհին է: Դեպքի օրն ինքը խոհանոցում է եղել, երբ Ս.Գասպարյանը եկել է իրենց տուն՝ շան հետ կապված հարցի շուրջ թոռնուհու՝ Ա.Աթոյանի հետ զրուցելու համար: Ինքն այդ պահին գտնվել է խոհանոցում, որտեղից երևացել է սենյակի այն հատվածը, որտեղ տեղի է ունեցել վիճաբանությունը: Վկան հայտնել է, որ մտնելով սենյակ՝ տեսել է, որ Ս.Գասպարյանը քաշում է Ա.Աթոյանի մազերից, ամոթանք է տվել նրան և դուրս հանել տանից:

Մեղադրողի, պաշտպանի և ամբաստանյալի՝ տուժողի մազերը քաշելու մասին հարցերին պատասխանելիս վկան չի պնդել ամբաստանյալի կողմից տուժողի մազերը քաշելու հանգամանքը, այլ միայն նշել է, որ տուժողն ու ամբաստանյալը քաշքշել են միմյանց: Մեղադրողի այն հարցին, թե արդյոք Ա.Աթոյանի ձեռքից արյուն գալիս էր, վկան բացասական պատասխան է տվել: Դատարանի այն հարցին, թե բացի կոտրված եղունգից, տուժողի ձեռքին կամ մատին այլ վնասվածք վկան տեսել է, թե ոչ, վերջինս կրկին բացասական պատասխան է տվել[2]:

9. **Առաջին ատյանի դատարանում վկա Լուսինե Աթոյանը** ցուցմունքներ է տվել այն մասին, որ անձամբ վիճաբանությանն ականատես չի եղել, դեպքի մասին իմացել է իր աղջկանից՝ Ա.Աթոյանից, ով, ցույց տալով իր ձեռքի վնասվածքները, հայտնել է, որ Ս.Գասպարյանը քաշել է իր մազերից, եղունգները պոկել, սակայն չի նշել, թե Ս.Գասպարյանը քանի անգամ է քաշել մազերից և ինչպես է վնասել եղունգները: Վկայի ցուցմունքների համաձայն՝

[1] Տե՛ս դատական նիստի արձանագրություն:
[2] Տե՛ս դատական նիստի արձանագրություն:

վիճաբանության ժամանակ տանն է եղել նաև տուժողի տատը, սակայն վնասվածքը պատճառելու ժամանակ ներկա չի եղել, այլ հետագայում միջամտել և ամոթանք է տվել Ս.Գասպարյանին: Մեղադրողի հարցին վկան պատասխանել է, որ Ա.Աթոյանի ձեռքից արյուն չի եկել[1]:

10. **Առաջին ատյանի դատարանում վկա Մարի Հակոբյանը** ցուցմունքներ է տվել այն մասին, որ դեպքի ժամանակ գտնվել է ընկերուհու բնակարանում, ով ապրում է այն նույն շենքի 3-րդ հարկում, որտեղ բնակվում է Ա.Աթոյանի ընտանիքը: Վկայի ցուցմունքների համաձայն՝ ընկերուհու տանը գտնվելու ժամանակ բղավոցներ է լսել, ճանաչել է Ա.Աթոյանի ձայնը, իսկ հաջորդ օրն անձամբ տեսել է Ա.Աթոյանի ձեռքի վնասվածքը, եղունգների կոտրված վիճակը: Վկայի ցուցմունքների համաձայն՝ ձայներ լսելուց հետո իջել է ներքև, գնացել Աթոյանների խանութ և Լ.Աթոյանից իմացել Ա.Աթոյանի և Ս.Գասպարյանի վիճաբանության մասին: Ամբաստանյալի այն հարցին, թե արդյոք 1-ին հարկի բնակարանի ներսում խոսակցությունը կլսվեր արդյոք 3-րդ հարկում, վկա Մ.Հակոբյանը պատասխանել է, որ ինքը խոսում է բակում, դրսում, այլ ոչ թե բնակարանի ներսում խոսակցության մասին: Լսելով այդ պատասխանը՝ ամբաստանյալն անմիջապես արձագանքել է, որ քրեական գործում չկա որևէ ցուցմունք այն մասին, որ հիշյալ վիճաբանությունը տեղի է ունեցել դրսում: Մեղադրողի հարցին վկան պատասխանել է, որ դեպքի օրը Ա.Աթոյանին չի տեսել, այլ երկրորդ օրն է տեսել, և նա էլ հենց պատմել է, որ վեճ է եղել, և Ս.Գասպարյանը հարվածել է ձեռքին: Դատարանի այն հարցին, թե արդյոք վկան անձամբ տեսել է տուժողի ձեռքի վնասվածքները, վկա Մ.Հակոբյանը պատասխանել է, որ անձամբ տեսել է, որ նրա եղունգները ջարդվել էին, ձեռքը կապույտ էր, իսկ ձեռքերն էլ դողում էին: Պաշտպանի հարցին պատասխանելիս Մ.Հակոբյանը հայտնել է, որ Լ.Աթոյանն է խնդրել իրեն ցուցմունք տալ, ինքն էլ համաձայնել է օգնել[2]:

11. **Առաջին ատյանի դատարանում վկա Համասբյուր Ներսիսյանը** ցուցմունքներ է տվել, որ ինքն անձամբ է բերել շանը Մոսկվայից հատուկ Ս.Գասպարյանի համար: Ցուցմունքներ տալով դեպքի հանգամանքների մասին՝ վկան հայտնել է, որ ինքը և Ս.Գասպարյանը 2016 թվականի սեպտեմբերի 7-ին գնացել են Աթոյաններին պատկանող հացաբուլկեղենի խանութ, որպեսզի զրուցեն շանը վերադարձնելու հարցի շուրջ, քանի որ Ա.Աթոյանը գտել էր շանը և հրաժարվում էր վերադարձնել: Վկայի ցուցմունքների համաձայն՝ խանութում եղել են Ա.Աթոյանը և նրա մայրը, և տեսնելով շանը՝ իրենք պահանջել են հետ տալ, սակայն Ա.Աթոյանն արհամարհական վերցրել է շանը և հեռացել: Վկան ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը մնացել է խանութի մոտ՝ շարունակելով խոսել Ա.Աթոյանի մոր հետ, երբ մի քանի րոպե անց խանութի ետնամասից լսելով տուժողի և ամբաստանյալի ձայները, տղայի գոռգոռոցներ, Լ.Աթոյանի հետ դուրս են եկել

[1] Տե՛ս դատական նիստի արձանագրություն:
[2] Տե՛ս դատական նիստի արձանագրություն:

բակ, տեսել, որ նրանք այնտեղ վիճում են, հետո Ա.Աթոյանի եղբայրը հարբած վիճակում հայհոյել է իրեն և Ս.Գասպարյանին, սպառնացել Ս.Գասպարյանին, փորձել շան փաստաթղթերը վերցնել, բայց ինքը չի տվել, ու իրենք հեռացել են այնտեղից: Վկա Հ.Ներսիսյանը նշել է նաև, որ այդ ամբողջ ընթացքում Ս.Գասպարյանը ոչ ոքի չի հարվածել, իսկ Ա.Աթոյանի բնակարան գնացել է նրա հրավերով: Վկան նաև հայտնել է, որ հաջորդ օրը Ս.Գասպարյանը զանգել և ասել է, որ Ա.Աթոյանի հայրը վաղ առավոտյան բերել է շանը: Մեղադրողի հարցին պատասխանելիս վկան նշել է, որ տուժողն ու ամբաստանյալը միասին են դուրս եկել բնակարանից, եթե Ս.Գասպարյանը ծեծած լիներ Ա.Աթոյանին և վերջինս վնասվածքներ ստացած լիներ, ապա կասեր այդ մասին, սակայն այդ մասին որևէ խոսք չի եղել[1]:

12. **Ս.Գասպարյանը Առաջին ատյանի դատարանում** ցուցմունքներ է տվել, որ նախքան դեպքը մի քանի անգամ խնդրել է Ա.Աթոյանին վերադարձնել իր շանը, սակայն վերջինս չի համաձայնել: Ամբաստանյալի ցուցմունքների համաձայն՝ դեպքի օրն իր ծանոթ Համասբյուր (Համասիկ) Ներսիսյանի հետ, ով այդ շանը Մոսկվայից բերել և իրեն էր նվիրել, վերցնելով շան փաստաթղթերը, գնացել են տուժողի տան մոտ գտնվող նրանց պատկանող խանութ: Խոսակցության ընթացքում բորբոքվել են, ձայները բարձրացրել, և որպեսզի խանութի հաճախորդները չլսեն՝ Ա.Աթոյանն իրեն հրավիրել է տուն: Այնտեղ ինքը փորձել է շանը վերցնել, տուժողն իրեն թույլ չի տվել և հրել է իրեն, ինքն էլ տուժողին է հրել շանը վերցնելու նպատակով: Իրենց ձայները լսելով՝ եկել է Ա.Աթոյանի տատիկը, և ինքն ու տուժողը երկուսով դուրս են եկել բակ: Բակում խոսակցությունը շարունակվել է, ներկա են եղել Ա.Աթոյանի մայրը, եղբայրը և Համասբյուր (Համասիկ) Ներսիսյանը: Պաշտպանի հարցին ամբաստանյալը պատասխանել է, որ Ա.Աթոյանին չի հարվածել, մազերից չի քաշել, ձեռքի մակերեսային վերքը ինքը չի պատճառել: Մեղադրողի հարցին ամբաստանյալը պատասխանել է, որ քաշքշել ասելով՝ նկատի ունի, որ ինքը փորձել է շանը վերցնել, իսկ Անահիտն իրեն հետ է պահել, թույլ չի տվել: Մեղադրողի այն հարցին, թե չէր կարող արդյոք հեռախոսով պատճառվել վնասվածքը, Ս.Գասպարյանը, ցույց տալով իր հեռախոսը, պատասխանել է որ այն ոչ մի սուր եզր չունի: Տուժողի հարցին պատասխանելիս ամբաստանյալը հայտնել է, որ տուժողի հայրը տեսել է շան փաստաթղթերը և դեպքի հաջորդ օրը հենց ինքն է վերադարձրել շանը: Դատավորի հարցերին պատասխանելիս Ս.Գասպարյանը պնդել է, որ տուժողի մազերից չի քաշել, նրա ձեռքերից չի բռնել և չի ոլորել նրա ձեռքերը, նա վայր չի ընկել, այլ միայն փոխադարձ հրել են միմյանց[2]:

13. **Դատաբժշկական փորձագետի թիվ 2796 եզրակացության համաձայն՝** *«Ըստ փորձաքննվողի խոսքերի, 07.09.2016թ. շան հետ կապված վիճաբանության ժամանակ Սուսաննան ներխուժել է իրենց տուն, քաշել է իր*

[1] Տե՛ս դատական նիստի արձանագրություն:
[2] Տե՛ս դատական նիստի արձանագրություն:

մազերից, մի քանի անգամ հարվածել և ճանկռել իր ձեռքը:

(…)

Ա.Աթոյանի մարմնական վնասվածքը՝ աջ դաստակի 3-րդ մատի շրջանի մակերեսային վերքի ձևով, պատճառվել է սուր եզր ունեցող բութ առարկայով, հնարավոր է որոշման մեջ նշած ժամկետին և հանգամանքներում, որը առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում»[1]:

14. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն. *«(…) Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սուսաննա Արթուրի Գասպարյանի կողմից Անահիտ Անդրանիկի Աթոյանի նկատմամբ այլ բռնի գործողությունների կատարմամբ ծեծը, որը չի առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, հաստատված և ապացուցված է, այսինքն՝ Սուսաննա Արթուրի Գասպարյանը մեղավորությամբ կատարել է հանցավոր արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներին, հետևաբար՝ վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի վերը հիշատակված հոդվածով:*

Նման հետևության Դատարանը հանգեց, հաշվի առնելով փուժող Ա.Աթոյանի, վկաների դատաքննական ցուցմունքները, դատարանում հրապարակված և հետազոտված մյուս ապացույցները:

(…)»[2]:

15. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ *«(…) ամբաստանյալ Սուսաննա Գասպարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարված լինելու հանգամանքը հիմնավորված է գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված թույլատրելի ու վերաբերելի ապացույցների բավարար ամբողջությամբ, և այդ մեղադրանքով նրա նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու իրավաչափ հիմք չկա:*

(…)»[3]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

16. Վճռաբեկ բողոք բերած անձը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումն օրինական և հիմնավորված չեն, Ս.Գասպարյանն իրեն մեղսագրված արարքը չի կատարել, իսկ վերոնշյալ դատական ակտերը կայացվել են գործի ելքի վրա ազդած

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 33-34:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 53-65:
[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 47-65:

նյութական և դատավարական իրավունքի էական խախտումներով:

17. Բողոքաբերը նշել է, որ առաջադրված մեղադրանքի կապակցությամբ իր պաշտպանյալ Ս.Գասպարյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ զբոսնելու ժամանակ կորցրել է իր շանը, փնտրել է, սակայն չի գտել: Ս.Գասպարյանն անցորդներից տեղեկացել է, որ ինչ-որ մեկը շանը վերցրել և տարել է: Դեպքից մեկ ամիս անց այգում պատահաբար տեսել է իր շանը մի աղջկա՝ Անահիտ Աթոյանի մոտ: Տեսնելով շանը՝ անմիջապես ճանաչել է, մոտեցել է Ա.Աթոյանին և ասել, որ շունն իրենն է, սակայն Ա.Աթոյանը հրաժարվել է շանը վերադարձնել: Հետո Ս.Գասպարյանը գնացել է Ա.Աթոյանի բնակության վայր և իր շանը վերադարձնելու հարցի շուրջ զրուցել նրա ընտանիքի անդամների հետ: Ա.Աթոյանի հայրը ցանկացել է շանը վերադարձնել Ս.Գասպարյանին, սակայն Ա.Աթոյանը չի համաձայնել: Այնուհետև Ս.Գասպարյանն Ա.Աթոյանի բնակության վայր է գնացել շունն իրեն նվիրած կնոջ հետ, սակայն Ա.Աթոյանը դարձյալ հրաժարվել է վերադարձնել շանը: Ա.Աթոյանն իրեն ագրեսիվ է պահել, որի պատճառով էլ վիճաբանել են միմյանց հետ, սակայն այդ ընթացքում Ա.Աթոյանի մազերից չի քաշել և վերջինիս չի հարվածել: Հաջորդ օրը լուսադեմին Ա.Աթոյանի հայրը շանը բերել և տվել է Ս.Գասպարյանին, իսկ Ա.Աթոյանն այդ մասին տեղեկանալով՝ վրեժ լուծելու շարժառիթով հայտարարություն է ներկայացրել ոստիկանություն, որ իբր բռնության է ենթարկվել Ս.Գասպարյանի կողմից: Իսկ Ս.Գասպարյանը գործի քննության ամբողջ ընթացքում մշտապես պնդել է, որ Ա.Աթոյանի մազերից չի քաշել, վերջինիս չի հարվածել, նրա մատի վրայի քերծվածքն ինքը չի պատճառել և տեղյակ չէ, թե այդ քերծվածքն ինչի հետևանք է: Ս.Գասպարյանը փաստարկել է նաև, որ եթե Ա.Աթոյանի ցուցմունքները համապատասխանեին իրականությանը և ինքը բռնություն գործադրած լիներ Ա.Աթոյանի նկատմամբ՝ ապա վերջինիս հայրը հաջորդ օրը շանը չէր վերադարձնի իրեն:

Վերլուծելով գործի տվյալները՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում դատարանում հետազոտված ապացույցներին, այդպիսիք օբյեկտիվ չեն գնահատվել դատարանի կողմից, պաշտպանության կողմի ներկայացրած փաստարկներն ու հիմնավորումներն անտեսվել են, իսկ միջնորդությունները՝ անհիմն մերժվել:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ դատարանը Ս.Գասպարյանին մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում՝ հիմք ընդունելով տուժող Ա.Աթոյանի, նրա մոր, տատի և մտերիմ հարևանուհու հակասական, կանխակալ և ոչ արժանահավատ ցուցմունքները, ընդ որում՝ էական հակասություններ են առկա ոչ միայն վերոհիշյալ անձանց ցուցմունքների միջև, այլ նաև հենց միևնույն անձի տված ցուցմունքներում:

18. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ

դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը, Ս.Գասպարյանի վերաբերյալ կայացնել արդարացնող դատական ակտ կամ քրեական գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Սուսաննա Գասպարյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում հետևյալ հանցավոր արարքի համար. *«Ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ»:*

21. Մեջբերված հանցակազմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է *Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով* որոշման շրջանակներում և իրավական դիրքորոշում հայտնել այն մասին, որ. *«(...) ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով գործի քննության ժամանակ վարույթն իրականացնող մարմինը պետք է ուշադրություն դարձնի և պատշաճ իրավական գնահատության արժանացնի վկաների, փուժողի, ամբաստանյալների ցուցմունքները և գործի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք թույլ կտան սահմանազատել նախ՝ հանցավոր արարքը ոչ հանցավոր արարքից, ապա քրեորեն հետապնդելի մի արարքը մյուս արարքից և դրանց ճիշտ քրեաիրավական գնահատական տալ»*[1]:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

2. Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

[1] Տե՛ս *Արևիկ և Ծովինար Սահակյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 20-րդ կետը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ուսումնասիրելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում (…) 3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները»:*

23. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով *Սիրակ Սաքանյանի, Մարգար Հակոբյանի, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի, Ֆրունզիկ Գալստյանի գործերով* արտահայտված իրավական դիրքորոշումները, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով* որոշման մեջ նշել է, որ. *«(…) «ապացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.*

անմեղության կանխավարկածը,

վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,

դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն

աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պատճառները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:

32. Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պատճառաբանման չափանիշի միջոցով (...):

(...) քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»[1]:

24. Սույն գործի նյութերից երևում է, Ս.Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իրեն պատկանող շունը վերադարձնելու հարցի շուրջ վիճաբանել է Ա.Աթոյանի հետ, որի ընթացքում ձեռքերով քաշել է վերջինիս մազերից և ձեռքերից, որի հետևանքով Ա.Աթոյանը զգացել է ֆիզիկական ցավ ու ստացել առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք՝ աջ դաստակի 3-րդ մատի շրջանի մակերեսային վերքի ձևով[2]: Առաջին ատյանի դատարանը Ս.Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքը հաստատված է համարել՝ հիմք ընդունելով տուժող Ա.Աթոյանի, վկաների դատաքննական ցուցմունքները, դատարանում հրապարակված և հետազոտված մյուս ապացույցները[3]: Իսկ Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ ամբաստանյալ Ս.Գասպարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարված լինելու հանգամանքը հիմնավորված

[1] Տե՛ս *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-33-րդ կետերը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

է գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված թույլատրելի ու վերաբերելի ապացույցների բավարար ամբողջությամբ, և այդ մեղադրանքով նրա նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու իրավաչափ հիմք չկա[1]:

25. Անդրադառնալով սույն քրեական գործում առկա, ինչպես նաև մեղադրական դատավճռի հիմքում դրված ապացույցներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Գասպարյանն իրեն մեղավոր չի ճանաչել և հերքել է տուժողի մազերից և ձեռքերից քաշքշելու, և նրան որևէ մարմնական վնասվածք պատճառած լինելու հանգամանքը[2]: Հակառակը պնդել է տուժող Ա.Աթոյանը, ով ցուցմունք է տվել, որ Ս.Գասպարյանը քաշել է իր մազերից, վնասել ձեռքերը և եղունգները, որի հետևանքով ձեռքերին բաց վերքեր են առաջացել: Սակայն հենց ինքը՝ տուժողը, Ս.Գասպարյանի պաշտպանի և դատարանի հարցերին պատասխանելիս հայտնել է, որ չի կարող ցույց տալ և չի հիշում, թե Ս.Գասպարյանն ինչպես է սեղմել, որ իր եղունգները կոտրել է, նույնիսկ չի պատկերացնում դա: Տուժողը նաև հայտնել է, որ այդ ժամանակ տանն է եղել իր տատիկը՝ Ե.Հարությունյանը, սակայն վերջինիս կողմից դեպքի մանրամասներին ականատես լինելու հանգամանքի վերաբերյալ տվել է հակասական ցուցմունքներ: Մասնավորապես, թեև տուժողը նշել է, որ իր մազերը քաշելուն պես ինքն անմիջապես կանչել է տատիկին և որ ամբաստանյալն իր ձեռքերը սեղմել է մազերը քաշելուց հետո, այդուհանդերձ, պաշտպանի հարցին պատասխանելիս նշել է, որ տատիկը չի տեսել, թե ինչպես է Ս.Գասպարյանը սեղմել իր ձեռքերը: Ուշադրության է արժանի նաև այն, որ համաձայն՝ դատաբժշկական փորձագետի թիվ 2796 եզրակացության Ա.Աթոյանը դատաբժշկական փորձագետին հայտնել է, որ շան հետ կապված վիճաբանության ժամանակ Ս.Գասպարյանը նաև մի քանի անգամ հարվածել է իրեն, սակայն իր դատաքննական ցուցմունքներում տուժողն այդ հանգամանքը չի պնդել[3]:

Դեպքի միակ ականատես Ե.Հարությունյանի ցուցմունքներով ևս չի հաստատվում Ս.Գասպարյանի կողմից տուժողի մազերը քաշելու և նրան ձեռքի շրջանում մարմնական վնասվածք պատճառելու հանգամանքը: Այսպես, թեև դատարանում վկան սկզբում ցուցմունք է տվել այն մասին, որ քանի որ խոհանոցից հյուրասենյակը երևում է, ինքը տեսել է, որ ամբաստանյալը քաշել է տուժողի մազերից՝ այդուհանդերձ իր հետագա ցուցմունքներում դատավարության մասնակիցների հարցերին պատասխանելիս մի քանի անգամ ժխտել է Ս.Գասպարյանի կողմից Ա.Աթոյանի մազերը քաշելու հանգամանքը, այլ պարզապես նշել, որ նրանք քաշքշել են միմյանց:

[1] Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Վկա Ե.Հարությունյանը նաև նշել է, որ բացի կոտրված եղունգներից, որևէ այլ վնասվածք չի տեսել: Ընդ որում, վկա Ե.Հարությունյանն իր ցուցմունքում չի նշել թոռնուհու արհեստական եղունգները կոտրելուն ականատես լինելու մասին, այլ նշել է, որ տեսել է եղունգները կոտրված վիճակում: Ընդ որում, այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տուժողի եղունգները կոտրելը Ս.Գասպարյանին առաջադրված մեղադրանքի ծավալում ներառված չէ: Վկա Ե.Հարությունյանը չի հաստատել նաև իր թոռնուհու ձեռքից արյուն գալու հանգամանքը, թեև Ա.Աթոյանը ցուցմունք է տվել, որ դեպքից անմիջապես հետո տատիկին ցույց է տվել իր արյունահոսող ձեռքը: Ինչ վերաբերում է եղունգները կոտրվելուն, ապա ինչպես վերը նշվեց, այդպիսի արարք Ս.Գասպարյանին չի մեղսագրվել, և բացի դա, այդպիսի արարքի կատարումը որևէ օբյեկտիվ տվյալով չի ապացուցվում[1]:

Ինչ վերաբերում է վկա Լ.Աթոյանի ցուցմունքներին, ապա վերջինս դեպքին ականատես չի եղել և իր ցուցմունքներում նշել է, որ վիճաբանության մասին տեղեկացել է իր աղջկանից: Ընդ որում, դատարանում տված իր ցուցմունքներում վկան հայտնել է, որ տուժողը չի ասել, թե Ս.Գասպարյանը քանի անգամ է հարվածել, ինչպես է կոտրել իր եղունգները: Վկան նաև նշել է, որ Ա.Աթոյանի ձեռքից արյուն չի եկել[2]:

Վկա Մ.Հակոբյանը ևս դեպքին ականատես չի եղել, այլ պարզապես նշել է, որ դեպքի ժամանակ գտնվել է ընկերուհու բնակարանում, ով ապրում է նույն շենքի 3-րդ հարկում, որտեղ բնակվում է Ա.Աթոյանի ընտանիքը: Վկայի ցուցմունքների համաձայն՝ ընկերուհու տանը գտնվելու ժամանակ բղավոցներ է լսել, ճանաչել է Ա.Աթոյանի ձայնը, սակայն դեպքի մասին տեղեկացել է ոչ թե տուժողից, այլ Լ.Աթոյանից, իսկ տուժողին տեսել է միայն հաջորդ օրը[3]:

Վկա Հ.Ներսիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքից անմիջապես հետո տեսել է ամբաստանյալին և տուժողին, սակայն վերջինս որևէ վնասվածքի մասին չի հայտնել[4]:

26. Սույն որոշման 23-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն որոշման 25-րդ կետում ներկայացված գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել տուժողի, վկաներ Ե.Հարությունյանի, Լ.Աթոյանի և Մ.Հակոբյանի ցուցմունքներն արժանահավատության, ինչպես նաև համակցության մեջ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից: Մասնավորապես, ստորադաս դատարանները նշված ցուցմունքների արժանահավտության

[1] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

տեսանկյունից պատշաճ քննարկման առարկա չեն դարձրել այն հանգամանքը, որ էական հակասություններ կան տուժողի և դեպքի միակ ականատես վկայի ցուցմունքների միջև: Ստորադաս դատարանները Լ.Աթոյանի ցուցմունքները գնահատելիս անտեսել են նաև ապացույցի արժանահավտությունը որոշելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող այն հանագամանքը, ինչպիսին գործի ելքով անձի շահագրգռվածությունն է: Ընդ որում, Լ.Աթոյանի ցուցմունքները չեն հաստատվում գործում առկա այլ օբյեկտիվ ապացույցներով: Ինչ վերաբերում է Մ.Հակոբյանի ցուցմունքներին, ապա դրանք գնահատելիս ստորադաս դատարանները պատշաճ քննարկման առարկա չեն դարձրել վկայի կողմից համապատասխան տեղեկությունների ստացման պայմանները, այն է՝ թե արդյոք 3-րդ հարկի բնակարանից կարող էր լսվել 1-ին հարկի բնակարանում տեղի ունեցած վիճաբանությունը և արդյոք կարող էին նույնականացվել անձանց ձայները, ինչը տվյալ դեպքում կոնկրետ ապացույցի արժանահավատությունը գնահատելու կարևոր պայման էր: Ստորադաս դատարանների կողմից անտեսվել է նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալի կողմից վկային ուղղված այն հարցին, թե արդյոք 3-րդ հարկի բնակարանից կարող էր լսվել 1-ին հարկի բնակարանում տեղի ունեցած վիճաբանությունը, վկան պատասխանել է, որ ինքը խոսում է բակում տեղի ունեցած վիճաբանության մասին, մինչդեռ, ըստ գործի տվյալների՝ հիշյալ վիճաբանությունը տեղի է ունեցել բնակարանում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ստորադաս դատարանները որևէ գնահատականի չեն արժանացրել վկա Հ.Ներսիսյանի ցուցմունքները:

Այսպիսով, սույն քրեական գործում առկա ուղղակի ապացույցներն են՝

- Ս.Գասպարյանի ցուցմունքներն այն մասին, որ ինքը տուժողի մազերից չի քաշել, նրան մարմնական վնասվածք չի պատճառել,

- տուժողի հակասական ցուցմունքներն այն մասին, որ Ս.Գասպարյանը քաշել է իր մազերից, սեղմել ձեռքերը, կոտրել եղունգները:

- ինչպես նաև ականատես վկա Ե.Հարությունյանի ցուցմունքները, որոնք էականորեն հակասում են տուժողի ցուցմունքներին և չեն հաստատում դրանք:

Վերոշարադրյալ վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ ամբաստանյալ Ս.Գասպարյանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարքը:

Հիմք ընդունելով սույն որոշման 22-23-րդ կետերում շարադրված

օրենսդրական պահանջներն ու իրավական վերլուծությունները, ինչպես նաև 25-26-րդ կետերում շարադրված փաստական հանգամանքները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջության բացակայության պայմաններում Ս.Գասպարյանի նկատմամբ կայացրել է մեղադրական դատավճիռ: Մինչդեռ, գնահատելով յուրաքանչյուր ապացույցն ըստ վերաբերելիության և թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ստորադաս դատարանը հաստատված պետք է համարեր, որ գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում Սուսաննա Գասպարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Գասպարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրական դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն անփոփոխ թողնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները և դրանց չեն տվել համարժեք իրավական գնահատական: Արդյունքում դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Նախորդ կետում նշված խախտումները, որոնք ազդել են ամբաստանյալ Ս.Գասպարյանի մեղավորության հարցը որոշելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Ս.Գասպարյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճելու:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սուսաննա Արթուրի Գասպարյանի վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը բեկանել, ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Սուսաննա Արթուրի Գասպարյանին ճանաչել անմեղ և արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0125/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման դեմ Վարտգեզ Լիվանի Գասպարիի պաշտպաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի մարտի 29-ի դատավճռով Վարտգեզ Լիվանի Գասպարին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով: ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ մասով Վ.Գասպարիի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 250.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տուգանք՝ 400.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ Վ.Գասպարիի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ՝ ամբաստանյալ Վ.Գասպարիի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացվել է, և վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 450.000 ՀՀ դրամի չափով:

2. Վերոհիշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Վ.Գասպարիի պաշտպաններ Լ.Հակոբյանի, Տ.Եգորյանի և Դ.Գյուրջյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի մայիսի 27-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Վ.Գասպարիի պաշտպան Տ.Եգորյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է:

4. Որպես նոր հանգամանք վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1394 որոշումը՝ Վ.Գասպարիի պաշտպաններ Տ.Եգորյանը և Դ.Գյուրջյանը դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանը 2018 թվականի հունիսի 1-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և Վ.Գասպարիի պաշտպաններ Տ.Եգորյանի և Դ.Գյուրջյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ. *«(...) Դատավճիռը հրապարակվելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 196):

6. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ. *«(...) Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման մեկամսյա ժամկետը հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե դատավարության մասնակիցն ունի առնվազն 25 օր ժամանակ՝ բողոք ներկայացնելու համար:*

(...) Ինչպես երևում է վերաքննիչ բողոքից, վերաքննիչ բողոքի կից փաստաթղթերից և քրեական գործի նյութերից՝ Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ դատավճռի օրինակը ամբաստանյալ Վարդգես Գասպարիի պաշտպաններ Լուսինե Հակոբյանը, Տիգրան Եգորյանը և Դավիթ Գյուրջյանը ստացել են 2016 թվականի ապրիլի 4-ին, ուստի սույն գործով վերաքննիչ բողոք բերելու վերջնաժամկետը լրացել է 2016թ.-ի ապրիլի 29-ին, մինչդեռ պաշտպանները վերաքննիչ բողոքը «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ին են հանձնել

2016թ. մայիսի 4-ին՝ Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման համար նախատեսված դատավարական ժամկետի հաշվարկմամբ:

(...) Նկատի առնելով, որ ամբաստանյալ Վարդգես Գասպարիի պաշտպաններ Լուսինե Հակոբյանի, Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ժամկետանց է, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել առանց քննության:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 19-26):

7. «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով

ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 8-ին որոշել է՝

«1. (...)

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ հոդվածի՝ «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են ամբողջական ակտի՝ ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին՝ պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորում է դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողի վերաքննիչ բողոքի ընդունելիության վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքների հիմքով ենթակա է վերանայման, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ: (...)»

(տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1394 որոշումը):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճռաբեկ բողոքի հեղինակները նշել են, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի դատավճիռը ստացել են նույն տարվա ապրիլի 4-ին՝ հրապարակման պահից 6 օր անց, և դրա դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել ստացման պահից 1-ամսյա ժամկետի պահպանմամբ՝ 2016 թվականի մայիսի 4-ին: Վերաքննիչ դատարանը, հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վրա, դատավճռի դեմ ներկայացված բողոքը 2016 թվականի մայիսի 27-ի որոշմամբ թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Վ.Գասպարիի պաշտպան Տ.Եգորյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է: Վ.Գասպարիի դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 8-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1394 որոշումը, որով, ի թիվս այլնի, իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ դիմող Վ.Գասպարիի վերաքննիչ բողոքի ընդունելիության վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքների հիմքով ենթակա է վերանայման, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դիմողի նկատմամբ կիրառվել են Սահմանադրական դատարանի տվյալ որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

9. Վ.Գասպարիի պաշտպաններ Տ.Եգորյանը և Դ.Գյուրջյանը որպես նոր հանգամանք վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1394 որոշումը՝ Վճռաբեկ դատարանին **խնդրել են** բեկանել թիվ ԵՇԴ/0125/01/14 գործով կայացված դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 27-ի որոշումն ամբողջությամբ և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ վերաքննիչ բողոքի հիմքերի սահմաններում նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի

դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1394 որոշումը հիմք է արդյոք վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը վերանայելու և Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 27-ի դատական ակտը բեկանելու համար:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերվում է այն հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[1]-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[4]-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

(…):

2. Սույն հոդվածի առաջին մասի (…) 1-ին կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (…) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ (…) [դրա] ուժի մեջ մտնելու պահից»:

«Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 8-ին որոշել է՝

«1. (…)

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ հոդվածի՝ «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են ամբողջական ակտի՝ ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին՝ պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորում է դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողի վերաքննիչ բողոքի ընդունելիության վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքների հիմքով ենթակա է վերանայման, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ և երրորդ կետերում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

(...)»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր վերոնշյալ որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

«(...) բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը դատարանի մեղքով օրենքով սահմանված ժամկետում հասանելի չի դարձել կամ չի հանձնվել իրավասու սուբյեկտին, ապա վերադաս դատական ատյան բողոք բերելու համար հիմք պետք է ընդունել օրենքով նախատեսված ժամկետն ամբողջությամբ՝ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով /այդ թվում՝ էլեկտրոնային/ հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման,

(...)

(...) Հիմք ընդունելով սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն այս իրավիճակում պահպանում է իր նկատմամբ կայացված դատավճռի բողոքարկման հնարավորությունը:

(...)»:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի դատավճիռը Վ.Գասպարիի պաշտպանները ստացել են 2016 թվականի ապրիլի 4-ին և դրա դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել ստանալու պահից 1-ամսյա ժամկետում՝ 2016 թվականի մայիսի 4-ին: Վերաքննիչ դատարանը, հիմնվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վրա, դատավճռի դեմ ներկայացված բողոքը 2016 թվականի մայիսի 27-ի որոշմամբ թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Վ.Գասպարիի պաշտպան Տ.Եգորյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է:

13. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 11-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1394 որոշումը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը վերանայելու և վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մայիսի 27-ի դատական ակտը բեկանելու հիմք է:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման վերանայման արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 27-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ, 426.9-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վարտգեզ Լիվանի Գասպարիի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը վերանայել:

2. Վարտգեզ Լիվանի Գասպարիի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0189/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆԻ
պաշտպան՝ Ա.ՔԱԼԱՇՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով Սամվել Անդրանիկի Բաբայանի, Արմեն Նշանի Պողոսյանի և Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Բաբայանի պաշտպան Ա.Քալաշյանի, ամբաստանյալ Ա.Պողոսյանի պաշտպան Վ.Կիրակոսյանի և ամբաստանյալ Ս.Գաբրիելյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի հունիսի 9-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ նաև ԱԱԾ) քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58207414 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ թիվ 58207414 քրեական գործի վարույթը կասեցվել է քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելուն ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

1.2. 2016 թվականի սեպտեմբերի 20-ին ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 58213816 քրեական գործը:

Նույն թվականի սեպտեմբերի 21-ին ձերբակալվել են Դավիթ Հարությունյանը, Կարեն Քոչարյանը և Ժորա Զաքարյանը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումներով Դավիթ Հարությունյանը, Կարեն Քոչարյանը և Ժորա Զաքարյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

1.3. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 27-ի և նույն թվականի փետրվարի 17-ի որոշումներով բավարարվել է Հրաչյա Մայիլյանի կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարներով և հեռախոսով կայանալիք խոսակցությունները 2-ական ամիս ժամկետով գաղտնալսելու մասին ԱԱԾ հակահետախուզության գլխավոր վարչության պետի միջնորդությունը:

1.4. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 20-ի որոշմամբ թիվ 58207414 քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

2017 թվականի մարտի 22-ին թիվ 58207414 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր քրեական գործ (թիվ 58204317)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասի, 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի կետի հատկանիշներով:

Նույն օրը ձերբակալվել են Սանասար Գաբրիելյանը, Արմեն Պողոսյանը և Սամվել Բաբայանը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 24-ի որոշումներով Ս.Գաբրիելյանը, Ա.Պողոսյանը և Ս.Բաբայանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով ու 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա որոշումներով մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2-ական ամիս ժամկետով:

2017 թվականի մարտի 24-ին Ռոբերտ Ավանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 30-ի որոշմամբ թիվ 58207414 և թիվ 58204317 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է թիվ 58204317 համարով:

2017 թվականի մարտի 31-ին Հ.Մայիլյանին ՀՀ քրեական օրենսգրքի

325-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով և 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ թիվ 58213816 և թիվ 58204317 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է թիվ 58204317 համարով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 17-ի որոշումներով մեղադրյալներ Ս.Գաբրիելյանի, Ա.Պողոսյանի և Ս.Բաբայանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է 2-ական ամիս ժամկետով:

2017 թվականի հունիսի 7-ին Ս.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերացվել է, և այդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է: Ս.Բաբայանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Հրաչյա Մայիլյանի նկատմամբ մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու և պահելու դեպքի առթիվ քրեական հետապնդում չի իրականացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, 37-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով:

2017 թվականի հունիսի 9-ին Հ.Մայիլյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերացվել է, և այդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է: Հ.Մայիլյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշմամբ Ա.Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերացվել է, և այդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է: Ա.Պողոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով:

2017 թվականի հունիսի 12-ին Կ.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 12-ի որոշմամբ

Անդրանիկ Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի հունիսի 13-ին Դ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի հունիսի 13-ին Ժ.Զաքարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 13-ի որոշմամբ Ս.Գաբրիելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերացվել է, և այդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է: Ս.Գաբրիելյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով:

2017 թվականի հունիսի 16-ին թիվ 58204317 քրեական գործից անջատվել է մեղադրյալներ Ս.Բաբայանի, Ս.Գաբրիելյանի, Ա.Պողոսյանի, Կ.Քոչարյանի, Ա.Քոչարյանի, Ժ.Զաքարյանի և Դ.Հարությունյանի վերաբերյալ թիվ 58209617 քրեական գործը:

2017 թվականի հուլիսի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 28-ի դատավճռով Արմեն Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, և դատապարտվել ազատազրկման՝ 2 տարի ժամկետով:

Սանասար Գաբրիելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի ժամկետով:

Սամվել Բաբայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ դատապարտվելով համապատասխանաբար 3 տարի և 3 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ Ս.Բաբայանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 տարի ժամկետով:

Ամբաստանյալներ Ա.Պողոսյանի, Ս.Գաբրիելյանի և Ս.Բաբայանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ժ.Զաքարյանը, Ա.Քոչարյանը, Դ.Հարությունյանը և Կ.Քոչարյանը:

3. Ամբաստանյալ Ա.Պողոսյանի պաշտպան Վ.Կիրակոսյանի, ամբաստանյալ Ս.Բաբայանի պաշտպան Ա.Քալաշյանի և ամբաստանյալ Ս.Գաբրիելյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի փետրվարի 27-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 28-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Պողոսյանի պաշտպան Վ.Կիրակոսյանը, ամբաստանյալ Ս.Բաբայանի պաշտպան Ա.Քալաշյանը և ամբաստանյալ Ս.Գաբրիելյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 25-ի որոշմամբ վարույթ են ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. «Հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու և դրանք ձայնագրառելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին» Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 27-ի և նույն թվականի փետրվարի 17-ի նույնաբովանդակ որոշումների համաձայն՝ *«ՀՀ ԱԱԾ հակահետախուզության գլխավոր վարչությունում տվյալներ են ստացվել այն մասին, որ Հրաչյա Սարգսի Մայիլյանը (...) ներգրավված է կեղծ փաստաթղթերի պատրաստման և իրացման գործընթացում:*

(...) Հ.Մայիլյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարներով խոսակցությունները կարող են պարունակել հիշյալ տեղեկատվությունը հիմնավորող տվյալներ, որոնց օգտագործումը կնպաստի հանցագործության բացահայտմանն ու ապացույցների ձեռքբերմանը, քանզի առկա են հանցագործության հատկանիշներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ և 178-րդ հոդվածի 3-րդ մասով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 141, 143):

5.1. ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով կատարված հարցումների արդյունքներով ստացված՝ 2017 թվականի հունվարի 27-ի՝ թիվ 9/A-245-CF/208/139/16 գրության համաձայն՝ *«(...) Հայտնում ենք, որ Ինտերպոլի Գլխավոր քարտուղարության «Դրամանենգության և հատուկ պաշտպանվող փաստաթղթերի վարչության» փորձագետ պարոն Մալիկ Ալիբեկովիչը տեղեկացնում է, որ հաշվի առնելով այն փաստը,*

որ ՀՀ-ում հայտնաբերված գունավորված եվրո թղթադրամների վրա առկա են Եվրոպական Կենտրոնական բանկի 3 տարբեր նախագահների ստորագրություններ, հետևաբար դրանք տարբեր ժամանակներում են գողացվել:

Միաժամանակ հայտնում է, որ դիմել է երեք տարբեր մարմիններից՝ Եվրոպոլին. Իտալիայի և Ֆրանսիայի իրավասու մարմիններին՝ վերջիններիս մուտեցումներին ծանոթանալու նպատակով:

Եվրոպոլից ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ-ում հայտնաբերված գունավորված եվրո թղթադրամների տվյալները մուտքագրվել են Եվրոպոլի համապատասխան տվյալների պահոց, և ստուգումների արդյունքում որևէ համընկնում չի գրանցվել (...):

Իտալիայի իրավասու մարմիններին է փոխանցվել X09178737887 սերիահամարի 50 եվրո արժողության թղթադրամը: Վերջիններս տեղեկացնում են, որ նախնական փորձաքննությամբ պարզվել է, որ թղթադրամի մակերեսի վրա առկա ներկանյութի բաշխվածությունից կարելի է հաստատել, որ նշված թղթադրամը հորիզոնական դիրքով տեղադրված է եղել կոնտեյների մեջ: Թղթադրամը երեք տարբեր ուղղություններից ներկող կարմիր գույնը և վ/ն թղթադրամի վրա առկա ներկի քանակը վկայում է այն մասին, որ դա բնորոշ է բանկոմատներում անվտանգության նպատակով տեղադրված ներկերին: Ակնհայտ է, որ թղթադրամի վրա ներկերի մաքրման փորձը քիմիական նյութերի միջոցով փոխում է վերջինիս ֆիզիկական բնութագիրը, գույնը, հոլոգրամը, բաղադրությունը և փայլը: Լամպի լույսի տակ թղթադրամի վրա հստակ երևում են պաշտպանիչ մանրաթելերը: Այս բոլորը հաշվի առնելով Իտալիայի իրավասու մարմինները հաստատում են, որ թղթադրամը գողացվել է պաշտպանիչ ներկանյութեր պարունակող բանկոմատից:

(...)

Ձեր նախորդ գրության մեջ ներկայացված հարցադրումներին Մալիկ Ալիբեկովիչից ստացվել են հետևյալ պատասխանները:

*Այն փաստը, որ թղթադրամների վրա առկա են բանկոմատներում անվտանգության նպատակով կիրառվող ներկանյութեր, հաստատում է, որ այդ բանկոմատները հանցագործների կողմից հարձակման են ենթարկվել: **Նաև հնարավոր է, որ թղթադրամները ներկոտվեն բանկոմատների տեղափոխման ընթացքում առաջ եկած տեխնիկական կամ մարդկային գործոնի կողմից որևէ խնդիր առաջանալու դեպքում:** Այս դեպքերում թղթադրամները կարող են փոխանակել Ազգային կենտրոնական բանկերում միայն իրավասու մարմինների կողմից՝ որոշակի տոկոսային պահումով:*

Եթե թղթադրամը պատահաբար ներկոտվել է, ապա այն շրջանառության մեջ դնելու միակ տարբերակը ֆինանսական հաստատության աշխատակիցների կամ ընկերությունների կողմից կատարվող «ներքին գողություն» է, որը հազվադեպ հանդիպող երևույթ է: Հատուկ ներկանյութերով

ներկուրված թղթադրամների առկայությունն այսպիսով ցույց է տալիս, որ դրանք գողացվել են այս կամ այն գործելաոճի միջոցով:

Երբեմն կոնտեյներները խնամքով չեն տեղադրվում բանկոմատների մեջ, ուստի հնարավոր է, որ դրանք սխալ գործարկվեն: Նման դեպքերում ընկերություններին հնարավորություն է տրվում փոխանակել պատահաբար վնասված թղթադրամները *(...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 231-232):

6. Ամբաստանյալ Ս.Բաբայանի պաշտպան Ա.Քալաշյանը 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատական նիստում միջնորդել է՝ *«Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանից պահանջել Հրաչյա Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը թույլատրելու վերաբերյալ նյութերը՝ դրանք հետազոտելու համար»* (տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 119-120):

6.1. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի՝ «Դատաքննությունը լրացնելու վերաբերյալ հարուցված միջնորդությունը քննարկելու մասին» որոշման համաձայն՝ *«(...) [Մ]ույն գործով որպես մեղադրյալ հարցաքննված Հրաչյա Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը թույլատրելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշման հիմքում դրված նյութերը վարչական շրջանների նույն դատարանից պահանջելու և գործին կցելու վերաբերյալ [պաշտպանության կողմի միջնորդությունը] բավարարել»* (տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 125-126):

6.2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի՝ 2017 թվականի նոյեմբերի 6-ի գրության համաձայն՝ *«[Նույն դատարանի] 27.01.2017թ. որոշմամբ բավարարվել է (...) Հրաչյա Սարգսի Մայիլյանի կողմից օգտագործվող (...) բջջային հեռախոսահամարներով կայանալիք խոսակցությունները 2 ամիս ժամանակով գաղտնալսելու մասին: Նշված որոշումն օրենքով սահմանված կարգով գաղտնազերծվել է: (...) Ինչ վերաբերում է պահանջված այլ տեղեկատվությանը, ապա դրանք չեն կարող տրամադրվել, քանի դեռ օրենքով սահմանված կարգով գաղտնազերծված չեն»* (տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 5):

6.3. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 28-ի դատավճռով արձանագրվել է. *«(...) Ս.Գաբրիելյանը, Ա.Պողոսյանը և այլ անձինք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, խմբի կազմում կամ ավելի ուշ ընդգրկվելով նույն խմբում, Ս.Բաբայանի դրդմամբ ապօրինի ձեռք են բերել, փոխադրել և պահել ռազմամթերք, այսինքն՝ Ս.Գաբրիելյանը և Ա.Պողոսյանը կատարել են հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Ս.Բաբայանը՝*

հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով:

Բացի այդ, Ս.Բաբայանը, տեղեկացված լինելով, որ Ռուսաստանի Դաշնությունում բնակվող իր մտերիմ Տիգրան Հովհաննիսյանի ծանոթները հնարավորություն ունեն տրամադրելու ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված՝ հափշտակված, սակայն ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկոտված եվրոյի թղթադրամների խմբաքանակ՝ վճարելով դրա անվանական արժեքի 52 տոկոսը, մտադրվել է նշված գույքը ձեռք բերել և տեղափոխել ՀՀ, քիմիական մաքրման և վերամշակման եղանակով խեղաթյուրելով դրա հանցավոր ծագումն ու իրական բնույթը՝ որպես հնամաշ թղթադրամներ Հայաստանի Հանրապետության տարածքում դնել օրինական շրջանառության մեջ (...):

(...)

Այսպիսով, Ս.Բաբայանը կատարել է նաև հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ (...) վերջինիս օժանդակած Կարեն Քոչարյանը, Դավիթ Հարությունյանը, Անդրանիկ Քոչարյանը և Ժորա Զաքարյանը՝ հանցավոր արարքներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 1-ին մասով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 14-րդ, թերթեր 25-134):

6.4. Առաջին ատյանի դատարանի դատավճռով արձանագրվել է նաև հետևյալը. *«(...) Անդրադառնալով պաշտպանական կողմի վիճարկումներին, դրա հիմքում դրված «Ներքին դիտում» և «Հեռախոսային խոսակցությունների լսում և ձայնագրառում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների՝ որպես ապացույց անթույլատրելիության և օգտագործման անհնարինության վերաբերյալ պնդումներին /նաև միջնորդությանը/ (...) [Առաջին ատյանի դատարանը] փաստում է, որ դրանց մի մասն անհիմն է, իսկ մյուս մասի քննարկումն ու լուծումը դուրս է գործն ըստ էության լուծող դատարանի լիազորությունների սահմաններից, քանի որ՝*

- գործի նյութերում առկա և դատաքննությամբ հետազոտվել են համապատասխան փաստաթղթեր, որոնք հաստատում են այն, որ վերոնշյալ [օպերատիվ-հետախուզական] միջոցառումներն իրականացվել են [Առաջին ատյանի դատարանի] թույլտվությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանր հանցանք կատարելու համար կասկածվող Հրաչյա Մայիլյանի նկատմամբ, հետևաբար՝ չպարզված աղբյուրից կամ դատավարական կարգի խախտմամբ վերոնշյալ ապացույցները ձեռք բերելու վերաբերյալ պաշտպանական կողմի պնդումները փաստական հիմք չունեն, վերացական դատողություններ են, տվյալ [օպերատիվ-հետախուզական] միջոցառումներ իրականացրած հետաքննության մարմնի ղեկավարի և համապատասխան աշխատակիցների

գործողությունները պաշտպանական կողմը կարող էր այդ փաստաթղթերն իրենց հասու դառնալու պահից վիճարկել դատախազական հսկողության, ապա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, իսկ նշված [օպերատիվ-հետախուզական] միջոցառումների իրականացումը թույլատրած դատարանի որոշումները՝ վերաքննության կարգով, քանի որ այդ [օպերատիվ-հետախուզական] միջոցառումների արդյունքներն անմիջականորեն վերաբերելի էին ինչպես Սամվել Բաբայանին, այնպես էլ սույն գործով մյուս ամբաստանյալներին /առնչվում էին նրանց շահերին/(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 14-րդ, թերթեր 25-134):

6.5. ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով կատարված հարցումների արդյունքներով ստացված՝ 2017 թվականի հունվարի 27-ի՝ թիվ 9/A-245-CF/208/139/16 գրությունն Առաջին ատյանի դատարանի դատավճռում մեջբերվել է հետևյալ կերպ. *«(...) ՀՀ-ում հայտնաբերված և սպուգման համար նրանց ներկայացված գունավորված եվրո թղթադրամների վրա առկա են Եվրոպական Կենտրոնական Բանկի 3 տարբեր նախագահների ստորագրությունները, հետևաբար՝ դրանք «գողացվել են տարբեր ժամանակներում»: Իտալիայի իրավասու մարմիններին փոխանցված X սերիայի 09178737887 համարի 50 եվրո արժողությամբ թղթադրամի նախնական փորձաքննությամբ հաստատվել է, որ թղթադրամը գողացվել է պաշտպանիչ ներկանյութեր պարունակող բանկոմատից, թղթադրամի մակերեսի վրա առկա ներկանյութի բաշխվածությունից կարելի է պնդել, որ նշված թղթադրամը հորիզոնական դիրքով տեղադրված է եղել կոնտեյների մեջ: Թղթադրամը երեք տարբեր ուղղություններից ներկող կարմիր գույնը և դրա վրա առկա ներկի քանակը վկայում է այն մասին, որ դա բնորոշ է բանկոմատներում անվտանգության նպատակով տեղադրված ներկերին: Թղթադրամների վրա բանկոմատներում անվտանգության նպատակով կիրառվող ներկանյութերի առկայությունը փաստում է, որ այդ բանկոմատները հանցագործների կողմից հարձակման են ենթարկվել: Եթե թղթադրամը պատահաբար է ներկոտվել, ապա այն շրջանառության մեջ դնելու միակ տարբերակը ֆինանսական հաստատության աշխատակիցների կամ ընկերությունների կողմից կատարվող «ներքին գողություն» է, որը հազվադեպ հանդիպող երևույթ է: «Հատուկ ներկանյութերով ներկոտված թղթադրամների առկայությունը ցույց է տալիս, որ դրանք գողացվել են այս կամ այն եղանակով»* (տե՛ս քրեական գործ, հատոր 14-րդ, թերթեր 25-134):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Պողոսյանի պաշտպան Վ.Կիրակոսյանի, ամբաստանյալ Ս.Բաբայանի պաշտպան Ա.Քալաշյանի և ամբաստանյալ Ս.Գաբրիելյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում հանգում է այն հետևության, որ բերված վերաքննիչ բողոքները բավարարելու և ամբաստանյալներին արդարացնելու հիմքեր չկան, նկատի ունենալով, որ*

դատարանը դատավճիռ կայացնելիս թույլ չի տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հանգեցնել դատական սխալի» (տե՛ս քրեական գործ, հատոր 16-րդ, թերթեր 1-147):

<u>Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Ամբաստանյալ Ա.Պողոսյանի պաշտպան Վ.Կիրակոսյանը գտել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ, 358-րդ և 360-րդ հոդվածների պահանջները:

Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքաբերը, վկայակոչելով սույն գործի նյութերը, նշել է, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանը կամովին հրաժարվել է ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելուց, որպիսի հանգամանքն անտեսվել է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից:

8.1. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Վ.Կիրակոսյանը խնդրել է ամբաստանյալ Ա.Պողոսյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և կայացնել արդարացման դատական ակտ:

9. Ամբաստանյալ Ս.Բաբայանի պաշտպան Ա.Քալաշյանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է անօրինական ու չհիմնավորված դատական ակտ: Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 107-րդ, 127-րդ, 358-րդ, 360-րդ և 365-րդ հոդվածների պահանջները:

Բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի հետևություն-ները չեն համապատասխանում դատաքննությամբ հետազոտված ապացույց-ներին, դրանք պատճառաբանված չեն, իսկ եղած պատճառաբանությունները ենթադրական դատողություններ են: Բողոք բերած անձի համոզմամբ Ս.Բաբայանի մեղավորությունը դատաքննության արդյունքներով չի հաստատվել, չփարատված կասկածները հօգուտ ամբաստանյալի չեն մեկնաբանվել, և Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմքում դրվել են այնպիսի ապացույցներ, որոնք ոչնչով չեն հիմնավորում առաջադրված մեղադրանքները:

Բացի այդ, բողոքաբերը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՔՐԴ/0632/01/08, թիվ ԵԷԴ/0058/01/10, թիվ ԵԿԴ/0252/01/13, թիվ ԳԴ/0002/01/14, թիվ ՎԲ-46/07 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, համադրել է դրանք սույն գործի փաստական հան-գամանքներին և եզրահանգել, որ Ս.Բաբայանին առաջադրված մեղադրանքն ամբողջությամբ կառուցված է ենթադրությունների վրա, դրանում նշված ձևակերպումները չեն բխում գործով ձեռք բերված նյութերից և չեն հաստատվում հավաստի, փոխկապակցված ու բավարար ապացույցներով:

9.1. Վերոգրյալին զուգահեռ բողոքի հեղինակը նշել է, որ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել ծանոթանալու Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը թույլատրելու համար հիմք ծառայած նյութերին, որոնց օրինականությունը, ըստ բողոքաբերի, կասկածելի է: Մասնավորապես, հիմնազուրկ են Առաջին ատյանի դատարանի այն դատողությունները, որ նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումները ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանր հանցանք կատարելու համար կասկածվող Հ.Մայիլյանի նկատմամբ իրականացվել են դատարանի թույլտվությամբ, և որ պաշտպանության կողմը կարող էր իրեն հասու դառնալու պահից դրանք վիճարկել: Բողոք բերած անձը գտել է, որ սույն գործի նախաքննության ընթացքում Հ.Մայիլյանի կողմից առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարելու մասին որևէ տվյալ ձեռք չի բերվել, և այդ ծանր հանցագործությունն ապօրինաբար է նշվել Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը թույլատրելու միջնորդության մեջ: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը թույլատրելու վերաբերյալ դատարանի որոշումները չվիճարկելուն, ապա բողոքաբերը փաստել է, որ թեև Առաջին ատյանի դատարանը բավարարել է նշված որոշումների հիմքում դրված նյութերը պահանջելու մասին իր միջնորդությունը, սակայն դրանք այդպես էլ դատարան չեն ներկայացվել՝ գաղտնազերծված չլինելու պատճառաբանությամբ: Նման պայմաններում պաշտպանության կողմը, ըստ բողոքի հեղինակի, զրկվել է գաղտնալսումների արդյունքում ստացված և վճռորոշ նշանակություն ունեցող ապացույցների թույլատրելիությունը վիճարկելու հնարավորությունից:

9.2. Բողոքաբերը գտել է նաև, որ սույն գործով իրեղեն ապացույց թղթադրամների՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հանցագործություններից որևէ մեկի կատարման արդյունքում ստացված լինելն ու, հետևաբար, այդ թղթադրամների՝ նշված հոդվածով նախատեսված հանցակազմի առարկա լինելն ապացուցված չէ: Այս կապակցությամբ բողոքի հեղինակը մատնանշել է ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի գրությունը և փաստել, որ դրանում նշված դատողություններն ամբողջությամբ չեն արտացոլվել մեղադրական եզրակացության մեջ, որպիսի հանգամանքն անտեսվել է դատարանների կողմից:

9.3. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Ա.Քալաշյանը խնդրել է ամբաստանյալ Ս.Բաբայանի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը և կայացնել արդարացման դատական ակտ՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

10. Ամբաստանյալ Ս.Գաբրիելյանը նույնպես գտել է, որ Վերաքննիչ

դատարանի կողմից կայացվել է անօրինական ու չհիմնավորված դատական ակտ: Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 107-րդ, 127-րդ, 358-րդ, 360-րդ և 365-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ հիմնագուրկ են մեղադրական եզրակացության մեջ տեղ գտած մի շարք ձևակերպումներ: Մասնավորապես, բողոք բերած անձը փաստել է, որ Ս.Բաբայանի կողմից նյութապես շահագրգռելու եղանակով իրեն ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելուն դրդելը կամ զենք ձեռք բերելու համար 50.000 ԱՄՆ դոլար խոստանալը գործի նյութերում առկա որևէ փաստական տվյալով չեն հաստատվում: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված որոշակի տվյալներին, ապա դրանք, ըստ բողոքաբերի, կամայականորեն են մեկնաբանվել և հիմք ընդունվել որպես մեղադրանքը հիմնավորող ապացույցներ:

Բացի այդ, բողոքի հեղինակը վկայակոչել է հանցագործությունից կամովին հրաժարման և հանցակցության վերաբերյալ քրեաիրավական նորմերը և եզրահանգել, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն, որ ինքը հրաժարվել է ռազմամթերքը ձեռք բերելու հանցավոր մտադրությունից և տեղյակ չի եղել Հ.Մայիլյանի՝ նշված ռազմամթերքի համար վճարման կամ տեղափոխման հետագա գործողություններից:

10.1. Վերոշարադրյալի հիման վրա ամբաստանյալ Ս.Գաբրիելյանը խնդրել է իր մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը և կայացնել արդարացման դատական ակտ՝ հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց կամովին հրաժարման պատճառաբանությամբ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման, այդ միջոցառման կատարման արդյունքում ձեռք բերված ապացույցը գործի դատաքննության ընթացքում գնահատման ենթարկելու, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) հանցակազմի հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցություն-

ների գաղտնալսման արդյունքների թույլատրելիությունն արդյո՞ք պատշաճ գնահատման է ենթարկվել ստորադաս դատարանների կողմից:

13. ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:*

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) *Կլասսը և այլոք ընդդեմ Գերմանիայի* գործով վճռում նշել է, որ չնայած հեռախոսային խոսակցություններն ուղղակիորեն

հիշատակված չեն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասում, այդպիսիք ներառվում են «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացություններում[1]:

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը փաստել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով՝ պետական մարմինների միջամտությունն անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին թույլատրվում է այն դեպքում, երբ «նախատեսված է օրենքով»: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ այս ձևակերպումը ոչ միայն պահանջում է համապատասխանություն ներպետական օրենքին, այլև վերաբերում է օրենքի որակին՝ պահանջելով դրա համապատասխանությունն իրավական պետությանը: Հասարակական հսկողության բացակայության և իշխանությունը չարաշահելու վտանգի պատճառով պետական մարմինների կողմից հեռահաղորդակցության հսկողության և գաղտնալսման գաղտնի միջոցառումների համատեքստում ներպետական օրենսդրությունը պետք է ապահովի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին կամայական միջամտությունից անձի պաշտպանությունը: Հետևաբար ներպետական օրենսդրությունը պետք է հստակ լուսաբանի պետական իրավասու մարմինների կողմից նման գաղտնի միջոցառումների կիրառման հանգամանքներն ու պայմանները[2]: Այլ խոսքով՝ օրենքը պետք է բավականաչափ հստակ լինի իր հասկացությունների մեջ՝ պատշաճ կերպով անձին մատնանշելով այն հանգամանքները, որոնց դեպքում հանրային իշխանություններն իրավասու են նման գաղտնի միջոցների դիմել[3]: Ընդ որում, Եվրոպական դատարանը գտել է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը և վերահսկման այլ ձևերը լուրջ միջամտություն են անձնական կյանքի և հաղորդակցության նկատմամբ և համապատասխանաբար պետք է հիմնված լինեն հատկապես հստակ «օրենքի» վրա: Կարևոր է խնդրի վերաբերյալ ունենալ հստակ և մանրամասն կանոններ, հատկապես երբ կիրառման համար առկա տեխնոլոգիաները շարունակաբար կատարելագործվում են[4]:

13.1. Վերահաստատելով և զարգացնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Եվրոպական դատարանը մշակել է նվազագույն երաշխիքների շարք, որոնք պետք է սահմանվեն օրենսդրությամբ՝ լիազորությունների չարաշահումներից խուսափելու նպատակով. հանցագործությունների բնույթը, որոնք կարող են վերահսկման մասին որոշում կայացնելու հիմք հանդիսանալ,

[1] Տե՛ս *Klass and others v. Germany* գործով 1978 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 5029/71, կետ 41:
[2] Տե՛ս *Halford v. the UK* գործով 1997 թվականի հունիսի 25-ի վճիռը, գանգատ թիվ 20605/92, կետ 49:
[3] Տե՛ս *Malone v. the UK* գործով 1984 թվականի օգոստոսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 8691/79, կետ 67:
[4] Տե՛ս *Kopp v. Switzerland* գործով 1998 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 13/1997/797/1000, կետ 72:

մարդկանց այն կատեգորիաների սահմանումը, որոնց հեռախոսները կարող են ենթակա լինել գաղտնալսման, հեռախոսների գաղտնալսման ժամանակահատվածը, այն ընթացակարգը, որին պետք է հետևել ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահպանման համար, կանխարգելիչ միջոցները, որոնք պետք է ձեռնարկել այդ տվյալներն այլ կողմերին հաղորդելու դեպքում, և այն հանգամանքները, որոնց դեպքում ձայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն կամ ժապավենները՝ ոչնչացվեն[1]:

13.2. Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ երբ պետությունը սկսում է գաղտնի հսկողություն, որի գոյությունը հայտնի չէ հսկվող անձանց, և արդյունքում այդ հսկողությունը հնարավոր չի լինում բողոքարկել, Կոնվենցիայի 8-րդ հոդվածը կարող է էականորեն նսեմացվել: Նման իրավիճակում հնարավոր է, որ անձի նկատմամբ վարվեն 8-րդ հոդվածին հակասող կերպով կամ անգամ զրկեն նրան այդ հոդվածով երաշխավորված իրավունքից՝ առանց նշված անձի գիտության, և, հետևաբար, առանց իրավական պաշտպանության միջոց ստանալու հնարավորության թե՛ ներպետական մակարդակում և թե՛ կոնվենցիոն ինստիտուտներում[2]:

Բացի այդ, Եվրոպական դատարանը գտել է, որ ուշադրությունից չպետք է դուրս մնան այն հատուկ պատճառները, որոնք հիմնավորում են գաղտնի միջոցների վերաբերյալ գործերով Եվրոպական դատարանի նահանջն ընդհանուր մոտեցումից, ինչը կհերքի անձի իրավունքը՝ in abstracto բողոքարկելու օրենքը: Հիմնական նպատակն է ապահովել, որ նման միջոցների գաղտնիությունը չհանգեցնի դրանց անբողոքարկելիությանը և ներպետական դատական մարմինների ու Եվրոպական դատարանի իրավասությունից դուրս գալուն: Կոնկրետ գործով գնահատելու համար, թե արդյոք ֆիզիկական անձը կարող էր բողոքել գաղտնի հսկողության միջոցներ թույլատրող օրենսդրության հասարակ գոյության հետևանք հանդիսացող միջամտության դեմ, Եվրոպական դատարանը պետք է հաշվի առնի ներպետական մակարդակում իրավական պաշտպանության ցանկացած միջոցի հասանելիությունը և անձի նկատմամբ գաղտնի հսկողության միջոցների կիրառման ռիսկը: Այն դեպքում, երբ ներպետական մակարդակում չկա գաղտնի հսկողության միջոցների ենթադրյալ կիրառումը բողոքարկելու հնարավորություն, լայն հասարակության մոտ մեծ տարածում ունեցող կասկածը և մտահոգությունն առ այն, որ գաղտնի հսկողության միջոցները չարաշահվում են, անհիմն չեն լինի: Այս դեպքերում, անգամ երբ հսկողության

[1] Տե՛ս *Weber and Saravia v. Germany* գործով 2006 թվականի հունիսի 29-ի որոշումը, գանգատ թիվ 54934/00, կետ 95, *Association for European Integration and Human Rights and Ekimdziev v. Bulgaria* գործով 2007 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 62540/00, կետ 76, *Liberty and Others v. the UK* գործով 2008 թվականի հուլիսի 1-ի որոշումը, գանգատ թիվ 58243/00, կետ 95:

[2] Տե՛ս *Klass and others v. Germany* գործով 1978 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 5029/71, կետ 36:

իրական ռիսկը ցածր է, այնուամենայնիվ, առկա է դատարանի կողմից ստուգման անհրաժեշտություն[1]:

13.3. Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պաշտպանության, իսկ ավելի կոնկրետ՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսմանն առնչվող՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ա) Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ հեռախոսային խոսակցությունները ներառվում են «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացություններում,

բ) միջամտությունը հեռախոսային խոսակցություններին պետք է լինի օրենքին համապատասխան, անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և հետապնդի իրավաչափ նպատակ,

գ) միջամտություն նախատեսող օրենսդրությունը պետք է պարունակի՝

- վերահսկման համար հիմք հանդիսացող հանցագործությունների բնույթը,
- վերահսկվող անձանց շրջանակը,
- գաղտնալսման ժամանակահատվածը,
- ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ընթացակարգը,
- նշված տվյալներն այլոց հաղորդելու դեպքում կանխարգելիչ միջոցները,
- ձայնագրությունները ջնջելու կամ ժապավենները ոչնչացնելու հանգամանքները,

դ) պետությունը պետք է ապահովի իրավական պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք կերաշխավորեն անձի՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման միջոցառումները բողոքարկելու հնարավորությունը:

14. Անդրադառնալով հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը բողոքարկելու իրավունքի երաշխավորման անհրաժեշտությանը՝ Վճռաբեկ դատարանը վկայակոչում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածը, որի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու վերաբերյալ միջնորդությունները քննվում են դատարանի կողմից, իսկ նշված դեպքերում ընդունվող որոշումները կարող են վերանայվել վերադաս դատարանի կողմից՝ դատախազի, միջնորդություն հարուցած մարմնի, այն անձանց կամ նրանց ներկայացուցիչների բողոքի հիման վրա, որոնց շահերը շոշափվում են: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու վերաբերյալ միջնորդության քննման արդյունքում ընդունված դատարանի որոշումը չբողոքարկելը չի կարող դիտվել որպես նահանջ

[1] Տե՛ս *Kennedy v. The UK* գործով 2010 թվականի մայիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 26839/05, կետ 124:

ապացույցների ազատ գնահատման սկզբունքից:

Այսպես, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ապացույցների ազատ գնահատումն օրենսդիրը հռչակել է որպես քրեադատավարական օրենքի սկզբունք, ըստ որի՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Համաձայն նշված սկզբունքի՝ ապացույցը գնահատող անձը մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա: Միևնույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ տվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ տվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների տված գնահատականներով[1]: Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու վերաբերյալ միջնորդության քննման արդյունքում ընդունված և չբողոքարկված դատարանի որոշման առկայության փաստը չի ազատում հիմնական քրեական գործը քննող դատարանին, առանց այդ որոշման օրինականությունը կասկածի տակ առնելու, իր վարույթում գտնվող գործի նյութերով գնահատական տալու քրեական գործում առկա տվյալ ապացույցի թույլատրելիությանը, վերաբերելիությանը կամ արժանահավատությանը: Վերջին գործառույթը դատարանի պարտականությունն է և բխում է գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունն ապահովելու, ինչպես նաև՝ յուրաքանչյուր ապացույց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-127-րդ հոդվածներով սահմանված կարգով գնահատելու անհրաժեշտությունից:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը «Հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու և դրանք ձայնագրառելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումներ է կայացրել՝ արձանագրելով, որ Հ.Մայիլյանը ներգրավված է կեղծ փաստաթղթերի պատրաստման և իրացման գործընթացում՝ միաժամանակ նշելով, որ առկա են հանցագործության հատկանիշներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի և 178-րդ հոդվածի 3-րդ մասով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ամբաստանյալ Ս.Բաբայանի պաշտպան Ա.Քալաշյանը միջնորդել է վերոնշյալ դատարանից պահանջել Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը թույլատրելու վերաբերյալ նյութերը՝ դրանք հետազոտելու համար (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը բավարարել է պաշտպանի միջնորդու-

[1] Տե՛ս *Մակար Հովհաննիսյանի* և *Աշոտ Հայրապետյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշման 18-19-րդ կետերը:

թյունը (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը), մինչդեռ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահը գրությամբ հայտնել է, որ պահանջվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել, քանի դեռ այն օրենքով սահմանված կարգով գաղտնազերծված չէ (տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը)։

Առաջին ատյանի դատարանը, կայացված դատավճռով թույլատրելի ճանաչելով Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները, գտել է, որ վիճարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացվել են դատարանի թույլտվությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ծանր հանցանք կատարելու համար կասկածվող Հրաչյա Մայիլյանի նկատմամբ, հետևաբար անհիմն են չպարզված աղբյուրից կամ դատավարական կարգի խախտմամբ վերոնշյալ ապացույցները ձեռք բերելու վերաբերյալ պաշտպանության կողմի պնդումները։ Առաջին ատյանի դատարանը փաստել է նաև, որ տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացրած հետաքննության մարմնի ղեկավարի և համապատասխան աշխատակիցների գործողությունները պաշտպանության կողմը կարող էր այդ փաստաթղթերն իրենց հասու դառնալու պահից վիճարկել դատախազական հսկողության, ապա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, իսկ այդ միջոցառումների իրականացումը թույլատրած դատարանի որոշումները՝ վերաքննության կարգով, քանի որ դրանց արդյունքներն անմիջականորեն վերաբերելի էին ինչպես Ս.Բաբայանին, այնպես էլ սույն գործով մյուս ամբաստանյալներին (առնչվում էին նրանց շահերին) (տե՛ս սույն որոշման 6.4-րդ կետը)։

Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)։

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-13.3-րդ կետերում և հատկապես 14-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, ըստ էության, բավարարվելով միայն այն հանգամանքի մատնանշմամբ, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը թույլատրած դատարանի որոշումները պաշտպանության կողմը կարող էր բողոքարկել վերաքննության կարգով, անտեսել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները և, ըստ այդմ, պատշաճ գնահատման չի ենթարկել Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները։ Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքների՝ որպես քրեական գործում առկա ապացույցի թույլատրելիության պատշաճ ստուգում և գնահատում չիրականացնելով՝ Առաջին ատյանի դատարանը չի ապահովել

գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության պահանջի կատարումը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ըստ սույն գործի նյութերի՝ Առաջին ատյանի դատարանը մի կողմից որոշում է կայացրել Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը թույլատրելու վերաբերյալ նյութերը համապատասխան դատարանից պահանջելու և գործին կցելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը բավարարելու մասին (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը), իսկ մյուս կողմից՝ երբ նույն ատյանի դատարանից ստացվել է գրություն առ այն, որ համապատասխան նյութերը չեն կարող տրամադրվել, քանի դեռ օրենքով սահմանված կարգով գաղտնազերծված չեն (տե՛ս սույն որոշման 6.2.-րդ կետը), գնահատական չի տվել ստեղծված իրավիճակին, ինչն առաջացրել է իրավական անորոշություն:

16.1. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքների թույլատրելիությունը ստորադաս դատարանների կողմից չի ենթարկվել պատշաճ գնահատման, ուստի նշված ապացույցը չէր կարող դրվել վերջնական դատական ակտի հիմքում: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, ելնելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների, մասնավորապես՝ միջամտությունը վիճարկելու համար անհրաժեշտ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման անհրաժեշտությունից, հարկ է համարում նշել, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի ուժով հեռախոսային խոսակցությունների վերահսկումը թույլատրելու վերաբերյալ նյութերը հնարավոր է գաղտնազերծել՝ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների հետագա պահպանությունն ու պաշտպանությունն աննպատակահարմար դարձնող օբյեկտիվ հանգամանքների փոփոխության հիմքով[1] (որպես այդպիսին կարելի է դիտարկել Հ.Մայիլյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու չվերացված որոշման առկայությունը): Հակառակ պարագայում՝ Հ.Մայիլյանի հեռախոսային խոսակցությունների վերահսկումը թույլատրելու վերաբերյալ նյութերի գաղտնազերծման անհնարինության դեպքում, դատավարության մասնակիցները կարող են ծանոթանալ դրանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածով սահմանված հատուկ կարգով:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կողմից իրականացվե՞լ է արդյոք գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն ամբաստանյալ Ս.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու վերաբերյալ եզրահանգում անելու համար:

[1] Տե՛ս «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«(…) [Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումն է] [ի]անցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) (…)»:*

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով ստացված գույք է համարվում [ՀՀ քրեական] օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված գույքը, որն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում»:*

Վերը մեջբերված հանցակազմը մանրամասն վերլուծության է ենթարկվել *Արսեն Սարգսյանի* գործով որոշմամբ, որտեղ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել առ այն, որ *«[Մ]րարքը կարող է որակվել որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում միայն ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասում թվարկված հանցագործություններից որևէ մեկի առկայության դեպքում: Ընդ որում, վերջինս պետք է ժամանակային առումով նախորդի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը, և դրա արդյունքում ձեռք բերված գույքը պետք է հանդիսանա նշված հանցակազմի առարկա: **Նախորդող հանցագործության բացակայությունը բացառում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի գոյությունը,** ուստի նմանատիպ գործերով **մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը,** ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ տվյալ դեպքում պարտադիր չէ նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մեջ մեղադրվող անձը որևէ առնչություն ունենա նախորդող

հանցագործության հետ: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է ապացուցվի, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը»[1]:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Բաբայանը դատապարտվել է այն բանի համար, որ նա *ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված՝* ***հափշտակված, սակայն ինկասացիոն կամ բանկոմատային անվտանգության նպատակով օգտագործվող հատուկ նյութով ներկոտված*** *եվրոյի թղթադրամներ* է ձեռք բերել՝ ցանկանալով Հայաստանի Հանրապետության տարածքում այդ թղթադրամների քիմիական մաքրման և վերամշակման եղանակով խեղաթյուրել դրանց հանցավոր ծագումն ու իրական բնույթը և որպես հնամաշ թղթադրամներ դնել օրինական շրջանառության մեջ (տե՛ս սույն որոշման 6.3.-րդ կետը):

20. Վերը շարադրված փաստական հանգամանքը համադրելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը չի իրականացրել գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի, տվյալ պարագայում՝ եվրո թղթադրամների՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը հաստատված համարելու համար:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ամբաստանյալ Ս.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքն Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, ի թիվս այլոց, ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով կատարված հարցումների արդյունքներով ստացված՝ 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 9/A-245-CF/208/139/16 գրությամբ (տե՛ս սույն որոշման 6.5-րդ կետը), սակայն դրանում տեղ գտած էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ *«Եվրոպոլից ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ-ում հայտնաբերված գունավորված եվրո թղթադրամների տվյալները մուտքագրվել են Եվրոպոլի համապատասխան տվյալների պահոց, և ստուգումների արդյունքում որևէ համընկնում չի գրանցվել», «Նաև հնարավոր է, որ թղթադրամները ներկոտվեն բանկոմատների տեղափոխման ընթացքում առաջ եկած տեխնիկական կամ մարդկային գործոնի կողմից որևէ հնդիր առաջանալու դեպքում»* և *«Երբեմն կոնտեյներները իսամքով չեն տեղադրվում բանկոմատների մեջ, ուստի հնարավոր է, որ դրանք սխալ*

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արսեն Սարգսյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09 որոշման 11-րդ կետը:

գործարկվեն: Նման դեպքերում ընկերություններին հնարավորություն է տրվում փոխանակել պատշաճաբար վնասված թղթադրամները» դատողությունները անտեսվել են: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մատնանշել 2017 թվականի փետրվարի 4-ի՝ թիվ 8/485 գրությամբ Ինտերպոլի գլխավոր քարտուղարությանն ուղղված՝ ԱԱԾ քննիչ Վ.Բալյանի հարցումը (մասնավորապես՝ քննիչը միջնորդել է, ի թիվս այլոց, պարզել, թե *«Թղթադրամների ներկուպվածության վիճակը, տեղակայումը և ներկանյութի բաշխվածությունն արդյո՞ք նշանակում է, որ դրանք ներկուպվել են բանկոմատներից հափշտակվելու հետևանքով, թե՝ ոչ»*, տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 243-248) և փաստել, որ դրա պատասխանի վերաբերյալ տվյալներ սույն գործի նյութերում առկա չեն:

21. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների կողմից չի իրականացվել գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն՝ ամբաստանյալ Ս.Բաբայանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու վերաբերյալ եզրահանգում անելու համար:

22. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները խախտել են ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտերի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նոր դատաքննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով սույն որոշմամբ արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

22.1. Ինչ վերաբերում է բողոքաբերների բարձրացրած մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 8-րդ և 10-րդ կետերը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

23. Անդրադառնալով ամբաստանյալների խափանման միջոցների հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Բաբայանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, պետք է փոփոխել, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել ՀՀ Ազգային ժողովի

պատգամավորներ Սասուն Միքայելյանի, Հովիկ Աղազարյանի, Նաիրա Զոհրաբյանի, Արամ Սարգսյանի, Վահան Կարապետյանի, Վահե Էնֆիաջյանի, Տիգրան Ստեփանյանի, Արթուր Մանուկյանի, Հակոբ Նազարյանի, Հրանտ Մադաթյանի անձնական երաշխավորությունը և յուրաքանչյուր երաշխավորողի կողմից 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին վճարելուց հետո Ս.Բաբայանին ազատել կալանքից: Ամբաստանյալ Ս.Գաբրիելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, պետք է փոփոխել, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արարատ Զուրաբյանի, Իվետա Տոնոյանի, Սերգեյ Բագրատյանի, Արայիկ Աղաբաբյանի, Վարդան Բոստանջյանի անձնական երաշխավորությունը և յուրաքանչյուր երաշխավորողի կողմից 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին վճարելուց հետո Ս.Գաբրիելյանին ազատել կալանքից:

Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ա.Պողոսյանի խափանման միջոցի հարցին, ապա Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ ամբաստանյալի անձը հայտնի է, ունի մշտական բնակության վայր, խնամքին են կինը և ծնողները, գտնում է, որ գրավի կիրառումը գործի քննության տվյալ փուլում կարող է ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը: Հետևաբար Ա.Պողոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, պետք է փոփոխել, կիրառել գրավ՝ գրավի չափ սահմանելով 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը, և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին վճարելուց հետո Ա.Պողոսյանին ազատել կալանքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սամվել Անդրանիկի Բաբայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 1-ին մասով, ամբաստանյալներ Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի և Արմեն Նշանի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 28-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Սամվել Անդրանիկի Բաբայանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոփոխել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Սասուն Միքայելյանի, Հովիկ Աղազարյանի, Նաիրա Զոհրաբյանի, Արամ Սարգսյանի, Վահան Կարապետյանի, Վահե Էնֆիաջյանի, Տիգրան Ստեփանյանի, Արթուր Մանուկյանի, Հակոբ Նազարյանի և Հրանտ Մադաթյանի անձնական երաշխավորությունը: Յուրաքանչյուր երաշխավորողի կողմից 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին վճարելուց հետո Սամվել Բաբայանին ազատել կալանքից:

3. Ամբաստանյալ Սանասար Անդրանիկի Գաբրիելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոփոխել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Արարատ Զուրաբյանի, Իվետա Տոնոյանի, Սերգեյ Բագրատյանի, Արայիկ Աղաբաբյանի և Վարդան Բոստանջյանի անձնական երաշխավորությունը: Յուրաքանչյուր երաշխավորողի կողմից 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին վճարելուց հետո Սանասար Գաբրիելյանին ազատել կալանքից:

4. Ամբաստանյալ Արմեն Նշանի Պողոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոփոխել և կիրառել գրավը՝ գրավի չափ սահմանելով 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը: Գրավը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին վճարելուց հետո Արմեն Պողոսյանին ազատել կալանքից:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0074/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆԻ
ամբաստանյալ՝ Լ.ՎԵՐԱՆՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2016 թվականի օգոստոսի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 15144916 քրեական գործը:

2017 թվականի հունվարի 26-ին Լուկաշ Վերանյանը ձերբակալվել է:

2017 թվականի հունվարի 28-ին Լ.Վերանյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 28-ի որոշմամբ Լ.Վերանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել

կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ կալանավորումը փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոց գրավով և որպես գրավի չափ է սահմանվել 1.000.000 ՀՀ դրամը:

2017 թվականի փետրվարի 2-ին Տիգրան Ավետիսյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2017 թվականի մարտի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 19-ի դատավճռով արագացված դատական քննության կարգի կիրառմամբ Լ.Վերանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով, որին հաշվակցվել է անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: Նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով: Նույն դատավճռով դատապարտվել է նաև Տ.Ավետիսյանը:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ Լ.Վերանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով մեղադրող Ա.Առաքելյանի բերած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 19-ի դատավճիռը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Լ.Վերանյանը մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված այն արարքի համար, որ նա *«2016թ.*

օգոստոսի 14-ին՝ ժամը 02:00-ին, Երևանի Տերյան 105/1 հասցեում գտնվող «Առլի» կարաոկե ակումբում, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ բացահայտ անթաքույց արհամարհանք դրսևորելով՝ կատարել է խուլիգանություն:

Այսպես՝ 2016թ. օգոստոսի 13-ին՝ ժամը 24:00-ի սահմաններում, Լուկաշ Վերանյանն ընկերների՝ Տիգրան Ավետիսյանի, Էդուարդ Արսենյանի, Վահան Գևորգյանի, Գարիկ Սրեփանյանի, ինչպես նաև ընդհանուր մտերիմներ Վեներա Եսոյանի, Արմինե Եսոյանի, Վերա Սիրունյանի հետ միասին, ժամանակ անցկացնելու նպատակով այցելել են Երևան քաղաքի Տերյան 105/1 հասցեում գործող «Առլի» կարաոկե ակումբ, որտեղ գործածել են ալկոհոլ: Արդեն օգոստոսի 14-ին՝ ժամը 02:00-ի սահմաններում, Լուկաշ Վերանյանը և Գարիկ Սրեփանյանն իրենց հետ ակումբ եկած աղջիկների հետ պարել են ակումբի պարահրապարակում, իսկ այդ նույն ընթացքում Տիգրան Ավետիսյանը կանգնած է եղել պարահրապարակից դեպի սեղաններ տանող աստիճանների վրա՝ դեմքով դեպի պարահրապարակը՝ ձեռքում պահելով ապակյա շշով ըմպելիք: Վերջինս իր կողքով անցնող, գործով ինքնությունները չպարզված երկու անձանց հետևից, առանց որևէ պատճառի, խուլիգանական մղումներով, դիտավորությամբ շշի պարունակությունից որոշակի զանգված լցրել է նշված տղաներից մեկի ուղղությամբ, իսկ վերջինս էլ շրջվել և մոտեցել է Տիգրան Ավետիսյանին, որին զուգահեռ նշված տղային թիկունքից մոտեցել է այդ ամենը նկատած Լուկաշ Վերանյանը, միջամտել՝ չթողնելով որևէ մեկին պարզաբանում կատարել, որից հետո նշված տղային ընտրելով որպես հակաօրինական արարքի միջոցով հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու թիրախ, շրջապատին հակադրվելու ցանկությամբ, նշված ակումբի հաճախորդների ներկայությամբ իր անձի ենթադրյալ առավելությունն ընդգծելու մղումով, հարձակվել է նրա վրա և ակումբի պարահրապարակում՝ Տիգրան Ավետիսյանի հետ միասին խմբի կազմում, մոտ 1 րոպե տևած վիճաբանության ու քաշքշուկի ժամանակ՝ ձեռքերով մի քանի անգամ հարվածել նշված տղային, որի արդյունքում հասթարել է ակումբի բնականոն աշխատանքը և ակումբում գտնվող անձանց մոտ սրտեղծել վախի մթնոլորտ:

Այնուհետև, շարունակելով իր կողմից հասարակական կարգի կոպիտ խախտումը, հետապնդել է ակումբի սրահից դուրս եկած և գործով ինքնությունները չպարզված նշված անձանց և վերջիններիս նկատել ակումբի մուտքի դիմաց առկա աստիճանների վրա: Խուլիգանական մղումներից ելնելով, փորձել է գնալ նրանց ուղղությամբ, սակայն չի կարողացել, քանի որ միջամտած անձինք հետ են պահել իրեն, որի ընթացքում որպես զենք օգտագործվող առարկան՝ ակումբի մուտքի մոտ տեղադրված մոխրամանաղբամանը վերցրել և նետել է նշված տղաների ուղղությամբ: Գործով

ինքնությունը չպարզված անձանց հետևանալուց հետո, գտնվելով ակումբի մուտքի դիմացի հատվածում, մոտ 7 րոպե շարունակել է աղմկել՝ խաթարելով «Առլի» կարաոկե ակումբի բնականոն աշխատանքը, որի ընթացքում իրեն պատկանող և նշված ակումբի ավտոկայանատեղիում կայանված «Մերսեդես Ե 240» մակնիշի 80 AV 001 հաշվառման համարանիշների ավտոմեքենայի նստատեղերի միջնամասից վերցրել է «ATMACA 2008 LIGHT» մոդելի 57489 համարի գազային ատրճանակը՝ «թողեք խփում եմ» բառերով թափահարել օդում, որից հետո լսելով ոստիկանության աշխատակցի հորդորը ատրճանակը վայր դնելու վերաբերյալ՝ հնազանդվել է և այն դրել ավտոմեքենայի սրահում, այնուհետև ոստիկանության ծառայողների կողմից բերման ենթարկվել ոստիկանության Կենտրոնականի բաժին»[1]:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռով արձանագրվել է հետևյալը. *«(…) Մինչ դատաքննություն սկսելն ամբաստանյալներ Տիգրան Ավետիսյանը և Լուկաշ Վերանյանը միջնորդեցին գործը քննել դատական քննության արագացված կարգով՝ հայտարարելով, որ վերը նշված միջնորդությունը ներկայացնում են կամավոր՝ նախապես խորհրդակցելով իրենց պաշտպանների հետ, գիտակցում են արագացված կարգով դատաքննություն անցկացնելու իրավական հետևանքները: Ամբաստանյալները նաև հայտարարեցին, որ առաջադրված մեղադրանքներն իրենց պարզ և հասկանալի են, համաձայն են դրանց հետ, ավելին՝ առաջադրված մեղադրանքներում իրենց լիովին մեղավոր են ճանաչում:*

Քննության առնելով ամբաստանյալների վերոնշյալ միջնորդությունը, հաշվի առնելով այն, որ երկրորդ մեղադրողը, Դատարանում փոփոխելով մեղադրական եզրակացությունը հաստատելու որոշում կայացնելիս ավագ դատախազ Ռ.Գևորգյանի արտահայտած դիրքորոշումը, չառարկեց գործն արագացված դատաքննության կարգով քննելու դեմ, նկատի ունենալով, որ ամբաստանյալները չափահաս են և մեղսունակ, արձանագրելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1 և 375.2 հոդվածներով նախատեսված՝ գործն արագացված դատաքննության կարգով քննելու հիմքն ու բոլոր պայմանները՝ Դատարանը, համապատասխան որոշման կայացմամբ, գործը քննեց արագացված դատաքննության կարգով (…)»[2]:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) [Վ]երանայման սահմաններից դուրս գալու հնարավորությունը կրում է ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ բնույթ, քանի որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը պահանջում է ոչ թե ցանկացած, այլ միայն բացառիկ դեպքերում բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորության ընձեռում:*

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ մինչ մեղադրողի կողմից բերված վերաքննիչ բողոքի նպատակահարմարությանն անդրադառնալն, անհրա-

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 23-24:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 71-79:

ժեշտ է դուրս գալ վերաքննիչ բողոքարկման սահմաններից, քանի որ սույն գործով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման ապահովման անհրաժեշտությունից ելնելով առկա է դատական ակտի բեկանման հիմք:

(…)

Վերաքննիչ դատարանը (…) գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է մերժի [արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին] (…) միջնորդությունը, երբ պարզում է, որ

1) առկա է ակնհայտ անհամապատասխանություն ամբաստանյալին մեղսագրված արարքին տված իրավական գնահատականի և արարքի փաստական կողմի միջև,

2) ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն առերևույթ վիճահարույց է:

(…)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ կատարված արարքի և դրան տրված իրավական գնահատականի ակնհայտ անհամապատասխանության մասին կարելի է խոսել այն դեպքերում, երբ գործով առկա փաստական հանգամանքների ամբողջությունն առերևույթ վկայում է արարքին ավելի մեղմ պատասխանատվություն սահմանող օրենքով իրավական գնահատական տալու հնարավորության մասին: (…)

Ինչ վերաբերում է «առերևույթ վիճահարույց մեղադրանք» հասկացությանը, ապա (…) այստեղ խոսքը գնում է այն աստիճան վիճահարույց մեղադրանքի մասին, երբ դատարանը ողջամիտ կասկածներ ունի այն մասին, որ եթե գործի քննությունն իրականացվի ընդհանուր կարգով հնարավոր է ամբաստանյալի նկատմամբ էլ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեն, ընդ որում վիճելի իրավիճակը կարող է պայմանավորված լինել մեղադրանքի փաստական (…) [կամ իրավական] կողմով:

(…)

(…)

Ինչպես երևում է մեղադրանքի ձևակերպումից, ամբաստանյալ Լուկաշ Վերանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ենթադրյալ արարքը կատարվել է այդ հոդվածի իմաստով «որպես զենք» օգտագործվող մոխրաման-աղբամանի միջոցով: (…)

(…) Վերաքննիչ դատարանը (…) արձանագրում է, որ այդ առարկան որպես իրեղեն ապացույց չի ճանաչվել և չի կցվել սույն գործի նյութերին: Այս առումով Վերաքննիչ դատարանը, չկանխորոշելով գործի ելքը, անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ինքնին հանցագործության գործիքի բացակայությունը չի ենթադրում, որ անձին հնարավոր չէ մեղադրանք առաջադրել այն հոդվածով (…), որով այն (զենք, հանցանքը կատարելու համար հարմարեցված առարկաներ և այլն) դիտվում է որպես տվյալ արարքը որակյալ դարձնող հատկանիշ: (…) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ

նույնիսկ այն պարագայում, երբ բացակայում է հանցագործության գործիքը, սակայն գործում առկա մյուս հավաստի տվյալներով հնարավոր է այն նույնացնել, պատկերացում կազմելով առարկայի հատկանիշների մասին, ապա հնարավոր է նաև հաստատված համարել արարքի կատարման փաստը (...)։

(...)

Վերաքննիչ դատարանը հիմք ընդունելով սույն որոշման մեջ արտացոլված իրավական դիրքորոշումները հանգում է այն հետևության, որ սույն պարագայում Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր բավարարել ամբաստանյալի միջնորդությունը և կիրառել գործի քննության արագացված կարգ, քանի որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն ակնհայտ վիճահարույց է և գործի հանգամանքները հնարավորություն են տալիս ողջամտորեն եզրակացնելու, որ գործի քննությունն ընդհանուր կարգով իրականացնելու դեպքում հնարավոր է հասնել ամբաստանյալի համար առավել բարենպաստ ելքի։ Այլ կերպ, Առաջին ատյանի դատարանը պետք է մերժեր ամբաստանյալի միջնորդությունը և գործի ընդհանուր կարգով քննության արդյունքում մյուս փաստական տվյալների միջոցով պարզեր, թե արդյո՞ք հանցագործության գործիքն իր հատկանիշներով և այլ առանձնահատկություններով այնպիսինն է եղել, որ կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով գնահատվել «որպես զենք» օգտագործվող առարկա։ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի ուժով պետք է անխուսափելիորեն հանգեցնի կայացված դատական ակտի բեկանմանը (...)»[1]։

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1. Մասնավորապես՝ բողոքի հեղինակը, հղում կատարելով արագացված դատական քննության անցկացման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մի շարք գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին, նշել է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, որոնք շրջանցելու հնարավորությունը չի կարող անսահմանափակ լինել: Այդ սահմաններից դուրս գալու բացարձակ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 40-55:

հնարավորությունը կհանգեցնի անկանխատեսելիության և կողմերի իրավունքների խախտման, ինչպես նաև կխախտի դատական տարբեր օղակների միջև ողջամիտ գործառութային կապը: Մինչդեռ սույն գործով, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը կամայականորեն դուրս է եկել մեղադրողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերի ու հիմնավորումների սահմաններից և խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.4-րդ հոդվածը և 395-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ գնահատել է Առաջին ատյանի դատարանում չհետազոտված ապացույցները: Այնինչ, Վերաքննիչ դատարանը չի արձանագրել ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու որևէ անվերապահ հիմք և գործն արագացված կարգով քննելու իրավաչափությունը կասկածի տակ է դրել մեղադրանքի վերաբերյալ մոտավոր ու ենթադրական գնահատականների հիման վրա:

8.2. Միևնույն ժամանակ, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի պնդումն այն մասին, թե գործով որպես զենք օգտագործված առարկան իրեղեն ապացույց չի ճանաչվել և չի կցվել գործի նյութերին, որպիսի պարագայում հնարավոր չէ պատկերացում կազմել դրանով մարդկանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորության մասին, հիմնավոր չէ:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալու դատավարական կարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. մեղադրողի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից Վերաքննիչ դատարանի կողմից դուրս գալն արդյոք իրավաչափ էր:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375[1]-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.*«(…) Դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է նաև, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: Այս դեպքում դատարանն իր*

նախաձեռնությամբ սույն օրենսգրքի 309[1] հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով և ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահասցուցել մեղադրական եզրակացությունը: (...)»:

Մեջբերված նորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանը *Արսեն Սերոբյանի և Էդվարդ Պետրոսյանի* գործով որոշման շրջանակներում փաստել է., (...) *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375[1]-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ արագացված դատական քննության կարգ կիրառելու միջնորդությունը մերժելու ընթացակարգը չի բխում դատարանի անկախության սկզբունքից: Վերոնշյալ ընթացակարգը կիրառելիս դատարանն ուղղորդում է մեղադրանքի կողմին կատարել մեղադրանքը հստակման առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողություններ՝ այդպիսով խախտելով մրցակցության սկզբունքն ու անմեղության կանխավարկածը և արդյունքում իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ:*

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակման ոչ ճիշտ լինելը որպես դատական քննության արագացված կարգի կիրառումը բացառող նախապայման դիտելը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի ըստ էության լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցերի վերաբերյալ դատարանի դիրքորոշման արտահայտում, ինչն օբյեկտիվ հիմքեր է տալիս պնդելու, որ դատարանը, ի սկզբանե, տվյալ գործով որոշակի նախապատրամադրվածություն է ունեցել:

*Դատական քննության փուլում դատարանի խնդիրը ոչ թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի կողմից՝ իրենց լիազորություններն իրականացնելու ընթացքում թույլ տրված թերացումներն ու բացթողումները շտկելն է, այլ քրեադատավարական օրենքի հիմնարար սկզբունքների պահպանմամբ՝ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը ստուգելը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **դատարանն իրավասու չէ դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժել այն պատճառաբանությամբ, թե ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ կամ թերի է**[1]»:*

13. *ՀՀ* քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝*

[1] Տե՛ս *Արսեն Սերոբյանի և Էդվարդ Պետրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱՔԴ/0002/01/13 որոշման 16-րդ կետը:

1) գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը.

1.1) մեղադրական դատավճիռը կայացվել է ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի հիման վրա.

2) դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով.

3) գործը քննվել է ամբաստանյալի բացակայությամբ, բացառությամբ սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի վեցերորդ մասով նախատեսված դեպքի.

4) գործը քննվել է պաշտպանի բացակայությամբ, երբ նրա մասնակցությունը, համաձայն օրենքի, պարտադիր էր, կամ այլ կերպ խախտվել է մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը.

5) դատարանում խախտվել է մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու՝ ամբաստանյալի իրավունքը.

6) անձամբ իր պաշտպանությունն իրականացրած ամբաստանյալին իրավունք չի վերապահվել մասնակցելու դատական վիճաբանություններին.

7) ամբաստանյալին չի տրվել վերջին խոսքի իրավունք.

8) խախտվել է խորհրդակցական սենյակի գաղտնիությունը.

9) գործում բացակայում է դատական նիստի արձանագրությունը.

10) դատավճռում բացակայում է դրա նկարագրական-պատճառաբանական մասը.

11) խախտվել է գործի քննության ընդդատությունը»:

Վերահաստատելով մեջբերված նորմերի առնչությամբ *Ա.Սաքունցի*[1], *Գ.Ղազարյանի*[2], *Մ.Էլոյանի և այլոց*[3], ինչպես նաև *Ա.Խուրշուդյանի*[4] գործերով որոշումների շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ *Ի.Նունուշյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը փաստել է. «*(…) [Վ]երաքննիչ դատարանում դատական վերանայման սահմանափակ բնույթը ենթադրում է, որ դատարանի՝ գործում թույլ տրված դատական սխալները սեփական նախաձեռնությամբ ուղղելու հնարավորությունը սահմանափակ է, այսինքն՝ հանրային շահի համեմատությամբ կողմերի՝ իրենց իրավունքների պաշտպանության համար պատշաճ ջանասիրություն, հետևողականություն դրսևորելու մասնավոր շահը (տնօրինչականության սկզբունք) ունի առավելություն: Միաժամանակ որպես մասնավոր շահի նկատմամբ հակակշիռ, հանրային և մասնավոր շահերի արդյունավետ հավասարակշռության ապահովման անհրաժեշտություն՝ այն*

[1] Տե՛ս *Ա.Սաքունցի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0001/11/10 որոշման 11-րդ կետը:

[2] Տե՛ս *Գ.Ղազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11 որոշման 27-րդ կետը:

[3] Տե՛ս *Մ.Էլոյանի* և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը:

[4] Տե՛ս *Ա.Խուրշուդյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱՔԴ/0065/01/11 որոշման 15-րդ կետը:

չի բացառում վերաքննիչ դատարանի հնարավորությունը դուրս գալու վերանայման սահմաններից, եթե առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի անվերապահ բեկանման հիմք (կամ անձի նկատմամբ խոշտանգում և վատ վերաբերմունքի այլ ձևեր կիրառելու դեպքերում (այդ մասին մանրամասն տե՛ս Ս.Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԴ/0281/01/10 որոշումը)): Ընդ որում, ինչպես հետևում է վերոգրյալից, վերաքննիչ դատարանի՝ վերանայման սահմաններից դուրս գալու սույն հնարավորությունը կրում է ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ բնույթ, քանի որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը պահանջում է ոչ թե ցանկացած, այլ միայն բացառիկ դեպքերում բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորության ընձեռում:

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերը նշված բացառիկ հիմքերի բացակայության պարագայում վերաքննիչ դատարանը զրկվում է վերանայման սահմաններից դուրս գալու իրավական հնարավորությունից, ուստիև պարտավոր է դատական ակտը վերանայել բացառապես վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում[1]»:

13.1. Վերահաստատելով և զարգացնելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դատական ակտի բեկանման օրենսդրի կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «անվերապահ» պայմանն իրենից ենթադրում է, որ վերադաս դատարանն իրավասու է դուրս գալու բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից այն բացառիկ դեպքերում, երբ եզրահանգում է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել այնպիսի դատական սխալ, որը դատական ակտի իմպերատիվ բեկանման հիմք է: Այսինքն՝ դատական վերանայման սահմաններից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ վերադաս դատական ատյանը եզրահանգի, որ ստորադաս դատարանը ***ոչ թե առերևույթ (prima facie), այլ հաստատապես*** թույլ է տվել դատական ակտի անվերապահ բեկանման հիմք հանդիսացող դատական սխալ: Այլ կերպ՝ ստորադաս դատարանի կողմից այդպիսի դատական սխալ թույլ տրված լինելը պետք է կասկած չհարուցի ու աներկբա լինի, այլ ոչ թե այդ հարցի վերջնական պարզման նպատակով պահանջվի լրացուցիչ քննության իրականացում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքի ***հնարավոր առկայության կասկածի ուժով*** դատավարական կողմի բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալը իրավաչափ չի կարող համարվել:

---

[1] Տե՛ս *Ի.Նունուշյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՇԴ/0070/01/13 որոշման 14-րդ կետը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով արագացված դատական քննության կարգի կիրառմամբ Լ.Վերանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ որպես վերջնական պատիժ նշանակվել է ազատազրկում՝ 3 (երեք) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով, որը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով[1]:

Նշված դատավճռի դեմ պաշտպանական կողմը վերաքննիչ բողոք չի ներկայացրել: Լ.Վերանյանի նկատմամբ նշանակված *պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով* վերաքննիչ բողոք է բերել մեղադրողը: Մեղադրողի բողոքի հիման վրա Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ դատական վերանայման սահմաններից դուրս գալու հնարավորությունը կրում է ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ բնույթ և միայն բացառիկ դեպքերում է կարելի դուրս գալ բողոքարկման սահմաններից, գտել է, որ սույն գործով անհրաժեշտ է դուրս գալ այդ սահմաններից, քանի որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ առկա է դատական ակտի բեկանման հիմք:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը նշել է, որ արագացված դատաքննության կարգ կիրառելու միջնորդությունը պետք է մերժվի, երբ՝ ա) առկա է ակնհայտ անհամապատասխանություն մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականի և արարքի փաստական կողմի միջև, որն առերևույթ վկայում է ավելի մեղմ պատասխանատվություն սահմանող օրենքով իրավական գնահատական տալու հնարավորության մասին, բ) ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն առերևույթ վիճահարույց է, այն է՝ երբ դատարանը ողջամիտ կասկածներ ունի, որ եթե գործի քննությունն իրականացվի ընդհանուր կարգով հնարավոր է ամբաստանյալի նկատմամբ էլ ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեն, ընդ որում, վիճելի իրավիճակը կարող է պայմանավորված լինել մեղադրանքի փաստական կամ իրավական կողմով:

Վերոգրյալի հիման վրա ստորադաս դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր բավարարելու գործի քննության արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալի միջնորդությունը, քանի որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն ակնհայտ վիճահարույց է, և գործի հանգամանքները հնարավորություն են տալիս ողջամտորեն եզրակացնելու, որ գործի քննությունն ընդհանուր կարգով իրականացնելու

[1] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

դեպքում *հնարավոր է* հասնել ամբաստանյալի համար առավել բարենպաստ ելքի: Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ Առաջին ատյանի դատարանը պետք է մերժեր ամբաստանյալի միջնորդությունը և գործի ընդհանուր կարգով քննության արդյունքում մյուս փաստական տվյալների միջոցով պարզեր, թե արդյոք հանցագործության գործիքն իր հատկանիշներով և այլ առանձնահատկություններով այնպիսինն է եղել, որ կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով գնահատվել «որպես զենք» օգտագործվող առարկա: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի ուժով պետք է անխուսափելիորեն հանգեցնի կայացված դատական ակտի բեկանմանը[1]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-13.1.-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը ոչ միայն ոչ իրավաչափ հետևության է հանգել դատական քննության արագացված կարգ չկիրառելու վերաբերյալ, այլև նշելով, որ դատական վերանայման սահմաններից դուրս գալու հնարավորությունը կրում է ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ բնույթ և միայն բացառիկ դեպքերում է կարելի դուրս գալ բողոքարկման սահմաններից՝ սույն գործով դատական վերանայման սահմաններից դուրս է եկել բացառիկ հանգամանքների բացակայության պայմաններում:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել դատական վերանայման սահմաններից այն հիմնավորմամբ, թե գործի հանգամանքները հնարավորություն են տալիս ողջամտորեն եզրակացնելու, որ գործի քննությունն ընդհանուր կարգով իրականացնելու դեպքում հնարավոր է հասնել ամբաստանյալի համար առավել բարենպաստ ելքի, որպիսի պայմաններում Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր բավարարելու գործի քննության արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալի միջնորդությունը: Այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցում Առաջին ատյանի դատարանի կողմից խախտում թույլ տրված լինելու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն բխում *Արսեն Սերոբյանի և Էդվարդ Պետրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած և սույն որոշման 12-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներից: Բացի այդ, ինչպես հետևում է Վերաքննիչ դատարանի դատողություններից, վերջինս ոչ թե անվերապահ բեկանման հիմք հանդիսացող անվիճելի դատական սխալների գոյության, այլ դրանց հնարավոր առկայության կասկածի հիմքով է դուրս եկել մեղադրողի բողոքի հիմքերի և

[1] Տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը:

հիմնավորումների շրջանակից, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ անթույլատրելի է:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ մեղադրողի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից Վերաքննիչ դատարանի կողմից դուրս գալն իրավաչափ չէր:

16. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն առարկայազուրկ է համարում անդրադառնալ բողոքաբերի՝ սույն որոշման 8.2.-րդ կետում բարձրացրած փաստարկին:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375[1]-րդ, 385-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Վերոգրյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանելու Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկելու նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ Լ.Վերանյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով մեղադրողի ներկայացրած վերաքննիչ բողոքը և հանգի համապատասխան հետևության:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Վերանյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը պետք է թողնել անփոփոխ, քանի որ բացակայում են այն փոփոխելու կամ վերացնելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Լուկաշ Արթուրի Վերանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Լուկաշ Արթուրի Վերանյանի նկատմամբ որպես խափանման միջոց

կիրառված գրավը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ1/0018/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Հ.ՍԱՖԱՐՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ պաշտպան Ա.Ապրեսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի ապրիլի 9-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 91161616 քրեական գործը:

Նախաքննության մարմնի կողմից 2016 թվականի մայիսի 25-ին Հովսեփ Արամայիսի Պապիկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և 361-րդ հոդվածի 5-րդ մասով ու նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նույն

օրվա որոշմամբ Հ.Պապիկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2016 թվականի հունիսի 9-ին քրեական գործի վարույթը կասեցվել է Հ.Պապիկյանի կողմից քննությունից թաքնվելու հիմքով:

2016 թվականի հունիսի 29-ին քրեական գործի վարույթը վերսկսվել է, իսկ 2016 թվականի հուլիսի 28-ին Հ.Պապիկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի հուլիսի 28-ին քրեական գործի վարույթը կրկին կասեցվել է Հ.Պապիկյանի կողմից քննությունից թաքնվելու պատճառաբանությամբ:

2016 թվականի նոյեմբերի 2-ին Հ.Պապիկյանը հայտնաբերվել է Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի Միներալնիե Վոդի քաղաքում:

2016 թվականի դեկտեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի տեղակալի որոշմամբ բավարարվել է ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը՝ Հ.Պապիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նրա հանձնումը մերժվել է:

2017 թվականի մարտի 7-ին քրեական գործի վարույթը վերսկսվել է ու Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նույն օրվա որոշմամբ Հ.Պապիկյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է:

2017 թվականի ապրիլի 20-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Հ.Պապիկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճռով Հ.Պապիկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով ու 362-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով, Հ.Պապիկյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Հ.Պապիկյանի և պաշտպան Ա.Ապրեսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2017 թվականի դեկտեմբերի 7-ի

որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Պապիկյանի պաշտպան Ա.Ապրեսյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

4.1. 2018 թվականի ապրիլի 11-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ամբաստանյալ Հ.Պապիկյանի պաշտպան Ա.Ապրեսյանի դիմումը, որով վերջինս հայտնել է, որ լրացել են ամբաստանյալ Հ.Պապիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի կողմից Հ.Պապիկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ նա, *«(…) հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ 58831 զորամասի պայմանագրային զինծառայող, զբաղեցնելով 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի 1-ին դասակի 3-րդ ջոկի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ սերժանտ, ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով, առանց հարգելի պատճառների ժամանակին՝ 2016 թվականի մարտի 24-ին, ծառայության չի ներկայացել և 2016 թվականի մարտի 29-ին՝ ժամը 13:00-ին, ներկայացել է զորամաս՝ բացակայելով 3 օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ: Բացի այդ, Հովսեփ Պապիկյանը ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով, առանց հարգելի պատճառների ժամանակին՝ 2016 թվականի ապրիլի 12-ից ծառայության չի ներկայացել»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 111):

5.1. 2016 թվականի դեկտեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի տեղակալի որոշմամբ բավարարվել է ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը՝ Հովսեփ Պապիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին, իսկ **ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նրա հանձնումը մերժվել է** (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 220):

5.2. 2017 թվականի ապրիլի 20-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Հ.Պապիկյանի՝ **ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով** մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 186):

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ՝ *«(…) ապացուցված է համարում, որ ամբաստանյալ Հովսեփ Արամայիսի Պապիկյանը կատարել է իրեն մեղսագրվող արարքները:*

(...) Հովսեփ Արամայիսի Պապիկյանի արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով որակված են ճիշտ:

(...) [Ա]յդ արարքները Հովսեփ Արամայիսի Պապիկյանի կողմից կատարվել է մեղավորությամբ և կատարածի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության ու պատժի:

(...)

(...) Դատարանը, ամբաստանյալ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

Որպես ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներ՝ Դատարանն արձանագրում է, որ նա երիտասարդ է, ստացել է միջնակարգ կրթություն, ամուսնացած չէ, նախկինում դատված կամ որևէ կերպ արատավորված չի եղել, զորամասի հրամանատարության կողմից բնութագրվում է բացասական, իսկ դպրոցի տնօրենի կողմից՝ դրական:

(...)

(...) Դատարանը հանգում է այն եզրահանգման, որ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով (...):

(...) Դատարանը հանգում է այն եզրահանգման, որ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի նկատմամբ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով, պետք է պատիժ նշանակել ազատազրկման ձևով (...):

(...)

(...) Դատարանը հաշվի առնելով (...) անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության փաստը, ինչպես նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործության կատարման եղանակը, հանցավորի անձը՝ գտնում է, որ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի նկատմամբ նպատակահարմար չէ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, այն է՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը, հետևաբար՝ նշանակված 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատժի ռեալ (իրական) կիրառման միջոցով միայն հնարավոր կլինի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրագործելիությունը:

(...)

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դատական ծախսի հարցին՝ Դատարանն արձանագրում է, որ այդ ծախսը փաստաթղթային դեպքում բաղկացած է սույն դատավճռի 17-րդ կետում նշված հետաքննության համար քրեական հետապնդման մարմնի կողմից Հովսեփ Արամայիսի Պապիկյանին էքսպրոպրիացիայի ենթարկելու համար ծախսված 1.207.612 ՀՀ դրամ ընդհանուր գումարից, որի հատուցման պարտավորությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետք է դնել ամբաստանյալ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի վրա (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 203-207):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ջ]որամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու և դասալքության հանցակազմերն իրենց մեջ պարունակում են նաև իրավահարաբերական բնույթի նորմեր, որով օրենսդիրը հնարավորություն է տալիս արդեն ավարտված հանցագործություն կատարած անձին ազատվել քրեական պատասխանատվությունից:*

Միաժամանակ, հարկ է նկատել, որ (…) նշված հոդվածներով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած զինծառայողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դրանք կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով: Ծանր հանգամանքներ ասելով պետք է հասկանալ զինծառայողի կամ նրա մերձավորների այնպիսի հիվանդությունը, որն օբյեկտիվորեն զրկել էր նրան ներկայանալու հնարավորությունից, զինծառայողի մերձավորի մահը, զինծառայողի նկատմամբ այլ զինծառայողների կողմից սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքի գործադրումը:

(…) [Ս]ույն քրեական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված պարտադիր պայմանը, այն է՝ ծանր հանգամանքների զուգորդման հետևանքը, սույն քրեական գործով առկա չէ, որպիսի պայմաններում հնարավոր չէ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 8-րդ մասով և 362-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով Հովսեփ Պապիկյանին ազատել քրեական պատասխանատվությունից:

Վերաքննիչ դատարանը (…) [նշել է, որ] Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Հովսեփ Պապիկյանի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս, հաշվի է առել ոչ միայն կատարված հանցագործությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այլև նրա անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: Առաջին ատյանի դատարանը (…) եկել է ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալ Հովսեփ Պապիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու համար, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ, պատիժ պետք է

նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով, որը նա պետք է կրի:

Վերաքննիչ դատարանը միաժամանակ հարկ է համարում նկատել, որ ամբաստանյալ Հովսեփ Պապիկյանի նկատմամբ պատժի տեսակը և չափը որոշելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բազմակողմանի գնահատման է ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, նրա կողմից կատարված հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը, որպիսի պայմաններում իրավացիորեն վերջինի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից՝ համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար ու կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը և ուղղել պատժի ենթարկված անձին:

(...) Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերոգրյալը, (...) գտնում է, որ Հովսեփ Պապիկյանի նկատմամբ նրա կատարած արարքների համար չի կարող նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի և 362-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիաներով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ, այսինքն՝ նրա նկատմամբ կիրառելի չէ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը, ինչպես նաև ամբաստանյալ Հովսեփ Պապիկյանի ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը կրելու, այսինքն՝ նրա նկատմամբ կիրառելի չէ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ հիմնավոր են Առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Հովսեփ Պապիկյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի պետք է բռնագանձել 1.207.612 (մեկ միլիոն երկու հարյուր յոթ հազար վեց հարյուր տասներկու) ՀՀ դրամ որպես հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումար, քանի որ ՀՀ ՊՆ 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 161 գործուղման հրամանի ամփոփագրի համաձայն՝ Հովսեփ Պապիկյանի էքսպրադիցիայի համար վճարվել է 1.207.612 (մեկ միլիոն երկու հարյուր յոթ հազար վեց հարյուր տասներկու) ՀՀ դրամ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 29-34):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը գտել է, որ ստորադաս դատարանների կողմից անտեսվել է, որ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիայի համաձայն՝ ՌԴ գլխավոր դատախազությունը համաձայնություն է տվել Հ.Պապիկյանին հանձնելու ՀՀ իրավապահ մարմիններին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնումը մերժել է: Մինչդեռ տվյալ դեպքում, Հ.Պապիկյանը, առանց ՌԴ համապատասխան մարմինների համաձայնության, ենթարկվել է քրեական պատասխանատվության և պատժի նաև մինչև հանձնելը կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար, այսինքն, ըստ բողոքաբերի, տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում, որը դատական ակտերը բեկանելու և փոփոխելու հիմք է:

Բողոքաբերը գտել է, որ դատական ակտը հակասում է նաև հանձնված անձի քրեական հետապնդման սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

8.1. Ըստ բողոքի հեղինակի՝ Հ.Պապիկյանը հանցավոր արարքները կատարել է ընտանեկան ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով: Իսկ Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտում նշված ծանր հանգամանքների ցանկը չի կարող սպառիչ համարվել, ուստի, ըստ բողոքաբերի, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 8-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանման և կիրառման առումով առկա է իրավունքի զարգացման խնդիր:

8.2. Բողոքի հեղինակը գտել է նաև, որ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայությունը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայությունը վկայում են, որ Հովսեփ Պապիկյանի նկատմամբ հնարավոր է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ կամ 64-րդ հոդվածների պահանջները:

8.3. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները, անուշադրության մատնելով Հովսեփ Պապիկյանի նյութական վիճակը՝ այն, որ նա անվճարունակ է, դատական ծախսի գանձումը կարող է էապես ազդել բազմանդամ ընտանիքի անդամների նյութական վիճակի վրա, դատական ծախսի գանձումը դրել են ամբաստանյալի վրա: Ավելին՝ ըստ բողոքաբերի՝ այդ դատական ծախսերի չափը հիմնավորված և արդարացված չէ, դրանք հիմնավորող որևէ ապացույց դատարան չի ներկայացվել:

8.4. Բացի այդ, բողոքաբերը նշել է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանի

կողմից դատական ծախսերը կարող են դրվել դատապարտյալի վրա, իսկ Հովսեփ Պապիկյանը դատապարտյալի կարգավիճակ չունի, քանի որ նրա նկատմամբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

9. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ու փոփոխել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի որոշումը, Հովսեփ Պապիկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և ազատել քրեական պատասխանատվությունից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ սահմանափակվել կրած պատժաչափով կամ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան:

9.1. Բողոք բերած անձը խնդրել է նաև Հովսեփ Արամայիսի Պապիկյանին ազատել որպես պետական եկամուտ գանձվելիք դատական ծախսերը վճարելուց:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք Հ.Պապիկյանին մինչև հանձնելը կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգացագործության համար, առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության, քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու մասին ստորադաս դատարանների դատական ակտերը:

11. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները, այն է՝ առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական գործերով վարույթն իրականացվում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 480-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով օտարերկրյա պետությունների կողմից

Հայաստանի Հանրապետությանը կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձինք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

(...)

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդում իրականացնելիս կիրառվում են սույն օրենսգրքի կանոնները՝ համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված բացառություններով (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե սույն գլխի նորմերով սահմանված կարգով անձը Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանն է հանձնվել նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար, ապա առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության՝ այդ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրան հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել (...)»:

12. Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Հ.Պապիկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և 362-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: 2016 թվականի նոյեմբերի 2-ին Հ.Պապիկյանը հայտնաբերվել է Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի Միներալնիե Վոդի քաղաքում: 2016 թվականի դեկտեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի տեղակալի որոշմամբ բավարարվել է ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը՝ Հ.Պապիկյանին **ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով** Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին, իսկ **ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նրա հանձնումը մերժվել է:** Մինչդեռ 2017 թվականի ապրիլի 20-ին քրեական գործը, ըստ մեղադրանքի Հ.Պապիկյանի, ինչպես **ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով**, այնպես էլ **ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով,** մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը Հ.Պապիկյանին մեղավոր են ճանաչել և դատապարտել են ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով:

Արդյունքում Հ.Պապիկյանը քրեական պատասխանատվության և պատժի է ենթարկվել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել, այսինքն՝ տեղի է ունեցել միջազգային պայմանագրի և ներպետական օրենսդրության նորմերի խախտում:

13. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հ.Պապիկյանին մինչև հանձնելը կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգացագործության համար, առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության, քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու մասին ստորադաս դատարանների դատական ակտերն իրավաչափ չեն:

14. Հիմք ընդունելով վերը շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից խախտվել են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների պահանջները: Նշված հանգամանքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, հիմք է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և փոփոխելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով Հ.Պապիկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

15. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վճռաբեկ բողոքում բարձրացված մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 8.1-րդ, 8.3-8.4-րդ կետերը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են և բխում են սույն գործի փաստական տվյալներից և գործող օրենսդրության պահանջներից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր են նաև ամբաստանյալ Հ.Պապիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ կամ 70-րդ հոդվածները կիրառելու հիմքերի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները:

14.1. Ինչ վերաբերում է պաշտպանի կողմից Վճռաբեկ դատարան ներկայացված դիմումի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 4.1-րդ կետը), ապա հաշվի առնելով այն, որ ամբաստանյալ Հ.Պապիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ Վճռաբեկ դատարանն առարկայազուրկ է համարում դրան անդրադառնալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապե-

տության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով Հովսեփ Արամայիսի Պապիկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել:

2. Հանցանքների համակցությամբ ամբաստանյալ Հովսեփ Արամայիսի Պապիկյանի նկատմամբ սահմանված 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկում պատժից հանել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված և գումարված 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկումը՝ վերջնական թողնելով կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԲ-05/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Հ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի, 2009 թվականի ապրիլի 30-ի և 2010 թվականի մարտի 26-ի որոշումների դեմ Ա.Մաթևոսյանի պաշտպան Հ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2006 թվականի ապրիլի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90501106 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2006 թվականի մայիսի 20-ի որոշմամբ Ալիկ Մաթևոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Մաթևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Նախաքննության մարմնի՝ 2006 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ Ա.Մաթևոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով:

2006 թվականի նոյեմբերի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 29-ի դատավճռով Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ա.Մաթևոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ռաֆիկ Արայիկի Հարությունյանը և Համլետ Երվանդի Ազիզյանը:

3. Մեղադրողների, ամբաստանյալներ Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի, վերջինիս պաշտպանի և տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռով Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

4. 2008 թվականի հուլիսի 25-ին ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարել է մեղադրողի բողոքը և, բեկանելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճիռը, գործն ուղղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2008 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է, Ա.Մաթևոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ու պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջինիս նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում՝ 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

6. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ Ա.Մաթևոսյանի պաշտպան Հ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ Ա.Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ Ա.Մաթևոսյանի և նրա պաշտպան Հ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Ա.Մաթևոսյանի պաշտպան Հ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2010 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2010 մարտի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժել է՝ Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

7. Ա.Մաթևոսյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան կամ Դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 14-ին *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 52316/09) վճիռ է կայացրել, որով ճանաչել է Ալիկ Մաթևոսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման փաստը:

8. Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի՝ *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Ա.Մաթևոսյանի պաշտպան Հ.Բաղդասարյանը դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 30-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի, 2009 թվականի ապրիլի 30-ի և 2010 թվականի մարտի 26-ի որոշումների վերանայման վարույթ, և Ա.Մաթևոսյանի պաշտպան Հ.Բաղդասարյանի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

9. ՀՀ Զինվորական դատախազության ՀԿԳ քննիչ Ա.Կրկյաշարյանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ արձանագրվել է. *«(...) Քրեական գործի նախաքննության ընթացքում մեղադրյալ Ա.Մաթևոսյանը դիմում-բողոք է ներկայացրել ՀՀ Նախագահին և ՀՀ Գլխավոր դատախազին, որոնք ստացվել են ՀՀ Զինվորական դատախազությունում: Նշված դիմում-բողոքներում մեղադրյալ Ա.Մաթևոսյանը նշել է, որ ՀՀ ՊՆ ՌՈ վարչությունում գտնվելու ժամանակահատվածում իրեն և գործով մյուս մեղադրյալ Ռ.Հարությունյանին ծեծի են ենթարկել բաժնի պետ Ղազարյանը, վերջինիս տեղակալը, ինչպես նաև նրա նկատմամբ բռնություն է գործադրվել Աշոտ Մանուկյանի աշխատասենյակում:*

ՀՀ ՊՆ ՌՈ վարչության ՊՀ բաժնի պետ Մուրադ Ղազարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ա.Մաթևոսյանի նկատմամբ ՌՈ վարչությունում որևէ

բռնություն չի գործադրվել և եթե նման փաստ լիներ ապա բռնություն կիրառած աշխատակիցը կենթարկվեր համապատասխան պատասխանատվության:

Նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև ՕՀ բաժնի պետի տեղակալ Ալիկ Մարգարյանը և ավագ սպա Աշոտ Մանուկյանը:

Համաձայն ՀՀ ՊՆ ՌՈ վարչության կարգապահական մեկուսարանից ստացված տեղեկանքների Ա.Մաթևոսյանին և Ռ.Հարությունյանին մեկուսարան ընդունելուց ինչպես նաև մեկուսարանում գտնվելու ժամանակահատվածում նրանց վրա մարմնական վնասվածքներ չեն եղել և վերջիններս առողջական վիճակից գանգատներ չեն ներկայացրել:

Այսպիսով, (...) քրեական գործի նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ (...) ժամկետային զինծառայողներ Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի նկատմամբ ՀՀ ՊՆ ՌՈ վարչությունում գտնվելու ժամանակահատվածում վերոհիշյալ վարչության աշխատակիցների կողմից բռնություն չի գործադրվել, ուստի բացակայում է հանցագործության դեպքը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 156-158):

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, իր՝ 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռով փաստել է. *«(...) Ամբաստանյալների հայտարարությունը այն մասին, որ ՀՀ ՊՆ ՌՈ վարչությունում գտնվելու ժամանակահատվածում վարչության աշխատակիցների կողմից ծեծի են ենթարկվել, ստրուգվել և հերքվել է այդ կապակցությամբ նախապատրաստված նյութերով, համաձայն որոնց ՀՀ ՊՆ ՌՈ վարչությունում գտնվելու ժամանակահատվածում վարչության աշխատակիցների կողմից ծեծի ենթարկելու փաստը չի հիմնավորվել և այդ առթիվ քրեական գործ չի հարուցվել հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 571-572):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

11. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը փաստել է, որ դատական ակտի վերանայման հիմք է Եվրոպական դատարանի՝ *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճիռը, համաձայն որի՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի ընթացակարգային խախտում:

Բողոքաբերը գտել է, որ սույն գործով նախաքննության և դատաքննության ընթացքում խախտվել են Ա.Մաթևոսյանի իրավունքները, վերջինիս նկատմամբ ՀՀ ռազմական ոստիկանության աշխատակիցներն իրականացրել են ծեծ ու խոշտանգում, և նա չի կարողացել իրավական պաշտպանություն ստանալ ՀՀ դատարաններում, ուստի դիմել է Մարդու իրավունքների

եվրոպական դատարան: Մասնավորապես, Դատարանի վճռով հաստատվել է, որ խախտվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է հարուցել վերանայման վարույթ, մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով կարճել քրեական գործի վարույթը և Ա.Մաթևոսյանի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի ընթացակարգային խախտման արձանագրման փաստն արդյո՞ք ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի, 2009 թվականի ապրիլի 30-ի և 2010 թվականի մարտի 26-ի որոշումներն Ալիկ Մաթևոսյանի մասով վերանայելու հիմք է:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝*

(…)

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր կողմից նախկինում արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումը. *«[Այդ] նորմի բովանդակությունից հետևում է, որ վճռաբեկ բողոքարկման միջոցով դատական պաշտպանությունը գործադրելի է այն դեպքում, երբ խախտվել կամ կարող են խախտվել անձի (ներկայացվողի) իրավունքները կամ օրինական շահերը: Հետևաբար անձը վճռաբեկության կարգով կարող է բողոքարկել դատական ակտը միայն իրեն (ներկայացվողին) վերաբերելի մասով և պայմանով, որ այդ ակտով խախտվել են կամ կարող են խախտվել նրա (ներկայացվողի) իրավունքները կամ օրինական շահերը»* (տե՛ս *«Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԿԴ/0867/07/14 որոշման 15-րդ կետը):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է **միայն***[1] *օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի (մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ) համաձայն՝

«1. *Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

(…)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(…):

2. Սույն հոդվածի առաջին մասի (…) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (…) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(…)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զալյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Դավիթ Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09 որոշումները):

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-935 որոշումը:

16. Այսպես՝ *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատու Ա.Մաթևոսյանի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի ընթացակարգային խախտում:

16.1. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման դեպքում արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտավորության մասին իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(…) [Ե]րբ անհատը վիճարկելի պնդում է ներկայացնում այն մասին, որ իր նկատմամբ ոստիկանության կամ նմանատիպ այլ պետական մարմինների կողմից ցուցաբերվել է խիստ վատ վերաբերմունք՝ խախտելով 3-րդ հոդվածը, ապա նշված դրույթից, որն անհրաժեշտ է դիտարկել Պետության՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված հիմնական պարտականության («իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայ[ով] (…)») հետ համակցության մեջ, ինքնաբերաբար ենթադրելի է, որ պահանջվում է արդյունավետ պաշտոնական հետաքննության իրականացում (…):*

(…) Քննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե որևէ արդյունքի հասնելու, այլ միջոցներ ձեռնարկելու պարտականություն է». պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգեցնի այնպիսի եզրակացության, որը համընկնում է պահանջ ներկայացրած անձի՝ դեպքերի մասին տված ցուցմունքներին. այնուամենայնիվ, դրա միջոցով սկզբունքորեն պետք է հնարավոր լինի պարզել գործի փաստերը և, այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ էին, ապա նաև բացահայտել և, հիմնավորված լինելու դեպքում, պատժել պատասխանատու անձանց: Ուստի, վատ վերաբերմունքի մասին լուրջ պնդումների քննությունը պետք է մանրակրկիտ լինի: Դա նշանակում է, որ ցանկացած դեպքում իշխանությունները պետք է ձգտեն պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, և հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունները չպետք է հիմք ընդունվեն իրենց քննությունն ավարտելու համար կամ դրվեն իրենց որոշումների հիմքում: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցները, այդ թվում ականատեսների ցուցմունքները, դատաբժշկական և այլ ապացույցներ ապահովելու համար: Քննության ցանկացած թերություն, որը խոչընդոտում է վնասվածքների պատճառը կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնությունը պարզելը, կանգնեցնում է այս չափանիշը խախտելու վտանգի առջև (…):

(…) [Ո]րպեսզի պետական մարմինների կողմից ցուցաբերված ենթադրյալ վատ վերաբերմունքի գործով քննությունը արդյունավետ լինի, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն (…)» (տե՛ս *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 72-74-րդ կետերը):

16.2. Վերոգրյալ դրույթները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն ընդգծել է. *«(…) 2006 թվականի հունիսի 21-ին, inter alia, Գլխավոր դատախազություն դիմումատուի կողմից ներկայացված բողոքի արդյունքում իշխանություններին տեղեկացրել են նրա նկատմամբ ենթադրաբար ցուցաբերված վատ վերաբերմունքի մասին (…): Այդ բողոքը եղել է բավականաչափ մանրամասն, պարունակել է հստակ ամսաթվեր, վայրեր և ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց անունները: Դատարանի կարծիքով այն, հետևաբար, կարող է համարվել «վիճարկելի պնդում»: Ճիշտ է, որ դիմումատուի բողոքը ներկայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքից հետո մեկ ամիս ուշացումով: Այնուամենայնիվ, Դատարանը չի համարում, որ այդ ուշացումն այնքան երկար էր, որ բողոքը ipso facto (այդ փաստի ուժով) համարվեր անհիմն կամ չունենար հաջողության հասնելու հեռանկար: Ավելին, բժշկական տեղեկանքների բացակայությունը չի փոխում այս եզրահանգումը: Ուստի, իշխանությունները դիմումատուի պնդումների մասով արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորություն են ունեցել:*

(…) [Դ]իմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումները քննվել են Զինվորական դատախազության կողմից, որի եզրահանգումները հետագայում հաստատվել են ներպետական դատարանների կողմից (…): Հետևաբար, սույն գործով հարցը ոչ այնքան այն է, թե արդյոք ընդհանրապես անցկացվել է որևէ տիպի քննություն, այլ այն, թե արդյոք այն անցկացվել է պատշաճորեն, արդյոք իշխանությունները տրամադրված են եղել լիովին ուսումնասիրել դիմումատուի պնդումները և, համապատասխանաբար, արդյոք քննությունը կարող էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով համարվել «արդյունավետ» (…) (տե՛ս *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 75-76-րդ կետերը):

16.3. Անդրադառնալով դիմումատուների նկատմամբ իրականացված քննության արդյունավետությանը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«(…) 2006 թվականի հունիսի 21-ին, inter alia, Գլխավոր դատախազություն նրա կողմից ներկայացված բողոքն ուղարկվել է Զինվորական դատախազություն, որն էլ հենց զբաղվում էր նրա դեմ հարուցված քրեական գործի քննությամբ: Ավելին, նրա բողոքն ուղարկվել է նույն քրեական գործի քննության համար պատասխանատու քննիչ Ա.Կ.-ին, որն էլ ի վերջո որոշել է*

ռազմական ոստիկանության համապատասխան աշխատակիցների նկատմամբ հետապնդում չիրականացնել: Դատարանը նկատում է, որ կազմակերպական ենթակայության տեսանկյունից Ռազմական ոստիկանությունն առանձին մարմին է, որը ենթակա է Պաշտպանության նախարարությանը, այլ ոչ թե Ջինվորական դատախազությանը, որը մտնում է հետապնդում իրականացնող մարմինների կազմի մեջ: Սակայն հաշվի առնելով այն, որ քննիչ Ա.Կ.-ն կոչված էր քննելու ռազմական ոստիկանության այն աշխատակիցների գործողությունները, որոնք ներգրավված էին եղել իրեն հանձնարարված քրեական գործի նախնական քննության մեջ, և որ դիմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների քննության արդյունքը պարտադիր հետևանքներ կունենար այդ գործով ապացույցների ընդունելիության վրա, Դատարանը չի կարող այդպիսի քննությունը համարել անկախության պահանջը բավարարող: Ուշագրավ է այն, որ քննիչ Ա.Կ.-ի որոշումը, որով մերժվում էր քրեական գործի հարուցումը, պարունակում էր ընդհանրացված եզրակացություններ, որոնք զուրկ էին որևէ պատճառաբանությունից: Եվ որ ամենակարևորն է, որևէ բացատրություն չի տրվել այն մասին, թե ինչու են ռազմական ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները համարվել ավելի վստահելի, քան դեպքերի մասին դիմումատուի տված ցուցմունքները (...): Դա ցույց է տալիս, որ քննություն իրականացնող մարմինն առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տվել է ոստիկանության աշխատակիցների կողմից տրամադրված ապացույցներին (...):

(...) [Ի]շխանությունները դիմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների մասին տեղեկացել են 2006 թվականի հունիսի 21-ին: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումից երևում է, որ Ա.Կ.-ի կողմից ձեռնարկված միակ քննչական միջոցառումը եղել է դիմումատուի բողոքն ստանալուց երեք ամիս հետո ռազմական ոստիկանության այն աշխատակիցներին հարցաքննելը, որոնք ենթադրաբար վատ են վերաբերվել նրան: Մասնավորապես, համապատասխան արձանագրությունների համաձայն՝ Մ.Ղ.-ն, Ա.Մար.-ը և Ա.Մ.-ն հարցաքննվել են 2006 թվականի սեպտեմբերի 21-ին (...): Հարցաքննությանը նախորդող երեք ամիսների ընթացքում կամ դրանից հետո այլ միջոցառումներ չեն ձեռնարկվել, մինչդեռ Ա.Կ.-ն նշված աշխատակիցների դեմ քրեական գործ հարուցելը մերժելու մասին իր որոշումն արդեն իսկ կայացրել է 2006 թվականի սեպտեմբերի 23-ին՝ հիմնվելով զուտ նրանց ցուցմունքների և կարգապահական մեկուսարանի պետի գրության վրա (...): Այս համատեքստում Դատարանը գտնում է, որ իշխանությունները դիմումատուի բողոքին չեն արձագանքել արագ և պատշաճ կերպով:

(...) [Հ]ետապնդում իրականացնող մարմինն ունեցել է դիմումատուին, ոստիկանության աշխատակիցներին և վկաներին հարցաքննելու, բժշկական

զննություն նշանակելու և այլ ապացույցներ ձեռք բերելու լիազորություն: Փոխարենը զինվորական դատախազության քննիչը պարզապես հարցաքննել է ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց և իր եզրակացությունների համար հիմք է ընդունել նրանց ցուցմունքները՝ ժխտելով դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքը: Դատարանը նկատում է, որ քննիչը չի հարցաքննել դիմումատուին, առավել ևս չի փորձել նշված աշխատակիցների հետ առերեսում իրականացնելու միջոցով պարզել դեպքերի մասին նրանց հակասող պնդումները:

Բացի այդ, քննություն իրականացնող մարմինը դիմումատուի բողոքն ստանալուց անմիջապես հետո չի նշանակել բժշկական զննություն, որը հնարավոր է, որ հանգեցրել է կարևոր նշանակություն ունեցող ապացույցների կորստի: Փոխարենը, քննիչը հիմնվել է ռազմական ուսումնական շրջաբի մեկուսարանի պետի գրության վրա, որի մեջ նշվում էր, որ դիմումատուի վրա մարմնական վնասվածքների նշաններ չեն եղել: Դատարանն, այնուամենայնիվ, նկատում է, որ գրությունը չի հիմնավորվել որևէ բժշկական փաստաթղթով, ինչպես նաև դրանից չէր կարելի ենթադրել, որ դիմումատուն բժշկական զննություն է անցել: Դատարանը նաև նկատում է, որ դիմումատուն բժշկական զննության է ենթարկվել ենթադրյալ վատ վերաբերմունքից միայն մեկ տարի անց՝ [Առաջին ատյանի] դատարանի որոշումից հետո: Ուշ անցկացվելու և բժշկական փաստաթղթերի բացակայության պատճառով բժշկական զննությունը չի հանգեցրել որևէ օգտակար եզրակացության (…) (տե՛ս *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 77-80-րդ կետերը):

16.4. Վերոգրյալի արդյունքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ իշխանությունները չեն իրականացրել Ա.Մաթևոսյանի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների արդյունավետ քննություն: Հետևաբար, ըստ Դատարանի, դիմումատու Ա.Մաթևոսյանի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի խախտում (տե՛ս *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 81-82-րդ կետերը):

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի լույսի ներքո հաշվի առնելով նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի ընթացակարգային խախտման արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի, 2009 թվականի ապրիլի 30-ի և 2010 թվականի մարտի 26-ի որոշումները Ա.Մաթևոսյանի մասով վերանայելու հիմք է:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով

Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյո՞ք վիճարկվող դատական ակտերը Ա.Մաթևոսյանի մասով բեկանելը և գործն այդ մասով նոր քննության ուղարկելն է:

19. Վճռաբեկ դատարանը կրկնում է իր կողմից նախկինում արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(…) Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման դեպքում պետությունները Կոնվենցիայի 1-ին հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունների շրջանակներում պարտավորվում են իրականացնել արդյունավետ քննություն: Որպեսզի քննությունը համարվի «արդյունավետ», պետք է ունակ լինի հանգեցնելու վիճելի փաստերի հաստատմանը և, հնարավորության դեպքում անթույլատրելի վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատու անձանց բացահայտմանն ու պատժին (տե՛ս, mutatis mutandis, Jeronovičs v. Latvia գործով Եվրոպական դատարանի [ՄՊ] 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44898/10, կետ 103): Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ 3-րդ հոդվածի խախտումը չի կարող շրկվել սոսկ խախտման զոհին փոխհատուցում տրամադրելու միջոցով: Եթե իշխանությունները վատ վերաբերմունքի համար պետական գործակալներին չպատժեն, այլ բավարարվեն միայն տուժածին փոխհատուցում տրամադրելով, ապա վերջիններս հնարավորություն կստանան անպատիժ մնալու և ոտնահարելու իրենց հսկողության տակ գտնվող անձանց իրավունքները: Նման պարագայում խոշտանգման, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի իրավական արգելքը, անկախ իր հիմնարար կարևորությունից, գործնականում արդյունավետ չի գործի (տե՛ս, mutatis mutandis, Jeronovičs v. Latvia գործով Եվրոպական դատարանի [ՄՊ] 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44898/10, Gafgen v. Germany գործով Եվրոպական դատարանի՝ 2010 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 22978/05, Krastanov v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի՝ 2004 թվականի սեպտեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 50222/99)* (տե՛ս *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15 որոշման 16.1-րդ կետը):

20. Հաշվի առնելով *Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 16.1.-16.4.-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, գնահատելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման բնույթը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի լույսի ներքո հիմք ընդունելով նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ

Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը Ա.Մաթևոսյանի մասով բեկանելը և գործն այդ մասով նոր քննության ուղարկելն է:

21. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի, 2009 թվականի ապրիլի 30-ի և 2010 թվականի մարտի 26-ի որոշումները՝ Ալիկ Մաթևոսյանի մասով վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 29-ի ու Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 12-ի որոշումները Ա.Մաթևոսյանի մասով պետք է բեկանել և գործն այդ մասով ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

22. Անդրադառնալով Ալիկ Մաթևոսյանի խափանման միջոցի հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա են նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայմաններն ու հիմքերը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Ա.Մաթևոսյանին վերագրված հանցագործությունների հանրային վտանգավորության բնույթը, ծանրության աստիճանը, կատարման եղանակը և շարժառիթը, արձանագրում է, որ Ա.Մաթևոսյանը, մինչև գործի նոր քննության ընթացքում խափանման միջոցի հարցի լուծումը մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել դատարանում գործի քննությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի փետրվարի 25-ի, 2009 թվականի ապրիլի 30-ի և 2010 թվականի մարտի 26-ի որոշումները Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի մասով վերանայել:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի մասով

բեկանել ու գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0056/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ դիմող Քաջիկ Համայակի Մանուկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների հաղորդումների հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2016 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62226216 քրեական գործը:

Քննիչ Ս.Մինասյանի (այսուհետ՝ նաև Քննիչ)՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, և քրեական գործի վարույթը կարճվել է մի շարք անձանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ, 149-րդ, 154.6-րդ, 308-րդ, 333-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ք.Մանուկյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2017 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ մերժվել է:

2. Քննիչի և Դատախազի որոշումների դեմ դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների բողոքը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ ըստ ընդդատության ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարան բողոք է ներկայացրել նաև դիմողների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 28-ի որոշմամբ դիմողների և նրանց ներկայացուցչի բողոքները մերժվել են:

3. Ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ք.Մանուկյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ դատարանը 2018 թվականի մարտի 20-ին որոշում է կայացրել գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) դիմելու մասին:

Սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *«Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, (…), վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»* դրույթն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական և իրավունքի իրացման համար էական խոչընդոտ չհանդիսացող պահանջներին անհամապասխանության դեպքում բողոք ներկայացրած անձի կողմից այն շտկելու և կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու իրավական հնարավորությունը, ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 69-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածներին հակասող՝ միևնույն ժամանակ հակասող ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանելով 2018 թվականի դեկտեմբերի 1-ը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ կասեցված գործի վարույթը վերսկսվել է:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Վերաքննիչ դատարանը, 2017 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ առանց

քննության թողնելով դիմողների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի վերաքննիչ բողոքը, հղում է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին և 2-րդ մասին՝ նշելով, որ. *«(…) Դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի կողմից Վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքում առկա չէ բողոք ներկայացնող անձի ստորագրությունը, հետևաբար այն չի համապատասխանում վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված պահանջներին, ուստի [այն] պետք է թողնվի առանց քննության»*[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

6. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, քրեադատավարական օրենքի էական խախտում, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը հանգեցրել է սխալ դատական ակտի կայացմանը: Բողոքի հեղինակը հայտնել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը ստորագրված չլինելու ձևական սխալի պատճառով առանց քննության թողնելը հանգեցրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության, դատական մատչելիության իրավունքների, ինչպես նաև դատական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու իրավունքի խախտման:

7. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորագրված չլինելու հիմքով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն արդյոք հանգեցրել է դիմող Ք.Մանուկյանի դատական մատչելիության իրավունքի խախտման:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու*

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 124-125:

անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝*

(…)

8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը»:

10. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատական մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով[1],

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը[2],

- դատական մատչելիության իրավունքի սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն[3],

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա[4]:

Դատական մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի[5]:

---

[1] Տե՛ս *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս *Khalfaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

[4] Տե՛ս *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[5] Տե՛ս *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

11. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատական մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ *«Դատական մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է **ձևական բնույթ կրեն**, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները»*[1]:

12. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշմամբ դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, *Լևոն Հարությունյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

չհանգեցնի իրավունքի էության խախտման[1]:

12.1. Վկայակոչելով վերաքննիչ բողոք բերելու հետ կապված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխով նախատեսված կարգավորումները, Սահմանադրական դատարանն արձանագրել է. *«[Դրանք] իրենց ընդհանուր բովանդակությամբ միտված են նախատեսելու իրավական միջոցներ, ընթացակարգեր՝ քրեական վարույթի շրջանակներում վերաքննության կարգով դատական բողոքարկման՝ անձանց սահմանադրական իրավունքի իրացման համար: Հետևաբար, իրավական այդ նպատակին ընդհանուր միտվածությունը հետապնդում է Սահմանադրությամբ նախանշված նպատակ, քանի որ այդ կարգավորումներն օբյեկտիվորեն կոչված են ապահովելու Սահմանադրության նորմերի կիրառումը:*

Միաժամանակ վերոհիշյալ իրավակարգավորման ամբողջական վերլուծությունից հետևում է, որ այն պարունակում է նաև վերաքննիչ բողոքին ներկայացվող զուտ բովանդակային պահանջներ: Այսպես՝ բողոք բերող անձը պարտավոր է շարադրել «բողոքի հիմքերը և պահանջը», «վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ՝ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը», «առկայության դեպքում այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախորոք չհետազոտված ապացույցները»:

Նման պայմաններում ակնհայտ է, որ վերաքննիչ բողոքում հայտնաբերված թերությունների կամ սխալների նկատմամբ պետք է դրսևորվի տարբերակված մոտեցում, ինչի հետևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազատել դրանցից հետևող հնարավոր իրավական հետևանքները: Եթե ձևական պահանջների խախտման դեպքում չափազանց խիստ հետևանքներ նախատեսելը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, ապա բովանդակային պահանջների խախտման հանդեպ անհամաչափ մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ ստեղծել»[2]:

[1] Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշումը, 4.1-րդ կետ:
[2] Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշումը, 4.3-րդ կետ:

12.2. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Սահմանադրական դատարանը փաստել է. *«(…) [Ք]րեական վարույթի շրջանակներում դատարանի կողմից վերաքննիչ բողոքը քննության ընդունելու նախապայմանների որևէ խախտման դեպքում (օրինակ՝ դատարանի անվանումը և բողոքին կցվող նյութերի ցանկը չնշելը, բողոք ներկայացնող անձի ստորագրության բացակայությունը և այլն) վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքը թողնվում է առանց քննության: Գրեթե նույնաբովանդակ նորմ է պարունակում նաև Օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասը՝ համաձայն որի՝ «(…) բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել դատավարության մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին»: Արդյունքում՝ բողոք բերած անձը զրկվում է իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով վերադաս դատական ատյանի (տվյալ դեպքում՝ վերաքննիչ դատարանի) կողմից վերանայման՝ Սահմանադրության 69-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքի իրացման հնարավորությունից: (…) [Ա]նձի՝ դատական բողոքարկման իրավունքի իրացման վերոհիշյալ նախապայմանները նախատեսելիս օրենսդիրն ըստ էության տարբերակված մոտեցում չի դրսևորել այս կամ այն նախապայմանի խախտման և դրան հաջորդող հնարավոր իրավական հետևանքների առումով՝ կապված, մասնավորապես, բողոքի ներկայացման շրջանակներում ձևական և իրավունքի իրացման համար էական խոչընդոտ չհանդիսացող այս կամ այն վրիպումը (սխալը) շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու իրավական հնարավորության նախատեսման հետ, ինչն առկա է քաղաքացիական և վարչական գործերով արդարադատական գործող ընթացակարգերում: Սակայն, տարբերակված մոտեցում առկա է [ՀՀ քրեական դատավարության] [օ]րենսգրքում վճռաբեկ բողոքարկման ընթացակարգում: [ՀՀ քրեական դատավարության] [օ]րենսգրքի 414.1-րդ հոդվածն ըստ էության սահմանազատել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու և այն առանց քննության թողնելու դեպքերը:*

*Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է (բացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պատճառ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և նման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, ապա վերջինիս իրացման արգելքը, ինչը նախատեսված է [ՀՀ քրեական դատավարության] [օ]րենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում, իրավական պատշաճ գործընթացի արդյունքում կարող է գնահատվել իրավաչափ: **Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախապայմանի խախտման***

***հիմքով, երբ առկա է այն շրկելու իրավական ողջամիտ հնարավորություն, անձին Սահմանադրությամբ երաշխավորված դատական բողոքարկման իր իրավունքի իրացումից զրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, չի կարող բխել մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռի առարկա իրավակարգավորմամբ նախատեսված ձևական պահանջների չպահպանման հիմքով, սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապատասխանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին:** *(…)*

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ [ՀՀ քրեական դատավարության] [օ]րենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթը՝ վերաքննիչ բողոքի ներկայացման շրջանակներում չի կարող ընկալվել և կիրառվել որպես բողոքը դատարանի կողմից վերադարձնելու իրավական հիմք, եթե առկա է հիշյալ նորմում սահմանված սխալները շրկելու և բողոքը կրկին ներկայացնելու ողջամիտ հնարավորություն (…)»[1]:

12.3. Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *«Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, (…), վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»* դրույթն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական և իրավունքի իրացման համար էական խոչընդոտ չհանդիսացող պահանջներին անհամապատասխանության դեպքում բողոք ներկայացրած անձի կողմից այն շտկելու և կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու իրավական հնարավորությունը, հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 69-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածներին:

12.4. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև փաստել, որ թեև Սահմանադրական դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող դրույթը ճանաչելով ՀՀ Սահմանադրությանը հակասող, դրա ուժը կորցնելու վերջնաժամկետ է

[1] Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշումը, 4.5-րդ կետ:

սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 1-ը, սակայն միևնույն ժամանակ ընդգծել է, որ պետք է հաշվի առնվի իր կողմից կայացված որոշման հրապարակման դրությամբ և մինչև համապատասխան օրենսդրական կարգավորումն ընկած ժամանակահատվածում անձանց՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում բողոքարկման իրենց իրավունքի իրացման երաշխավորման անհրաժեշտությունը[1]:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 28-ի որոշման դեմ դիմողներ Քաջիկ և Սուսաննա Մանուկյանների ներկայացուցիչ Ա.Սաղաթելյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջներից՝ բողոքը ներկայացրած անձի ստորագրության բացակայության հիմքով[2]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-12.4-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը չստորագրելու ձևական պահանջի չպահպանման հիմքով Վերաքննիչ դատարանի կողմից այն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակել է բողոքաբերի դատական մատչելիության իրավունքը:

Մասնավորապես, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող՝ բողոքի ստորագրման՝ իր բնույթով ձևական պահանջը շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում բողոքն առանց քննության թողնելը դիմողին զրկել է դատական բողոքարկման իր իրավունքից՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի իմաստով կայացվել է վերջնական որոշում, որը բացառել է գործով վարույթը Վերաքննիչ դատարանում սկսելու հնարավորությունը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորագրված չլինելու հիմքով վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելը հանգեցրել է դիմող Ք.Մանուկյանի դատական մատչելիության իրավունքի խախտման:

15. Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության

[1] Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմողներ Քաջիկ Համայակի Մանուկյանի և Սուսաննա Արամայիսի Մանուկյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0056/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Տ.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կամո Արարատի Շահինյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման դեմ Կ.Շահինյանի պաշտպան Տ.Ղազարյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճռով ամբաստանյալ Կամո Արարատի Շահինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներում:

2. Առաջին ատյանի դատարանը Կ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 1 տարի 6 ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, Կ.Շահինյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս ժամկետով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունվարի 24-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է Կ.Շահինյանի պաշտպանի վերաքննիչ բողոքը, Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճիռը բեկանել է, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 3-րդ ենթակետի և 6-րդ կետի կիրառմամբ Կ.Շահինյանի վերաբերյալ թիվ ԱՐԴ/0056/01/13 քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով կարճել է և քրեական հետապնդումը դադարեցրել:

4. Վճռաբեկ դատարանը Կ.Շահինյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը 2014 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ վերադարձրել է:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճռի, Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հունվարի 24-ի որոշման, Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման դեմ հիմնարար խախտման հիմքով բողոք է ներկայացրել Կ.Շահինյանի պաշտպան Տ.Ղազարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Կ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *նա 2012 թվականի ամռանն իր տնամերձ հողամասում և դրա հարակից տարածքում ապօրինի կերպով աճեցրել է առանձնապես խոշոր չափերի՝ 15320 գրամ քաշով մշակումն արգելված թմրանյութեր պարունակող «Կանեփի թուփ» տեսակի բույսեր, որոնցից ապօրինի պատրաստել և իր տան խոհանոցում պահել է խոշոր չափերի՝ 9,914 գրամ քաշով չորացված «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որոնք էլ 2012 թվականի հուլիսի 30-ին հայտնաբերվել են ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության աշխատակիցների կողմից նրա տանը կատարված խուզարկությամբ*[1]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 156-157:

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(…) Դատարանը, դատաքննության ընթացքում հետազոտելով ձեռք բերված ապացույցները, ստուգելով, վերլուծելով և գնահատելով դրանք իրենց համակցության մեջ՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, ապացուցված է համարում, որ Կամո Արարատի Շահինյանը կատարել է ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցանքներ, նրա արարքները ճիշտ են որակված և համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին:*

Կամո Արարատի Շահինյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կատարված հանցանքը որակվում է որպես առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը, որը կատարվել է խոշոր չափերով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 273 հոդվածի 1-ին մասով կատարած հանցանքը որակվում է որպես մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով, որոնց համար էլ վերջինս պետք է պատասխանատվություն կրի (…)»[1]:

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ Կ.Շահինյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, որ վերջինիս մեղավորությունը հիմնավորված է Առաջին ատյանի դատարանում դատաքննության ժամանակ հետազոտված և դատավճռում շարադրված՝ ամբաստանյալի հանցանքը հիմնավորող ապացույցներով, որոնցով և հերքվում են վերաքննիչ բողոքում նշված, ինչպես նաև Վերաքննիչ դատարանում դատաքննության ժամանակ, պաշտպանության կողմի բերած՝ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ պատճառաբանությունները:*

(…)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը և 6-րդ կետը կիրառելի է ամբաստանյալ Կ. Շահինյանի նկատմամբ, իսկ նույն ակտի 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով վերջինիս նկատմամբ համաներում չկիրառելու հիմքեր չկան:

(…)

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013թ.

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 145-146:

սեպտեմբերի 18-ի դատավճիռը՝ ըստ մեղադրանքի՝ Կամո Արարատի Շահինյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով, պետք է բեկանել և Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի և 6-րդ կետի կիրառմամբ Կամո Արարատի Շահինյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԱՐԴ/0056/01/13 քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ուստի ենթակա է բեկանման: Մասնավորապես՝ ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճռով, Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հունվարի 24-ի որոշմամբ թույլ են տրվել «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» սկզբունքի խախտում:

Բողոքաբերը, նշված հարցի վերաբերյալ, ի թիվս այլնի, մեջբերելով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, եզրահանգել է, որ չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի, այսինքն՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջների խախտմամբ ցանելու կամ աճեցնելու համար, սակայն թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված չէ նշված բույսերը ցանելու կամ աճեցնելու որևէ կարգ: Այսինքն՝ առկա է օրենսդրական բաց, ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» կանոնի խախտման:

10. Արդյունքում բողոքաբերը խնդրել է բողոքն ընդունել վարույթ, հիմնարար խախտման հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի, Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հունվարի 24-ի, Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի դատական ակտերը, հռչակել Կ.Շահինյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 71-73:

հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և ճանաչել նրան անպարտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Կ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու արդյունքում թույլ է տրվել արդյո՞ք այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

12. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավազորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:*

2. Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կբերի անձի վիճակի վատթարացում:

(...)

6. Սույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են

տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը *Մկրտիչ Սարգսյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «*(…) [Ի]րավական որոշակիության (res judicata) և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքները մարդու իրավունքները երաշխավորող հիմնարար դրույթներ են: Միևնույն ժամանակ այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա, իրավական որոշակիության և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության հիմնարար պահանջներից շեղումը թույլատրելի է (Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետ) (…)»:*

Անդրադառնալով «հիմնարար խախտում» հասկացության մեկնաբանմանը՝ Վճռաբեկ դատարանը նույն որոշման շրջանակներում ընդգծել է. «*(…) [Ի] տարբերություն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի **հիմնարար** խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:*

*Հարկ է ընդգծել, որ «**հիմնարար խախտումը**» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակազրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին (…)»*[1]:

13. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել (…)»:*

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է*

[1] Տե՛ս *Մկրտիչ Սարգսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 18-19-րդ կետերը:

սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: (...)»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեահրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:*

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

Մեջբերված նորմերի համակարգված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը *Դ.Սիմիդյանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է. *«(...) [Մ]իայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (...): Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (...): Անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տրված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար (...):*

(...) օրենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է՝ օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում առկա օրենսդրական բացը չի

կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը: Հետևաբար նման իրավիճակն օրենսդրական կարգավորման խնդիր է: (...)»[1]:

13.1. Վճռաբեկ դատարանը *Հ.Գրիգորյանի և Է.Սարիբեկյանի*, ինչպես նաև *Գ.Սարգսյանի* վերաբերյալ գործերով որոշումներում արձանագրել է. *«[Ա]րարքի հանցավորությունն ու պատժելիությունն իրավական որոշակիության չափանիշին համապատասխանող «օրենքով» նախատեսելու պահանջն իրավունքի գերակայության առանցքային բաղադրիչներից է, որն ունի հիմնարար նշանակություն՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս օրինականության սկզբունքն ապահովելու համար: Հստակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ) ամրագրող այդպիսի օրենքը մի կողմից ապահովում է դրանում ամրագրված պահանջների հասցեագրումը համապատասխան վարքագծի դրսևորման ակնկալիք ունեցող անձանց, մյուս կողմից՝ բացառում է կամայականորեն քրեական հետապնդման ենթարկվելու ցանկացած հնարավորություն՝ երաշխավորելով օրենքի միատեսակ կիրառությունը սահմանված նորմատիվ պահանջներին հակասող վարքագիծ դրսևորող անձի նկատմամբ:*

Այսինքն՝ նշված սկզբունքի ներքո իրավական պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել որդեգրած քրեական քաղաքականության արտացոլումն այնպիսի «օրենքում», որում նկարագրված կանոնները և դրանց խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքները բովանդակային առումով այնքան որոշակի կլինեն, որ հնարավորություն կտան իրավունքի հիմնական կրողին դրսևորելու սահմանված պահանջներին համապատասխանող վարքագիծ: Վերջինս կարող է ապահովված լինել «իրավական որոշակիության» երկու բաղադրիչներին, այն է՝ «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին համապատասխանող «օրենքի» առկայության պարագայում (...):

(...)

«Օրենքի»համապատասխանությունը «կանխատեսելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահատել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախտումը մեղսագրվում է անձին, արդյո՞ք բովանդակային առումով ողջամտորեն ընկալելի է եղել անձանց համար: Այլ կերպ՝ արդյո՞ք քրեական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտը, տեղեկանալով «օրենքով» նախատեսված պահանջների մասին, ծանոթանալով դրանց վերաբերյալ նորմատիվ վարքագծի կանոնների բովանդակությանը, դրանց վերաբերյալ տրված դատական մեկնաբանություններին և անհրաժեշտու-

[1] Տե՛ս *Դավիթ Սիմիդյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԵԴ/0122/01/13 որոշման 16-18-րդ կետերը:

թյան դեպքում՝ ուրանալով համապատասխան իրավական խորհրդատվություն, կարող էր կանխատեսել, թե որ գործողության/անգործության դրսևորումը կհանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի նշանակմանը: (…)»[1]:

14. Նախքան 2017 թվականի դեկտեմբերի 6-ին *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»* ՀՕ-241-Ն օրենքի ընդունումը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված 1-ին մասը ձևակերպված էր հետևյալ կերպ. *«Մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով (…)»:*

2017 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»* ՀՕ-241-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված 1-ին մասը ձևակերպվել է հետևյալ կերպ. *«Շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով (…)»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը (նախքան 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-241-Ն օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ) Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Վարդան Ղազարյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝*

ա) անձը ցանել կամ աճեցրել է մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով,

բ) (ա) կետում նշված չափերով համապատասխան բույսերը անձը ցանել կամ աճեցրել է ապօրինի:

Վերոնշյալ (ա) կետում շարադրված պայմանը կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքին կից թիվ 5 հավելվածով (այսուհետ նաև՝ Հավելված 5), որը սահմանում է մշակումն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը: Ինչ վերաբերում է (բ) կետում նշված պայմանին, այն է՝ համապատասխան բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը, ապա կոնկրետ դեպքում «ապօրինի» եզրույթը ենթադրում է, որ

[1] Տե՛ս *Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵՇԴ/0131/01/15 որոշման 14-15-րդ կետերը, *Գագիկ Մարգսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0258/01/16 որոշման 12.1-րդ կետը:

պետք է առկա լինի քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող համապատասխան գործողություններն իրականացնելու (ցանելու կամ աճեցնելու)՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգ, իսկ իրավակիրառողը այդ կարգի հաշվառմամբ պետք է քննություն իրականացնի և գնահատման ենթարկի այդ բույսերը ցանելու կամ աճեցնելու օրինականությունը (...)»:

Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածն ունի բլանկետային բնույթ և կոնկրետ չափերով համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու ապօրինի լինելը որոշելու համար անհրաժեշտ է դիմել նորմատիվ իրավական այլ ակտի (ակտերի) օգնությանը՝ Վճռաբեկ դատարանը, համակարգված վերլուծության ենթարկելով «*Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին*» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության՝ 2010 թվականի մարտի 18-ի «*Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին*» թիվ 270-Ն որոշման և «*Լիցենզավորման մասին*» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, հանգել է այն հետևության, որ *«(...) [Մ]ի կողմից նախատեսված է քրեական պատասխանատվություն օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված կարգի խախտմամբ համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու համար, մյուս կողմից որևէ կարգ նախատեսված չէ: Նախատեսելով քրեական պատասխանատվություն թմրանյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու համար՝ օրենսդիրը նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ նշված գործողություններն իրականացնելն իրավաչափորեն դիտարկել է որպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության ձև, սակայն չնախատեսելով համապատասխան կարգ՝ ըստ էության հետևողական չի եղել խնդրի համապարփակ օրենսդրական կարգավորման հարցում:*

(...)

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նորմի որոշակի լինելու պահանջը հատուկ նշանակություն ունի քրեական օրենքի համար՝ հաշվի առնելով այն իրավական հետևանքների առանձնահատուկ բնույթը, որոնք առաջանում են քրեաիրավական նորմի պահանջների խախտման պարագայում: Այս պահանջի խախտումը արժեզրկում է ոչ միայն օրինականության, այլ նաև քրեական իրավունքի մյուս սկզբունքները: Քրեաիրավական նորմը պետք է պարունակի հստակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ), հակառակ պարագայում այդ նորմի հասցեատերը զրկվում է իր վարքագիծը դրա պահանջներին համապատասխանեցնելու և համապատասխան իրավական հետևանքները կանխատեսելու հնարավորությունից: Անձին քրեական պատասխանատվության ենթարկելը նման դեպքում հանգեցնում է նաև օբյեկտիվ մեղսայնացման՝ խախտելով ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը:

(…) Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի դիսպոզիցիան նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով վերոհիշյալ նորմը պետք է դիտարկել և դրա որոշակիությունը գնահատել համապատասխան ճյուղային օրենսդրության նորմերի հետ ունեցած համակարգային կապերի լույսի ներքո: ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը, պատասխանատվություն նախատեսելով թմրանյութեր պարունակող բույսեր ապօրինի, այլ կերպ՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջների խախտմամբ ցանելու կամ աճեցնելու համար, ինքնին համապատասխան գործողությունների իրականացման կարգ չի սահմանում՝ թողնելով դա այլ իրավական ակտերի կարգավորմանը: Մինչդեռ թմրանյութերի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրորեն կանոնակարգված չէ համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու կարգը: Այսպիսով, առկա է օրենսդրական բաց այն առումով, որ սահմանված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրականացման կարգը: Իսկ նման պայմաններում իրավակիրառողը զրկված է համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու դեպքում անձի գործողությունների հակաօրինականությունը գնահատելու, ուստիև նրա արարքում տվյալ հանցակազմի առկայությունը հաստատելու օբյեկտիվ հնարավորությունից: Արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնի խախտման: (…)»[1]:

15. Այսպիսով, Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը (նախքան 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՕ-241-Ն օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ) չէր բավարարում «օրենքի»՝ իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, այն պատասխանատվություն էր սահմանում թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր *ապօրինի ցանելու կամ աճեցնելու* համար, մինչդեռ իրավական որևէ ակտով համապատասխան գործողություններն *իրականացնելու որևէ կարգ* սահմանված չէր: Այլ կերպ՝ առկա էր օրենսդրական բաց, ինչի հետևանքով անհնար էր դառնում գնահատել անձի գործողությունների հակաօրինականությունը և նրան մեղսագրել համապատասխան հոդվածով արգելված արարքի կատարումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ որակական չափանիշին չբավարարող օրենքով անձին պատասխանատվության ենթարկելու

[1] Տե՛ս *Վարդան Ղազարյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշման 13-21-րդ կետերը:

պարագայում թույլ կտրվի օրինականության սկզբունքի ու դրա բաղադրատարր հանդիսացող՝ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» կանոնի խախտում: Այդպիսի խախտումն իր բնույթով **հիմնարար** է և ի սկզբանե վկայում է կայացված դատական ակտի անօրինական ու չհիմնավորված լինելու մասին, ուստի դրա հիման վրա անձին դատապարտելու և նրա նկատմամբ պատիժ նշանակելու արդյունքում կխաթարվի արդարադատության բուն էությունը և կխախտվի սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Հարկ է փաստել, որ 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»* ՀՕ-241-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված 1-ին մասը որոշակի փոփոխությունների է ենթարկվել, ինչի արդյունքում պատասխանատվություն է նախատեսվել ոչ թե համապատասխան նյութեր պարունակող բույսերը **ապօրինի** ցանելու կամ աճեցնելու համար, այլ **շրջանառությունն արգելված՝** թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր պարզապես ցանելու կամ աճեցնելու համար՝ խոշոր չափերով:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր տնամերձ հողամասում և դրա հարակից տարածքում ապօրինի կերպով աճեցրել է առանձնապես խոշոր չափերի՝ 15320 գրամ քաշով մշակումն արգելված թմրանյութեր պարունակող «Կանեփի թուփ» տեսակի բույսեր (Կ.Շահինյանին մեղադրանք է առաջադրվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով)[1]:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով Կ.Շահինյանի արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է այդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներին, ինչի համար վերջինս պետք է պատասխանատվություն կրի (Կ.Շահինյանը մեղավոր է ճանաչվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով)[2]:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Կ.Շահինյանի մեղավորության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության, ինչը հիմնավորվել է դատաքննության ժամանակ հետազոտված և դատավճռում շարադրված ապացույցներով: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 273-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 3-րդ ենթակետի և 6-րդ կետի կիրառմամբ Կ.Շահինյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցրել է[1]:

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու արդյունքում դատարանների կողմից թույլ են տրվել նյութական իրավունքի նորմերի հիմնարար խախտում, քանի որ այն չի բավարարել «օրենքի»՝ իրավական որոշակիության և կանխատեսելիության չափանիշներին: Մասնավորապես, այն պատասխանատվություն էր սահմանում թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր *ապօրինի ցանելու կամ աճեցնելու* համար, մինչդեռ իրավական որևէ ակտով համապատասխան գործողություններն *իրականացնելու որևէ կարգ* սահմանված չէր, հետևաբար առկա է եղել օրենսդրական բաց: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու արդյունքում թույլ է տրվել օրինականության սկզբունքի և դրա բաղադրատարր հանդիսացող «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնի խախտում:

18. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու արդյունքում թույլ է տրվել այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Այսպիսով, թույլ են տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ և 273-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով հիմնարար են և հիմք են Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշումը վերանայելու, ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բեկանելու, Կ.Շահինյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչելու և հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ արդարացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապե-

[1] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

տության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 412-րդ հոդվածի 2-րդ մասով, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Կամո Արարատի Շահինյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշումը վերանայել:

2. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հունվարի 24-ի որոշումը մասնակիորեն բեկանել, ճանաչել Կամո Արարատի Շահինյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և արդարացնել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0129/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ մեղադրյալ Մաքսիմ Արկադիի Բայդակի պաշտպաններ Ա.Ջալյանի և Ա.Չատինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2018 թվականի մարտի 31-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 61202318 քրեական գործը, որն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն:

Նույն օրը Մաքսիմ Արկադիի Բայդակը ձերբակալվել է:

Նախաքննական մարմնի 2018 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ Մաքսիմ Բայդակը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի

դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ Մ.Բայդակի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է Մ.Բայդակի նկատմամբ կալանքն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով, փոխարինելու մասին պաշտպան Ա.Ղազարյանի միջնորդությունը:

3. Վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Ա.Զալյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 1-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել պաշտպաններ Ա.Զալյանը և Ա.Չատինյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

5. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Մ.Բայդակը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով այն արարքների համար, որ *«(…) նա իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փաստաթղթի օգտագործմամբ առանց պատշաճ փաստաթղթերի և առանց պատշաճ թույլտվության հատել է Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.*

ՌԴ իրավապահ մարմինների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 205.2-րդ հոդվածի 2-րդ մասով (ահաբեկչական գործունեության իրականացման հանրային կոչեր կամ ահաբեկչության հանրային արդարացում, որոնք կատարվել են մասսայական տեղեկատվության միջոցների օգտագործմամբ) հետախուզվող Մաքսիմ Բայդակը օգտագործելով իրավունք վերապահող, պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող Բոգդան Կալյուսկիի տվյալներով անձի անվամբ լրացված, Ուկրաինայի քաղաքացու թիվ FI 241514 ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող անձնագիրը, 2018 թվականի մարտի 27-ին՝ ժամը 14:39-ին թիվ 613 չվերթով ժամանել է Հայաստանի Հանրապետություն և առանց սահմանված փաստաթղթերի ու առանց պատշաճ թույլտվության հատել է ՀՀ պետական սահմանը՝ «Զվարթնոց» օդանավակայանի սահմանային անցակետով մուտք է գործել Հայաստանի Հանրապետություն»[1]:

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 27-28:

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 1-ի որոշման համաձայն՝ *«(…) [Դ]ատարանը գտնում է, որ առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալ Մաքսիմ Արկադիի Բայդակը կատարել է մեղսագրվող իրավախախտումները (…):*

Տվյալ դեպքում դատարանը գտնում է, որ մեղադրյալ Մաքսիմ Արկադիի Բայդակը մնալով ազատության մեջ կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կատարել քրեական օրենքով արգելված արարք և խոչընդոտել գործի քննությանը, ուստի կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ առկա են բավարար ապացույցներ և ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Ռ.Ավագյանի միջնորդությունը ենթակա է բավարարման: (…)»[1]:

8. 2018 թվականի ապրիլի 20-ին Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի Հանրապետության դեսպանատան կողմից Վերաքննիչ դատարան է ներկայացվել Ուկրաինայի քաղաքացիական կացության ակտերի գրանցման ղեկավարի՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ին տրված «Անվան փոփոխման վկայական»-ը (Սերիա I-ԺՍ թիվ 008892), համաձայն որի՝ «**Մաքսիմ Բայդակ Արկադիյովիչը**՝ ծնված 1986 թվականի սեպտեմբերի 14-ին, Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքում, փոխել է իր անունը, որի մասին ակտերի գրանցման գրքում 2017 թվականի դեկտեմբերի 21-ին կատարվել է թիվ 51 գրանցումը: Ազգանունը, անունը, հայրանունը փոխելուց և պետական գրանցումից հետո՝ **Կալյուսսկիյ Բոքդան Արկադիյովիչ**»[2]:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշման համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դատարանին ներկայացված նյութերով առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալ Մաքսիմ Բայդակն առնչություն ունի իրեն վերագրվող արարքներին, որոնք ըստ բնույթի ու վտանգավորության աստիճանի՝ դասվում են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների շարքին, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով որպես պատիժ նախատեսված է ազատազրկում մեկ տարուց ավելի ժամկետով, ուստի բարձր է հավանականությունն առ այն, որ վերջինս, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, և կատարել քրեական օրենքով չթույլատրված նոր արարք:*

Ինչ վերաբերում է գործով ձեռքբերված ապացույցների գնահատման և դրանց հիման վրա հանցանքը կատարելու հիմնավոր կասկածի բացակայության, ինչպես նաև Մաքսիմ Բայդակին առաջադրված մեղադրանքն ապացուցված չլինելուն, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք չեն կարող վերաքննիչ բողոքը բավարարելու և Առաջին ատյանի դատարանի

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 40-46:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 76:

որոշումը բեկանելու հիմք հանդիսանալ, նկատի ունենալով, որ սույն դատական ստուգման ընթացքում դատարանի կողմից չեն գնահատվում գործով ձեռքբերված ապացույցները, այլ քննարկվում է այն հարցը, թե արդյոք առկա են գործի նյութերից բխող հիմնավոր ու ողջամիտ կասկածներ, որ մեղադրյալն առնչվում է իրեն վերագրվող արարքին, և առկա են նրան վերագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ»[1]:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերները նշել են, որ ստորադաս դատարանների դատական ակտերը պատճառաբանված և հիմնավորված չեն, նշյալ դատական ակտերով խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 8-րդ հոդվածների, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 107-րդ և 135-րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես, բողոքի հեղինակները, հղում կատարելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վ.Գևորգյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշմանը, նշել են, որ ստորադաս դատարաններ ներկայացված չեն եղել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին Մ.Բայդակի առնչությունն իրեն մեղսագրվող արարքների կատարման մեջ: Բողոքաբերները հայտնել են, որ գործի քննության ընթացքում դատարանը որպես ապացույց չի գնահատել Մ.Բայդակի անվան փոփոխության մասին փաստաթղթերը, որոնք ձեռք էր բերել ՀՀ-ում Ուկրաինայի դեսպանատունը և պատշաճ թարգմանությամբ ներկայացրել դատարան: Այնինչ, դրանք ունեն կարևոր նշանակություն, քանի որ դրանցով ապացուցվում է, որ Մ.Բայդակի անձնագիրը կեղծ չէ և նա ՀՀ սահմանն ապօրինի չի հատել, ինչը բացառում է հիմնավոր կասկածն առ այն, որ Մ.Բայդակը կատարել է իրեն մեղսագրվող արարքները:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են հիմնավոր կասկածի մասով բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը՝ ճանաչելով Մ.Բայդակի իրավունքների և ազատություններ խախտման փաստը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ առկա է հիմնավոր կասկած, որ Մ.Բայդակն

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 91-102:

առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ և 329-րդ հոդվածներով նախատեսված արարքներին, և որ համապատասխան դեպքը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ վերջինս մեղադրվում է:

13. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

*4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից **հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած**, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.*

(…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

*գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ **իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի** առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.*

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:*

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

(…)»:

14. Վճռաբեկ դատարանը «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ Վ.Գևորգյանի գործով փաստել է. *«(…) Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը (…): [Կ]ասկածը հիմնավոր կհամարվի (…) ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը,*

իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: (…)

(…) [Այսպիսով,] Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված[1]:

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» վերաբերյալ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, Է.Եղիազարյանի գործով ընդգծել է հետևյալ հանգամանքները.

«(…) -հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

(…)

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից (տե՛ս, mutatis mutandis, Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշումը), ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու

[1] Տե՛ս *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը:

անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործը ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող ասպրճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել (այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06), կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն)»[1]:

15. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը պնդում է իր այն դիրքորոշումը, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Սակայն կալանավորման առանցքային պայմաններից մեկի՝ հիմնավոր կասկածի առկայությունը պարզելու համար դատարանը պարտավոր է գնահատման ենթարկել մեղսագրվող արարքին անձի առնչությանը վերաբերող փաստական տվյալները: Մասնավորապես, դատարանը, իրավական գնահատականի արժանացնելով և կոնկրետ մատնանշելով իր տրամադրության տակ գտնվող նյութերը, պետք է եզրակացնի, թե արդյոք անձն առնչություն ունի իրեն մեղսագրվող արարքին, թե ոչ:

15.1 Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է արձանագրել, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին առաջին

[1] Տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետ:

ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը ստուգելիս վերադաս դատական ատյանը համապատասխան բողոքի պայմաններում նույնպես պետք է պատշաճ գնահատման ենթարկի անձի կողմից իրեն մեղսագրվող հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածը: Ընդ որում, վերադաս դատարանը պետք է գնահատման ենթարկի նաև բողոքաբերի կողմից նոր ներկայացված նյութերը՝ ենթադրյալ հանցանքի հետ անձի օբյեկտիվ կապի առկայությունը պարզելու համար:

Այս առնչությամբ, անդրադառնալով Գոռո Դուրյանի գործով արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, որ. *«(…) վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշման դատական վերանայման սահմանները կանխորոշվում են ապացույցի դատարանում քննության առարկա դարձած կալանավորման հիմքերի, դրանք հաստատող փաստական տվյալների շրջանակներով, որոնց հիման վրա էլ վերաքննիչ դատարանը ստուգում է վերանայվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը (…):*

(…) [իսկ] բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքներ, վարույթն իրականացնող մարմինը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով դիմել առաջին ատյանի դատարան, այլ ոչ թե վերաքննիչ բողոք ներկայացնել»[1], Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քրեական հետապնդման մարմնի կողմից ներկայացված նոր նյութերը կամ փաստական տվյալները վերաքննիչ դատարանում քննարկելու արգելքը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումներով:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմինը նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում հնարավորություն ունի նոր միջնորդությամբ դիմել առաջին ատյանի դատարան, ապա, պաշտպանության կողմը կալանավորման միջնորդության մեջ նշված պայմանների և հիմքերի առկայությունը կասկածի տակ դնող նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, այդպիսիք ներկայացնելու համար առաջին ատյանի դատարանում նոր վարույթ նախաձեռնելու և կալանավորման մասին որոշումը վիճարկելու հնարավորություն չունի: Եվ այս առումով, պաշտպանության կողմի թերևս միակ հնարավորությունը նոր նյութերը կամ փաստական տվյալները վերաքննիչ դատարան ներկայացնելն է: Վերոնշյալ կարգավորումը միանգամայն համահունչ է կողմերի հավասարության հիմնարար պահանջին, ինչի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ

[1] Տե՛ս *Գ.Դուրյանի* գործով 2015 թվականի հուլիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշման 20-րդ և 20.1–րդ կետերը:

նաև՝ Եվրոպական դատարան) բազմիցս նշել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով ևս պահանջվում է, որպեսզի կալանքի դեմ բերված բողոքը քննելիս դատարանն ապահովի դատական քննության երաշխիքները, մասնավորապես, որ քննությունը պետք է լինի մրցակցային, և միշտ պետք է ապահովվի «կողմերի հավասարությունը» մեղադրանքի կողմի և կալանավորված անձի միջև: Դեռ ավելին՝ Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ քանի որ իրավախախտում կատարած լինելու ողջամիտ կասկածը կալանավորման օրինականության sine qua non պայման է, ենթադրյալ հանցանք կատարած անձը պետք է իր դեմ ներկայացված պնդումները վիճարկելու արդյունավետ հնարավորություն ունենա[1]:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Բայդակը որպես մեղադրյալ է ներգրավել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով այն արարքի համար, որ վերջինս, օգտագործելով իրավունք վերապահող, պաշտոնեական փաստաթուղթ հանդիսացող Բոգդան Կալյուսսկիի տվյալներով անձի անվամբ լրացված, Ուկրաինայի քաղաքացու ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող անձնագիրը, առանց սահմանված փաստաթղթերի ու առանց պատշաճ թույլտվության հատել է ՀՀ պետական սահմանը՝ «Զվարթնոց» օդանավակայանի սահմանային անցակետով մուտք գործելով Հայաստանի Հանրապետություն[2]:

Առաջին ատյանի դատարանը, քննարկելով Մ.Բայդակի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդությունը, գտել է, որ առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալ Մաքսիմ Արկադիի Բայդակը կատարել է մեղսագրվող իրավախախտումները[3]:

Վերաքննիչ դատարանը, որին ներկայացված է եղել Ուկրաինայի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ղեկավարի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 1-ին Մ.Բայդակին տրված «Անվան փոփոխման վկայականը», որի համաձայն՝ **Մաքսիմ Բայդակ Արկադիյովիչն** իր ազգանունը, անունը, հայրանունը փոխելուց և պետական գրանցումից հետո անվանափոխվել է **Կալյուսսկիյ Բոքդան Արկադիյովիչ**[4], ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ գտել է, որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալ Մաքսիմ Բայդակն առնչություն ունի իրեն վերագրվող

[1] Տե՛ս *Becciev v. Moldova* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ, կետեր 68-72:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

արարքներին: Միևնույն ժամանակ, անդրադառնալով ներկայացված ապացույցներին և դրանց հիման վրա հանցանքը կատարելու հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ պաշտպանական կողմի պնդմանը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ դրանք չեն կարող վերաքննիչ բողոքը բավարարելու և Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու հիմք հանդիսանալ, նկատի ունենալով, որ սույն դատական ստուգման ընթացքում դատարանի կողմից չեն գնահատվում գործով ձեռքբերված ապացույցները, այլ քննարկվում է այն հարցը, թե արդյոք առկա են գործի նյութերից բխող հիմնավոր ու ողջամիտ կասկածներ, որ մեղադրյալն առնչվում է իրեն վերագրվող արարքին, և առկա են նրան վերագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ[1]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը, իր տրամադրության տակ ունենալով Մ.Բայդակին տրված «Անվան փոփոխման վկայականը», այն պատշաճ քննարկման առարկա չի դարձրել, ինչը պարտավոր էր անել: Արդյունքում Վերաքննիչ դատարանը չհիմնավորված եզրահանգում է արել Մ.Բայդակի՝ իրեն մեղսագրված արարքներին առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության մասին: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել Մ.Բայդակի առնչությունն իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փաստաթղթի օգտագործմամբ առանց պատշաճ փաստաթղթերի և թույլտվության Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելու՝ քրեական օրենքով արգելված արարքներին այն դեպքում, երբ Ուկրաինայի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ղեկավարի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 1-ին Մ.Բայդակին տրված «Անվան փոփոխման վկայականը» վերտառությամբ փաստաթղթով պաշտոնապես հաստատվում է, որ **Մաքսիմ Բայդակ Արկադիյովիչն** իր ազգանունը, անունը, հայրանունը փոխելուց և պետական գրանցումից հետո անվանափոխվել է **Կալյուսսկիյ Բոքդան Արկադիյովիչ:** «Անվան փոփոխման վկայականը» հենց այն փաստական տվյալն էր, որը պետք է գնահատման ենթարկվեր Մ.Բայդակի առնչությունն իրեն մեղսագրվող արարքներին պարզելու համար, քանի որ դրանով հերքվում է Մ.Բայդակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ և 329-րդ հոդվածներով նախատեսված արարքներին առնչվելու հիմնավոր կասկածը:

[1] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ուկրաինայի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ղեկավարի՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ին տրված «Անվան փոփոխման վկայական»-ը բավարար էր ողջամիտ ենթադրություն անելու, որ հիմնավոր կասկածն առ այն, որ Մ.Բայդակն այլ անձի անվամբ անձնագրով հատել է ՀՀ պետական սահմանը չի հաստատվում, և որ դեպքի հանգամանքներն էլ չեն համընկնում այն հանցանքների հատկանիշների հետ, որոնց ենթադրյալ կատարման համար Մ.Բայդակը ներգրավվել էր որպես մեղադրյալ:

Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ առկա է հիմնավոր կասկած, որ Մ.Բայդակն առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ և 329-րդ հոդվածներով նախատեսված արարքներին, և որ համապատասխան դեպքը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ վերջինս մեղադրվում է, հիմնավոր չեն:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ այլ մեղադրանքով Մ.Բայդակը Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 24-ի որոշմամբ գրավի կիրառմամբ ազատ է արձակվել, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ եղել է ժամանակավոր, կորցրել է իր իրավական նշանակությունը և սույն որոշումը կայացնելու պահին դադարել իրավաբանորեն գոյություն ունենալուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Մաքսիմ Արկադիի Բայդակի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ

դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴ/0182/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Տ.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշման դեմ Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի պաշտպան Տ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ ոստիկանության Վաղարշապատի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 57114711 քրեական գործը:

Նախաքննության մարմնի կողմից 2011 թվականի սեպտեմբերի 9-ին Նվեր Անդրանիկի Նիկողոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 273-րդ հոդվածի 3-րդ մասով:

2. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2011 թվականի

դեկտեմբերի 27-ի դատավճռով Նվեր Անդրանիկի Նիկողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, 273-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, 273-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ հանցանքների համակցությամբ՝ ազատազրկման ձևով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ն.Նիկողոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ 2018 թվականի փետրվարի 13-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարան (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) բողոք է ներկայացրել պաշտպան Տ.Ղազարյանը, որը Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ Ն.Նիկողոսյանի պաշտպան Տ.Ղազարյանի կողմից բերվել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2011 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռում արձանագրել է. *«(…) [Ա]պացուցված է համարում արարքները, որոնց կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալ Նվեր Անդրանիկի Նիկողոսյանը (…)*:

(…)

[Ա]մբաստանյալ Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի կողմից կատարած հանցավոր արարքները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 273 հոդվածի 3-րդ մասով և 268 հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին, ամբաստանյալի մեղավորությունը հանցանք կատարելու մեջ ապացուցված է, Նվեր Անդրանիկի Նիկողոսյանը ենթակա է պատժի և պատասխանատվության կատարած հանցանքների համար (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 187):

6. 2018 թվականի փետրվարի 13-ին ներկայացված վերաքննիչ բողոքում պաշտպանը խնդրել է հիմնարար խախտման հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը և կայացնել արդարացման դատական ակտ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ

հոդվածի 3-րդ մասով ճանաչելով և հոչակելով Ն.Նիկողոսյանի անմեղությունը: Որպես պատճառաբանություն բողոքաբերը, ի թիվս այլոց, նշել է. *«(…) Սփոռադաս դատարանի թույլ տված նյութական իրավունքի հիմնարար խախտումը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի սխալ կիրառմամբ, մասնավորապես, Նվեր Անդրանիկի Նիկողոսյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել այնպիսի արարքի կատարման համար, որը ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով հանցագործություն չէ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը հանգեցրել է «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով (…) կանոնի խախտման (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 12):

7. Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետը, 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 381-րդ հոդվածի 2-րդ մասը, 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ արձանագրելով. *«(…) Նկատի ունենալով, որ Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով դատավճիռը առաջին ատյանի դատարանը կայացրել է 2011 թվականի դեկտեմբերի 27-ին և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի՝ վերաքննիչ բողոք բերվում են՝ «(…) [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում», վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված ժամկետները, պաշտպան Տիգրան Ղազարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը ժամկետանց է, ուստի այն պետք է թողնել առանց քննության (…)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 28):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի՝ առանց քննության թողնելու մասին որոշումը հիմնավորված, պատճառաբանված և օրինական չէ:

Բողոք բերած անձը նշել է, որ հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու իր նկատմամբ կայացված դատական ակտը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, թե ոչ: Ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն հիմնարար խախտման հիմքով

վերաքննիչ բողոք բերելու օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետի՝ նույն հիմքով վճռաբեկ բողոք բերելը որևէ ժամկետով սահմանափակված չէ, եթե այն ուղղված է անձի վիճակի բարելավմանը: Բողոքաբերի կարծիքով նման պայմաններում առաջանում է անհավասար իրավիճակ, քանի որ այն անձինք, ովքեր նախկինում բողոքարկել են իրենց վերաբերյալ կայացված դատական ակտը վերաքննիչ դատարան կարող են առանց որևէ ժամանակային սահմանափակման բողոքարկել դատական ակտը Վճռաբեկ դատարան, իսկ այն անձինք, ովքեր չեն բողոքարկել, օրինական ուժի մեջ մտնելուց հետո 6 ամիս անց զրկվում են իրենց նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման իրավունքից, որն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

10. Վճռաբեկ դատարանի համոզմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կապակցությամբ առկա է սահմանադրականության խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. այն պայմաններում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմնարար խախտման դեպքում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, արդյոք նույն հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու համար համապատասխան վեցամսյա ժամկետի սահմանումը չի վտանգում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատապարտվածի կողմից դատավճռի բողոքարկման հիմնարար իրավունքները:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ «*Հանցանք*

կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ (*տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴՈ-1192 որոշման 7-րդ կետը*),

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում (*տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՈ-1257 որոշման 7-րդ կետը*),

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (*տե՛ս նույն տեղում*),

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները (*տե՛ս նույն տեղում*),

- վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն (*տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշման 7-րդ կետը*):

13. Խնդրո առարկա հիմնարար իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր հերթին ձևավորել է, ի թիվս այլոց, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատական մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի

պահանջներով և չափանիշներով *(տե՛ս Luordo v. Italy գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, Staroszczyk v. Poland գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, Stanev v. Bulgaria գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ),*

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը (տե՛ս նույն տեղում),

- դատական մատչելիության իրավունքի սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն *(տե՛ս Khalfaoui v. France գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, Hirschhorn v. Romania գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ),*

- դատական մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի *(տե՛ս Efstathiou and others v. Greece գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ):*

14. Վերը մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը իր՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0056/11/17 և թիվ ՍԴ/0088/01/12 որոշումների՝ համապատասխանաբար 13-րդ և 14-րդ կետերում արձանագրել է. *«[Դ]ատական մատչելիության իրավունքն ունի բացառիկ նշանակություն անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, այն հանդիսանում է ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանը, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու (locus standi) և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը»*:

15. ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ *«Բոլորը հավասար են օրենքի առջև»:*

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածը սահմանում է. *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«Համաչափության սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է՝*

- պիտանի և անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար,

- հետապնդվող նպատակի հետ գտնվի համարժեք հարաբերակցության մեջ:

«Պիտանիության» չափանիշի համաձայն՝ միջոցը համարվում է պիտանի, եթե այն հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին: Մինչդեռ «անհրաժեշտության» չափանիշի դեպքում միջոցը համարվում է անհրաժեշտ, եթե օրենքով հետապնդվող նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, բացի այն միջոցից, որն ընտրվել է:

Ինչ վերաբերում է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համարժեք հարաբերակցությանը, ապա այն նշանակում է, որ միջամտության սահմանների խորությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի արժեբանական նշանակությանը և կշռին: Այլ կերպ՝ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն, կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չպետք է լինի չափից ավելի խիստ՝ շրջանցելով այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները» (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0056/11/17 և թիվ ՍԴ/0088/01/12 որոշումների համապատասխանաբար 15-րդ և 16-րդ կետերը):

16. ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար: 2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե (…) գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավազորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատաս-

հան, եթե (…) նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝ (…) Առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոք բերվում են՝ (…) սույն օրենսգրքի 376[1] հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված դեպքերում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վատթարացման հիմքով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:*

Նշված իրավադրույթների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում *անձի վիճակի բարելավման հիմքով* վճռաբեկ բողոք բերելու համար որևէ ժամկետային սահմանափակում չի նախատեսել, ինչը, ըստ էության, պայմանավորված է արդարադատության շահով և անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ի տարբերություն հիմնարար խախտման դեպքում *անձի վիճակի բարելավման հիմքով* վճռաբեկ բողոքի, որի ներկայացման համար չի սահմանվել որևէ ժամկետային սահմանափակում, նույն հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու

համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ: Այլ կերպ՝ դատական ատյաններով պայմանավորված՝ վերանայման նույն եղանակի հանդեպ բողոքարկման ժամկետների հարցում օրենսդիրը դրսևորել է տարբերակված մոտեցում: Արդյունքում ստացվում է, որ եթե անձն իր նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտը մինչև վերջինիս օրինական ուժի մեջ մտնելը նախկինում բողոքարկել է վերադասության կարգով, ապա կարող է առանց ժամկետային սահմանափակման հիմնարար խախտման հիմքով ներկայացնել վճռաբեկ բողոք: Իսկ այն անձը, ով նախկինում չի բողոքարկել Առաջին ատյանի դատարանի համապատասխան դատական ակտը, և այն մտել է օրինական ուժի մեջ, ապա վեցամսյա ժամկետի ավարտից հետո զրկվում է հիմնարար խախտման հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդպիսի տարբերակված մոտեցումը չի կարող արդարացվել: Ընդ որում, վերոգրյալից հետևում է նաև, որ ի տարբերություն ՀՀ վճռաբեկ դատարան բողոք բերելուն՝ օրենսդիրը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոքի ներկայացման ավելի լայն սահմանափակումներ է նախատեսել, ինչը չի բխում նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի տրամաբանությունից:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Նիկողոսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան չի բողոքարկվել, և մտել է օրինական ուժի մեջ: 2018 թվականի փետրվարի 13-ին պաշտպան Տ.Ղազարյանը բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով հիմնարար խախտման հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և կայացնել արդարացման դատական ակտ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 3-րդ մասով ճանաչելով և հռչակելով Ն.Նիկողոսյանի անմեղությունը: Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետը, 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 381-րդ հոդվածի 2-րդ մասը, 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության (տե՛ս սույն որոշման 5-7-րդ կետերը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ այն պայմաններում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմնարար խախտման դեպքում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, նույն հիմքով ՀՀ

վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու համար վեցամսյա ժամկետի սահմանումը վտանգում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատապարտվածի կողմից դատավճռի բողոքարկման հիմնարար իրավունքները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ներկայումս շրջանառության մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 404-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի թեթև հանցանք կատարելը փաստելու պահանջով մեղադրական դատավճռի բացառիկ վերանայումը թե՛ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում, թե՛ ՀՀ վճռաբեկ դատարանում ժամկետներով սահմանափակված չէ:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր կասկածներ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության առնչությամբ, և գտնում է, որ սույն գործի լուծումը հնարավոր է միայն այդ իրավանորմի կիրառման միջոցով: Ուստի հաշվի առնելով, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վարույթը կասեցնել և դիմել Սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

20. Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի պաշտպան Տ.Ղազարյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցն այնքանով, որքանով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376[1]-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված

դեպքում անձի վիճակի բարելավման հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու համար վեցամսյա ժամկետի սահմանումը վտանգում է սահմանադրաիրավական համապատասխան նորմերով ամրագրված անձի հիմնարար իրավունքները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0063/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Անդրիաս Մարատի Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, 34-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 34-235-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ նա 2016 թվականի հուլիսի 29-ին Երևան քաղաքում կազմակերպել է զանգվածային անկարգություններ, ինչպես նաև փորձել է միանալ 2016 թվականի հուլիսի 17-ին Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցի 158 հասցեում տեղակայված՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի

տարածքում գտնվող շենքերը, շինությունները և տրանսպորտային միջոցները զավթած, ոստիկաններ և բուժաշխատակիցներ պատանդ վերցրած կազմակերպված, զինված խմբին, զինվել, ապօրինի կերպով հրազեն ու ռազմամթերք կրել, պահել և խմբի անդամների հետ համակատարմամբ շարունակել պահել զավթածն ու պատանդներին, սակայն հանցագործություններն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

2017 թվականի հուլիսի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 25-ի՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ, ի թիվս այլոց, Անդրիաս Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնվել է անփոփոխ:

3. Հիշյալ որոշման դեմ Ա.Ղուկասյանի պաշտպաններ Կ.Մեժլումյանը և Ի.Պետրոսյանը ներկայացրել են վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է:

4. Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

4.1. Վճռաբեկ դատարանը 2018 թվականի ապրիլի 18-ին որոշում է կայացրել ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին:

5. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՈ-1421 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

6. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի բողոքի վերաբերյալ վարույթը վերսկսվել է:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հուլիսի 25-ի՝ «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշման եզրափակիչ մասում մասնավորապես նշել է. *«Ամբաստանյալ Անդրիաս Մարտրի Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը (...) թողնել անփոփոխ»*[1]:

8. 2017 թվականի հուլիսի 25-ին Ա.Ղուկասյանը և նրա պաշտպան Կ.Մեժլումյանը միջնորդություն են ներկայացրել Առաջին ատյանի դատարան, որով խնդրել են գործը դատական քննության նշանակման ենթակա լինելու դեպքում խափանման միջոցի հարցի լուծմանն անդրադառնալ դատական նիստով և իրենց մասնակից դարձնել այդ նիստին[2]:

9. Առաջին ատյանի դատարանը նույն օրվա՝ «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ վերոհիշյալ միջնորդությունը մերժել է՝ պատճառաբանելով, որ. *«(...) [Մ]իջնորդությունը քննության առնելու դրությամբ դատարանի կողմից արդեն իսկ կայացված է եղել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշում, որով անդրադարձ է կատարվել ամբաստանյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցին և այն թողնվել է անփոփոխ: Բացի այդ, գործող օրենսդրությամբ օրենսդրի կողմից նշված հարցի լուծման համար սահմանվել է միանձնյա քննության կարգ:*

(...) Միաժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված չէ նշված որոշումները կայացնել դատական նիստով դատավարության որևէ անդամի լիազորելով մասնակից դառնալ տվյալ դատական նիստին»[3]:

10. Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է. *«(...) [Հ]աշվի առնելով ամբաստանյալի անձը, նրան մեղսագրվող հակաօրինական արարքների հասարակական վտանգավորության աստիճանը, այդ արարքների համար ՀՀ քրեական օրենքով հնարավոր սպառնացող պատժի խստությունը, ինչպես նաև քրեական գործի փաստական հանգամանքները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դեռևս շարունակում են առկա լինել Անդրիաս Ղուկասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետն ըստ էության երկարացնելու հիմքերն ու պայմանները, ինչն էլ հիմք է հանդիսանում վերաքննիչ բողոքը մերժելու համար:*

Ինչ վերաբերում է պաշտպանների վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքին, որ [Առաջին ատյանի դատարանը] բողոքարկվող որոշման մեջ կալանքի ժամկետը երկարացնելու որևէ հիմքի չի անդրադարձել, չի նշել

[1] Տե՛ս քրեական գործի հավելված, թերթ 7:
[2] Տե՛ս քրեական գործի հավելված, թերթ 20:
[3] Տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 21-22:

և պարզաբանել, թե ինչու է եզրահանգում, որ այդ հիմքն առկա է, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ [Առաջին ատյանի դատարանը], անփոփոխ թողնելով ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը, ըստ էության հաստատել է, որ պահպանվում են վերջինիս կալանքի տակ պահելու նախորդ հիմքերը և պայմանները:

Այսպիսով, դատական ստուգման արդյունքում, Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ [Առաջին ատյանի դատարանի] կողմից թույլ չի տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, Եվրոպական կոնվենցիայով, Վճռաբեկ և Եվրոպական դատարանների նախադեպային որոշումներով արտահայտած իրավական դրույթների խախտումներ, ուստի պաշտպանների վերաքննիչ բողոքը բավարարելու և [Առաջին ատյանի դատարանի] (...) որոշումը բեկանելու օբյեկտիվ հիմքեր չկան»[1]:

11. Վճռաբեկ դատարանը, ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելով և ՀՀ սահմանադրական դատարան դիմելով, իր՝ 2018 թվականի ապրիլի 18-ի դատական ակտում արձանագրել է հետևյալը. *«(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, այնքանով, որքանով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով կատարելու կարգ, խախտում է անձի ազատության իրավունքը՝ անհապաղ դատարանի առջև կանգնելու և իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքների տեսանկյունից:*

Նման պայմաններում նկատի ունենալով, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, որը Վճռաբեկ դատարանի համոզմամբ հակասում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին, իսկ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը, ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով (...)»[2]:

12. 2018 թվականի մայիսի 7-ին ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով փոխել ամբաստանյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը:

[1] Տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 38-43:
[2] Տե՛ս քրեական գործի հավելված, թերթեր 93-103:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, 2018 թվականի մայիսի 7-ի դատական նիստում պաշտպանության և մեղադրանքի կողմի մասնակցությամբ քննելով Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի միջնորդությունը, նույն օրվա որոշմամբ այն բավարարել է, ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխել և նրան դատական նիստերի դահլիճում ազատ արձակել արգելանքից: Ա.Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքի հեղինակի կարծիքով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 136-րդ հոդվածների, 2007 թվականի ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ Սահմանադրության 27-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածների խախտումներ: Վերաքննիչ դատարանի որոշման իրավական դիրքորոշումները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան)՝ Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի գործով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը կալանքի ժամկետը երկարացնելու որևէ հիմքի չի անդրադարձել, չի նշել և պատճառաբանել, թե ինչու է եզրահանգում, որ այդ հիմքն առկա է, չի անդրադարձել Ա.Ղուկասյանի անձին և նրան բնութագրող այլ տվյալներին, նրան մասնակից չի դարձրել կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցի քննարկմանը, կայացված որոշումը պաշտպանական կողմին անմիջապես չի հանձնել, այլ ուղարկել է այն կայացնելուց մեկ ամիս հինգ օր անց՝ գրավոր դիմում ներկայացնելուց ինն օր անց: Ավելին՝ Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ հղում չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ խափանման միջոցներին վերաբերող 18-րդ գլխի որևէ հոդվածի: Նման որոշումը Կոնվենցիայի իմաստով անօրինական է, իսկ ՀՀ Սահմանադրության իմաստով՝ ոչ իրավաչափ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ հիշյալ խախտումներն իրավաչափ են:

14. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և վերացնել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ և Ա.Ղուկասյանին անհապաղ ազատ արձակել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՈ-1421 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

16. Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելիս ՀՀ սահմանադրական դատարանը արձանագրել է հետևյալը. *«(…) Սահմանադրական դատարանը փաստում է, որ (…) գործը դատական քննության նախապատրաստելու շրջանակներում դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննելու ժամանակ, մասնավորապես, **անձնական ազատության, արդար դատաքննության իրավունքների, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման օրենսդրական երաշխիքներ նախատեսված չեն**:*

(…)

Սահմանադրական դատարանը, կարևորելով անձի արդար դատաքննության իրավունքի երաշխավորումը, միաժամանակ գտնում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքի որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության ընթացքում պետք է ապահովել ինչպես պաշտպանության, այնպես էլ՝ մեղադրանքի կողմի մասնակցությունը՝ ելնելով քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից:

(…)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանն իր նախաձեռնությամբ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը որոշելիս չի կարող ազատվել կողմերի կարծիքը լսելու պարտականությունից, և կողմերը չեն կարող զրկված լինել իրենց դիրքորոշումները ներկայացնելու հնարավորությունից:

*Հակառակ պարագայում՝ այն կարող է պարունակել վտանգ, որ դատարանն իր վրա է վերցնում մեղադրանքի կամ պաշտպանության գործառույթներ: Բացի դրանից, դատարանը զրկվում է հարցը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու փաստացի հնարավորությունից, որի երաշխավորման կարևոր նախապայման է նաև կողմերի կարծիքները, փաստարկները, դիրքորոշումները լսելը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակումն իրավաչափ է միայն դատարանի որոշմամբ, որն ընդունվել է դատական նիստում՝ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքի հիմքերի և հիմնավորումների համակողմանի և անաչառ քննության, այդ թվում՝ մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի՝ իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորության առկայության դեպքում:***

*Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, չի ապահովում անձի՝ դատարանի կողմից լսվելու սահմանադրական իրավունքի իրացումը՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար այն չի համապատասխանում նաև արդար դատաքննության չափանիշներին:***

(...)

*Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որը չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, համահունչ չէ ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի շրջանակներում ձևավորված անձնական ազատության իրավունքի սահմանափակման չափորոշիչներին (...):***

(...)

Ելնելով մարդու հիմնական իրավունքների անմիջական գործողության սահմանադրական պահանջից, ինչպես նաև դատարանի կողմից կալանքի՝ որպես խափանման միջոցի, ընտրության և հիմնավորվածության հարցի քննության քրեադատավարական ընթացակարգերի օրենսդրական կարգա-

վորումների ընդհանուր տրամաբանությունից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը ***դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը պետք է ապահովվի, մասնավորապես, մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի մասնակցության հնարավորությունը (ինչպես նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, մասնավորապես, 285-րդ և 312-րդ հոդվածներով)՝ առաջնորդվելով անձնական ազատության իրավունքի, արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող լսվելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ»***[1]:

17. Սույն գործի փաստերից հետևում է, որ 2017 թվականի հուլիսի 25-ին Առաջին ատյանի դատարանը «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը թողել է անփոփոխ[2]: Նույն օրը Ա.Ղուկասյանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել՝ խնդրելով նրա խափանման միջոցի հարցի լուծմանն անդրադառնալ դատական նիստով և իրենց մասնակից դարձնել այդ նիստին[3]: Առաջին ատյանի դատարանը նշված միջնորդությունը մերժել է՝ փաստելով, որ արդեն իսկ կայացվել է քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշում, որով անդրադարձ է կատարվել ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցին: Միևնույն ժամանակ, դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված չէ նշված որոշումները կայացնել դատական նիստով՝ դատավարության որևէ անդամի լիազորելով մասնակից դառնալ տվյալ դատական նիստին[4]: Վերաքննիչ դատարանն իր հերթին, մերժելով վերաքննիչ բողոքը, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, Եվրոպական կոնվենցիայով, Վճռաբեկ և Եվրոպական դատարանների նախադեպային որոշումներով արտահայտված իրավական դրույթների խախտումներ[5]:

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 26-ի թիվ ՍԴՈ-1421 որոշման 4.1-4.4-րդ կետերը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-16-րդ կետերում վկայակոչված՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1421 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը, այնքանով, որքանով գործը դատական քննության նախապատրաստելու փուլում չի նախատեսում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով կատարելու կարգ, խախտում է անձի ազատության իրավունքը՝ անհապաղ դատարանի առջև կանգնելու և իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքների տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակումն իրավաչափ է միայն դատարանի որոշմամբ, որն ընդունվել է դատական նիստում՝ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքի հիմքերի և հիմնավորումների համակողմանի և անաչառ քննության, այդ թվում՝ մեղադրյալի և (կամ) նրա պաշտպանի՝ իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորության առկայության դեպքում, Վճռաբեկ դատարանը ընդգծում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը չի ապահովում նաև անձի՝ դատարանի կողմից լսվելու սահմանադրական իրավունքի իրացումը:

19. Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՈ-1421 որոշմամբ արտահայտված, վերևում մեջբերված իրավական դիրքորոշումները, միևնույն ժամանակ փաստում է, որ սույն գործով 2018 թվականի մայիսի 7-ին ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով փոխել ամբաստանյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, 2018 թվականի մայիսի 7-ի դատական նիստում պաշտպանության և մեղադրանքի կողմի մասնակցությամբ քննելով Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի միջնորդությունը, նույն օրվա որոշմամբ այն բավարարել է, ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխել և նրան դատական նիստերի դահլիճում ազատ արձակել արգելանքից: Ա.Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը[1]:

[1] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

20. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքարկվող դատական ակտը, ունենալով ժամանակավոր բնույթ, կորցրել է իր իրավաբանական նշանակությունը և չի կարող առաջացնել իրավական հետևանքներ, հետևաբար այն չի կարող բեկանվել, և պաշտպանի ներկայացրած բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0141/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան Ա.ՊԱՊԻԿՅԱՆԻ
տուժողի իրավահաջորդ Հ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով Կարեն Ալեքսանդրի Կունգուրցևի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշման դեմ Կ.Կունգուրցևի պաշտպան Ա.Պապիկյանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ֆանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2013 թվականի հոկտեմբերի 12-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 19123213 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ Կարեն Ալեքսանդրի Կունգուրցևը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Կ.Կունգուրցևին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի սեպտեմբերի 26-ին թիվ 19123213 քրեական գործն ըստ մեղադրանքի Կ.Կունգուրցևի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի ապրիլի 15-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Կ.Կունգուրցևի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1-րդ հոդվածով, կայացրել է նաև լրացուցիչ որոշում:

3. Դատախազ Վ.Դոլմազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 15-ի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ Կ.Կունգուրցևին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, և նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: Նշանակված պատժին հաշվակցելով Կ.Կունգուրցևի կալանքի տակ գտնվելու 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս 2 (երկու) օրը՝ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 5 (հինգ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալի պաշտպան Ա.Պապիկյանը և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ֆանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Կ.Կունգուրցևին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ *«2013թ. հոկտեմբերի 09-ից Վանաձոր քաղաքում անց է կացվել ձեռքի գնդակի հանրապետական մրցաշար, որին մասնակցել են Երևան քաղաքի*

Աջափնյակ, Դավիթաշեն համայնքների, ԽՄՕՄ, Ալավերդի, Վանաձոր քաղաքների և Արցախի Հանրապետության թիմերը: Երևան քաղաքի Աջափնյակ և Ալավերդի քաղաքի թիմերը հանգրվանել են Վանաձոր քաղաքի Կարեն Դեմիրճյան 23 հասցեում գտնվող «Վանաձորի Ղարաքեշիշյանի անվան 1-ին արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈՄԿ-ի շենքում: Աջափնյակ համայնքի թիմի կազմում Վանաձոր քաղաք է ժամանել նաև գործով փուժող, ներկայումս հանգուցյալ Դավիթ Հովակիմյանը:

2013թ. հոկտեմբերի 12-ին, ժամը 17:30-ի սահմաններում Ալավերդու թիմի անդամներ Անդրանիկ Մելիքյանը և Արմեն Հակոբյանը միասին դուրս են եկել գիշերօթիկ դպրոցից՝ զբոսնելու: Վանաձոր քաղաքի Երկաթուղայինների այգուն հարակից Տերյան փողոցի վրա Վանաձոր քաղաքի բնակիչներ Գոռ Պողոսյանը և Կարեն Սիմոնյանը դիպողություն են արել նրանց՝ «իրենց երկար նայելու պատճառով», որի կապակցությամբ նրանց միջև վեճ է ծագել: Վերջիններս պայմանավորվել և պարզաբանումներ ստանալու համար իրենց խոսակցությունը շարունակելու նպատակով գնացել են Վանաձոր քաղաքի ավտոկայանի մոտ գտնվող Երկաթուղայինների այգի: Արմեն Հակոբյանը Երևան քաղաքի Աջափնյակ թիմի մարզիկ Ռաֆիկ Սարգսյանի 094158556 բջջային հեռախոսահամարից զանգահարել է Դավիթ Հովակիմյանի 098135134 բջջային հեռախոսահամարին, հայտնել կատարվածի մասին: Իմանալով միջադեպի մասին, նշված այգի են ժամանել նաև Դավիթ Հովակիմյանը, Աշոտ Համբարձումյանը, Գևորգ Ավագյանը, Աշոտ Կոտյանը, Ալավերդու թիմի անդամներ Անդրանիկ Մելիքյանը, Արմեն Հակոբյանը, Գառնիկ Հոբոսյանը, Տարոն Կամոյանը, Դավիթաշենի թիմի անդամներ Ավետիս Մուրադյանը, Նարեկ Բազիկյանը, Էդուարդ Գոջաբաշյանը, Վանաձորի թիմի անդամ Էրիկ Դալլաքյանը: Դավիթ Հովակիմյանը և Աշոտ Համբարձումյանն այգի են գնացել Կարեն Դեմիրճյան փողոցով, իսկ մյուսները այգու միջով: Այդ ընթացքում Գոռ Պողոսյանը զանգահարել և այգի է հրավիրել նաև իր մտերիմներին Վանաձոր քաղաքի բնակիչներ Արթուր և Արեն Բաղդասարյաններին, Արթուր Հակոբյանին և Արեն Կարապետյանին: Այգում խոսակցության ընթացքում Գոռ Պողոսյանն ապտակել է Արմեն Հակոբյանին, որից հետո սկսվել է փոխադարձ քաշքշուկ, որի ընթացքում Կարեն Սիմոնյանը ձեռքերով և գետնից վերցրած փայտե կտորով հարվածել է Գառնիկ Հոբոսյանի մարմնի տարբեր մասերին, ծեծի ենթարկել նրան՝ պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող գլխի շրջանի քերծվածքներ: Այնուհետև լսելով ոստիկանության աշխատակիցների գալու մասին, Դավիթ Հովակիմյանն ընկերների հետ տարբեր ճանապարհներով դիմել են փախուստի ճանապարհին հայհոյելով վանաձորցիների հասցեին: Դավիթ Հովակիմյանը, Աշոտ Համբարձումյանը և Ռաֆիկ Սարգսյանը փախուստի են դիմել Կարեն Դեմիրճյան փողոցով, որի ընթացքում Աշոտ Համբարձումյանը նույնպես հայհոյանքներ է տվել

վանաձորցիների հասցեին: Այգով փախուստի դիմող տղաներին ընդառաջ է եկել Կարեն Կունգուրցևը: Նա լսելով, որ փախուստի դիմող տղաները հայհոյում են վանաձորցիների հասցեին, շրջվել ու հետապնդել է փախուստի դիմած տղաներին, դուրս եկել Կարեն Դեմիրճյան փողոց, հետապնդել Դավիթ Հովակիմյանին մոտեցող Աշոտ Համբարձումյանին: Կարեն Կունգուրցևը հասնելով վերջիններիս Վանաձոր քաղաքի Կարեն Դեմիրճյան 23 հասցեում գտնվող «Վանաձորի Ղարաքեշիշյանի անվան 1-ին արհեստագործական պետական ուսումնարան»-ի շենքի հարավային կողմում ձեռքով թիկունքի կողմից հարվածել է Աշոտ Համբարձումյանի ուսին, որից հետո Դավիթ Հովակիմյանը ձեռքով մեկ անգամ հարվածել է Կարեն Կունգուրցևի դեմքին: Կարեն Կունգուրցևը ապօրինաբար կյանքից զրկելու սպանելու դիտավորությամբ դանակով մեկ անգամ հարվածել է Դավիթ Հովակիմյանի կրծքավանդակի ձախ կեսի շրջանում կյանքի համար կենսական կարևորագույն նշանակություն ունեցող օրգանի սրտի ուղղությամբ և վերջինիս պատճառել կրծքավանդակի ձախ կեսի առաջակողմնային մակերեսի ծակած-կտրած թափանցող վիրավորում, որն ուղեկցվել է ձախ թոքի վերին բլթի միջանցիկ և կույր, սրտապարկի, սրտի ձախ փորոքի հետին-կողմնային պատի միոէպիկարդիալ շերտի շոշափող ընթացքով միջանցիկ վնասումներով մարմնական վնասվածքներ, սակայն վերջինիս ընկերների՝ Ռաֆիկ Սարգսյանի, Աշոտ Համբարձումյանի, Գևորգ Ավագյանի, Աշոտ Կոոյանի կողմից օգնության հասնելուց հետո Կարեն Կունգուրցևը դիմել է փախուստի և հանցագործությունն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Դեպքից անմիջապես հետո Դավիթ Հովակիմյանին նրա մարզիչ Հրաչյա Միհթարյանը, Էրիկ Դալլաքյանը և Աշոտ Կոոյանը տաքսի ավտոմեքենայով տեղափոխել են «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն, որտեղ բժշկական սպասարկում իրականացնողների անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով ժամը 21:35-ին Դավիթ Հովակիմյանը մահացել է կրծքավանդակի ձախ կեսի թափանցող ծակած-կտրած վիրավորումով, արյան զանգվածային կորստով պայմանավորված ծանր ասֆիքսիայի հեմոռագիկ շոկից»[1]:

6. 2014 թվականի օգոստոսի 26-ին թիվ 19123213 քրեական գործի նյութերով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է նոր քրեական գործ՝ *«(…) Վլադիմիր Ղուկասյանի կողմից անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով անզգուշությամբ բուժվող հիվանդ Դավիթ Հովակիմյանի մահն առաջացնելու դեպքի առթիվ»* և առանձնացվել առանձին վարույթում[2]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 217-219:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 185-186:

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(…) Այսպիսով, վերլուծելով դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները իրենց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ չփարատված բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, դատարանը եկավ այն եզրահանգման, որ Կարեն Կունգուրցևի մեղավորությունը չհաստատվեց գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, ուստի Կարեն Կունգուրցևին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում պետք է ճանաչել և հռչակել անմեղ՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով»*[1]:

8. Վերաքննիչ դատարանը, Կ.Կունգուրցևին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, արձանագրել է, որ. *«(…) Հանցանքի կատարման մեջ անձի մեղավորության՝ փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար համակցությամբ հիմնավորված լինելու, ապացույցների ստուգման և իրավական գնահատության վերաբերյալ ՀՀ քրեադատավարական օրենադրության (…) հիմնարար իրավադրույթների և ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ, 104-րդ, 112-րդ հոդվածների (…) վերլուծության համատեքստում Վերաքննիչ դատարանը փաստում է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցների մեջ չկա գեթ մեկ օբյեկտիվ փաստական տվյալ, որը կհիմնավորի, որ ամբաստանյալ Կարեն Կունգուրցևը դիտավորություն, նպատակ է ունեցել կյանքից զրկելու տուժող Դավիթ Հովակիմյանին:*

Քրեական գործով ձեռք բերված ապացույցներով Վերաքննիչ դատարանը հիմնավորված է համարում ամբաստանյալ Կարեն Կունգուրցևի կողմից կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության ընթացքում տուժող Դավիթ Հովակիմյանի կրծքավանդակի ձախ կեսի շրջանում կյանքի համար կենսական կարևորագույն նշանակություն ունեցող օրգանի՝ սրտի ուղղությամբ մեկ անգամ դանակով հարվածելը, ինչի հետևանքով տուժող Դավիթ Հովակիմյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ:

(…)

1) Քրեական գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի սուբյեկտիվ կողմը, այն է՝ ամբաստանյալ Կարեն Կունգուրցևի ուղղակի դիտավորությունը կյանքից զրկելու տուժող Դավիթ Հովակիմյանին:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 201-204:

Այս եզրահանգումը կատարելիս Վերաքննիչ դատարանը նկատի է առնում քրեական գործով հիմնավորված այն հանգամանքները, որ ամբաստանյալ Կարեն Կունգուրցևի կողմից տուժող Դավիթ Հովակիմյանի կրծքավանդակի շրջանին հասցվել է դանակի մեկ հարված, որից հետո ամբաստանյալը դիմել է փախուստի: Քրեական գործով ձեռք բերված ապացույցներով նաև հիմնավորված է, որ ամբաստանյալը և տուժող Դավիթ Հովակիմյանը նախկինում, մինչև դեպքի պահը իրար չեն ճանաչել, ամբաստանյալ Կարեն Կունգուրցևը այգում Ռուսական եկեղեցու մոտ տեղի ունեցած նախորդած վիճաբանությանը չի մասնակցել, վիճաբանության կողմերից որևէ մեկի հետ բարեկամական կամ թշնամական հարաբերություններ չի ունեցել, դեպքի վայրում հայտնվել է պատահականորեն:

2) Ամբաստանյալ Կարեն Կունգուրցևի կողմից տուժող Դավիթ Հովակիմյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությունը քրեական գործի նյութերով հիմնավորված է.

3) Ամբաստանյալ Կարեն Կունգուրցևի կողմից տուժող Դավիթ Հովակիմյանի կրծքավանդակի ձախ կեսի շրջանին դանակով հարվածելու և տուժողի մահվան միջև սուբյեկտիվ կողմից առկա է անզգույշ մեղք: Վերոհիշյալ եզրահանգումը կատարելիս Վերաքննիչ դատարանը նկատի է առնում նաև այն հանգամանքը, որ 2014թ. օգոստոսի 26-ին որոշում է կայացվել թիվ 19123213 քրեական գործի նյութերով բուժապասարկում իրականացնող անձի կողմից անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով անզգուշությամբ բուժվող հիվանդ Դավիթ Հովակիմյանի մահն առաջացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի (Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) 2-րդ մասով նոր քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին: Նշված գործով Վլադիմիր Ղուկասյանը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.04.2015թ. դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով՝ զրկվելով բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունքից 2 տարի ժամկետով:

Վերը նշված հիմնավորումներով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Կարեն Կունգուրցևի կողմից կատարված արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ»[1]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 99-106:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոշարադրյալ հիմնավորումներով.

9. Ամբաստանյալ Կ.Կունգուրցևի պաշտպան Ա.Պապիկյանը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի կոպիտ և էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Մասնավորապես, բողոքաբերը հայտնել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետը: Բողոքի հեղինակը նշել է, որ տուժողի մահանալու փաստը եղել է բուժաշխատողի գործողությունների կամ անգործության հետևանքը, այնինչ Վերաքննիչ դատարանի կողմից կատարված վերաորակման արդյունքում ստացվում է, որ տուժողի մահվան պատճառը Կ.Կունգուրցևի գործողություններն են:

9.1 Միևնույն ժամանակ, բողոք բերած անձը հայտնել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման և վերլուծության չի ենթարկել գործով ձեռքբերված ապացույցները, նախաքննական և դատաքննական ցուցմունքները, որոնք եղել են հակասական և իրարամերժ: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչ չափորոշիչներով է առաջնորդվել՝ այս կամ այն ապացույցների որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տալով կամ դրանց մի մասն արժանահավատ, իսկ մյուսներն անարժանահավատ համարելով: Արդյունքում, բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 104-107-րդ, 127-րդ հոդվածները:

10. Վերոգրյալի հիման վրա պաշտպան Ա.Պապիկյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 16-ի դատավճռին կամ քրեական գործն ուղարկել նոր քննության:

11. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ֆանյանն իր բողոքում նշել է, որ ստորադաս դատարանը դատական ակտ կայացնելիս սխալ է կիրառել նյութական օրենքը, չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ և 5-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, ինչպես նաև չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 23-րդ, 25-րդ, 35-րդ, 107-րդ, 126-127-րդ, 358-րդ, 360-րդ և 366-րդ հոդվածների պահանջները:

Անդրադառնալով Կ.Կունգուրցևի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով վերաորակելու իրավաչափությանը՝ բողոքաբերը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ Կ.Հովհաննիսյանի և մյուսների գործով 2013 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտել է, որ

Վերաքննիչ դատարանն ամբաստանյալին մեղսագրել է նյութական հանցակազմով նկարագրված ավարտված արարք, որի հետևանքները ոչ թե ամբաստանյալի գործողությունների արդյունքում են վրա հասել, այլ առաջացել են մեկ այլ անձի անգործության հետևանքով:

Մասնավորապես, բողոք բերած անձը հայտնել է, որ քրեական գործի քննության ընթացքում դրա նյութերով հարուցվել է մեկ այլ քրեական գործ, որով բժիշկ Վ.Ղուկասյանը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԼԴ/0170/01/14 դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է երեք տարի ազատազրկման, ինչպես նաև զրկվել է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից երկու տարի ժամկետով: Տվյալ քրեական գործով կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության թիվ 14-1150 եզրակացությամբ հաստատվել է, որ Դ.Հովակիմյանի մահվան և Վ.Ղուկասյանի կողմից իր մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու միջև առկա է անմիջական պատճառական կապ: Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ Դ.Հովակիմյանի մահը վրա է հասել ոչ թե հասցված վնասվածքից, այլ ծանր աստիճանի հեմոռագիկ շոկից, որն արդյունք էր բժիշկ Վ.Ղուկասյանի անգործության:

Նման պայմաններում դատարանը Կ.Կունգուրցևին մեղսագրել է նյութական հանցակազմով նկարագրված ավարտված արարք, որի հետևանքներն արդյունք չեն նրա գործողությունների, այսինքն՝ ըստ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ նշված հետևանքներն առաջացել են մեկ այլ անձի անգործության, այն է՝ բժիշկ Վ.Ղուկասյանի ոչ պատշաճ և ոչ ժամանակին ցուցաբերած բժշկական օգնության հետևանքով:

11.1 Բողոք բերած անձն անդրադարձել է նաև մեկ այլ քրեական գործով ձեռքբերված ՕՀՄ արդյունքների, հարցաքննության արձանագրությունների՝ կոնկրետ քրեական գործի շրջանակում օգտագործման իրավաչափությանը: Ապացույցների բավարարության չափանիշների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումների մեջբերմամբ բողոքաբերը գտել է, որ գործով ձեռքբերված ապացույցները բավարար չեն Կ.Կունգուրցևի մասնակցությունը մեղսագրվող արարքում հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հիմնավորված համարելու համար:

12. Վերոգրյալի հիման վրա տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ֆանյանը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշումը բեկանել և փոփոխել, Կ.Կունգուրցևին ճանաչել անպարտ և հոչակել նրա անմեղությունն առաջադրված մեղադրանքում:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Կ.Կունգուրցևին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ

հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը վերաորակելով և նրան մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով՝ Վերաքննիչ դատարանը պահպանել է արդյոք գործը բացառապես անձին առաջադրված մեղադրանքի սահմաններում քննելու օրենսդրական պահանջը:

14. ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *«Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝ (...) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի համաձայն՝ *«Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.*

(...)

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:*

15. Վճռաբեկ դատարանը, իր նախադեպային իրավունքում անդրադառնալով դատական քննության սահմանների վերաբերյալ խնդրին, բազմիցս վերահաստատել է իրավական դիրքորոշումներն առ այն, որ.

«Թե առաջին ատյանի դատարանը, թե վերաքննիչ դատարանը և թե վճռաբեկ դատարանը ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես կխախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սոսկ «քրեաիրավական որակում»

իմաստով և այն իր մեջ չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայազուրկ է:

(…)

[Կ]ասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, ինչպես նաև գործի դատական քննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը (…)»[1]:

«(…) [Մ]եղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն:

(…) [Գ]ործի դատական քննությունը սահմանափակված է այն անձանց շրջանակով, որոնց նկատմամբ կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում և այդ անձանց նկատմամբ առաջադրված մեղադրանքի ծավալով: Սա պայմանավորված է մի կողմից՝ մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն իրական և արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող մարմին, չի կարող ինքնուրույն ձևակերպել նոր մեղադրանք՝ փոխարինելով քրեական հետապնդման մարմիններին: Ընդ որում, դատական քննության սահմաններն ընդգծելու և մեղադրյալի (ամբաստանյալի) պաշտպանության իրավունքն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է, որ «մեղադրանք» եզրույթը հասկացվի որպես արարքի քրեաիրավական որակման և դրա հիմքում ընկած փաստական հանգամանքների ամբողջություն:

(…)»[2]:

16. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պաշտպանության իրավունքը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, չպետք է լինի վերացական և պատրանքային, այլ պետք է լինի կոնկրետ և իրական: Իսկ

[1] Տե՛ս *Արթուր Սերոբյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշման 4.2-րդ կետը:
[2] Տե՛ս *Արկադի Պապյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-րդ և 23-րդ կետերը:

պաշտպանության իրավունքի պատշաճ ապահովումը նախ ենթադրում է, որ առաջադրված մեղադրանքը քրեաիրավական որակումից զատ պետք է պարունակի նաև այդ որակման հիմքում դրված փաստերը՝ անձին դրանից յուրաքանչյուրն արդյունավետ կերպով վիճարկելու հնարավորություն ընձեռելով: Հետևաբար, պաշտպանության իրավունքի երաշխավորման նպատակով թե առաջին ատյանի, թե վերաքննիչ և թե վճռաբեկ դատարանն ամբաստանյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների շրջանակից: Ավելին՝ դատարանը՝ որպես արդարադատություն և ոչ թե քրեական հետապնդում իրականացնող մարմին, սահմանափակված է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալով: Այսինքն՝ ինչպես քրեական գործի քննության ընթացքում, այնպես էլ դրա արդյունքում դատական ակտ կայացնելիս դատարանը չի կարող քննարկման առարկա դարձնել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք արտացոլված չեն եղել անձին առաջադրված մեղադրանքում[1]: Հակառակ պարագայում կարող է վտանգվել անձի պաշտպանության իրավունքը, քանի որ վերջինս բավարար ժամանակ և հնարավորություն չի ունեցել պաշտպանվելու դատական ակտով անձին մեղսագրված, սակայն ի սկզբանե մեղադրանքի ծավալում չընդգրկված փաստական տվյալներից:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կ.Կունգուրցևին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինաբար կյանքից զրկելու՝ սպանելու դիտավորությամբ, դանակով մեկ անգամ հարվածել է Դ.Հովակիմյանի կրծքավանդակի ձախ կեսի շրջանում՝ կյանքի համար կենսական կարևորագույն նշանակություն ունեցող օրգանի՝ սրտի ուղղությամբ և վերջինիս պատճառել կրծքավանդակի ձախ կեսի առաջակողմնային մակերեսի ծակած-կտրած թափանցող վիրավորում, որն ուղեկցվել է ձախ թոքի վերին բլթի միջանցիկ և կույր, սրտապարկի, սրտի ձախ փորոքի հետին-կողմնային պատի միոէպիկարդիալ շերտի շոշափող ընթացքով միջանցիկ վնասումներով մարմնական վնասվածքներ, սակայն վերջինիս ընկերների՝ Ռաֆիկ Սարգսյանի, Աշոտ Համբարձումյանի, Գևորգ Ավագյանի, Աշոտ Կոոյանի կողմից օգնության հասնելուց հետո Կ.Կունգուրցևը դիմել է փախուստի և հանցագործությունն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով[2]:

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի ապրիլի 15-ի դատավճռով ճանաչել և հռչակել է Կ.Կունգուրցևի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով[3]:

---

[180] Տե՛ս mutatis mutandis Վճռաբեկ դատարանի՝ *Սմբատ Գրիգորյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԿԴ2/0054/01/15 որոշումը:
[181] Մանրամասն տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[182] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, 2017 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ Կ.Կունգուրցևին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը վերաորակելով և նրան մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ, հիմնավորված է համարել ամբաստանյալի կողմից կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության ընթացքում տուժող Դ.Հովակիմյանի կրծքավանդակի ձախ կեսի շրջանում կյանքի համար կենսական կարևորագույն նշանակություն ունեցող օրգանի՝ սրտի ուղղությամբ մեկ անգամ դանակով հարվածելը, ինչի հետևանքով տուժող Դ.Հովակիմյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ:

Ի հիմնավորումն վերոնշյալ եզրահանգման՝ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ՝

ա) քրեական գործով ձեռք բերված ապացույցներով չի հիմնավորվում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի սուբյեկտիվ կողմը,

բ) ամբաստանյալ Կ.Կունգուրցևի կողմից տուժող Դ.Հովակիմյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությունը քրեական գործի նյութերով հիմնավորված է,

գ) ամբաստանյալ Կ.Կունգուրցևի կողմից տուժող Դ.Հովակիմյանի կրծքավանդակի ձախ կեսի շրջանին դանակով հարվածելու և տուժողի մահվան միջև սուբյեկտիվ կողմից առկա է մեղքի անզգույշ ձև[1]:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կ.Կունգուրցևին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով վերաորակելու արդյունքում Վերաքննիչ դատարանը խախտել է ամբաստանյալի՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված պաշտպանության իրավունքը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Կ.Կունգուրցևին առաջադրված մեղադրանքի ծավալում ընդգրկված չի եղել իր գործողությունների արդյունքում տուժող Դ.Հովակիմյանին մահ պատճառելու հատկանիշը: Այսինքն՝ այդպիսի փաստական տվյալ Կ.Կունգուրցևին չի մեղսագրվել: Մինչդեռ նյութական հանցակազմի դեպքում օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից է հետևանքը և պատճառահետևանքային կապը արարքի և դրա միջև: Հետևաբար անձին նյութական հանցակազմով նկարագրված հանցանք մեղսագրելիս առաջադրված մեղադրանքում պետք

[1] Մանրամասն տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

է նշվեն ոչ միայն հետևանքի, այլ նաև արարքի և դրա միջև պատճառահետևանքային կապի առկայությունը հավաստող փաստական հանգամանքները: Կոնկրետ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաորակելով Կ.Կունգուրցևին մեղսագրված արարքը, ըստ էության դատական ակտով քննարկել և հաստատված է համարել Կ.Կունգուրցևի գործողությունների և տուժողի մահվան միջև պատճառահետևանքային կապը, որը Կ.Կոնգուրցևին մեղսագրված չի եղել: Դեռ ավելին՝ Կ.Կոնգուրցևին առաջադրված մեղադրանքում ուղղակիորեն սահմանված է, որ Դ.Հովակիմյանը մահացել է կրծքավանդակի ձախ կեսի թափանցող ծակած-կտրած վիրավորումով, արյան զանգվածային կորստով պայմանավորված ծանր աստիճանի հեմոռագիկ շոկից «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում բժշկական սպասարկում իրականացնողների անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով[1]: Ընդ որում, մեկ այլ քրեական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է բժիշկ Վ.Ղուկասյանի մեղքն անզգուշությամբ տուժող Դ.Հովակիմյանի մահն առաջացնելու մեջ[2]:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավադրույթը, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր Կ.Կունգուրցևին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը վերաորակելու ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով՝ որպես առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառել, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ:

Հետևաբար Վերաքննիչ դատարանը, Կ.Կունգուրցևին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքը վերաորակելով և նրան մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, չի պահպանել գործը բացառապես անձին առաջադրված մեղադրանքի սահմաններում քննելու օրենսդրական պահանջը:

19. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և Կ.Կունգուրցևին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով վերաորակելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի

[184] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[185] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու ու գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար, որի պայմաններում միայն կարող է ապահովվել բողոքաբերների կողմից բարձրացված և սույն որոշման 9.1-րդ և 11.1-րդ կետերում նշված՝ գործում առկա ապացույցների գնահատման, դրանց թույլատրելիության և վերաբերելիության հարցերի ողջ ծավալով քննությունը:

20. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարության տվյալ փուլում գրավը կարող է լինել երաշխիք ամբաստանյալ Կ.Կունգուրցևի ազատության մեջ գտնվելու դեպքում նրա հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը չեզոքացնելու համար: Ուստի՝ ամբաստանյալ Կ.Կունգուրցևի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը պետք է փոխարինել գրավով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Կարեն Ալեքսանդրի Կունգուրցևի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Կարեն Ալեքսանդրի Կունգուրցևի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը փոխարինել այլընտրանքային խափանման միջոց գրավով՝ որպես գրավի չափ սահմանելով 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, որը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտ հաշվին վճարելուց հետո ամբաստանյալ Կարեն Ալեքսանդրի Կունգուրցևին ազատել կալանքից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԱՆՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԴ/0141/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2019 թվականի հունվարի 22-ին ք. Երևանում

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ Կարեն Ալեքսանդրի Կունգուրցևի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշումը բեկանվել է և քրեական գործն ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության, այն պատճառաբանությամբ, որ գործում առկա ապացույցների գնահատման, դրանց թույլատրելիության և վերաբերելիության հարցերի ողջ ծավալով քննությունը հնարավոր է իրականացնել բացառապես առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Սակայն որոշման եզրափակիչ մասում նշվել է միայն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշումը բեկանելու մասին: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է անհստակություն, որն անհրաժեշտ է լուծել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կարեն Ալեքսանդրի Կունգուրցևի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 20-ի որոշման՝ եզրափակիչ մասի 1-ին կետում *«վերաբերյալ»* բառից հետո ավելացնել *«ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ*

հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 15-ի արդարացման դատավճիռը և» բառերը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ2/0006/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշման դեմ դիմող Արթուր Հակոբյանի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Հ.Հայրապետյանի՝ 2015 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության տնօրեն Արման Դանիելյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90555515 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 11-ի որոշմամբ քրեական հետապնդում չի իրականացվել և քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

ՀՀ զինվորական դատախազի՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 11-ի որոշման դեմ դիմողի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանի բողոքն ամբողջությամբ մերժվել է:

2. 2016 թվականի հոկտեմբերի 20-ին դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանը բողոք է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), որը Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 16-ի որոշմամբ մերժվել է:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի հունիսի 22-ի որոշմամբ դիմողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 16-ի որոշումը բեկանվել է, և նյութերն ուղարկվել են նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 11-ի և ՀՀ զինվորական դատախազի՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումները վերացնելու և Ա.Հակոբյանի իրավունքների ու ազատությունների խախտումը վարույթն իրականացնող մարմնի կողմից վերացնելու պարտականությունը ճանաչելու պահանջների մասին դիմողի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

5. Դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հունվարի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. 2015 թվականի նոյեմբերի 13-ի՝ քրեական գործ հարուցելու, այն վարույթ ընդունելու և տուժող ճանաչելու մասին որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «*(…) [ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության] 9-րդ կայազորային քննչական բաժին է ստացվել Ա.Ա.Հակոբյանի մորաքույր Ռիտա Հակոբյանի դիմումն այն մասին, որ Արթուր Հակոբյանը հայտնել է, որ 2015թ. նոյեմբերի 6-ի երեկոյան ժամը 18-ի սահմաններում վերջինս իր ընկերոջ հետ գնացել է խանութ՝ ծիսախոտ գնելու: Ընկերը տեսել է Ջիվան անունով սպային, նույն ինքը՝ ՀՀ ՊՆ 50869 զորամասի 1-ին հրաձգային*

գումարտակի շտաբի պետ, մայոր Ջիվան Վաղինակի Մկրտչյանին, և թաքնվել: Ա.Ա.Հակոբյանը չի հասցրել թաքնվել, և խանութում գտնվելու համար Ջ.Վ.Մկրտչյանը ծեծի է ենթարկել նրան (...)»[1]:

7.1. Տուժող Ա.Հակոբյանը 2015 թվականի նոյեմբերի 19-ին ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականի հուլիս ամսին ՀՀ ՊՆ 50869 զորամասի 1-ին գումարտակի շտաբի պետ մայոր Ջիվանն իրեն ասել է, որ ծառերը ջրի, և չջրելու համար քաշել է իր ականջն ու ձեռքի բաց ափով հարվածել պարանոցին: Նա միշտ իրեն տեսնելիս նման ձևով հարվածել է իր պարանոցին: Բացի այդ, 2015 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 18-ի սահմաններում, Ջիվանն իրեն ու իր ընկերոջը՝ Յոլակին, տեսել է զորամասի հսկիչ անցագրային կետից դուրս՝ խանութի մոտ: Նշել է, որ Ջիվանը հարբած է եղել և զորամասից դուրս գտնվելու համար իրեն և Յոլակին հայհոյելով՝ ասել է, որ գնան այդտեղից, որից հետո ձախ ձեռքով ապտակել է իր դեմքի աջ հատվածին: Նշել է նաև, որ Ջիվանի այդ կոպիտ խոսքից ազդվել է, ցանկացել է ինքն իրեն վնասել կամ Ջիվանին հարվածել, բայց առանց որևէ բան անելու հեռացել է[2]:

8. 2015 թվականի նոյեմբերի 26-ին Ա.Հակոբյանի նկատմամբ նշանակվել է ռազմաբժշկական և ամբուլատոր դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի՝ 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 3 եզրակացության համաձայն՝ *«(...) Դատահոգեբուժական մաս.*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը եզրակացնում է, որ Արթուր Հակոբյանի մոտ հայտնաբերվում է՝ «Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում շիզոֆրենային ախտանիշներով, ելքի շրջան /F23.1/» հոգեկան գործունեության փսիխոտիկ մակարդակի խանգարում: Դրա մասին են վկայում լսողական խանգարումները (հալուցինացիաները) և դրանց առավելապես կեղծ բնույթը, անհեթեթ բազմաբովանդակ զառանցական մտքերը, դատողությունների պարալոգիզմը, անադեկվատ վարքը, կեղծ ճանաչողության էպիզոդները, կիրառված բուժման նկատելի արդյունավետությունը: Ձեր կողմից առաջադրված Ա կետի հարցի 2-րդ կետին պատասխանում եմ, որ «Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում շիզոֆրենային ախտանիշներով, ելքի շրջան /F23.1/» հոգեկան գործունեության խանգարման ստույգ ժամկետը նշել հնարավոր չէ: Ձեր կողմից առաջադրված Բ կետի հարցին պատասխանում եմ, որ վերոնշյալ ախտորոշումը դասվում է ժառանգական նախատրամադրվածություն ունեցող հոգեկան հիվանդությունների շարքին, որոնք կարող են դրսևորվել տվյալ անձի մոտ որոշակի պայմաններում: Ձեր կողմից առաջադրված Դ կետի հարցին պատասխանում եմ, որ Ա.Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերված պրոդուկտիվ հոգեախտաբանական ախտանիշների առկայությունը, առավելապես ընկալման, մտածողության

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 1-3:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 89-94:

*հետաքննություններն արտահայտված են այն ապրիճան, որ **զրկում են նրան կարողությունից՝ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները**:*

Ռազմաբժշկական մաս.

ա. Ներկայումս Ա.Ա.Հակոբյանը, համաձայն ՀՀ ՊՆ 410-13 հրամանի 5բ հոդվածի 1-ին այունակի, պիտանի չէ զինծառայության խաղաղ ժամանակ:

բ. Հաշվի առնելով փորձաքննվողի կլինիկական դիտարկումը, հոգեկան վիճակի նկարագրությունը, անամնեստիկ և քննչական նյութերի տվյալները, սոմատոնևրոլոգիական և գործիքային հետազոտման արդյունքները, վերը նկարագրված փսիխոտիկ մակարդակի հոգեկան խանգարման վերլուծությունը, ստացված դեղորայքային բուժումն ու նկատված դրական դինամիկան՝ Ա.Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերվում է «Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում շիզոֆրենային ախտանիշներով, ելքի շրջան /F23.1/» ախտորոշումը: Վերը նշված «Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում շիզոֆրենային ախտանիշներով, ելքի շրջան» ախտորոշումը դա փսիխոտիկ մակարդակի հոգեկան խանգարում է, որն առաջացել է ծառայության ընթացքում, առավելապես պայմանավորված է ժառանգական գործոնների, անձնային առանձնահատկությունների և բանակային կյանքի սթրեսոգեն պայմանների անբարենպաստ փոխներազդեցությամբ, ուստիև, զորակոչային հանձնաժողովն այն հայտնաբերել չէր կարող (...)»[1]:

9. Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը հանցագործության դեպքի բացակայության հիմքով կարճելու մասին քննիչի՝ 2016 թվականի հունիսի 11-ի որոշմամբ արձանագրվել է, ի թիվս այլնի, հետևյալը. *«(...) [Ն]ախաքննության ընթացքում թեև Արթուր Արմենի Հակոբյանն իր ցուցմունքներով պնդել է Ջիվան Վաղինակի Մկրտչյանի կողմից իր նկատմամբ բռնություն գործադրելու և իրեն վիրավորանք հասցնելու հանգամանքը, սակայն քրեական գործով բազմաթիվ վկաների ցուցմունքներով, այլ քննչական և դատավարական գործողություններով ու ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ Ա.Հակոբյանի նկատմամբ բռնություն գործադրելու, նրան վիրավորանք հասցնելու դեպքեր չեն եղել, այդպիսիք չեն կատարվել նաև Ջ.Մկրտչյանի կողմից (...)»*[2]:

10. ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, հիմնվելով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 210-րդ հոդվածի, ինչպես նաև *Արայիկ Խաչատրյանի* գործով թիվ ԿԴ1/0006/01/14 որոշմամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների վրա, իր՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ մերժել է Ա.Ղարագյոզյանի բողոքը՝

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 36-40:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 212-225:

արձանագրելով, ի թիվս այլնի, հետևյալը. *«(…) [Ե]ախաքննության ընթացքում տուժող Ա.Հակոբյանի և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես հարցաքննություն չկատարելով վարույթն իրականացնող մարմինը թույլ չի տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի էական խախտում, քանի որ վարույթն իրականացնող մարմինը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով և գնահատելով ձեռք բերված ապացույցները եկել է ճիշտ եզրահանգման, որ Ա.Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերված պրոդուկտիվ հոգեախտաբանական ախտանիշների առկայությունը, **զրկում է նրան կարողությունից՝ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները, ուստի** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի և 210-րդ հոդվածի համադրության արդյունքում պարզ է դառնում, որ վարույթն իրականացնող մարմինն ոչ թե չի կատարել սահմանված պոզիտիվ պարտավարություններ, այլ **պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները չի իրականացրել Ա.Հակոբյանի և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես հարցաքննություն** (…)»*[1]:

11. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«(…) [Ք]ննիչի՝ քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու հիմքեր չկան, քանի որ նրա հետևությունները բխում են նախնական ստուգման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների բովանդակությունից: Քննիչի կողմից ապացույցների գնահատման արդյունքում կայացրած որոշումը կամային չէ, դրա հիմքում ընկած են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը (…): Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցներով քննիչը եկել է ապացուցված եզրահանգման, որ Ջիվան Վաղինակի Մկրտչյանը կամ որևէ այլ զինծառայող Արթուր Հակոբյանի նկատմամբ բռնություն չի գործադրել և վիրավորանք չի հասցրել ու այդ եզրահանգումը ստացվել է օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների՝ վկաներ Տիգրան Աղասիի Մարտիրոսյանի, Արթուր Սրանիսլավի Բուդանովի, Հրանտ Գեղամի Կարապետյանի, Ռաֆիկ Գեղամի Աղեկյանի, Հարութ Ռոբերտի Մալինցյանի, Մարիյա Սամվելի Յեհամեյարուկի ցուցմունքների և դատաբժիշկ-փորձագետի թիվ 2138/հ և ռազմաբժշկական ու ամբուլատոր դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 3 եզրակացությունների հիման վրա, որոնք կասկած չեն հարուցում հիմնավորվածության տեսանկյունից:*

Վերը նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ Զինվորական դատախազ Ա.Հարությունյանին, ով իր հերթին իր լիազորությունների սահմաններում, ստուգման ենթարկելով քննիչի որոշումը, սահմանված կարգով և ժամկետում 2016 թվականի սեպտեմբերի 23-ին կայացրել է քրեական հետապնդում

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 11-22:

չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բողոքը մերժելու մասին որոշում, որը ևս օրինական է և վերացնելու հիմքեր չկան (…)»[1]:

12. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հունվարի 9-ի որոշմամբ փաստել է. *«(…) [Դ/իմողի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանի վերաքննիչ բողոքը բավարարելու և [Ա]ռաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու հիմքեր չկան, նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը մերժելիս՝ դատարանը թույլ չի տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ (…)»*[2]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքի հեղինակի կարծիքով՝ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-9-րդ, 17-րդ և 290-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 3-րդ և 6-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոնշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը փաստել է, որ դեպքի առթիվ չի իրականացվել լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն: Ըստ բողոքաբերի՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս նախաքննության մարմնի, զինվորական դատախազության և դատարանի, խոշտանգման փաստի վերաբերյալ չի իրականացրել արդյունավետ քննություն: Ասվածի համատեքստում բողոք բերած անձը, ի թիվս այլնի, նշել է, որ Ա.Հակոբյանն իր ցուցմունքներով փաստել է, որ իր նկատմամբ դրսևորվել է դաժան, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք, այնինչ վարույթն իրականացնող մարմնի համոզմամբ՝ Ա.Հակոբյանի կողմից ներկայացված փաստերը հերքվում են այն անձանց ցուցմունքներով, ովքեր բռնություն են կիրառել տուժողի նկատմամբ: Միևնույն ժամանակ բողոքաբերն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինը գործով վկաների և Ա.Հակոբյանի միջև առերեսում չի կատարել, մինչդեռ վերջիններիս ցուցմունքներում առկա են էական հակասություններ: Բողոքաբերի կարծիքով՝ գործում առկա են բազմաթիվ հանգամանքներ, որոնք չեն պարզվել և տեղի չի ունեցել առերեսում, ինչը վկայում է, որ խոշտանգման փաստով արդյունավետ քննություն չի իրականացվել:

14. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է վերացնել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

[1] Տես նյութեր, հատոր 2, թերթեր 107-110:
[2] Տես նյութեր, հատոր 3, թերթեր 41-48:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զինծառայողին խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու փաստի առթիվ արդյունավետ քննություն կատարելու պարտականության, ինչպես նաև հոգեկան հիվանդություն ունեցող տուժողի լսվելու իրավունքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. զինվորական ծառայության ընթացքում Ա.Հակոբյանի նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու կապակցությամբ իրականացվե՞լ է արդյոք գործի լրիվ և բազմակողմանի քննություն:

I. Զինծառայողին խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու փաստի առթիվ արդյունավետ քննություն կատարելու պարտականությունը.

17. ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (...)»:*

17.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեք համարվող՝ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում[1]:

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Գզոյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱՔԴ/0049/01/09 որոշման 22-րդ կետը, *Վարդգեզ Գասպարիի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱՔԴ/0190/11/16 որոշման 19-րդ կետը:

Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու փաստի առթիվ արդյունավետ քննություն կատարելու առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- Երբ անհատը վիճարկելի պնդում է ներկայացնում այն մասին, որ իր նկատմամբ ոստիկանության կամ նմանատիպ այլ պետական մարմինների կողմից ցուցաբերվել է խիստ վատ վերաբերմունք՝ խախտելով 3-րդ հոդվածը, ապա նշված դրույթից, որն անհրաժեշտ է դիտարկել պետության՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված հիմնական պարտականության հետ համակցության մեջ, ինքնաբերաբար ենթադրելի է, որ պահանջվում է արդյունավետ պաշտոնական քննության իրականացում[1]*: Որպեսզի քննությունը համարվի «արդյունավետ», պետք է ունակ լինի հանգեցնելու վիճելի փաստերի հաստատմանը և հնարավորության դեպքում՝ անթույլատրելի վերաբերմունք դրսևորելու համար պատասխանատու անձանց բացահայտմանն ու պատժին*[2]*,*

- Քննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե որևէ արդյունքի հասնելու, այլ միջոցներ ձեռնարկելու պարտականություն է». պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգեցնի այնպիսի եզրակացության, որը համընկնում է պահանջ ներկայացրած անձի՝ դեպքերի մասին տված ցուցմունքներին. այնուամենայնիվ, դրա միջոցով սկզբունքորեն պետք է հնարավոր լինի պարզել գործի փաստերը, և այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ էին, ապա նաև բացահայտել և հիմնավորված լինելու դեպքում պատժել պատասխանատու անձանց: Ուստի վատ վերաբերմունքի մասին լուրջ պնդումների քննությունը պետք է մանրակրկիտ լինի: Դա նշանակում է, որ ցանկացած դեպքում իշխանությունները պետք է ձգտեն պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, և հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունները չպետք է հիմք ընդունվեն իրենց քննությունն ավարտելու համար կամ դրվեն իրենց որոշումների հիմքում: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցները, այդ թվում՝ ականատեսների ցուցմունքները, դատաբժշկական և այլ ապացույցներ ապահովելու համար: Քննության ցանկացած թերություն, որը խոչընդոտում է վնասվածքների պատճառը կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնությունը պարզելը, կանգնեցնում է այս չափանիշը խախտելու վտանգի առջև[3]*,*

[1] Տե՛ս, mutatis mutandis, Եվրոպական դատարանի՝ *Assenov and others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճռի 102-րդ կետը, *Labita v. Italy* գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճռի 108-րդ կետը, *Z and others v. United Kingdom* գործով 2001 թվականի մայիսի 10-ի վճռի 73-րդ կետը:

[2] Տե՛ս, mutatis mutandis, *Jeronovičs v. Latvia* գործով Եվրոպական դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 5-ի վճռի 103-րդ կետը:

[3] Տե՛ս, mutatis mutandis, Եվրոպական դատարանի՝ *Mikheyev v. Russia* գործով 2006 թվականի հունվարի 26-ի վճռի 102-րդ կետը, *Virabyan v. Armenia* գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճռի 162-րդ կետը:

- Վատ վերաբերմունքը պետք է ունենա լրջության նվազագույն մակարդակ, եթե այն 3-րդ հոդվածի սահմաններում է: Այս նվազագույնի գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են՝ վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունը և որոշ դեպքերում՝ զոհի սեռը, տարիքը և առողջական վիճակը[1],

- Որպեսզի պետական մարմինների կողմից ցուցաբերված ենթադրյալ վատ վերաբերմունքի գործով քննությունը արդյունավետ լինի, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն[2]:

17.2. Քինծառայողների իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ 2006 թվականի ապրիլի 11-ի թիվ 1742 հանձնարարականի 10.1.2.-րդ կետը սահմանում է, որ զինծառայողները պետք է օգտվեն խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքից:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2010 թվականի փետրվարի 24-ի թիվ 4 (2010) 4 հանձնարարականի հավելվածի 10-12-րդ կետերն ամրագրում են. *«Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն զինծառայողներին խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու համար (…): (…) Այն դեպքերում, երբ զինծառայողները բարձրացնում են վիճելի պնդում առ այն, որ ենթարկվել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտող գործողությունների, կամ երբ իշխանությունները ողջամիտ հիմքեր ունեն ենթադրելու, որ այդպիսի վերաբերմունք տեղի է ունեցել, ապա անհապաղ պետք է սկսվի այդ հանգամանքների անկախ և արդյունավետ պաշտոնական քննություն: (…) Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն զինծառայողների խոշտանգումների և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի մասին հաղորդումների ներկայացումը խրախուսելու և այդպիսի գործողությունների մասին հաղորդում ներկայացրած անձին հաշվեհարդարից պաշտպանելու համար (…)»:*

Վերոգրյալի առնչությամբ Եվրոպական դատարանը ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատ-*

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Ireland v. the United Kingdom* գործով 1978 թվականի հունվարի 18-ի վճռի 162-րդ կետը:

[2] Տե՛ս, mutatis mutandis, Եվրոպական դատարանի՝ *Oğur v. Turkey* գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճռի 91-րդ կետը, *Mehmet Emin Yüksel v. Turkey* գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճռի 37-րդ կետը, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճռի 83-րդ կետը:

վությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված են՝ այլնի հետ մեկտեղ տրամադրելով նրան պահանջվող բժշկական օգնություն (...): Պետության առաջնային պարտականությունն է նվազագույնի հասցնել առողջությանն սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային տարրի պատճառով, որը գործում է, երբ Պետությունը սովորական քաղաքացիներին զորակոչում է զինվորական ծառայության: Նման կանոնները պետք է պահանջեն պրակտիկ միջոցների իրականացում, որոնք նպատակ ունեն արդյունավետորեն պաշտպանել զորակոչվածների զինվորական կյանքին բնորոշ վտանգներից, ապահովեն պատշաճ ընթացակարգեր՝ պարզելու համար տարբեր մակարդակների ծառայողների կողմից թույլ տրվող բացթողումները և սխալները (...)»[1]:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, իր ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան, կրում է զինծառայողին խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու փաստի առթիվ պատշաճ, անաչառ և արդյունավետ քննություն կատարելու պարտավորություն՝ վատ վերաբերմունքի ենթարկվելու հանգամանքները պարզելու, մեղավոր պաշտոնատար անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

II. Հոգեկան հիվանդություն ունեցող տուժողի լսվելու իրավունքը.

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝*

1) անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի համաձայն՝ *«Տուժողի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ *«Տուժողը պարտավոր է (...) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային*

[1] Տե՛ս *Chember v. Russia* գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 3-ի վճռի 50-րդ կետը:

փորձաքննության՝ ստուգելու համար քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա մոտ այդպիսի ունակության առկայությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով՝*

(…)

3) (…) տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:*

2. Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

18.1. Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները. *«[Տ]ուժողն այն անձն է, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է կամ այդ արարքը կատարելն ավարտվելու դեպքում կարող էր պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մաս): Նա քրեական դատավարությանը մասնակցում է որպես մեղադրանքի կողմի սուբյեկտ և գործով օժտված է սեփական շահերով, որոնց ապահովման համար սահմանված են տուժողի մի շարք դատավարական իրավունքներ և պարտականություններ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված), որոնցից է նաև ցուցմունք տալու իրավունքը և պարտականությունը: Հետևաբար տուժողի ցուցմունքն իր բնույթով ոչ միայն ապացույցի ինքնուրույն տեսակ է, այլև վերջինիս իրավունքների և շահերի պաշտպանության միջոց (…):*

(…) Չնայած տուժողի ցուցմունք տալու իրավական առանձնահատկություններին՝ նրա հարցաքննության նկատմամբ օրենսդիրը տարածել է վկայի հարցաքննության կանոնները: Մասնավորապես տուժողը չի կարող կանչվել և հարցաքննվել այն դեպքում, երբ ֆիզիկական կամ հոգեկան պակասու-

թյունների հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է տուժողի՝ ցուցմունք տալու պարտականությունից բացառություն, ինչպես նաև նրա ցուցմունք տալու իրավունքի սահմանափակման հիմք: Նշված սահմանափակումը նպատակ է հետապնդում ապահովել ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը, համաչափ է հետապնդվող նպատակին և չի խմաստազրկում տուժողի՝ իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու բուն իրավունքը, քանի որ վերջինս օժտված է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության այլ իրավական միջոցներով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված): Միևնույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ սահմանված են տուժողին հարցաքննելու սահմանափակման հիմքերը: Մասնավորապես որպես տուժող չի կարող կանչվել և հարցաքննվել այն անձը, ով.

1. ունի ֆիզիկական կամ հոգեկան պակասություններ,

2. (1) կետում նշված հանգամանքի հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

Ընդ որում վերոնշյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը պարտադիր է քննարկվող սահմանափակումը կիրառելու համար: Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է նրանով, որ անձի մոտ ֆիզիկական կամ հոգեկան բնույթի առանձին շեղումների առկայությունը դեռևս չի նշանակում, որ տվյալ անձն առհասարակ չի կարող ճիշտ ընկալել և վերարտադրել օբյեկտիվ իրականության փաստերը: Մասնավորապես հնարավոր են դեպքեր, երբ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մոտ ժամանակավորապես վերականգնվի օբյեկտիվ իրականության փաստերը ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը, կամ տվյալ հիվանդությունն իր բնույթով այնպիսին լինի, որ անձին չզրկի երևույթների նշանակությունը հասկանալու և դրանք վերարտադրելու ունակությունից և այլն: Հետևաբար անձը չի կարող հարցաքննվել, եթե ֆիզիկական կամ հոգեկան պակասությունը զրկում է նրան քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունից:

(…) [Ք]րեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու տուժողի ունակությունը կասկածի տակ դնելու հիմքերի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է նշանակի փորձաքննություն: Իսկ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները կարող է հաստատվել միայն դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ:

Ընդ որում փորձագետի եզրակացությունը ապացույցների տեսակներից մեկն է և որպես այդպիսին չունի նախապես հաստատված ապացույցի ուժ, իսկ դրա գնահատման նկատմամբ կիրառելի են ապացույցների գնահատման ընդհանուր կանոնները (...)՝ հաշվի առնելով ապացույցի այդ տեսակի առանձնահատկությունները:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձը արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալի և տուժողի մրցակցող իրավունքները (համապատասխանաբար՝ արդար դատաքննության և իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության), ինչպես նաև տուժողի վերոնշյալ ունակությունների հանգամանքը հաստատելու համար փորձագետի եզրակացության անփոխարինելիությունը՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները փորձագետի եզրակացության արժանահավատությունն ապահովելու համար»[1]:

19. «Հանցագործության զոհերի պաշտպանության, աջակցության և իրավունքների նվազագույն չափանիշների հաստատման մասին և ԵՄ թիվ 2001/220/JHA շրջանակային որոշման փոխարինման մասին» Եվրախորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի՝ 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 2012/29/EU հրահանգի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են. «*1. Պայմանավորվող պետություններն ապահովում են, որ հանցագործության զոհերը քրեական դատավարության ընթացքում* ***լսված լինելու և վկայություն ներկայացնելու*** *հնարավորություն ունենան (...):*

2. Հանցագործության զոհերի՝ քրեական դատավարության ընթացքում լսված լինելու և վկայություն ներկայացնելու դատավարական կանոնները սահմանվում են ներպետական օրենսդրությամբ»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի սեպտեմբերի 22-ի «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» թիվ REC(2004)10 հանձնարարականի 7-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «*Անդամ պետությունները պետք է երաշխավորեն այնպիսի կառուցակարգերի*

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Խաչատրյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշումը, կետեր 15-18:

գոյությունը, որոնք կպաշտպանեն հոգեկան խանգարումներ ունեցող խոցելի անձանց, մասնավորապես այն անձանց, ովքեր համաձայնություն տալու կարողություն չունեն կամ չեն կարող դիմակայել մարդու իրավունքների խախտմանը»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 1999 թվականի փետրվարի 23-ի՝ «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանության մասին» թիվ R(99)4 հանձնարարականը, երաշխավորելով հոգեկան խանգարման կամ այլ պատճառով սեփական կամքն արտահայտելու կարողություն չունեցող անձանց իրավունքները, 1-ին սկզբունքում ամրագրում է, որ *անգործունակ չափահասների պաշտպանության սկզբունքն ընկած է բոլոր այլ սկզբունքների հիմքում՝ յուրաքանչյուր անհատի՝ որպես մարդկային էակի, արժանապատվության հարգման համար: Անգործունակ չափահասների պաշտպանության հետ կապված օրենքները, ընթացակարգերը և պրակտիկան պետք է հիմնված լինեն նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վրա, հաշվի առնելով համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերում այդ իրավունքների վերաբերյալ սահմանված երաշխիքները*:

Իսկ համաձայն նույն հանձնարարականի 13-րդ սկզբունքի՝ «*Շահագրգիռ անձը պետք է անձամբ **լսված լինելու իրավունք** ունենա ցանկացած վարույթի շրջանակներում, որը կարող է ազդեցություն ունենալ նրա գործունակության վրա*»:

Միավորված ազգերի կազմակերպության՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ի՝ «Հոգեկան հիվանդների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման» թիվ 46/119 բանաձևի 1-ին սկզբունքի 5-րդ մասը, ի թիվս այլնի, ամրագրում է, որ *հոգեկան հիվանդություն ունեցող յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա իրականացնելու բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ճանաչված են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում*:

19.1. Խոցելի, մասնավորապես՝ հոգեկան հիվանդություն ունեցող անձանց մասնակցությամբ գործերի քննության առնչությամբ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ իրավական դիրքորոշումները.

հոգեկան հիվանդություն ունեցող անձն ***անձամբ կամ ներկայացուցչի միջոցով լսված լինելու իրավունք ունի***[1]: Այդպիսի անձը դատավարությունում ունի երկբնույթ դեր, մասնավորապես՝ նա և՛ շահագրգիռ անձ է, և՛ դատաքննության օբյեկտ: Հետևաբար նրա մասնակցությունն անհրաժեշտ

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Winterwerp v. the Netherlands* գործով 1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 6301/73, կետ 60:

է ոչ միայն գործն անձամբ ներկայացնելու, այլև դատավորին հնարավորություն տալու համար իր անձնական կարծիքը ձևավորել գործի և այդ անձի հոգեկան վիճակի վերաբերյալ: Դատավորի համար կարևոր է առնվազն հոգեկան հիվանդություն ունեցող անձի հետ կարճ հանդիպում ունենալը և նախընտրելի է նրան հարցեր ուղղելը: Դատավորի կողմից գործի լուծումը միայն փաստաթղթավորված ապացույցների հիման վրա, առանց տեսնելու կամ լսելու անձին, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մրցակցության սկզբունքի խախտում է[1],

ոչ թե բժիշկ-մասնագետը, այլ դատավորն է, ով պետք է գնահատի հոգեկան հիվանդություն ունեցող անձին առնչվող փաստերը և անձնական բնույթի այլ հանգամանքները: Վարույթն իրականացնող դատարանի լիազորությունն է որոշելու, թե արդյոք առկա է նման ծայրահեղ միջոց կիրառելու անհրաժեշտություն, կամ արդյոք նվազ խիստ միջոցը կարող է բավարար լինել: Երբ խնդիրը վերաբերում է անձի մասնավոր կյանքին վերաբերող նման կարևոր հարցի, դատավորը պետք է զգուշորեն հավասարակշռի բոլոր վերաբերելի գործոնները՝ գնահատելու համար կիրառման ենթակա միջոցի համաչափությունը: Դատավարական անհրաժեշտ երաշխիքները պահանջում են նվազագույնի հասցնել կամայականության դրսևորման ցանկացած վտանգ: Հետևաբար ***դատարանը պետք է պարզի, թե արդյոք մասնագիտական գնահատական տված բժշկի եզրահանգումները կամայական չեն, և բժշկի հետ միասին լսի նաև վկաներին: Եվ, որ ամենակարևորն է, դատարանն ինքը պետք է եզրահանգումներ անի անձին գործունակությունից զրկելու հարցի շուրջ***[2]:

20. Նախորդ կետում մատնանշված միջազգային փաստաթղթերում իրենց ամրագրումը ստացած դրույթների, ինչպես նաև Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների հիման վրա զարգացնելով *Արայիկ Խաչատրյանի* գործով ձևավորած և սույն որոշման 18.1.-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի կիրառմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը չի կարող մեկնաբանվել այնպես, որ քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու անկարողության մասին ստացված փորձագիտական եզրակացությունն ինքնին բացառում է անձին որպես տուժող կանչելու և հարցաքննելու հնարավորությունը: Այլ կերպ՝ փորձագիտական այդպիսի եզրակացությունն ինքնին չի կարող բավարար համարվել հոգեկան պակասություններ ունեցող համապատասխան անձի լսվելու իրավունքը սահմանափակելու համար: Այդ առումով Վճռաբեկ

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Shtukaturov v. Russia* գործով 2008 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետեր 72-73:

[2] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Ivinović v. Croatia* գործով 2014 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 13006/13, կետ 40, *X and Y v. Croatia* գործով 2011 թվականի նոյեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 5193/09, կետեր 85-86:

դատարանը փաստում է, որ հոգեկան հիվանդություն ունեցող տուժողի լսվելու իրավունքի սահմանափակումը հնարավոր է այնպիսի բացառիկ դեպքերում, երբ պայմանավորված անձի հոգեկան հիվանդության բնույթով և աստիճանով՝ վերջինիս կանչելու և հարցաքննելու հնարավորությունը գործնականում ակնհայտ անիրագործելի է, ինչի համար որպես հիմք կարող են ծառայել ոչ թե միայն փորձագիտական եզրակացությունը, այլ դրա հետ մեկտեղ՝ անձի անհատական հատկանիշների, ունեցած հոգեվիճակի, նրա կողմից դրսևորվող վարքագծի վերաբերյալ փաստերը, տեղեկությունները կամ ապացույցները: Այսինքն՝ համապատասխան անձի լսվելու իրավունքի սահմանափակման համար անհրաժեշտ է, որ վերոգրյալ տվյալների համակցությունը համոզիչ կերպով վկայի նրան կանչելու և հարցաքննելու անհնարինության ակնհայտ լինելը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքներն ընկալելու և վերարտադրելու տուժողի անկարողության մասին ստացված փորձագիտական եզրակացությունը չի կարող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 210-րդ հոդվածի հիմքով ի սկզբանե կանխորոշել նրա կողմից տրված ցուցմունքի անթույլատրելի լինելը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ փորձագիտական այդպիսի եզրակացությունը կարող է հաշվի առնվել տուժողի ցուցմունքները բովանդակային գնահատման ենթարկելիս՝ դրանց *վերաբերելիությունն ու արժանահավատությունը* որոշելիս[1]:

21. Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ տուժող Ա.Հակոբյանը 2015 թվականի նոյեմբերի 19-ին ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականի հուլիս ամսին ՀՀ ՊՆ 50869 զորամասի 1-ին գումարտակի շտաբի պետ մայոր Ջիվանն իրեն ասել է, որ ծառերը ջրի, և չջրելու համար քաշել է իր ականջն ու ձեռքի բաց ափով հարվածել պարանոցին: Նա միշտ իրեն տեսնելիս նման ձևով հարվածել է իր պարանոցին: Բացի այդ, 2015 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 18-ի սահմաններում, Ջիվանն իրեն ու իր ընկերոջը՝ Ցոլակին, տեսել է զորամասի հսկիչ անցագրային կետից դուրս՝ խանութի մոտ: Նշել է, որ Ջիվանը հարբած է եղել և զորամասից դուրս գտնվելու համար իրեն և Ցոլակին հայհոյելով՝ ասել է, որ գնան այդտեղից, որից հետո ձախ ձեռքով ապտակել է իր դեմքի աջ հատվածին: Նշել է նաև, որ Ջիվանի այդ կոպիտ խոսքից ազդվել է, ցանկացել է ինքն իրեն վնասել կամ Ջիվանին հարվածել, բայց առանց որևէ բան անելու հեռացել է[2]:

2015 թվականի նոյեմբերի 26-ին Ա.Հակոբյանի նկատմամբ նշանակվել է ռազմաբժշկական և ամբուլատոր դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի՝ 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 3 եզրակացության

[1] Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Գասպարյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԳԴ1/0058/01/16 որոշման 18-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7.1.-րդ կետը:

դատահոգեբուժական մասի համաձայն՝ Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերվել է «Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում շիզոֆրենային ախտանիշներով, ելքի շրջան /F23.1/» հոգեկան գործունեության փսիխոտիկ մակարդակի խանգարում: Համաձայն նույն եզրակացության՝ Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերված պրոդուկտիվ հոգեախտաբանական ախտանիշների առկայությունը, առավելապես ընկալման, մտածողության խեղաթյուրումներն արտահայտված են այն աստիճան, որ **զրկում են նրան կարողությունից՝ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները**[1]:

2016 թվականի հունիսի 11-ին վարույթն իրականացնող քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը հանցագործության դեպքի բացակայության հիմքով կարճելու մասին: Քննիչի որոշմամբ, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ նախաքննության ընթացքում թեև Ա.Հակոբյանն իր ցուցմունքներով պնդել է Ձ.Մկրտչյանի կողմից իր նկատմամբ բռնություն գործադրելու և իրեն վիրավորանք հասցնելու հանգամանքը, սակայն քրեական գործով բազմաթիվ վկաների ցուցմունքներով, այլ քննչական և դատավարական գործողություններով ու ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ Ա.Հակոբյանի նկատմամբ բռնություն գործադրելու, նրան վիրավորանք հասցնելու դեպքեր չեն եղել, այդպիսիք չեն կատարվել նաև Ձ.Մկրտչյանի կողմից[2]:

ՀՀ զինվորական դատախազն իր՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ մերժել է Ա.Ղարագյոզյանի բողոքը՝ արձանագրելով, որ նախաքննության ընթացքում տուժող Ա.Հակոբյանի և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես հարցաքննություն չկատարելով՝ վարույթն իրականացնող մարմինը թույլ չի տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի էական խախտում, քանի որ վարույթն իրականացնող մարմինը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով և գնահատելով ձեռք բերված ապացույցները, եկել է ճիշտ եզրահանգման, որ Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերված պրոդուկտիվ հոգեախտաբանական ախտանիշների առկայությունը, **զրկում է նրան կարողությունից՝ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները, ուստի** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի և 210-րդ հոդվածի համադրության արդյունքում պարզ է դառնում, որ վարույթն իրականացնող մարմինն ոչ թե չի կատարել սահմանված պոզիտիվ պարտավորությունները, այլ **պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները չի իրականացրել Ա.Հակոբյանի և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես**

[1] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

հարցաքննություն[1]:

Առաջին ատյանի դատարանը, մերժելով դիմողի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանի բողոքը, փաստել է, որ քննիչի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին և դատախազի՝ Ա.Ղարագյոզյանի բողոքը մերժելու մասին որոշումներն օրինական են, ուստի դրանք վերացնելու հիմքեր չկան[2]:

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է, ուստի այն բեկանելու հիմքեր չկան[3]:

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 17-20-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով տուժող Ա.Հակոբյանի և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես հարցաքննության չիրականացումը պատճառաբանվել է նրանով, որ համաձայն 2016 թվականի փետրվարի 2-ի փորձաքննության եզրակացության՝ Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերված պրոդուկտիվ հոգեախտաբանական ախտանիշների առկայությունը, առավելապես ընկալման, մտածողության խեղաթյուրումներն արտահայտված են այն աստիճան, որ զրկում են նրան կարողությունից ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի կիրառմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը չի կարող մեկնաբանվել այնպես, որ քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու անկարողության մասին ստացված փորձագիտական եզրակացությունն ինքնին բացառում է անձին որպես տուժող կանչելու և հարցաքննելու, այդ թվում՝ տուժողի և այլ անձանց միջև առերես հարցաքննություն իրականացնելու հնարավորությունը: Ինչպես արդեն իսկ նշվել է, փորձագիտական այդպիսի եզրակացությունն ինքնին չի կարող բավարար համարվել հոգեկան պակասություններ ունեցող համապատասխան անձի լսվելու իրավունքը սահմանափակելու համար[4]:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա չեն տվյալներ, որոնք պայմանավորված Ա.Հակոբյանի հոգեկան հիվանդության բնույթով և աստիճանով՝ կվկայեն, որ վերջինիս և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես հարցաքննության իրականացման հնարավորությունը գործնականում ակնհայտ անիրագործելի էր: Մասնավորապես՝ սույն գործի նյութերից հետևում է, որ քրեական հետապնդման մարմինները

[1] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 20-րդ կետը:

համապատասխան դատողություն անելիս հիմնվել են բացառապես փորձագիտական եզրակացության վրա, և բացակայում են այլ տվյալներ, որոնց համակցությունը համոզիչ կերպով կվկայեր Ա.Հակոբյանի և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես հարցաքննություն կատարելու անհնարինության ակնհայտ լինելը:

22.1. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զինվորական ծառայության ընթացքում Ա.Հակոբյանի նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու կապակցությամբ չի իրականացվել գործի լրիվ և բազմակողմանի քննություն: Այլ կերպ՝ արդյունավետ քննություն չկատարելով՝ քրեական հետապնդման մարմինները թույլ են տվել խախտումներ, որոնք էլ պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացել ստորադաս դատարանների կողմից:

23. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով քրեական հետապնդման մարմինների որոշումների դեմ բերված բողոքը մերժելով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 86-րդ և 210-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերոշարադրյալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և վարույթն իրականացնող մարմնին՝ Ա.Հակոբյանի իրավունքների ու ազատությունների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու պարտականություն սահմանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Արթուր Հակոբյանի ներկայացուցիչ Ա.Ղարագյոզյանի բողոքը մերժելու մասին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշումը բեկանել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու սույն որոշմամբ արձանագրված՝ Արթուր Արմենի Հակոբյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ3/0030/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնում 2017 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է թիվ 20199517 քրեական գործը, որը նույն օրն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ Վարդան Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նույն օրվա Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի

հունվարի 6-ի որոշմամբ մերժվել է Վ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը:

3. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Տ.Ղուկասյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Վերաքննիչ դատարանն իր՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշման շրջանակներում արձանագրել է. *«Ներկայացված նյութերից պարզ է դառնում, որ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 6-ի դատական ակտը քննչական մարմնին հանձնվել է որոշման կայացման օրը՝ 2018 թվականի հունվարի 6-ին, որն էլ հունվարի 8-ին նոր միայն ուղարկվել է ՀՀ Կոտայքի մարզի դատախազություն, իսկ վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան է ստացվել հունվարի 17-ին (փոստային ծառայությանն է հանձնվել հունվարի 15-ին): Այսինքն՝ բողոքարկման ենթակա դատական ակտը վարույթն իրականացնող մարմինը ստացել է 2018 թվականի հունվարի 6-ին: Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բողոքարկման ժամկետը պետք է հոսեր փվյալ որոշումը քննիչի կողմից փաստացի ստանալու պահից, անկախ այն հանգամանքից, թե քննիչը նշված որոշումը դատախազին ուղարկել է, թե ոչ:*

Հետևաբար, դատախազի այն պատճառաբանությունը, որ իր կողմից որոշումը ստացվել է 2018 թվականի հունվարի 8-ին, չի կարող վկայել բողոքարկման ժամկետի պահպանված լինելու մասին, քանի որ դա միայն երկու մարմինների միջև ձևավորված ընթացակարգային խնդիր է, ինչը չի կարող դիտարկվել որպես օբյեկտիվ պատճառաբանություն: Այսինքն՝ մեղադրյալի խնդիրը չէ, թե որոշումն ինչու է դատախազություն ուշ ուղարկվել: Հակառակ մոտեցման պարագայում դատական ակտն առանց հարգելի պատճառի դատախազին ուշ ուղարկելու հանգամանքը մեղադրյալի համար կարող է առաջացնել անբարենպաստ հետևանքներ: Հարկ է նկատել, որ դատախազը գործի նկատմամբ հսկողություն իրականացնող սուբյեկտ է և

հսկողության շրջանակներում ունի իրական լծակներ որոշումը ժամանակին ապահովելու և բողոքարկելու համար:

Տվյալ դեպքում ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 6-ի որոշման բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել առնվազն վարույթն իրականացնող մարմնի կողմից ապահովելու պահից (2018 թվականի հունվարի 6-ից) 5 օրվա ընթացքում և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ որոշման օրինակը վարույթն իրականացնող մարմինը ստացել է 2018 թվականի հունվարի 6-ին, ապա ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 6-ի որոշման բողոքարկման ժամկետը վերջանում է 2018 թվականի հունվարի 11-ին՝ ժամը 24:00-ին, մինչդեռ բողոքը բերվել է դատական ակտը ստանալու պահից 9-րդ օրը՝ 2018 թվականի հունվարի 15-ին:

(…)

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով, որ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց է, ուստի թիվ ԿԴ3/0030/06/17 գործով ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Տ.Ղուկասյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հունվարի 31-ի որոշմամբ թույլ է տվել դատական սխալ, այն է՝ քրեադատավարական օրենքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ, 283-րդ և 379-րդ հոդվածներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Հովհաննես Գրիգորյանի* գործով թիվ ԵԿԴ/0341/06/12 որոշմանը՝ բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավասություն ունեցող կամ Վճռաբեկ դատարանի որոշման իմաստով «շահագրգիռ անձի»՝ դատախազի կողմից վերաքննիչ բողոք բերելու ժամկետը սկսել է հոսել ոչ թե քննիչի, այլ դատախազի կողմից դատական ակտը ստանալու պահից՝ 2018 թվականի հունվարի 8-ից:

Բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանի վիճարկվող որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածին և

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 19-21:

համակարգային առումով փոխկապակցված նորմերին տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված նորմի՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՈ-1373 որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը: ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո բողոք բերած անձը նշել է, որ երբ դատախազը ժամանակին ու պատշաճ ձևով իրազեկված չի լինում դատարանի կողմից ընդունվող որոշման մասին, ապա հնարավոր չի դառնում արդյունավետ իրացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 3-րդ մասով վերապահված՝ դատախազի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության քննությանը մասնակցելու, միջնորդությունն անձամբ պաշտպանելու, միջնորդությունը հետ վերցնելու, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ դատական ակտի դեմ բողոք բերելու իրավասությունը: Այդ պարագայում վտանգվում է և՛ անձի շահերի պաշտպանության իրավունքը, և՛ դատախազական հսկողության արդյունավետ իրականացման սահմանադրաիրավական պահանջը:

7. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Կոտայքի մարզի դատախազության դատախազ Տ.Ղուկասյանի՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. *«(…) Որոշումը կայացնելու օրը դատարանը այն պատրաստությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և տուժողին, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձևով ուղարկում է նրանց (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. *«Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական*

ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով»:

Վերոնշյալ իրավանորմերի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՈ-1373 որոշման շրջանակներում փաստել է. *«բ/ (…) Օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնց հանձնվում կամ ուղարկվում է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը: Դրանք են՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձը, այսինքն՝ դատախազը կամ քննիչը, ինչպես նաև մեղադրյալը, պաշտպանը և տուժողը,*

գ/ օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են վերաքննիչ բողոք բերել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ: ***Դրանք են՝ դատախազը, մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը:*** *(…)*

(…)

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծությունից հետևում է, որ մի կողմից՝

- նշված իրավանորմերի տառացի մեկնաբանության պարագայում առկա չէ որևէ դրույթ, ըստ որի՝

(…)

բ/ դատավորը պարտավոր է քննիչի միջնորդությամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշումը քննիչից բացի տրամադրել նաև դատախազին,

մյուս կողմից՝

(…)

- օրենսդիրը համապատասխան դատական ակտի հասցեատեր դիտարկելով նաև քննիչին և տուժողին, միևնույն ժամանակ, նրանց չի ճանաչում որպես այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտ: Օրենսդիրը, ի թիվս մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի, այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք վերապահում է դատախազին (…),

- (…) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին քննիչի միջնորդության վերաբերյալ

դատարանի որոշումն օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա կարող է բողոքարկել ոչ թե քննիչը, այլ դատախազը,

- օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակիրառ պրակտիկայից բխում է, որ վիճարկվող նորմով նախատեսված համապատասխան դատական ակտի հասցեատերերի շրջանակում դատախազը ներառված է միայն այն պարագայում, երբ անձամբ է հանդես եկել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությամբ: Իսկ այն դեպքում, երբ համապատասխան միջնորդությամբ հանդես է եկել քննիչը, ապա մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը հանձնվում կամ ուղարկվում է, ի թիվս այլոց, քննիչին, այլ ոչ թե նաև դատախազին:

Նման պայմաններում, երբ դատախազը ժամանակին ու պատշաճ ձևով իրազեկված չի լինում (...) դատարանի կողմից ընդունված որոշման մասին, ապա՝

ա/ հնարավոր չի դառնում արդյունավետ իրացնել օրենսգրքի (...) 287-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով դատախազին վերապահված իրավասությունը,

բ/ վտանգվում է և՛ անձի շահերի պաշտպանության իրավունքը, և՛ դատախազական հսկողության արդյունավետ իրականացման սահմանադրաիրավական պահանջը[1]*»*:

Արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգել է. *«(...) [Ե]թե դատախազն իրավասու է օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ քննիչի միջնորդությունն օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով հետ վերցնել կամ անհրաժեշտ է համարում այն անձամբ պաշտպանել, ինչպես նաև ոչ թե քննիչը, այլ դատախազն է իրավասու բողոքարկել տվյալ հարցով դատարանի որոշումը, ապա՝*

ա/ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշման մասին պետք է պատշաճ ձևով իրազեկվի նաև դատախազը,

բ/ իրավակիրառ պրակտիկայում ընթացակարգային նորմերին տարբեր հիմնավորումներով ու պատճառներով չպետք է ցուցաբերվի ձևական մոտեցում, ինչը կարող է հանգեցնել ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի պահանջի անտեսմանը՝ չերաշխավորելով հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթների էության անխախտելիությունը:

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՈ-1373 որոշման 6-րդ կետը:

(…)[1]»:

9.1. Ելնելով խնդրո առարկա իրավանորմերի առնչությամբ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված վերոնշյալ իրավական դիրքորոշումների վերլուծությունից՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կալանքի վերաբերյալ դատական ակտն առաջին ատյանի դատարանը պետք է հանձնի (ուղարկի) ոչ միայն համապատասխան միջնորդությունը հարուցած քննիչին, այլ նաև դատախազին: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով դատախազին վերապահված իրավասության արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է, որ կալանքի վերաբերյալ կայացված դատական ակտի մասին դատարանը պատշաճ ձևով իրազեկի նաև դատախազին:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատություններում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում (…)»:*

Վերոնշյալ իրավադրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը ստուգելիս Սահմանադրական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-1052 որոշմամբ արձանագրել է. *«(…) [Վ]երաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պարզաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը (…): Մինչդեռ օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը՝ օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով:*

(…)

Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մասնչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը,

[1] Տե՛ս նույն տեղը, 7-րդ կետ:

կոնկրետ դեպքում՝ հնգօրյա (…) ժամկետ[ը], ապա նշված ժամկետ[ը] պետք է մեկնարկ[ի] բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից:

(…):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով /ex jure/ պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը»[1]:

10.1. Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը *Տ.Հովհաննիսյանի* գործով ընդգծել է. *«(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ուրանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը (…)»*[2]:

11. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով սույն որոշման 9.1.-րդ կետում արված եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բողոքարկման իրավունք ունեցող յուրաքանչյուր դատավարության մասնակից պետք է բավարար ժամանակ ունենա բողոքն օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ նախապատրաստելու և համապատասխան դատարան ներկայացնելու համար: Մասնավորապես, պաշտպանության կողմը, ելնելով իր խախտված իրավունքները վերականգնելու մասնավոր շահից, իսկ մեղադրանքի կողմը՝ գործի պատշաճ քննությունն ապահովելու հանրային շահից, հիմնավոր բողոք բերելու համար պետք է իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Այսինքն՝ դատավարության մասնակիցները հիմնավոր բողոք բերելու համար պետք է հնարավորություն ունենան ծանոթանալու դատարանի որոշման հիմքում դրված պատճառաբանություններին: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետն ինչպես մեղադրյալի և նրա պաշտպանի, այնպես էլ դատախազի համար պետք է հաշվարկվի՝ որպես ելակետ ընդունելով դատարանի որոշումը բողոք բերելու իրավունք ունեցող

[1] Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-1052 որոշումը, 8-9-րդ կետեր: Նշված իրավական դիրքորոշումները վերահաստատվել են նաև Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1062 որոշման 5-6-րդ կետերում, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-1249 որոշման 7-րդ կետում, 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-1394 որոշման 8-10-րդ կետերում:

[2] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Հովհաննիսյանի* գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշման 23-րդ կետը:

համապատասխան դատավարության մասնակցին հանձնելու պահը: Իսկ այն դեպքում, երբ որոշումը բողոքարկման իրավունք ունեցող դատախազին հանձնվել է ոչ թե դատարանի, այլ քննիչի կողմից, ապա դատախազի կողմից դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի ոչ թե քննիչի կողմից որոշումը ստանալու պահից, այլ այն պահից, երբ այդ փաստաթուղթը հասու է դարձել դատախազին[1]:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հունվարի 31-ի որոշմամբ արձանագրել է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը Վ.Գրիգորյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը **քննիչին** է հանձնել այն կայացնելու օրը՝ 2018 թվականի հունվարի 6-ին,

- Կոտայքի մարզի դատախազությունում նշված դատական ակտը ստացվել է 2018 թվականի հունվարի 8-ին,

- նշված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 2018 թվականի հունվարի 15-ին:

Վերոնշյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել **առնվազն վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշումը ստանալու պահից**՝ 2018 թվականի հունվարի 6-ից՝ 5 օրվա ընթացքում, որը վերջանում է 2018 թվականի հունվարի 11-ին՝ ժամը 24:00-ին, մինչդեռ բողոքը բերվել է դատական ակտը ստանալու պահից 9-րդ օրը՝ 2018 թվականի հունվարի 15-ին: Նման պայմաններում գտնելով, որ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց է՝ Վերաքննիչ դատարանն առանց քննության է թողել Կոտայքի մարզի դատախազության դատախազ Տ.Ղուկասյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը[2]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատողությունն առ այն, որ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել առնվազն վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշումը ստանալու պահից, հիմնավոր չէ: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Առաջին ատյանի դատարանը նախաքննական մարմնի միջնորդության քննության վերաբերյալ դատարանի որոշումը դատախազին չի ուղարկել, իսկ այդ պայմաններում վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը

[1] Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Նավասարդ Ալավերդյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԿԴ1/0143/01/14 որոշման 14-րդ կետը:

[2] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

պետք է հաշվարկվեր ոչ թե քննիչի կողմից այդ որոշումը ստանալու պահից, այլ այն պահից, երբ համապատասխան փաստաթուղթը հասու էր դարձել դատախազ Տ.Ղուկասյանին, այսինքն՝ 2018 թվականի հունվարի 8-ից:

13.1. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոտայքի մարզի դատախազության դատախազ Տ.Ղուկասյանի՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

14. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար: Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 6-ի որոշման դեմ դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Վարդան Կորյունի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՄԴ/0007/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հայկ Ժորայի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 8-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում 2016 թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16140516 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Հայկ Ժորայի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Մուրադ

Ալբերտի Տեր-Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի հունվարի 12-ին քրեական գործը՝ ըստ մեղադրանքի Հ.Վարդանյանի և Մ.Տեր-Ավետիսյանի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի հուլիսի 19-ի դատավճռով ամբաստանյալ Հայկ Ժորայի Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ գույքի՝ 254.010 ՀՀ դրամի, 176 ԱՄՆ դոլարի, 500 ՌԴ ռուբլու, 50 եվրոյի բռնագրավմամբ:

Հ.Վարդանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն դատավճռով ամբաստանյալ Մուրադ Տեր-Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածով Մ.Տեր-Ավետիսյանի նկատմամբ նշանակվել է նաև հարկադիր բուժում թմրամոլության դեմ, իսկ վերջինիս նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Ամբաստանյալ Հ.Վարդանյանի պաշտպան Ա.Քարամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Հ.Վարդանյանի մասով բեկանել ու փոփոխել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի դատավճիռը, վերջինիս մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ դատապարտելով ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ամբաստանյալ Հ.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) [Ի]րացնելու նպատակով, գործով դեռևս չպարզված հանգամանքներում, ապօրինի ձեռք է բերել և իր բաճկոնի տարբեր գրպաններում ապօրինի պահել խոշոր չափի՝ 0,1838 գրամ ընդհանուր քաշով Բուպրենորֆին տեսակի թմրամիջոց պարունակող 15 հատ ամբողջական և 17 հատ մասնատված հաբեր, 4 առանձին փաթեթներում փաթեթավորված, զգալի չափի՝ ընդհանուր 2,75 գրամ հասպարտուն քաշով Մարիխուանա տեսակի թմրամիջոց, զգալի չափի՝ ընդհանուր 0,35 գրամ քաշով Տրամադոլ տեսակի հոգեմետ միջոց պարունակող 7 հատ դեղահաբեր, որոնցից 0,016 գրամ քաշով բուպրենորֆին տեսակի թմրամիջոց պարունակող 2 ամբողջական հաբերը 2016թ. սեպտեմբերի 27-ին Երևան քաղաքի Աերացիա թաղամասի թիվ 1/10 հասցեի շենքի մուտքայքում 80.000 ՀՀ դրամով վաճառելու նպատակով ապօրինի իրացրել է Մուրադ Ալբերտի Տեր-Ավետիսյանին:*

Նույն օրը «Կանեփ-Կակաչ» համալիր օպերատիվ կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները ստացված օպերատիվ տվյալները իրացնելիս, ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների հետ, ժամը 20:45-ին թմրամիջոց ապօրինի պահելու, օգտագործելու և իրացնելու կասկածանքով Հայկ Ժորաի Վարդանյանին Երևան քաղաքի Սվաճյան փողոցի 42 շենքի մուտքայքից բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին, որտեղ վերջինիս անձնական խուզարկությամբ նրա հագուստների տարբեր գրպաններից հայտնաբերվել է խոշոր չափի՝ 0,1678 գրամ ընդհանուր քաշով Բուպրենորֆին տեսակի թմրամիջոց պարունակող 13 ամբողջական և 17 մասնատված հաբերը, 4 առանձին փաթեթներում փաթեթավորված, զգալի չափի՝ ընդհանուր 2,75 գրամ հասպարտուն քաշով Մարիխուանա տեսակի թմրամիջոցը, զգալի չափի՝ ընդհանուր 0,35 գրամ քաշով Տրամադոլ տեսակի հոգեմետ միջոց պարունակող 7 հատ դեղահաբերը (...)»[1]:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի դատավճռի համաձայն՝ *«(...) Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հայկ Ժորաի Վարդանյանի կողմից տրված (...) ցուցմունքները և ամբաստանյալ Մուրադ Ալբերտի Տեր-Ավետիսյանի կողմից թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրի մասով տրված ցուցմունքներն արժանահավատ չեն, այդպիսի ցուցմունքներ տալով Հայկ Ժորաի Վարդանյանը նպատակ է հետապնդում խուսափել պատասխանատվությունից և պատժից, իսկ Մուրադ Ալբերտի Տեր-Ավետիս-*

[1] Տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 28-29:

յանը փորձում է օգնել նրան, այդ ցուցմունքները հերքվեցին և ամբաստանյալներ Հայկ Ժորայի Վարդանյանին ու ամբաստանյալ Մուրադ Ալբերտի Տեր-Ավետիսյանին մեղսագրվող հանցավոր արարքները հիմնավորվեցին քրեական գործով ձեռք բերված հետևյալ ապացույցներով.

(...)

- Մուրադ Տեր-Ավետիսյանի մասնակցությամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսագրության զննություն կատարելու մասին 29.09.2016թ. կազմված արձանագրությամբ, որի համաձայն, միջոցառման ընթացքում Մուրադ Տեր-Ավետիսյանը հայտնում է, որ իր անձնական խուզարկությամբ հայտնաբերված թմրամիջոցը նույն օրը գնել է «Իմացար» մականունով հայտնի Հայկ Վարդանյանից՝ դրա դիմաց վճարելով 80000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր դեղահաբի համար 40000 ՀՀ դրամ /հատոր 1, գ.թ. 96-99/:

- Մուրադ Տեր-Ավետիսյանի մասնակցությամբ կատարված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսագրությունը պարունակող սկավառակով, այն իրեղեն ապացույց ճանաչելու և քրեական գործի նյութերին կցելու մասին 27.12.2016թ. որոշմամբ /հատոր 1, գ.թ. 95, հատոր 2, գ.թ. 121-122/:

(...)

Այսպիսով, դատարանը հետազոտելով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները, վերլուծելով և գնահատելով դրանք իրենց համակցությամբ, ապացուցված է համարում [Հայկ Ժորայի Վարդանյանին առաջադրված մեղադրանքը]»[1]:

7. Վերաքննիչ դատարանը, ՀՀ վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով քննելով գործը, կայացրել է որոշում, համաձայն որի՝ *«(...) Վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում անդրադառնալով բողոքարկվող դատական ակտի հիմքում դրված ապացույցների՝ մասնավորապես իրեղեն ապացույց ճանաչված՝ «ներքին դիտում» ՕՀՄ-ի տեսագրության սկավառակը և այդ տեսագրությունը զննելու մասին 29.09.2016թ. կազմված արձանագրությունը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցին, Վերաքննիչ դատարանը արձանագրում է հետևյալը.*

Ըստ գործի նյութերի՝ 27.09.2016թ. ժամը 15.05-ին Մուրադ Տեր-Ավետիսյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին ապօրինի թմրանյութ պահելու և օգտագործելու կասկածանքով:

Նույն օրը՝ 27.09.16թ. ժամը 20.45-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին բերման է ենթարկվել Հայկ Վարդանյանը՝ ապօրինի թմրանյութ պահելու, օգտագործելու և իրացնելու կասկածանքով:

Մուրադ Տեր-Ավետիսյանի և Հայկ Վարդանյանի վերաբերյալ նախա-

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 160-165:

պատրաստվել են նյութեր: Նախապատրաստված նյութերը նույն օրը ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնից ուղարկվել են Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին՝ հետագա ընթացքը լուծելու համար:

Վերը նշված նյութերի հիման վրա 27.09.2016թ. ՀՀ ՔԿ Երևան քաղաքի ՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ՔԲ ավագ քննիչ Գ.Սաղոյանը որոշում է կայացրել դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 268 հոդվածի 1-ին մասով թիվ 16140516 քրեական գործը հարուցելու մասին:

Ըստ գործի նյութերի՝ 27.09.2016թ. ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով թույլատրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի ՔՀԲ-ի թիվ 307 աշխատասենյակում /Ա.Սարգսյան 22/ Մուրադ Ալբերտի Տեր-Հովհաննիսյանի նկատմամբ 3–օրյա ժամկետում իրականացնել «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, հայտնելով, որ 27.09.2016թ. ժամը 15.05-ին Մուրադ Տեր-Ավետիսյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին՝ ապօրինի թմրանյութ պահելու և օգտագործելու կասկածանքով, վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 2 հատ «B-8» գրառումամբ սուբուտեքս կոչվող թմրամիջոցի նմանվող դեղահաբ: Այնուհետև նշել է, որ փաստի առթիվ 27.09.2016թ. ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 268 հոդոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16140516 քրեական գործը:

Նաև նշել է, թե օպերատիվ տվյալներ են ստացվել, որ Մ.Տեր-Ավետիսյանը հնարավոր է իրացման նպատակով ապօրինի ձեռք բերած լինի խոշոր չափերի թմրամիջոց:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նույն օրը՝ 27.09.2016թ. քննության առնելով վերը նշված միջնորդությունը, բավարարել է այն:

Չնայած, թե ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանի կողմից ներկայացված միջնորդության, թե Առաջին ատյանի դատարանի վերը նշված որոշման մեջ ժամ արձանագրված չէ, սակայն ելնելով քրեական գործի նյութերից, մասնավորապես այն հանգամանքից, որ Հայկ Վարդանյանը 27.09.2016թ. ժամը 20.45-ին է բերման ենթարկվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին՝ ապօրինի թմրանյութ պահելու, օգտագործելու և իրացնելու կասկածանքով, պետք է եզրահանգել, որ քննիչ Գ.Սաղոյանը Հայկ Վարդանյանի և Մուրադ Տեր-Ավետիսյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով հարուցել է թիվ 16140516 քրեական գործը առնվազն 27.09.2016թ. ժամը 20.45-ից հետո:

Դրանից հետո է միայն ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը դիմել դատարան՝ Մուրադ Տեր-Ավետիսյանի նկատմամբ «ներքին դիտում» կատարելու թույլտվություն ստանալու մասին՝ փաստելով թիվ 16140516 քրեական գործը հարուցված լինելու մասին:

*Վերաքննիչ դատարանը հետազոտելով քրեական գործի նյութերն ըստ մեղադրանքի Հայկ Վարդանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Մուրադ Տեր-Ավետիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 1-ին մասով, հետազոտելով նաև վերը նշված գործով իրեղեն ապացույց ճանաչված **«ներքին դիտում» տեսագրության լազերային սկավառակը՝ այն համակարգչի մեջ տեղադրելու եղանակով,** փաստում է, որ տեսագրությունը տեղափոխվել է լազերային սկավառակի վրա 27.09.2016թ. ժամը 17.37-ին, հետևաբար տեսագրությունը կատարվել է դրանից առաջ:*

Վերաքննիչ դատարանը նաև փաստում է, որ քրեական գործի նյութերում չկա արձանագրություն այն մասին, թե ով, երբ, որտեղ, ում նկատմամբ, դատարանի որ որոշման հիման վրա է իրականացրել «ներքին դիտում» ՕՀՄ-ն, որը, սակայն, օրենքի իմպերատիվ պահանջ է:

(...)

*«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (...) իրավանորմերի բովանդակային վերլուծության հիման վրա անդրադառնալով սույն գործով իրեղեն ապացույց ճանաչված՝ «ներքին դիտում» ՕՀՄ-ի տեսագրության սկավառակը և այդ տեսագրությունը զննելու մասին 29.09.2016թ. կազմված արձանագրությունը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցին, Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ մեղադրանքի հիմքում դրված՝ իրեղեն ապացույց ճանաչված լազերային սկավառակը, որը պարունակում է Մուրադ Տեր-Ավետիսյանի մասնակցությամբ կատարված «ներքին դիտում» ՕՀՄ-ի տեսագրությունը, չի կարող օգտագործվել մեղադրանքի նպատակով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105 հոդվածի համաձայն այն անթույլատրելի ապացույց է, քանի որ վերը նշված **ՕՀՄ-ը կատարվել է այդ պահին դատարանի որոշման բացակայության պայմաններում, առանց դատարանի թույլտվության**:*

Հետևաբար անթույլատրելի է նաև վերը նշված տեսաերիզը զննելու մասին արձանագրությունը (...)»[1]:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 61-64:

խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 127-րդ, 382-րդ, 385-րդ հոդվածների պահանջները: Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ Տ.Առաքելյանի, Հ.Հակոբյանի, Հ.Սահակյանի և մի շարք այլ գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ մեղադրանքի հիմքում դրված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները պետք է ճանաչել անթույլատրելի ապացույց, իրավաչափ չէ: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի այդ հետևությունը հիմնված չէ Առաջին ատյանի կամ Վերաքննիչ դատարանում այդ ապացույցի հետազոտության վրա, և Վերաքննիչ դատարանը նման հետևության հանգել է՝ նշված կրիչը համակարգչի մեջ տեղադրելու եղանակով ուսումնասիրելով: Վերաքննիչ դատարանն այդ սկավառակը չի հետազոտել դատաքննության ընթացքում, և դատավարության մասնակիցները հնարավորություն չեն ունեցել մասնակցելու Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված այդ ապացույցի հետազոտմանն ու ներկայացնել իրենց դիրքորոշումը դրա թույլատրելիության վերաբերյալ:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ դատավարության մասնակիցներն ընդհանրապես զրկված են եղել Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված այդ հանգամանքի քննարկմանը մասնակցելու հնարավորությունից: Բացի այդ, անհասկանալի է, թե ի վերջո Վերաքննիչ դատարանի որոշմամբ կարևորված ամսաթվի կամ ժամի մասին նշումները որտեղ են կատարված, ինչպես է դատարանը դրանք ի հայտ բերել, արդյոք այդ հանգամանքն առհասարակ հնարավոր է պարզել առանց հատուկ գիտելիքների տիրապետող մասնագետի, և արդյոք դրանք իսկապես վերաբերում են լազերային սկավառակի վրա առկա տեսագրությանն ընդհանրապես, դրա՝ կրիչի վրա փոխադրմանը մասնավորապես և եթե այո, ապա արդյոք միանշանակ հաստատում են, որ տեսագրությունը հենց այդ ժամին է փոխադրվել կրիչի վրա:

Բողոքաբերը եզրահանգել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը չի պահպանել ապացույցների հետազոտման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջները, չի ապահովել դրանց հետազոտումը արդարության բոլոր պահանջների պահպանմամբ և ապացույցի հետազոտման անհրաժեշտություն տեսնելու պայմաններում վերանայման վճռաբեկության դատավարական ձևից վերաքննության անցնելու փոխարեն՝ անհայտ պայմաններում անհայտ համակարգչով և անհայտ եղանակով լազերային կրիչի ուսումնասիրությամբ անհայտ տեղում արձանագրել է

ամսաթվի և ժամի վերաբերյալ նշումներ:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 8-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցը կրկին հետազոտելու դատավարական կարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության դատավարական կարգը պահպանելը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից պահպանվել է գործը վճռաբեկության կարգով քննելու իրավական ընթացակարգը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 4-րդ մասի

համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները վերաքննիչ դատարանում հետազոտվում են միայն կողմի միջնորդությամբ, և եթե դատարանը դա համարում է անհրաժեշտ»:*

13. Վերլուծելով վերաքննիչ դատարանում գործի քննության դատավարական կանոնները՝ Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հախնազարյանի* գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Վ]երաքննիչ դատարանում գործերի քննությունը կարող է իրականացվել կա՛մ վերաքննության կարգով (քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ գլխի կանոններով) կա՛մ վճռաբեկության կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ գլխի կանոններով):*

(…) Վերաքննիչ դատարանը կարող է գործը քննել վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով միայն այն դեպքում, երբ՝ (…)

բ) վերաքննիչ բողոք կամ բողոքի պատասխան ներկայացրած կողմը նոր նյութեր չի ներկայացրել և չի միջնորդել հավաքելու կամ հետազոտելու նոր ապացույցներ, կամ վերաքննիչ դատարանն այն համոզման է եկել, որ կողմը, միջնորդելով գործին կցել նոր նյութեր, կամ դատարան կանչել իր նշած վկային կամ փորձագետին կամ նշանակել փորձաքննություն, չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու վերոնշյալ գործողությունները, կամ որ դրանց կատարման վերաբերյալ միջնորդությունները առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են անհիմն: (…) [Ե]թե վերաքննիչ դատարանը գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ չի նշել վճռաբեկության կարգով գործը քննելու իր մտադրության մասին, ապա այլևս չի կարող բողոքի քննության ժամանակ փոխել այդ որոշումը և գործը քննել վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով: Սակայն, եթե վերաքննիչ դատարանը որոշել է գործը քննել վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, ապա գործի քննության ժամանակ կարող է փոխել որոշումը և գործը քննել վերաքննիչ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, եթե օբյեկտիվորեն առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը»[1]:

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով *Գ.Հախնազարյանի* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, *Լևոն Պետրոսյանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ի] տարբերություն գործի քննության վերաքննության կարգից վճռաբեկության կարգին անցում կատարելուն՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու է գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ այն վճռաբեկության կարգով քննելու մասին*

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հախնազարյանի* գործով 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵՔՐԴ/0219/01/08 որոշումը, կետեր 11-րդ և 19-րդ:

նշում կատարելուց հետո փոխել այդ որոշումը և գործը քննել վերաքննության կարգով, եթե հիմնավոր է համարում կողմի այն պարզաբանումները, որ նոր նյութեր կամ նոր ապացույցներ հավաքելու կամ հետազոտելու միջնորդություններ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ներկայացնելը պայմանավորված է նրանով, որ դրանք առաջին ատյանի դատարան ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունը բացակայել է կամ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն մերժվել է»[1]:

14. Զարգացնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ դատարանը գործը պետք է քննի վերաքննության կարգով, ինչպես նաև իրավասու է գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ այն վճռաբեկության կարգով քննելու մասին նշում կատարելուց հետո փոխելու այդ որոշումը և գործը քննելու վերաքննության կարգով ոչ միայն, եթե հիմնավոր է համարում կողմի այն պարզաբանումները, որ նոր նյութեր կամ նոր ապացույցներ հավաքելու կամ հետազոտելու միջնորդություններ Վերաքննիչ դատարան ներկայացնելը պայմանավորված է նրանով, որ դրանք առաջին ատյանի դատարան ներկայացնելու օբյեկտիվ հնարավորությունը բացակայել է, կամ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն մերժվել է, այլև եթե Վերաքննիչ դատարանն ինքը անհրաժեշտ է համարում հետազոտել գործում առկա որևէ ապացույց: Վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ռեժիմների որակական տարբերությունն այն է, որ ի տարբերության վճռաբեկության կարգի, որը ենթադրում է բացառապես իրավունքի հիմքով վերանայում, վերաքննության ռեժիմը ենթադրում է գործի փաստական կողմը վերանայելու, ապացույցները հետազոտելու հնարավորություն: Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գործում եղած կամ նոր ներկայացված ապացույց (ապացույցներ) հետազոտելու անհրաժեշտության դեպքում Վերաքննիչ դատարանում գործի քննությունը պետք է իրականացվի վերաքննության, այլ ոչ թե վճռաբեկության կարգով:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, վճռաբեկության կարգով քննության առնելով քրեական գործը, միևնույն ժամանակ իր դատական ակտում ուղղակիորեն նշել է, որ «*Վերաքննիչ դատարանը հետազոտելով (...) վերը նշված գործով իրեղեն ապացույց ճանաչված* ***«ներքին դիտում» տեսագրության լազերային սկավառակը՝ այն համակարգչի մեջ տեղադրելու եղանակով,*** *փաստում է, որ տեսագրությունը տեղափոխվել է լազերային սկավառակի վրա 27.09.2016թ. ժամը 17.37-ին, հետևաբար տեսագրությունը կատարվել է դրանից առաջ*»[2]:

16. Սույն որոշման 14-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լևոն Պետրոսյանի* գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴ/0137/01/14 որոշումը, կետ 23.1:

[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ քրեական գործում առկա ապացույցներից ***«ներքին դիտում» տեսագրության լազերային սկավառակը*** հետազոտելու անհրաժեշտության պարագայում Վերաքննիչ դատարանը, թեև որոշում էր կայացրել վճռաբեկության կարգով գործի քննություն անցկացնելու մասին, պետք է անցներ գործի քննության վերաքննության կարգի:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից գործը վճռաբեկության կարգով քննելու իրավական ընթացակարգը չի պահպանվել:

II. Վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների հետազոտման կարգը պահպանելը.

17. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով իրեղեն ապացույց ճանաչված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսագրության սկավառակն անթույլատրելի ապացույց ճանաչելն այն պայմաններում, երբ այն չի հետազոտվել դատական նիստում՝ կողմերի մասնակցությամբ:

18. ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ «*Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք*»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայիկից թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով»:*

19. Տիգրան Առաքելյանի և մյուսների գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«(…) [Դ]ատական ակտի իրավաչափությունն ավելի բարձր դատական ատյանում վիճարկելու անձի իրավունքն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է փաստելու, որ պետությունն իրականացրել է իր պոզիտիվ պարտականությունը՝ ուղղված անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելուն: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտի վերանայման քրեադատավարական մեխանիզմը կարող է իրապես արդյունավետ ճանաչվել և ապահովել անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը միայն այն դեպքում, երբ օժտված լինի արդար դատական քննության հիմնարար երաշխիքներով: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կախված*

դատական ակտի վերանայման նպատակով հարուցված վարույթի քրեադատավարական ձևից (վերաքննություն, վճռաբեկություն), արդար դատական քննության սկզբունքի որոշ բաղադրատարրերի կիրառելիությունը կարող է ենթարկվել սահմանափակումների, ինչը սակայն, չի կարող լինել այնպիսին, որ իմաստազրկի նշված հիմնարար իրավական արժեքի բուն էությունը: (…) [Ա]յս դիրքորոշումը հիմնված է Դելկուրն ընդդեմ Բելգիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշման վրա, որի համաձայն՝ եթե պետության ազգային օրենսդրությամբ նախատեսված է վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, ապա պետությունը պետք է երաշխավորի, որպեսզի այդ դատարաններում իրականացվող վարույթի ընթացքում անձինք օժտված լինեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված հիմնարար երաշխիքներով (տե՛ս Delcourt v. Belgium գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1970 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 2689/65, կետ 25)»[1]:

20. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

21. Արդար դատական քննության իրավունքն ամրագրող վերոգրյալ միջազգային և մի շարք այլ ներպետական իրավանորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա.Բաբայանի և Մ.Թումանյանի* գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) [Ա]րդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման անկյունաքարը, ի թիվս քրեական դատավարության այլ կարևորագույն սկզբունքների, մրցակցության սկզբունքն է:*

Մրցակցության սկզբունքը կարող է երաշխավորվել երեք բաղադրատարրերի միաժամանակյա պահպանման դեպքում: Դրանք են՝

ա) կողմերի դատավարական իրավահավասարություն՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար,

բ) կողմերի միջև մեղադրանքի և պաշտպանության գործառույթների տարանջատում և դրանց սահմանազատում գործի լուծման գործառույթից,

գ) անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն:

Մրցակցային դատավարության ընթացքում դատարանի կարգավիճակի բնութագրական կողմերից մեկն էլ այն է, որ որպես քրեական գործը քննող անկախ և անկողմնակալ մարմին, դատարանը չի կարող հանդես գալ

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Առաքելյանի* և մյուսների գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0225/01/11 որոշումը, կետեր 19-20:

մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը: Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար պետք է ստեղծի գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ՝ դրանով իսկ ապահովելով մրցակցության սկզբունքի կենսագործումը և հասնելով քրեական դատավարության առջև դրված խնդիրների իրագործմանը: (…)» [1]:

22. ՀՀ քրեական դատավարության՝ մրցակցության սկզբունքն ամրագրող՝ 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ (…)»:*

23. Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները և մրցակցության սկզբունքի վերաբերյալ քրեադատավարական կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ. *«(…) [Մ]րցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր է: Այդ սկզբունքի իմաստով դատաքննության ժամանակ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավորությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Այսինքն՝ մրցակցության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել կողմերի հավասարության հիմնարար պահանջի հետ միասնության մեջ, ինչը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ կողմը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը, ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: (…) ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ նշյալ դատարանի կայացրած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական սրուգման ենթարկելիս Վերաքննիչ դատարանը պարտավոր են միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման ուղղությամբ (…)*[2]»:

24. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդար

[1] Տե՛ս *Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշումը, կետ 13:

[2] Տե՛ս, mutatis mutandis, *Ամալյա Ղարիբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԴ/0008/06/11, *Նոյ Մուսայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԿԴ1/0007/06/12, *Հակոբ Մկրտչյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0230/01/14, *Ռաֆայել Քոթանջյանի* գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ3/0010/06/15 որոշումները:

դատաքննության իրավունքը և դրա տարրերից մրցակցության սկզբունքը պահանջում են, որ ապացույցների հետազոտումն իրականացվի դատաքննության պայմաններում՝ երաշխավորելով կողմերի համար այդ գործընթացին մասնակցելու հնարավորությունը: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ վարույթի ընթացքում ապացույցներ հետազոտելու հնարավորությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել արդար դատական քննության, մրցակցության հիմնարար դատավարական սկզբունքների չեզոքացմանը: Վերաքննիչ վարույթում մրցակցության սկզբունքն ապահովված կլինի միայն այն դեպքում, երբ թե՛ արդեն առաջին ատյանի դատարանում հետազոտված և թե՛ Վերաքննիչ դատարան ներկայացված նոր ապացույցների հետազոտումն իրականացվի դատական նիստում կողմերի մասնակցությամբ: Վերաքննիչ վերանայման կառուցակարգի տարրերից՝ դատական նիստին կողմերի պարտադիր մասնակցության պահանջը և ապացույցների հետազոտման հնարավորությունը սերտորեն փոխկապակցված են և ենթադրում են վերաքննության կարգով գործի քննության ժամանակ կողմերի պարտադիր մասնակցությամբ ապացույցների հետազոտման ընթացակարգ: Գործի քննության վերաքննության կարգն ապացույցների հետազոտման այլ մեխանիզմ չի նախատեսում. դատական նիստից դուրս կողմերի բացակայությամբ ապացույցների հետազոտումն անհամատեղելի է արդար դատաքննության և դրա տարրերից մրցակցության պահանջի հետ, որոնց երաշխավորման պարտականությունը վերաքննիչ վերանայման կառուցակարգի շրջանակում կրում է Վերաքննիչ դատարանը:

24.1. Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատավճռի բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները (օրինականություն, հիմնավորվածություն, պատճառաբանվածություն) վերաբերելի են նաև վերադաս դատական ատյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտերին ներկայացվում են նույն բովանդակային պահանջները, ինչ դատավճռին[1]: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի դատավճիռը, ի թիվս այլ պահանջների, հիմնավորված է, եթե դրա հետևությունները հիմնված են միայն ***դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների*** վրա, և եթե դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են ***դատարանում հետազոտված ապացույցներին***: Հետևաբար վերաքննիչ

[1] Տե՛ս *Գեղամ Ղազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11 որոշումը, կետ 19:

դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները վերաքննիչ դատարանում հետազոտելու արդյունքում դրանք իր որոշման հիմքում դնելու կամ ապացուցողական զանգվածից հանելու մասին դատական ակտում տեղ գտած հետևությունները պետք է լինեն դատաքննության ժամանակ ապացույցների հետազոտման արդյունք, և այս առնչությամբ Վերաքննիչ դատարանում գործում առկա ապացույցների հետազոտման կարգի վրա վերաբերելի մասով տարածվում են առաջին ատյանի դատարանում համապատասխան ապացույցի հետազոտման կանոնները:

25. Սույն գործի նյութերից երևում է, որ Հ.Վարդանյանը Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ խոշոր չափերի թմրամիջոցներ ձեռք բերելու, պահելու և իրացնելու համար: Առաջին ատյանի դատարանը դատավճռի հիմքում, ի թիվս այլոց, դրել է Մուրադ Տեր-Ավետիսյանի մասնակցությամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսագրության զննություն կատարելու մասին 2016 թվականի սեպտեմբերի 29-ին կազմված արձանագրությունը[1]:

Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Հ.Վարդանյանի պաշտպան Ա.Քարամյանի բողոքի հիման վրա բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 հուլիսի 19-ի դատավճիռը, պատճառաբանել է, որ Առաջին ատյանի դատարանում հետազոտված իրեղեն ապացույց ճանաչված՝ ամբաստանյալ Մուրադ Տեր-Ավետիսյանի մասնակցությամբ կատարված «ներքին դիտում» ՕՀՄ-ի տեսագրության սկավառակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն, անթույլատրելի ապացույց է, այն չի կարող օգտագործվել մեղադրանքի նպատակով, քանի որ նշված ՕՀՄ-ը կատարվել է այդ պահին դատարանի որոշման բացակայության պայմաններում՝ առանց դատարանի թույլտվության:

Վերաքննիչ դատարանը, հետազոտելով գործով իրեղեն ապացույց ճանաչված «ներքին դիտում» տեսագրության լազերային սկավառակը համակարգչի մեջ տեղադրելու եղանակով, փաստել է, որ տեսագրությունը տեղափոխվել է լազերային սկավառակի վրա 2016 թվականի սեպտեմբերի 27-ին՝ ժամը 17:37-ին, իսկ Հ.Վարդանյանը նույն օրը՝ ժամը 20:45-ին է բերման ենթարկվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին, որից հետո նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործը: Նշվածից Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ տեսագրությունը կատարվել է դատարանի թույլտվությունը ստանալուց առաջ[2]:

26. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով

[1] Տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

սույն որոշման 23-24.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական նիստից դուրս կողմերի բացակայությամբ հետազոտելով Առաջին ատյանի դատարանում հետազոտված և դատավճռի հիմքում դրված իրեղեն ապացույց ճանաչված՝ ամբաստանյալ Մուրադ Տեր-Ավետիսյանի մասնակցությամբ կատարված «ներքին դիտում» ՕՀՄ-ի տեսագրության սկավառակը, խախտել է քրեական դատավարության մրցակցության սկզբունքը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրեղեն ապացույցների զննության կարգը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն սահմանում է կողմերի մասնակցությամբ համապատասխան առարկան հետազոտելու պահանջ: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական նիստից դուրս քրեական գործում առկա սկավառակը համակարգչում տեղադրելու եղանակով հետազոտելը չի համապատասխանում իրեղեն ապացույցի զննության օրենսդրական կարգին:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը խախտել է արդար դատաքննության հիմնարար իրավունքը, քանի որ չի ապահովել կողմերի հավասար մասնակցությամբ ապացույցները հետազոտելու դատավարական պահանջը, ինչի արդյունքում կողմերը զրկված են եղել կոնկրետ ապացույցի առնչությամբ սեփական դիրքորոշումը ներկայացնելու դատավարական հնարավորությունից:

27. Հետևաբար իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով իրեղեն ապացույց ճանաչված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսագրության սկավառակն անթույլատրելի ապացույց ճանաչելն այն պայմաններում, երբ այն չի հետազոտվել դատական նիստում՝ կողմերի մասնակցությամբ:

28. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործը քննելով վճռաբեկության կարգով և իրեղեն ապացույց ճանաչված ամբաստանյալ Մուրադ Տեր-Ավետիսյանի մասնակցությամբ կատարված «ներքին դիտում» ՕՀՄ-ի տեսագրության սկավառակը դատական նիստից դուրս կողմերի բացակայությամբ հետազոտելով և այն անթույլատրելի ապացույց ճանաչելով, թույլ է տվել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով նախատեսված արդար դատական քննության, մրցակցության հիմնարար սկզբունքների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

29. Վճռաբեկ դատարանն արձանագրում է որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը հիշյալ ապացույցի թույլատրելիության վերաբերյալ կողմերի և մասնավորապես բողոքաբերի փաստարկները (այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան բնագավառի մասնագետի ներգրավման վերաբերյալ) պետք է պատշաճ քննության առնի դատական նիստում համապատասխան ապացույցի հետազոտման շրջանակում՝ ապահովելով կողմերի մրցակցության իրավունքը և կայացնի հիմնավորված ու պատճառաբանված որոշում:

30. Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով, որ այդ խափանման միջոցի կիրառման հիմքերն ու պայմանները չեն վերացել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 19-ի դատավճիռն ամբաստանյալ Հայկ Ժորայի Վարդանյանի մասով փոփոխելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 8-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Հայկ Ժորայի Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0051/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Ա.ՊԱՊԻԿՅԱՆԻ

2018 թվականի օգոստոսի 1-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշման դեմ ամբաստանյալ Արթուր Զարմայիլի Մովսիսյանի պաշտպան Ա.Պապիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

2016 թվականի մայիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 10122116 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 23-ի և նույն թվականի հունիսի 2-ի որոշումներով Աշոտ Հովհաննեսի Գուգուշյանը, Հրայր Իվանի Թոփչյանը, Հովհաննես Դորիկի Պետրոսյանը, Գալուստ Վարազդատի Գրիգորյանը, Ներսես Միքայելի Պողոսյանը, Սմբատ Մելիքսեթի Գալոյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշումներով

Արթուր Ջարմայիլի Մովսիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշմամբ Ա.Մովսիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2016 թվականի հունիսի 10-ին հիշյալ քրեական գործով Սասունիկ Դավթի Կիրակոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ 2016 թվականի հունիսի 22-ի որոշմամբ որպես մեղադրյալ է ներգրավվել Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանը, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-235-րդ հոդվածի 2-րդ մասով:

2016 թվականի հուլիսի 17-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 235-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58212116 քրեական գործը՝ կազմակերպված խմբի կողմից ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու, կրելու, պահելու և պետությանը գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով շենքեր, շինություններ զավթելու, պահելու դեպքերի առթիվ:

2016 թվականի նոյեմբերի 16-ին թիվ 58212116 քրեական գործից առանձին վարույթում անջատվել է Ժիրայր Սեֆիլյանի, Գևորգ Սաֆարյանի, Հրայր Թոփչյանի, Սասունիկ Կիրակոսյանի, Հովհաննես Պետրոսյանի, Ներսես Պողոսյանի և Գալուստ Գրիգորյանի վերաբերյալ մասը, որին շնորհվել է թիվ 62228516 համարը և 2017 թվականի մայիսի 3-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննելու:

2016 թվականի նոյեմբերի 16-ին Արթուր Մովսիսյանը հայտնաբերվել է Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից և արգելանքի վերցվել:

2016 թվականի նոյեմբերի 23-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ա.Մովսիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով:

ՌԴ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ բավարարվել է ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրյալ Ա.Մովսիսյանին ՀՀ իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ:

2017 թվականի մայիսի 7-ին Ա.Մովսիսյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն, և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 8-ի որոշմամբ վերահաստատվել է Ա.Մովսիսյանի նկատմամբ երկու ամիս ժամկետով կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նույն դատարանի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշումը՝ կալանքի սկիզբը հաշվելով 2017 թվականի մայիսի 7-ից:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 20-ի որոշմամբ թիվ 58212116 քրեական գործից առանձին վարույթում անջատվել է Ա.Մովսիսյանի վերաբերյալ մասը, անջատված գործին շնորհվել է թիվ 62217517 համարը:

2017 թվականի հունիսի 30-ին Ա.Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Մովսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով:

Ա.Մովսիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Ամբաստանյալ Ա.Մովսիսյանի պաշտպան Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Մովսիսյանի պաշտպան Ա.Պապիկյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Արթուր Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ

մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *‹‹(…) [Ն]ա, 2015 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի մայիսի 18-ն ընկած ժամանակահատվածում ընդգրկված լինելով Ժիրայր Սեֆիլյանի կողմից ստեղծված, զինված կազմակերպված խմբի կազմում, ապօրինի կերպով իր բնակարանում պահել և այնուհետև խմբի մյուս անդամներին է փոխանցել ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն և ռազմամթերք՝ նպատակ ունենալով պետությանը որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, կազմակերպված խմբով, զենքի գործադրմամբ, կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով զավթել և պահել ռազմավարական նշանակության շենքեր և շինություններ, սակայն գիտակցելով հանցագործությունն ավարտին հասցնելու իրական հնարավորությունը, կամովին հրաժարվել է ինչպես ենթախմբին անդամակցելուց, այնպես էլ հանցագործությունն ավարտին հասցնելուց (…)››*[1]:

6. Ա.Մովսիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Ժիրայր Սեֆիլյանին ճանաչում է որպես ազգային հերոսի, սակայն նրա հետ անձնական շփում չի ունեցել: Ներսես Պողոսյանի և Գալուստ Գրիգորյանի հետ գտնվել է ընկերական հարաբերությունների մեջ, իսկ Հովհաննես Պետրոսյանի հետ ծանոթացել է նրա նախաձեռնությամբ՝ ‹‹Էլեկտրիկ Երևան›› հավաքից որոշ ժամանակ առաջ: Քանի որ բազմիցս մասնակցել է ցույցերի և պահանջել Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականը, այդ իսկ պատճառով հետապնդվել է ոստիկանության աշխատակիցների կողմից և արժանացել նրանց ճնշմանը: Այդ հետապնդումներից խուսափելու համար 2015 թվականի օգոստոս ամսին մեկնել է Ռուսաստանի Դաշնություն և այնտեղ զբաղվել շինարարությամբ՝ ներքին հարդարման աշխատանքներով[2]:

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *‹‹(…) [Մ]եղադրյալ Հովհաննես Դորիկի Պետրոսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ (…) Ժիրայր Սեֆիլյանի կողմից կազմակերպված խմբում անդամակցելու համար տվել է իր համաձայնությունը, տեղյակ է եղել Ժիրայր Սեֆիլյանի կողմից երկրում հեղաշրջում կատարելու ծրագրին, որի համար հանդիպել է նրան ու քննարկել հետագա անելիքները:*

(…)

Թեև զենքերը ինչպես են հայտնվել Արթուր Մովսիսյանի տանը, չի կարող ասել, այդ հանգամանքն իր համար զարմանալի է եղել, քանի որ Արթուր Մովսիսյանն այդ ժամանակ բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 331-332:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 34:

Նշված հանգամանքի մասին իմացել է Գալուստ Գրիգորյանից, որից հետո հեռախոսազանգով խոսել, ճշտումներ է կատարել Արթուր Մովսիսյանի հետ ու վերցրել է զենքերը: Արթուրի հետ խոսակցության ընթացքում զենքի անուն չեն տվել ու մանրամասն ոչինչ չեն խոսել: Արթուր Մովսիսյանի հետ խոսել է զենքերը վերցնելու օրվան նախորդող օրը, ինչպես նաև՝ զենքերը վերցնելու օրը, քանի որ հեռախոսազանգով ճշտել է, թե կոնկրետ որտեղ է պահվում Գալուստ Գրիգորյանի տրամած ‹‹ապրանքը››:

(...)

Իրեն դիմավորել է Արթուրի որդին, ով տեղյակ չի եղել, թե ինքը ինչ պետք է վերցներ իրենց տանից: Վերցնելով պոլիէթիլենային տոպրակով կամ ծածկոցով փաթեթավորված իրերը, որոնք տեսանելի չեն եղել, սակայն չափսերով նման են եղել ինքնաձիգի, տեղափոխել է ավտոմեքենայի մեջ:

(...)

Արթուր Մովսիսյանի հետ զինված խմբի կամ հարձակման վերաբերյալ հարցեր ինքը չի քննարկել, խմբի այլ անդամների հետ Արթուր Մովսիսյանի կապի մասին տեղեկություն չի ունեցել:

(...)

Նախաքննության ընթացքում Հովհաննես Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ (...) խմբին անդամակցելուց Գալուստ Գրիգորյանի և Ներսես Պողոսյանի հրաժարվելուց որոշ ժամանակ անց վերջիններն իրեն հայտնել են, որ զենքերը տեղափոխել են գաղափարակից ընկեր Արթուր Մովսիսյանի՝ Ջորաղբյուր գյուղում գտնվող առանձնատուն, ում հետ ևս ծանոթացել է էլեկտրաէներգիայի թանկացման պատճառով տեղի ունեցած հավաքների ժամանակ: Այդ մասին տեղեկանալուց հետո Սմբատ Գալոյանի հետ որոշել են զենքերը տեղափոխել վերջինի ծանոթի՝ Հալաբյան փողոցում գտնվող բնակարան, որտեղ բնակվել են երկուսով: Միասին տաքսի ավտոմեքենայով գնացել են Ջորաղբյուր, զանգահարել այդ ժամանակ Ռուսաստանի Դաշնությունում գտնվող Արթուր Մովսիսյանին և հայտնել Գալուստ Գրիգորյանի ու Ներսես Պողոսյանի տված զենքերը տեղափոխելու մտադրության մասին: Խոսակցությունից հասկացել է, որ Արթուր Մովսիսյանը ևս տեղյակ է ինքնաձիգներն առանձնատանը թաքցնելու հանգամանքից: Արթուր Մովսիսյանի տանը հանդիպել է նրա որդուն, ում հետ մտել են նկուղ, փնտրել ու գտել երկու ինքնաձիգները, փամփշտակալները, ապա դրանք տեղափոխել են Երևան քաղաքի Հալաբյան փողոցում գտնվող վերոհիշյալ բնակարան:

(...)

Նախաքննական ցուցմունքները հրապարակելուց հետո Հովհաննես Պետրոսյանը հայտնել է, որ դրանք ճիշտ են, պնդում է այդ ցուցմունքները: Զենքերն Արթուր Մովսիսյանի առանձնատուն տեղափոխելու մասին իմացել է 2016 թվականի մայիս ամսին, նշված խոսակցությանը ներկա են եղել Գալուստ Գրիգորյանը և Ներսես Պողոսյանը, կոնկրետ օրը չի հիշում՝ քանի

որ երկար ժամանակ է անցել: Արթուր Մովսիսյանի որդին տեղյակ է եղել, որ իրենց տանից ինչ-որ բան պետք է վերցնեն, սակայն չի իմացել, որ դրանք զենքեր են (...):

(...) Թիվ 58212116 քրեական գործով մեղադրյալ Սմբատ Մելիքսեթի Գալոյանը սույն դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Արթուր Մովսիսյանին չի ճանաչում, իսկ Հովհաննես Պետրոսյանն իր հորաքրոջ որդին է: Տեղյակ է, որ Արթուր Մովսիսյանի և Հովհաննես Պետրոսյանի հարաբերությունները եղել են ընկերական:

(...)

Նախաքննության ընթացքում Սմբատ Գալոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թվականի սեպտեմբերի 17-ից մինչև 2016 թվականի հունվարի 14-ը պայմանագրային հիմունքներով ծառայել է ՀՀ զինված ուժերում, հանդիսացել է ‹‹Սև նետ›› ջոկի հրամանատար, իսկ 2015 թվականին ճանաչվել է ՀՀ ՋՈՒ 5-րդ բանակային կորպուսի լավագույն դիպուկահար: Հովհաննես Պետրոսյանն իր հորաքրոջ որդին է: (...) 2016 թվականի մայիսի 15-ին Հովհաննես Պետրոսյանի հետ գնացել են Գալուստ Գրիգորյանի տուն, ով հայտնել է, որ Ներսես Պողոսյանի հետ զենքերը փոխանակել են նրանց ծանոթ Արթուր Մովսիսյանի՝ Զորաղբյուրում գտնվող ամառանոց: Գալուստ Գրիգորյանից իմանալով Արթուր Մովսիսյանի հեռախոսահամարը՝ զանգահարել, պայմանավորվել են վերջինի հետ, ապա ինքն ու Հովհաննեսը տաքսիով գնացել են հիշյալ ամառանոց: Ինքը սպասել է ավտոմեքենայում, իսկ Հովհաննեսն Արթուր Մովսիսյանի որդուց վերցրել է երկու միավոր ‹‹ԱԿ-74›› տեսակի ինքնաձիգ և 120 հատ փամփուշտ՝ լիցքավորված 4 պահունակներում, որոնք տեղափոխել են իր՝ Երևան քաղաքի Հալաբյան փողոցի 9-րդ շենքի 11-րդ բնակարան և պահել այնտեղ:

(...) [Մ]եղադրյալ Գալուստ Վարազդատի Գրիգորյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է Արթուր Մովսիսյանին, նրա հետ գտնվում է ընկերական հարաբերությունների մեջ: Ժիրայր Սեֆիլյանի կողմից կազմակերպված՝ երկրում հեղաշրջում կատարելու գործին Արթուր Մովսիսյանը, ըստ իրեն, առնչություն չի ունեցել, որևէ տեղեկություն իրեն հայտնի չի եղել, որ Արթուր Մովսիսյանը հանդիսանում է խմբի անդամ:

(...) [Զ]ենքերն ապահով վայրում պահելու համար ինքը զանգահարել է ՌԴ-ում գտնվող Արթուր Մովսիսյանին և խնդրել, որ իր մոտ գտնվող ընկերոջ գործիքները ժամանակավորապես տեղափոխի նրա բնակարան: Արթուր Մովսիսյանը չի առարկել, հայտնելով, որ դրանք կարող է տեղափոխել իր նկուղ: Արթուր Մովսիսյանը տեղեկություն չի ունեցել, որ դրանք գործիքներ չեն, այլ զենքեր են:

(...)

Արթուր Մովսիսյանը զենքերի մասին տեղեկություններ չի ունեցել, չի տեսել ու չի ուսումնասիրել, նա այդ ժամանակ Հայաստանի Հանրապետու-

թյունում չի եղել, իսկ ինքը հեռախոսազրույցի ժամանակ հարկ չի համարել մանրամասն տեղեկություններ հայտնել նրան:

(...)

Նախաքննության ընթացքում Գալուստ Գրիգորյանը ցուցմունք է տվել այն մասին, որ (...) 2016 թվականի հունվարի կեսին, այդ զենքերն ու փամփուշտներն իր անձնական ավտոմեքենայով Ներսեսի հետ տարել են իրենց ավագ ընկեր Արթուր Մովսիսյանի՝ Ջորաղբյուրի առանձնատուն: (...) Արթուր Մովսիսյանն իրենց ավագ ընկերն է, 2015 թվականի օգոստոսից գտնվել է ՌԴ-ում, տեղյակ է եղել այդ ամենից և իրենց հանդիպումների ժամանակ, հեռախոսով մի քանի անգամ զրուցել են նրա հետ, կիսվել պլաններից, խորհուրդ հարցրել, նույնիսկ հիշում է, որ նա իրենց խորհուրդ չէր տալիս խառնվել այդ ամենին: 2016 թվականի հունվար ամսին նա մի քանի օրով եկել էր Հայաստան, դրա համար, մտածելով, որ նա կրկին գնալու է ՌԴ, որոշել են զենքերը և փամփուշտները տանել նրա՝ Ջորաղբյուրի առանձնատուն և թողնել այնտեղ, քանի որ ոչ ոք այլևս իրենցով և զենքերով չէր հետաքրքրվում: Այդպես, ինքն ու Ներսեսը հունվարի կեսերին զենքերը և փամփուշտները տեղափոխել են Արթուրի այդ առանձնատունը, զենքերն ինքը դրել էր կանաչ գույնի մեծ ճամպրուկի մեջ, այդպես տվել է Արթուրին, և ինքն ու Ներսեսը հետ են եկել: Արթուրի հետ պայմանավորվել են, որ հաջորդ օրը կգնան և կորոշեն, թե դրանք որտեղ պահեն, քանի որ մտադրություն են ունեցել այդտեղից նույնպես տեղափոխել: Հաջորդ օրն ինքը միայնակ գնացել է Արթուրի տուն, որտեղ Արթուրն ասել է, որ զենքերն ապահով տեղ է թաքցրել և իրեն տվել է դատարկ ճամպրուկը:

(...)

Նախաքննական ցուցմունքները հրապարակելուց հետո Գալուստ Գրիգորյանը հայտնել է, որ դրանք իրականությանը չեն համապատասխանում, իր՝ դատարանում տված ցուցմունքներն են ճիշտ, իսկ նախաքննության ընթացքում այնքան էր մտերմացել քննիչի հետ, որ հարցաքննության արձանագրությունները չի կարդացել, դրանք ստորագրել է առանց բովանդակությանը ծանոթանալու:

Գալուստ Գրիգորյանի վերոշարադրյալ ցուցմունքները համադրելով, դրանք գնահատելով գործով ձեռք բերված և պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված ապացույցների համակցության լույսի ներքո՝ Դատարանը գտնում է, որ դատաքննության ընթացքում Գալուստ Գրիգորյանը տվել է մտացածին, իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ, որոնցում նշված տեղեկությունները ոչ միայն չեն հաստատվում գործով ձեռք բերված այլ օբյեկտիվ փաստական տվյալներով, այլև հերքվում են: Մասնավորապես, դատաքննության ընթացքում Գալուստ Գրիգորյանը հայտնել է, որ իր փրկապետման տակ գտնվող զենքերն ու ռազմամթերքն Արթուր Մովսիսյանի առանձնատուն տեղափոխելու ժամանակ

վերջինը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, ինքը զանգահարել է Ռուսաստանի Դաշնություն և նրան խնդրել, որ իր մոտ գտնվող գործիքները տեղափոխի նրա բնակարան: Մինչդեռ, գործով հաստատված է, որ Արթուր Մովսիսյանը 2016 թվականի հունվարի 19-ից մինչև 2016 թվականի հունվարի 29-ը գտնվել է ՀՀ-ում և հենց այդ ժամանակահատվածում են Գալուստ Գրիգորյանն ու Ներսես Պողոսյանը զենքն ու ռազմամթերքը տեղափոխել Ջորաղբյուր գյուղում գտնվող առանձնատուն, որպիսի հանգամանքը չի վիճարկել անգամ պաշտպանության կողմը:

(...) Գալուստ Գրիգորյանի նախաքննական ցուցմունքները մանրամասն են, դրանցում նշված փաստական տվյալների հավաստիությունը վիճարկող կամ կասկածի տակ դնող որևէ հանգամանք սույն դատաքննության ընթացքում ձեռք չի բերվել, ավելին՝ դրանք հաստատվում են գործի այլ օբյեկտիվ փաստական տվյալներով: Ինչ վերաբերում է Գալուստ Գրիգորյանի այն հայտարարությանը, որ հարցաքննության արձանագրությունները չի կարդացել, դրանք ստորագրել է առանց բովանդակությանը ծանոթանալու, ապա Դատարանն արձանագրում է, որ Գալուստ Գրիգորյանի նախաքննական ցուցմունքներում արտացոլված են այնպիսի փաստական տվյալներ, որոնք հայտնել է բացառապես վերջինը, և դրանք չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթն իրականացնող մարմնին:

(...)

Դատարանն արձանագրում է, որ պաշտպանության կողմն իր ճառով անդրադարձել է վերը շարադրված յուրաքանչյուր ապացույցին և սույն դատական ակտում դրանց օգտագործման անթույլատրելիության վերաբերյալ բերել մի շարք փաստարկներ: Մասնավորապես, նշվել է, որ Հովհաննես Պետրոսյանի կողմից Սասունիկ Կիրակոսյանին ճանաչելու, Հովհաննես Պետրոսյանի կողմից ստվարաթղթե արկղը ճանաչելու, Սմբատ Գալոյանի գրպանից հայտնաբերված հատակագիծ-սխեման գնելու, ‹‹Սարդարապատ›› նախաձեռնության գրասենյակից հայտնաբերված զենքերի ցուցակը գնելու, Աշոտ Գուգուշյանի ավտոմեքենայից հայտնաբերված ստվարաթղթե արկղը գնելու արձանագրությունները, Հովհաննես Պետրոսյանի մասնակցությամբ կատարված տեղանքի գննության արձանագրություններն ընդհանրապես վերաբերելի չեն Արթուր Մովսիսյանի մեղադրանքին:

Այս առնչությամբ Դատարանը ևս մեկ անգամ հարկ է համարում փաստել, որ Արթուր Մովսիսյանին վերագրվում է կազմակերպված խմբի կազմում զենք և ռազմամթերք պահելու, խմբի մյուս անդամներին փոխանցելու ձևով հանցավոր արարք: Վերը թվարկված յուրաքանչյուր ապացույց այս կամ այն չափով փաստական տվյալներ է պարունակում մեղադրանքում նշված՝ կազմակերպված, զինված խմբի ձևավորման, դրա անդամների, ծրագրերի, գործունեության, խմբի ղեկավարության տակ եղած զենք, զինամթերքի, դրանց պահելու վայրերի, գործի լուծման համար էական

նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, թվարկված ապացույցներից յուրաքանչյուրը կարևոր նշանակություն ունի սույն գործի վերաբերյալ փաստական տվյալներ հայտնած անձանց՝ Հովհաննես Պետրոսյանի, Սմբատ Գալոյանի, Գալուստ Գրիգորյանի, Հրայր Թոփչյանի և մյուսների ցուցմունքների արժանահավատությունը գնահատելու առումով: Այս պայմաններում, Դատարանը գտնում է, որ միայն այն հանգամանքը, որ քննարկվող ապացույցներն ուղղակիորեն չեն վերաբերում Արթուր Մովսիսյանին, չեն կարող հիմք հանդիսանալ դրանք ոչ վերաբերելի ճանաչելու համար:

(…) Այսպիսով, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված, գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ Դատարանը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված է համարում, որ Արթուր Զարմայիլի Մովսիսյանը, կազմակերպված խմբի կազմում, ապօրինի կերպով ստացել, իր բնակարանում պահել, այնուհետև խմբի մյուս անդամներին է փոխանցել հրազեն և ռազմամթերք: Մասնավորապես, Արթուր Մովսիսյանը, տեղեկացված լինելով զենքի գործադրմամբ, կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով ռազմավարական նշանակության շենքեր և շինություններ զավթելու, պահելու և պետությանը որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով ստեղծված կազմակերպված, զինված խմբի գործունեության մասին, խմբի անդամ Գ.Գ.-ից անձամբ 2016 թվականի հունվարի 27-ին ստացել և իր բնակության վայրում՝ Կոտայքի մարզի Ջորաղբյուր գյուղի 3-րդ Այգեզանգվածի 23-րդ փողոցի 19-րդ տան նկուղում պահել է ‹‹ԱԿ-74›› տեսակի մարտական ակոսափող ‹‹971737›› և ‹‹ИМ 30 4598›› գործարանային համարների երկու ինքնաձիգ, չորս ինքնաձիգի պահունակ՝ լիցքավորված ռազմամթերք հանդիսացող 5.45մմ տրամաչափի 120 մարտական փամփուշտներով: Հետագայում՝ 2016 թվականի մայիսի 16-ին, Արթուր Զարմայիլի Մովսիսյանը Ռուսաստանի Դաշնությունից հեռախոսային կապի մեջ է մտել կազմակերպված խմբի այլ անդամ Հ.Պ.-ի հետ և վերջինին փոխանցել իր բնակության վայրում ապօրինի պահվող վերոհիշյալ զենքերն ու ռազմամթերքը»[1]:

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է. *‹‹(…) [Վ]երլուծության և գնահատման ենթարկելով նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված յուրաքանչյուր ապացույց՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 35-36, 39-40, 42-45, 58:

համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, համադրելով ամբաստանյալի ցուցմունքները դատաքննությամբ հետազոտված մյուս ապացույցների հետ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ ամբաստանյալ Արթուր Մովսիսյանի պատճառաբանություններն այն մասին, որ ինքը տեղյակ չի եղել պետությանը որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով ստեղծված, զինված կազմակերպված խմբի գործունեության մասին, նշված խմբի անդամներից չի սրացել, իր առանձնատան նկուղում չի պահել, իսկ այնուհետև խմբի մյուս անդամներին չի փոխանցել ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն և ռազմամթերք, հերքվում են սույն շարադրված ապացույցների բավարար համակցությամբ: Ավելին՝ ամբաստանյալի նման պնդումներն, ըստ էության, նպատակ են հետապնդում անհրաժեշտ պայմաններ ստեղծելու քրեական պատասխանատվությունից և ակնկալվող պատժից խուսափելու համար:

(...)

Վերաքննիչ դատարանը, ապացույցների գնահատման վերաբերյալ ՀՀ քրեադատավարական օրենսդրության վերը նշված իրավադրույթների և ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված նախադեպային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում վերլուծության ու գնահատման ենթարկելով նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտած յուրաքանչյուր ապացույց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ներքին համոզմամբ հանգում է այն հետևության, որ սույն գործով հաստատված է հետևյալը՝ Արթուր Ջարմայիլի Մովսիսյանը, կազմակերպված խմբի կազմում, ապօրինի կերպով սրացել, իր բնակարանում պահել, այնուհետև՝ խմբի մյուս անդամներին է փոխանցել հրազեն և ռազմամթերք: Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված բոլոր ապացույցները հանգամանորեն հետազոտվել և օբյեկտիվ գնահատման են ենթարկվել դատաքննության ընթացքում և եզրահանգումները կատուցվել են միայն ապացույցների համալիր գնահատականի հիման վրա, քրեական գործի քննության նախորդ փուլում թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են դատական սխալի, հետևաբար, նման պայմաններում վերաքննիչ բողոքը բավարարելու, այն է՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռը բեկանելու և ամբաստանյալ Արթուր Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքով արդարացման դատական ակտ կայացնելու անհրաժեշտ ու բավարար հիմքեր չկան»[1]:

[1] Տես քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 78, 81-82, 88:

8.1. Վերաքննիչ դատարանն իր որոշման *«բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը»* հատվածում, ի թիվս այլնի, շարադրել է պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկներն առ այն, որ Հրայր Թոփչյանը, Սմբատ Գալոյանը, Աշոտ Գուգուշյանը, վկաներ Սահակ Սահակյանը, Արման Հովսեփյանը, Վարուժան Մելքոնյանը Ա.Մովսիսյանին չեն ճանաչել, միմյանց հետ որևէ առնչություն չեն ունեցել: Բացի այդ, դատավճռի հիմքում դրված՝ Հովհաննես Պետրոսյանի կողմից Սասունիկ Կիրակոսյանին ճանաչելու արձանագրությունը, Սմբատ Գալոյանի գրպանից գտած հատակագիծ-սխեմայի արձանագրությունը սույն գործով դարձյալ որևէ նշանակություն չունեն և դրանցով որևէ բան չի հիմավորվում:

Ըստ պաշտպանի՝ դա կատարվել է զուտ ապացույցների քանակական մասն ապահովելու նպատակով, ինչն էլ նշանակում է, որ առաջադրված մեղադրանքն այնքան հիմնազուրկ է, որ Առաջին ատյանի դատարանը ստիպված է եղել գոնե ձևական ապացույցների քանակ ապահովել[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 104-107-րդ, 125-րդ, 127-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածների պահանջները:

9.1. Ըստ բողոքաբերի՝ սույն քրեական գործով մեղադրական եզրակացության, հատկապես դրա նկարագրական-պատճառաբանական մասի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ այն Ա.Մովսիսյանի հետ ընդհանրապես առնչություն չունի: Դատավարական այդ փաստաթղթում Ա.Մովսիսյանի անունը հազվադեպ է հիշատակվում, և առավելապես այն վերաբերում է Ժ.Սեֆիլյանին և մյուս մեղադրյալներին:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնք չեն բավարարում քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված թույլատրելիության, վերաբերելիության և հավաստիության չափանիշներին: Մասնավորապես, մեղադրանքի հիմքում դրված մի շարք հարցաքննության արձանագրություններում ցուցմունք տվող անձինք նշել են, որ ընդհանրապես չեն ճանաչում Ա.Մովսիսյանին և տեղեկություններ չունեն նրա կողմից ենթադրաբար կատարված գործողություններից: Բացի այդ, Ա.Մովսիսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմով նախատեսված հանցակազմի

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 64-71:

օբյեկտիվ կողմը բնութագրող գործողությունները կատարելու վերաբերյալ ճշմարտացի և արժանահավատ տեղեկատվություն գործի ապացուցողական զանգվածում առկա չէ:

9.2. Բողոքաբերը նշել է նաև, որ ամեն դեպքում Ա.Մովսիսյանի արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական, քանի որ բացակայում է կազմակերպված խմբի կողմից նշված հանցանքի կատարումը հավաստող որևէ փաստական տվյալ: Ըստ գործի նյութերի՝ շատերը գործել են ինքնուրույն, առանց որևէ մեկի հետ քննարկելու կամ համաձայնեցնելու իրենց անելիքները: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ սկզբնական քրեական գործով անցնող մյուս ամբաստանյալների արարքը Վերաքննիչ դատարանը թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2018 թվականի հունիսի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասից վերաորակել է նույն հոդվածի 2-րդ մասով՝ հիմնավորելով, որ այդ գործով ամբաստանյալները չեն գործել որպես կազմակերպված խումբ: Հետևաբար բողոքի հեղինակը փաստել է, որ Ա.Մովսիսյանին առաջադրված մեղադրանքն անհիմն է, իսկ պաշտպանական կողմի այն պնդումները, որ երբևէ կազմակերպված խումբ չի եղել, և առավել ևս Ա.Մովսիսյանը երբևէ չի անդամակցել որևէ խմբի, իրական են:

9.3. Արդյունքում բողոքաբերը գտել է, որ Ա.Մովսիսյանի կողմից հանցանք գործելու մասին ստորադաս դատարանների պնդումներն արժանահավատ չեն, ուստի դրանք չեն կարող հիմք դիտվել Ա.Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով դատապարտելու համար:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշումը և բավարարել ներկայացված վճռաբեկ բողոքը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված է արդյոք Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված*

2. Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս:

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

(...)

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով (...)*»:

Մեջբերված նորմի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը մշտապես կրկնել է իր՝ նախադեպային իրավունքում ձևավորած դատողությունն այն մասին, որ դատարանը պարտավոր է դատական ակտում ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները: Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա արդյունքում դատարանի ներքին համոզմունքի ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ և կհանգեցնեն կամայականության: Դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին[1]:

Վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ բողոքի այն հիմնավորումներին, որոնք ողջամտորեն կարող են ազդեցություն ունենալ գործի համար նշանակություն ունեցող հարցերի լուծման համար, և պատշաճ պատճառաբանել դրանց վերաբերյալ իր եզրահանգումները: Վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում միայն վերաքննիչ դատարանի որոշումը կհամապատասխանի դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին[2]:

[1] Տե՛ս, mutatis mutandis, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13, *Արսեն Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշումները:

[2] Տե՛ս, mutatis mutandis, *Մ.Պողոսյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՇԴ/0034/01/15 որոշումը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ *«Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:*

Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար»:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցակցության վերոնշյալ երկու ձևերը՝ նախնական համաձայնությամբ գործող անձանց խումբը և կազմակերպված խումբը, միմյանցից տարբերակելու համար էական նշանակություն ունեն հետևյալ երեք չափանիշները՝*

ա) կայունությունը,

բ) միավորվածությունը,

գ) մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելը:

(...) Կայունության հատկանիշն արարքը կազմակերպված խմբի կողմից որակելու համար անհրաժեշտ, հիմնական չափանիշն է:

Կազմակերպված խմբի կայունությունը դրսևորվում է խմբի ամրությամբ, անդամների կողմից իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կազմակերպվածությամբ, խմբի անդամների ջանքերի համաձայնեցվածությամբ, խմբի մեկ կամ մի քանի անդամների կողմից մյուսներին ղեկավարելով, հատուկ, խմբի գործունեության համար անհրաժեշտ ներխմբային նորմերի առկայությամբ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում կայունությունը բնութագրող վերոնշյալ հատկանիշները պետք է գնահատվեն գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո:

(...) Կազմակերպված խմբի միավորվածության չափանիշը ենթադրում է մեկ կամ մի քանի հանցագործություններ կատարելու մշակված ծրագրերի առկայություն, այդ ծրագրերի ակտիվ իրականացում, ուժնձգությունը համատեղ կատարելու մշակված եղանակների առկայություն, դերերի՝ մշակված տեխնիկական բաշխում, հանցանքի կատարումը դյուրին դարձնելուն ուղղված՝ նախապես պայմանավորված գործողությունների կատարում, հանցանքի կատարման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

(...) Կազմակերպված խումբն ստեղծվում է տևական ժամանակ հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակով, դրա ստեղծման նպատակը, որպես կանոն, մի շարք հանցանքներ, այդ թվում համասեռ հանցագործություններ կատարելն է: ՀՀ քրեական օրենսդրությունը չի

բացառել, սակայն, որ խումբը կարող է ստեղծվել մեկ, սակայն երկարաւրև և մանրակրկիտ պլանավորված հանցագործություն կատարելու նպատակով: Այս առումով կարևորվում են կազմակերպված խմբին բնորոշ վերոնշյալ երկու չափանիշները՝ կայունությունը և միավորվածությունը, քանի որ կազմակերպված խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ կայուն և միավորված խմբի կազմի մեջ է մտնում, մասնակցում է խմբի անդամների փոխադարձ համաձայնությամբ կատարվող արարքներին կամ դրանց մի մասին:

(...)

Այսպիսով՝ կազմակերպված խմբին բնորոշ հիմնական առանձնահատկություններն են՝

ա) հանցանքի կատարմանը երկու կամ ավելի անձանց մասնակցությունը,

բ) մասնակից անձանց միջև առկա ամուր սուբյեկտիվ կապը, հանցանքը համատեղ կատարելու վերաբերյալ նախապես ձեռք բերված համաձայնությունը,

գ) հանցանքի կատարումը խմբի մեկ կամ մի քանի անդամների կողմից՝ այն պայմաններում, երբ խմբի մյուս անդամները կազմակերպել, դրդել կամ օժանդակել են հանցանքի կատարումը,

դ) հանցանքը համատեղ, միասնական ջանքերով կատարելը,

ե) յուրաքանչյուր անձի՝ հանցանքը համատեղ կատարելուն ուղղված դիտավորությունը,

զ) յուրաքանչյուրի գործողության համաձայնեցվածությունը մյուսի գործողության հետ, ինչն արտացոլում է հանցանքի կատարման վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի տեղեկացվածությունը:

(...) Նախնական համաձայնությամբ գործող անձանց պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մաս) հանցագործության մասնակիցները մինչև հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողություններն սկսելը պայմանավորվում են հանցանքը համատեղ կատարելու մասին: Ընդ որում, համաձայնությունը ձեռք է բերվում խմբի անդամների կողմից գործողությունների համատեղ կատարման ուղղվածության, հանցագործության կատարման տեղի, ժամանակի, եղանակի և միջոցների, ինչպես նաև խմբի անդամների միջև դերաբաշխման շուրջ: Հանցակցության այս ձևում հանցագործության կատարման մեխանիզմների կոնկրետացումը թերի է և ոչ լիարժեք, թերի են նաև հանցակիցների միջև դերակատարման բաշխումը և պայմանները:

Ի համեմատ նախնական համաձայնությամբ խմբի՝ կազմակերպված խմբի պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մաս) առկա է կազմակերպվածության առավել բարձր աստիճան: Հանցակցության այս ձևը բնութագրվում է պլանավորվածությամբ, մանրակրկիտ նախապատրաստվածությամբ, ինչպես նաև հանցակիցների միջև դերերի բաշխմամբ ու անդամների մասնագիտացվածությամբ: Կազմակերպված խմբի անդամները

ոչ թե պարզապես համաձայնության են գալիս հանցանքը համատեղ կատարելու մասին, ինչպես դա առկա է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանք կատարելու դեպքում, այլ համաձայնություն են ձեռք բերում մեկ կամ մի քանի հանցագործություն համատեղ կատարելու շուրջ»[1]:

12.1. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ, ի տարբերություն նախնական համաձայնության խմբի, կազմակերպված խումբն աչքի է ընկնում կազմակերպվածության առավել բարձր աստիճանով, կատարվող հանցանք(ներ)ի մանրակրկիտ պլանավորմամբ և հստակ դերաբաշխմամբ, խմբի անդամների միջև կայուն կապով: Կազմակերպված խմբի կայունությունը, միավորվածությունը և մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու անխախտ համաձայնությունը փաստելու տեսանկյունից կարևոր է գործի նյութերից բխող փաստական տվյալների բավարար ամբողջությամբ հիմնավորել հանցակցության այնպիսի կարևոր հատկանիշների առկայությունը, ինչպիսին հանցանքը կատարելու համատեղությունն է, խմբի անդամների միջև ամուր սուբյեկտիվ կապը: Այլ կերպ՝ թեև ամենևին պարտադիր չէ, որ խմբի անդամներն անձամբ ճանաչեն միմյանց, այնուամենայնիվ անհրաժեշտ է, որ կազմակերպված խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցի, որ մտնում է կայուն և միավորված խմբի կազմի մեջ, մասնակցում է խմբի անդամների փոխադարձ համաձայնությամբ կատարվող արարքներին կամ դրանց մի մասին, առկա է յուրաքանչյուր անձի՝ հանցանքը համատեղ կատարելուն ուղղված դիտավորություն, և յուրաքանչյուրի գործողությունը համաձայնեցված է մյուսների հետ, ինչն էլ արտացոլվում է հանցանքի կատարման վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի տեղեկացվածությամբ:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված է, որ Ա.Մովսիսյանը կազմակերպված խմբի կազմում ապօրինի կերպով ստացել, իր բնակարանում պահել, այնուհետև խմբի մյուս անդամներին է փոխանցել հրազեն և ռազմամթերք[2]:

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին ատյանի դատարանը սույն քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված բոլոր ապացույցները հանգամանորեն հետազոտել և օբյեկտիվ գնահատման է ենթարկել, հետևաբար վերաքննիչ բողոքը բավարարելու անհրաժեշտ ու բավարար հիմքեր առկա չեն[3]:

---

[1] Տե՛ս *Հ.Սարգսյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԼԴ/0136/01/10 որոշման 12-18-րդ կետերը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

13.1. Սույն գործի փաստական տվյալների վերլուծությունից բխում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Մովսիսյանի կողմից վերջինիս մեղսագրվող հանցավոր արարքը կազմակերպված խմբի կազմում կատարված լինելու փաստը հաստատված համարելիս հիմք է ընդունել, ի թիվս այլոց, Հ.Պետրոսյանի, Ս.Գալոյանի և Գ.Գրիգորյանի ցուցմունքները: Մասնավորապես՝

- **Հ.Պետրոսյանը դատաքննության ընթացքում** նշել է, որ Ա.Մովսիսյանի հետ զինված խմբի կամ հարձակման վերաբերյալ հարցեր ինքը չի քննարկել, խմբի այլ անդամների հետ Ա.Մովսիսյանի կապի մասին տեղեկություն չի ունեցել, իսկ **նախաքննության ընթացքում** Հ.Պետրոսյանը նշել է, որ զենքերը տեղափոխել են գաղափարակից ընկեր Ա.Մովսիսյանի՝ Ձորաղբյուր գյուղում գտնվող առանձնատուն, ում հետ ծանոթացել է էլեկտրաէներգիայի թանկացման պատճառով տեղի ունեցած հավաքների ժամանակ,

- **Ս.Գալոյանը դատաքննության ժամանակ** հայտնել է, որ 2016 թվականի մայիսին Հ.Պետրոսյանի հետ տաքսիով գնացել են Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղ՝ Հ.Պետրոսյանի ընկերոջ տանից զենքեր վերցնելու, ում ինքն այդ ժամանակ չի ճանաչել, իսկ **նախաքննության ընթացքում** Ս.Գալոյանը նշել է, որ 2016 թվականի մայիսի 15-ին Գ.Գրիգորյանից իմանալով Ա.Մովսիսյանի հեռախոսահամարը՝ զանգահարել, պայմանավորվել են վերջինի հետ, ապա ինքն ու Հ.Պետրոսյանը տաքսիով գնացել են հիշյալ ամառանոց,

- **Գ.Գրիգորյանը դատաքննության ժամանակ** ցուցմունք է տվել այն մասին, որ զենքերն ապահով վայրում պահելու համար ինքը զանգահարել է ՌԴ-ում գտնվող Ա.Մովսիսյանին և խնդրել, որ իր մոտ գտնվող ընկերոջ գործիքները ժամանակավորապես տեղափոխի նրա բնակարան: Ա.Մովսիսյանը չի առարկել՝ հայտնելով, որ դրանք կարող է տեղավորել իր նկուղում: **Նախաքննության ընթացքում** Գ.Գրիգորյանը հայտնել է, որ Ա.Մովսիսյանն իրենց ավագ ընկերն է, 2015 թվականի օգոստոսից գտնվում է ՌԴ-ում, տեղյակ է եղել ամենից, իրենց հանդիպումների ժամանակ հեռախոսով մի քանի անգամ զրուցել են նրա հետ, կիսվել պլաններից, խորհուրդ հարցրել, նույնիսկ հիշում է, որ նա իրենց խորհուրդ չէր տալիս խառնվել այդ ամենին: 2016 թվականի հունվարին նա մի քանի օրով եկել էր Հայաստան, և մտածելով, որ կրկին գնալու է ՌԴ, որոշել են զենքերն ու փամփուշտները տանել նրա՝ Ձորաղբյուրում գտնվող առանձնատուն, քանի որ ոչ ոք այլևս իրենցով և զենքերով չէր հետաքրքրվում:

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Մովսիսյանի կողմից վերջինիս մեղսագրվող հանցավոր արարքը կազմակերպված խմբի կազմում կատարված լինելու փաստը հաստատված համարելիս հիմք է ընդունել նաև Հրայր Թոփչյանի, Աշոտ Գուգուշյանի ցուցմունքները, ովքեր դատաքննության

ժամանակ հայտնել են, որ Ա.Մովսիսյանին չեն ճանաչում, նրա հետ որևէ առնչություն չեն ունեցել, վկաներ Վարուժան Մելքոնյանի, Սահակ Սահակյանի, Արման Հովսեփյանի ցուցմունքները, ինչպես նաև Հովհաննես Պետրոսյանի կողմից Սասունիկ Կիրակոսյանին ճանաչելու, Հովհաննես Պետրոսյանի կողմից ստվարաթղթե արկղը ճանաչելու, Սմբատ Գալոյանի գրպանից հայտնաբերված հատակագիծ-սխեման զննելու, ‹‹Սարդարապատ›› նախաձեռնության գրասենյակից հայտնաբերված զենքերի ցուցակը զննելու, Աշոտ Գուգուշյանի ավտոմեքենայից հայտնաբերված ստվարաթղթե արկղը զննելու արձանագրությունները, Հովհաննես Պետրոսյանի մասնակցությամբ կատարված տեղանքի զննության արձանագրությունները:

Ամբաստանյալ Ա.Մովսիսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Ժ.Սեֆիլյանին ճանաչում է որպես ազգային հերոսի, սակայն նրա հետ անձնական շփում չի ունեցել: 2015 թվականի օգոստոսին մեկնել է Ռուսաստանի Դաշնություն և այնտեղ զբաղվել շինարարությամբ՝ ներքին հարդարման աշխատանքներով[1]:

14. Սույն որոշման 13-13.1-րդ կետերում մեջբերված փաստական տվյալները գնահատման ենթարկելով սույն որոշման 12-12.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով ամբաստանյալ Ա.Մովսիսյանի կողմից հանցանքը կազմակերպված խմբի կազմում կատարելու հանգամանքը, չեն մատնանշել գործի նյութերից բխող կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կվկայեին խմբի հետ վերջինիս ունեցած ամուր և կայուն կապի, կազմակերպված խմբի կողմից պլանավորվող հանցագործության մասին տեղեկացվածության և հանցանքը համատեղ կատարելուն ուղղված դիտավորության, նրա ու կազմակերպված խմբի անդամներից յուրաքանչյուրի գործողությունների համաձայնեցվածության, նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու, Ա.Մովսիսյանի ունեցած կոնկրետ դերակատարության մասին:

Այսպես՝ Առաջին ատյանի դատարանի կողմից հիմք ընդունված Հ.Պետրոսյանի, Ս.Գալոյանի և Գ.Գրիգորյանի ցուցմունքները բավարար տվյալներ չեն պարունակում վերևում շարադրված՝ հանցավոր արարքը կազմակերպված խմբի կազմում կատարելը հաստատված համարելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ[2]: Ինչ վերաբերում է Հրայր Թոփչյանի, Աշոտ Գուգուշյանի, վկաներ Վարուժան Մելքոնյանի, Սահակ Սահակյանի, Արման Հովսեփյանի ցուցմունքներին, Հովհաննես Պետրոսյանի կողմից Սասունիկ Կիրակոսյանին ճանաչելու, Հովհաննես Պետրոսյանի կողմից ստվարաթղթե արկղը ճանաչելու, Սմբատ Գալոյանի գրպանից հայտնաբերված հատակագիծ-սխեման զննելու,

[1] Տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը:
[2] Տե՛ս սույն որոշման 13.1-րդ կետը:

‹‹Սարդարապատ›› նախաձեռնության գրասենյակից հայտնաբերված զենքերի ցուցակը զննելու, Աշոտ Գուգուշյանի ավտոմեքենայից հայտնաբերված ստվարաթղթե արկղը զննելու, Հովհաննես Պետրոսյանի մասնակցությամբ կատարված տեղանքի զննության արձանագրություններին, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ ապացույցները ևս չեն պարունակում որևէ փաստական տվյալ ամբաստանյալ Ա.Մովսիսյանի՝ կազմակերպված խմբի կողմից նախապատրաստվող հանցագործությունների մասին տեղյակ լինելու և նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու, խմբի մյուս անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների, նրանց միջև առկա սուբյեկտիվ կապի բնույթի, նրա դերակատարության վերաբերյալ:

14.1. Միաժամանակ սույն գործի հանգամանքներից բխում է, որ Ա.Մովսիսյանը 2015 թվականի օգոստոսին մեկնել է Ռուսաստանի Դաշնություն և գտնվել է այնտեղ, խմբի անդամներից շատերը նրան չեն ճանաչել, նրանց ցուցմունքներում առկա չէ որևէ տվյալ, ինչը թույլ կտար եզրահանգելու, որ Ա.Մովսիսյանը հանդես է եկել որպես կազմակերպված խմբի անդամ, իսկ Առաջին ատյանի դատարանի այն փաստարկները, որ թվարկված յուրաքանչյուր ապացույց այս կամ այն չափով փաստական տվյալներ է պարունակում մեղադրանքում նշված՝ կազմակերպված, զինված խմբի ձևավորման, դրա անդամների, ծրագրերի, գործունեության, խմբի տրամադրության տակ եղած զենքի, զինամթերքի, դրանց պահելու վայրերի, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ, վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ են, չեն վերաբերում ամբաստանյալի կողմից կատարված կոնկրետ գործողություններին:

Հետևաբար Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն առ այն, որ Ա.Մովսիսյանը գործել է կազմակերպված խմբի կազմում, պատշաճ կերպով հիմնավորված և պատճառաբանված չէ, չի բխում ապացույցների բավարար համակցությունից:

15. Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը նախաքննության ընթացքում ձեռք բերված բոլոր ապացույցները հանգամանորեն հետազոտել և օբյեկտիվ գնահատման է ենթարկել դատաքննության ընթացքում, և թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հանգեցնել դատական սխալի:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ թեև շարադրել է պաշտպան Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները[1], սակայն դատական ակտի պատճառաբանական հատվածում դրանց բավարար կերպով անդրադարձ չի կատարել՝ բավարարվելով միայն Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքները վերաշարադրելով:

[1] Տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող համապատասխանել դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ օրենսդրական պահանջին և դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զրկված է բողոքաբերի՝ սույն որոշման 9.1-րդ կետում բարձրացված փաստարկներին անդրադառնալու հանարավորությունից:

16. Ուստի, հիմք ընդունելով սույն որոշման 13-15-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով սույն որոշման 14-15-րդ կետերում արձանագրված խախտումները, օրենքով սահմանված կարգով պետք է հանգի համապատասխան հետևության:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ և 393-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և այն նոր քննության ուղարկելու համար:

17. Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցի հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Մովսիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը պետք է փոփոխել և վերջինիս նկատմամբ խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արթուր Ջարմայիլի Մովսիսյանի վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արթուր Զարմայիլի Մովսիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոփոխել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել ստորագրություն չհեռանալու մասին՝ Ա.Մովսիսյանին անհապաղ ազատելով կալանքից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0170/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ ամբաստանյալ՝ Ս.ԲԵՐԱԿՉՅԱՆԻ

2018 թվականի օգոստոսի 1-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սերգեյ Գուրգենի Բերակչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Բերակչյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի հուլիսի 28-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 09119616 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ Սերգեյ Բերակչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի սեպտեմբերի 9-ին քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 3-ի դատավճռով ամբաստանյալ Սերգեյ Բերակչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, և դատապարտվել է տուգանքի՝ 100.000 ՀՀ դրամի չափով: Ս.Բերակչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Ամբաստանյալ Ս.Բերակչյանի և նրա պաշտպան Հ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 3-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Բերակչյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ ամբաստանյալի բողոքը վերադարձվել է, և սահմանվել է 3-օրյա ժամկետ՝ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Ամբաստանյալ Ս.Բերակչյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ս.Բերակչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(…) 2016 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, իրենց երեխային խնամելու հարցի շուրջ Երևան քաղաքի Պ.Սևակի փողոցի 78 տան բակում վիճաբանել է նախկին կնոջ՝ Գայանե Հրանտի Քալաշյանի հետ, որի ընթացքում իր մոտ եղած խոհանոցային դանակով Գայանե Քալաշյանի հասցեին փվել է ապանության սպառնալիքներ:*

Այսինքն, Ա.Բերակչյանին մեղսագրվում է արարք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով»[1]:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(…) [Վ]երլուծելով և գնահատելով դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներն իրենց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ներքին համոզմամբ [Առաջին ատյանի դատարանն] ապացուցված է համարում, որ ամբաստանյալ Սերգեյ Գուրգենի Բերակչյանը*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 180-187:

կատարել է արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին, հետևաբար նա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի (…)»[1]:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(…) [Վ]երլուծության ու գնահատման ենթարկելով նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտած յուրաքանչյուր ապացույց՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցության՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ներքին համոզմամբ [Վերաքննիչ դատարանը] հանգում է հետևության, որ սույն գործով հաստատված է հետևյալը՝ Սերգեյ Բերակչյանը 2016 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, իրենց երեխային խնամելու հարցի շուրջ Երևան քաղաքի Պ.Սևակի փողոցի 78 տան բակում վիճաբանել է նախկին կնոջ՝ Գայանե Հրանտի Քալաշյանի հետ, որի ընթացքում իր մոտ եղած խոհանոցային դանակով Գ.Քալաշյանի հասցեին տվել է սպանության սպառնալիքներ»*[2]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, ըստ բողոքաբերի, խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 7-րդ, 8-րդ, 18-րդ, 23-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը, վերլուծելով ապացույցների գնահատման և դրանց բավարարության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, համադրել է դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և եզրահանգել, որ ստորադաս դատարաններն ապացույցների գնահատման ընթացքում չեն պահպանել ինչպես քրեադատավարական օրենսդրությամբ, այնպես էլ հիշյալ նախադեպային որոշմամբ սահմանված չափանիշները՝ իր մեղավորության վերաբերյալ գալով սխալ եզրահանգման:

Բացի այդ, բողոքի հեղինակը շեշտել է, որ ստորադաս դատարաններն առավել նշանակություն են տվել տուժող Գ.Քալաշյանի, վերջինիս հետ բարեկամական կապերի մեջ գտնվող, սույն գործով վկա Ն.Խլղաթյանի ու

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 366-368:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 46-59:

անչափաս վկա Հ.Քալաշյանի ցուցմունքներին և անտեսել են իր և վկա Պ.Աբրահամյանի ցուցմունքները՝ դրանք համարելով ոչ արժանահավատ:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը, ճանաչել և հռչակել իր անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, ինչպես նաև վերացնել իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք ամբաստանյալ Ս.Բերակչյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բարձրացված հարցին պատասխանելու նպատակով անհրաժեշտ է վերլուծության ենթարկել սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիք տալու (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մաս) հանցակազմի առանձնահատկությունները, ինչպես նաև նշված հոդվածով առաջադրված մեղադրանքի ձևակերպմանը ներկայացվող քրեադատավարական պահանջները:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի համար, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել:

Նշված հանցակազմի առանձնահատկությունների առնչությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. *«(…) Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ակտիվ գործողություններով սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքով: Սպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության կամ գույքի համար անհանգստության զգացում: (…) [Հ]անցակազմի պարտադիր հատկանիշներից են սպառնալիքի կոնկրետությունը և իրական լինելը: Տվյալ դեպքում կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը՝ սպանել, առողջությանը ծանր վնաս պատճառել, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել, իսկ իրական լինելը՝ երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: (…) [Ե]ւ*

սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար պետք է սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է: (...) Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: (...)»[1]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ մեղադրանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորումն է՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով տվյալ հանցագործությունը նախատեսող քրեական օրենքի նորմերը:*»

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Գ.Ճաղարյանի և այլոց* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, *որ «(...) Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է, և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը (...)»*[1]:

Գ.Ճաղարյանի և այլոց գործով որոշման մեջ մեղադրանքի ձևակերպումը դիտարկելով որպես արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման, ինչպես նաև հանցակիցների քրեաիրավական պատասխանատվության անհատականացման միջոց՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) [Մեղադրանքի ձևակերպման մեջ], բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս*

[1] Տես, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի՝ *Վլադիկ Խաչատրյանի* գործով թիվ ԿԴ1/0025/01/01 որոշման 17-20-րդ կետերը:
[2] Տես *Գրիգոր Խաչատուրի Ճաղարյանի* և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 15-րդ կետը:

սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայազրկման (...)»[1]:

13. Վերահաստատելով *Գ.Ճաղարյանի և այլոց գործով* որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների (անգործության) մանրակրկիտ նկարագրությունը, այդ թվում՝ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները, որի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պաշտպանության իրավունքի իրականացումը:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 11-13-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքի ձևակերպումը պետք է ներառի նշված քրեաիրավական նորմով նախատեսված, հանրորեն վտանգավոր և քրեորեն պատժելի արարքի բոլոր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Այլ խոսքով՝ արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքներով պետք է հաստատվի ոչ միայն սպառնալիքի առկայության փաստը, այլև բացահայտվի սպառնալիքի բովանդակությունը, մասնավորապես՝ թե հանցանք կատարած անձն ինչպես է իրականացրել տուժողի մոտ տագնապի, սեփական անվտանգության կամ գույքի համար անհանգստության զգացում ձևավորելու իր հանցավոր մտադրությունը, ինչը հնարավորություն կտա գնահատելու քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի, այն է՝ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց նշված փաստական հանգամանքները պարզելու և մեղադրանքի ձևակերպման մեջ արտացոլելու, հնարավոր չէ արարքը որակել սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիք տալու հանցակազմով:

14. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սերգեյ Բերակչյանին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, և առաջադրված մեղադրանքը շարադրվել է

[1] Տե՛ս նույն որոշման 21-րդ կետը:

հետևյալ կերպ. *«2016 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 22.30-ի սահմաններում, իրենց երեխային խնամելու հարցի շուրջ Երևան քաղաքի Պ.Սևակի փողոցի 78 տան բակում վիճաբանել է նախկին կնոջ՝ Գայանե Հրանտի Քալաշյանի հետ, որի ընթացքում իր մոտ եղած խոհանոցային դանակով Գայանե Քալաշյանի հասցեին տվել է սպանության սպառնալիքներ»*[1]:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ քրեական հետապնդումն իրականացնող մարմինը, ամբաստանյալ Ս.Բերակչյանին մեղադրանք առաջադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրանքի ձևակերպման մեջ չի ներառել կատարված արարքի քրեաիրավական որակման համար անհրաժեշտ այն փաստական տվյալները, որոնք պետք է բնութագրեին հանցակազմի տարրերից օբյեկտիվ կողմի բոլոր պարտադիր հատկանիշները և հնարավորություն տային փաստելու դրանց առկայությունը: Մեղադրանքի կողմը սահմանափակվել է կատարած արարքի ընդհանրական նկարագրությամբ, այն է՝ *«խոհանոցային դանակով Գ.Քալաշյանի հասցեին տվել է սպանության սպառնալիքներ»*:

Մեղադրանքի վերոշարադրյալ ձևակերպումը չի բացահայտում սպանության սպառնալիքի բովանդակությունը, մասնավորապես՝ չի կոնկրետացվել մեղսագրված հանցավոր արարքի կատարման ժամանակ ամբաստանյալի գործողությունների շրջանակը, ինչը բացառում է հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշի՝ սպառնալիքի իրական լինելու վերաբերյալ պատշաճ իրավական գնահատական տալու հնարավորությունը:

Մինչդեռ թե՛ Առաջին ատյանի դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանն իրենց դատական ակտերով արձանագրել են, որ ամբաստանյալ Ս.Բերակչյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով ճիշտ է որակված, որի համար նա ենթակա է պատժի[2]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ս.Բերակչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ մեղավոր ճանաչելիս պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, որ ամբաստանյալ Ս.Բերակչյանին առաջադրված մեղադրանքում չեն ներառվել հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները:

Այսպես՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ սույն գործով առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե մեղսագրված արարքն ինչումն է արտահայտվել, պարզ չէ, թե ինչպես է ամբաստանյալն իրականացրել իր հանցավոր մտադրությունը, այսինքն՝ ինչպիսի ձև և

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

բովանդակություն է ունեցել մեղսագրված արարքի պարտադիր հատկանիշ հանդիսացող՝ սպանության սպառնալիքը, հետևաբար հանցակազմի մյուս պարտադիր հատկանիշի՝ սպառնալիքի իրական լինելու վերաբերյալ պատշաճ իրավական գնահատական տալու հնարավորությունը բացակայում է: Մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում խախտվել է քրեական օրենքով արգելված արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքը՝ տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի փաստական հիմքերի մասին, որպիսի պայմաններում չի ապահովվել ամբաստանյալի պաշտպանության իրավունքի իրացումը, ինչն էլ, իր հերթին, անհնար է դարձրել արդար դատաքննության հիմնարար իրավունքի պահանջները բավարարող դատաքննության անցկացումը:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սերգեյ Բերակչյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանության սպառնալիքի հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջադրված մեղադրանքի սահմաններում ամբաստանյալ Ս.Բերակչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն անփոփոխ թողնելիս նաև Վերաքննիչ դատարանն առաջադրված մեղադրանքի ձևակերպմանը ներկայացվող քրեադատավարական պահանջների համատեքստում համարժեք իրավական գնահատական չեն տվել մեղադրանքում ձևակերպված՝ հանրորեն վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությանը: Արդյունքում ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

17. Նախորդ կետում նշված խախտումները, որոնք ազդել են ամբաստանյալ Ս.Բերակչյանի մեղավորության հարցը որոշելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Ս.Բերակչյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճելու:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Ս.Բերակչյանի նկատմամբ կիրառված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն անհրաժեշտ է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սերգեյ Գուրգենի Բերակչյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 3-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը բեկանել, ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Սերգեյ Գուրգենի Բերակչյանին ճանաչել անմեղ և արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Ամբաստանյալ Սերգեյ Գուրգենի Բերակչյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0007/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
շահագրգիռ անձ՝ Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

2018 թվականի օգոստոսի 1-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի հուլիսի 10-ին Ավետիս Աբրահամի Աբրահամյանը ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետին դիմում է ներկայացրել այն մասին, որ 2013 թվականին Արմավիրի մարզի Լենուղի գյուղի բնակիչ Գագիկ Սերյոժայի Հովսեփյանից 400.000 ՀՀ դրամով գնել է 200 հատ «Կառլիկ» տեսակի ընկուզենու տնկի, սակայն հետագայում պարզել է, որ դրանք անորակ են և բերք չեն տալիս:

2017 թվականի հուլիսի 20-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ Է.Աբրահամյանը (այսուհետ՝ նաև Հետաքննության մարմին) որոշում է կայացրել Ա.Աբրահամյանի դիմումի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և Գ.Հովսեփյանի նկատմամբ քրեական

հետապնդում չիրականացնելու մասին՝ վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ա.Աբրահամյանի բողոքն Արմավիրի մարզի դատախազի՝ 2017 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ մերժվել է:

2. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2017 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ բավարարել է դիմող Ա.Աբրահամյանի բողոքը և պարտավորեցրել վարույթն իրականացնող մարմնին վերացնել վերջինիս իրավունքների խախտումը:

3. Դատախազ Է.Բաբայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունվարի 16-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ որոշում կայացնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 16-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու և Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 20-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշման համաձայն՝ *«(...) [Դ]ատարանը, հետազոտելով դիմում-բողոքը և մերժված նյութերը, լսելով բողոքաբերին, դատախազին, ՀՈՒԲ տեսուչին, նրանց հիմնավորումներն ու պատճառաբանությունները, հանգում է նրան, որ բողոքում բարձրացված հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ է վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, հնարավորություն տալ բողոքաբերին ներկայացնելու իր պահանջները հիմնավորող փաստեր և ելակետային փվյալների առկայության դեպքում նշանակել փորձաքննություններ, որից հետո միայն լուծել նյութերի վերջնական ընթացքը:*

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 290, 437-438 հոդվածներով, դատարանը [որոշեց] Ավետիս Աբրահամի Աբրահամյանի դիմում-բողոքը՝ ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի ՀՈՒԲ տեսուչ Էդիկ Աբրահամյանի 20.07.2017թ. կայացրած քրեական գործ հարուցելը մերժելու

մասին և ՀՀ Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանի 08.09.2017թ. կայացված բողոքը մերժելու մասին որոշումների դեմ բավարարել՝ ճանաչելով հիմնավորված, և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել Ավետիս Աբրահամի Աբրահամյանի իրավունքների խախտումը: (...)»[1]:

6. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ վերաքննիչ բողոքը, ի թիվս այլոց, պարունակել է հետևյալ հիմնավորումները. *«(...) Նյութերի նախապատրաստման ընթացքում Ա.Աբրահամյանը բացատրությամբ հայտնել է, որ տնկիները գնելուց շուրջ 4 տարի անց, երբ դրանք սկսել են չորանալ, ինքը տնկիներն ուղարկել է հետազոտության և պարզվել է, որ տնկիները վարակվել են «Քաղցկեղ» հիվանդությամբ, որն էլ հանդիսացել է տնկիների չորացման պատճառ: Գ.Հովսեփյանն իրեն վաճառել է անորակ տնկիներ, որի պատճառով դրանք չորացել են և նշված եղանակով Գ.Հովսեփյանն իր նկատմամբ կատարել է խարդախություն (...)»*[2]:

6.1 Օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ. *«(...) [Հ]անցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի հետևությունները չեն բխում նախնական ստուգման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների բովանդակությունից, քրեական հետապնդում իրականացնող մարմինը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնելիս որևէ գործողություն չի ձեռնարկել իր կողմից տրված հաղորդման հանգամանքների վերաբերյալ Ավետիս Աբրահամյանից բացատրություն վերցնելու և դրանք հիմնավորող փաստեր ներկայացնելու ուղղությամբ: Որևէ գործողություն չի ձեռնարկվել նաև պարզելու համար վաճառված տնկիների տեսակը և 4 տարվա ընթացքում /հենց առաջին տարում/ չբացվելու պատճառները, համապատասխան փորձաքննություններ չեն նշանակվել, որպիսի պայմաններում խախտվել են դիմող Ավետիս Աբրահամյանի իրավունքները:*

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ըստ էության դատական ակտի պատճառաբանական մասը հիմնավոր ու պատճառաբանված է: Սակայն եզրափակիչ մասում իրոք Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտում՝ պարտավորեցնելով քրեական վարույթն իրականացնող մարմնին վերացնել Ավետիս Աբրահամյանի խախտված իրավունքներն ու օրինական շահերը:

(...)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված այդ խախտումը կարող է վերացնել Վերաքննիչ

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 25:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին թերթեր 67-68

դատարանը՝ որոշման եզրափակիչ մասը ձևակերպելով օրենքի պահին համապատասխան: Առաջին ատյանի դատարանի դատական ակտի եզրափակիչ մասի ձևակերպումը պետք է փոփոխել հետևյալ ձևակերպումով՝ վերացնել ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի ՀՈՔ պետուչ Է.Աբրահամյանի 2017 թվականի հուլիսի 20-ի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը:

Ուստի Առաջին ատյանի դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ վերը նշված ձևակերպումով, իսկ Արմավիրի մարզի դատախազության դատախազ Է.Բաբայանի վերաքննիչ բողոքը մերժել: (...)»[1]:

7. Դիմող Ա.Աբրահամյանի բողոքի կապակցությամբ կազմված նյութերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի պետի՝ 2017 թվականի հոկտեմբերի 13-ի գրությամբ Առաջին ատյանի դատարան են ուղարկվել 23 թերթից բաղկացած՝ Ա.Աբրահամյանի դիմումի վերաբերյալ նախապատրաստված և մերժված քրեական գործի նյութերը[2]:

7.1 Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 16-ի գրությամբ բողոքի վերաբերյալ դատարան ստացված նյութերը վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին[3]:

7.2 Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Վերաքննիչ դատարան չեն ուղարկվել կամ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը[4]:

7.3 Բողոքի կապակցությամբ կազմված նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը[5]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

8.1. Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով քննության առնելով, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ *Համբարձում Հարությունյանի* վերաբերյալ գործով

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 70-71:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 13:
[3] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 28:
[4] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին:
[5] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին:

որոշման պահանջները: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը կայացրել է վարույթն իրականացնող մարմնին Ա.Աբրահամյանի իրավունքների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ որոշում, որի իրավունքը չուներ: Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը դատական ակտ կայացնելիս ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437-րդ և 438-րդ հոդվածներով, որոնք կարգավորում են դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հանգամանքները և վերաբերելի չեն քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննությանը:

8.2. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ չնայած Առաջին ատյանի դատարանը վկայակոչել է *Գագիկ Ղևոնդյանի* վերաբերյալ գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, կայացրել է հենց այդ դիրքորոշմանը հակասող որոշում՝ նշելով, որ սույն գործով անհրաժեշտ է նշանակել փորձաքննություններ: Ըստ բողոքի հեղինակի՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը որևէ պատճառաբանություն չի պարունակում ենթադրյալ փաստարկների հնարավոր առկայության պայմաններում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության մասին, դատարանի այդ հետևությունն առավել քան անորոշ է, քանի որ պարզ չէ՝ ինչ փաստարկի կամ փորձաքննությունների մասին է խոսքը:

8.3. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են նաև *Լիա Ավետիսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես՝ դիմող Ավետիս Աբրահամյանի և Գագիկ Հովսեփյանի միջև ծագած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, ուստի անթույլատրելի է դրանք քրեադատավարական հարթության մեջ լուծելը: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 518-րդ հոդվածը մանրամասն կարգավորում է առուվաճառքի պայմանագրի դեպքում անորակ ապրանք գնելու իրավական հետևանքները:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել դիմող Ա.Աբրահամյանի բողոքը բավարարելու մասին Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 16-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումները՝ մերժելով դիմող Ավետիս Աբրահամյանի բողոքը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորվա՞ծ է արդյոք Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 20-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դատական ստուգման արդյունքում Վերաքննիչ դատարանի

կայացրած դատական ակտն այն պայմաններում, երբ նշված որոշման դեմ Ա.Աբրահամյանի բողոքի վերաբերյալ նյութերը Վերաքննիչ դատարան չեն ներկայացվել:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:*

(…)

4. (…) քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«4. (…) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (…)»:*

12. Վճռաբեկ դատարանը կրկնում է մեջբերված նորմերի վերլուծության հիման վրա իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը դատարանին պարտավորեցնում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու վերաբերյալ յուրաքանչյուր բողոք ենթարկել մանրակրկիտ ստուգման, իսկ որպեսզի դատարանն իրականացնի իր լիազորությունը, օրենսդիրը սահմանել է վարույթն իրականացնող մարմնի պարտավորությունը՝ դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս)[1]:

13. Վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքի քննության դատական վարույթի օբյեկտը բողոքի կապակցությամբ ներկայացված նյութերն են, որոնց հիման վրա դատարանը գնահատում է անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայությունը: Նշված նյութերով է պայմանավորված դատարանի կողմից մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության ու հիմնավորվածության

[1] Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշման 12-րդ և 15-րդ կետերը:

պատշաճ ստուգում իրականացնելու և դրա արդյունքում հիմնավորված եզրահանգումներ կատարելու օբյեկտիվ հնարավորությունը: Նույն կերպ վերադաս դատական ատյանը մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դատական ստուգման արդյունքում կայացված դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս պետք է հիմք ընդունի բողոքը քննելիս ստորադաս ատյանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համատեքստում համապատասխան գնահատական տա բողոքաբերի փաստարկներին: Հակառակ դեպքում վերադաս դատական ատյանի որոշումը չի համապատասխանի դատական ակտերին ներկայացվող օրինականության և հիմնավորվածության պահանջներին՝ հանգեցնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի խախտման[1]:

14. Վերոշարադրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված իրավական դիրքորոշումներ կիրառելի են նաև այն դեպքում, երբ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկան քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն է:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը, 2016 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ բավարարել է Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 20-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը[2], այնուհետև 2017 թվականի նոյեմբերի 16-ի գրությամբ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին[3]: Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Վերաքննիչ դատարան չեն ներկայացվել Հետաքննության մարմնի նշված որոշման դեմ Ա.Աբրահամյանի բողոքի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը[4]:

16. Նախորդ կետում շարադրված փաստերը վերլուծելով սույն որոշման 12-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հետաքննության մարմնի որոշման դեմ բողոքի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած և Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված նյութերը Վերաքննիչ դատարանի կողմից չեն հետազոտվել, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող գնահատվել որպես օրինական և հիմնավորված:

[1] Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Պյեր Ժան Մուրադյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0143/11/14 որոշման 14-15-րդ կետերը:
[2] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 7.2-րդ կետը:

17. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ Վերաքննիչ դատարանը, իր տրամադրության տակ չունենալով Հետաքննության մարմնի որոշման դեմ բողոքի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած և Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված նյութերը, իր որոշման մեջ փաստել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս որևէ գործողություն չի ձեռնարկվել Ա.Աբրահամյանի հաղորդման հանգամանքների վերաբերյալ նրանից բացատրություն վերցնելու և դրանք հիմնավորող փաստեր ներկայացնելու ուղղությամբ[1], այնինչ դատախազ Է.Բաբայանն իր վերաքննիչ բողոքում նշել է Ա.Աբրահամյանից ստացված բացատրությունների մասին[2]:

18. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրինական և հիմնավորված չէ Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 20-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դատական ստուգման արդյունքում Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտն այն պայմաններում, երբ նշված որոշման դեմ Ա.Աբրահամյանի բողոքի վերաբերյալ նյութերը Վերաքննիչ դատարան չեն ներկայացվել:

19. Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ քանի որ Հետաքննության մարմնի որոշման դեմ դիմող Ա.Աբրահամյանի բողոքի վերաբերյալ Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը 2017 թվականի նոյեմբերի 16-ին վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին[3], Վերաքննիչ դատարանում առկա չեն եղել և Վճռաբեկ դատարանում էլ առկա չեն վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանին անհրաժեշտ փաստական հիմքերը, ուստի բացակայում է եղած նյութերով սույն գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության ու հիմնավորվածության պատշաճ ստուգում իրականացնելու և դրա արդյունքում հիմնավորված և վերջնական եզրահանգումներ կատարելու օբյեկտիվ հնարավորությունը: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, Հետաքննության մարմնի որոշման դեմ բողոքի կապակցությամբ կազմված նյութերին չկցելով և վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելով բողոքարկված որոշման հիմնավորվածությունը հաստատող նյութերը, սահմանափակել է իր կողմից կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը:

20. Ուստի, նման պայմաններում Վճռաբեկ դատարանը զրկված է Ա.Աբրահամյանի և Գ.Հովսեփյանի միջև ծագած իրավահարաբերությունների՝ քաղաքացիաիրավական բնույթի մասին բողոքաբերի փաստարկներն ըստ էության քննարկելու և ստորադաս դատարանների որոշումներին այդ մասով

[1] Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

իրավական գնահատական տալու հնարավորությունից[1]՝ միաժամանակ կրկնելով, որ քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել այն դեպքերում, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմերի գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը, այդ թվում՝ վերջնական որոշումների օրինականության նկատմամբ հետագա դատական վերահսկողությունը, չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ[2]:

21. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանը, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով քննության առնելով, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների պահանջները[3]՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ քրեական գործի հարուցման և նախաքննության փուլերում իրականացվող հետագա դատական վերահսկողության սահմաններն ու դրանց արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները տարբեր են: Մասնավորապես, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում դատարանը պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով քննության առնի բողոքը և կայացնի համապատասխան դատական ակտ վիճարկվող որոշումը վերացնելու մասին, որը պարտադիր է դարձնում քրեական գործի հարուցումը, կամ այն հաստատելու մասին[4]:

22. Վճռաբեկ դատարանը նաև փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված վերաքննիչ դատարանի լիազորությունները պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող նոր դատական ակտերի նկատմամբ: Այլ կերպ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորություններով[5]:

[1] Տե՛ս սույն որոշման 8.3-րդ կետը:
[2] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տատյանա Բելյավցևայի և Շահեն Գևորգյանի* գործով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱՆԴ/0025/11/16 գործով որոշման 12.1-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը:
[4] Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Գագիկ Ղևոնդյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշումը, Վճռաբեկ դատարանի՝ Անժելա Հարությունյանի գործով 2017 թվականի ապրիլի 4-ի թիվ ԵԿԴ/0104/11/16 որոշման 17.1-րդ կետը:
[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Արցախբանկ» ՓԲՀ-ի* գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշման 11-րդ կետը:

23. Վերոշարադրյալի հաշվառմամբ սույն գործի առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու շրջանակներում որոշում է կայացրել անձի իրավունքների ու ազատությունների խախտումները վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելու մասին[1]: Վերաքննիչ դատարանը, իր դատական ակտում վկայակոչելով ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասը, այնպես էլ Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, գտել է, որ թեև Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտում՝ պարտավորեցնելով քրեական վարույթն իրականացնող մարմնին վերացնել Ա.Աբրահամյանի խախտված իրավունքների ու օրինական շահերի խախտումները, սակայն Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված այդ խախտումը կարող է վերացվել՝ որոշման եզրափակիչ մասը փոփոխելով հետևյալ ձևակերպումով՝ «վերացնել ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի ՀՈԲ տեսուչ Է.Աբրահամյանի 2017 թվականի հուլիսի 20-ի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը»: Արդյունքում Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ մերժելով վերաքննիչ բողոքը[2]:

24. Նախորդ կետում մեջբերված հանգամանքները վերլուծելով սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության արձանագրելով Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումը և վիճարկվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, փոփոխել է դրա եզրափակիչ մասը՝ արդյունքում կայացնելով ՀՀ քրեադատավարական օրենքով չնախատեսված դատական ակտ, ինչը ՀՀ քրեադատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտում է:

Ուստի իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով միաժամանակ այդ որոշման եզրափակիչ մասը փոփոխելը:

25. Հաշվի առնելով սույն որոշման 18-րդ և 24-րդ կետերում արված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 185-րդ, 394-րդ հոդվածների խախտումներ, որոնք հանգեցրել են անօրինական և չհիմնավորված

[1] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

դատական ակտեր կայացնելուն: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և քննարկման առարկա դարձնի բողոքաբերի՝ սույն որոշման 8.2-8.3-րդ կետերում նշված փաստարկները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Ավետիս Աբրահամյանի բողոքը բավարարելու մասին Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 16-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ2/0008/12/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ԲՐՈՒՏՅԱՆԻ
դատապարտյալ՝ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 26-ի դատավճռով Անուշ Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով (երեք դրվագ), և նրա նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Նույն դատավճռով վերացվել է Ա.Մարտիրոսյանի նկատմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 13-ի դատավճռով ԼՂՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով հանցանքների համակցությամբ նշանակված՝ 3 (երեք) տարի

ժամկետով ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելը, և դատավճիռների համակցությամբ՝ նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2015 թվականի նոյեմբերի 19-ից:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 26-ի դատավճռով ԼՂՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով որակված արարքները համապատասխանեցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասին, իսկ նշանակված 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկումը թողնվել է անփոփոխ:

3. ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» ՔԿՀ-ի միջնորդության քննության արդյունքում Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2017 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի պատժի չկրած մասը՝ 2 (երկու) տարի 2 (երկու) ամիս 25 (քսանհինգ) օր ժամկետով ազատազրկումը, փոխարինել է 2200 ժամ հանրային աշխատանքներով:

4. Դատախազ Ա.Բրուտյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի նոյեմբերի 21-ին բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 25-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Առաջին ատյանի դատարանը որոշմամբ արձանագրել է. *«(…) Դատարանը գտնում է, որ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատժի մնացած մասը հնարավոր է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով:*

(…) Միևնույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասում առկա իրավակարգավորումը խոչընդոտ չէ դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար:

Դատարանի գնահատմամբ քննարկվող իրավանորմի այն կարգավորումը, որ հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ, վերաբերում է նույն հոդվածի 3-րդ մասի կիրառությամբ ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերին: Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի գործադրման դեպքում այդ արգելքը կիրառելի չէ, հակառակ դեպքում քննարկվող ինստիտուտն ամբողջությամբ կիմաստազրկվի և ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հնարավորությունը պրակտիկայում կբացառվի:

(...)

Ուստի, Դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 26-ի դատավճռով նշանակված պատժի մնացած մասը՝ 2 տարի 2 ամիս 25 օր ազատազրկումը, պետք է փոխարինել 2200 ժամ հանրային աշխատանքներով: (...)»[1]:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Հարկ է (...) արձանագրել, որ օրենսդիրը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման ձևով նշանակված պատժի մեկ երրորդը կրած դատապարտյալի պատժի չկրած մասն ազատազրկումից ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու որևէ սահմանափակում չի նախատեսել, որը կարող էր պայմանավորված լինել նշանակված պատժի կամ դրա չկրած մասի չափով: Հետևապես հիմքեր չկան չհամաձայնելու Առաջին ատյանի դատարանի՝ (...) մեկնաբանության առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումը, միայն այն պատճառով, որ դատապարտյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի ժամկետը և (կամ) դրա չկրած մասը երկու տարուց ավելի է, խոչընդոտ չի հանդիսանում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման ձևով նշանակված պատժի մեկ երրորդը կրած դատապարտյալի պատժի չկրած մասն ազատազրկումից ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար: Հակառակ դեպքում քննարկվող ինստիտուտն ամբողջությամբ կիմաստազրկվի և ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հնարավորությունը կբացառվի:*

(...) [Վերը] ներկայացված դիրքորոշման լույսի ներքո [բողոքի հեղինակի մեկնաբանություններն ու դատողությունները] Վերաքննիչ դատարանի համար անընդունելի են և հիմնազուրկ:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի

[1] Տես նյութեր, հատոր 1-ին, թերթեր 22-30:

դատարանը դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու նպատակահարմարության հարցում հանգել է իրավաչափ ու գործի փաստական տվյալներից բխող հիմնավոր հետևության (…)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ, 54-րդ և 77-րդ հոդվածները, ինչի արդյունքում դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ չի ուսումնասիրվել և գնահատվել դատապարտյալի կողմից կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, վերջիններիս հետ համակցության մեջ՝ դատապարտյալի անձը, պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագիծը և այդ պայմաններում՝ Ա.Մարտիրոսյանի կողմից նոր հանցանք կատարելու հավանականության բարձր աստիճանը:

8.1. Միևնույն ժամանակ անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածին՝ բողոքաբերը փաստարկել է, որ հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու և այդպիսի հանցագործության համար առավելագույնը 2 տարի ժամկետով ազատազրկման դատապարտվելու դեպքում: Ուստի, ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման ձևով պատժի չկրած մասը դատարանը կարող է փոխարինել հանրային աշխատանքներով, եթե դատապարտյալի պատժի չկրած մասը չի գերազանցում երկու տարի ժամկետը, մինչդեռ սույն գործով Ա.Մարտիրոսյանի պատժի չկրած մասը կազմել է 2 տարի 2 ամիս 25 օր:

Արդյունքում բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանը, դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը փոխարինելով ավելի մեղմ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով, և հանրային աշխատանքների չափ սահմանելով 2200 ժամ, թույլ է տվել դատական սխալ:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի պատժի չկրած մասն

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 96-106:

ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը, և նրան ուղարկել պատժի չկրած մասը կրելու:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը՝ 2 (երկու) տարի 2 (երկու) ամիս 25 (քսանհինգ) օր ժամկետով ազատազրկումը, հանրային աշխատանքներով փոխարինելու մասին ստորադաս դատարանների հետևությունը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկում կրող անձի պատժի չկրած մասը դատարանը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով (...):*

2. Պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով դատապարտյալի կողմից պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը փաստացի կրելուց հետո:

3. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելիս դատարանը կարող է ընտրել սույն օրենսգրքի 49-րդ հոդվածում նշված պատիժներին համապատասխան ցանկացած ավելի մեղմ պատժատեսակ՝ յուրաքանչյուր պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«(...) Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե դատապարտյալը բավարարում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով դրա համար սահմանված պահանջներին»:*

Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանը *Ա.Մկրտչյանի* գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու իրավազորությունը սահմանելիս օրենսդիրն օգտագործել է «կարող է» ձևակերպումը՝ այդպիսով դատարանին հնարավորություն տալով դատական հայեցողության ընդհանուր հատկանիշների հիման վրա ընտրություն կատարել ազատազրկման ձևով անձի նկատմամբ*

նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կամ չփոխարինելու վերաբերյալ որոշումների միջև, ինչպես նաև ընտրել այն պատժատեսակն ու պատժաչափը, որով պետք է փոխարինվի ազատազրկման ձևով նշանակված պատիժը

(…) ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասն ընդհանուր չափորոշիչ է սահմանում՝ դատարանին հնարավորություն տալով կոնկրետ դեպքում իր հայեցողության շրջանակներում պատժաչափ ընտրել ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր պատժատեսակի համար նախատեսված սահմաններում: ՀՀ քրեական օրենսգրքում ընդհանուր չափորոշիչի առկայությունը ենթադրում է, որ դատարանը, սահմանափակված լինելով դատական հայեցողության օրինականության, հիմնավորվածության և արդարացիության հատկանիշներով, ինչպես նաև կոնկրետ պատժատեսակի համար ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում նախատեսված նվազագույն և առավելագույն չափերով ու կիրառման պայմաններով, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշի, թե ինչ պատժաչափ պետք է սահմանվի այն անձի նկատմամբ, ում պատժի չկրած մասը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով»[1]:

13. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտը հնարավորություն է տալիս **որոշակի պայմանների առկայության դեպքում** դատարանի կողմից նշանակված ազատազրկման ձևով պատժի չկրած մասը փոխարինել դատապարտյալի իրավունքների ավելի մեղմ սահմանափակում նախատեսող պատժատեսակով: Տվյալ ինստիտուտը պատժից ազատելու ինքնուրույն տեսակ է, որի գործադրման համար անհրաժեշտ է դատարանի համոզվածությունն առ այն, որ դատապարտյալն ուղղվելու համար իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված մնացած մասը կրելու կարիք չունի, և այն կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով՝ հաշվի առնելով պատժի կրման ընթացքում վերջինիս դրսևորած պատշաճ վարքագիծը, իսկ դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու ցածր հավանականությունը գնահատելիս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքները:

Ընդ որում, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կարող է փոխարինվել, եթե առկա են հետևյալ հիմնական պայմանները՝

ա) անձն ազատազրկման է դատապարտվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար,

բ) դատապարտյալը փաստացի կրել է պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը:

[1] Տե՛ս *Արմեն Մկրտչյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԱՐԱԴ/0031/12/13 որոշման 12-րդ, 15-րդ կետերը:

Ինչ վերաբերում է այն պատժատեսակին և պատժաչափին, որով կարող է փոխարինվել ազատազրկման չկրած մասը, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է ընտրել ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում նախատեսված՝ ազատազրկումից մեղմ ցանկացած պատժատեսակ՝ յուրաքանչյուրի համար օրենսգրքով նախատեսված նվազագույն և առավելագույն չափերի սահմաններում:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:*

2.1. Հանրային աշխատանքները նշանակվում են երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով: (…)»:

Մեջբերված նորմից երևում է, որ հանրային աշխատանքները հանդես են գալիս որպես ազատազրկում պատժատեսակին այլընտրանք և կարող են նշանակվել այն դեպքում, երբ անձը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատապարտվում է առավելագույնը **երկու տարի** ժամկետով ազատազրկման: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոհիշյալ իրավակարգավորումը, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված լինելու պայմանը չի կարող խոչընդոտ լինել ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի կարգով դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն այն դեպքերում, երբ նշանակված պատժի մեկ երրորդը փաստացի կրած լինելու դեպքում պատժի չկրած մասը երկու տարուց ավել է կազմում:

Այսպես՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը, ինչպես նշվել է սույն որոշման 13-րդ կետում, պատժից ազատելու ինքնուրույն տեսակ է և ունի ինքնավար բնույթ, որի գործադրման համար, ի թիվս այլոց, անհրաժեշտ է դատապարտյալի կողմից նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդի կրում, իսկ հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի հիշյալ պայմանի խստացման՝ որոշ դեպքերում վտանգելով քննարկվող ինստիտուտի գործնական կիրառման հնարավորությունը: Օրինակ՝ եթե միջին ծանրության հանցագործության համար անձը դատապարտվում է հինգ տարի ժամկետով ազատազրկման, ապա վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կպահանջվի կրել ավելին, քան պատժի մեկ երրորդն է, քանի որ դեռևս չկրած պատժի չափը կգերազանցի երկու տարի ժամկետով ազատազրկումը: Արդյունքում կստացվի, որ ազատազրկման մեկ երրորդը կրած դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը չի կարող փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակ հանդիսացող հանրային աշխատանքներով, ինչը չի բխում քննարկվող ինստիտուտի էությունից:

15. Ընդհանրացնելով սույն որոշման 13-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված լինելու հանգամանքն անձի նկատմամբ հանրային աշխատանքներ պատժատեսակը նշանակելու պարտադիր նախապայման է: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածով նախատեսված կարգով պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելիս տվյալ նախապայմանը չի կարող գործել՝ հաշվի առնելով, որ պատժից ազատելու վերոնշյալ տեսակի գործադրման հիմքերն օրենքով հստակ ամրագրված են: Այլ կերպ՝ եթե անձը կրել է իր նկատմամբ նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ երրորդը, ապա դատարանը կարող է օրենքով սահմանված կարգով այն փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով, այդ թվում՝ հանրային աշխատանքներով՝ որպես ելակետ ընդունելով տվյալ պատժատեսակի նվազագույն և առավելագույն չափերը, այն է՝ երկու հարյուր յոթանասունից մինչև երկու հազար երկու հարյուր ժամը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Ա.Մարտիրոսյանն իր նկատմամբ նշանակված չորս տարի ժամկետով ազատազրկումը կրել է 2015 թվականի նոյեմբերի 19-ից[1]:

Առաջին ատյանի դատարանը գտել է, որ դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատժի մնացած մասը՝ 2 տարի 2 ամիս 25 օրը, հնարավոր է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով՝ 2200 ժամ տևողությամբ, քանի որ հանրային աշխատանքների նշանակման պարտադիր պայման հանդիսացող՝ առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտվելու պահանջն այս դեպքում կիրառելի չէ[2]:

Վերաքննիչ դատարանն իր հերթին փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու նպատակահարմարության հարցում հանգել է իրավաչափ ու գործի փաստական տվյալներից բխող հիմնավոր հետևության[3]:

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական գնահատման ենթարկելով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու պայմանները, հանգել են իրավաչափ հետևության առ այն, որ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատժի մնացած մասը՝ 2 տարի 2 ամիս 25

[1] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

օրը, հնարավոր է փոխարինել հանրային աշխատանքներով:

Մասնավորապես, ստորադաս դատարանները հաշվի են առել այն, որ Ա.Մարտիրոսյանը՝

ա) **ոչ մեծ ծանրության** հանցանքների կատարման համար հանցագործությունների համակցությամբ դատապարտվել է **4 (չորս) տարի ժամկետով** ազատազրկման,

բ) նշանակված պատիժը սկսել է կրել **2015 թվականի նոյեմբերի 19-ից,**

գ) ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» ՔԿՀ-ի միջնորդության քննության ընթացքում՝ **2017 օգոստոսի** դրությամբ, արդեն իսկ կրել է իր նկատմամբ նշանակված **պատժի մեկ երրորդը**:

Վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ դատապարտյալ Ա.Մարտիրոսյանն իրավունք է ունեցել օգտվելու իր նկատմամբ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով, այդ թվում՝ հանրային աշխատանքներով փոխարինելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ 2017 թվականի օգոստոսի դրությամբ Ա.Մարտիրոսյանի՝ ազատազրկման ձևով պատժի չկրած ժամկետը գերազանցել է երկու տարի ժամկետով ազատազրկումը, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ելնելով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի ինքնավար բնույթից՝ այն չի կարող արգելք լինել դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված ազատազրկման չկրած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը՝ 2 (երկու) տարի 2 (երկու) ամիս 25 (քսանհինգ) օր ժամկետով ազատազրկումը, հանրային աշխատանքներով փոխարինելու մասին ստորադաս դատարանների հետևությունն իրավաչափ է:

18. Միևնույն ժամանակ անդրադառնալով ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու նպատակահարմարության վերաբերյալ բողոքաբերի՝ սույն որոշման 8-րդ կետում բարձրացված փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, գործի նյութերում առկա բոլոր հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում դատապատրյալ Ա.Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված ազատազրկման չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հանգել են հիմնավոր հետևության:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական իրավունքի խախտումներ, հետևաբար վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Անուշ Սուրենի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ1/0006/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝ Դ.ՀՈՒՆԱՆՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ դիմող «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի ապրիլի 16-ին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 57110416 քրեական գործը:

Նախաքննական մարմնի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, և Տիգրան Ալաջաջյանի, Միքայել Կարապետի, Լևոն Համբարձումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոհիշյալ որոշման դեմ «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանի բողոքն Արմավիրի մարզի դատախազի՝ 2017 թվականի մայիսի 10-ի որոշմամբ մերժվել է:

2. «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանի բողոքի քննության արդյունքում Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2017 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ բողոքը մերժել է:

3. «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2017 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 1-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարան ներկայացրած բողոքում «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանը, ի թիվս այլոց, նշել է հետևյալը. *«(…) [Տ]ուժողի դատավարական իրավունքների խախտման վերաբերյալ [իր] դիրքորոշումն ամրապնդվում է ՀՀ Սահմանադրական դատարանի 30.05.2017թ. ՍԴՈ-1372 որոշմամբ տրված մեկնաբանությունների լույսի ներքո:*

(…) [Ե]թե տուժողը նախապես տեղեկացվեր նախաքննության ավարտի վերաբերյալ և մինչև նախաքննության ավարտը՝ քրեական գործի վարույթի կարճումը, ծանոթանար քրեական գործի նյութերին, կկարողանար ներկայացնել բոլոր այն առարկությունները և միջնորդությունները, որոնց չեն անդրադարձել քննիչը և դատախազը: Միայն ներկայացված առարկությունները և միջնորդությունները պատշաճ կարգով քննության առնելու պարագայում քրեական գործով կարճման որոշման կայացումը չի խախտի տուժողի՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերի պաշտպանության համար գործի արդարացի քննության իրավունքը»[1]:

6. Առաջին ատյանի դատարանը, մերժելով «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցչի բողոքը, նշել է. *«(…) [Քրեական հետապնդման մարմինների որոշումներով] փաստվել է, որ քրեական գործի նախաքննությամբ չի հիմնավորվել և փաստական հանգամանքներ ձեռք չեն բերվել Տ.Ալաջաջյանի, Մ.Կարապետի և Լ.Համբարձումյանի կողմից գումարներ յուրացնելու կամ վատնելու վերաբերյալ, և ապառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:*

(…)

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 7:

Դատարանը, ստուգելով վիճարկվող որոշումները և դրանցով դիմող կողմի իրավունքների ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկները, արձանագրում է, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննական մարմնի որոշմամբ դիմող կողմի ենթադրաբար խախտված իրավունքները վերականգնելուն պարտավորեցնելու հիմքերը բացակայում են (...)»[1]:

7. Վերաքննիչ դատարան ներկայացրած բողոքում «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանը, ի թիվս այլոց, նշել է հետևյալը. «*(...) Դատարանը բողոքը մերժել է՝ ոչ թե քննարկելով և անհիմն համարելով ներկայացված փաստարկները, այլ պատճառաբանելով, որ առհասարակ, տվյալ գործով «Հեսսար» ՍՊԸ-ի ենթադրաբար խախտված գույքային իրավունքները ենթակա են վերականգնման քաղաքացիադատավարական ընթացակարգով (...)»*[2]:

8. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է. «*(...) Վերաքննիչ դատարանը, իր հերթին անդրադառնալով բարձրացված հարցին, փաստում է, որ այս պարագայում չի հիմնավորվել Տիգրան Ալաջաջյանի, Միքայել Կարապետի և Լևոն Համբարձումյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու փաստը և նման դեպքում խոսքը գնում է ոչ թե քրեական օրենքով արգելված արարք կատարելու մասին, այլ կողմերի միջև վեճը կրում է մասնավոր բնույթ և վերաբերելի է նշված սուբյեկտների միջև պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը, ինչն էլ իր հերթին ենթադրում է իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանության հանրային ռեսուրսների կիրառման անհնարինության և մասնավոր ռեսուրսների կիրառման անհրաժեշտության մասին:*

(...)

Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, բողոքաբերի բողոքը քննության առնելիս Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են դատական սխալի և կարող են հիմք հանդիսանալ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 01-ի որոշումը բեկանելու և փոփոխելու համար»[3]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 39-40:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 53:
[3] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 112:

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ, 247-րդ, 262-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև դատարանները չեն կիրառել Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 30-ի թիվ ՍԴՈ-1372 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ չի բավարարել ներկայացված բողոքը, իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին հաստատել է դրա օրինականությունը: Մինչդեռ սույն գործով նախաքննական մարմինը Սահմանադրությանը հակասող բովանդակությամբ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածը, որի արդյունքում չի պարզաբանել գործի նյութերի հետ ծանոթանալու դիմողի իրավունքը՝ մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելը: Ստացվում է, որ քննիչը զրկել է «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցչին մինչև գործի վարույթը կարճելն ու քրեական հետապնդում չիրականացնելը գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունից: Բողոքաբերը նշել է, որ այս պայմաններում ինքը հնարավորություն չի ունեցել կազմելու լիարժեք կարծիք գործի վարույթը կարճելու մասին որոշման իրավաչափության վերաբերյալ, քանի որ ստիպված է եղել բավարարվել միայն իր տրամադրության տակ գտնվող փորձագետի եզրակացության և գործի վարույթի կարճման որոշման ուսումնասիրությամբ:

9.1. Բողոքաբերը նշել է նաև, որ արդյունքում ինքն ըստ էության զրկված է եղել գործում առկա փորձագետի եզրակացությանն անհամաձայնություն հայտնելու և կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքից, քանի որ փորձագետի եզրակացությանը ծանոթանալուց հետո ինքն արձանագրության մեջ նշել է, որ ծանոթացել է եզրակացությանը, միջնորդություններ չունի, իսկ ունենալու դեպքում՝ կներկայացնի: Հետագայում ներկայացրել է միջնորդություն՝ խնդրելով նշանակել կրկնակի համալիր փորձաքննություն, սակայն այդ ժամանակ քննիչն արդեն կայացրած է եղել որոշում գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Այսինքն՝ ստացվում է՝ ներկայացված միջնորդությունը՝ կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, չի քննարկվել քննիչի կողմից, և ներկայումս գործում առկա է փորձաքննության եզրակացություն, որի արժանահավատությունն այլևս չի կարող կասկածի տակ դրվել՝ գործով նախաքննությունն ավարտված լինելու պատճառով:

Նշվածի հաշվառմամբ բողոքի հեղինակը եզրահանգել է, որ առկա է իրավունքի զարգացման խնդիր այն հարցի կապակցությամբ, որ

նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում քննիչը պարտավոր է հաղորդել շահագրգիռ անձանց գործի վարույթը կարճելու համար հավաքված նյութերի բավարարության մասին: Հակառակ դեպքում լիարժեք չեն իրացվի դատավարության մասնակցի՝ գործի նյութերին ծանոթանալու և, նախքան կարճման որոշում կայացնելը, միջնորդություններ հարուցելու իրավունքները:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ու փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը, պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել «Հեսսար» ՍՊԸ-ի իրավունքների խախտումը, այն է՝ վերացնել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշումը և շարունակել գործի նախաքննությունը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև քրեական գործով վարույթը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը (քրեական հետապնդում չիրականացնելը) դատավարության մասնակիցներին և գործով շահագրգիռ անձանց գործի նյութերը ծանոթացման ներկայացնելու կառուցակարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք դիմող «Հեսսար» ՍՊԸ–ի իրավունքների խախտման բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունն այն դեպքում, երբ մինչև քրեական գործի վարույթը կարճելը և քրեական հետապնդում չիրականացնելը գործի նյութերը դիմողին ծանոթացման չեն ներկայացվել:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նախաքննությունն ավարտվում է (…) քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով»:*

Մինչև 2018 թվականի մայիսի 4-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քննիչը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկում է (…) այն ֆիզիկական անձին կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման*

վրա հարուցվել է քրեական գործը:

*2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց **պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը** և վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը:*

*3. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով **ծանոթանալ կարճված գործի նյութերին**»:*

2018 թվականի մայիսի 4-ից գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քննիչը (...) այն ֆիզիկական անձին կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, պատշաճ ծանուցմամբ անհապաղ ուղարկում է քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ **պարզաբանելով գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը** և որոշման բողոքարկման կարգը և ժամկետները:*

(...)

*3. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով **ծանոթանալ կարճված գործի նյութերին**»:*

14. ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1372 որոշմամբ, բացահայտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը, նշել է. *«(...) [Տ]ուժողի՝ որպես դատավարության մասնակցի կողմից նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ իր ՍԴՈ-1008 որոշման մեջ: Մասնավորապես, (...) Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «գործի նյութերին՝ շահագրգիռ սուբյեկտների, այդ թվում տուժողի կողմից ծանոթանալու ժամանակահատվածը կազմում է նախաքննության ինքնուրույն մաս, նախորդում է նախաքննության ավարտին, և, հետևաբար, տուժողը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածով սահմանված՝ գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքն իրացնում է մինչև նախաքննության ավարտը»:*

Նույն որոշման շրջանակում Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ. *«(...) Նախաքննության փուլում տուժողի (...) իրավունքների, նախաքննություն իրականացնող մարմինների համապատասխան պարտականությունների համադրված վերլուծության հիման վրա, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տուժողի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև մեղադրական եզրակացություն կազմելը, այն է՝ նախաքննության (...) ավարտին նախորդող ժամանակահատվածում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության*

օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն խոչընդոտում տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշատակված որոշման շրջանակում դատավարության մասնակցի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի վերաբերյալ վերը նշված իրավական դիրքորոշումները վերաբերում են մեղադրական եզրակացություն կազմելու միջոցով նախաքննության ավարտման դեպքին, այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց, մասնավորապես, տուժողի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի նկատմամբ:

Ըստ այդմ էլ, հիշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նաև նրան, որ գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում» [1]:

15. Սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված իրավադրույթների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն ունի հիմնարար նշանակություն դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ անձանց կողմից իրենց իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու համար: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս մի կողմից պատկերացում կազմելու գործի ընթացքի մասին, միջնորդելու կատարել լրացուցիչ քննչական կամ այլ դատավարական գործողություններ, մյուս կողմից՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելու փաստական տվյալներով հիմնավորված բողոք վարույթն իրականացնող մարմնի ոչ իրավաչափ որոշումների կամ գործողությունների (անգործության) դեմ:

15.1 Օրենսդիրը քրեական դատավարությունում նախատեսել է գործի նյութերին ծանոթանալու տարբեր իրավական ընթացակարգեր՝ մինչև նախաքննության ավարտը և նախաքննության ավարտից հետո: Ընդ որում, եթե առաջին դեպքում, ելնելով նախաքննական գաղտնիքի պաշտպանության անհրաժեշտությունից կամ քրեադատավարական համապատասխան փուլի առանձնահատկություններից, գործի նյութերին ծանոթանալու իրավունքը, որպես կանոն, ենթարկվում է ժամանակային կամ ծավալային սահմա-

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 30-ի թիվ ՍԴՈ-1372 որոշման 6-րդ կետը:

նափակման, ապա երկրորդ դեպքում դատավարության մասնակիցների համար երաշխավորված է առանց որևէ սահմանափակման գործի նյութերին ծանոթանալու իրավունքը: Այսպես՝ նախաքննության ավարտման պահից գործի բոլոր նյութերին ծանոթանալու, դրանցից պատճեններ հանելու և գործից ցանկացած ծավալի տեղեկություն դուրս գրելու իրավունքը քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված է տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, մեղադրյալի, վերջիններիս օրինական ներկայացուցչների, ինչպես նաև պաշտպանի համար[1]:

Միևնույն ժամանակ, ելնելով դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ապացույցներ հավաքելու կողմերի հնարավորություններից՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը որոշ դեպքերում օրենսդիրը երաշխավորել է նաև մինչև նախաքննության ավարտը:

Այսպես, օրինակ՝ հաշվի առնելով ձեռքբերվող ապացույցի առանձնահատկությունները, դատավարության մասնակիցների իրավունքները՝ փորձաքննության եզրակացությունը ծանոթացման է ներկայացվում այն ստանալու պահից 10-օրյա ժամկետում[2]: Կամ՝ գործի նյութերին ծանոթանալու և ըստ անհրաժեշտության՝ լրացուցիչ քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու միջնորդություններ ներկայացնելու համար քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված է մինչև մեղադրական եզրակացություն կազմելը դատավարության մասնակիցներին գործի նյութերը ծանոթացման ներկայացնելու կարգը: Վերջինս ըստ էության լրացուցիչ երաշխիք է կողմերի միջև դատավարական իրավահավասարության սկզբունքը կենսագործելու և, ըստ այդմ, ապացուցողական «զամբյուղում» ինչպես մեղադրական, այնպես էլ պաշտպանական կողմի համոզմամբ ձեռքբերման ենթակա փաստական տվյալները ներառելու համար:

15.2 Սույն որոշման 14-րդ կետում մեջբերված՝ ՀՀ սահմանադրական դատարանի և նախորդ կետում արտահայտված Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ հարկ է արձանագրել, որ գործի նյութերին ծանոթանալու և ըստ անհրաժեշտության՝ լրացուցիչ քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու միջնորդություններ ներկայացնելու իրավունքն ունի հիմնարար նշանակություն նաև քրեական գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս: Այլ կերպ՝ նախաքննությունը գործի վարույթը կարճելու որոշմամբ ավարտելիս դատավարության մասնակիցների, շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար ևս գործի նյութերը պետք է ներկայացվեն ծանոթացման:

[1] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 61-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 65-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետը, 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, 75-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 77-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը:
[2] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը:

Հակառակ պարագայում, նախաքննության ավարտից հետո (*post factum*) գործի նյութերին ծանոթանալիս դատավարության մասնակիցները և շահագրգիռ անձինք զրկվում են գործի վարույթի կարճմանը նախորդող ժամանակահատվածում իրենց իրավունքներն արդյունավետ պաշտպանելու համար վարույթն իրականացնող մարմնին համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման միջնորդություններ ներկայացնելու, ապացուցողական «զամբյուղի» ձևավորմանը մասնակցելու իրավունքից: Ավելին՝ սահմանափակվում է նաև գործի վարույթը կարճելու որոշման դեմ գործի նյութերում պարունակվող փաստական տվյալներով հիմնավորված բողոք ներկայացնելու դատավարության մասնակիցների և շահագրգիռ անձանց իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բավարար ապացույցներ ձեռքբերելով գործի վարույթը կարճելու համար՝ վարույթն իրականացնող մարմինը **մինչև համապատասխան որոշման կայացումը ողջամիտ ժամկետում** պետք է դատավարության մասնակիցներին և գործով շահագրգիռ անձանց պարզաբանի գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը և հնարավորություն ստեղծի իրացնելու այն:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան նախաքննական մարմնի և դատախազի որոշումների դեմ, որով խնդրել է վերականգնել տուժողի խախտված իրավունքները, քանի որ նախաքննության ավարտին տուժողին չի պարզաբանվել գործի նյութերին ծանոթանալու նրա իրավունքը, ինչը նրան զրկել է միջնորդություններ և առարկություններ ներկայացնելու հնարավորությունից[1]:

Առաջին ատյանի դատարանը մերժել է բողոքն այն հիմնավորմամբ, որ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չհրականացնելու մասին որոշմամբ չեն խախտվել դիմողի իրավունքները[2]:

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, և որ բողոքը քննության առնելիս Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և որոշումը բեկանելու ու փոփոխելու հիմք կհանդիսանային[3]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմողի իրավունքների խախտումների

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

բացակայության մասին ստորադաս դատարանների դատողությունները հիմնավոր չեն: Մասնավորապես, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել բողոքաբերի բարձրացրած այն փաստարկը, որ մինչև նախաքննության ավարտը վերջինիս չի պարզաբանվել գործի նյութերին ծանոթանալու նրա իրավունքը և հնարավորություն չի ստեղծվել իրացնելու այն: Արդյունքում՝ դիմողը զրկվել է գործի վարույթի կարճմանը նախորդող ժամանակահատվածում իր իրավունքներն արդյունավետ պաշտպանելու համար վարույթն իրականացնող մարմնին համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման միջնորդություններ ներկայացնելու, ապացուցողական «զամբյուղի» ձևավորմանը մասնակցելու իրավունքից:

Հետևաբար դիմող «Հեսսար» ՍՊԸ–ի իրավունքների խախտման բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր չէ, քանի որ մինչև քրեական գործի վարույթը կարճելը և քրեական հետապնդումը չիրականացնելը գործի նյութերը դիմողին ծանոթացման չեն նեկայացվել:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար: Միևնույն ժամանակ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է դիմող «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանի բողոքը բավարարել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել դիմողի իրավունքների և ազատությունների խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող «Հեսսար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Դ.Հունանյանի բողոքը մերժելու մասին Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 1-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումները բեկանել և փոփոխել: Դիմող «Հեսսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Դ.Հունանյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնել վարույթ իրականացնող մարմնին վերացնել դիմողի իրավունքների և ազատությունների խախտումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

43. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ3/0099/01/10

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ԱՊՐԵՍՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի որոշման դեմ դատապարտյալ Զադե Այլազի Իբրահիմյանի բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2010 թվականի ապրիլի 21-ին ՀՀ ՊՆ քննչական ծառայության 2-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 91252610 քրեական գործը:

2010 թվականի ապրիլի 27-ին Զադե Այլազի Իբրահիմյանը ձերբակալվել է:

2010 թվականի ապրիլի 30-ին Զ.Իբրահիմյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 365-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի նոյեմբերի 11-ին Զ.Իբրահիմյանին առաջադրված

մեղադրանքի ծավալը փոփոխվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 359-րդ հոդվածի 3-րդ մասով և 182-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի նոյեմբերի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 14-ին կայացրած դատավճռով Զ.Իբրահիմյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 359-րդ հոդվածի 3-րդ մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու մեջ և պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ազատազրկում՝ 3 /երեք/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 6 /վեց/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնների կիրառմամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 /տասը/ տարի ժամկետով:

3. Վերոհիշյալ դատական ակտի դեմ ամբաստանյալ Զ.Իբրահիմյանի, պաշտպան Գ.Շիրինյանի և մեղադրող Կ.Բարսեղյանի վերաքննիչ բողոքները ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ մերժվել են, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Գ.Շիրինյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2018 թվականի հուլիսի 23-ին դատապարտյալ Զ.Իբրահիմյանը նոր հանգամանքի հիմքով բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանը 2018 թվականի օգոստոսի 2-ին որոշել է հարուցել նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի որոշման վերանայման վարույթ և դատապարտյալ Զ.Իբրահիմյանի վճռաբեկ բողոքն ընդունել Վճռաբեկ դատարանի վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Զ.Իբրահիմյանին ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելիս Առաջին ատյանի դատարանը դատավճռով հաստատված է համարվել հետևյալը. *«[Զ.Իբրահիմյանը,] հանդիսանալով թիվ 59703 զորամասի ժամկետային զինծառայող, կոչումով՝ շարքային, **2010թ. ապրիլի 17-ին և 18-ին** թիվ 102 մարտական դիրքի դիտակետում մարտական հերթապահություն իրականացնելիս, խախտելով ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահություն կրելու կանոնները, ինքնակամ թողել է նույն դիրքի դիտակետը՝ առանց հսկողության թողնելով այն ու գնացել նշված դիրքի գետնափոսնակ՝ դրանով իսկ ՀՀ անվտանգությանն **էական վնաս պատճառելու ապառնալիք ստեղծել**»*[1]:

7. Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2012 թվականի փետրվարի 1-ին:

7.1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի ապրիլին 30-ին ընդունված թիվ ՀՕ-34-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ իր վերաբերյալ կայացված դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասն օրենսդրի կողմից փոփոխության է ենթարկվել, որի հետևանքով ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով իրեն մեղսագրված արարքը դադարել է լինել հանրորեն վտանգավոր: Այդ առնչությամբ որպես նոր հանգամանք վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշումը՝ Զ.Իբրահիմյանը Վճռաբեկ դատարանին խնդրել է նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի որոշման վերանայման վարույթ հարուցել, և այն վերանայել, բեկանել ու փոփոխել իր վերաբերյալ կայացված դատական ակտը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով իրեն 1 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման դատապարտելու առնչությամբ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի ապրիլին 30-ին ընդունված թիվ ՀՕ-34-Ն օրենքն արդյոք ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 140:

թվականի փետրվարի 1-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հիմք է:

10. Մինչ 2013 թվականի ապրիլին 30-ին ընդունված և նույն թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-34-Ն օրենքով կատարված փոփոխությունները ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասը շարադրված էր հետևյալ խմբագրությամբ. *«Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը վնաս է պատճառել կամ **այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք է ստեղծել**՝*

պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2013 թվականի ապրիլին 30-ի թիվ ՀՕ-34-Ն օրենքի 18-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածում կատարված փոփոխություններով նույն հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. *«Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, **եթե այդ արարքը վնաս է պատճառել**՝*

պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

11. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածն ամրագրում է. *«(...) Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[1]-րդ հոդվածը նախատեսում է.

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ

վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[4]-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում[1] բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

2.1) Բարձրագույն դատական խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ տվյալ գործով արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերում»:

Մեջբերված նորմերի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի փետրվարի 14-ի որոշման շրջանակներում արձանագրել է. *«(…) Սահմանադրական դատարանը գտնում է, որ, արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հատուկ քրեադատավարական կարգի բացակայության պայմաններում, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների իրականացումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը, ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն ապահովելու, ինչպես նաև անձի հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունն ապահովելու համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պատիժ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել* ***նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝***

[1] Մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի թիվ ՍԴՈ-1359 որոշումը:

արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք»[1]:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

ա) Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի սեպտեմբերի 14-ի դատավճռով Զ.Իբրահիմյանը մեղավոր է ճանաչվել, ի թիվս այլ հանցավոր արարքների, ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն արարքի համար, որ նա, հանդիսանալով թիվ 59703 զորամասի ժամկետային զինծառայող, կոչումով՝ շարքային՝ ***2010 թվականի ապրիլի 17-ին և 18-ին*** թիվ 102 մարտական դիրքի դիտակետում մարտական հերթապահություն իրականացնելիս խախտելով ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահություն կրելու կանոնները, ինքնակամ թողել է նույն դիրքի դիտակետը՝ առանց հսկողության թողնելով այն ու գնացել նշված դիրքի գետնատնակ՝ դրանով իսկ ՀՀ անվտանգությանն էական ***վնաս պատճառելու սպառնալիք ստեղծել***[2]:

ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի համար նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ՝ 1 տարի 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Զ.Իբրահիմյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 տարի ժամկետով [3]:

բ) Զ.Իբրահիմյանի վերաբերյալ մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել ***2012 թվականի փետրվարի 1-ին***[4]:

գ) 2013 թվականի ապրիլի 30-ի թիվ ՀՕ-34-Ն օրենքով փոփոխություն է կատարվել ՀՀ քրեական օրենսգրքում, և հիշյալ օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ քրեական պատասխանատվություն սահմանելով Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու համար, ***եթե այդ արարքը վնաս է պատճառել:*** Մինչդեռ 2010 թվականի ապրիլ ամսին, այսինքն՝ Զ.Իբրահիմյանի կողմից սույն որոշման 6-րդ կետում նկարագրված արարքը կատարելու ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանել Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման 7-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 4-րդ և 7-րդ կետերը:

կրելու կանոնները խախտելու համար, եթե այդ արարքը ***(1) մնաս է պատճառել կամ (2) այդպիսի մնաս պատճառելու սպառնալիք է ստեղծել***[1]:

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով Զ.Իբրահիմյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այնպիսի արարքի համար, որը 2013 թվականի ապրիլի 30-ի թիվ ՀՕ-34-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում դադարել է հանցավոր լինել, քանի որ կատարված փոփոխություններից հետո քրեական պատասխանատվություն է նախատեսվել միայն ***մնաս պատճառելու,*** այլ ոչ թե նաև ***մնաս պատճառելու սպառնալիք ստեղծելու համար:***

13. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի ապրիլին 30-ին ընդունված թիվ ՀՕ-34-Ն օրենքը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հիմք է:

14. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի որոշման վերանայման արդյունքում սույն գործով Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտերը պետք է բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել Զ.Իբրահիմյանի անմեղությունը և նրան արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնների կիրառմամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելիս Առաջին ատյանի դատարանը չի հստակեցրել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժից մասնակի գումարման ենթակա պատժաչափը, և այդ հանգամանքը հօգուտ դատապարտյալի մեկնաբանելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Զ.Իբրահիմյանի նկատմամբ նշանակված 10 տարի ժամկետով ազատազրկումից պետք է հանել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված և մասնակիորեն գումարված 1 տարի 5 ամիս ժամկետով ազատազրկումը և վերջնական թողնել կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 359-րդ հոդվածի 3-րդ մասով և 182-րդ հոդվածի 1-ին մասով հանցանքների համակցության կանոններով նշանակված 8 տարի 7 ամիս ժամկետով ազատազրկումը:

[1] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-426.2-րդ, 426.4-րդ և 426.9-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Զադե Այլազի Իբրահիմյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 1-ի որոշումը վերանայել:

2. Զադե Այլազի Իբրահիմյանի վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի սեպտեմբերի 14-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել Զադե Այլազի Իբրահիմյանի անմեղությունը և նրան արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Զադե Այլազի Իբրահիմյանի նկատմամբ նշանակված 10 տարի ժամկետով ազատազրկումից հանել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված և մասնակիորեն գումարված 1 տարի 5 ամիս ժամկետով ազատազրկումը և վերջնական թողնել կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 359-րդ հոդվածի 3-րդ մասով և 182-րդ հոդվածի 1-ին մասով հանցանքների համակցության կանոններով նշանակված 8 տարի 7 ամիս ժամկետով ազատազրկումը: Պատժի սկիզբը հաշվել 2010 թվականի ապրիլի 27-ից: Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

44. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0010/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով Խաչատուր Ալեքսանդրի Բեգլարյանի վերաբերյալ երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Խ.Բեգլարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի ապրիլի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12116616 քրեական գործը:

2016 թվականի մայիսի 16-ին նույն բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի +178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12122116 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 26-ի որոշմամբ թիվ 12116616 քրեական գործը միացվել է թիվ 12122116 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է թիվ 12122116 համարով:

2016 թվականի հունիսի 10-ին Խաչատուր Բեգլարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագով, և նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 10-ի որոշմամբ Խ.Բեգլարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

2016 թվականի հոկտեմբերի 11-ին Խ.Բեգլարյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին:

Նույն օրը Խ.Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագով:

Նույն դատարանի՝ 2016 թվական հոկտեմբերի 13-ի որոշմամբ Խ.Բեգլարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատվել է:

2017 թվականի փետրվարի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 16-ի դատավճռով Խ.Բեգլարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու դրվագով, և հանցանքների համակցությամբ դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի 3 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կարգով՝ Խ.Բեգլարյանի նկատմամբ թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս 25 օր ժամկետով, որը նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով: Նույն դատավճռով վերացվել է ամբաստանյալ Խ.Բեգլարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի սեպտեմբերի 27-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու և Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու մասին: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը վերացվել է, և ամբաստանյալ Խ.Բեգլարյանին թողնվել է կրելու 3 տարի 6 ամիս 25 օր ժամկետով ազատազրկումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Խ.Բեգլարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Խ.Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, *«(…) 2015թ. դեկտեմբերի 8-ին, չարաշահելով Ա.Ավոյանի վստահությունը, Աշոտ Ավոյանին պատկանող 13.500 ԱՄՆ դոլարին համարժեք 6.500.000 ՀՀ դրամ արժողությամբ «BMW X5» մակնիշի 88 UT 288 հաշվառման համարանիշի ավտոմեքենան տարաժամկետ վճարման պայմանով գնելու պատրվակով, Երևան քաղաքի Կենտրոն նոտարական տարածքի գրասենյակում կնքել [է] ձևական փոխառության պայմանագիր, այնուհետև, հաջորդ օրը՝ 09.12.2015թ., ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» Երևանի հաշվառման-քննական բաժնում, պայմանավորվածության համաձայն՝ Ա.Ավոյանը համապատասխան նվիրատվության պայմանագրով իրեն սեփականության իրավունքով պատկանող «BMW X5» մակնիշի 88 UT 288 հաշվառման համարանիշի ավտոմեքենան նվիրատվություն է արել Խ.Բեգլարյանի կնոջը՝ Լ.Ներսիսյանին: Այնուհետև Խ.Բեգլարյանը, պայմանավորված ժամկետում Ա.Ավոյանին որևիցե գումար չվճարելով, 11.12.2015թ. «BMW X5» մակնիշի 88 UT 288 հաշվառման համարանիշի ավտոմեքենան իրական արժեքից ավելի նվազ՝ 8.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով վաճառել է Թ.Բեշիկյանին և 27.12.2015թ. կնոջ հետ միասին «Բագրատաշեն» սահմանապահին անցակետով ՀՀ-ից դիմել է փախուստի:*

Բացի այդ, 24.12.2015թ. Խ.Բեգլարյանը նույն եղանակով, Տ.Վարդանյանից 13.000 ԱՄՆ դոլար գումարով «BMW X5» մակնիշի 02 UP 001 հաշվառման համարանիշի ավտոմեքենան գնելու պատրվակով վճարել է 5.000 ԱՄՆ դոլար գումար, իսկ մնացած գումարի մասով կրկին տարաժամկետ վճարման պայմանով ձևական փոխառության պայմանագիր է կնքել վերջինիս հետ: Հաջորդ օրը Ս.Վարդանյանն իր անվամբ հաշվառված «BMW X5» մակնիշի 02 UP 001 հաշվառման համարանիշի ավտոմեքենան ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանության» Երևանի հաշվառման-քննական բաժնում, պայմանավորվածության համաձայն՝ համապատասխան առուվաճառքի պայմանագրով վաճառել է Խ.Բեգլարյանի կնոջը՝ Լ.Ներսիսյանին: Այնուհետև Խ.Բեգլարյանը ավտոմեքենան Լ.Ներսիսյանի անվամբ հաշվառելու օրն իրական արժեքից ավելի նվազ՝ 9.500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով «BMW X5» մակնիշի ավտոմեքենան վաճառել է Է.Մելքոնյանին և 27.12.2015թ. կնոջ հետ միասին «Բագրատաշեն» սահմանային անցակետով ՀՀ-ից դիմել է փախուստի»[1]:

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(…) [Առաջին ատյանի դատարանն] ամբաստանյալ Խ.Բեգլարյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ինչպես նաև անձը բնութագրող հանգամանք է համարում այն, որ վերջինս երիտասարդ է, իր դրսևորած վարքագծով արժանացել է պուժողների ներողամտությանը,*

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 14-16:

վերջիններս բողոք կամ գույքային վնասի հատուցման պահանջ չեն ներկայացրել նրա նկատմամբ, զղջացել է կատարած արարքի համար և ընդունել մեղքը, ինչը՝ որպես մեղավոր անձի հետհանցավոր դրական վարքագիծ, վկայում է այն մասին, որ նա լրիվ գիտակցել է իր արարքի հանրային վտանգավորությունը և զղջացել է դրա համար:

[Առաջին ատյանի դատարանն] ամբաստանյալ Խ.Բեգլարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չհայտնաբերեց:

(...) [Տուժողներն] (...) [Առաջին ատյանի դատարանին] խնդրել [են] մեղմ պատիժ նշանակել՝ ազատազրկման հետ կապ չունեցող (...):

Ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս, [Առաջին ատյանի դատարանը] միևնույն ժամանակ պատշաճ գնահատականի է ցանկանում արժանացնել նաև այն, որ ամբաստանյալ Խ.Բեգլարյանի կողմից վերականգնվել է տուժողներին պատճառված նյութական վնասը, հետևաբար [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ սոցիալական արդարությունն այս մասով վերականգնված է:

(...) [Առաջին ատյանի դատարանը], բազմակողմանի գնահատման ենթարկելով կատարված հանցագործությունների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, Խ.Բեգլարյանի անձը բնութագրող վերը նշված տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև ելնելով մարդասիրության սկզբունքից և բոլոր այս հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ հանգում է հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի գտնում է, որ նրա նկատմամբ նշանակվող պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել (...):

(...) Քննարկելով քաղաքացիական հայցի հարցը և հիմք ընդունելով ամբաստանյալից պահանջ չունենալու պատճառաբանությամբ տուժողներ Աշոտ Ավոյանի և Սամվել Վարդանյանի կողմից քաղաքացիական հայց չհարուցելու հանգամանքը՝ [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ քաղաքացիական հայցի հարցը պետք է համարել լուծված (...)»[1]:

7. Վերաքննիչ դատարանն արձանագրել է հետևյալը. *«(...) [Ա]ռաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Խ.Բեգլարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում պատշաճ վերլուծության չի արժանացրել.*

ա) հանցագործությամբ պատճառված վնասի չափը՝ մասնավորապես այն, որ Խ.Բեգլարյանի կողմից կատարվել են երկու դրվագով հանցագործություններ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որոնց արդյունքում տուժողներ Ա.Ավոյանին և

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 126-133:

Ս.Վարդանյանին պատճառվել է համապատասխանաբար 13.500 և 8.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով վնաս, որը մի քանի անգամ գերազանցում է հաիշտությունների համար նախատեսված առանձնապես խոշոր չափի նվազագույն շեմը (...),

բ) հանցագործությամբ պատճառված վնասն ամբողջությամբ հատուցված չլինելը. մասնավորապես տուժող Ա.Ավոյանը Վերաքննիչ դատարանի դատական քննության ժամանակ հայտնեց, որ ամբաստանյալ Խ.Բեգլարյանի կողմից իրեն պատճառված վնասը հատուցվել է մասնակի՝ 10.500 ԱՄՆ դոլարի չափով, իսկ մնացած 3.000 դոլարի չափով վնասը փոխհատուցելու վերաբերյալ ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագայում մաս-մաս փոխհատուցելու վերաբերյալ,

գ) ամբաստանյալի կողմից հանցագործությունը կատարելուց անմիջապես հետո՝ կնոջ Լ.Ներսիսյանի հետ միասին «Բագրատաշեն» սահմանային անցակետով ՀՀ-ից փախուստի դիմելը և մինչև 11.10.2016թ. հետախուզման մեջ գտնվելը:

Վերոգրյալների հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով հանցագործությամբ պատճառված վնասի չափը, այն ամբողջությամբ վերականգնված չլինելը, ինչպես նաև դեպքից հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը վկայում են հանցագործության հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին, ինչն [Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից հաշվի չի առնվել և որևէ գնահատականի չի արժանացել, մինչդեռ գույքային բնույթի հանցագործություններում արարքի վտանգավորության վրա ազդող վերոնշյալ գործոններն իրենց բնույթով հիմնական են և կարևոր, որպիսիք յուրաքանչյուր դեպքում պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելիս պետք է համարժեք գնահատականի արժանանան:

Վերոշարադրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Խ.Բեգլարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ [Ա]ռաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավոր չեն (...)»[1]:

8. Ամբաստանյալ Խ.Բեգլարյանի բողոքին կից ներկայացվել են տուժողներ Ս.Վարդանյանի և Ա.Ավոյանի դիմումները, որոնցով վերջիններս հայտնել են իրենց պատճառված վնասն ամբաստանյալ Խ.Բեգլարյանի կողմից ամբողջությամբ վերականգնելու մասին և խնդրել են նրա նկատմամբ նշանակել ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ[2]:

9. Ամբաստանյալ Խ.Բեգլարյանը Վճռաբեկ դատարան է ներկայացրել նաև կնոջ՝ Լ.Ներսիսյանի հղիության վերաբերյալ 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «Նոր Արաբկիր Ա.Կ.» բժշկական կենտրոնի կողմից տրված

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 31-41:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 105-106:

մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը, համաձայն որի՝ Լ.Ներսիսյանը գտնվում է հղիության 13-14 շաբաթում [1]:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերի համոզմամբ Վերաքննիչ դատարանի որոշումն անօրինական է ու չհիմնավորված, դրանով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես անդրադառնալով իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցին՝ բողոք բերած անձը մեջբերել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի մեկնաբանման կապակցությամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և եզրահանգել, որ սոցիալական արդարության վերականգնված լինելու, պատիժը մեղմացնող հանգամանքի առկայության և ծանրացնող հանգամանքի բացակայության, դրական բնութագրվելու, քննությանն օժանդակելու, կատարած արարքների համար զղջալու, նյութական կարիքից դրդված այդ քայլին դիմելու պայմաններում իր ուղղումը հնարավոր է առանց պատիժը կրելու: Բողոքաբերն արձանագրել է նաև, որ տվյալ դեպքում հանցագործություններով պատճառված վնասի չափը չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ, քանի որ ինքն ամբողջությամբ վերականգնել է այն, իսկ տուժողները որևէ բողոք չունեն: Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ իր կինը գտնվում է 14 շաբաթական հղիության մեջ:

11. Վերոշարադրյալի հիման վրա ամբաստանյալ Խ.Բեգլարյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորվա՞ծ է արդյոք ամբաստանյալ Խ.Բեգլարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է եզրահանգման, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 104:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Սույն քրեահիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն անհրաժեշտ է դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու. նման հետևությունները պետք է հիմնված լինեն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի[1] ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, արարքում մեկից ավելի ծանրացնող հանգամանքների առկայությունը, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն[2]:

13.1. Անդրադառնալով պատիժը պայմանականորեն չկիրառելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները գնահատման ենթարկելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի, առողջական վիճակի, տարիքի, դատվածության և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները[3]:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում խարդախության համար, որի համաձայն՝ *«Խարդախությունը՝*

[1] Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵԴՇ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԴՇ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

[2] Տե՛ս թիվ ԵԿԴ/0039/01/15, թիվ ԱՐԴ/0031/01/15, թիվ ԵԱԴԴ/0038/01/15, թիվ ԵԿԴ/0130/01/15, թիվ ՍԴ/0094/01/15, թիվ ՍԴ3/0201/01/15, թիվ ԵԱՔԴ/0078/01/09, թիվ ԵԿԴ/0115/01/16, թիվ ԵՄԴ/0027/01/14, թիվ ԳԴ/0014/01/14, թիվ ՇԴ/0097/01/13 գործերով որոշումները:

[3] Տե՛ս, mutatis mutandis, *Հ.Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 և *Մ.Աղախանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշումները:

իաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերել[ն է]:

(…)

3. Խարդախությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով (…)»:

Նշված հոդվածով նախատեսված հանցավոր արարքն ընդգրկված է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, ուստի Վճռաբեկ դատարանը վերահաստատում է նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի համատեքստում հատկապես կարևոր է հանցագործությամբ պատճառված վնասի (դրա չափի), այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքների գնահատումը: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու խնդրին, իր որոշումներում մշտապես ընդգծել է, որ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազման տեսանկյունից հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքն էական նշանակություն ունի:

Ընդ որում, վերը նշված հանգամանքները կարևոր են ոչ միայն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի գնահատման, այլև սոցիալական արդարությունը վերականգնված լինելու տեսանկյունից, քանի որ գույքային բնույթի հանցագործություններում սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է ապահովել պատճառված վնասի համարժեք հատուցմամբ և նախքան հանցագործությունը եղած իրադրության հնարավորինս վերականգնմամբ[1]:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Խ.Բեգլարյանի կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ վերջինս երիտասարդ է, իր դրսևորած վարքագծով արժանացել է տուժողների ներողամտությանը, վերականգնել է տուժողներին պատճառված նյութական վնասը, վերջիններս բողոք կամ գույքային վնաս հատուցելու պահանջ չեն

[1] Տե՛ս, mutatis mutandis, *Ա.Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅՔՐԴ/0109/01/08, *Գ.Պետրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0126/01/10, *Ս.Հովսեփյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԼԴ/0193/01/10 որոշումները:

ներկայացրել, զղջացել է կատարված արարքի համար և ընդունել է մեղքը, որոշել է Խ.Բեգլարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել[1]:

Վերաքննիչ դատարանը, վերացնելով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում պատշաճ վերլուծության չի արժանացրել հանցագործությամբ պատճառված վնասի չափը, որը մի քանի անգամ գերազանցում է հափշտակությունների համար նախատեսված առանձնապես խոշոր չափի նվազագույն շեմը, հանցագործությամբ պատճառված վնասն ամբողջությամբ հատուցված չլինելը, ինչպես նաև ՀՀ-ից փախուստի դիմելը և մինչև 2016 թվականի հոկտեմբերի 11-ը հետախուզման մեջ գտնվելը[2]:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալներից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով ստորադաս դատարանի դատական ակտը, ի թիվս այլոց, փաստարկել է, որ հանցագործությամբ պատճառված վնասը մի քանի անգամ գերազանցում է հափշտակությունների համար նախատեսված առանձնապես խոշոր չափի նվազագույն շեմը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքն անհրաժեշտ է գնահատման ենթարկել հանցագործությամբ պատճառված վնասը վերականգնված լինելու կամ չլինելու համատեքստում, քանի որ գույքային բնույթի հանցագործություններում պատճառված վնասի չափը և այն վերականգված լինելու հանգամանքն արարքի հանրային վտանագավորության աստիճանի վրա ազդող կարևոր գործոն է: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ Վերաքննիչ դատարանն ընդհանրապես իրավական գնահատականի չի արժանացրել այն, որ պատճառված նյութական վնասն ամբաստանյալի կողմից մեծամասամբ վերականգնվել էր, և տուժողները երբևէ նրա նկատմամբ որևէ գույքային պահանջ չէին ներկայացրել[3]:

Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ ամբաստանյալը հանցագործությամբ պատճառված վնասն ամբողջությամբ չի վերականգնել: Մասնավորապես Վերաքննիչ դատարանը փաստել է, որ տուժող Ա.Ավոյանը դատական քննության ժամանակ հայտնել է, որ ամբաստանյալ Խ.Բեգլարյանը հատուցել է իրեն պատճառված վնասը մասնակի՝ 10.500 ԱՄՆ դոլարի չափով, իսկ մնացած մասի՝ 3.000 ԱՄՆ դոլարի չափով գումարի հատուցման վերաբերյալ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հետագայում մաս-մաս վճարելու պայմանով[4]: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանում ստացվել են տուժողներ Ա.Ավոյանի և Ս.Վարդանյանի դիմումներն առ այն, որ

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[3] Տե՛ս, mutatis mutandis, *Աբրահամ Միքայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԷԴ/0079/01/16 որոշումը:
[4] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ամբաստանյալի կողմից իրենց պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնվել է[1]:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ հանգամանքն էական նշանակություն ունի կատարված հանցավոր արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը ճիշտ գնահատելու, ինչպես նաև սոցիալական արդարությունը վերականգնված լինելու հարցում հիմնավոր հետևության գալու տեսանկյունից: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ գույքային բնույթի հանցագործություններում արարքի վտանգավորության վրա ազդող հիմնական և կարևոր գործոնը հենց պատճառված վնասն է և այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքը, ինչը յուրաքանչյուր դեպքում պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելիս պետք է համարժեք գնահատականի արժանանա:

16.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելիս հաշվի առնված՝ որպես կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա ազդող գործոն գնահատված այն հանգամանքին, որ ամբաստանյալը հանցագործությունից հետո ՀՀ-ից դիմել է փախուստի և մինչև 2016 թվականի հոկտեմբերի 11-ը գտնվել է հետախուզման մեջ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նշված հանգամանքն ինքնին չի կարող ազդել հանցագործության բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա, իսկ ստորադաս դատարանի դատական ակտում դրա կապակցությամբ չի ներկայացվել պատշաճ կերպով հիմնավորված որևէ պատճառաբանություն:

17. Սույն որոշման 15-16.1-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վերացնելով ամբաստանյալ Խ.Բեգլարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, պատշաճ գնահատման չի ենթարկել ամբաստանյալին մեղսագրվող հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը:

Հետևաբար արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից ամբաստանյալ Խ.Բեգլարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների խախտումներ, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի

[1] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը սույն որոշման 14-14.1-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո պետք է գնահատման ենթարկի ամբաստանյալին մեղսագրվող հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը և գործում առկա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող, անձը բնութագրող տվյալների հաշվառմամբ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Խաչատուր Ալեքսանդրի Բեգլարյանի վերաբերյալ երկու դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Խաչատուր Ալեքսանդրի Բեգլարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

45. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0006/11/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դիմողներ՝ Ա.ՄՈՎՍԵՍՅԱՆԻ
Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքի և դիմողներ Ալբերտ Մովսեսյանի, Գայանե Խաչատրյանի ու նրանց ներկայացուցիչ Մելս Մանուկյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2008 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի քննչական բաժնում Կարինե Ալբերտի Մովսեսյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

2. Դիմողներ Ալբերտ Մովսեսյանը, Գայանե Խաչատրյանը և Սամվել Դանիելյանը քննիչի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի որոշման դեմ բողոք են

ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)։

Առաջին ատյանի դատարանը 2008 թվականի մայիսի 26-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է։

3. Վերոհիշյալ դատական ակտի դեմ Ա.Մովսեսյանի և Գ.Խաչատրյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2008 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ։

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմողներ Ա.Մովսեսյանի և Գ.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ բողոքը Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով բերված չլինելու պատճառաբանությամբ։

5. Ա.Մովսեսյանը 2009 թվականի ապրիլի 22-ին ընդդեմ Հայաստանի Հանրապետության գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան կամ Դատարան)։ Ներկայացված գանգատի (գանգատ թիվ 27524/09) քննության արդյունքում Եվրոպական դատարանը 2017 թվականի նոյեմբերի 16-ին կայացրել է *«Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի»* գործով վճիռը, որով արձանագրվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում։

6. Նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայելու բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, դիմողներ Ա.Մովսեսյանը, Գ.Խաչատրյանն ու նրանց ներկայացուցիչ Մ.Մանուկյանը։

2018 թվական հուլիսի 20-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և ներկայացված բողոքները Վճռաբեկ դատարանի վարույթ ընդունելու մասին։

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել։

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Քննիչի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. *«2007թ. սեպտեմբերի 7-ին, ժամը 22-ի սահմաններում, 19.11.1985թ. ծնված Կարինե Ալբերտի Մովսեսյանը վարացել և փեղափոխվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, որտեղ 2007թ. սեպտեմբերի 14-ին, ժամը 7.20-ին մահացել է։*

(…)

Համաձայն 23.04.2008թ. ստացված թիվ 6 եզրակացության՝ Կ.Մովսեսյանի մահը վրա է հասել օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայից՝ գլխուղեղի կենսականորեն կարևորագույն ֆունկցիաների խանգարման ֆոնի վրա, (…) նրա մոտ ի ծնե հիվանդության մասին վկայող փաստեր չեն հայտնաբերվել, (…) առաջին բուժ. օգնություն ցուցաբերած անձնակազմի, հիվանդանոցում բժիշկների կողմից բուժ. օգնությունը, իրականացված բուժումը, ներարկումները կատարվել են պատշաճ, բավարար, առանց թերացումների և ճիշտ ու ժամանակին:

Այսպիսով, նյութերի նախապատրաստմամբ հիմնավորվել է, որ Կարինե Մովսեսյանի մահը վրա է հասել օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայից (…), ուստի քրեական գործի հարուցումը ենթակա է մերժման՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով»[1]:

8. 2008 թվականի ապրիլի 25-ին Նոր Նորքի քննչական բաժնի պետը միջնորդագիր է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՊՓԲԸ գլխավոր տնօրեն Ա.Պետրոսյանին՝ հետևյալ բովանդակությամբ. *«Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ բուժ. անձնակազմը [բժիշկ Անժելա Գևորգովա, բուժքույր՝ Արմինե Ազիզյան և վարորդ՝ Մերուժան Հովակիմյան] տեղ է հասել կանչից շուրջ 40 րոպե ուշացումով, տեղում բժշկուհի՝ Ա.Գևորգովան հանձնարարել է ներարկել բուժքրոջը Ռելանիում և Մագնեզիում տեսակի դեղամիջոցները, սակայն կանչի թերթիկի մեջ նշել է միայն Ռելանիում տեսակի դեղամիջոցը, բացի այդ, տեղում որոշելով տեղափոխել հիվանդին հիվանդանոց՝ պրոցեսը կատարվել է շատ դանդաղ, անկազմակերպ և վարորդն իր պարտականությունները /հիվանդին իջեցնելու, մեքենայում տեղավորելու կապակցությամբ/ չի կատարել պատշաճ ձևով, որից հետո բժիշկ Ա.Գևորգովան հիվանդի կողքին նստելու փոխարեն նստել է մեքենայի առջևի նստատեղին՝ անմիջական հսկողությունից դուրս թողնելով ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդին (…):*

(…) [Հ]իմնավորված եմ համարում այն հանգամանքը, որ առաջին բուժօգնության մեկնած հիշյալ անձնակազմը ցուցաբերել է ոչ պատշաճ բուժ.օգնություն, թույլ է տվել թերացումներ և բժշկին ոչ վայել դրսևորումներ՝ արհամարհելով, վիրավորելով հիվանդի ծնողներին, հիվանդին թողնելով ոչ անմիջական հսկողության տակ և հասել են դեպքի վայր խիստ ուշացումով (…)»[2]:

Ի պատասխան Նոր Նորքի քննչական բաժնի պետ Հ.Բաղդասարյանի գրության՝ Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՊՓԲԸ գլխավոր տնօրեն Ա.Պետրոսյանը գրությամբ հայտնել է. *«Ի պատասխան Ձեր*

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 3-4:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 10-11:

(…) միջնորդագրի հայտնում ենք, որ (…) տեղի է ունեցել բուժ. խորհրդի նիստ, որտեղ քննարկվել է միջնորդագրում նշված կանչի մանրամասները, աշխատակիցների կողմից ներկայացվել են բացատրագրեր, որի արդյունքում (…) բժշկուհի Անժելա Գևորգովան պետական և աշխատանքային կանոնակարգի կոպիտ խախտման համար ստացել է գրավոր նկատողություն»[1]:

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի մայիսի 26-ի որոշման համաձայն՝ *«Ընդհանուր իրավասության դատարանը, հետազոտելով Կարինե Մովսեսյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերը, համադրելով դրանք իրենց համակցության մեջ, տալով դրանց քրեաիրավական գնահատականը, հանգեց հետևության, որ քննիչի կողմից ձեռնարկվել են նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, սակայն կատարված գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով չի հիմնավորվել հանցագործության դեպքի առկայությունը, ինչը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ քրեական գործի վարույթը բացառող հանգամանք է դիտվում»*[2]:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 4-ի որոշման համաձայն՝ *«(…) [Ը]նդհանուր իրավասության դատարանը, պահպանելով ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջները, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում, այն բեկանելու հիմքեր չկան, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մերժել»*[3]:

<u>Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքների հեղինակները փաստել են, որ Եվրոպական դատարանի՝ *«Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի»* գործով կայացված վճիռը նոր հանգամանք է դատական ակտը վերանայելու համար: Մասնավորապես, դիմողներ Ա.Մովսեսյանը, Գ.Խաչատրյանն ու նրանց ներկայացուցիչ Մ.Մանուկյանը վճռաբեկ բողոքում խնդրել են վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը, բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 4-ի դատական ակտը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վճռաբեկ բողոքում նշել է, որ Եվրոպական դատարանը կյանքի հիմնարար իրավունքի խախտում է արձանագրել՝ նկատի ունենալով, որ Կ. Մովսեսյանի մահվան դեպքի առթիվ

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 51:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 65:
[3] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 156:

պաշտոնական քննությունը սահմանափակվել է նյութերի նախապատրաստմամբ, որի շրջանակներում տուժողի հայրը՝ Եվրոպական դատարանում դիմումատու՝ Ա. Մովսեսյանը, չի ունեցել համապատասխան դատավարական կարգավիճակ և իր փաստարկները, հիմնավորումներն ու նյութերը ներկայացնելու և դրանց պատշաճ քննարկումն ապահովելու հնարավորություն: Արձանագրված խախտումը ընույթով այնպիսին է, որ այն հնարավոր է վերացնել Կ. Մովսեսյանի մահվան դեպքի հանգամանքների՝ պատշաճ իրավական ընթացակարգով՝ վարույթում համապատասխան շահեր իրացնող անձանց դատավարական կարգավիճակն ու դրանից բխող դատավարական հնարավորությունները երաշխավորող պաշտոնական վարույթի շրջանակներում հետազոտությամբ:

Արդյունքում բողոքաբերը խնդրել է վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը և բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի մայիսի 26-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումներն ու գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում արձանագրելու փաստն արդյո՞ք ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը վերանայելու հիմք է:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝*

(…)

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է **միայն***[1] *օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի (մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ) համաձայն՝

«1. *Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-935 որոշումը:

(…)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(…)։

2. Սույն հոդվածի առաջին մասի (…) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (…) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից։

(…)»։

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զալյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Դավիթ Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09 որոշումները)։

14. *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատու Ալբերտ Մովսեսյանի դստեր նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային պարտավորության խախտում։

Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման դեպքում արդյունավետ քննություն իրականացնելու պետության պարտավորության մասին իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(…) 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային պարտավորությամբ պետությունից պահանջվում է ստեղծել այնպիսի արդյունավետ անկախ դատական համակարգ, որ բացահայտվի բուժաշխատողների խնամքի տակ եղած հիվանդների մահվան պատճառը՝ թե՛ պետական և թե՛ մասնավոր հաստվածում, և դրա համար պատասխանատու անձինք ենթարկվեն*

պատասխանատվության (...): Նշված ընթացակարգային պարտավորությունը վերաբերում է ոչ թե արդյունքին, այլ միայն միջոցներին (...):

(...) Դատարանը մի շարք առիթներով նշել է, որ 2-րդ հոդվածով պահանջվող արդյունավետ դատական համակարգը կարող է ներառել, իսկ որոշ հանգամանքներում պետք է ներառի քրեական իրավունքի օգնությանը դիմելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, եթե կյանքի իրավունքի կամ անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտումը չի կատարվել դիտավորությամբ, ապա 2-րդ հոդվածով սահմանված՝ արդյունավետ դատական համակարգ ստեղծելու պոզիտիվ պարտավորությունը պարտադիր ձևով չի ենթադրում յուրաքանչյուր գործի դեպքում քրեական իրավունքում առկա իրավական պաշտպանության միջոցի տրամադրում: Բժշկական անփութության կոնկրետ դեպքերում այդ պարտականությունը կարող է կատարվել, օրինակ, եթե դատական համակարգով տուժողներին հնարավորություն է տրվում օգտվելու քաղաքացիական գործերով դատարաններում առկա իրավական պաշտպանության միջոցից՝ ինքնուրույն կամ քրեական գործերով դատարաններում առկա իրավական պաշտպանության միջոցի հետ համատեղ՝ տվյալ բժիշկների մասով պատասխանատվություն սահմանելու և քաղաքացիական գործով ցանկացած պատշաճ փոխհատուցում ստանալու հնարավորություն տալով, ինչպես օրինակ՝ վնասների վերաբերյալ հանձնարարությունը կամ որոշման հրապարակումը: Կարող են կիրառվել նաև կարգապահական միջոցներ (...)»[1]:

Վերոգրյալ դրույթները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանն ընդգծել է. *«(...) 2007 թվականի սեպտեմբերի 7-ի երեկոյան դիմումատուի դուստրը՝ Կ.Մ.-ն, որը մորավորապես հինգ շաբաթական հղի է եղել, իրեն վատ է զգացել և սկսել է ցնցվել: Կանչվել է շտապօգնություն. նրան ախտորոշել են ցնցումային համախտանիշ, կատարել են երկու ներարկում և տեղափոխել են հիվանդանոց, որտեղ 2007 թվականի սեպտեմբերի 14-ին նա մահացել է: Նա այլևս գիտակցության չի եկել: Դիմումատուն չի պնդել կամ ենթադրել, որ իր դուստրը հիվանդանոց տեղափոխվելուց հետո չի ստացել անհրաժեշտ բժշկական օգնություն: Այնուամենայնիվ, նա պնդել է, որ շտապօգնության բժիշկը , բուժքույրը իր դստերն առաջին օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել և, ավելին, ներարկել են այնպիսի նյութեր, որոնք հակացուցված են եղել՝ հաշվի առնելով նրա հղիությունը, շնչառական ինդիրները և արյան ցածր ճնշումը:*

(...)

(...) [Դ]իմումատուի դստեր մահվանը հանգեցնող իրադարձությունները և ներգրավված բուժանձնակազմի ենթադրյալ պատասխանատվությունը հարցեր են, որոնք պետք է ուսումնասիրվեն այդ իրադարձությունները

[1] Տե՛ս *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 61-62-րդ կետերը:

պարզաբանելու համար նախատեսված մեխանիզմների համապատասխանության տեսանկյունից՝ հնարավորություն տալով, որպեսզի գործի փաստերը ենթարկվեն հանրային վերահսկողության, մասնավորապես, ի շահ դիմումատուի (...): Հետևաբար, Դատարանը պետք է ուսումնասիրի, թե արդյոք կարող է, համաձայն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի, առաջանալ պետության պատասխանատվության հարցը՝ դատական համակարգի՝ դիմումատուի դստեր մահվանը հանգեցրած անփութության համար պատասխանատվություն սահմանելու ենթադրյալ անկարողության հետ կապված: Այն պետք է ուսումնասիրի, թե արդյոք կարելի է ասել, որ իրավական պաշտպանության հասանելի միջոցները միասին վերցված ապահովել են մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և տուժողին համապատասխան փոխհատուցում տրամադրելու համար բավարար փաստերը հաստատող իրավական միջոցների առկայությունը»[1]:

14.1. Անդրադառնալով քննվող գործի հանգամանքներին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«(...) Դատարանն ի սկզբանե նշում է, որ դիմումատուի դստեր մահվան առնչությամբ, որպես այդպիսին, որևէ քրեական վարույթ չի հարուցվել, սակայն Կ.Մ.-ի մահվան օրը Վարչական շրջանի դատախազությունը նրա մահվան առնչությամբ հետաքննություն է սկսել, որի ընթացքում նշանակվել է դիահերձում, ինչպես նաև հարցաքննվել է Կ.Մ.-ի բուժման գործընթացին ներգրավված բուժանձնակազմը: Այս առնչությամբ Դատարանը նկատում է, որ պաշտոնապես հարուցված քրեական վարույթի բացակայության պայմաններում, հարցաքննված անձանց, այդ թվում՝ շտապօգնության բժշկին և բուժքրոջը պարզապես հնդրել են իրադարձությունների վերաբերյալ բացատրություն տալ: Ավելին, չնայած շտապօգնության բժշկի և բուժքրոջ կողմից տրված՝ իրադարձությունների վերաբերյալ բացատրությունները՝ ներարկված դեղամիջոցների տեսակի և քանակի մասով, հակասել են միմյանց, քննիչը որևէ լուրջ քայլ չի ձեռնարկել նրանց սկզբնական ցուցմունքների միջև անհամապատասխանությունները պարզաբանելու համար (...): Դատարանն այնուհետև նկատում է, որ քննության ընթացքում հարցաքննված բուժաշխատողներից ոչ մեկը հետագայում չի կանչվել դատարանում երդմամբ ցուցմունք տալու համար՝ չնայած դիմումատուն այդպիսի հատուկ պահանջ էր ներկայացրել, ինչը կարող էր հնարավորություն տալ ստուգելու նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Հարկ է նշել, որ թե՛ քննություն իրականացնող մարմինները և թե՛ դատարաններն իրենց որոշումները կայացնելիս հիմնվել են բուժանձնակազմի անդամների վերոնշյալ ցուցմունքների վրա (...):*

(...) Դատարանը նաև նշում է, որ քննություն իրականացնող մարմինը հետաքննության ժամանակ չի ապահովել դիմումատուի անմիջական մասնակցությունը: Քանի որ չի հարուցվել քրեական վարույթ, դիմումատուն վարույթում չի ունեցել տուժողի պաշտոնական կարգավիճակ, որը նրան թույլ

[1] Տե՛ս *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 63-րդ և 65-րդ կետերը:

կրար օգտվելու այդ կարգավիճակին հատուկ իրավունքներից, ինչպես օրինակ՝ գործի նյութերում ներառելու համար փաստաթղթեր կամ այլ նյութեր ներկայացնելը կամ փորձագետներին հարցեր ուղղելը: Փաստացի, դիմումատուն քննությունն իրականացնող մարմին մի քանի անգամ ներկայացրել է համապատասխան բժշկական ցուցումների պատճեններն ու բժշկական գրականությունից քաղվածքներ և հետագայում դատարանում հղում է կատարել դրանց, սակայն նրա փաստարկներն այդպես էլ չեն ուսումնասիրվել: Ավելին, չնայած այն փաստին, որ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննությանը դիմումատուի մասնակցությունն ի վերջո թույլատրվել է Վարչական շրջանի դատախազի 2008 թվականի մարտի 3-ի որոշմամբ, պարզվում է, որ նրա մասնակցությունը զուտ ձևական բնույթ է կրել, քանի որ համապատասխան փաստաթղթային ապացույցներով հիմնավորված նրա փաստարկները չեն ուսումնասիրվել փորձագետների հանձնաժողովի կողմից՝ իր եզրահանգումներն անելու ժամանակ (...): Հետևաբար, չի կարելի համարել, որ դիմումատուն՝ հաշվի առնելով նրա անմիջական հետաքրքրվածությունը և անձնական մտահոգությունը հետաքննության առարկայի նկատմամբ, գործընթացին ներգրավված է եղել այնքանով, որքանով անհրաժեշտ է եղել նրա շահերը պաշտպանելու համար:

(...) [Ո]՛չ դիահերձմամբ և ո՛չ էլ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննությամբ վերջնականապես չի պարզվել դիմումատուի դստեր մահվան պատճառը: Այսպիսով, համաձայն դիահերձման արձանագրության, նա մահացել է օրգանիզմի ընդհանուր թունավորումից, որն առաջացել է նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի հետևանքով առաջացած գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների խանգարման հետևանքով: Նշանակվել է երկու լրացուցիչ դատաբժշկական փորձաքննություն. մեկը նախաքննության ընթացքում, որի արդյունքում կայացվել է թիվ 89 դատաբժշկական եզրակացությունը, և մյուսը՝ դատախազի 2008 թվականի մարտի 3-ի որոշման համաձայն իրականացված լրացուցիչ քննության ընթացքում, որի արդյունքում կայացվել է թիվ 6 դատաբժշկական եզրակացությունը: Չնայած պատասխանող Կառավարությունը Դատարանին չի տրամադրել թիվ 89 դատաբժշկական եզրակացության ամբողջական և ճշգրիտ օրինակը, ըստ հասանելի նյութերի՝ այս եզրակացության մեջ նշվել է, որ Կ.Մ.-ին ցուցաբերված բժշկական օգնությունը եղել է ճիշտ և ախտանիշների վրա հիմնված: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք այս դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է օրգանիզմի ընդհանուր թունավորման պատճառը, որն առաջացել է նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի հետևանքով առաջացած գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների խանգարման հետևանքով, որը ենթադրաբար Կ.Մ.-ի մահվան պատճառն է եղել: Ավելին, թիվ 6 դատաբժշկական եզրակացությամբ նույնպես հստակ չի պարզվել, թե կոնկրետ ինչի հետևանքով է առաջացել

Կ.Մ.-ի նյարդային անոթների թրոմբոզը, որը հանգեցրել է գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների խանգարման, ինչի հետևանքով էլ տեղի է ունեցել օրգանիզմի ընդհանուր թունավորումը: Միևնույն ժամանակ, այս եզրակացության մեջ նշվել է, որ պարզ չէ, թե արդյոք Կ.Մ.-ն ծնված օրվանից տառապել է այնպիսի հիվանդությամբ, որը հավանաբար կարող էր կապ ունենալ նրա մահվան հետ, և որ համապատասխան բժշկական փաստաթղթերի բացակայության պայմաններում հնարավոր չի եղել պարզել, թե արդյոք նա ունեցել է որևէ ֆունկցիոնալ խանգարում, որը կարող էր առաջացնել ցնցումային համախտանիշը (...): Այս առնչությամբ Դատարանը նկատում է, որ քննություն իրականացնող մարմինը և դատարանները որևէ փորձ չեն արել հանգուցյալի՝ նրա մահվանը հանգեցրած կրիտիկական վիճակի պատճառները պարզելու համար և, առանց լրացուցիչ պարզաբանման, բավարար են համարել դատաբժշկական փորձագետների եզրահանգումներին հղում կատարելը, որոնցով, ինչպես արդեն նշվել է, պարզապես հաստատվել է մահվան՝ դիահերձմամբ որոշված հնարավոր պատճառը, սակայն չի տրվել որևէ բացատրություն, թե նախ և առաջ այդ վիճակին ինչի հետևանքով կարող էր առաջանալ: Այնուհետև Դատարանը նկատում է, որ դիմումատուն և հանգուցյալի մյուս բարեկամները ոչ հետաքննության և ոչ էլ դատական վարույթի ընթացքում չեն հարցաքննվել՝ պարզելու համար, թե արդյոք նախկինում նա ունեցել է որևէ այնպիսի խանգարում, որը կարող էր հանգեցնել նյարդային անոթների տարածուն և ցրված թրոմբոզի: Այդպիսի հանգամանքներում Դատարանը գտնում է, որ իշխանությունները չեն գործել բավարար ջանասիրությամբ և խնամքով, որպեսզի պարզեն դիմումատուի դստեր մահվան պատճառը:

(...) [Հ]ետաքննությամբ պարզվել է, որ շտապօգնության բրիգադը դիմումատուի դստերը պատշաճ բժշկական օգնություն չի ցուցաբերել: Հետևաբար, զարմանալի է այն փաստը, թե ինչու դրա մասին ընդհանրապես չի նշվել կամ այն հաշվի չի առնվել քրեական վարույթ հարուցելը մերժելու մասին քննիչի որոշման մեջ: Ավելին, այս որոշման մեջ, որը հետագայում հաստատվել է դատարանների կողմից, նշվել է, որ Կ.Մ.-ին առաջին բժշկական օգնությունը տրամադրվել է պատշաճ ձևով, մինչդեռ, միևնույն ժամանակ, բժիշկն իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար քննիչի պահանջով ստացել է նկատողություն: Այդպիսի հանգամանքներում պարզ է դառնում, որ քննություն իրականացնող մարմինը դիմումատուի դստերը ցուցաբերված բժշկական օգնության պատշաճ լինելու վերաբերյալ հանգել է ոչ ճիշտ եզրահանգումների, և որ դատարանները պարզապես հաստատել են այդ եզրահանգումները՝ առանց լրացուցիչ ուսումնասիրելու, թե արդյոք շտապօգնության բրիգադի՝ իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելը հանգուցյալի վիճակի վրա որևէ որոշիչ բացասական ազդեցություն է ունեցել (...):

(…)։

Դատարանը նկատում է, որ տվյալ ժամանակահատվածում դիմումատուն հնարավորություն չի ունեցել պետության դեմ քաղաքացիական հայց ներկայացնելու՝ իր դստեր մահվան հետևանքով կրած ոչ նյութական վնասի հատուցման պահանջով, քանի որ նյութական վնասը չի համարվել վնասի այնպիսի տեսակ, որի դիմաց կարող էր հատուցում պահանջվել քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում՝ մինչև Քաղաքացիական օրենսգրքում 2014 թվականին կատարված փոփոխությունները։ Ինչ վերաբերում է նյութական վնասի հատուցում պահանջելու հնարավորությանը, ապա Կառավարությունը պնդել է, որ այդ հնարավորությունը կախված է քրեական գործով վարույթի արդյունքից (…)։

(…) Այս առնչությամբ Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթները համարվող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտում պարունակող գործերում խախտման հետևանքով առաջացած ոչ նյութական վնասի հատուցումը պետք է, մասնավորապես, հասանելի լինի՝ որպես փոխհատուցման շրջանակի մի մաս (…)։

(…) Այն հանգամանքներում, երբ դիմումատուն ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու որևէ հնարավորություն չի ունեցել, մինչդեռ նյութական վնասի դիմաց հատուցում ստանալու հնարավորությունը, ինչպես պնդել է Կառավարությունը, կախված է եղել քրեական վարույթի արդյունքներից (…), Դատարանը համարում է, որ պաշտպանության քաղաքացիաիրավական միջոցներով հնարավոր չէր լինի հասնել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված արդյունքին, այն է՝ պարզել դիմումատուի դստեր մահվան հետ կապված հանգամանքները և պատասխանատու անձանց ենթարկել պատասխանատվության։ (…) Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային պարտավորության խախտում»[1]։

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *«Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի»* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում արձանագրելու փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը վերանայելու հիմք է։

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյո՞ք վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է։

[1] Տե՛ս *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 66-75-րդ կետերը։

17. Վճռաբեկ դատարանը կրկնում է նախկինում իր կողմից արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև «restitutio in integrum»-ն ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների գնահատումը վկայում է, որ գործի վերաբացման արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա*[1]: *Ընդ որում, այդ առումով հատկանշական է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի՝ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» հանձնարարականը, որտեղ նշվում է, որ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ»*[2]:

18. Հաշվի առնելով *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 13-14.1-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, գնահատելով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ *Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման

[1] Տե՛ս *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը:
[2] Տե՛ս *Հրաչյա Մուրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի որոշման 26-րդ կետը:

վերանայման արդյունքում Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մայիսի 26-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումները պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Դիմողներ Ալբերտ Մովսեսյանի և Գայանե Խաչատրյանի վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը վերանայել:

2. Դիմողներ Ալբերտ Մովսեսյանի, Գայանե Խաչատրյանի և Սամվել Դանիելյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի մայիսի 26-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

46. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ2/0039/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ ամբաստանյալ՝ Ս.ՔՈՉԱՐՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 11-ի որոշման դեմ ամբաստանյալ Սեպուհ Սերգեյի Քոչարյանի պաշտպան Հ.Մանգոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի մայիսի 15-ին ՀՀ ոստիկանության Իջևանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 38155617 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ Սեպուհ Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ս.Քոչարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջինիս գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2017 թվականի հուլիսի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով ամբաստանյալ Ս.Քոչարյանն արդարացվել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի դեկտեմբերի 11-ին բողոքը բավարարել է և Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը բեկանել. Ս.Քոչարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

4. Վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Ս.Քոչարյանի պաշտպան Հ.Մանգոյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի կողմից Ս.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. *«[Ի]րեն պատկանող «Գազ 3302-414» մակնիշի 76 QQ 007 համարանիշի ավտոմեքենայով տեղափոխվող 3.2 [խմ] հաճար տեսակի կողահատ տախտակի օրինականությունը հավաստելու՝ պատրաստականությունից ազատվելու նպատակով, 2017 թվականի մայիսի 4-ին հետաքննության մարմնին է ներկայացրել ակնհայտ կեղծ փաստաթուղթ՝ նշված կողահատ տախտակի ձեռքբերման հետ որևէ առնչություն չունեցող, Տավուշի մարզի Բերդավան գյուղի բնակիչ Սամվել Մուշեղի Հովհաննիսյանի անվամբ 3 [խմ] շինափայտ ձեռք բերելու համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղից տրված թիվ Ա 8890635597 ապրանքների մատակարարման հարկային հաշիվը և թիվ 88 անդորրագիրը»*[1]:

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(…) [Ա]մբաստանյալ Սեպուհ Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ և նրան*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 156:

պետք է արդարացնել (...):

(...) [Հ]եւրազուրված ապացույցները բավարար չեն հանգելու այն եզրակացության, որ ամբաստանյալը կատարել է այն արարքը, որը վերագրվում է նրան:

(...)

Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ վարույթ իրականացնող մարմինը նշելով, որ Սեպուհ Քոչարյանը ներկայացրել է ակնհայտ կեղծ փաստաթուղթ՝ միաժամանակ պարզաբանում է, որ այն միանգամայն օրինական փաստաթուղթ է, որը տրվել է Սամվել Հովհաննիսյանին՝ նմանատիպ շինափայտ ձեռք բերելու համար:

(...) [Ն]ույն որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինն ապացուցում է, որ փաստաթուղթն ակնհայտ կեղծ չէ, պարզապես այն տվյալ ապրանքին վերաբերելի չէ:

Սա նշանակում է, որ ամբաստանյալը չի կարող պատասխանատվության ենթարկվել ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու համար, քանի որ տվյալ փաստաթուղթն ակնհայտ կեղծ չէ: Փաստաթղթի ակնհայտ կեղծ լինելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը որևէ փաստ չի մատնանշել (...)»[1]:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(...) [Գ]ործի փաստական հանգամանքների մասին [Առաջին ատյանի] դատարանի դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին:*

(...) Ս.Քոչարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումից չի բխում առաջին ատյանի դատարանի այն պարզաբանությունը, որ վարույթն իրականացնող մարմինը այդ որոշման մեջ պարզաբանել է, թե Ս.Քոչարյանի ներկայացրած փաստաթուղթը միանգամայն օրինական է, որը տրվել է Սամվել Հովհաննիսյանին՝ նմանատիպ շինափայտ ձեռք բերելու համար:

(...) Ս.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումից հստակ երևում է, որ վերջինս որպես մեղադրյալ է ներգրավվել իրեն պարկանող «Գազ 3302-414» մակնիշի 76 QQ 007 համարանիշի ավտոմեքենայով տեղափոխվող 3.2 [իմ] հաճար տեսակի կողահատ տախտակի օրինականությունը հավաստելու՝ պատասխանատվությունից ազատվելու նպատակով, 2017թ. մայիսի 4-ին հետաքննության մարմնին ակնհայտ կեղծ փաստաթուղթ՝ նշված կողահատ տախտակի ձեռք բերման հետ որևէ առնչություն չունեցող, Տավուշի մարզի Բերդավան գյուղի բնակիչ Սամվել Մուշեղի Հովհաննիսյանի անվամբ 3 [իմ] շինափայտ ձեռք բերելու համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնա-

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 47-48:

ճյուղից տրված թիվ Ա 8890635597 ապրանքների մատակարարման հարկային հաշիվը և թիվ 88 անդորրագիրը ներկայացնելու համար:

Այդ որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը որևէ պարզաբանում չի ներկայացրել այն առումով, որ Սամվել Հովհաննիսյանի անվամբ տրված փաստաթուղթը համարվում է միանգամայն օրինական, այլ հավաստել է այն փաստը, որ Ս.Հովհաննիսյանի անվամբ տրված և Ս.Քոչարյանի կողմից ներկայացված փաստաթղթերը որևէ առնչություն չունեն վերջինիս կողմից տեղափոխվող կողահատ տախտակի ձեռք բերման հետ:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ [Ա]ռաջին ատյանի դատարանը Սամվել Հովհաննիսյանի անվամբ տրված և ամբաստանյալ Ս.Քոչարյանի կողմից հետաքննության մարմին ներկայացված փաստաթղթերը համարելով օրինական՝ անտեսել է այն հանգամանքը, որ փաստաթղթերը լինում են կեղծ ինչպես ձևի, այնպես էլ բովանդակային առումով:

Տվյալ դեպքում, վերը նշված ապացույցների վերլուծությունից ակնհայտ է, որ Սեպուհ Քոչարյանը որպես իր վարած ավտոմեքենայում առկա 3,2 խմ հաճարի շինափայտի ձեռքբերման փաստաթուղթ ճանապարհային ոստիկանության ծառայողներին է ներկայացրել «Հայանտառ» ՊՈԱ կազմակերպության կողմից Բերդավան գյուղի բնակիչ Սամվել Հովհաննիսյանին 3 խմ հաճար տեսակի շինափայտ ձեռք բերելու համար 26.04.2017թ. տրված թիվ Ա8890635597 ապրանքների մատակարարման հարկային հաշիվը:

(...) Սեպուհ Քոչարյանի կողմից որպես իր վարած ավտոմեքենայում առկա շինափայտի ձեռք բերման փաստաթուղթ ներկայացված հաշիվ ապրանքագիրը տրված է եղել այլ անձի անվամբ, դրանում առկա շինափայտի ծավալը չի համապատասխանել ամբաստանյալի վարած ավտոմեքենայում առկա շինափայտի ծավալին, և այն ձեռք է բերվել բոլորովին այլ եղանակով՝ գործով չպարզված անձից, այլ ոչ թե ինչպես նշված է ներկայացված փաստաթղթում՝ «Հայանտառ» ՊՈԱ կազմակերպության Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղից, որպիսի հանգամանքները գիտակցել է նաև Սեպուհ Քոչարյանը: Այս ամենից ակնհայտ է, որ Սեպուհ Քոչարյանի կողմից ներկայացված փաստաթուղթը բովանդակությամբ կեղծ է (...)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով, Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ազդել են գործի ելքի վրա:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 106-109:

Բողոքաբերը գտել է նաև, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի կիրառության վերաբերյալ: Մասնավորապես.

1) իրավասու՞ էր արդյոք Վերաքննիչ դատարանն արդարացման դատական ակտի բեկանման իրավաչափությունը սահմանող հատուկ նորմի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդված) պայմաններում չկիրառելու այն և ղեկավարվելու վերաքննիչ դատարանի լիազորությունները սահմանող ընդհանուր նորմերով,

2) արդյո՞ք իրական պաշտոնական փաստաթուղթ ներկայացնելը (քննարկվող դեպքում՝ անդորրագիր), որը միայն վերաբերելի չէ անտառանյութին, բավարար է փաստելու, որ կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռին կամ գործը վերադարձնել ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու հանցակազմի առարկա հանդիսացող կեղծ փաստաթղթի քրեաիրավական հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Ս.Քոչարյանի կողմից օգտագործված Ս.Հովհաննիսյանի անվամբ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղից տրված անդորրագիրը և հարկային հաշիվը հանդիսանում են ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու հանցակազմի առարկա:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում հետևյալ արարքի համար. *«Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ*

անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը»:

13. Մեջբերված քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ս.Գաբրիելյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում. *«(...) ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հանցագործության առարկան՝ իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթը, դրոշմը, կնիքը, ձևաթուղթը, տրանսպորտային միջոցի պետհամարանիշը:*

Տվյալ դեպքում որպես պաշտոնական փաստաթուղթ պետք է համարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տրվող այն վավերացված տեղեկատվությունը, որը գտնվում է նյութական կրիչների վրա և հավաստում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր կամ իրադարձություններ:

Փաստաթղթերի, դրոշմների և մյուս առարկաների կեղծումը կարող է իրականացվել երկու ձևով՝

1. իրական փաստաթղթերի կամ մյուս առարկաների տեքստի, բովանդակության, դրանցում առկա տեղեկատվության աղավաղումը տարբեր եղանակներով (ջնջում, քերծվածք, լրացում),

2. ամբողջովին կեղծ փաստաթղթի կամ այլ առարկայի պատրաստում:

Օգտագործել կեղծ փաստաթղթեր՝ նշանակում է դրանք շրջանառության մեջ դնել սեփական կարիքների համար՝ դրանց միջոցով իրավունքներ ձեռք բերելու կամ պատասխանատվությունից ազատվելու նպատակով (...)»[1]:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա հանդիսացող «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ս.Պապիկյանի* և *Ա.Սարգսյանի* վերաբերյալ որոշմամբ՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով «իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ» եզրույթի բնութագրական հատկանիշներին՝ Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ հիշյալ եզրույթը ենթադրում է, որ համապատասխան հանցակազմի առարկան է կազմում իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, իրադարձություն հավաստող այն փաստաթուղթը, որը*

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սամվել Գաբրիելյանի* գործով 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵՇԴ/0115/01/09 որոշման 16-րդ կետը:

տրամադրում է որևէ իրավունք կամ ազատում պատասխանատվությունից: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խնդրո առարկա հոդվածի իմաստով «պատասխանատվությունից ազատել» եզրույթը ներառում է ինչպես իրավական պատասխանատվության որևէ տեսակից (քրեական, վարչական, կարգապահական, քաղաքացիահիրավական և այլն), այնպես էլ որևէ պարտականությունից ազատելու հարկանիշը (…):

(…) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի իմաստով իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ կարող է տրվել ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց կազմակերպությունների, այնպես էլ այլ իրավաբանական անձանց կողմից (…)»[1]:

15. Ընդհանրացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված՝ փաստաթղթեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ գործողություններից որևէ մեկն իրականացնելով՝ պաշտոնական փաստաթուղթ *կեղծելով* կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք *օգտագործելու կամ իրացնելու նպատակով*, կեղծ փաստաթուղթ *իրացնելով*, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ *օգտագործելու* եղանակով:

Անդրադառնալով *ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու* հանցակազմին՝ հարկ է նկատել, որ վերոնշյալ հանցագործության առարկա հանդիսացող փաստաթուղթը ևս պետք է համապատասխանի պաշտոնական փաստաթղթի չափանիշներին, այն է՝ հավաստի իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, իրադարձություն, որն անձին վերապահում է որևէ իրավունք կամ ազատում պատասխանատվությունից, պետք է գտնվի նյութական կամ էլեկտրոնային կրիչի վրա, ունենա որոշակի վավերապայմաններ, օրինակ՝ կնիք, դրոշմ, ստորագրություն և այլն: Ընդ որում, պաշտոնական փաստաթուղթը կարող է տրվել ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց կազմակերպությունների, այնպես էլ այլ իրավաբանական անձանց կողմից:

Ինչ վերաբերում է քննարկվող հանցագործության առարկա ակնհայտ կեղծ փաստաթղթին, ապա որպես այդպիսին կարող են հանդես գալ՝

ա) տարբեր եղանակներով աղավաղված, փոփոխված իրական փաստաթուղթը (ջնջում, քերծվածք, լրացում): Ընդ որում, կարող են կեղծվել ինչպես իրական փաստաթղթի վավերապայմանները (օրինակ՝ ստորագրությունը), այնպես էլ դրա բովանդակությունը (օրինակ՝ այն անձի վերաբերյալ տվյալները, ով կարող է օգտվել փաստաթղթում նշված իրավունքներից),

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սամվել Պապիկյանի և Արարատ Սարգսյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՐԴ/0116/01/15 որոշման 15-րդ կետը:

բ) ամբողջովին կեղծ փաստաթուղթը: Տվյալ դեպքում կեղծվում են ոչ թե իրական փաստաթղթի բովանդակությունը կամ վավերապայմանները, այլ ամբողջությամբ կեղծ փաստաթուղթ է պատրաստվում:

Այսպիսով, փաստաթղթերը կարող են կեղծ լինել թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով: Բովանդակային կեղծ փաստաթուղթ է ինչպես իրական փաստաթուղթը, որում կեղծ տվյալներ կամ գրառումներ են կատարված, կամ տարբեր եղանակներով փաստաթղթի իրական բովանդակությունը խեղաթյուրված է, այնպես էլ բովանդակությամբ ամբողջովին կեղծ փաստաթուղթը, այսինքն՝ այնպիսին, որը պարունակում է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Ձևով կեղծ փաստաթղթի դեպքում փոփոխված կամ աղավաղված են փաստաթղթի վավերապայմանները:

Ընդ որում, փաստաթղթի կեղծված լինելը պետք է ակնհայտ լինի, այսինքն՝ անձը գիտակցի, որ օգտագործում է կեղծ փաստաթուղթ և ցանկանա այն կատարել, ուստի քննարկվող հանցանքը սուբյեկտիվ կողմից կարող է դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ:

15.1. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ որպես «ակնհայտ կեղծ փաստաթուղթ» որևէ պարագայում չի կարող հանդես գալ իրական, սահմանված կարգով տրված փաստաթուղթը:

Նման փաստաթուղթ ապօրինի ձեռք բերելու կամ իրացնելու դեպքում կարող է խոսք գնալ **իրական (օրինական) փաստաթղթի ապօրինի շրջանառության մասին,** որը պատասխանատվություն է առաջացնում ՀՀ քրեական օրենսգրքի 326-րդ հոդվածով: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ և 326-րդ հոդվածները նախևառաջ տարբերվում են հանցագործության առարկայով, մասնավորապես, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնական փաստաթղթի կեղծման և **կեղծված փաստաթղթի** ապօրինի շրջանառության համար, ապա նույն օրենսգրքի 326-րդ հոդվածը՝ իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող **իրական փաստաթղթի** ապօրինի շրջանառության համար: Հետևաբար իրական փաստաթուղթը, որում որևէ կեղծիք առկա չէ, դուրս է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հանցագործության առարկայի շրջանակներից:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ս.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 3.2 խմ հաճար տեսակի կողահատ տախտակը տեղափոխելու օրինականությունը հավաստելու համար՝ պատասխանատվությունից ազատվելու նպատակով, հետաքննության մարմնին է ներկայացրել *ակնհայտ կեղծ փաստաթղթեր,* այն է՝ նշված կողահատ տախտակի ձեռքբերման հետ որևէ առնչություն չունեցող, Տավուշի մարզի Բերդավան գյուղի բնակիչ Ս.Հովհաննիսյանի անվամբ 3 խմ շինափայտ ձեռք բերելու համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի

անտառտնտեսություն» մասնաճյուղից տրված թիվ Ա 8890635597 ապրանքների մատակարարման հարկային հաշիվը և թիվ 88 անդորրագիրը[1]:

Առաջին ատյանի դատարանը Ս.Քոչարյանին հանցակազմի բացակայության հիմքով արդարացրել է՝ պատճառաբանելով, որ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ վարույթ իրականացնող մարմինը, նշելով, որ Ս.Քոչարյանն օգտագործել է ակնհայտ կեղծ փաստաթուղթ, միաժամանակ պարզաբանել է, որ այն միանգամայն օրինական փաստաթուղթ է, որը տրվել է Ս.Հովհաննիսյանին՝ նմանատիպ շինափայտ ձեռք բերելու համար: Այսինքն՝ փաստաթուղթն ակնհայտ կեղծ չէ, պարզապես այն տվյալ ապրանքին վերաբերելի չէ: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ամբաստանյալը չի կարող պատասխանատվության ենթարկվել ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու համար[2]:

Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Ս.Քոչարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանը, Ս.Հովհաննիսյանի անվամբ տրված և ամբաստանյալ Ս.Քոչարյանի կողմից հետաքննության մարմնին ներկայացված փաստաթղթերը համարելով օրինական, անտեսել է, որ փաստաթղթերը լինում են կեղծ ինչպես ձևի, այնպես էլ բովանդակային առումով: Ս.Քոչարյանի կողմից որպես իր վարած ավտոմեքենայում առկա շինափայտի ձեռք բերման փաստաթուղթ ներկայացված հաշիվ-ապրանքագիրը տրված է եղել այլ անձի անվամբ, դրանում առկա շինափայտի ծավալը չի համապատասխանել ամբաստանյալի վարած ավտոմեքենայում առկա շինափայտի ծավալին, և այն ձեռք է բերվել բոլորովին այլ եղանակով՝ գործով չպարզված անձից, այլ ոչ թե, ինչպես նշված է ներկայացված փաստաթղթում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղից, որպիսի հանգամանքը գիտակցել է նաև Ս.Քոչարյանը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Ս.Քոչարյանի կողմից ներկայացված փաստաթուղթը բովանդակությամբ կեղծ է[3]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15.1-րդ կետերում շարադրված իրավանորմերի վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել առ այն, որ Ս.Հովհաննիսյանի անվամբ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղից տրված թիվ Ա 8890635597 ապրանքների մատակարարման հարկային հաշիվը և թիվ 88 անդորրագիրը հանդիսանում են ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝

[1] Տե՛ս նաև սույն որոշման 5-րդ կետը:
[2] Տե՛ս նաև սույն որոշման 6-րդ կետը:
[3] Տե՛ս նաև սույն որոշման 7-րդ կետը:

ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու հանցակազմի առարկա, այն է՝ կեղծ փաստաթուղթ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ խնդրո առարկա փաստաթղթերը բովանդակային առումով կեղծ են, քանի որ տրված են այլ անձի անվամբ և վերաբերելի չեն համապատասխան ապրանքին: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ բովանդակությամբ ակնհայտ կեղծ փաստաթուղթը կամ տարբեր եղանակներով բովանդակային փոփոխությունների ենթարկված իրական փաստաթուղթն է, կամ ամբողջությամբ կեղծ փաստաթուղթը, որը պարունակում է իրականությանը չհամապատասխանող տվյալներ: Մինչդեռ Ս.Քոչարյանն օգտագործել է միանգամայն օրինական փաստաթղթեր, որոնք տրվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղից Ս.Հովհաննիսյանին, և դրանցում որևէ կեղծում չի կատարվել: Այսինքն՝ թիվ Ա 8890635597 ապրանքների մատակարարման հարկային հաշվի և թիվ 88 անդորրագրի վավերապայմաններն ու բովանդակությունը համապատասխանում են իրականությանը, պարզապես չեն վերաբերում Ս.Քոչարյանի կողմից տեղափոխված 3.2 խմ հաճար տեսակի կողահատ տախտակի ձեռքբերմանը, որպիսի պայմաններում տվյալ փաստաթղթերը չեն կարող ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա հանդիսանալ:

18. Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Ս.Քոչարյանի կողմից օգտագործված, Ս.Հովհաննիսյանի անվամբ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղից տրված անդորրագիրը և հարկային հաշիվը հանդիսանում են ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու հանցակազմի առարկա:

19. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Ս.Քոչարյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը բեկանելով և վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ Ս.Քոչարյանի օգտագործած փաստաթղթերն ակնհայտ կեղծ չեն և վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում արդարացնելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող

դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդող դատական սխալ, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռին:

20. Վերոշարադրյալի պայմաններում Վճռաբեկ դատարանն առարկայազուրկ է համարում անդրադառնալ բողոքաբերի կողմից սույն որոշման 8-րդ կետի 1-ին ենթակետում մատնանշված փաստարկին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ 423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սեպուհ Սերգեյի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

47. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0030/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Մ.ԱՐԱՄՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հովհաննես Մանվելի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշման դեմ Հ.Ղազարյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 17104917 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ Հովհաննես Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենգրքի 34-153-րդ հոդվածով:

2017 թվականի ապրիլի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դատավճիռը բեկանել և փոփոխել, Հ.Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ վերացրել:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Հ.Ղազարյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել մեղադրող Մ.Արամյանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշումը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Հ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) [Ն]ա 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու նպատակով այցելել է Երևան քաղաքի, Միկոյան փողոցի 4/2 հասցեում տեղակայված համար 159 դպրոցի տարածքում գործող թիվ 2/19 տարածքային ընտրական տեղամաս, որտեղ ժամը 09:14-ին ընտրողների գրանցման տեխնիկական սարքը սպասարկող մասնագետին է ներկայացրել իր՝ 004889846 համարի նույնականացման քարտը, ապա սահմանված կարգով քվեարկելուց հետո հեռացել է տեղամասից: Դրանից հետո Հ.Ղազարյանը մեկից ավելի անգամ քվեարկելու դիտավորությամբ վերադարձել է նույն ընտրատեղամաս և ժամը 09:29-ին ընտրողների գրանցման տեխնիկական սարքը սպասարկող մասնագետին է կրկին ներկայացրել իր նույնականացման քարտը, սակայն Հ.Ղազարյանն իր կամքից անկախ հանգամանք-*

ներում չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, քանի որ ընտրողների գրանցման տեխնիկական սարքը արձանագրել է վերջինիս կողմից ընտրություններին մասնակցելու համար կրկնակի գրանցվելու փորձ կատարելու փաստը (...)»[1]:

6. Առաջին ատյանի դատարանը, դատաքննության արագացված կարգ կիրառելով, Հ.Ղազարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ և, անդրադառնալով վերջինիս նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, փաստել է. *«(...) [Առաջին ատյանի] դատարանը ամբաստանյալ Հովհաննես Ղազարյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտում այն, որ նա նախկինում դատված չի եղել, իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, ըստ բնակության և աշխատանքի վայրերի բնութագրվում է դրական, շնորհակալագրերի է արժանացել ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի հրամանատարության կողմից, ինամքին է գտնվում առաջին կարգի հաշմանդամ թոշակառու տատը:*

Դատարանն ամբաստանյալ Հ.Ղազարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

Հաշվի առնելով Հ.Ղազարյանի կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, ինչպես նաև այն, որ վերջինիս մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով նախատեսված միջին ծանրության հանցագործություն, որի համար որպես հիմնական պատիժ է նախատեսված բացառապես ազատազրկման ձևով, [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ նրան ուղղելու, նոր հանցագործությունները կանխելու, ինչպես նաև սոցիալական արդարությունը վերականգնելու համար նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, ինչպես նաև սահմանել հոդվածի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ:

Միաժամանակ [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Ղազարյանի նկատմամբ հիմնական պատժի մասով կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (...):

(...)

[Առաջին ատյանի] դատարանը արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Ղազարյանի անձը դրական բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը էականորեն նվազեցնում են նրա կողմից կատարած հանցագործության և նրա անձի հանրության համար վտանգավորության

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 46:

ապրիճանը, ինչը հիմք է տալիս հանգելու հետևության, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու (...)[2]:

7. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, փաստել է. *«(...) Հաշվի առնելով ամբաստանյալ Հովհաննես Ղազարյանի կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու հետևության, որ Հովհաննես Ղազարյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:*

Մասնավորապես, Հովհաննես Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, [Ա]ռաջին ատյանի դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները, և դատավճռում նշված փաստարկները սույն գործի շրջանակներում չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:

(...)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքները, Հովհաննես Ղազարյանի կողմից կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և հանցավորի անձը բնութագրող վերոնշյալ տվյալներն իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու և նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու պայմաններում հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին, ինչը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից (...)[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 120-121:
[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 39-40:

գործի ելքի վրա, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, ըստ բողոք բերած անձի՝ Վերաքննիչ դատարանը չպետք է բավարարեր մեղադրողի բողոքը, քանի որ Առաջին ատյանի դատարանը, Հ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով հանգել էր ճիշտ հետևության: Բողոքաբերը, մատնանշելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմնավորումները, նշել է, որ դատարանը կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, և այն բեկանելու ու փոփոխելու հիմքեր չկան:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատական ակտը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Հ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև, պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված, ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությու-

ները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա[1]՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն[1]:

12. Նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քաղաքական իրավունքների և ազատությունների, մասնավորապես՝ ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս էական նշանակություն ունի խախտված հասարակական հարաբերությունների բնույթի, կատարած հանցանքի հանրային վտանգավորության աստիճանի, հանցանքի կատարման եղանակի պատշաճ գնահատումը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ընտրական իրավունքի պատշաճ իրացման հետ կապված հանցագործությունների համար նշանակված պատիժն առանց հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը նվազեցնող փաստական հանգամանքների առկայության պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակների արդյունավետ կենսագործումը և իր բացասական ազդեցությունը կունենա երկրում ընտրական գործընթացների կազմակերպման ու անցկացման բնականոն ընթացքի վրա:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու նպատակով այցելել է Երևան քաղաքի Միկոյան փողոցի 4/2 հասցեում տեղակայված համար 159 դպրոցի տարածքում գործող թիվ 2/19 տարածքային ընտրական տեղամաս և փորձել է մեկից ավելի անգամ կատարել քվեարկություն[2]:

---

[1] Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵԾԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԾԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սամսոն Ամիրխանյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, *Վանյա Բեգլյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, *Արամայիս Հովհաննիսյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, *Միհեր Հովհաննսիյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները:

[2] Մանրամասն տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Գնահատելով կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, Հ.Ղազարյանի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքի բացակայության փաստը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Հ.Ղազարյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը նրա կողմից կրելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթների կիրառման միջոցով[3]:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի հետ, նշել է, որ հաշվի առնելով Հ.Ղազարյանի կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և պահպանվող հասարակական հարաբերության բնույթը՝ Առաջին ատյանի դատարանի կողմից մատնանշված հանգամանքներն իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու հետևության, որ Հ.Ղազարյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Հ.Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ Առաջին ատյանի դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Ուստի դատավճռում նշված փաստարկները սույն գործի շրջանակներում, Վերաքննիչ դատարանի համոզմամբ, չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար[1]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման է ենթարկել ոչ միայն ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, այլ նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, հանցանքի կատարման եղանակը, մասնավորապես այն, որ Հ.Ղազարյանի կողմից խախտվել են ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, որն արտահայտվել է մեկից ավելի անգամ քվեարկելու փորձ կատարելով: Այսպես՝ ամբաստանյալը ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու

[3] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[1] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

նպատակով այցելել է Երևան քաղաքի Միկոյան փողոցի 4/2 հասցեում տեղակայված համար 159 դպրոցի տարածքում գործող թիվ 2/19 տարածքային ընտրական տեղամաս, որտեղ ժամը 09:14-ին ներկայացնելով իր նույնականացման քարտը՝ կատարել է քվեարկություն և հեռացել տեղամասից: Այնուհետև, մեկից ավելի անգամ քվեարկելու դիտավորությամբ վերադարձել է նույն ընտրատեղամաս և ժամը 09:29-ին ընտրողների գրանցման տեխնիկական սարքը սպասարկող մասնագետին է կրկին ներկայացրել իր նույնականացման քարտը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ ընտրողների գրանցման տեխնիկական սարքն արձանագրել է կրկնակի գրանցվելու փորձ կատարելու փաստը[1]:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված փաստական հանգամանքների առկայության պայմաններում Առաջին ատյանի դատարանը համակողմանի գնահատման չի ենթարկել խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կատարված հանցանքի վտանգավորության աստիճանը, հանցանքի կատարման եղանակը: Արդյունքում՝ ընտրական իրավունքի պատշաճ իրացման դեմ ուղղված հանցագործության համար Հ.Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ առանց մատնանշելու որևէ փաստական հանգամանք, որը, նվազեցնելով կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, հնարավորություն կտար եզրահանգելու, որ տվյալ պարագայում արդարացված կլինի նշանակված պատիժը Հ.Ղազարյանի կողմից պայմանականորեն չկրելը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալ Հ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, որը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Հովհաննես Մանվելի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ԵԱՆԴ/0030/01/17

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Դատավոր՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

Ամբաստանյալ Հովհաննես Մանվելի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 17104917 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ Հ.Ղազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ Հովհաննես Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենգրքի 34-153-րդ հոդվածով:

2017 թվականի ապրիլի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում որևէ պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ լինելու իրավունքից զրկելով 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ

քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դատավճիռը բեկանել և փոփոխել, Հ.Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացրել:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Հ.Ղազարյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել մեղադրող Մ.Արամյանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժվել է, ամբաստանյալ Հ.Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները:

Հատուկ կարծիքի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

5. Հ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) նա 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու նպատակով այցելել է Երևան քաղաքի, Միկոյան փողոցի 4/2 հասցեում տեղակայված համար 159 դպրոցի տարածքում գործող թիվ 2/19 տարածքային ընտրական տեղամաս, որտեղ ժամը 09:14-ին ընտրողների գրանցման տեխնիկական սարքը սպասարկող մասնագետին է ներկայացրել իր՝ 004889846 համարի նույնականացման քարտը, ապա սահմանված կարգով քվեարկելուց հետո հեռացել է տեղամասից: Դրանից հետո Հ.Ղազարյանը մեկից ավելի անգամ քվեարկելու դիտավորությամբ վերադարձել է նույն ընտրատեղամաս և ժամը 09:29-ին ընտրողների գրանցման տեխնիկական սարքը սպասարկող մասնագետին է կրկին ներկայացրել իր նույնականացման քարտը, սակայն Հ.Ղազարյանն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, քանի որ ընտրողների գրանցման տեխնիկական սարքը արձանագրել է վերջինիս կողմից ընտրություններին մասնակցելու համար կրկնակի գրանցվելու փորձ կատարելու փաստը (…)»*[1]:

6. Առաջին ատյանի դատարանը, դատաքննության արագացված կարգ կիրառելով, Հ.Ղազարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 46:

34-153-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ և, անդրադառնալով վերջինիս նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, փաստել է. *«(…) [Առաջին ատյանի] դատարանը ամբաստանյալ Հովհաննես Ղազարյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտում այն, որ նա նախկինում դատված չի եղել, իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, ըստ բնակության և աշխատանքի վայրերի բնութագրվում է դրական, շնորհակալագրերի է արժանացել ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի հրամանատարության կողմից, խնամքին է գտնվում առաջին կարգի հաշմանդամ թոշակառու տատը։*

Դատարանն ամբաստանյալ Հ.Ղազարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում։

Հաշվի առնելով Հ.Ղազարյանի կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, ինչպես նաև այն, որ վերջինիս մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով նախատեսված միջին ծանրության հանցագործություն, որի համար որպես հիմնական պատիժ է նախատեսված բացառապես ազատազրկման ձևով, [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ նրան ուղղելու, նոր հանցագործությունները կանխելու, ինչպես նաև սոցիալական արդարությունը վերականգնելու համար նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, ինչպես նաև սահմանել հոդվածի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ։

Միաժամանակ [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Ղազարյանի նկատմամբ հիմնական պատժի մասով կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (…)։

(…)

[Առաջին ատյանի] դատարանը արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Ղազարյանի անձը դրական բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը էականորեն նվազեցնում են նրա կողմից կատարած հանցագործության և նրա անձի հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչը հիմք է տալիս հանգելու հետևության, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու (…)»[1]։

7. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, փաստել է. *«(…) Հաշվի առնելով ամբաստանյալ Հովհաննես Ղազարյանի կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, վերաքննիչ դատարանը գտնում է,*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 120-121։

որ դրանք իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու հետևության, որ Հովհաննես Ղազարյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Մասնավորապես, Հովհաննես Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, [Ա]ռաջին ատյանի դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները, և դատավճռում նշված փաստարկները սույն գործի շրջանակներում չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:

(...)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքները, Հովհաննես Ղազարյանի կողմից կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և հանցավորի անձը բնութագրող վերոնշյալ փաստերն իրենց համակցությամբ բավարար չեն հանգելու այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու և նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու պայմաններում հնարավոր չէ հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին, ինչը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից (...)»[1]:

8. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի որոշման համաձայն՝ *«(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման է ենթարկել ոչ միայն ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, այլ նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, հանցանքի կատարման եղանակը, մասնավորապես այն, որ Հ.Ղազարյանի կողմից խախտվել են ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկության՝ օրենքով սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, որն արտահայտվել է մեկից ավելի անգամ քվեարկելու փորձ կատարելով:*

(...)

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված փաստական հանգամանքների առկայության պայմաններում Առաջին ատյանի դատարանը

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 39-40:

համակողմանի գնահատման չի ենթարկել խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կատարված հանցանքի վտանգավորության աստիճանը, հանցանքի կատարման եղանակը: Արդյունքում՝ ընտրական իրավունքի պատշաճ իրացման դեմ ուղղված հանցագործության համար Հ.Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ առանց մատնանշելու որևէ փաստական հանգամանք, որը, նվազեցնելով կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, հնարավորություն կտար եզրահանգելու, որ տվյալ պարագայում արդարացված կլինի նշանակված պատիժը Հ.Ղազարյանի կողմից պայմանականորեն չկրելը (...)»

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, ըստ բողոք բերած անձի՝ Վերաքննիչ դատարանը չպետք է բավարարեր մեղադրողի բողոքը, քանի որ Առաջին ատյանի դատարանը Հ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով հանգել էր ճիշտ հետևության: Բողոքաբերը, մատնանշելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի հիմնավորումները՝ նշել է, որ դատարանը կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ և այն բեկանելու ու փոփոխելու հիմքեր չկան:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ին դատական ակտը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Դատավոր Ե.Դանիելյանի իրավական դիրքորոշումը.

10. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ամբաստանյալ Հ.Ղազարյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանի վճռաբեկ բողոքը, ծանոթանալով քրեական գործի նյութերին և վճռաբեկ բողոքը մերժելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չեմ Հովհաննես Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի որոշման (այսուհետ՝ Որոշում) պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ: Գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանը պետք է բավարարեր ամբաստանյալ Հ.Ղազարյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանի բողոքը և, բեկանելով Վերաքննիչ դատարանի որոշումը, օրինական ուժ տար Առաջին ատյանի դատարանի դատավճռին հետևյալ պատճառաբանություններով:

11. Վճռաբեկ դատարանն արձանագրել է. որ սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Հ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ անհրաժեշտ չի համարել վերլուծության ենթարկել սույն գործով ամբաստանյալ Հովհաննես Ղազարյանին մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը, և հիմնականում, բավարարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների մեջբերմամբ, դրանք համադրելով գործով հաստատված և թե՛ Առաջին ատյանի դատարանում և թե՛ Վերաքննիչ դատարանում անփոփոխ թողնված փաստական հանգամանքների հետ գտել է, որ Առաջին ատյանի դատարանն համակողմանի գնահատման չի ենթարկել խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կատարված հանցանքի վտանգավորության աստիճանը, հանցանքի կատարման եղանակը: Արդյունքում՝ ընտրական իրավունքի պատշաճ իրացման դեմ ուղղված հանցագործության համար Հ.Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

13. Մինչդեռ, ամբաստանյալ Հ.Ղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու իրավաչափության մասին կարծիք ձևավորելուց առաջ , անհրաժեշտ եմ համարում վերլուծել ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

Այսպես, քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածով պաշտպանվում են հասարակական այն հարաբերությունները, որոնք ապահովում են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքները ու ազատությունները, ավելի կոնկրետ՝ քվեարկության գործընթացն իրականացնելու օրենքով սահմանված կարգը:

Օբյեկտիվ կողմից նշված արարքը դրսևորվում է հանրաքվեի կամ ընտրությունների անցկացման ընթացքում մեկից ավելի անգամ կամ մեկ այլ անձի փոխարեն քվեարկելով: ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածի դիսպոզիցիայից բխում է, որ նշված հանցագործության կատարման եղանակներն հետևյալն են.

ա. կեղծ տվյալներ հայտնելը,

բ. կեղծ փաստաթուղթ ներկայացնելը

գ. որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը:

Կեղծ տվյալներ հայտնելը դրսևորվում է հանցագործի կողմից իրականությանը չհամապատասխանող, աղջատված տեղեկություններ

հաղորդելով, որը մոլորության մեջ է գցում համապատասխան պատասխանատու անձին՝ ընտրողների ցուցակում գրանցվելու և քվեարկությանը մասնակցելու նպատակով:

Կեղծ փաստաթուղթ ներկայացնելը որպես հիշյալ հանցագործության կատարման եղանակ կատարվում է իրականությանը չհամապատասխանող փաստաթղթի օգտագործմամբ ընտրողների ցուցակում գրանցվելու և ընտրելու նպատակով:

Որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը դևռորվում է «ա» և «բ» կետերում նշվածից տարբերվող ցանկացած այլ եղանակով հիշյալ հանցանքը կատարելու մեջ:

Սուբյեկտիվ կողմից տվյալ հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ կատարված լինելով: Այսինքն՝ հանցագործը պետք է գիտակցի մեկից ավելի կամ այլ անձի փոխարեն քվեարկելու հանգամանքը:

Իսկ քննարկվող հանցագործության սուբյեկտը՝ տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձն է, որ կատարել է նկարագրված արարքը:

14. Այս վերլուծության լույսի ներքո հարկ եմ համարում անդրադառնալ հանցագործության օբյեկտիվ կողմի կատարման փորձի եղանակին: Այսպես՝ Հ.Ղազարյանն ընտրողների գրանցման տեխնիկական սարքը սպասարկող մասնագետին է ներկայացրել իր նույնականացման քարտը, ապա սահմանված կարգով քվերակելուց հետո կրկին անգամ նույն ընտրատեղամասում, նույն փաստաթղթով փորձել է նորից քվեարկել, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, քանի որ ընտրողների գրանցման տեխնիկական սարքը արձանագրել է վերջինիս կողմից ընտրություններին մասնակցելու համար կրկնակի գրանցվելու փորձ կատարելու փաստը:

Այսինքն Կարծիքի 13-րդ կետում ՀՀ քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածի նկարագրության բացահայտված եղանակներից ամբաստանյալն ընտրել է իր հասարակական վտանգավորությամբ ամենանվազը, և ակնհայտ է, որ ընտրատեղամասերում ընտրողների գրանցման տեխնիկական սարքերի գործարկման պարագայում նույն փաստաթղթով կրկին անգամ քվեարկելը անհնար է և հանգեցնում է հանցագործության փորձի մեխանիկորեն բացահայտմանը:

Այս առումով չեմ կարող համաձայնվել Վճռաբեկ դատարանի մեծամասնության այն կարծիքի հետ, որ *առաջին ատյանի դատարանը համակողմանի գնահատման չի ենթարկել հանցանքի կատարման եղանակը*, քանի որ, ինչպես նշվեց, ընտրված եղանակն ըստ էության ի համեմատ մյուսների առավել նվազ է իր վտանգավորության աստիճանով:

15. Ամբաստանյալ Հովհաննես Ղազարյանը դատապարտվել է հիշյալ հանցագործությունը կատարելու փորձի համար, այսինքն, ձեռնամուխ է եղել

հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը, սակայն այն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ այնպիսի օբյեկտիվ հանգամանքներով, որոնք նա չէր նախատեսել կամ չէր կարողացել հաղթահարել: Հետևաբար, Հ.Ղազարյանին չի հաջողվել ավարտել հանցագործությունը, ուստի այս դեպքում վրա չեն հասել նրա համար ցանկալի հանրորեն վտանգավոր հետևանքները:

16. Անդրադառնալով ամբաստանյալ Հ.Ղազարյանի անձը դրական բնութագրող տվյալներին, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներին, հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը փաստել է Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրված այդ հանգամանքների առկայությունը, սակայն միևնույն ժամանակ գտել է, որ դրանք բավարար չեն պատժի նպատակներին հասնելու համար: Իսկ Վճռաբեկ դատարանն իր հերթին համաձայնել է Վերաքննիչ դատարանի այդ դատողությունների հետ:

17. Մինչդեռ կարևոր է նշել, որ ամբաստանյալ Հ.Ղազարյանը դատապարտվել է միջին ծանրության հանցագործության փորձի համար, ինչն էականորեն նվազեցնում է կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, թեկուզ այն պատճառով, որ վրա չեն հասել հանցավորի համար ցանկալի հանրորեն վտանգավոր հետևանքները, այսինքն տեղի չի ունեցել կրկնակի քվեարկություն:

Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրված անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես, այն որ Հ.Ղազարյանը նախկինում դատված չի եղել, իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, ըստ բնակության և աշխատանքի վայրերի բնութագրվում է դրական, շնորհակալագրերի է արժանացել ՀՀ ՊՆ թիվ 21127 զորամասի հրամանատարության կողմից, խնամքին է գտնվում առաջին կարգի հաշմանդամ թոշակառու տատը, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը վկայում են հանցավորի անձի նվազ վտանգավոր լինելու մասին:

18. Վերը նշված իրավական և փաստական հանգամանքների վերլուծության լույսի ներքո, հաշվի առնելով Հովհաննես Ղազարյանի կատարած արարքի բնույթը, հանրորեն վտանգավոր հետևանքների բացակայությունը, հանցագործությունը կատարելու ընտրված եղանակը, անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը գտնում եմ, որ նման պայմաններում մատնանշված հանգամանքներն իրենց համակցությամբ բավարար էին հանգելու այն հետևության, որ Հ.Ղազարյանի ուղղվելը հնարավոր էր առանց պատիժը կրելու: Այս դեպքում Հ.Ղազարյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն

չկիրառելով, հնարավոր կլիներ իրագործել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ, 361.1-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, չհամաձայնելով դատավորների մեծամասնության հետ՝ մնում եմ հատուկ կարծիքի՝

Ամբաստանյալ Հ.Ղազարյանի պաշտպան Ռ.Սիրեկանյանի բողոքը պետք է բավարարվեր՝ ամբաստանյալ Հովհաննես Մանվելի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի փետրվարի 1-ի որոշումը բեկանվեր և ուժ տրվեր Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դատավճռին:

Դատավոր՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

48. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0019/15/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ դատապարտյալ Միեր Սամվելի Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի սեպտեմբերի 13-ին դատապարտյալ Միեր Սամվելի Հովհաննիսյանի պաշտպան Վ.Քոսյանը դիմում է ներկայացրել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով թույլատրել դատապարտյալ Մ.Հովհաննիսյանին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշմամբ սահմանված 3 տարի ժամկետով փորձաշրջանի ընթացքում 1 տարի ժամկետով բացակայել Հայաստանի Հանրապետությունից:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ պաշտպանի միջնորդությունը բավարարվել է, և դատապարտյալ Մ.Հովհաննիսյանին թույլատրվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշմամբ սահմանված 3 տարի ժամկետով

փորձաշրջանի ընթացքում 1 տարի ժամկետով բացակայել Հայաստանի Հանրապետությունից:

2. Դատախազ Վ.Սիմոնյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը՝ բեկանել: Դատապարտյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպանի միջնորդությունը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշմամբ սահմանված 3 տարի ժամկետով փորձաշրջանի ընթացքում 1 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետությունից բացակայելու թույլտվություն տալու մասին, մերժվել է:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Վ.Քոսյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ դատապարտյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Վ.Քոսյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

4. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(…) [Յ]ուրաքանչյուր անձ իրավունք ունի դուրս գալու Հայաստանի Հանրապետությունից, եթե նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակված չէ օրենքով՝ որոշակի նպատակներով: Կոնկրետ դեպքում Մ.Հովհաննիսյանի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելու օրենքով նախատեսված նպատակները բացակայում են, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտավորությունը՝ չփոխել մշտական բնակության վայրը, ևս առկա չէ: Ինչ վերաբերում է դատախազի այն փաստարկին, որ Մ.Հովհաննիսյանը ՀՀ կառավարության թիվ 1561 որոշման ուժով ամիսը առնվազն մեկ անգամ պետք է ներկայանա համապատասխան բաժին, ապա [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ կոնկրետ դեպքում առկա է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման խնդիր: Թեև ենթաօրենսդրական ակտը նախատեսում է նման պարտականություն, սակայն առկա է դատարանի դատավճիռ, որով անձի վրա դրված է պարտականության կատարում հատուցել կերակրողին կորցնելու հետևանքով անչափահաս երեխաների կարիքները: (…) Այսպիսով, [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ առկա չէ որևէ խոչընդոտ, որ դատապարտյալ Մ.Հովհաննիսյանը կարող է փորձաշրջանի ընթացքում ևս մեկ տարի*

ժամկետով գտնվել Հայաստանի Հանրապետությունից դուրս[1]:

5. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ, բացի ընդհանուր հիմունքներով անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու, ինչպես նաև դատապարտյալի վրա նրա ուղղմանը նպաստող պարտականություններ դնելու կամ դրանք փոխարինելու դեպքերի, դատարանը որևէ այլ լիազորություն չունի դադարեցնելու կամ սահմանափակելու պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում դատապարտյալի նկատմամբ իրականացվող վերահսկողությունը, այդ թվում լիազորված չէ փորձաշրջանի ընթացքում դատապարտյալին թույլատրելու մեկնել արտերկիր։*

(...)

Վերաքննիչ դատարանն ընդունելի չի համարում նաև Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն առ այն, որ առկա չէ որևէ խոչընդոտ, որպեսզի դատապարտյալ Մհեր Հովհաննիսյանը փորձաշրջանի ընթացքում մեկ տարի ժամկետով գտնվի Հայաստանի Հանրապետությունից դուրս։ Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է ինչպես Առաջին ատյանի դատարանի համապատասխան լիազորության բացակայությամբ, այնպես էլ այն հանգամանքով, որ դատապարտյալի կողմից արտերկիր մեկնելու հանգամանքը չի դիտարկվել նրա նկատմամբ իրականացվող վերահսկողության մեջ ներառվող գործողությունների կատարման հնարավորության համատեքստում»[2]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Պաշտպան Վ.Քոսյանը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Վերոգրյալի համատեքստում բողոքի հեղինակը մատնանշել է փորձաշրջանի ընթացքում դատապարտյալին Հայաստանի Հանրապետությունից բացակայելու թույլտվություն տալու մասին որոշումը և գտել, որ դրա իրավաչափության, ինչպես նաև դատապարտյալի նկատմամբ հսկողություն սահմանելու համար պրոբացիայի ծառայություն ներկայանալու պարտադիրության (այն դեպքում, երբ այդ անձի վրա ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված լրացուցիչ պարտականություն չի դրվել) կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վերոգրյալ հարցադրումների շրջանակներում բողոք բերած անձը փաստել է, որ Մ.Հովհաննիսյանը մեկ տարի աշխատել է Ռուսաստանի

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 38-40:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 95-104:

Դաշնությունում, ըստ այդ երկրի ոստիկանության կողմից տրված տեղեկանքի՝ ոչ մի իրավախախտում չի արել և բնութագրվում է դրական: Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ դատապարտյալը նախորդող մեկ տարվա ընթացքում բարեխղճորեն կատարել է իր վրա դրված դրամական պարտավորությունները: Բողոքի հեղինակն ընդգծել է նաև, որ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված որևէ պարտականություն նրա վրա չի դրել և չի սահմանափակել վերջինիս ազատ տեղաշարժվելու իրավունքը:

7. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Վ.Քոսյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմանը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

8. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի նկատմամբ իրականացվող վերահսկողության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալ Մ.Հովհաննիսյանին ՀՀ-ից բացակայելու թույլտվություն տալու լիազորությամբ Առաջին ատյանի դատարանն օժտված չէ:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է. *«(...) 5. Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել որոշակի պարտականություններ՝ չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք:*

6. Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց՝ դատապարտյալի

վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը:

7. Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ նշանակում սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում նաև նոր անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը»:

10.1. Մեջբերված նորմերը համադրված վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածում և 49-րդ գլխում, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 22-րդ գլխում, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 395-Ն որոշման (այսուհետ՝ նաև Կառավարության որոշում) հավելվածի 6-րդ գլխում (այդ թվում՝ ներկա պահին չգործող ՀՀ կառավարության՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշման հավելվածի 5-րդ գլխում) ամրագրված իրավական դրույթների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի ընթացքում ծագող իրավահարաբերությունների շրջանակներում դատարանի լիազորությունների մասն են կազմում՝

- դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա դատապարտյալի վրա նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ դնելու կամ դրանք փոխարինելու հարցի լուծումը (ընդ որում, դատարանի այդպիսի լիազորությունը բխում է նաև «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 18-րդ մասից, ըստ որի՝ *անհրաժեշտության դեպքում պրոբացիայի ծառայությունը միջնորդություն է ներկայացնում դատարան պրոբացիայի շահառուի վրա լրացուցիչ պարտականություններ դնելու կամ սահմանափակումներ կիրառելու մասին*),

- պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցի լուծումը:

Այսպիսով, եթե դատարանի լիազորությունների մասն են կազմում դատապարտյալի վրա նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ դնելու կամ դրանք փոխարինելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցերի լուծումը, ապա պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալին ՀՀ-ից բացակայելու թույլտվություն տալու լիազորությամբ օրենսդիրը դատարանին չի օժտել, հետևաբար վերջինս այդպիսի դատական ակտ կայացնելու իրավասություն չունի:

11. Միևնույն ժամանակ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի, Կառավարության որոշման նախորդ կետում մատնանշված դրույթների վերլուծությունը վկայում է, որ՝

- պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն ՀՀ քրեակատարողական օրենսգրքով, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 128-րդ հոդված),

- վերահսկողությունն իրականացնում է պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 129-րդ հոդված, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մաս),

- վերահսկողության շրջանակներում տարածքային մարմինը, ի թիվս այլ գործողությունների, կազմում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ, պրոբացիայի շահառուի հաճախումների ժամանակացույց («Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մաս, Կառավարության որոշման հավելվածի 33-րդ կետ),

- դատական ակտի հիման վրա և դրա շրջանակում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա վերահսկողության պլանում պրոբացիայի ծառայողը սահմանում է պրոբացիայի շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետները, իրավունքներն ու պարտականությունները, դրանք խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվությունը, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիրը («Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մաս),

- պրոբացիայի շահառուին պարզաբանվում է հաշվառման ներկայանալու օրվանից հետո յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ կամ նրա վրա դրված պարտականությունների չկատարման յուրաքանչյուր փաստով տարածքային մարմին ներկայանալու պարտականության մասին (Կառավարության որոշման հավելվածի 33-րդ կետ),

- տարածքային մարմինը, պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո գնահատելով պրոբացիայի շահառուի ռիսկերը և պահանջմունքները, դրա հիման վրա ընդունում է որոշում մեկ ամսվա ընթացքում պրոբացիայի շահառուի կողմից տարածքային մարմին ներկայանալու հաճախականությունը սահմանելու մասին, որը ներառվում է վերահսկողության պլանի մեջ: Փորձաշրջանի ընթացքում պրոբացիայի շահառուի վարքագծի և ռիսկերի ու պահանջմունքների գնահատման արդյունքների հիման վրա տարածքային մարմինն ընդունում է որոշում պրոբացիայի շահառուի հաճախումների թիվը վերանայելու մասին (Կառավարության որոշման հավելվածի 39-40-րդ կետեր),

- վերահսկողության պլանի հիման վրա պրոբացիայի ծառայողն այցելում է պրոբացիայի շահառուի բնակության կամ աշխատանքի վայրը կամ համապատասխան բժշկական հաստատություն՝ պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով (Կառավարության որոշման հավելվածի 35-րդ կետ),

- փորձաշրջանի ընթացքում յուրաքանչյուր անգամ, երբ պրոբացիայի շահառուն ներկայանում է տարածքային մարմին, նրա հետ անցկացվում է զրույց իր վարքի, ընտանիքի հետ հարաբերությունների, զբաղվածության և գործունեության վերաբերյալ (Կառավարության որոշման հավելվածի 38-րդ կետ):

11.1. Այսպիսով, մատնանշված իրավադրույթներից նախ հետևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի մեջ գտնվող պրոբացիայի շահառուին պարզաբանվում է հաշվառման ներկայանալու օրվանից հետո յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ կամ նրա վրա դրված պարտականությունների չկատարման յուրաքանչյուր փաստով տարածքային մարմին ներկայանալու պարտականության մասին: Միաժամանակ դատական ակտի հիման վրա և դրա շրջանակներում, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատման հիման վրա կազմվում է վերահսկողության պլան, որում, ի թիվս այլոց, ներառվում է պրոբացիայի շահառուի կողմից մեկ ամսվա ընթացքում պրոբացիայի ծառայություն ներկայանալու հաճախականությունը սահմանելու մասին որոշումը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասու մարմինը պրոբացիայի ծառայությունն է, և այդ մարմինն է, ով դատապարտյալի նկատմամբ վերահսկողության շրջանակներում իրականացնում է նրա վերասոցիալականացմանն ու օրինապահ վարքագծի խթանմանն ուղղված մի շարք գործողություններ (մասնավորապես՝ սահմանվում է պրոբացիայի շահառուի վերասոցիալականացմանն ուղղված անհատական ծրագիր, իրականացվում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և պահանջմունքների գնահատում, պրոբացիայի շահառուի վրա դրված պարտականությունների կատարումը ստուգելու նպատակով այցելություններ են իրականացվում համապատասխան վայրեր, պրոբացիայի շահառուի հետ անցկացվում է զրույց իր վարքի, ընտանիքի հետ հարաբերությունների, զբաղվածության և գործունեության վերաբերյալ, պրոբացիայի շահառուի վարքագծի և ռիսկերի ու պահանջմունքների գնահատման արդյունքների հիման վրա կարող է վերանայվել պրոբացիայի շահառուի հաճախումների թիվը և այլն)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մշտական բնակության վայրը չփոխելու պարտականություն դատարանի կողմից սահմանված չլինելու պայմաններում պրոբացիայի ծառայության

ղեկավարը կարող է դատապարտյալի՝ ՀՀ-ից բացակայելը և պրոբացիայի ծառայության տարածքային մարմին որոշակի ժամկետով չներկայանալը, որը պայմանավորված է **բացառիկ հանգամանքներով**, համարել թույլատրելի (այն դեպքում, երբ դատարանի կողմից դատապարտյալի վրա դրված է մշտական բնակության վայրը չփոխելու պարտականություն, ապա պրոբացիայի ծառայության ղեկավարի կողմից համապատասխան թույլտվություն տալը հնարավոր է, եթե դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա փոփոխի սահմանված այդ պարտականությունը): Նման դեպքերում չներկայանալու հարցը գնահատելիս **պետք է հաշվի առնել, թե ինչպիսի շահ է ընկած դրա հիմքում**: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այդպիսի թույլտվություն տալը հնարավոր է բացառապես այն դեպքում, երբ դրա հիմքում ընկած շահը **գերակա է** վերահսկողական համապատասխան գործողությունների նկատմամբ (որպես այդպիսի օրինակ է դատապարտյալի ծանր հիվանդությունը և ՀՀ-ում համապատասխան բուժում ստանալու անհնարինությունը):

11.2. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մշտական բնակության վայրը չփոխելու պարտականություն դատարանի կողմից սահմանված չլինելու պայմաններում պրոբացիայի ծառայության ղեկավարը կարող է իր որոշմամբ դատապարտյալի՝ ՀՀ-ից բացակայելը և պրոբացիայի ծառայության տարածքային մարմին որոշակի ժամկետով չներկայանալը, որը պայմանավորված է **բացառիկ հանգամանքներով**, համարել թույլատրելի, եթե բավարար չափով և պատշաճ կերպով պատճառաբանում է, որ այդպիսի թույլտվություն տալու հիմքում ընկած շահը **գերակա է** վերահսկողական համապատասխան գործողությունների նկատմամբ: Սույն դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է անձի հիմնարար իրավունքների պաշտպանության ապահովումը երաշխավորելու անհրաժեշտությամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ պրոբացիայի ծառայության ղեկավարի այդպիսի գործողությունների օրինականության ապահովման երաշխիք են դրանց նկատմամբ դատախազական հսկողությունը («Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդված), ինչպես նաև պրոբացիայի շահառուի կողմից դրանք վերադասության կարգով կամ դատարան բողոքարկելու հնարավորությունը («Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Ընդ որում, համաձայն «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ պրոբացիայի շահառուն իրավունք ունի նաև դիմումներով, բողոքներով, միջնորդություններով ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պրոբացիայի ծառայության մարմին, դրա վերադաս մարմիններ, դատարան, դատախազին, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին, զանգվածային

լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով թույլատրել դատապարտյալ Մ.Հովհաննիսյանին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշմամբ սահմանված՝ 3 տարի ժամկետով փորձաշրջանի ընթացքում 1 տարի ժամկետով բացակայել Հայաստանի Հանրապետությունից[1]:

Առաջին ատյանի դատարանը միջնորդությունը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ դատապարտյալ Մ.Հովհաննիսյանի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելու օրենքով նախատեսված նպատակները բացակայում են, մշտական բնակության վայրը չփոխելու պարտականություն ևս առկա չէ: Միևնույն ժամանակ դատարանը փաստել է, որ թեև ենթաօրենսդրական ակտը նախատեսում է ամիսն առնվազն մեկ անգամ համապատասխան բաժին ներկայանալու պարտականություն (Առաջին ատյանի դատարանի մատնանշած իրավական ակտը ներկա պահին չի գործում, այն ուժը կորցրած է ճանաչվել, համապատասխան հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության՝ 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 395-Ն որոշմամբ), սակայն առկա է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման խնդիր. դատական ակտով սահմանվել է կերակրողին կորցնելու հետևանքով անչափահաս երեխաների կարիքները հատուցելու պարտավորություն[2]:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և մերժելով ներկայացված միջնորդությունը, արձանագրել է, որ բացի ընդհանուր հիմունքներով անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու, ինչպես նաև դատապարտյալի վրա նրա ուղղմանը նպաստող պարտականություններ դնելու կամ դրանք փոխարինելու դեպքերի, դատարանը որևէ այլ լիազորություն չունի դադարեցնելու կամ սահմանափակելու պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում դատապարտյալի նկատմամբ իրականացվող վերահսկողությունը, այդ թվում՝ լիազորված չէ փորձաշրջանի ընթացքում դատապարտյալին թույլատրելու մեկնել արտերկիր: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը դատապարտյալի կողմից արտերկիր մեկնելու հանգամանքը չի դիտարկել նրա նկատմամբ իրականացվող վերահսկողության մեջ ներառվող գործողությունների կատարման հնարավորության համատեքստում[3]:

[1] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով սահմանված փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալ Մ.Հովհաննիսյանին ՀՀ-ից բացակայելու թույլտվություն տալու լիազորությամբ Առաջին ատյանի դատարանն օժտված չէ, հիմնավոր են: Այլ կերպ՝ իրավաչափ են դատողություններն առ այն, որ փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալին աշխատանքի, բուժման կամ այլ նպատակներով ՀՀ-ից բացակայելու և արտերկիր մեկնելու թույլտվություն տալու լիազորություն դատարանին վերապահված չէ:

13.1. Հիմք ընդունելով սույն որոշման 11-11.2-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում համապատասխան հարցի լուծման հասցեատերը ոչ թե դատարանն է, այլ ՀՀ պրոբացիայի ծառայությունը՝ ի դեմս պրոբացիայի ծառայության ղեկավարի, ով կարող է այն լուծել՝ առաջնորդվելով սույն որոշման 11.1.-11.2-րդ կետերում սահմանված չափանիշներով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում գնահատման ենթարկելու այն հարցերը, թե դատապարտյալ Մ.Հովհաննիսյանի կողմից ՀՀ-ից բացակայելու և պրոբացիայի ծառայության տարածքային մարմին որոշակի ժամկետով չներկայանալու հիմքում ընկած հանգամանքը՝ արտերկրում աշխատելը, արդյո՞ք բացառիկ է, ինչո՞ւմ է դրսևորվում դրա բացառիկությունը, արդյո՞ք այդպիսի շահը գերակա է վերահսկողական համապատասխան գործողությունների նկատմամբ:

14. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տրվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի այն պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Միեր Սամվելի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

49. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ2/0037/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2018 թվականի նոյեմբերի 15-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2007 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությունում հարուցվել է թիվ 62207607 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2007 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Ա.Ղուլյանի նկատ-

մամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մայիսի 30-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի հայտնաբերումը:

2015 թվականի ապրիլի 10-ին Ա.Ղուլյանը կամովին ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևանի վարչության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի բաժին: Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ քրեական գործով վարույթը վերսկսվել է:

2015 թվականի ապրիլի 11-ին Ա.Ղուլյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

2015 թվականի հուլիսի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 12-ի դատավճռով Ա.Ղուլյանը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Մեղադրող Ա.Շահբազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 12-ի դատավճիռը, և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության՝ սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ:

5. Գործի նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Ա.Ղուլյանի անմեղությունը՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

6. Մեղադրող Ա.Շահբազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը, Ա.Ղուլյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և պատիժ նշանակել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝

նշանակված պատժին հաշվակցվել է 2015 թվականի ապրիլի 10-ից մինչև 2016 թվականի փետրվարի 12-ն անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 1 (մեկ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

8. Արտուշ Ղուլյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա՝ *«(…) 2006թ. մայիսի 6-ից աշխատելով ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի Գուգարքի տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսակետում՝ որպես պետի տեղակալ, ի պաշտոնե հանդիսանալով իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ՝ դրամի ձևով ստացել է առանձնապես խոշոր չափի կաշառք՝ կաշառք տվողի օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություն կատարելու համար:*

Այսպես, Արտուշ Ղուլյանը Հովսեփ Ներսիսյանի և Տիգրան Ազատյանի կողմից անհատ ձեռնարկատեր Ամալյա Ադամյանի անվամբ Իտալիայից և Ֆրանսիայից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող օծանելիքը մաքսակետում Տիգրան Ազատյանի՝ որպես անհատի, անվամբ վերաձևակերպելու, անվանափոխելու և մաքսազերծելու համար 2007թ. հոկտեմբերի 14-ին նրանցից պահանջել և նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, իր աշխատասենյակում Հովսեփ Ներսիսյանից անձամբ ստացել է 1.746.990 ՀՀ դրամին համարժեք 5250 ԱՄՆ դոլար կաշառք, որից հետո նրա հանձնարարությամբ կատարվել են ներմուծվող ապրանքի մաքսային ձևակերպման հետ կապված գործողությունները (…)»[1]:

9. Առաջին ատյանի դատարանը դատաքննության ընթացքում 2016 թվականի օգոստոսի 12-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 5-ին ծանուցագրեր է ուղարկել վկա Տ.Ազատյանի հասցեով, որոնք ետ են վերադարձվել «տեղափոխված» նշումով, 2016 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն կատարված

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 111:

հարցմամբ պարզվել է, որ 2014 թվականի օգոստոսի 18-ին Տ.Ազատյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն[1]:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռի համաձայն՝ *«(…) Քննության առնելով ամբաստանյալ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի պաշտպան Արմեն Խաչատրյանի միջնորդությունը, որով նա դատարանին խնդրել է վկա Տիգրան Ազատյանի նախաքննական ցուցմունքները ճանաչել անթույլատրելի ապացույց և հանել ապացույցների շարքից՝ նկատի ունենալով, որ պաշտպանական կողմը ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում զրկված է եղել վկային հարցաքննելու հնարավորությունից, որպիսի պայմաններում պաշտպանական կողմը գտնում է, որ հակընդդեմ հարցման իրավունքով (կոնֆրոնտացիայով) չապահովված փաստական տվյալը չի կարող համարվել ապացույց և դրվել մեղադրանքի հիմքում, դատարանն (…) արձանագրում է, որ սույն քրեական գործի դատաքննության ընթացքում ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը վկա Տիգրան Ազատյանի ներկայությունն ապահովելու համար, միաժամանակ դատարանին տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 10.02.2015թ. հարուցված թիվ 61203915 քրեական գործով 29.12.2015թ. Տիգրան Հուսիկի Ազատյանը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, նույն օրը որոշում է կայացվել նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին և քրեական գործի վարույթը կասեցվել է: Ձեռնարկվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ նրան հայտնաբերելու ուղղությամբ: Միաժամանակ դատարանը փաստում է, որ վկա Տիգրան Ազատյանի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Նման պայմաններում (…) դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով վկա Տիգրան Հուսիկի Ազատյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքները պետք է հանել դատավճռի հիմքում դրվող ապացույցների շարքից վերը շարադրված պատճառաբանություններով:*

(…)

Դատարանը սույն գործի փաստերը վերլուծելով ՀՀ վճռաբեկ դատարանի (…) որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գալիս է այն համոզման, որ սույն գործի դատաքննության ընթացքում ձեռք չի բերվել հավաստի ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը դատարանին հնարավորություն կտար հաստատող պատասխաններ տալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 4-րդ կետերին, մասնավորապես ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը, այդ արարքը համապատասխանում է

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 33, 63, 88, 115, հատոր 8-րդ, թերթեր 2-4:

արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին, ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը և ապացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ և, եթե այո, ապա քրեական օրենսգրքի որ հոդվածով, մասով, կետով է այն նախատեսված (…)»[1]:

11. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ փաստել է. *«(…) նախաքննության ընթացքում Տիգրան Ազատյանը 16.10.2007թ. տվել է բացատրություն, 17.10.2007թ. ցուցմունք, այնուհետև՝ 18.12.2007թ. և 28.02.2008թ. լրացուցիչ ցուցմունքներ ու այդ ընթացքում գտնվել է ՀՀ-ում, այնինչ ամբաստանյալը 22.10.2007թ. մինչև 11.04.2015թ. թաքնվել է քննությունից և գտնվել է հետախուզման մեջ: Հետագայում, երբ ամբաստանյալը ինքնակամ ներկայացել է, Տիգրան Ազատյանը եղել է ՀՀ-ի սահմաններից դուրս, ուստի ստացվում է, որ հետախուզման մեջ գտնվելու ժամանակահատվածում ամբաստանյալը ինքն իրեն զրկել է հակընդդեմ հարցման իրավունքից: Իսկ հետագայում դատաքննության ընթացքում, ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը՝ Տիգրան Ազատյանի ներկայությունն ապահովելու համար (դա նշել է նաև Դատարանը), ինչը սակայն չի հաջողվել, ուստի տվյալ դեպքում վերջինիս բացակայությունը պետք է համարել հարգելի: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի եզրահանգումն այն մասին, որ Տիգրան Ազատյանի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է մեղքը հաստատող ապացույցների զանգվածում անհիմն է, քանի որ բացի դրանից սույն քրեական գործում առկա են այլ ապացույցներ, որոնք վկայում են Արտուշ Ղուլյանի կողմից իրեն վերագրվող արարքը կատարելու մասին:*

(…)

Այսպիսով, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ վկա Գագիկ Մելիքսեթյանի դատաքննական, վկաներ՝ Հովսեփ Նիկոլայի Ներսիսյանի, Հայկ Վրեժի Հովսեփյանի, Արծրուն Արտոյի Ալեքսանյանի, Տիգրան Հուսիկի Ազատյանի, Հովիկ Արամայիսի Աբովյանի նախաքննական ցուցմունքները, Հովսեփ Նիկոլայի Ներսիսյանի և Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի միջև առերես հարցաքննության արձանագրությունը և որպես այլ փաստաթուղթ ճանաչված ապացույցները, դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, Վերաքննիչ դատարանը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված է համարում, որ Արտուշ Ղուլյանը Հովսեփ Ներսիսյանի և Տիգրան Ազատյանի կողմից անհատ ձեռնարկատեր Ամալյա Ադամյանի անվամբ Իրպալիայից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող օծանելիքը

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 101-107:

մաքսակետում Տիգրան Ազատյանի՝ որպես անհատի անվամբ վերաձևակերպելու, անվանափոխելու և մաքսազերծելու համար 2007թ. հոկտեմբերի 14-ին նրանցից պահանջել և նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, իր աշխատասենյակում Հովսեփ Ներսիսյանից անձամբ ստացել է 5.250 (հինգ հազար երկու հարյուր հիսուն) ԱՄՆ դոլար կաշառք, որից հետո նրա հանձնարարությամբ կատարվել են ներմուծվող ապրանքի մաքսային ձևակերպման հետ կապված գործողությունները (…)»[1]:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

12.1. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված ամբաստանյալի՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը կազմող հակընդդեմ հարցման իրավունքը: Մասնավորապես՝ պաշտպանական կողմն ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլում զրկված է եղել գործով վկային հարցաքննելու հնարավորությունից, սակայն տվյալ ցուցմունքները Վերաքննիչ դատարանը դրել է Ա.Ղույլանի մեղադրանքի հիմքում՝ այն հիմնավորմամբ, որ Ա.Ղույլանը, թաքնվելով քննությունից, ինքն իրեն զրկել է վկայի հետ առերես հարցաքննվելու հնարավորությունից:

12.2 Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, հիմնվելով միայն նախաքննական ցուցմունքների վրա, իրականացրել է գործի քննության ընթացքում հետազոտված ապացույցների սխալ գնահատում և ուշադրություն չի դարձրել գործում առկա ապացույցներին, ինչպես նաև նախաքննության և դատաքննության փուլում տրված ցուցմունքների միջև եղած հակասություններին:

12.3 Բողոքի հեղինակը, մեջբերելով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում արտահայտած իրավական դիրքորոշումները, փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող ապացույցներն ու հանգամանքները չենթարկելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, հիմնվելով միայն ենթադրությունների վրա, եկել է սխալ եզրահանգման ամբաստանյալ Ա.Ղույլանի մեղավորության մասին:

13. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ին որոշումը՝

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 150-154:

օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի արդարացման դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իր դեմ ցուցմունք տված վկաներին հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) ենթարկելու իրավունքի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Ա.Ղուլյանի կողմից վկա Տ.Ազատյանին գործի դատաքննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ «*Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝*

(…)

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք. (…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.*

(…)

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները, (…)»:

17. Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից մեկն է: Այն երաշխավորում է մեղադրյալի դեմ ցուցմունք տվող անձանց խաչաձև հարցաքննությունը, որպիսի պայմաններում մեղադրյալը հնարավորություն է ունենում հրապարակային դատաքննության ընթացքում անմիջականորեն լսելու իր դեմ տրվող ցուցմունքը և այդ կապակցությամբ ուղղելու հարցեր ու ստանալու

պատասխաններ: Այլ կերպ, հակընդդեմ հարցման իրավունքը քրեական վարույթի արդարացիության ապահովման հիմնարար երաշխիքներից է, որի կենսագործման միջոցով հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը գործի դատական քննության ընթացքում կարողանում է վիճարկել իր դեմ տրված ցուցմունքը: Այդ գործընթացն առանցքային նշանակություն ունի նաև գործն ըստ էության քննության առնող դատարանի համար, որը ենթադրյալ հանցանք կատարած անձի մեղավորությունը որոշելիս համակողմանի գնահատման է ենթարկում ինչպես վկայի տված ցուցմունքը, այնպես էլ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից վկային ուղղված հարցերի առնչությամբ վերջինիս տրված պատասխանները:

17.1 Հակընդդեմ հարցման իրավունքը կարևորվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, որը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ բոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն դռնբաց դատական քննության ժամանակ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցային դատավարության սկզբունքի պահպանմամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունն ապահովելու համար: Այս սկզբունքն ունի նաև բացառություններ, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները. որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում[1]:

Այսինքն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված ընդհանուր կանոնը վկաներին գործի դատական քննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելն է: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր դեպքերում են վկաները ներկայանում դռնբաց դատական քննությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշակել է հետևյալ սկզբունքներն այդ վկաների նախաքննական ցուցմունքների օգտագործման հնարավորությունը գնահատելու համար.

- վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հիմնավոր պատճառ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա հիմնավոր փաստական և իրավական հիմքեր՝ դատական քննությանը վկայի ներկայությունն ապահովել չկարողանալու համար: Կան մի շարք պատճառներ, թե ինչու վկան չի կարող մասնակցել դատական քննությանը, օրինակ՝ վկայի մահվան, վրեժխնդրության վախի[2], վկային հայտնաբերելու անհնարինության[3] կամ այլ պատճառներով: Ընդ որում, այս սկզբունքի կապակցությամբ Մարդու իրավունքների

[1] Տե՛ս *Al-Khawaja and Tahery v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05 և 22228/06, 118-րդ կետ:

[2] Տե՛ս նույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը:

[3] Տե՛ս *Paić v. Croatia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 47082/12, 34-րդ կետ:

եվրոպական դատարանն ընդգծում է, որ նույնիսկ եթե ենթադրվի, որ դատական նիստի ժամանակ վկաներին չհարցաքննելու համար չեն եղել հիմնավոր պատճառներ, ապա դրանց բացակայությունն ինքնին չի կարող վկայել քրեական վարույթի անարդարացիության մասին[1],

- եթե անձին մեղավոր ճանաչելու հիմքում բացառապես կամ հիմնականում դրվել են այն անձի ցուցմունքները, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ որը հարցաքննության չի ենթարկվել նախնական քննության կամ դատաքննության ընթացքում, ապա պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այնքան, որ դա անհամատեղելի կլինի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (այսպես կոչված՝ «միակ կամ վճռորոշ կանոնը»): Այդ համատեքստում որպես «միակ» պետք է հասկանալ մեղադրյալի դատապարտման հիմքում դրված միակ ցուցմունքը, իսկ «վճռորոշ»-ը պետք է հասկանալ այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունքը, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար[2],

- պետք է ուսումնասիրվի հակակշռող բավարար գործոնների առկայությունը, ինչպես օրինակ՝ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը և դատաքննության ժամանակ վկաներին ուղղակիորեն խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցները: Ընդ որում, այդ գործոնների առկայությունը պետք է ուսումնասիրվի ոչ միայն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել անձին դատապարտելու համար, այլ նաև այն գործերում, որոնցում դատարանը չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է սահմանափակել է պաշտպանության կողմի միջոցները[3]:

Հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ վերոնշյալ երեք տարրերից բաղկացած՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մշակված թեստն ունի առանցքային նշանակություն: Այդ երեք տարրերը փոխկապակցված են միմյանց հետ և հիմք են ծառայում որոշելու

[1] Տե՛ս *Seton v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգատ թիվ 55287/10, 62-րդ կետ:

[2] Տե՛ս *Schatschaschwili v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, 123-124-րդ կետեր:
Նշվածի կապակցությամբ տե՛ս նաև *Համլետյան Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշման 23-րդ կետը, որտեղ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում:

[3] Տե՛ս Տե՛ս *Schatschaschwili v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, 116-րդ, 145-րդ կետեր:

համար, թե ընդհանուր առմամբ ապահովվել է քրեական վարույթի արդարացիությունը, թե ոչ[1]:

Վերոնշյալի հետ մեկտեղ պետք է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել դատական վարույթի որևէ փուլում, դատաքննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված գրավոր ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը պետք է լինի ծայրահեղ միջոց[2]: Այդ հանգամանքը մշտապես ընդգծվել է նաև ընդդեմ Հայաստանի Հանրապետության կայացված մի շարք վճիռներում[3]:

18. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ արդար դատաքննության երաշխիքների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից օգտվելը մեղադրյալի իրավունքն է, ով կարող է նաև իր դրսևորած վարքագծով հրաժարվել դրանցից: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ բառացի և ո՛չ էլ իմաստային մեկնաբանությունը չեն արգելում անձին արդար դատաքննության երաշխիքներից իր ազատ կամքով, կա՛մ բացահայտ, կա՛մ ենթադրաբար հրաժարվելը: Այնուամենայնիվ, այդպիսի հրաժարումը, եթե այն արդյունավետ է Եվրոպական կոնվենցիայի նպատակների համար, պետք է հաստատվի միանշանակ կերպով և ապահովվի նվազագույն երաշխիքներով, ըստ կարևորության: Ի հավելումն, այն **չպետք է հակասի որևէ կարևոր հանրային շահի**[4]:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ընդունելի համարելով, որ մեղադրյալն իր վարքագծով կարող է նաև անուղղակիորեն հրաժարվել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված կարևոր իրավունքից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պահանջում է հիմնավորել, որ անձը կարող էր ողջամտորեն կանխատեսել, թե որոնք կլինեին իր վարքագծի հետևանքները[5]:

[1] Տե՛ս նույն որոշման 117-118-րդ կետերը:
[2] Տե՛ս *Al-Khawaja and Tahery v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05 և 22228/06, 125-րդ կետ:
[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ter-Sargsyan v. Armenia* գործով 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 27866/10, *Avetisyan v. Armenia* գործով 2016 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 13479/11, *Asatryan v. Armenia* գործով 2017 թվականի ապրիլի 27-ի վճիռը, գանգատ թիվ 3571/09, *Dadayan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 14078/12 և այլն:
[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hermi v. Italy* գործով 2006 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 18114/02, 73-րդ կետ, *Sejdovic v. Italy* գործով 2006 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 56581/00, 86-րդ կետ:
[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hermi v. Italy* գործով 2006 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 18114/02, 74-րդ կետ, *Sejdovic v. Italy* գործով 2006 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 56581/00, 87-րդ կետ:

19. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ երաշխիքների կենսագործման իրավաչափությունը գնահատելիս առանցքային նշանակություն ունի նաև հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի վարքագիծը: Այսպես, օրինակ, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, դատաքննությունն in absentia (բացակայությամբ դատապարտված անձի) անցկացնելը համահունչ է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, եթե հաստատվել է, որ անձը **հրաժարվել է դատաքննությանը ներկա գտնվելու և իրեն պաշտպանելու իրավունքից, կամ որ մտադիր է եղել խուսափել դատաքննությունից**[1]:

19.1 Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի կենսագործման իրավաչափությունը և քրեական վարույթի արդարացիությունը գնահատելիս ևս կարևոր նշանակություն ունի հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի վարքագիծը:

Մասնավորապես, մի շարք դեպքերում անձի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը կարող է սահմանափակվել նաև հանցագործության մեջ մեղադրվող անձի վարքագծի արդյունքում: Օրինակ՝ վրա հասնող հետևանքների ծավալը գիտակցելով, արագացված դատաքննության կարգի կիրառման միջնորդություն ներկայացնելու իրավունքից օգտվելու դեպքում, երբ անձը բացահայտ հրաժարվում է իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման ենթարկելու իր իրավունքից:

Միևնույն ժամանակ, գործնականում կարող են լինել իրավիճակներ, երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձն իր ոչ իրավաչափ վարքագծով նվազեցնի կամ նույնիսկ անհնարին դարձնի հակընդդեմ հարցման իրավունքի կենսագործման հնարավորությունը: Այսպես, այն դեպքերում, երբ հանցագործության մեջ մեղադրվող անձն իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին, սակայն տևական ժամանակ թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և գտնվել հետախուզման մեջ, ապա այդ ժամանակահատվածում վկաները ողջամտորեն կարող են մահանալ կամ հեռանալ երկրից այնպիսի անհայտ հասցեով, որը հնարավոր չլինի պարզել և միջազգային իրավական օգնության շրջանակներում ապահովել հանցագործության մեջ մեղադրվող անձի հակընդդեմ հարցման իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև նշված հանգամանքները չեն կարող վկայել այն մասին, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող

[1] Տե՛ս mutatis mutandiis Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sejdovic v. Italy* գործով վկայակոչված վճիռը, 82-րդ կետ:

անձի թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքներն ինքնին բավարար են անվերապահ եզրահանգում անելու համար, որ անձը զրկվել է հակընդդեմ հարցման իր իրավունքից, սակայն գործի փաստական հանգամանքների համատեքստում դրանք կարող են ունենալ ծանրակշիռ նշանակություն վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման նպատակով հակակշռող գործոնների առկայությունը, ինչպես նաև ընդհանուր առմամբ վարույթի արդարացիությունը գնահատելիս: Այդ համատեքստում էական կարող են լինել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են օրինակ՝ անձի՝ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին տեղեկացված լինելու, քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու ժամանակահատվածի տևողության, վարույթին պաշտպանի ներգրավվածության, անձի հայտնաբերման և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ հայտնվելու հանգամանքների և գործի այլ փաստական տվյալների գնահատումը, որոնք կարող են վկայել այն մասին, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը ողջամտորեն կանխատեսելով վրա հասնող հետևանքների բնույթը՝ իր ոչ իրավաչափ վարքագծով իրեն ենթադրաբար զրկել է իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքների հաշվառմամբ հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակման փաստը հաստատելիս դատարանները բոլոր դեպքերում պետք է փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով հիմնավորեն, որ դատաքննությանը չներկայացած վկայի նախաքննական ցուցմունքների օգտագործման պայմաններում ընդհանուր առմամբ չի խախտվում քրեական վարույթի արդարացիությունը:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը դատաքննության ընթացքում 2016 թվականի օգոստոսի 12-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 5-ին ծանուցագրեր է ուղարկել վկա Տ.Ազատյանի հասցեով, որոնք ետ են վերադարձվել «տեղափոխված» նշումով, 2016 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն կատարված հարցմամբ պարզվել է, որ 2014 թվականի օգոստոսի 18-ին Տ.Ազատյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն[1],

- Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքներն անթույլատրելի ճանաչելու և ապացույցների շարքից հանելու մասին Ա.Ղուլյանի պաշտպանի միջնորդությունը՝ գտել է, որ վկայի՝ նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքները պետք է հանել դատավճռի հիմքում դրվող ապացույցների շարքից՝ հաշվի առնելով, որ քրեական գործի դատաքննության

[1] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

ընթացքում ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը վկայի ներկայությունն ապահովելու համար, սակայն չի հաջողվել, իսկ վերջինիս նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է մեղքը հաստատող ապացույցների զանգվածում[1],

- Ի հակադրումն դրա, Վերաքննիչ դատարանը, հերքելով Տ.Ազատյանի՝ դատարանում հրապարակված նախաքննական ցուցմունքներն անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները, նշել է, որ նախաքննության ընթացքում Տ.Ազատյանը տարբեր ժամանակներ տվել է բացատրություն, ցուցմունք, այնուհետև՝ երկու լրացուցիչ ցուցմունք ու այդ ընթացքում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում, մինչդեռ ամբաստանյալ Ա.Ղուլյանը շուրջ ութ տարի թաքնվել է քննությունից և գտնվել հետախուզման մեջ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նման պայմաններում ամբաստանյալ Ա.Ղուլյանն ինքն իրեն զրկել է հակընդդեմ հարցման իրավունքից, քանի որ երբ վերջինս ինքնակամ ներկայացել է, վկա Տ.Ազատյանը եղել է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, իսկ դատաքննության ընթացքում ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը՝ Տ.Ազատյանի ներկայությունն ապահովելու համար, ինչը, սակայն, չի հաջողվել[2]:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 16-19-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանների իրարամերժ հետևությունները հիմնված չեն գործի փաստական հանգամանքների մանրամասն վերլուծության վրա:

Մասնավորապես՝ Առաջին ատյանի դատարանը, քննարկելով պաշտպանական կողմի միջնորդությունը՝ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքն ապացույցների շարքից հանելու վերաբերյալ, բավարարել է այն և անթույլատրելի ճանաչել այդ ցուցմունքը՝ պատճառաբանելով, թե քրեական գործի դատաքննության ընթացքում ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը վկայի ներկայությունն ապահովելու համար, ինչը սակայն չի հաջողվել, իսկ վերջինիս նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը համոզիչ չի համարում նշված պատճառաբանությունը և գտնում, որ այն հիմնավոր չի կարող լինել վկային չհարցաքննելու և նրա ցուցմունքները ապացուցողական զամբյուղից հանելու համար: Այսպես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչ այդ եզրահանգման հանգելն Առաջին ատյանի դատարանը չի ձեռնարկել բավարար միջոցներ վկային հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի ապահովման համար: Այլ կերպ, դատարանը չի սպառել ողջամտորեն անհրաժեշտ միջոցները՝ վկայի գտնվելու վայրը

[1] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

պարզելու և նրան հակընդդեմ հարցման ենթարկելու համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ այն փաստը, որ ներպետական դատարանները չեն կարողացել պարզել տվյալ վկայի գտնվելու վայրը կամ այն փաստը, որ վկան բացակայել է այն երկրից, որտեղ իրականացվել է գործով վարույթը, ինքնին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի պահանջների տեսանկյունից բավարար չէ: Այդ պահանջների համաձայն՝ Պայմանավորվող պետություններն պետք է դրական քայլեր ձեռնարկեն՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության[1]: Այդ քայլերը Պայմանավորվող պետությունների կողմից կատարման ենթակա այն պարտավորությունների մաս են կազմում, որոնք ուղղված են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից արդյունավետորեն օգտվելու հնարավորությունն ապահովելուն[2]:

Առաջին ատյանի դատարանը թեև որոշակի քայլեր ձեռնարկել է վկա Տ.Ազատյանին գտնելու և նրան հակընդդեմ հարցման ենթարկելու համար, սակայն Վճռաբեկ դատարանի համոզմամբ հնարավոր բոլոր միջոցները չեն ձեռնարկվել: Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով[3], տվյալ դեպքում ևս, Առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնության՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի հիման վրա, որի մասնակից են և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Ռուսաստանի Դաշնությունը:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանի կողմից համակողմանի գնահատման չեն ենթարկվել հակակշռող գործոնների առկայությունը, դրանց բավարարությունը: Այսինքն՝ չի ուսումնասիրվել վկա Տ.Ազատյանին ուղղակիորեն խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հակակշռելու համար դատավարական միջոցների առկայությունը:

Ավելին, վկա Տ.Ազատյանին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի ապահովման համատեքստում Առաջին ատյանի դատարանը նաև պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել ամբաստանյալ Ա.Ղուլյանի վարքագիծը: Մասնավորապես, դատարանը չի վերլուծել և ուշադրության չի արժանացրել Ա.Ղուլյանի՝ վարույթն իրականացնող մարմնից տևական

[1] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gabrielyan v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, 81-րդ կետ, *Lučić v. Croatia* գործով 2014 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 5699/11, 79-րդ կետ:

[2] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gabrielyan v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, 81-րդ կետ:

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ter-Sargsyan v. Armenia* գործով 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 27866/10, 51-րդ կետ:

ժամանակ թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքները՝ քննարկման առարկա չդարձնելով նաև այդ պայմաններում հակակշռող գործոնների, ընդհանուր առմամբ քրեական վարույթի արդարացիության ապահովման երաշխիքների առկայությունը՝ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքի օգտագործման դեպքում:

Վերաքննիչ դատարանը, ի հակառակ Առաջին ատյանի դատարանի եզրահանգման, հիմնվելով բացառապես ամբաստանյալի քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքների վրա, անվերապահորեն եզրահանգել է, որ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքները պետք է դնել ամբաստանյալ Ա.Ղուլյանի մեղքը հաստատող դատական ակտի հիմքում: Ընդ որում, Վերաքննիչ դատարանն առանց պատշաճ իրավական գնահատման ենթարկելու Առաջին ատյանի դատարանի կողմից վկա Տ.Ազատյանին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները՝ վկայի բացակայությունը համարել է հարգելի: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց չէ ամբաստանյալի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Վերաքննիչ դատարանի պնդման հետ և արձանագրում, որ թեև վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքը միակը չի եղել, որի հիման վրա Վերաքննիչ դատարանը մեղավոր է ճանաչել Ա.Ղուլյանին, սակայն այն վճռորոշ է եղել վերջինիս մեղավոր ճանաչելու հիմքում դրվող ապացուցողական զամբյուղում: Մասնավորապես, վկա Տ.Ազատյանի ցուցմունքն այն առանցքային փաստական տվյալներից է, որն ունի որոշիչ նշանակություն ամբաստանյալ Ա.Ղուլյանի մեղավորությունը հիմնավորելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքների համատեքստում ևս գնահատման չի ենթարկել հակակշռող գործոնների, ընդհանուր առմամբ քրեական վարույթի արդարացիության ապահովման երաշխիքների առկայությունը՝ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքի օգտագործման դեպքում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալ Ա.Ղուլյանի կողմից վկա Տ.Ազատյանին գործի դատաքննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

22. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանները սխալ

են մեկնաբանել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու (կոնֆրոնտացիայի) իրավունքի պահանջները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի հիման վրա հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար, որի պայմաններում միայն կարող է ապահովվել գործում առկա ապացույցների գնահատման, դրանց թույլատրելիության և վերաբերելիության հարցերի ողջ ծավալով քննությունը, այդ թվում՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքների օգտագործման իրավաչափության վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի վերաբերյալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Ա.Ղուլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՏԴ2/0037/01/15

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ս.ՕՀԱՆՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

Ամբաստանյալ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ.

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2007 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությունում հարուցվել է թիվ 62207607 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2007 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ Ա.Ղուլյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մայիսի 30-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի հայտնաբերումը:

2015 թվականի ապրիլի 10-ին Ա.Ղուլյանը կամովին ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևանի վարչության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի բաժին: Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ քրեական գործով վարույթը վերսկսվել է:

2015 թվականի ապրիլի 11-ին Ա.Ղուլյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

2015 թվականի հուլիսի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 12-ի

դատավճռով Ա.Ղուլյանը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Մեղադրող Ա.Շահբազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 12-ի դատավճիռը, և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության՝ սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ:

5. Գործի նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Ա.Ղուլյանի անմեղությունը՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

6. Մեղադրող Ա.Շահբազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը, Ա.Ղուլյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և պատիժ նշանակել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է 2015 թվականի ապրիլի 10-ից մինչև 2016 թվականի փետրվարի 12-ն անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 1 (մեկ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետով:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

8. Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ պաշտպանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Ամբաստանյալ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի վերաբերյալ Տավուշի մարզի ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշումը բեկանվել և գործն ուղարկվել է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Ամբաստանյալ Ա.Ղուլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ:

9. Վերոհիշյալ որոշման եզրափակիչ մասի դեմ Հատուկ կարծիքի են մնացել դատավորներ Ս.Ավետիսյանը և Ս.Օհանյանը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

10. Արտուշ Ղուլյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա՝ *«(…) 2006թ. մայիսի 6-ից աշխատելով ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի Գուգարքի տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսակետում որպես պետի տեղակալ, ի պաշտոնե հանդիսանալով իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ՝ դրամի ձևով ստացել է առանձնապես խոշոր չափի կաշառք՝ կաշառք տվողի օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություն կատարելու համար:*

Այսպես, Արտուշ Ղուլյանը Հովսեփ Ներսիսյանի և Տիգրան Ազատյանի կողմից անհատ ձեռնարկատեր Ամալյա Ադամյանի անվամբ Իտալիայից և Ֆրանսիայից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող օծանելիքը մաքսակետում Տիգրան Ազատյանի՝ որպես անհատի, անվամբ վերաձևակերպելու, անվանափոխելու և մաքսազերծելու համար 2007թ. հոկտեմբերի 14-ին նրանցից պահանջել և նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, իր աշխատասենյակում Հովսեփ Ներսիսյանից անձամբ ստացել է 1.746.990 ՀՀ դրամին համարժեք 5250 ԱՄՆ դոլար կաշառք, որից հետո նրա հանձնարարությամբ կատարվել են ներմուծվող ապրանքի մաքսային ձևակերպման հետ կապված գործողությունները (…)»[1]:

11. Ա.Ղուլյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված են հետևյալ ապացույցները[2]:

11.1. Վկաներ՝ Հովսեփ Ներսիսյանի, Տիգրան Ազատյանի, Գագիկ Մելիքսեթյանի, Բագրատաշենի մաքսակետի աշխատակիցներ՝ Հովիկ Աբովյանի, Արծրուն Ալեքսանյանի, Հայկ Հովսեփյանի ցուցմունքները:

11.2. Կաշառք տված անձ՝ Հովսեփ Ներսիսյանի և Ա.Ղուլյանի առերես հարցաքննության արձանագրությունը:

11.3. Ապացույց ճանաչված մաքսային հայտարարագրերը, մաքսավճարի գանձման թիվ 582087 անդորրագիրը, մաքսային գանձումների բյուջե

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 111:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 137-147:

փոխանցման 528297 հանձնարարականը, ապրանքի համապատասխանության թիվ 025747 սերտիֆիկատը, գումարի գանձման վերաբերյալ դրամարկղի թիվ R2929 անդորրագիրը, որոնցով հաստատվել է 2007 թվականի հոկտեմբերի 14-ին Բագրատաշենի մաքսակետում Տիգրան Ազատյանի անվամբ ներմուծվող՝ 13.912.231 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքներ ներմուծելու, դրանք մաքսային ձևակերպման ենթարկելու և մաքսազերծելու, ինչպես նաև համապատասխան չափով մաքսավճարները մաքսակետի դրամարկղում կանխիկ վճարելու հանգամանքը:

Որպես ապացույց ճանաչված այլ փաստաղթեր՝ դիմումներ, բեռնագրեր, հաշիվապրանքներ, և այլ տվյալներ[1]:

12. Առաջին ատյանի դատարանը դատաքննության ընթացքում 2016 թվականի օգոստոսի 12-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 5-ին ծանուցագրեր է ուղարկել վկա Տ.Ազատյանի հասցեով, որոնք ետ են վերադարձվել «տեղափոխված» նշումով, 2016 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն կատարված հարցմամբ պարզվել է, որ 2014 թվականի օգոստոսի 18-ին Տ.Ազատյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն[2]:

13. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռի համաձայն՝ *«(…) Քննության առնելով ամբաստանյալ Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի պաշտպան Արմեն Խաչատրյանի միջնորդությունը, որով նա դատարանին խնդրել է վկա Տիգրան Ազատյանի նախաքննական ցուցմունքները ճանաչել անթույլատրելի ապացույց և հանել ապացույցների շարքից՝ նկատի ունենալով, որ պաշտպանական կողմը ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում զրկված է եղել վկային հարցաքննելու հնարավորությունից, որպիսի պայմաններում պաշտպանական կողմը գտնում է, որ հակընդդեմ հարցման իրավունքով (կոնֆրոնտացիայով) չապահովված փաստական տվյալը չի կարող համարվել ապացույց և դրվել մեղադրանքի հիմքում, դատարանը[ն] (…) արձանագրում է, որ սույն քրեական գործի դատաքննության ընթացքում ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը վկա Տիգրան Ազատյանի ներկայությունն ապահովելու համար, միաժամանակ դատարանին տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 10.02.2015թ. հարուցված թիվ 61203915 քրեական գործով 29.12.2015թ. Տիգրան Հուսիկի Ազատյանը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, նույն օրը որոշում է կայացվել նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին և քրեական գործի վարույթը կասեցվել է: Ձեռնարկվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ նրան*

[1] Հատուկ կարծիքում ապացույցների բովանդակությունը չի շարադրվում այն պատճառաբանությամբ, որ Վճռաբեկ դատարանը *Ա.Ղուլյանի* մեղավորության կամ անմեղության հարցին չի անդրադարձել:

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 33, 63, 88, 115, հատոր 8-րդ, թերթեր 2-4:

հայտնաբերելու ուղղությամբ: Միաժամանակ դատարանը փաստում է, որ վկա Տիգրան Ազատյանի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Նման պայմաններում (...) դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով վկա Տիգրան Հուսիկի Ազատյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքները պետք է հանել դատավճռի հիմքում դրվող ապացույցների շարքից վերը շարադրված պատճառաբանություններով:

(...)

Դատարանը սույն գործի փաստերը վերլուծելով ՀՀ վճռաբեկ դատարանի (...) որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գալիս է այն համոզման, որ սույն գործի դատաքննության ընթացքում ձեռք չի բերվել հավաստի ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը դատարանին հնարավորություն կտար հաստատող պատասխաններ տալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 4-րդ կետերին, մասնավորապես ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը, այդ արարքը համապատասխանում է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին, ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը և ապացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ և, եթե այո, ապա քրեական օրենսգրքի որ հոդվածով, մասով, կետով է այն նախատեսված (...)»[1]:

14. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ փաստել է. *«(...) նախաքննության ընթացքում Տիգրան Ազատյանը 16.10.2007թ. տվել է բացատրություն, 17.10.2007թ. ցուցմունք, այնուհետև՝ 18.12.2007թ. և 28.02.2008թ. լրացուցիչ ցուցմունքներ ու այդ ընթացքում գտնվել է ՀՀ-ում, այնինչ ամբաստանյալը 22.10.2007թ. մինչև 11.04.2015թ. թաքնվել է քննությունից և գտնվել է հետախուզման մեջ: Հետագայում, երբ ամբաստանյալը ինքնակամ ներկայացել է, Տիգրան Ազատյանը եղել է ՀՀ-ի սահմաններից դուրս, ուստի ստացվում է, որ հետախուզման մեջ գտնվելու ժամանակահատվածում ամբաստանյալը ինքն իրեն զրկել է հակընդդեմ հարցման իրավունքից: Իսկ հետագայում դատաքննության ընթացքում, ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը՝ Տիգրան Ազատյանի ներկայությունն ապահովելու համար (դա նշել է նաև Դատարանը), ինչը սակայն չի հաջողվել, ուստի տվյալ դեպքում վերջինիս բացակայությունը պետք է համարել հարգելի: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի եզրահանգումն այն մասին, որ Տիգրան Ազատյանի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է մեղքը հաստատող ապացույցների զանգվածում անհիմն է, քանի որ բացի դրանից սույն քրեական գործում առկա*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 101-107:

են այլ ապացույցներ, որոնք վկայում են Արտուշ Ղուլյանի կողմից իրեն վերագրվող արարքը կատարելու մասին:

(…)

Այսպիսով, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում վերլուծելով գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ վկա Գագիկ Մելիքսեթյանի դատաքննական, վկաներ՝ Հովսեփ Նիկոլայի Ներսիսյանի, Հայկ Վրեժի Հովսեփյանի, Արծրուն Արտոյի Ալեքսանյանի, Տիգրան Հուսիկի Ազատյանի, Հովիկ Արամայիսի Աբովյանի նախաքննական ցուցմունքները, Հովսեփ Նիկոլայի Ներսիսյանի և Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի միջև առերես հարցաքննության արձանագրությունը և որպես այլ փաստաթուղթ ճանաչված ապացույցները, դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, Վերաքննիչ դատարանը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված է համարում, որ Արտուշ Ղուլյանը Հովսեփ Ներսիսյանի և Տիգրան Ազատյանի կողմից անհատ ձեռնարկատեր Ամալյա Ադամյանի անվամբ Իտալիայից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող օծանելիքը մաքսակետում Տիգրան Ազատյանի՝ որպես անհատի անվամբ վերաձևակերպելու, անվանափոխելու և մաքսազերծելու համար 2007թ. հոկտեմբերի 14-ին նրանցից պահանջել և նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, իր աշխատասենյակում Հովսեփ Ներսիսյանից անձամբ ստացել է 5.250 (հինգ հազար երկու հարյուր հիսուն) ԱՄՆ դոլար կաշառք, որից հետո նրա հանձնարարությամբ կատարվել են ներմուծվող ապրանքի մաքսային ձևակերպման հետ կապված գործողությունները (…)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, մասնավորապես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված ամբաստանյալի՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը կազմող հակընդդեմ հարցման իրավունքը: Վերաքննիչ դատարանը բացակա վկայի ցուցմունքը դրել է Ա.Ղուլյանի մեղադրանքի հիմքում՝ այն հիմնավորմամբ, որ Ա.Ղուլյանը, թաքնվելով քննությունից, ինքն իրեն զրկել է վկայի հետ առերես հարցաքննվելու հնարավորությունից:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 150-154:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, հիմնվելով միայն նախաքննական ցուցմունքների վրա, իրականացրել է գործի քննության ընթացքում հետազոտված ապացույցների սխալ գնահատում և ուշադրություն չի դարձրել գործում առկա ապացույցներին, ինչպես նաև նախաքննության և դատաքննության փուլում տրված ցուցմունքների միջև եղած հակասություններին:

Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ին որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ի արդարացման դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումը և եզրահանգումը.</u>

16. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ իր դեմ ցուցմունք տված վկաներին հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) ենթարկելու իրավունքի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարել սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Ա.Ղուլյանի կողմից վկա Տ.Ազատյանին գործի դատաքննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

Վճռաբեկ դատարանի եզրահանգումներն հիմնականում հանգում են հետևյալի.

(…)

16.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված ընդհանուր կանոնը վկաներին գործի դատական քննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելն է: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր դեպքերում են վկաները ներկայանում դռնբաց դատական քննությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշակել է հետևյալ սկզբունքներն այդ վկաների նախաքննական ցուցմունքների օգտագործման հնարավորությունը գնահատելու համար.

- վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հիմնավոր պատճառ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա հիմնավոր փաստական և իրավական հիմքեր՝ դատական քննությանը վկայի ներկայությունն ապահովել չկարողանալու համար: Կան մի շարք պատճառներ, թե ինչու վկան չի կարող մասնակցել դատական քննությանը, օրինակ՝ վկայի մահվան, վրեժխնդրու-

թյան վախի[1], վկային հայտնաբերելու անհնարինության[2] կամ այլ պատճառներով: Ընդ որում, այս սկզբունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծում է, որ նույնիսկ եթե ենթադրվի, որ դատական նիստի ժամանակ վկաներին չհարցաքննելու համար չեն եղել հիմնավոր պատճառներ, ապա դրանց բացակայությունն ինքնին չի կարող վկայել քրեական վարույթի անարդարացիության մասին[3],

- եթե անձին մեղավոր ճանաչելու հիմքում բացառապես կամ հիմնականում դրվել են այն անձի ցուցմունքները, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ որը հարցաքննության չի ենթարկվել նախնական քննության կամ դատաքննության ընթացքում, ապա պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այնքան, որ դա անհամատեղելի կլինի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (այսպես կոչված՝ «միակ կամ վճռորոշ կանոնը»): Այդ համատեքստում որպես «միակ» պետք է հասկանալ մեղադրյալի դատապարտման հիմքում դրված միակ ցուցմունքը, իսկ «վճռորոշ»-ը պետք է հասկանալ այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունքը, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար[4],

- պետք է ուսումնասիրվի հակակշռող բավարար գործոնների առկայությունը, ինչպես օրինակ՝ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը և դատաքննության ժամանակ վկաներին ուղղակիորեն խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցները: Ընդ որում, այդ գործոնների առկայությունը պետք է ուսումնասիրվի ոչ միայն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել անձին դատապարտելու համար, այլ նաև այն գործերում, որոնցում դատարանը չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է սահմանափակել է պաշտպանության կողմի միջոցները[5]:

[1] Տե՛ս նույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը:
[2] Տե՛ս *Paić v. Croatia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 47082/12, 34-րդ կետ:
[3] Տե՛ս *Seton v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգատ թիվ 55287/10, 62-րդ կետ:
[4] Տե՛ս *Schatschaschwili v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, 123-124-րդ կետեր:
Նշվածի կապակցությամբ տե՛ս նաև *Համայակ Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշման 23-րդ կետը, որտեղ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում:
[5] Տե՛ս *Schatschaschwili v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, 116-րդ, 145-րդ կետեր:

16.2. Վերոնշյալի հետ մեկտեղ պետք է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել դատական վարույթի որևէ փուլում, դատաքննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված գրավոր ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը պետք է լինի ծայրահեղ միջոց[1]: Այդ հանգամանքը մշտապես ընդգծվել է նաև ընդդեմ Հայաստանի Հանրապետության կայացված մի շարք վճիռներում[2]:

16.3. Արդար դատաքննության երաշխիքների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից օգտվելը մեղադրյալի իրավունքն է, ով կարող է նաև իր դրսևորած վարքագծով հրաժարվել դրանցից: Մեղադրյալն իր վարքագծով կարող է նաև անուղղակիորեն հրաժարվել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված կարևոր իրավունքից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պահանջում է հիմնավորել, որ անձը կարող էր ողջամտորեն կանխատեսել, թե որոնք կլինեին իր վարքագծի հետևանքները[3]:

16.4. Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի կենսագործման իրավաչափությունը և քրեական վարույթի արդարացիությունը գնահատելիս ևս կարևոր նշանակություն ունի հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի վարքագիծը:

Գործնականում կարող են լինել իրավիճակներ, երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձն իր ոչ իրավաչափ վարքագծով նվազեցնի կամ նույնիսկ անհնարին դարձնի հակընդդեմ հարցման իրավունքի կենսագործման հնարավորությունը: Այսպես, այն դեպքերում, երբ հանցագործության մեջ մեղադրվող անձն իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին, սակայն տևական ժամանակ թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և գտնվել հետախուզման մեջ, ապա այդ ժամանակահատվածում վկաները ողջամտորեն կարող են մահանալ կամ հեռանալ երկրից այնպիսի անհայտ հասցեով, որը հնարավոր չլինի պարզել և միջազգային իրավական օգնության շրջանակներում ապահովել հանցագործության մեջ մեղադրվող անձի հակընդդեմ հարցման իրավունքի իրացումը:

[1] Տե՛ս *Al-Khawaja and Tahery v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05 և 22228/06, 125-րդ կետ:

[2] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ter-Sargsyan v. Armenia* գործով 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 27866/10, *Avetisyan v. Armenia* գործով 2016 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 13479/11, *Asatryan v. Armenia* գործով 2017 թվականի ապրիլի 27-ի վճիռը, գանգատ թիվ 3571/09, *Dadayan v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 14078/12 և այլն:

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hermi v. Italy* գործով 2006 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 18114/02, 74-րդ կետ, *Sejdovic v. Italy* գործով 2006 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 56581/00, 87-րդ կետ:

16.5. Թեև նշված հանգամանքները չեն կարող վկայել այն մասին, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքներն ինքնին բավարար են անվերապահ եզրահանգում անելու համար, որ անձը զրկվել է հակընդդեմ հարցման իր իրավունքից, սակայն գործի փաստական հանգամանքների համատեքստում դրանք կարող են ունենալ ծանրակշիռ նշանակություն վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման նպատակով հակակշռող գործոնների առկայությունը, ինչպես նաև ընդհանուր առմամբ վարույթի արդարացիությունը գնահատելիս: Այդ համատեքստում էական կարող են լինել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են օրինակ՝ անձի՝ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին տեղեկացված լինելու, քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու ժամանակահատվածի տևողության, վարույթին պաշտպանի ներգրավվածության, անձի հայտնաբերման և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ հայտնվելու հանգամանքների և գործի այլ փաստական տվյալների գնահատումը, որոնք կարող են վկայել այն մասին, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը ողջամտորեն կանխատեսելով վրա հասնող հետևանքների բնույթը՝ իր ոչ իրավաչափ վարքագծով իրեն ենթադրաբար զրկել է իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հանգամանքների հաշվառմամբ հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակման փաստը հաստատելիս դատարանները բոլոր դեպքերում պետք է փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով հիմնավորեն, որ դատաքննությանը չներկայացած վկայի նախաքննական ցուցմունքների օգտագործման պայմաններում ընդհանուր առմամբ չի խախտվում քրեական վարույթի արդարացիությունը:

17. *Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝*

- Վերաքննիչ դատարանը 2016 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ բեկանել է Առաջին ատյանի արդարացման դատավճիռը և գործն ուղարկել է նույն դատարան՝ սահմանելով քննության նոր ծավալ, մասնավորապես նշելով, որ գործի նոր դատական քննության ընթացքում անհրաժեշտ է կրկին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ վկա Տիգրան Ազատյանի ներկայությունն ապահովելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում քրեական դատավարության կանոնների համաձայն՝ հետազոտել նրա նախաքննական ցուցմունքները, ինչպես նաև ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքի տեսանկյունից քննարկել այդ իրավունքն ապահովված չլինելու պատճառները և դրանցով պայմանավորված՝ գնահատել վկայի ցուցմունքների թույլատրելիությունը[1]:

[1] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանը դատաքննության ընթացքում 2016 թվականի օգոստոսի 12-ին, օգոստոսի 23-ին, սեպտեմբերի 5-ին ծանուցագրեր է ուղարկել վկա Տ.Ազատյանի հասցեով, որոնք ետ են վերադարձվել «տեղափոխված» նշումով, 2016 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն կատարված հարցմամբ պարզվել է, որ 2014 թվականի օգոստոսի 18-ին Տ.Ազատյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն[1],

- Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքներն անթույլատրելի ճանաչելու և ապացույցների շարքից հանելու մասին Ա.Ղուլյանի պաշտպանի միջնորդությունը՝ գտել է, որ վկայի՝ նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքները պետք է հանել դատավճռի հիմքում դրվող ապացույցների շարքից՝ հաշվի առնելով, որ քրեական գործի դատաքննության ընթացքում ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը վկայի ներկայությունն ապահովելու համար, սակայն չի հաջողվել, իսկ վերջինիս նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է մեղքը հաստատող ապացույցների զանգվածում[2],

- Ի հակադրումն դրա, Վերաքննիչ դատարանը, հերքելով Տ.Ազատյանի՝ դատարանում հրապարակված նախաքննական ցուցմունքներն անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները, նշել է, որ նախաքննության ընթացքում Տ.Ազատյանը տարբեր ժամանակներ տվել է բացատրություն, ցուցմունք, այնուհետև՝ երկու լրացուցիչ ցուցմունք ու այդ ընթացքում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում, մինչդեռ ամբաստանյալ Ա.Ղուլյանը շուրջ ութ տարի թաքնվել է քննությունից և գտնվել հետախուզման մեջ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նման պայմաններում ամբաստանյալ Ա.Ղուլյանն ինքն իրեն զրկել է հակընդդեմ հարցման իրավունքից, քանի որ երբ վերջինս ինքնակամ ներկայացել է, վկա Տ.Ազատյանը եղել է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, իսկ դատաքննության ընթացքում ձեռնարկվել են ողջամիտ բոլոր ջանքերը՝ Տ.Ազատյանի ներկայությունն ապահովելու համար, ինչը, սակայն, չի հաջողվել[3]:

18. Վճռաբեկ դատարանը բողոքի քննության արդյունքում փաստել է, որ ստորադաս դատարանների իրարամերժ հետևությունները հիմնված չեն գործի փաստական հանգամանքների մանրամասն վերլուծության վրա:

- Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը թեև որոշակի քայլեր ձեռնարկել է վկա Տ.Ազատյանին գտնելու և նրան հակընդդեմ հարցման ենթարկելու համար, սակայն Վճռաբեկ դատարանի համոզմամբ հնարավոր

[1] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

բոլոր միջոցները չեն ձեռնարկվել: Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի* գործով[1], տվյալ դեպքում ևս, Առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնության՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի հիման վրա, որի մասնակից են և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Ռուսաստանի Դաշնությունը:

- Բացի այդ, վկա Տ.Ազատյանին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի ապահովման համատեքստում Առաջին ատյանի դատարանը նաև պատշաճ իրավական գնահատման չի ենթարկել ամբաստանյալ Ա.Ղուլյանի վարքագիծը: Մասնավորապես, դատարանը չի վերլուծել և ուշադրության չի արժանացրել Ա.Ղուլյանի՝ վարույթն իրականացնող մարմնից տևական ժամանակ թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքները՝ քննարկման առարկա չդարձնելով նաև այդ պայմաններում հակակշռող գործոնների, ընդհանուր առմամբ քրեական վարույթի արդարացիության ապահովման երաշխիքների առկայությունը՝ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքի օգտագործման դեպքում:

- Վերաքննիչ դատարանը, ի հակառակ Առաջին ատյանի դատարանի եզրահանգման, հիմնվելով բացառապես ամբաստանյալի քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքների վրա, անվերապահորեն եզրահանգել է, որ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքները պետք է դնել ամբաստանյալ Ա.Ղուլյանի մեղքը հաստատող դատական ակտի հիմքում:

- Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց չէ ամբաստանյալի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Մինչդեռ, նրա ցուցմունքն այն առանցքային փաստական տվյալներից է, որն ունի որոշիչ նշանակություն ամբաստանյալ Ա.Ղուլյանի մեղավորությունը հիմնավորելու համար:

- Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալ Ա.Ղուլյանի կողմից վկա Տ.Ազատյանին գործի դատաքննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

- Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու

[1] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ter-Sargsyan v. Armenia* գործով 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 27866/10, 51-րդ կետ:

(կոնֆրոնտացիայի) իրավունքի պահանջները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի հիման վրա հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար, որի պայմաններում միայն կարող է ապահովվել գործում առկա ապացույցների գնահատման, դրանց թույլատրելիության և վերաբերելիության հարցերի ողջ ծավալով քննությունը, այդ թվում՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ վկա Տ.Ազատյանի նախաքննական ցուցմունքների օգտագործման իրավաչափության վերաբերյալ :

Դատավորներ Ս.Ավետիսյանի և Ս.Օհանյանի իրավական դիրքորոշումները և եզրահանգումները.

19. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը, դրա դեմ բերված պաշտպանի վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, ծանոթանալով գործի նյութերին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմանը, համաձայն չենք Վճռաբեկ դատարանի որոշման եզրափակիչ մասի հետ, ուստի մնում ենք Հատուկ կարծիքի՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով:

Համաձայն լինելով Վճռաբեկ դատարանի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների հետ, գտնում ենք, որ առկա փաստական տվյալների գնահատման արդյունքում, Վճռաբեկ դատարանն այնուամենայնիվ կարող էր լուծել Ա.Ղուլյանի մեղավորության կամ անմեղության հարցը և կայացնել ըստ էության լուծող դատական ակտ, այն է՝ օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի որոշումը կամ Առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը հետևյալ նկատառումներով:

Մեջբերված գործի փաստական տվյալները գնահատելով վկայակոչված իրավական դիրքորոշումների համատեքստում, արձանագրենք հետևյալը:

1) Ամբաստանյալ Ա.Ղուլյանը դեպքից անմիջապես հետո՝ 2007 թվականի հոկտեմբերի 14-ից թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից և շուրջ ութ տարի գտնվել է հետախուզման մեջ, հաստատապես իմանալով, որ մեղադրվում է կաշառք ստանալու մեջ:

2) Ա.Ղուլյանի վարքագծի ուսումնասիրությունը վկայում է, որ նա իր վարքագծով հրաժարվել է իր դեմ ցուցմունք տված վկա Տիգրան Ազատյանի հետ առերեսվելու իրավունքից: Ընդ որում, Ա.Ղուլյանը ողջամտորեն կանխատեսել է, թե որոնք կլինեն իր վարքագծի հետևանքները, հատկապես, որ գործի տվյալների համաձայն՝ նա առնչություն է ունեցել վկայի հետ:

Այլ կերպ՝ ամբաստանյալի ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում հակընդդեմ հարցման իրավունքի կենսագործումն անհնարին է դարձել:

3) Վկա Տ.Ազատյանը նախաքննության ընթացքում տարբեր ժամանակներ տվել է բացատրություն, ցուցմունք, այնուհետև երկու լրացուցիչ

ցուցմունք և դեպքից հետո՝ 2007 թվականից մինչև 2014 թվականը գտնվել է Հայաստանի Հանրապետությունում[1]:

4) 2015 թվականին Տ.Ազատյանը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, նույն օրը նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել և քրեական գործի վարույթը կասեցվել:

Գործում առկա նյութերի համաձայն՝ Տ.Ազատյանը 2014 թվականի օգոստոսի 18-ին մեկնել է Ռուսաստանի Դաշնություն և նրա գտնվելու վայրը հայտնի չէ:

2015 թվականի հուլիսի 1-ին որոշում է կայացվել վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով Տ.Ազատյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին և 215-րդ հոդվածի 1-ին մասերով քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Ա.Ղուլյանը վարույթն իրականացնող մարմնին ներկայացել է 2015 թվականի ապրիլի 10-ին, որի պայմաններում նախաքննական մարմինը զրկված է եղել Տ.Ազատյանի հետ առերեսում կատարելու հնարավորությունից:

5) Առաջին ատյանի դատարանը նոր դատական քննության ընթացքում լրացուցիչ միջոցներ է ձեռնարկել Տ.Ազատյանին հայտնաբերելու ուղղությամբ, սակայն դատարանին դա չի հաջողվել, որպիսի պայմաններում նրա հրապարակված և հետազոտված ցուցմունքները ճանաչվել են անթույլատրելի, պատճառաբանելով նաև, որ նրա ցուցմունքներն ամբաստանյալի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում վճռորոշ են:

Ի հակադրումն դրա, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Տ.Ազատյանի ցուցմունքները վճռորոշ չեն, պատճառաբանելով, որ գործով ձեռք են բերվել Ա.Ղուլյանի մեղքը հավաստող բավարար ապացույցներ:

6) Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի այն հետևությունը, որ Առաջին ատյանի դատարանը Տ.Ազատյանին հայտնաբերելու նպատակով կարող էր դիմել միջազգային իրավական օգնության, հնարավոր է հանգեցնի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման, ավելին՝ սույն գործը դատական ատյաններում քննվում է չորս տարի, նախաքննական մարմնի նյութերը բաղկացած են երեք հատորից, գործով անցնում է մեկ ամբաստանյալ, վեց վկա և գործը երկրորդ անգամ ըստ էության նույն հիմքով վերադարձվում է նոր քննության:

7) Սույն գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Ա.Ղուլյանի մեղադրանքի հիմքում դրված են մի շարք ապացույցներ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), ուստի Վճռաբեկ դատարանը կարող էր այդ ապացույցները, այդ թվում՝ կաշառք տված անձ՝ Հովսեփ Ներսիսյանի ցուցմունքները ստուգել վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 27-29, 34-36, 91-94, հատոր 2-րդ թերթեր 17-19, 149-151:

ապացույցները՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից և կայացնել վերջնական դատական ակտ:

Հարկ ենք համարում արձանագրել, որ նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը կարող էր նաև գնահատել Տ.Ազատյանի ցուցմունքների թույլատրելիության հարցը, անկախ նրանից, թե նրա ցուցմունքները կգնահատվեին որպես գործի ելքի համար որոշիչ նշանակություն ունեցող, թե ոչ:

Դատարանում գործը կոլեգիալ կազմով քննելիս դատական ակտ կայացնելը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 361[1]-րդ հոդվածի համաձայն՝

«(…):

5. Դատական ակտն ամբողջությամբ և դրա յուրաքանչյուր էջը ստորագրում են բոլոր դատավորները: Մեծամասնության կարծիքի հետ չհամաձայնվող դատավորի հատուկ կարծիք ունենալու մասին նրա ստորագրությամբ նշում է կատարվում դատական ակտում: Հատուկ կարծիքն այն ներկայացրած դատավորի ստորագրությամբ կցվում է դատական ակտին:

6. Հատուկ կարծիքը կարող է վերաբերել դատական ակտի ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասին:

7. Հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հետ միաժամանակ»:

Այսպիսով, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի որոշման եզրափակիչ մասի հետ, առաջարկում ենք պաշտպանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ստուգել ստորադաս դատարանների դատական ակտերը և կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Հաշվի առնելով վերոշարադրված հիմնավորումները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 29-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-42-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝

առաջարկում ենք

Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի պաշտպան Ա.Խաչատրյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացնել գործն ըստ էության լուծող համապատասխան դատական ակտ:

Դատավորներ՝ Ս.Ավետիսյան
Ս.Օհանյան

50. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0753/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի օգոստոսի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 92214317 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ Էդգար Ռոբերտի Սերոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ մեղադրյալ Է.Սերոբյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ

մերժվել է մեղադրյալ Է.Սերոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը:

3. Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Գ.Գասպարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը:

5. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Նախաքննության մարմնի որոշմամբ Է.Սերոբյանը որպես մեղադրյալ է ներգրավվել այն բանի համար, որ նա «*(...) 2013 թվականի փետրվարի 15-ին կցագրված լինելով ՀՀ ՊՆ Կենտրոնականի զինկոմիսարիատում, ենթակա է եղել զորակոչման 2015 թվականի ձմեռային զորակոչին, որի ընթացքում որպես [բարձրագույն ուսումնական հաստատության] ուսանող սրացել է տարկետում մինչև 2017 թվականի ամառային զորակոչը, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացել զինկոմիսարիատ և չունենալով զինվորական ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքեր, խախտել է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, խուսափել է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 2017 թվականի ամառային հերթական զորակոչից»*[1]:

7. Զորակոչիկի քարտի համաձայն՝ Է.Սերոբյանին ուսումը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրվել մինչև 2017 թվականի հունիսի 30-ը[2]:

8. Կենտրոնական զինկոմիսարիատից ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն ուղարկված՝ 2017 թվականի օգոստոսի 11-ի գրությամբ հայտնվել է, որ 2017 թվականի ամառային զորակոչի

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 34:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 9-12:

ընթացքում զորակոչիկ Է.Սերոբյանը զինկոմիսարիատ չի ներկայացել, իսկ Է.Սերոբյանին զորակոչային հանձնաժողովին ներկայացնելու նպատակով զինկոմիսարիատի և ոստիկանության կողմից ձեռնարկված միջոցառումներն արդյունք չեն տվել[1]:

9. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Հ]իմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 04/05-1/13901-17 գրությունը, համաձայն որի՝ Է.Սերոբյանի ուսման ավարտը նախատեսվում է 2017 թվականի դեկտեմբերի 31-ին, և ավարտական աշխատանքի պաշտպանությունը տեղափոխվել է 2017-2018 ուսումնական տարվա 1-ին կիսամյակ, և Է.Սերոբյանի ուսման ավարտի ժամկետների փոփոխության և ավարտական աշխատանքի պաշտպանության տեղափոխման պատճառների վերաբերյալ հարցում է կատարվել «Էկոնոմիկայի բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարան, ինչին ի պատասխան՝ [բարձրագույն ուսումնական հաստատությունից] տեղեկացվել է, որ Է.Սերոբյանին տրվել է իրավունք սովորելու ուսուցման անհատական պլանով՝ ավարտական աշխատանքի պաշտպանության ժամկետի փոփոխության պատճառով, պաշտպանությունը նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 20-ին, իսկ ուսման ավարտը՝ 31.12.2017 թվականը, ինչի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը առարկություններ չունի:*

Բացի այդ, 2017 թվականի հուլիսի 24-ի Ռուսաստանի Դաշնության «Բարձրագույն էկոնոմիկայի դպրոց» ազգային հետազոտական համալսարանի «Բիզնեսի և Մենեջմենտի» ֆակուլտետի ղեկավարի կողմից տրված թիվ Ու-6357 տեղեկանքով հիմնավորվել է, որ Է.Սերոբյանն առկա ուսուցման մեջ է գտնվում և պետք է գտնվի Ռուսաստանի Դաշնության ազգային հետազոտական համալսարանի «Բարձրագույն էկոնոմիկայի դպրոց» «Բիզնես և Մենեջմենտի» ֆակուլտետում մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վերը նշված[ի] (...) ուժով [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ Է.Սերոբյանին մեղսագրվող արարքին վերջինիս առնչությունը չի հիմնավորվել, հետևաբար և բացակայում է հիմնավոր կասկածն առ այն, որ Էդգար Ռոբերտի Սերոբյանը խուսափել է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից (...)»[2]:

10. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(...) Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն, որ մեղադրյալ Է.Սերոբյանն առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը: Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է հետևյալ փաստարկներով.*

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 6:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 43-44:

(…)

- ՀՀ նախագահի հրամանագրի համաձայն՝ 2017 թվականի ամառային զորակոչին, ի թիվս այլոց, զորակոչման են ենթակա եղել այն քաղաքացիները, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ,

- Է.Սերոբյանին նախկինում տրված է եղել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք՝ մինչև 2017 թվականի հունիսի 30-ը: Այսինքն՝ մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ Է.Սերոբյանին տրված տարկետման իրավունքը դադարած չի եղել:

(…)

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով մեղադրյալ Է.Սերոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը, կայացրել է գործը ճիշտ լուծող դատական ակտ, սակայն սխալ է պատճառաբանել այն, քանի որ հիմնավոր կասկածի բացակայության հիմքում դրել է ոչ թե Է.Սերոբյանի՝ մինչև 2017 թվականի հունիսի 30-ը տրված տարկետման իրավունքը, այլ Է.Սերոբյանի ուսման ավարտի ժամկետի փոփոխությունը: (…)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել կիրառման ենթակա օրենքը՝ կայացնելով անօրինական դատական ակտ:

11.1. Ի հիմնավորումը վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ *Սամվել Աբրահամյանի* վերաբերյալ որոշումը, ինչպես նաև մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, նշել է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի դատողություններն առ այն, որ մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ մեղադրյալ Է.Սերոբյանին տրված տարկետման իրավունքը դադարած չի եղել: Բողոքաբերի համոզմամբ Է.Սերոբյանին տրված տարկետման իրավունքի պայմաններում վերջինս ենթակա էր ընգրկվելու զորակոչման ենթակա անձանց շրջանակում, ուստի 2017 թվականի ամառային զորակոչին նրա չներկայանալը վկայում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու հիմնավոր կասկածի առկայության մասին:

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 75-83:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ըստ բողոք բերած անձի, սխալ է մեկնաբանել քրեական օրենքը և անընդունելի է համարել հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ դատախազի փաստարկները՝ այլևս չանդրադառնալով կալանավորման հիմքերի հարցին:

12. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն առ այն, որ Է.Սերոբյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման հիմնավոր կասկածը բացակայում է:

14. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

4) անձին իրավասու մարմնին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի*

հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն: (…)»:

15. Հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը *Վահրամ Գևորգյանի* գործով իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. *«(…) Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը (…):*

(…) [Յ]ուրաքանչյուր դեպքում [հանցանք կատարած լինելու կասկածը] պետք է լինի ողջամիտ:

(…) «[Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: (…) [Կ]ասկածը հիմնավոր կհամարվի (…) ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի փեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

(…) [Այսպիսով,] Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված»[1]:

[1] Տե՛ս *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը:

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» վերաբերյալ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, *Էդգար Եղիազարյանի* գործով ընդգծել է հետևյալ հանգամանքները.

«(…) -հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված, (…)»[1]:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) մեղադրյալ Է.Սերոբյանին տրվել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք **մինչև 2017 թվականի հունիսի 30-ը**[2]**,**

բ) 2017 թվականի ամառային զորակոչի ընթացքում զորակոչիկ Է.Սերոբյանը զինկոմիսարիատ չի ներկայացել, իսկ Է.Սերոբյանին զորակոչային հանձնաժողովին ներկայացնելու նպատակով զինկոմիսարիատի և ոստիկանության կողմից ձեռնարկված միջոցառումներն արդյունք չեն տվել[3],

գ) Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալ Է.Սերոբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը մերժելիս Է.Սերոբյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցավոր արարքի կատարման հիմնավոր կասկածի բացակայության մասին դատողությունը պատճառաբանել է բարձրագույն ուսումնական հաստատությունում վերջինիս ուսումնառության ավարտի ժամկետի փոփոխության հանգամանքով[4],

դ) Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Է.Սերոբյանին տրվել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք մինչև 2017 թվականի հունիսի 30-ը, եզրահանգել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման հիմնավոր կասկածը բացակայում է ոչ թե վերջինիս ուսումնառության ավարտի ժամկետի փոփոխության պատճառով, ինչպես նշել է Առաջին

[1] Տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

ատյանի դատարանը, այլ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ Է.Սերոբյանին տրված տարկետման իրավունքը դադարած չի եղել[1]:

17. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել Է.Սերոբյանի կողմից ՀՀ քրեական օրենսգքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության հանգամանքը:

Մասնավորապես, *«2017 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին»* ՀՀ նախագահի՝ 2017 թվականի մայիսի 15-ի հրամանագրի 1-ին մասի համաձայն՝ 2017 թվականի մայիս-հուլիս ամիսներին պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչին զորակոչման են ենթակա եղել արական սեռի այն քաղաքացիները, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2017 թվականի հունիսի 30-ը **ներառյալ**:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Է.Սերոբյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրված է եղել մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ուստի նրա՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի գործողության ժամկետը լրացել է նույն օրը՝ 2017 թվականի հունիսի 30-ին: Այսինքն՝ նշված օրը Է.Սերոբյանի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է: Հետևաբար ՀՀ նախագահի՝ 2017 թվականի մայիսի 15-ի հրամանագրի 1-ին մասի ուժով Է.Սերոբյանը ենթակա է եղել զորակոչման 2017 թվականի մայիս-հուլիս ամիսների պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչին:

Մեղադրյալ է.Սերոբյանի կողմից 2017 թվականի ամառային զորակոչին չներկայանալու պայմաններում վերոնշյալը բավարար է ողջամիտ ենթադրություն անելու, որ մեղադրյալ Է.Սերոբյանն առնչություն ունի իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությանը:

Թեև Վերաքննիչ դատարանն իրավաչափորեն նշել է, որ Առաջին ատյանի դատարանը Է.Սերոբյանի արարքում հիմնավոր կասկածի բացակայությունը սխալ է պատճառաբանել՝ տարկետման իրավունքի ավարտը պայմանավորելով մեղադրյալի ուսման ժամկետի փոփոխությամբ, սակայն, իր հերթին, գտնելով, որ բացակայում է վերջինիս կողմից ՀՀ

[1] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը, սխալ է մեկնաբանել Է.Սերոբյանի՝ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի գործողության ժամկետի ավարտման պահը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևությունն առ այն, որ Է.Սերոբյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման հիմնավոր կասկածը բացակայում է, հիմնավոր չէ:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը դատական ակտ կայացնելիս, իսկ Վերաքննիչ դատարանը, ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, պետք է քննարկման առարկա դարձնի նախաքննական մարմնի միջնորդության մեջ մատնանշված՝ մեղադրյալ Է.Սերոբյանի նկատմամբ կալանավորման հիմքերի առկայության հարցը և հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Էդգար Ռոբերտի Սերոբյանի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի

28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

51. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0182/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան՝ Տ.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2018 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշման դեմ Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի պաշտպան Տ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2011 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 57114711 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ Նվեր Անդրանիկի Նիկողոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 273-րդ հոդվածի 3-րդ մասով:

2. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2011 թվականի

դեկտեմբերի 27-ի դատավճռով Ն.Նիկողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, 273-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, 273-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հանցանքների համակցությամբ, ազատազրկման ձևով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ն.Նիկողոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ 2018 թվականի փետրվարի 13-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարան (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) բողոք է ներկայացրել Ն.Նիկողոսյանի պաշտպան Տ.Ղազարյանը: Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ պաշտպանի բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Ն.Նիկողոսյանի պաշտպան Տ.Ղազարյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ պաշտպանի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

4.1 Վճռաբեկ դատարանը 2018 թվականի հուլիսի 20-ին որոշում է կայացրել գործով վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) դիմելու մասին:

5. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ վճռաբեկ վարույթը վերսկսվել է:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2011 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռում արձանագրել է. *«(…) [Ա]մբաստանյալ Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի կողմից կատարած հանցավոր արարքները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 273 հոդվածի 3-րդ մասով և 268 հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին, ամբաստանյալի մեղավորությունը հանցանք կատարելու մեջ ապացուցված է, Նվեր Անդրանիկի Նիկողոսյանը ենթակա է պատժի և պատասխանատվության կատարած հանցանքների համար (…)»*[1]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 187:

7. 2018 թվականի փետրվարի 13-ին ներկայացված վերաքննիչ բողոքում պաշտպան Տ.Ղազարյանը խնդրել է հիմնարար խախտման հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը և կայացնել արդարացման դատական ակտ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 3-րդ մասով ճանաչելով և հռչակելով Ն.Նիկողոսյանի անմեղությունը: Վերաքննիչ բողոքը պաշտպանը, ի թիվս այլոց, հիմնավորել է նրանով, որ. *«(…) Սպորադաս դատարանի թույլ տված նյութական իրավունքի հիմնարար խախտումը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի սխալ կիրառմամբ, մասնավորապես, Նվեր Անդրանիկի Նիկողոսյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել այնպիսի արարքի կատարման համար, որը ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով հանցագործություն չէ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը հանգեցրել է «չկա հանցագործութուն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով (…) կանոնի խախտման (…)»*[1]:

8. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ. *«(…) Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով դատավճիռը [Ա]ռաջին ատյանի դատարանը կայացրել է 2011 թվականի դեկտեմբերի 27-ին և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի՝ վերաքննիչ բողոք բերվում են՝ «(…) [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 376.1 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մնալու պահից վեցամսյա ժամկետում», (…) տվյալ դեպքում չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված ժամկետները, պաշտպան Տիգրան Ղազարյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը ժամկետանց է (…)»*[2]:

9. Վճռաբեկ դատարանը վարույթը կասեցնելու և գործով կիրառման ենթակա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին իր՝ 2018 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Ա]յն պայմաններում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմնարար խախտման դեպքում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 12:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 28-29:

ժամկետի սահմանափակման, նույն հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոք բերելու համար վեցամսյա ժամկետի սահմանումը վկրանգում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատապարտվածի կողմից դատավճռի բողոքարկման հիմնարար իրավունքները (…)»[1]:

10. Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն այնքանով, որքանով ժամկետային սահմանափակում է նախատեսում անձի իրավական վիճակի բարելավմանն ուղղված առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր[2]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը հիմնավորված, պատճառաբանված և օրինական չէ:

Ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն հիմնարար խախտման հիմքով վերաքննիչ բողոք բերելու օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի՝ նույն հիմքով վճռաբեկ բողոք բերելը որևէ ժամկետով սահմանափակված չէ, եթե դա ուղղված է անձի վիճակի բարելավմանը: Բողոքաբերի կարծիքով նման պայմաններում առաջանում է անհավասար իրավիճակ, քանի որ այն անձինք, ովքեր նախկինում բողոքարկել են իրենց վերաբերյալ կայացված դատական ակտը վերաքննիչ դատարան, կարող են առանց որևէ ժամանակային սահմանափակման բողոքարկել դատական ակտը Վճռաբեկ դատարան, իսկ այն անձինք, ովքեր

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 76-77:
[2] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշումը:

վերաքննիչ բողոք չեն բերել, իրենց նկատմամբ կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս անց զրկվում են դատական ակտի վերանայման իրավունքից, որն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներից բխու՞մ է արդյոք Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ պաշտպանի կողմից ներկայացված բողոքը ժամկետանց է, և որ վերջինիս կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝ (…) Առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոք բերվում են՝ (…) սույն օրենսգրքի 376[1] հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:*

14.1 ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշմամբ խնդրո առարկա դրույթի սահմանադրականության առնչությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Օ]րինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար նախատեսված վեցամսյա ժամկետն ընդհանուր առումով ուղղված է դատական ակտերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որոշակիության և անխախտելիության սկզբունքի ապահովմանը:*

Մյուս կողմից՝ «(…) իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են

իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Քրեական գործի վարույթը նորոգելու հնարավորությունն ինքնին համատեղելի է [«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական] [կ]ոնվենցիայի հետ, ներառյալ՝ 6-րդ հոդվածի երաշխիքները: 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը հստակորեն թույլատրում է նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը»:

Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում վերահաստատել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ էական կամ անհաղթահարելի բնույթի հանգամանքներով պայմանավորված օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերացման գործընթացը կարող է համապատասխանել իրավական որոշակիության սկզբունքին, երբ դա անհրաժեշտ է դատական սխալը շտկելու համար (Pravednaya v. Russia, 18 նոյեմբերի 2004):

(...)

***Նյութական կամ դատավարական հիմնարար խախտման արդյունքում կայացված և արդարադատության բուն էությունը խաթարող** արդեն իսկ ուժի մեջ մտած առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման հնարավորությունը վեցամսյա ժամկետով սահմանափակելը դատական պաշտպանության իրավունքը դարձնում է անարդյունավետ՝ միաժամանակ զրկելով անձին արդար դատաքննության իրավունքի իրականացման հնարավորությունից: Անկախ սահմանված ժամկետում համապատասխան դատական ակտը չբողոքարկելու պատճառից՝ իրավական պետությունում չպետք է հանդուրժվի արդարադատության բուն էությունը խաթարող՝ դատապարտյալի հիմնարար իրավունքները խախտող դատական ակտի գոյությունը:*

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի տարբերակված մոտեցումը, կապված արդեն իսկ ուժի մեջ մտած դատական ակտերի՝ վերաքննության կամ վճռաբեկության կարգով վերանայման հնարավորության հետ, արդարացված չէ: Այսպես՝ [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ՝ «Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված դեպքերում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վատթարացման հիմքով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը նույն հիմքով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար չի նախատեսել որևէ ժամկետային սահմանափակում, վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վեցամսյա ժամկետի նախատեսումը չի հանդիսանում դատական պաշտպանության և

արդար դատաքննության հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգ:

Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքի ներկայացման պահանջները կարող են լինել ավելի խիստ, քան սովորաբար դատական ատյաններ ներկայացվող դիմումների պահանջները (Levages Prestations Services v. France, 23 հոկտեմբերի 1996):

Վճռաբեկ բողոքների թույլատրելիության շեմը չհաղթահարած, սակայն արդարադատության բուն էությունը խաթարելու վերաբերյալ ենթադրյալ փաստեր պարունակող բողոքների համար ժամկետային սահմանափակումներ սահմանելը պատշաճ հնարավորություն չի տալիս նաև հենց երկրորդ՝ «փաստի ատյանում», ինչպիսին է վերաքննիչ դատարանը, վերանայելու առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը: Հետևապես, օրենսդրի կողմից որդեգրված տարբերակումը վերաքննիչ և վճռաբեկ բողոքների միջև դուրս է դատական պաշտպանության արդյունավետ երաշխավորման համակարգային տրամաբանության շրջանակներից և համարժեք չէ դատական ակտերի կայունությունը երաշխավորելու նպատակի հարադրությամբ:

***Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարադատության բուն էությունը խաթարող և նյութական կամ դատավարական հիմնարար խախտումների արդյունքում անձանց համար անբարենպաստ հետևանքներ առաջացնող առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկելու հնարավորության սահմանափակումը՝ դրանց ուժի մեջ մնալու պահից՝ վեցամսյա ժամկետով, համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որոշակիության և անփոփոխելիության սկզբունքի ապահովմանը, ինչի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվում են անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, ինչպես նաև դատապարտվածի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունքը (…)»*[1]**:**

15. Ամփոփելով Սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն պայմաններում, երբ անձի վիճակի բարելավմանն ուղղված հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, նույն հիմքով Վերաքննիչ դատարան բողոք բերելու համար վեցամսյա ժամկետի սահմանումը վտանգում է ՀՀ Սահմա-

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման 4.2-4.3-րդ կետերը:

նադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատավճռի բողոքարկման հիմնարար իրավունքները: Դեռ ավելին՝ օրենսդրի կողմից, ի տարբերություն վճռաբեկ բողոքարկման, վերաքննիչ բողոքի ներկայացման ավելի լայն սահմանափակումներ նախատեսելը չի բխում նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի տրամաբանությունից:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Նիկողոսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը Վերաքննիչ դատարան չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: 2018 թվականի փետրվարի 13-ին պաշտպան Տ.Ղազարյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը բողոքը թողել է առանց քննության՝ բողոքարկման վեցամսյա ժամկետը բաց թողած լինելու հիմքով[1]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և ներկայացված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ պաշտպանի կողմից ներկայացված բողոքը ժամկետանց է, և որ վերջինիս կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետները, չի բխում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներից:

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

[1] Տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Նվեր Անդրանիկի Նիկողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

52. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0743/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

մասնակցությամբ՝
ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
դատախազներ՝ Կ.ԲԻՇԱՐՅԱՆԻ
Դ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ

պաշտպաններ՝ Հ.ԱԼՈՒՄՅԱՆԻ
Ռ.ՍԱՀԱԿՅԱՆԻ
Ա.ՕՐԲԵԼՅԱՆԻ
Հ.ԽՈՒԴՈՅԱՆԻ

մեղադրյալ՝ Ռ.ՔՈՉԱՐՅԱՆԻ
քննիչ՝ Հ.ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

2018 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնփակ դատական նիստում, քննության առնելով Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Տ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի մարտի 24-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և միացվել թիվ 62202608 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 62203909 քրեական գործը և միացվել թիվ 62202608 քրեական գործին:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և միացվել թիվ 62202608 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Միաժամանակ մերժվել է կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանների միջնորդությունը:

4. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խուդոյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշումը բեկանել է, վերացրել է մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը, և նրան ազատ արձակել:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը,

մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանը, Ռ.Սահակյանը, Ա.Օրբելյանը և Հ.Խուդոյանը, ինչպես նաև տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումներով ՀՀ գլխավոր դատախազի և պաշտպանների վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ, իսկ տուժողների իրավահաջորդների ներկայացուցչի բողոքը թողնվել է առանց քննության:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացվել մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խուդոյանի և դատախազ Ա.Մնացականյանի կողմից:

Պաշտպանները խնդրել են ՀՀ գլխավոր դատախազի բերած վճռաբեկ բողոքը մերժել, իսկ դատախազը խնդրել է մերժել մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպանների վճռաբեկ բողոքը:

<u>Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Նախաքննության մարմնի կողմից Ռ.Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. *«[Ռոբերտ Քոչարյանը], 2008 թվականին հանդիսանալով Հայաստանի Հանրապետության Նախագահը, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, տապալել է սահմանադրական կարգը, որն արտահայտվել է հետևյալում. 2008 թվականի փետրվարի 19-ին անցկացվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունը, որի նախապատրաստումը և անցկացումը մեծ դժգոհություններ են առաջացրել ՀՀ բազմաթիվ քաղաքացիների մոտ:*

Տարբեր հասարակական կազմակերպություններ, իրավապաշտպան կառույցներ և քաղաքացիներ ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումները վերագրել են Հայաստանի Հանրապետության այդ ժամանակ գործող Նախագահ Ռոբերտ Քոչարյանի և նույն ժամանակ գործող վարչապետ, Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի կողմնակիցներին: Ըստ հասարակության լայն շերտերի՝ ընտրությունների ընթացքում տեղի ունեցած ապօրինությունները խախտել են Հայաստանի Հանրապետության այդ ժամանակ գործող Սահմանադրության 4-րդ հոդվածում ամրագրված՝ ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները, որի արդյունքում ժողովուրդը զրկվել է ազատ ընտրությունների միջոցով իր իշխանությունն իրականացնելու հնարավորությունից, ինչն իր հերթին առաջացրել է հանրության մեծ մասի զայրույթը և, 2008 թվականի փետրվարի 20-ից սկսած, Երևանի Ազատության հրապարակում կազմակերպվել են Նախագահի մյուս թեկնածուներին սատարող բազմահազար քաղաքացիների զանգվածային հրապարակային միջոցառումներ, երթեր, շուրջօրյա հանրահավաքներ:

Բազմահազար քաղաքացիներ, իրացնելով իրենց սահմանադրական իրավունքները, Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությամբ հաստատված սահմանադրական կարգի համապատասխան, ժողովրդավարական և իրավական պետության, իշխանությունը ժողովրդին պատկանելու սահմանադրական բարձրագույն երաշխիքներից օգտվելով, անցկացրել են խաղաղ, առանց զենքի շուրջօրյա հավաքներ, պահանջել են անվավեր ճանաչել կեղծված ընտրությունները, չեղարկել ընտրական տեղամասերից ստացվող արդյունքները: Միաժամանակ, ՀՀ գործող իշխանություններից ակնկալել են, որ կպահպանվի սահմանադրական կարգը, այն է՝ կապահովվի մարդու և քաղաքացու իրավունքների իրացման հնարավորությունը և պետությունը կգործի Սահմանադրությանը համապատասխան:

Հասարակության լայն շրջանակներում առաջացող դժգոհությունը և խաղաղ հավաքներին մարդկանց նոր զանգվածների ներգրավումը լուրջ անհանգստություն է պատճառել գործող իշխանություններին: Այն բանից հետո, երբ հավաքների թվացյալ ոչ իրավաչափ լինելու մասին ոստիկանության հայտարարություններով և կոչերով հնարավոր չի եղել խոչընդոտել շուրջօրյա խաղաղ հավաքների անցկացումը՝ ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը իշխանությունն իր մտերիմ Սերժ Սարգսյանին ցանկացած գնով հանձնելուց, դրանով իսկ իր և իր մտերիմների անվտանգությունն ապահովագրելու դրդումներով, ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, Երևանի կայազորի պետ Յուրի Խաչատուրովի, ՀՀ ՊՆ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի և մյուսների հետ որոշել են իրականացնել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն ուղղված գործողություններ:

Սահմանադրական կարգի բռնությամբ տապալմանն ուղղված գործողություններն արտահայտվել են 2008 թվականին գործող Սահմանադրության 1-ին հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է, 2-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, 3-րդ հոդվածով նախատեսված՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, 5-րդ հոդվածով նախատեսված՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով և 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Սահմանադրու-

թյունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն, նորմերը փաստացի վերացնելով, այդ ժամանակահատվածում իրավական համակարգում դրանց գործողության դադարեցմամբ: Այսպես.

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, Երևանի կայազորի պետ Յուրի Խաչատուրովի, ՀՀ ՊՆ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի և մյուսների հետ խախտել է 2008 թվականին գործող ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածն այն մասին, որ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո», ինչպես նաև Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետն այն մասին, որ միայն Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում կարող է ՀՀ Նախագահը հայտարարել ռազմական դրություն, և միայն ռազմական դրության հայտարարումից հետո կարող է որոշում ընդունվել զինված ուժերի օգտագործման մասին:

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը և մյուս պաշտոնատար անձինք ՀՀ Սահմանադրության խախտումամբ Հայաստանի Հանրապետությունում փաստացի հաստատել են ռազմական դրություն, զինված ուժերն օգտագործել են քաղաքական հարցերում, խաղաղ հանրահավաքների մասնակից քաղաքացիների դեմ: Մասնավորապես.

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն, հանդիսանալով զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը և համակարգելով պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, 2008 թվականի փետրվարի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ խորհրդակցություն անցկացնելուց հետո առաջադրել է իշխանությունը ցանկացած գնով, այդ թվում՝ ՀՀ Զինված ուժերի օգտագործմամբ պահպանելուն ուղղված խնդիրներ, որոնց կատարման վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը նույն օրը ստորագրել է հույժ գաղտնի թիվ 0038 ակնհայտ ապօրինի հրամանը: Հրամանում խաղաղ ցուցարարները բնորոշվել են որպես «ՀՀ Նախագահական ընտրությունների արդյունքները չընդունող, իրավիճակն ապակայունացնող քաղաքական ուժեր», և «երկրի բնականոն զարգացումը» ապահովելու նպատակով ՀՀ զինված ուժերի ողջ անձնակազմը փետրվարի 23-ին՝ ժամը 18.00-ից, տեղափոխվել է զորանոցային վիճակի: ՊՆ

կենտրոնական ապարատի վարչություններում, առանձին բաժիններում ստեղծվել են սպայական խմբեր, որոնց զինել են տաբելային զենքերով: Երևանի կայազորի պետ, պաշտպանության նախարարի տեղակալ Յուրի Խաչատուրովի հետագա գործունեության ապահովման նպատակով ստեղծվել է կայազորի պետի վարչակազմ:

Հրամանով ՀՀ Զինված ուժերի կազմից ստեղծվել են բարձր շարժունակությամբ, բարդ իրավիճակներում արդյունավետ գործելու ունակ հավաքական ստորաբաժանումներ, որոնց զինել են հրաձգային զենքերով: Հանձնարարվել է այդ ստորաբաժանումները համալրել առավել պատրաստված, հոգեբանորեն կայուն ծառայողներով:

Դրանից հետո, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2008 թվականի փետրվարի 24-ին ամփոփել է ընտրության արդյունքները և ընդունել իր թիվ 24-Ա որոշումը, համաձայն որի՝ Հանրապետության Նախագահ է ընտրվել Սերժ Սարգսյանը:

Երևան քաղաքում բազմահազարանոց խաղաղ հանրահավաքները շարունակվել են, որոնց մասնակիցները պահանջել են քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարել:

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանձնարարությամբ և ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի 2008 թվականի փետրվարի 23-ի թիվ 0038 հրամանի համաձայն՝ Երևան քաղաքում փաստացի սահմանված ռազմական դրության և զինված ուժերի հակասահմանադրական օգտագործման շրջանակներում, այդ հրամանով ձևավորված զինվորական կառավարման նոր կառույցի կազմակերպմամբ իրականացվել է բանակային ստորաբաժանումների տեղաշարժ՝ Զինված ուժերի մի շարք ստորաբաժանումներ զինված և զրահատեխնիկայով համալրված դուրս են բերվել տեղակայման հիմնական վայրերից և տեղափոխվել Երևանում կամ քաղաքամերձ հատվածներում տեղակայված զորամասեր:

Բազմահազար քաղաքացիների խաղաղ, առանց զենքի հավաքներին զուգահեռ Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանը և Լևոն Տեր- Պետրոսյանը, համապատասխանաբար՝ 2008 թվականի փետրվարի 27-ին և 29-ին դիմումներ են ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը և Հանրապետության Նախագահի 2008 թվականի փետրվարի 19-ին անցկացված ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի որոշմամբ 2008 թվականի մարտի 1-ի գիշերը՝ լուսաբացից առաջ, Երևան քաղաքի Ազատության հրապարակում իրականացվել է «տեղանքի հետազոտում» օպերատիվ հետախուզական միջոցառում, որի ընթացքում

բազմահազար խաղաղ ցուցարարներ ոստիկանական ուժերի միջոցով հեռացվել են հրապարակից և ստիպված հանգրվանել Մյասնիկյանի արձանի հարակից տարածքում:

Խաղաղ ցուցարարների թիվն ավելի է աճել և արդեն ցերեկը, ՀՀ Նախագահ և Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Ռոբերտ Քոչարյանի գիտությամբ և ի կատարումն 2008 թվականի փետրվարի 23-ին առաջադրված խնդիրների, ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումներն իրենց տեխնիկայով, ինքնաձիգներով զինված տեղակայվել են Հանրապետության հրապարակում, Տիգրան Մեծ, Մելիք-Ադամյան և այլ փողոցներում:

Փաստացի հաստատված ռազմական դրության, Զինված ուժերի ապօրինի գործադրման համար առերևույթ իրավական հիմք ստեղծելու նպատակով 2008 թվականի մարտի 1-ին Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, համաձայն ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի՝ պարտավոր լինելով հրապարակել ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին չհակասող հրամանագրեր, ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի խախտմամբ ընդունել է «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՆՀ-35-Ն հրամանագիրը: Նշված հրամանագրով Երևան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովումը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից բացի, վերապահվել է նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ արտակարգ դրության ռեժիմն ապահովելու համար ապօրինի կերպով օգտագործվել են ՀՀ Զինված ուժերը:

Նույն օրը՝ երեկոյան, Զինված ուժերը և ոստիկանության ստորաբաժանումները Երևանի կենտրոնական փողոցներում զենքի, պայթուցիկ նյութերի և հատուկ միջոցների գործադրմամբ իրականացրել են հատուկ միջոցառումներ՝ խաղաղ հավաքը ցրելու, անզեն ցուցարարներին փողոցներից հեռացնելու, այդօրինակ միջոցառումները ժամանակավոր արգելելու ուղղությամբ:

Հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և հատուկ միջոցների գործադրման հետևանքով հարյուրավոր մարդիկ ստացել են ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, պետությանը, Երևան համայնքին և քաղաքացիներին պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս: Տեղի ունեցած գործողությունների և իրադարձությունների ընթացքում զոհվել են 8 քաղաքացիական անձինք և ոստիկանության զորքերի 2 ծառայող: Խաղաղ հավաքը ցրվել է: Էական վնաս է հասցվել Հայաստանի Հանրապետության միջազգային վարկին:

Ապօրինի կերպով ՀՀ Զինված ուժերն օգտագործելով Երևան քաղաքում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին՝ ՀՀ ՊՆ Զինված ուժերի

գլխավոր շտաբի պետ Մեյրան Օհանյանը, վկայակոչելով Ռոբերտ Քոչարյանի՝ արտակարգ դրություն հայտարարելու մասին ապօրինի հրամանագիրը, 2008 թվականի մարտի 2-ին հանրային հեռուստատեսության ուղիղ հեռարձակմամբ դիմել է ՀՀ քաղաքացիներին, ըստ էության, բռնություն կիրառելու սպառնալիք պարունակող կոչով, նախազգուշացրել, որ արտակարգ դրությամբ արգելված միջոցառումների կազմակերպմանը կամ մասնակցությանը ներգրավվելու ցանկացած փորձ ՀՀ Զինված ուժերի կողմից արժանանալու է համարժեք և խիստ հակազդեցության՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, հորդորել է զերծ մնալ Երևան քաղաքում, թեկուզև փոքր խմբերով հավաքվելու փորձերից: Մեյրան Օհանյանը, հանդես գալով ՀՀ Զինված ուժերի անունից, ստանձնել է «օրինազանցների» նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու Սահմանադրությամբ և օրենքներով չնախատեսված պարտականություն:

Դրանից հետո, Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը վիճարկելու, այն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում նշանակվել է 2008 թվականի մարտի 8-ին: Մինչ այդ, ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը, անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, հանձնարարել է ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարին՝ տարբեր եղանակներով և միջոցներով, այդ թվում՝ դատարանի անդամների վրա ճնշում գործադրելով՝ ներազդել դատարանի անդամների վրա, որպեսզի վերջիններս քվեարկեն Կենտրոնական հանձնաժողովի հիշյալ որոշման վավերական և օրինական ճանաչվելու օգտին: Ռոբերտ Քոչարյանի անմիջական ցուցումներով և հանձնարարությամբ Սահմանադրական դատարանի անդամների վրա գործադրված ճնշումների ազդեցության արդյունքում, չնայած ընտրախախտումների առկայության փաստին, ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մարտի 8-ի որոշմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը ճանաչվել է վավերական և օրինական (...)»[1]:

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Դատարանը գտնում է, որ առկա են Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու օրենսդրական հիմքերն ու պայմանները:*

Մասնավորապես, Քննիչի կողմից ներկայացված և սույն որոշման 2-3-րդ կետերում շարադրված փաստական տվյալներն ու տեղեկությունները, մասնավորապես՝

- ՀՀ պաշտպանության նախարարի 23.02.2008թ թիվ 0032 հույժ գաղտնի հրամանը, որը վերնագրված էր ՀՀ գերագույն գլխավոր հրամանատարի

[1] Տես նյութեր, հատոր 1-ին, թերթեր 30-34:

կողմից առաջադրված խնդիրների կատարման վերաբերյալ,

- 2008թ. փետրվարի 29-ին հեռուստատեսային ելույթի տեսագրությունը պարունակող լազերային սկավառակի զննության արձանագրությունը, որի համաձայն՝ Ռոբերտ Քոչարյանն իր ելույթում հայտնել է, որ իշխանությունը երկու տարբերակ ունի. առաջինը՝ համբերատար սպասել թափերական բեմադրումը թափերական հրապարակում ինքն իրենով մարվելուն: Երկրորդ տարբերակը՝ ոստիկանական գործողություններ կիրառելով՝ մաքրել թափերական հրապարակը.

- 2008թ. մարտի 1-ին կատարված տեսագրությունները պարունակող լազերային սկավառակի զննության արձանագրությունը այն մասին, որ 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում Երևան քաղաք և դրա հարակից մարույցներ են բերվել ՀՀ ՊՆ Զինված ուժերի սպորտաբաժանումների անձնակազմ, տրանսպորտային միջոցներ ու զրահատեխնիկա,

- 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձություններն ուսումնասիրող փաստահավաք խմբի անդամներին Միքայել Հարությունյանի տված բացատրության տեսագրությունը պարունակող լազերային սկավառակի զննության արձանագրությունը, որի համաձայն՝ Միքայել Հարությունյանը չի հերքել փաստացի ռազմական դրություն հաստատելու և դրանով պայմանավորված՝ Զինված ուժերի սպորտաբաժանումները Երևան քաղաքում տեղակայելու հանգամանքները.

- 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի ասուլիսը պարունակող լազերային սկավառակի զննության արձանագրությունը, որի համաձայն՝ վերջինս նույն օրը՝ ժամը մոտ 19-ի սահմաններում հայտարարել է ՀՀ Նախագահի կողմից արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրի և դրա փաստաթղթերի պատրաստ լինելու մասին.

- 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը պարունակող տեսագրության զննության արձանագրությունը, որի համաձայն՝ նա նույն օրը՝ ժամը 22-ի սահմաններում հրապարակել է Երևանում արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագիրը.

- ՀՀ ազգային արխիվից ստացված «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի 2008 թվականի մարտի 1-ի հրամանագիրը, որով արտակարգ դրության ռեժիմի ապահովումը վերապահվել է նաև ՀՀ պաշտպանության նախարարությանը.

- 2008թ. մարտի 2-ին ուղիղ հեռարձակմամբ ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետ Սեյրան Օհանյանի ժողովրդին դիմելու ուղերձը պարունակող տեսագրության զննության արձանագրությամբ, որի համաձայն՝ Սեյրան Օհանյանն ուղերձով դիմել է ժողովրդին և նախազգուշացրել, որ արտակարգ դրությամբ արգելված միջոցառումների կազմակերպման կամ մասնակցության ցանկացած փորձ ՀՀ զինված ուժերի կողմից արժանանալու է համարժեք և խիստ հակազդեցու-

թյան, ամենափոքր կասկածների դեպքում ՀՀ զինված ուժերն օրինազանցների նկատմամբ ձեռնարկելու են Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված միջոցներ.

- որպես վկաներ հարցաքննված Գրիգորի Խաչատուրովի, Արարատ Մահտեսյանի, Արթուր Անդրեասյանի, Մասիս Շիրոյանի, Վարդան Հարությունյանի, Արշակ Կարապետյանի, Վալերի Պողոսյանի և Վիկտոր Պողոսյանի ցուցմունքները:

Դատարանի համար, դատավարության փվյալ փուլում, ողջամտորեն բավարար են հիմնավորված համարելու.

ա) Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի առնչությունը ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած), որը դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված է միայն ազատազրկման ձևով պատիժ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով և որ

բ) մեղսագրվող հանցագործության բնույթի, դրա վտանգավորության աստիճանի, սպառնացող հնարավոր պատժի խստության, գործի օպերատիվ քննչական իրավիճակից բխող փվյալների համակցությունը մեծացնում է հավանականությունն առ այն, որ մեղադրյալ Ռ.Քոչարյանը մնալով ազատության մեջ՝ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, այդ թվում նաև ՀՀ պաշտպանության նախկին նախարար Մ.Հարությունյանի վրա՝ կապված 23.02.2008 թվականի թիվ 0038 հրամանի արձակման հանգամանքների կապակցությամբ, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով:

Դատարանը նման հետևության հանգելիս հաշվի է առնում ինչպես մեղադրյալ Ռ.Քոչարյանի անձը, նախկինում զբաղեցրած պաշտոնը, կապերը, այնպես էլ այն հանգամանքը, որ անհրաժեշտ է լրացուցիչ հարցաքննել Ռոբերտ Քոչարյանին, ինչպես նաև նրա հետ առնչություն ունեցած անձանց, անհրաժեշտության դեպքում կատարել առերեսումներ, փաստաթղթեր և քրեական գործի համար նշանակություն ունեցող այլ նյութեր հայտնաբերելու նպատակով կատարել խուզարկություններ, առգրավումներ, քննչական ու դատավարական այլ գործողություններ: Քրեական գործի նախաքննության փվյալ՝ Ռոբերտ Քոչարյանի մասնակցության վերաբերյալ ապացույցների հավաքման և սրուգման սկզբնական փուլում հնարավոր է վերջինս, օգտվելով իր նախկին զբաղեցրած պաշտոնից ու կապերից, գործողություններ կատարի հանցագործությունը բացահայտող բովանդակությամբ ցուցմունքներ տալուն հակված անձանց դեմ կամ քննությանը խոչընդոտի գործի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր, իրեր և այլ նյութեր թաքցնելու,

կեղծելու եղանակով: Քանի դեռ հանցագործությունն ամբողջությամբ բացահայտված չէ, վերը նկարագրված գործողությունների վտանգն առկա է, առավել ևս, որ նախաքննության ընթացքը շարունակվում է, ձեռնարկվում են քննչական և օպերատիվ-որոնողական միջոցառումները սահմանադրական կարգի տապալմանը մասնակցություն ունեցած պաշտոնատար այլ անձանց, 2008թ. մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձություններին ներգրավված ՀՀ զինված ուժերի, ինչպես նաև զորքերի այլ ստորաբաժանումների ծառայողներին, նրանց ամրակցված զենքերը պարզելու, վերջիններիս դերակատարությունը, այդ իրադարձությունների ընթացքում 10 անձանց մահվան և բազմաթիվ քաղաքացիների վնասվածքներ ստանալու հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է պաշտպան Ա.Օրբելյանի այն դիտարկմանը, որ Ռոբերտ (...) [Քոչարյանը] օժտված է անձեռնմխելիությամբ և նա իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար, ապա Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքի պայմաններում, երբ Ռոբերտ Քոչարյանին է վերագրվում սահմանադրական կարգը տապալելը, որն արտահայտվել է նրա՝ որպես ՀՀ նախագահի կողմից 23.02.2008թ-ին ՀՀ պաշտպանության նախարարին քաղաքական գործընթացներում զինված ուժերն օգտագործելու հրաման տալով, ինչպես նաև արտակարգ դրության ռեժիմում դրա ապահովումը ՀՀ պաշտպանության նախարարությանը վերապահելով, չի բխել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորություններից, ուստի առկա պայմաններում բացակայում է անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքը:

Դատարանը (...) գտնում է, որ գրավը փոխել դեպքում չի կարող գործուն երաշխիք հանդիսանալ մեղադրյալ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման հիմքերի չեզոքացման համար»[1]:

8. Վերաքննիչ դատարանն արձանագրել է հետևյալը. *«(...) Հայաստանի Հանրապետության Նախագահի անձեռնմխելիության սահմանադրաիրավական սկզբունքն ինքնանպատակ չէ, այլ դրանով բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձի համար նախատեսվում է այնպիսի կարգավիճակ, որը նրան հնարավորություն կտա առանց արգելքների և խոչընդոտների իրականացնելու Սահմանադրությամբ իր վրա դրված գործառույթներն ու լիազորությունները: Այլ կերպ՝ Նախագահը, որպես բարձրագույն պաշտոնատար անձ, օժտված է որոշակի պաշտպանվածությամբ: Նախագահական անձեռնմխելիությունը նշանակում է պետության կողմից վերապահված իրավունք՝ ենթակա չլինելու որոշ ընդհանուր նորմերի, այն է՝ Նախագահը չի կարող*

[1] Տես նյութեր, հատոր 1-ին, թերթեր 201-214:

ձերբակալվել, ենթարկվել դատական պատասխանատվության, որպես վկա հարկադրաբար հրավիրվել դատարան, ենթարկվել վարչական պատասխանատվության և այլն:

Վերոգրյալից հետևում է, որ Նախագահն անձեռնմխելիության իրավունքից օգտվում է ինչպես պաշտոնավարման ժամանակ, այնպես էլ պաշտոնավարումից հետո, այսինքն՝ անձեռնմխելիության իրավունքից օգտվում են նաև նախկին՝ պաշտոնաթող այն նախագահները, որոնք ենթադրյալ արարքները կատարել են պաշտոնավարման ընթացքում:

Նման եզրակացությունը պայմանավորված է նրանով, որ Սահմանադրության 56.1-րդ հոդվածով ուղղակի ամրագրված է Նախագահին լիազորությունների ժամկետում պատասխանատվության ենթարկելու, հետևաբար՝ և անձեռնմխելիությունից զրկելու անհնարինությունը՝ ինչպես իր կարգավիճակից բխող, այնպես էլ կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար: Նախագահի կարգավիճակ ասելով պետք է հասկանալ որպես բարձրագույն պաշտոնատար անձ, պետության գլուխ, որի իրավասությունը, այսինքն՝ իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, որոնց իրականացման համար ստեղծվում է Նախագահի ինստիտուտը, իսկ կարգավիճակից բխող գործողությունները Սահմանադրությամբ և մյուս օրենքներով Նախագահին վերապահված լիազորությունների իրականացումն են:

Հարկ է նշել, որ պաշտոնավարող Նախագահին անձեռնմխելիությունից զրկել հնարավոր է միայն պաշտոնավարումից հետո, ընդ որում՝ միայն պաշտոնանկ անելու միջոցով:

Ինչ վերաբերում է պաշտոնավարումից հետո Նախագահի անձեռնմխելիության հարցին, ապա Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Սահմանադրությամբ հստակ սահմանված է, որ կարգավիճակից չբխող գործողությունների համար Նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել պաշտոնավարման ավարտից հետո: Այսինքն՝ կարգավիճակից չբխող գործողությունների համար Նախագահի անձեռնմխելիության երաշխիքը տարածվում է միայն նրա պաշտոնավարման ժամկետի վրա:

Վերը նշված կարգավորումը վկայում է այն մասին, որ ընդհանուր կանոնն այն է, որ Նախագահը օգտվում է անձեռնմխելիությունից: Սակայն Վերաքննիչ դատարանի գնահատմամբ դա չի նշանակում, որ Նախագահն ունի բացարձակ անձեռնմխելիություն և նույն փաստաթուղթը ընդհանուր կանոնից նախատեսում է բացառություն:

2008 թվականի դրությամբ գործող Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար: Նշվածից հետևում է, որ 56.1-րդ հոդվածն ընդհանրապես սահմանում է Նախագահի անձեռնմխելիության երաշխիքը, որից Սահմանադրության

57-րդ հոդվածով սահմանված դեպքերում համապատասխան ընթացակարգով Նախագահը կարող է զրկվել: Այսինքն՝ Նախագահն իր պաշտոնավարման ընթացքում չի կարող ենթարկվել քրեական հետապնդման և պատասխանատվության, քանի դեռ պաշտոնանկ չի արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցանքի համար, անկախ դրա՝ Նախագահի կարգավիճակից բխելու կամ չբխելու հանգամանքից:

*Հարկ է նկատել, որ Սահմանադրության մեջ օգտագործվում է ոչ թե անձեռնմխելիությունից զրկել, այլ՝ պաշտոնանկ անել եզրույթը: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ **պաշտոնանկ անելը դա ընդհանուր կանոններից դուրբերվող պատասխանատվության ուրույն ձև է, որը հնարավորություն է տալիս Նախագահին զրկել անձեռնմխելիությունից**, ինչն իր հերթին իրավական հնարավորություն է տալիս Նախագահի նկատմամբ ընդհանուր կարգով իրականացնել քրեական հետապնդում:*

*Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, **իր կարգավիճակից բխող գործողությունների համար պաշտոնազարման ավարտից հետո Նախագահի անձեռնմխելիության իրավունքը պահպանվում է, քանի դեռ վերջինը սահմանված կարգով չի զրկվել այդ իրավունքից:** Հետևաբար, նման դեպքում պաշտոնազարման ժամկետից հետո Նախագահի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար **անհրաժեշտ պարտադիր պայման է նրան անձեռնմխելիությունից զրկելը: Հակառակ մոտեցման դեպքում, եթե պայմանականորեն ընդունենք, որ առանց անձեռնմխելիության զրկման Նախագահին հնարավոր է ենթարկել քրեական պատասխանատվության, ապա այդ դեպքում որն է այդ իրավունքի սահմանման իմաստը, իսկ նման պայմաններում չի գործի Նախագահի անձեռնմխելիության սահմանադրական նորմը և Նախագահը չի օգտվի այդ իրավունքից: Հետևաբար՝ նման մեկնաբանման պայմաններում ընդհանրապես անիմաստ է դառնում անձեռնմխելիության ինստիտուտի նախատեսումը:***

*(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործող Նախագահին Սահմանադրությամբ պաշտոնանկ անելու համար առկա է հատուկ ընթացակարգ, որի պահպանման դեպքում միայն հնարավոր է Նախագահի նկատմամբ իրականացնել քրեական հետապնդում, ընդ որում՝ հաշվի առնելով, որ իր կարգավիճակից բխող գործողությունների համար քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունը Նախագահի վրա տարածվում է նաև պաշտոնազարման ավարտից հետո, **ուստի նշված ընթացակարգը պետք է կիրառվի նաև Նախագահի պաշտոնազարման ավարտից հետո:** Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, եթե Նախագահին մեղսագրվում է այնպիսի ենթադրյալ արարք, որն իր պաշտոնազարման ընթացքում բացահայտվելու դեպքում նրա նկատմամբ քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն նրան պաշտոնանկ անելուց, այսինքն՝ անձեռնմխելիությունից զրկելուց հետո, ապա այդ*

*ենթադրյալ արարքը պաշտոնավարումից հետո բացահայտվելու դեպքում նույնպես պարտադիր է վերջինին անձեռնմխելիությունից զրկելը: **Թեև այս դեպքում Նախագահն արդեն պաշտոնաթող է և նրան պաշտոնանկ անելու հարց չի առաջանում, սակայն հաշվի առնելով, որ Սահմանադրությամբ պաշտոնանկ անելու և անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը փոխկապակցված է, հետևաբար՝ պաշտոնանկ անելը չպետք է նեղ մեկնաբանել և այն դիտարկել միայն որպես Նախագահի լիազորությունների դադարեցում:***

Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը պահպանված լինելու անհրաժեշտությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դեռևս 2011թ. հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշմամբ (...):

(...)

*Այսպիսով՝ ամփոփելով վերը նշվածը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ **դատարաններն իրավասու չեն և չեն կարող քննարկել կարգավիճակից բխող արարքների համար Նախագահին, այդ թվում՝ պաշտոնաթող, կալանավորելու հարցը, քանի դեռ նա սահմանված ընթացակարգերի պահպանմամբ զրկված չէ անձեռնմխելիությունից**: Հակառակ մոտեցման դեպքում՝ դատարանները պետք է ընդհանուր կարգով քննարկեն և լուծեն նաև պատգամավորների, դատավորների, դիվանագետների և անձեռնմխելիությամբ օժտված այլ անձանց կալանավորման հարցը նույնիսկ այն պարագայում, երբ առկա չէ նրանց անձեռնմխելիությունից զրկելու մասին իրավասու մարմնի համաձայնություն: Իզուր չէ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսել է առանձին կարգավորում անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցում: Նշված օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության դեպքում դատախազը համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմում է համապատասխան մարմիններին:*

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ներկայացված մեղադրանքից ակնհայտ է, որ Ռոբերտ Քոչարյանին մեղսագրվում [են] այնպիսի արարքներ, որոնց կատարումը բխել է նրա՝ ժամանակին զբաղեցրած կարգավիճակից:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգմանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքի պայմաններում, երբ Ռոբերտ Քոչարյանին է մեղսագրվում Սահմանադրական կարգը տապալելը, որն արտահայտվել է նրա՝ որպես ՀՀ Նախագահի կողմից 2008թ. փետրվարի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարին քաղաքական

*գործընթացում զինված ուժերն օգտագործելու հրաման տալով, ինչպես նաև արտակարգ ռեժիմում դրա ապահովումը ՀՀ պաշտպանության նախարությանը վերապահելով, չի բխել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորություններից, ուստի բացակայում է անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքը, ապա Վերաքննիչ դատարանի գնահատմամբ տեղին [չէ], քանի որ Ռոբերտ Քոչարյանը նշված ենթադրյալ գործողությունները կատարել է ոչ թե որպես անհատ, հասարակ քաղաքացի, այլ այդ ենթադրյալ արարքը կատարելու պահին հանդես է եկել որպես ՀՀ Նախագահ: Ընդ որում՝ նշված դեպքում **պարտադիր չէ, որպեսզի Նախագահը գործի հստակ իր լիազորությունների շրջանակներում և դրանցից դուրս չգա, կարևորն այն է, որ վերջինի կատարած այդպիսի արարքը բխի իր՝ որպես Նախագահի կարգավիճակից և պայմանավորված լինի Նախագահին վերապահված լիազորությունների իրականացմամբ**: Հակառակ մոտեցման դեպքում, եթե պայմանականորեն ընդունենք, որ «կարգավիճակից բխող գործողություններ» հասկացության տակ պետք է հասկանալ Նախագահին վերապահված իրավունքների և պարտականությունների անշեղ կատարումը, ապա այդ դեպքում Նախագահի անձեռնմխելիության իրավունքի նախատեսումն անիմաստ կլինի, քանի որ ոչ միայն Նախագահը, այլ նաև ցանկացած պաշտոնատար անձ և անհատ չի կարող հետապնդվել կամ քրեական պատասխանատվության [ենթարկվել] իր օրինական գործողությունների համար:*

*(...) Վերաքննիչ դատարանը, վերոնշյալի համատեքստում, հաշվի առնելով, որ Ռոբերտ Քոչարյանը Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու օրենքով սահմանված հատուկ ընթացակարգի պահպանմամբ չի զրկվել անձեռնմխելիությունից, այլևս **չի անդրադառնում կալանավորման պայմանների և հիմքերի առկայության կամ բացակայության հարցին** և գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2018թ. հուլիսի 27-ի որոշումը պետք է բեկանել և Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը պետք է վերացնել»*[1]:

<u>Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

<u>I. ՀՀ գլխավոր դատախազի բողոքի փաստարկները.</u>

9. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, ենթակա է բեկանման, քանի որ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

[1] Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 69-95:

Վերոգրյալի համատեքստում ՀՀ գլխավոր դատախազը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ իրավական հարցերը.

1) իրավաչա՞փ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ նախագահին պաշտոնանկ անելու ինստիտուտի նույնացումը Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու հետ,

2) Ռ.Քոչարյանին առաջադրված մեղադրանքում ձևակերպված՝ նրան մեղսագրվող գործողությունները կարո՞ղ են գնահատվել որպես ՀՀ նախագահի կարգավիճակից բխող:

9.1. Այսպես, բարձրացված առաջին հարցադրման շրջանակներում բողոքաբերը, մեջբերելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 56.1-րդ և 57-րդ հոդվածները, ի թիվս այլնի, փաստել է. *«[Վերաքննիչ դատարանը] վիճարկվող դատական ակտում անհասկանալի տրամաբանությամբ Նախագահին պաշտոնանկ անելու ինստիտուտը մեկնաբանել է որպես պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիությունը հաղթահարելու ընթացակարգ: Մինչդեռ, 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով սահմանված սահմանադրական իրավակարգավորումն անգամ ոչ մասնագետի աչքերով ուսումնասիրելու և մեկնաբանելու պարագայում ակնհայտ է, որ այդպիսին բացառապես վերաբերում է պաշտոնավարող ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերին և ընթացակարգին, այլ ոչ թե պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու կառուցակարգին: (…)*

(…) [Մ]եջբերված սահմանադրական նորմերի իրավակարգավորման առարկաներն ակնհայտորեն տարբեր են և դրանք ուղղված են սահմանադրական տարբեր հարաբերությունների կարգավորմանը: Այդուհանդերձ, 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված՝ Նախագահի պաշտոնանկման իրավական կառուցակարգը, եթե անգամ մեկնաբանվի որպես Նախագահի անձեռնմխելիության հաղթահարման կառուցակարգ, ապա մեջբերված սահմանադրական ձևակերպման պայմաններում այդ կառուցակարգը կարող է կիրառելի լինել բացառապես պաշտոնավարող Նախագահի համար, քանզի այդ կառուցակարգը ենթադրում է գործող Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելուց առաջ նրան պաշտոնանկ անելու հարցի լուծում: Այս առումով ամենևին տեղին չէ վիճարկվող դատական ակտում Անահիտ Սաղաթելյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների մեջբերումը (…)»:

9.2. Բարձրացված երկրորդ հարցադրման շրջանակներում բողոքի հեղինակը, ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմերի հիման վրա վերլուծելով *«Նախագահի կարգավիճակ»* հասկացությունը, արդյունքում, ի թիվս այլնի, արձանագրել է. *«(…) [Վերաքննիչ դատարանը], հաստատված*

համարելով, որ Ռոբերտ Քոչարյանին առաջադրված մեղադրանքում ներառված գործողությունները զուտ ձևական առումով բիլել են նրա՝ որպես ՀՀ Նախագահի կարգավիճակից, ոչ միայն սխալ իրավական գնահատական է տրվել ձևական առումով նման լիազորություն ունենալու հանգամանքին, այլև որևէ փորձ անգամ չի կատարել խորամուխ լինելու այդ գործողությունների բովանդակության իրավաչափության մեջ՝ այդ կերպ իրեն զրկելով Ռոբերտ Քոչարյանին մեղսագրված գործողությունները Նախագահի կարգավիճակից բխող լինելու կամ չլինելու հարցի լիարժեք և ճիշտ գնահատման հնարավորությունից:

Հատկանշական է, որ Ռոբերտ Քոչարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ նրան մեղսագրված են նաև այնպիսի գործողություններ, որոնք, անգամ ձևական առումով որևէ աղերս չունեն ՀՀ Նախագահի կարգավիճակի հետ (...)»:

9.3. Վերոգրյալի համատեքստում բողոքի հեղինակը նշել է, որ վիճարկվող դատական ակտի կայացմամբ Վերաքննիչ դատարանը, կամայական մեկնաբանման ենթարկելով 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 56.1-րդ և 57-րդ հոդվածները և դրա արդյունքում եզրահանգումներ անելով առ այն, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով Ռ.Քոչարյանին մեղսագրված գործողությունները բխել են նրա՝ որպես ՀՀ նախագահի կարգավիճակից և որ պաշտոնաթող Նախագահին քրեական հետապնդման ենթարկելու համար անհրաժեշտ է հաղթահարել նույն խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված՝ Նախագահի պաշտոնանկման կառուցակարգը, չի պահպանել ՀՀ Սահմանադրությունը՝ այդ կերպ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը:

9.4. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշմանը:

II. Պաշտպանների բողոքի փաստարկները.

10. Ըստ պաշտանների՝ Վերաքննիչ դատարանը 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից բխող՝ պատճառաբանված դատական ակտ ստանալու՝ Ռ.Քոչարյանի իրավունքը, չի անդրադարձել մի շարք կարևոր փաստարկների:

10.1. Ի հիմնավորումն վերոգրյալի՝ բողոքի հեղինակները, ի թիվս այլնի, փաստել են, որ առկա չէ հիմնավոր կասկած, որ Ռ.Քոչարյանը կատարել է

իրեն վերագրվող հանցագործությունը, և որ նկարագրված հանգամանքներում ընդհանրապես առկա է հանցագործություն: Այդ առնչությամբ բողոքի հեղինակները, ներկայացնելով իրենց փաստարկները, նշել են, որ մեղադրանքում նկարագրված գործողություններում հանցանքի կատարման հիմնավոր կասկածը բացակայում է, իսկ Վերաքննիչ դատարանն այդ փաստարկներին առհասարակ անդրադարձ չի կատարել:

10.2. Բացի այդ, պաշտպանները նշել են, որ Ռ.Քոչարյանին վերագրվում է մի արարք, որը 2008 թվականի դրությամբ հանցագործություն չի համարվել: Մասնավորապես, բողոք բերած անձինք, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածին, ի թիվս այլնի, պնդել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը 2008 թվականին գոյություն չի ունեցել:

10.3. Բողոքի հեղինակները նշել են նաև, որ բացակայել են Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը: Մասնավորապես, քննությունից թաքնվելու հիմքի կապակցությամբ պաշտպանները հայտնել են, որ Ռ.Քոչարյանը կամովին վերադարձել է Հայաստանի Հանրապետություն և ներկայացել վարույթն իրականացնող մարմին՝ հարցաքննության: Իսկ մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հիմքի առնչությամբ բողոքաբերները նշել են, որ քննիչը դատարան չի ներկայացրել որևէ նյութ, որը կվկայեր մեղադրյալի նման մտադրության մասին:

10.4. Անդրադառնալով Նախագահի անձեռնմխելիության կապակցությամբ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումներին՝ պաշտպանները նշել են, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնանկության գործընթացը որևէ առնչություն չունի անձեռնմխելիությունից զրկելու գործընթացի հետ:

10.5. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը լրացուցիչ պատճառաբանել, իսկ անձեռնմխելիության մասով փոփոխել հիմնավորումները, անդրադառնալ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերին և հիմնավորումներին՝ որոշման եզրափակիչ մասը թողնելով անփոփոխ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պայմաններից մեկի՝ Հանրապետության նախագահի անձեռնմխելիության հատկանիշի մեկնաբանման և դրա ու կալանավորման մյուս պայմանի՝ հիմնավոր կասկածի հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Հանրապետության

նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը կարգավորող սահմանադրական նորմերի առնչությամբ Վերաքննիչ դատարանի ձևավորած դատողությունները:

I. Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը և դրա հաղթահարման հնարավորությունը.

13. ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի (2005 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«Հանրապետության Նախագահը պետության գլուխն է:*

Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Հանրապետության Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»:

ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի (2015 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«1. Հանրապետության նախագահը պետության գլուխն է:*

2. Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը:

3. Հանրապետության նախագահին իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է և առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով:

4. Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով»:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածը և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածը ընդհանուր գծերով բացահայտում են Հանրապետության նախագահի (այսուհետ՝ նաև Նախագահ) կարգավիճակի առանձնահատկությունները: Մասնավորապես, վերոնշյալ սահմանադրաիրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հանրապետության նախագահը սահմանադրական մարմինների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում, պետության գլուխն է և Սահմանադրության պահպանման հիմնական երաշխավորը:

Նախքան 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության ընդունումը և պետական կառավարման ձևի փոփոխությունը, Հանրապետության նախագահը Սահմանադրությամբ օժտված էր գործառույթների առավել մեծ ծավալով ու դրանցից բխող լիազորություններով: Մասնավորապես, վերջինիս վերապահված էին, ի թիվս այլնի, այնպիսի առանցքային գործառույթներ, ինչպիսիք էին օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների բնականոն գործունեությունն ապահովելը, Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջակա-

նությունն ու անվտանգությունն երաշխավորելը: Վերոնշյալ գործառույթներն իրենց հերթին կանխորոշում էին Նախագահի լիազորությունների բնույթն ու շրջանակը՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության հետ փոխհարաբերությունների ոլորտում, ինչպես նաև երկրի ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները որոշելու հարցում (2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 55-56-րդ հոդվածներ):

14. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի (2005 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:*

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի (2015 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:*

Մեջբերված՝ 2005 և 2015 թվականների խմբագրություններով Սահմանադրության համապատասխան նորմերն ամրագրում են սահմանադրական կարգի հիմունքների բաղկացուցիչ մաս կազմող հիմնարար իրավական դրույթը՝ օրինականության սկզբունքը: Վերջինիս բովանդակությունը վկայում է, որ այն պարտավորեցնում է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց գործելու Սահմանադրությամբ կամ օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Վերոնշյալ սահմանադրական նորմերի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-690 որոշմամբ արձանագրել է. *«(…) [Օ]րենադրորեն նախատեսված **պետաիշխանական ցանկացած բնույթի լիազորություն (այդ թվում՝ հայեցողական) անհրաժեշտ նպատակ հետապնդելու հետ մեկտեղ, պետք է ուղեկցվի վերջինիս հասնելու հասարակական հարաբերությունների կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված իրավական, չափավոր միջոցներով**, փոխյալ դեպքում՝ պարտադիր հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 3 հոդվածում, 47 հոդվածի առաջին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների անհահպտելիությունը (…)»*[1]:

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշման 11-րդ կետը:

ՀՀ սահմանադրական դատարանը մեկ այլ՝ թիվ ՍԴՈ-766 որոշմամբ ընդգծել է. *«(…) ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5 հոդվածների համալիր վերլուծությունից բխում է, որ պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝* **_իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով_»**[1]:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք գործունեություն ծավալելիս պարտավոր են խստորեն գործելու Սահմանադրությամբ կամ օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, հակառակ պարագայում թույլ կտրվի օրինականության սկզբունքի խախտում, ինչից որևէ բացառություն որևէ պետական մարմնի համար Սահմանադրությամբ նախատեսված չէ:

14.1. Սույն որոշման նախորդ կետում շարադրված դիրքորոշումների լույսի ներքո գնահատման ենթարկելով սույն որոշման 13-րդ կետում՝ Հանրապետության նախագահի կարգավիճակի առանձնահատկությունների վերաբերյալ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նախագահի կարգավիճակը նրա զբաղեցրած դիրքն է պետական իշխանության մարմինների համակարգում և դրանից բխող նրա իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը: Մասնավորապես, Նախագահը թեև անմիջականորեն ընդգրկված չէ պետական իշխանության երեք ճյուղերից որևէ մեկում, այնուամենայնիվ, պետական մարմինների համակարգում առանցքային տեղ է զբաղեցնում, ում՝ որպես բարձրագույն պաշտոնատար անձի և պետության գլխի, վերապահված են հիմնարար նշանակություն ունեցող գործառույթներ: Համապատասխան գործառույթները Նախագահն իրացնում է Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների միջոցով, որոնք նրա կարգավիճակի հիմքն են կազմում: Միևնույն ժամանակ, այդ լիազորությունների կենսագործումը պետք է համապատասխանի օրինականության սկզբունքի պահանջներին, որպիսի եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմերի բովանդակությունից:

15. ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածի (2005 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«Հանրապետության Նախագահն անձեռնմխելի է:*

[1] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-766 որոշման 6-րդ կետը:

Հանրապետության Նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:

Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության Նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո»:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի (2005 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար:*

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան:

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է Ազգային ժողովի քննարկումից»:

ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածի (2015 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«1. Հանրապետության նախագահին անձեռնմխելի է:*

2. Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:

3. Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն իր լիազորությունների ավարտից հետո»:

ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի (2015 թվականի փոփոխություններով) համաձայն՝ *«1. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:*

2. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան:

3. Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների

առնվազն երկու երրորդով»:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված անձեռնմխելիության ինստիտուտը Նախագահի լիազորություններն ազատորեն կենսագործելու, վերջինիս անխոչընդոտ գործունեությունն ապահովելու, նրան անհիմն քրեական կամ վարչական հետապնդումներից պաշտպանելու հիմնարար իրավական միջոց է, ուստի պատահական չէ, որ Նախագահին անձեռնմխելիությամբ է օժտված ոչ միայն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում, այլև դրանց ավարտից հետո՝ կարգավիճակից բխող գործողությունների համար:

Միևնույն ժամանակ, Նախագահի անձեռնմխելիությունը որևէ պարագայում չի կարող դիտվել որպես նրան տրամադրվող անձնական արտոնություն. այն ուղղված է ոչ թե անձի մասնավոր շահերը պաշտպանելուն, այլ Նախագահի՝ որպես պետության գլխի լիազորությունների արդյունավետ և անխոչընդոտ իրացումն երաշխավորելուն: Այլ կերպ՝ Նախագահի անձեռնմխելիությունն ունի հանրային-իրավական բնույթ, կոչված է ծառայելու հանրային շահին, ուստի դրա չափազանց լայն մեկնաբանումը կհանգեցնի քննարկվող ինստիտուտի բուն էության խեղաթյուրմանը:

ՀՀ Սահմանադրության՝ Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը կարգավորող նորմերի վերլուծությունից հետևում է, որ կատարված գործողությունների բնույթով (կարգավիճակից բխող կամ չբխող), ինչպես նաև պաշտոնավարման ժամանակահատվածով (պաշտոնավարման ընթացքում կամ լիազորությունների ավարտից հետո) պայմանավորված՝ անձեռնմխելիության երաշխիքը կարող է որոշ սահմանափակումների ենթարկվել: Վերոնշյալը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) կողմից ձևավորված նախադեպային իրավունքին: Այսպես՝ Եվրոպական դատարանը *Urechean and Pavlicenco v. The Republic of Moldova* գործի շրջանակներում նախագահի անձեռնմխելիության հարցը քննարկել է արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ ընդգծելով, որ Կոնվենցիային համապատասխանելու տեսանկյունից որքան լայն է անձեռնմխելիությունը, այնքան դրա համար առավել համոզիչ հիմնավորում է պահանջվում: Թեև ժողովրդավարական հասարակությունում թույլատրելի է երկրի ղեկավարին գործառութային անձեռնմխելիություն շնորհելը, այնուամենայնիվ, այն պետք է կարգավորվի և մեկնաբանվի հստակ ու սահմանափակ: Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քննարկման առարկա չդարձնելը՝ արդյոք նախագահը գործել է պաշտոնական կարգավիճակով, թե ոչ, հանգեցնում է պետության գլխի անվերապահ անձեռնմխելիության, մինչդեռ պետք է խուսափել բացարձակ անպատժելիությունից ու անձեռնմխելիությունից[1]:

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Urechean and Pavlicenco v. The Republic of Moldova* գործով 2014 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռը, գանգատներ թիվ 27756/05 և 41219/07, կետեր 44-55:

15.1. ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածից (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածից) բխում է, որ պաշտոնավարման ժամանակահատվածում Նախագահին օժտված է անձեռնմխելիությամբ թե՛ իր կարգավիճակից բխող, թե՛ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսվել է **պաշտոնավարող Նախագահին պաշտոնանկ անելու կառուցակարգ (impeachment)** պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի համաձայն՝ նաև Սահմանադրության կոպիտ խախտման դեպքում): Ընդ որում, եթե ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածը (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածը) ամրագրում է Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու կառուցակարգ, ապա համանման կառուցակարգ պաշտոնաթող Նախագահի դեպքում ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում:

15.2. Պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիության երաշխիքը բովանդակող սահմանադրական նորմերից բխում է, որ *Նախագահի լիազորությունների ավարտից հետո* վերջինս չի կարող հետապնդվել և ենթարկվել պատասխանատվության *իր կարգավիճակից բխող գործողությունների* համար: Անձեռնմխելիության սույն տեսակի հիմքում (գործառութային անձեռնմխելիություն) ընկած է ոչ թե անձի՝ ժամանակին զբաղեցրած պաշտոնը, այլ այն գործողությունների բնույթը, որոնք նա իրականացրել է իր պաշտոնավարման ընթացքում (այն է՝ կարգավիճակից բխող գործողություններ):

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Նախագահի կարգավիճակ ասելով՝ պետք է հասկանալ նրա ունեցած գործառնական դերը, լիազորությունների՝ իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը[1]: Հետևաբար, որպես կարգավիճակից բխող գործողություններ կարող են դիտարկվել այնպիսիք, որոնց կատարումը պայմանավորված է Նախագահի գործառույթների իրականացման անհրաժեշտությամբ՝ Սահմանադրությամբ նրան վերապահված լիազորությունների կատարման միջոցով: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է[2], լիազորությունների իրացումը պետք է համապատասխանի Սահմանադրության և օրենքների պահանջներին, ինչը բխում է ոչ միայն սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված օրինականության սկզբունքի պահանջներից, այլև ՀՀ Սահմանադրության՝ Հանրապետության նախագահին նվիրված գլխի կարգավորման ընդհանուր տրամաբանությունից: Մասնավորապես՝ պաշտոնը ստանձնելիս Նախագահի կողմից տրվող երդման տեքստի բովանդակությունից նույնպես հետևում է, որ

[1] Տե՛ս սույն որոշման 14.1.-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 14.1.-րդ կետը:

վերջինս պարտավորվում է անվերապահորեն գործել միայն Սահմանադրության շրջանակներում (2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 54-րդ հոդված, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 127-րդ հոդված): Իսկ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածն անմիջականորեն ամրագրում է, որ Նախագահի հրամանագրերը և կարգադրությունները չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Նախագահը Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան իրացնելու դեպքում որևէ պարագայում չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել, ինչն էլ երաշխավորվում է Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի միջոցով:

16. Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը Նախագահին վերապահել է իր գործառույթներից բխող մի շարք լիազորություններ, որոնց կենսագործումն առանձին դեպքերում նաև հայեցողական բնույթ է կրում, ուստի Նախագահը չի կարող պատասխանատվություն կրել իր կողմից իրականացվող քաղաքականության, իր լիազորությունների շրջանակներում ընդունվող ակտերի և իրականացվող գործողությունների համար: Հանրապետության նախագահը պետք է երաշխավորված լինի ինչպես իր կողմից վարվող քաղաքականության, այնպես էլ իր լիազորությունների մեջ մտնող ցանկացած, այդ թվում՝ հայեցողական լիազորությունների շրջանակում ընդունված որոշման համար հետագայում պատասխանատվության ենթարկվելուց: Վերոնշյալը Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի հիմնական բովանդակությունն է կազմում և կարևոր երաշխիք է Նախագահի կողմից իրեն սահմանադրորեն վերապահված լիազորություններն ազատորեն, առանց որևէ ազդեցության իրականացնելու և դրանց համար թե՛ պաշտոնավարման ընթացքում, թե՛ դրանից հետո հետապնդումների չենթարկվելու համար:

Պայմանավորված նաև վերոնշյալ տրամաբանությամբ՝ ՀՀ Սահմանադրությունը պաշտոնաթող Նախագահի դեպքում նրա գործառութային անձեռնմխելիությունը հաղթահարելու ընթացակարգ չի ամրագրել: Այլ կերպ՝ վերջինս **իր կարգավիճակից բխող գործողությունների կատարման համար** օժտված է քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությամբ:

16.1. Ինչ վերաբերում է Նախագահի կարգավիճակի հետ չկապված գործողություններին, ապա պաշտոնավարման ավարտից հետո Նախագահը դրանց համար չի օգտվում անձեռնմխելիության երաշխիքից և ենթարկվում է պատասխանատվության ընդհանուր հիմունքներով: Մասնավորապես, որպես այդպիսին՝ պետք է դիտարկվեն ոչ միայն հակաօրինական արարքները, որոնք Նախագահն իրականացնում է որպես մասնավոր անձ, քաղաքացի և որոնք

կապված չեն նրա գործառնական դերի հետ, այլև այնպիսի գործողությունները, որոնց կատարման իրավասությամբ Նախագահը սահմանադրորեն օժտված չէ կամ կատարում է դրանք՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ պաշտոնավարման ավարտից հետո Նախագահին անձեռնմխելիությամբ օժտելու նպատակը ոչ թե կատարված անօրինական գործողությունների, այդ թվում՝ հանցավոր արարքների համար հետագայում նրա պատասխանատվությունը բացառելն է (հատկապես որ Նախագահի լիազորությունների ավարտից հետո այլևս առկա չեն նրա բնականոն գործունեությունն ապահովելու, պարտականությունների պատշաճ կատարումն երաշխավորելու և հանրային շահը պաշտպանելու՝ անձեռնմխելիության ինստիտուտի հետապնդած նպատակները), այլ նրա նկատմամբ իր սահմանադրական լիազորությունների իրականացման կապակցությամբ ապագայում հետապնդումներ թույլ չտալը:

17. Ընդհանրացնելով սույն որոշման 15-16.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձեռնմխելիության կիրառումը չի կարող դիտվել որպես մեխանիկական գործընթաց: Պարզելու համար՝ արդյոք կատարված գործողությունները բխել են Նախագահի կարգավիճակից, թե ոչ, չպետք է առաջնորդվել ձևական մոտեցմամբ և հիմք ընդունել միայն այն հանգամանքը, որ ենթադրյալ արարքը կատարելու ժամանակ անձը հանդես է եկել որպես Նախագահ: Կատարված գործողությունը Նախագահի կարգավիճակից բխելու կամ չբխելու և համապատասխանաբար անձեռնմխելիության երաշխիքը կիրառելու հարցը լուծելիս անհրաժեշտ է համակողմանի գնահատման ենթարկել իրականացված գործողությունների բնույթը, այն է՝ բացահայտել դրանց՝ Նախագահի՝ որպես պետության գլխի գործառույթների կենսագործմանն ուղղված լինելու, Նախագահի առջև դրված խնդիրները՝ Սահմանադրությամբ վերջինիս վերապահված լիազորությունների միջոցով իրականացնելու հանգամանքները, ինչպես նաև պարզել համապատասխան գործողության հիմքում ընկած շահը, նպատակը: Մասնավորապես, եթե Հանրապետության նախագահը գործել է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, առաջնորդվել է հանրային շահով և նրա գործողությունները պայմանավորված են եղել իր գործառույթների իրացման անհրաժեշտությամբ, ապա վերջինս նման գործողությունների համար անձեռնմխելի է և ենթակա չէ հետապնդման ու պատասխանատվության նաև լիազորությունների ավարտից հետո, քանի որ այդպիսիք համատեղելի են Նախագահի կարգավիճակի հետ և բխում են վերջինից: Մինչդեռ եթե Նախագահը լիազորություններն իրականացնելիս առաջնորդվել է իր մասնավոր, անձնական շահով կամ չի ունեցել համապատասխան գործողությունն իրականացնելու լիազորություն կամ դա իրականացրել է

Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ, ապա նման գործողությունները չեն կարող առնչություն ունենալ Նախագահի կարգավիճակի հետ և պետք է գնահատվեն որպես Նախագահի կարգավիճակի հետ չկապված:

18. Սույն գործի նյութերից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Նախագահի անձեռնմխելիության սահմանադրական ինստիտուտին և Նախագահին պաշտոնանկ անելու կառուցակարգին, արձանագրել է, ի թիվս այլնի, հետևյալը.

- պարտադիր չէ, որպեսզի Նախագահը գործի հստակ իր լիազորությունների շրջանակներում և դրանցից դուրս չգա, կարևորն այն է, որ վերջինի կատարած այդպիսի արարքը բխի իր՝ որպես Նախագահի կարգավիճակից և պայմանավորված լինի Նախագահին վերապահված լիազորությունների իրականացմամբ,

- պաշտոնանկ անելն ընդհանուր կանոններից տարբերվող պատասխանատվության ուրույն ձև է, որը հնարավորություն է տալիս Նախագահին զրկելու անձեռնմխելիությունից: Պաշտոնանկ անելը չպետք է նեղ մեկնաբանել և այն դիտարկել միայն որպես Նախագահի լիազորությունների դադարեցում: Դատարաններն իրավասու չեն և չեն կարող քննարկել կարգավիճակից բխող արարքների համար Նախագահին, այդ թվում՝ պաշտոնաթող, կալանավորելու հարցը, քանի դեռ նա սահմանված ընթացակարգերի պահպանմամբ զրկված չէ անձեռնմխելիությունից: Վերաքննիչ դատարանը վերոնշյալ դիրքորոշումն արտահայտելիս հիմք է ընդունել նաև Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը:

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը կարգավորող սահմանադրական նորմերի առնչությամբ Վերաքննիչ դատարանի ձևավորած դատողությունները հիմնավոր չեն:

Այսպես, Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ *պարտադիր չէ, որպեսզի Նախագահը գործի հստակ իր լիազորությունների շրջանակներում և դրանցից դուրս չգա, կարևորն այն է, որ վերջինի կատարած այդպիսի արարքը բխի իր՝ որպես Նախագահի կարգավիճակից և պայմանավորված լինի Նախագահին վերապահված լիազորությունների իրականացմամբ:* Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությամբ օժտելու նպատակը ոչ թե կատարված անօրինական գործողությունների, այդ թվում՝ հանցավոր արարքների համար հետագայում նրա պատասխանատվությունը բացառելն է, այլ նրա նկատմամբ իր սահմանադրական լիազորությունների

իրականացման կապակցությամբ ապագայում հետապնդումներ թույլ չտալը: Որպես Նախագահի կարգավիճակի հետ չկապված գործողություններ՝ պետք է դիտարկվեն ոչ միայն հակաօրինական արարքները, որոնք Նախագահն իրականացնում է որպես մասնավոր անձ, քաղաքացի և որոնք կապված չեն նրա գործառնական դերի հետ, այլև այնպիսի գործողությունները, որոնց կատարման իրավասությամբ Նախագահը սահմանադրորեն օժտված չէ կամ կատարում է դրանք՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ[1]:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերը մատնանշված հետևությունում առկա է նաև ներքին հակասություն: Մասնավորապես, եթե Նախագահը չի գործում իր լիազորությունների շրջանակներում և դրանցից դուրս է գալիս, ապա կատարված արարքը չի կարող բխել Նախագահի կարգավիճակից, այն է՝ իրավունքների և պարտականությունների ամբողջությունից, առավել ևս՝ այդպիսի արարքը չի կարող պայմանավորված լինել Նախագահին վերապահված լիազորությունների իրականացմամբ:

19.1. Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն որոշման 15.1.-րդ և 16-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումներից, փաստում է նաև, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիության դեպքում նրա կալանավորման հարցը չի կարող քննարկվել, քանի դեռ վերջինիս անձեռնմխելիությունը հաղթահարված չէ, անհիմն է: Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի և Նախագահին պաշտոնանկ անելու համապատասխան կառուցակարգի առնչությամբ Վերաքննիչ դատարանի ձևավորած դատողությունները հիմնավոր չեն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից որպես փաստարկ Վճռաբեկ դատարանի՝ *Անահիտ Սաղաթելյանի*[2] գործով կայացված որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները մատնանշելուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտոնաթող դատավորի անձեռնմխելիության, այդ թվում՝ դրա հնարավոր հաղթահարման՝ դատավորի անձեռնմխելիության հիմնարար իրավական արժեքի համատեքստում Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիության ինստիտուտի նկատմամբ կիրառելը, Վճռաբեկ դատարանի համապատասխան դատողությունները հիմք ընդունելն այնպիսի եզրահանգման գալու համար, որ պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիությունը կարող է հաղթահարվել, տեղին չի կարող համարվել՝

[1] Տե՛ս սույն որոշման 16.1.-րդ կետը:
[2] Տե՛ս *Անահիտ Սաղաթելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշման 36-39-րդ, 46-47-րդ կետերը:

հաշվի առնելով առնվազն այն, որ եթե պաշտոնաթող դատավորի անձեռնմխելիության կարևորությունը և դրա հնարավոր հաղթահարումը ընդգծվել է նախադեպային իրավունքի ուժով, ապա պաշտոնաթող Նախագահի համար սահմանված գործառութային անձեռնմխելիության հաղթահարման անհնարինությունն անմիջականորեն բխում է հենց Սահմանադրությունից: Բացի այդ, դատավորի և Նախագահի դեպքում տարբեր են վերջիններիս՝ անձեռնմխելիության հատկանիշով շնորհելու նպատակները: Մասնավորապես, եթե դատավորի դեպքում դրա նպատակն է երաշխավորել դատական իշխանության անկախությունը, բացառել արդարադատության իրականացման ընթացքում դատավորի որոշումների վրա ներազդելու նպատակ ունեցող ցանկացած ոչ իրավաչափ ազդեցության, սպառնալիքի, ճնշման կամ այլ միջամտության հնարավորությունը, ապա Նախագահի դեպքում՝ այն ուղղված է վերջինիս Սահմանադրությամբ տրված լիազորությունների՝ առանց խոչընդոտների կամ արգելքների իրականացումն ապահովելուն, այլ կերպ՝ Նախագահի՝ որպես պետության գլխի բնականոն գործունեությունն երաշխավորելուն:

II. Կալանավորման պայմաններից հիմնավոր կասկածի և Նախագահի անձեռնմխելիության հատկանիշի հարաբերակցությունը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը քննության առարկա չդարձնելով՝ Վերաքննիչ դատարանը կարող էր արդյոք վերջինիս անձեռնմխելիության հարցի կապակցությամբ հանգել հիմնավորված հետևության:

21. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:*

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

3. Կալանավորելը, կալանքի տակ պահելը, բժշկական կամ դաստիարակչական հաստատությունում անձին հարկադրաբար տեղավորելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ: Եթե անձն անձնական ազատությունից զրկվել է իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով, և անձին ազատությունից զրկելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն»:*

Հիմնավոր կասկածին և կալանավորման մյուս պայմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Վահրամ Գևորգյանի* գործով որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(…) Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: (…)*

Հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը»[1]:

Հիմնավոր կասկածի էության և դրա ստուգման սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է մի շարք իրավական դիրքորոշումներ: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ *Էդգար Եղիազարյանի* գործով որոշման շրջանակներում, հիմնվելով Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վրա, ինչպես նաև վերահաստատելով և զարգացնելով իր կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները (այդ թվում՝ *Վահրամ Գևորգյանի* գործով), ընդգծվել են, ի թիվս այլնի, հետևյալ հանգամանքները.

«- հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

(…)

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից (…), ուստին հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում

[1] Տե՛ս *Վահրամ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-րդ կետը:

կայացնելու կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող ստուգման չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (…)»[1]:

21.1. Սույն որոշման նախորդ կետում շարադրված իրավանորմերի և մեջբերված իրավական դիրքորոշումների հիման վրա անդրադառնալով պաշտոնաթող Նախագահի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցին և զարգացնելով *Էդգար Եղիազարյանի* գործով ձևավորած դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը կանոնակարգող սահմանադրական նորմերի և դրանց առնչությամբ սույն որոշման 15-17-րդ կետերում կատարված վերլուծության լույսի ներքո արձանագրում է, որ պաշտոնաթող Նախագահի նկատմամբ անձեռնմխելիության երաշխիքի տարածումը պայմանավորվում է նրա կատարած գործողությունների բնույթով, այն է՝ արդյոք դրանք բխել են վերջինիս կարգավիճակից, թե ոչ: Այսինքն՝ պաշտոնաթող Նախագահի նկատմամբ գործառութային անձեռնմխելիության կիրառումը մեխանիկական գործընթաց չէ. անձեռնմխելիության սույն տեսակը կիրառելու կամ չկիրառելու հարցի պարզումը սերտորեն փոխկապված է անձի կողմից ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու հիմնավոր կասկածի, մասնավորապես՝ անձի և մեղսագրվող արարքի միջև օբյեկտիվ կապի առկայության գնահատման հետ: Այլ խոսքով՝ գործառութային անձեռնմխելիության հարցի լուծումն անմիջականորեն ենթադրում է անձին մեղսագրվող գործողությունների՝ հիմնավոր կասկածի տեսանկյունից գնահատում: Հետևաբար, հիմնավոր կասկածը գնահատման չենթարկելու պարագայում (այն, թե արդյոք անձն առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը և արդյոք դեպքը, իրադարձությունը, որի կատարման մեջ անձը մեղադրվում է, առերևույթ համընկնում է քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմի հատկանիշներին) դատարանն իրեն փաստացի զրկում է պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիության, մասնավորապես՝ վերջինիս կողմից առերևույթ կատարված գործողությունները նրա կարգավիճակից

[1] Տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետը:

բխելու կամ չբխելու հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից:

22. Սույն գործի նյութերից երևում է, որ Ռ.Քոչարյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2008 թվականին հանդիսանալով ՀՀ նախագահ, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, տապալել է սահմանադրական կարգը: Մասնավորապես, այն արտահայտվել է հետևյալում.

ա) Նախագահ Ռ.Քոչարյանը ՀՀ պաշտպանության նախարար Մ.Հարությունյանի, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, Երևանի կայազորի պետ Յու.Խաչատուրովի, ՀՀ ՊՆ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ս.Օհանյանի և մյուսների հետ խախտել է 2008 թվականին գործող ՀՀ Սահմանադրության 8.2.-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի հաստատելով ռազմական դրություն և զինված ուժերն օգտագործելով քաղաքական հարցերում, խաղաղ հանրահավաքների մասնակիցների դեմ:

Մասնավորապես, Նախագահ Ռ.Քոչարյանը, ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն հանդիսանալով զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը և համակարգելով պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, 2008 թվականի փետրվարի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ խորհրդակցություն անցկացնելուց հետո առաջադրել է իշխանությունը ցանկացած գնով, այդ թվում՝ ՀՀ զինված ուժերի օգտագործմամբ պահպանելուն ուղղված խնդիրներ, որոնց կատարման վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարար Մ.Հարությունյանը նույն օրը ստորագրել է հույժ գաղտնի թիվ 0038 ակնհայտ ապօրինի հրամանը,

բ) փաստացի հաստատված ռազմական դրության, զինված ուժերի ապօրինի գործադրման համար առերևույթ իրավական հիմք ստեղծելու նպատակով 2008 թվականի մարտի 1-ին Նախագահ Ռ.Քոչարյանը, ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի համաձայն, պարտավոր լինելով հրապարակել ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին չհակասող հրամանագրեր, ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի խախտմամբ ընդունել է «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՆՀ-35-Ն հրամանագիրը: Նշված հրամանագրով Երևան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովումը ՀՀ ոստիկանությունից բացի, վերապահվել է նաև ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ արտակարգ դրության ռեժիմն ապահովելու համար ապօրինի կերպով օգտագործվել են ՀՀ զինված ուժերը,

գ) նույն օրը՝ երեկոյան, զինված ուժերը և ոստիկանության ստորաբաժանումները Երևանի կենտրոնական փողոցներում զենքի, պայթուցիկ

նյութերի և հատուկ միջոցների գործադրմամբ իրականացրել են հատուկ միջոցառումներ՝ խաղաղ հավաքը ցրելու, անզեն ցուցարարներին փողոցներից հեռացնելու, այդօրինակ միջոցառումները ժամանակավոր արգելելու ուղղությամբ: Հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և հատուկ միջոցների գործադրման հետևանքով հարյուրավոր մարդիկ ստացել են ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, պետությանը, Երևան համայնքին և քաղաքացիներին պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Բացի այդ, ըստ Ռ.Քոչարյանին առաջադրված մեղադրանքի՝ վերջինս, անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, հանձնարարել է ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարին՝ տարբեր եղանակներով և միջոցներով, այդ թվում՝ դատարանի անդամների վրա ճնշում գործադրելով՝ ներազդել դատարանի անդամների վրա, որպեսզի վերջիններս քվեարկեն Կենտրոնական հանձնաժողովի հիշյալ որոշման վավերական և օրինական ճանաչվելու օգտին: Ռ.Քոչարյանի անմիջական ցուցումներով և հանձնարարությամբ Սահմանադրական դատարանի անդամների վրա գործադրված ճնշումների ազդեցության արդյունքում, չնայած ընտրախախտումների առկայության փաստին, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի մարտի 8-ի որոշմամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2008 թվականի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը ճանաչվել է վավերական և օրինական[1]:

22.1. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ առկա են Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պայմաններն ու հիմքերը: Մասնավորապես, առկա է հիմնավոր կասկած առ այն, որ Ռ.Քոչարյանն առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը: Միևնույն ժամանակ, գնահատման ենթարկելով մեղսագրվող հանցագործության բնույթը, վտանգավորության աստիճանը, սպառնացող հնարավոր պատժի խստությունը, գործի օպերատիվ քննչական իրավիճակից բխող տվյալների համակցությունը, մեղադրյալի անձը, նախկինում զբաղեցրած պաշտոնն ու կապերը՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ առկա են նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը, այն է՝ մեղադրյալ Ռ.Քոչարյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով:

Անդրադառնալով Ռ.Քոչարյանի անձեռնմխելի լինելու վերաբերյալ բարձրացված հարցին՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքի պայմաններում,

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

երբ Ռ.Քոչարյանին վերագրվում է սահմանադրական կարգը տապալելը, որն արտահայտվել է նրա՝ որպես Նախագահի կողմից 2008 թվականի փետրվարի 23-ին ՀՀ պաշտպանության նախարարին քաղաքական գործընթացներում զինված ուժերն օգտագործելու հրաման տալով, ինչպես նաև արտակարգ դրության ռեժիմում դրա ապահովումը ՀՀ պաշտպանության նախարարությանը վերապահելով, չի բխել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորություններից, ուստի բացակայում է անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքը[1]:

22.2. Վերաքննիչ դատարանը Նախագահի անձեռնմխելիության սահմանադրական ինստիտուտի և Նախագահին պաշտոնանկ անելու կառուցակարգի հետ կապված հարցերի քննարկման արդյունքում փաստել է, որ ***չի անդրադառնում կալանավորման պայմանների և հիմքերի առկայության կամ բացակայության հարցին***, քանի որ Ռ.Քոչարյանը Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու օրենքով սահմանված հատուկ ընթացակարգի պահպանմամբ չի զրկվել անձեռնմխելիությունից[2]:

23. Սույն որոշման 22-22.2-րդ կետերում մեջբերված փաստական տվյալները գնահատման ենթարկելով սույն որոշման 21-21.1-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Հանրապետության նախկին նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը գնահատման չենթարկելով և, միևնույն ժամանակ, քննարկման առարկա դարձնելով Ռ.Քոչարյանի անձեռնմխելիության, մասնավորապես՝ վերջինիս կողմից առերևույթ կատարված գործողությունները նրա կարգավիճակից բխելու կամ չբխելու հարցը[3], փաստացի իրեն զրկել է այդ կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից, քանի որ, ինչպես արդեն նշվել է[4], պաշտոնաթող Նախագահի նկատմամբ գործառութային անձեռնմխելիության կիրառումը մեխանիկական գործընթաց չէ. անձեռնմխելիության սույն տեսակը կիրառելու կամ չկիրառելու հարցի պարզումը սերտորեն փոխկապված է անձի կողմից ենթադրյալ հանցավոր արարքն առերևույթ կատարելու հիմնավոր կասկածի, մասնավորապես՝ անձի և մեղսագրվող արարքի միջև օբյեկտիվ կապի առկայության գնահատման հետ: Այլ խոսքով՝ գործառութային անձեռնմխելիության հարցի լուծումն անմիջականորեն ենթադրում է անձին մեղսագրվող գործողությունների՝ հիմնավոր կասկածի տեսանկյունից գնահատում:

[1] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[4] Մանրամասն տե՛ս սույն որոշման 21.1.-րդ կետը:

23.1. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը քննության առարկա չդարձնելով՝ Վերաքննիչ դատարանը չէր կարող վերջինիս անձեռնմխելիության հարցի կապակցությամբ հանգել հիմնավորված հետևության:

24. Ընդհանրացնելով սույն որոշման 19-19.1.-րդ, ինչպես նաև 23-23.1.-րդ կետերում շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է՝

- Հանրապետության նախագահի անձեռնմխելիության երաշխիքը բովանդակող սահմանադրական նորմերի առնչությամբ Վերաքննիչ դատարանի ձևավորած դատողությունները հիմնավոր չեն,

- Վերաքննիչ դատարանը, Հանրապետության նախկին նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը գնահատման չենթարկելով և, միևնույն ժամանակ, քննարկման առարկա դարձնելով Ռ.Քոչարյանի անձեռնմխելիության, մասնավորապես՝ վերջինիս կողմից առերևույթ կատարված գործողությունները նրա կարգավիճակից բխելու կամ չբխելու հարցը, փաստացի իրեն զրկել է այդ հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից:

25. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների՝ հիմք են ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ կալանավորման պայմանների (բացառությամբ անձեռնմխելիության հարցի) ու հիմքերի մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը Վերաքննիչ դատարանի կողմից դատական ստուգման չի ենթարկվել[1]՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության[2]:

Վերոգրյալի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Ռ.Քոչարյանի պաշտպանների՝ սույն որոշման 10.1.-10.3-րդ կետերում բարձրացրած փաստարկներին տվյալ դեպքում հնարավոր չէ անդրադառնալ

[1] Տես սույն որոշման 22.2-րդ կետը:

[2] Տես Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 և 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԾԴ/0011/11/14 քրեական գործերով որոշումները (դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերելի մասով կիրառելի են նաև Վճռաբեկ դատարանի լիազորությունների (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդված) նկատմամբ):

մինչև սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելը:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով սույն որոշմամբ արձանագրված խախտումները, պետք է գնահատման ենթարկի ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը, և դրա առկայությունը հավաստելու պարագայում միայն սույն որոշման 13-19.1-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնա Ռ.Քոչարյանի անձեռնմխելիության հարցին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն, իսկ պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ԵԴ/0743/06/18

Դատավոր՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2018 թվականի նոյեմբերի 15-ի՝ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի վերաբերյալ կայացրած դատական ակտի պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի վերաբերյալ.

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և միացվել 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցված թիվ 62202608 քրեական գործին:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 26-ին Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Միաժամանակ մերժվել է կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանների միջնորդությունը:

4. Մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի, Հ.Խուդոյանի և Հ.Ալումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշումը բեկանել է, վերացրել մեղադրյալ Ռ.Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը և նրան ազատ արձակել:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը,

մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանը, Ռ.Սահակյանը, Ա.Օրբելյանը և Հ.Խուդոյանը, ինչպես նաև տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումներով ՀՀ գլխավոր դատախազի և պաշտպանների վճռաբեկ բողոքները ընդունվել են վարույթ, իսկ տուժողների իրավահաջորդների ներկայացուցչի բողոքը թողնվել է առանց քննության:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացվել մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպան Հ.Ալումյանի և դատախազ Ա.Մնացականյանի կողմից:

Պաշտպան Հ.Ալումյանը խնդրել է ՀՀ գլխավոր դատախազի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել, իսկ վարույթ ընդունելու դեպքում՝ ներկայացված բողոքը մերժել՝ միաժամանակ բավարարելով Ռ.Քոչարյանի պաշտպանների վճռաբեկ բողոքը:

Դատախազ Ա.Մնացականյանը խնդրել է մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպանների վճռաբեկ բողոքը մերժել:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, իսկ պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի վճռաբեկ բողոքը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննության մարմնի կողմից Ռոբերտ Քոչարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, *որ նա 2008 թվականին հանդիսանալով Հայաստանի Հանրապետության Նախագահը, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, տրապալել է սահմանադրական կարգը:*

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Դատարանը գտնում է, որ առկա են Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու օրենսդրական հիմքերն ու պայմանները:*

(…)

Ինչ վերաբերում է պաշտպան Ա.Օրբելյանի այն դիտարկմանը, որ Ռոբերտ (…)[Քոչարյանը] օժտված է անձեռնմխելիությամբ և նա իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար, ապա Դատարանը արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքի պայմաններում, երբ Ռոբերտ Քոչարյանին է

վերագրվում սահմանադրական կարգը տապալելը, որն արտահայտվել է նրա՝ որպես ՀՀ նախագահի կողմից 23.02.2008թ-ին ՀՀ պաշտպանության նախարարին քաղաքական գործընթացներում գինված ուժերն օգտագործելու հրաման տալով, ինչպես նաև արտակարգ դրության ռեժիմում դրա ապահովումը ՀՀ պաշտպանության նախարարությանը վերապահելով, չի բխել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորություններից, ուստի առկա պայմաններում բացակայում է անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքը»:

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն. «*Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, իր կարգավիճակից բխող գործողությունների համար պաշտոնավարման ավարտից հետո Նախագահի անձեռնմխելիության իրավունքը պահպանվում է, քանի դեռ վերջինը սահմանված կարգով չի զրկվել այդ իրավունքից: Հետևաբար, նման դեպքում պաշտոնավարման ժամկետից հետո Նախագահի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար անհրաժեշտ պարտադիր պայման է նրան անձեռնմխելիությունից զրկելը: Հակառակ մոտեցման դեպքում, եթե պայմանականորեն ընդունենք, որ առանց անձեռնմխելիության զրկման Նախագահին հնարավոր է ենթարկել քրեական պատասխանատվության, ապա այդ դեպքում որն է այդ իրավունքի սահմանման իմաստը, իսկ նման պայմաններում չի գործի Նախագահի անձեռնմխելիության սահմանադրական նորմը և Նախագահը չի օգտվի այդ իրավունքից: Հետևաբար՝ նման մեկնաբանման պայմաններում ընդհանրապես անիմաստ է դառնում անձեռնմխելիության ինստիտուտի նախատեսումը:*

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործող Նախագահին Սահմանադրությամբ պաշտոնանկ անելու համար առկա է հատուկ ընթացակարգ, որի պահպանման դեպքում միայն հնարավոր է Նախագահի նկատմամբ իրականացնել քրեական հետապնդում, ընդ որում՝ հաշվի առնելով, որ իր կարգավիճակից բխող գործողությունների համար քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունը Նախագահի վրա տարածվում է նաև պաշտոնավարման ավարտից հետո, ուստի նշված ընթացակարգը պետք է կիրառվի նաև Նախագահի պաշտոնավարման ավարտից հետո: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, եթե Նախագահին մեղսագրվում է այնպիսի ենթադրյալ արարք, որն իր պաշտոնավարման ընթացքում բացահայտվելու դեպքում նրա նկատմամբ քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն նրան պաշտոնանկ անելուց, այսինքն՝ անձեռնմխելիությունից զրկելուց հետո, ապա այդ ենթադրյալ արարքը պաշտոնավարումից հետո բացահայտվելու դեպքում նույնպես պարտադիր է վերջինին անձեռնմխելիությունից զրկելը: Թեև այս դեպքում Նախագահն արդեն պաշտոնաթող է և նրան պաշտոնանկ անելու հարց չի առաջանում, սակայն հաշվի առնելով, որ Սահմանադրությամբ

պաշտոնանկ անելու և անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը փոխկապակցված է, հետևաբար՝ պաշտոնանկ անելը չպետք է նեղ մեկնաբանել և այն դիտարկել միայն որպես Նախագահի լիազորությունների դադարեցում:

Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը պահպանված լինելու անհրաժեշտությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դեռևս 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշմամբ (...):

(...)

Դատարաններն իրավասու չեն և չեն կարող քննարկել կարգավիճակից բխող արարքների համար նախագահին, այդ թվում՝ պաշտոնաթող, կալանավորելու հարցը, քանի դեռ նա սահմանված ընթացակարգերի պահպանմամբ զրկված չէ անձեռնմխելիությունից: Հակառակ մոտեցման դեպքում՝ դատարանները պետք է ընդհանուր կարգով քննարկեն և լուծեն նաև պատգամավորների, դատավորների, դիվանագետների և անձեռնմխելիությամբ օժտված այլ անձանց կալանավորման հարցը նույնիսկ այն պարագայում, երբ առկա չէ նրանց անձեռնմխելիությունից զրկելու մասին իրավասու մարմնի համաձայնություն: Իզուր չէ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսել է առանձին կարգավորում անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցում: Նշված օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության դեպքում դատախազը համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմում է համապատասխան մարմիններին:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ներկայացված մեղադրանքից ակնհայտ է, որ Ռոբերտ Քոչարյանին մեղսագրվում է այնպիսի արարքներ, որոնց կատարումը բխել է նրա՝ ժամանակին զբաղեցրած կարգավիճակից:

(...) Վերաքննիչ դատարանը, վերոնշյալի համատեքստում, հաշվի առնելով, որ Ռոբերտ Քոչարյանը Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու օրենքով սահմանված հատուկ ընթացակարգի պահպանմամբ չի զրկվել անձեռնմխելիությունից, այլևս չի անդրադառնում կալանավորման պայմանների և հիմքերի առկայության կամ բացակայության հարցին և գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2018թ. հուլիսի 27-ի որոշումը պետք է բեկանել և Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը պետք է վերացնել»:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. ՀՀ գլխավոր դատախազը բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, ենթակա է բեկանման, քանի որ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Բողոքաբերը, մեջբերելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 56.1-րդ և 57-րդ հոդվածները, ի թիվս այլնի, փաստել է. *«Վերաքննիչ դատարանը] վիճարկվող դատական ակտում անհասկանալի տրամաբանությամբ Նախագահին պաշտոնանկ անելու ինստիտուտը մեկնաբանել է որպես պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիությունը հաղթահարելու ընթացակարգ: Մինչդեռ, 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով սահմանված սահմանադրական իրավակարգավորումն անգամ ոչ մասնագետի աչքերով ուսումնասիրելու և մեկնաբանելու պարագայում ակնհայտ է, որ այդպիսին բացառապես վերաբերում է պաշտոնավարող ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերին և ընթացակարգին, այլ ոչ թե պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու կառուցակարգին: (…)*

(…) [Մ]եջբերված սահմանադրական նորմերի իրավակարգավորման առարկաներն ակնհայտորեն տարբեր են և դրանք ուղղված են սահմանադրական տարբեր հարաբերությունների կարգավորմանը: Այդուհանդերձ, 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված՝ Նախագահի պաշտոնանկման իրավական կառուցակարգը, եթե անգամ մեկնաբանվի որպես Նախագահի անձեռնմխելիության հաղթահարման կառուցակարգ, ապա մեջբերված սահմանադրական ձևակերպման պայմաններում այդ կառուցակարգը կարող է կիրառելի լինել բացառապես պաշտոնավարող Նախագահի համար, քանզի այդ կառուցակարգը ենթադրում է գործող Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելուց առաջ նրան պաշտոնանկ անելու հարցի լուծում: Այս առումով ամենևին տեղին չէ վիճարկվող դատական ակտում Անահիտ Սաղաթելյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների մեջբերումը (…)»:

Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի որոշմանը:

10. Պաշտպանները վճռաբեկ բողոքում նշել են, որ Վերաքննիչ դատարանը 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից բխող՝ պատճառաբանված դատական ակտ ստանալու՝ Ռ.Քոչարյանի իրավունքը, չի անդրադարձել մի շարք կարևոր փաստարկների:

Ի հիմնավորումն վերոգրյալի՝ բողոքի հեղինակները, ի թիվս այլնի, փաստել են, որ առկա չէ հիմնավոր կասկած, որ Ռ.Քոչարյանը կատարել է իրեն վերագրվող հանցագործությունը, և որ նկարագրված հանգամանքներում ընդհանրապես առկա է հանցագործություն: Այդ առնչությամբ բողոքի հեղինակները, ներկայացնելով իրենց փաստարկները, նշել են, որ մեղադրանքում նկարագրված գործողություններում հանցանքի կատարման հիմնավոր կասկածը բացակայում է, իսկ Վերաքննիչ դատարանն այդ փաստարկներին առհասարակ անդրադարձ չի կատարել:

Բացի այդ, պաշտպանները նշել են, որ Ռ.Քոչարյանին վերագրվում է մի արարք, որը 2008 թվականի դրությամբ հանցագործություն չի համարվել: Մասնավորապես, բողոք բերած անձինք, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածին, ի թիվս այլնի, պնդել են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը 2008 թվականին գոյություն չի ունեցել:

Անդրադառնալով ՀՀ Նախագահի անձեռնմխելիության կապակցությամբ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումներին՝ պաշտպանները նշել են, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնանկության գործընթացը որևէ առնչություն չունի անձեռնմխելիությունից զրկելու գործընթացի հետ:

Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 13-ի որոշումը լրացուցիչ պատճառաբանել, իսկ անձեռնմխելիության մասով փոփոխել հիմնավորումները, անդրադառնալ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերին և հիմնավորումներին՝ որոշման եզրափակիչ մասը թողնելով անփոփոխ:

<u>Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշումները և եզրահանգումները.</u>

11. Վճռաբեկ դատարանը գտել է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պայմաններից մեկի՝ Հանրապետության նախագահի անձեռնմխելիության հատկանիշի մեկնաբանման և դրա ու կալանավորման մյուս պայմանի՝ հիմնավոր կասկածի հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11.1 Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը որպես իր առջև բարձրացված իրավական հարցադրում արձանագրել է. *«հիմնավոր են արդյոք Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը կարգավորող սահմանադրական նորմերի առնչությամբ Վերաքննիչ դատարանի ձևավորած դատողությունները»:*

Սույն իրավական հարցի շրջանակներում Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածից (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածից) բխում է, որ պաշտոնավարման ժամանակահատվածում Նախագահին օժտված է անձեռնմխելիությամբ թե՛ իր կարգավիճակից բխող, թե՛ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսվել է պաշտոնավարող Նախագահին պաշտոնանկ անելու կառուցակարգ (impeachment) պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի համաձայն՝ նաև Սահմանադրության կոպիտ խախտման դեպքում): Ընդ որում, եթե ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածը (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածը) ամրագրում է Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու կառուցակարգ, ապա համանման կառուցակարգ պաշտոնաթող Նախագահի դեպքում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ:

(…)

ՀՀ Սահմանադրությունը պաշտոնաթող Նախագահի դեպքում նրա գործառութային անձեռնմխելիությունը հաղթահարելու ընթացակարգ չի ամրագրել: Այլ կերպ՝ վերջինս իր կարգավիճակից բխող գործողությունների կատարման համար օժտված է քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությամբ:

Ինչ վերաբերում է Նախագահի կարգավիճակի հետ չկապված գործողություններին, ապա պաշտոնավարման ավարտից հետո Նախագահը դրանց համար չի օգտվում անձեռնմխելիության երաշխիքից և ենթարկվում է պատասխանատվության ընդհանուր հիմունքներով: Մասնավորապես, որպես այդպիսին՝ պետք է դիտարկվեն ոչ միայն հակաօրինական արարքները, որոնք Նախագահն իրականացնում է որպես մասնավոր անձ, քաղաքացի և որոնք կապված չեն նրա գործառնական դերի հետ, այլև այնպիսի գործողությունները, որոնց կատարման իրավասությամբ Նախագահը սահմանադրորեն օժտված չէ կամ կատարում է դրանք՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ:

(…) անձեռնմխելիության կիրառումը չի կարող դիտվել որպես մեխանիկական գործընթաց: Պարզելու համար՝ արդյոք կատարված գործողությունները բխել են Նախագահի կարգավիճակից, թե ոչ, չպետք է առաջնորդվել ձևական մոտեցմամբ և հիմք ընդունել միայն այն հանգամանքը, որ ենթադրյալ արարքը կատարելու ժամանակ անձը հանդես է եկել որպես Նախագահ: Կատարված գործողությունը Նախագահի կարգավիճակից բխելու կամ չբխելու և համապատասխանաբար անձեռնմխելիության ինստիտուտը կիրառելու հարցը լուծելիս անհրաժեշտ է համակողմանի

գնահատման ենթարկել իրականացված գործողությունների բնույթը, այն է՝ բացահայտել դրանց՝ Նախագահի՝ որպես պետության գլխի գործառույթների կենսագործմանն ուղղված լինելու, Նախագահի առջև դրված խնդիրները՝ Սահմանադրությամբ վերջինիս վերապահված լիազորությունների միջոցով իրականացնելու հանգամանքները, ինչպես նաև պարզել համապատասխան գործողության հիմքում ընկած շահը, նպատակը: Մասնավորապես, եթե Հանրապետության նախագահը գործել է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, նրա գործողությունները պայմանավորված են եղել իր գործառույթների իրացման անհրաժեշտությամբ և առաջնորդվել է հանրային շահով, ապա վերջինս նման գործողությունների համար անձեռնմխելի է և ենթակա չէ հետապնդման ու պատասխանատվության նաև լիազորությունների ավարտից հետո, քանի որ այդպիսիք համատեղելի են Նախագահի կարգավիճակի հետ և բխում են վերջինից: Մինչդեռ եթե Նախագահը լիազորություններն իրականացնելիս առաջնորդվել է իր մասնավոր, անձնական շահով կամ չի ունեցել համապատասխան գործողությունն իրականացնելու լիազորություն կամ դա իրականացրել է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ, ապա նման գործողությունները չեն կարող առնչություն ունենալ Նախագահի կարգավիճակի հետ և պետք է գնահատվեն որպես Նախագահի կարգավիճակի հետ չկապված:

11.2. Մեջբերված իրական դիրքորոշումները կիրառելով գործի փաստերի նկատամամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիության դեպքում նրա կալանավորման հարցը չի կարող քննարկվել, քանի դեռ վերջինիս անձեռնմխելիությունը հաղթահարված չէ, անհիմն է: Վերաքննիչ դատարանը, գալով նման հետևության, ճիշտ չի մեկնաբանել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը և Նախագահին պաշտոնանկ անելու համապատասխան կառուցակարգը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պաշտոնաթող դատավորի անձեռնմխելիության, այդ թվում՝ դրա հնարավոր հաղթահարման՝ դատավորի անձեռնմխելիության հիմնարար իրավական արժեքի համատեքստում Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում ձևավորված իրավական դիրքորոշումները պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիության ինստիտուտի նկատմամբ կիրառելը, Վճռաբեկ դատարանի համապատասխան դատողությունները հիմք ընդունելն այնպիսի եզրահանգման գալու համար, որ պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիությունը կարող է հաղթահարվել, տեղին չի կարող համարվել:

12. Վճռաբեկ դատարանը որպես իր առջև բարձրացված երկրորդ իրավական հարց առանձնացրել է հետևյալը. *«ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով*

նախատեսված հանցագործություն առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը քննության առարկա չդարձնելով՝ Վերաքննիչ դատարանը կարող էր արդյոք վերջինիս անձեռնմխելիության հարցի կապակցությամբ հանգել հիմնավորված հետևության»:

12.1. Վերոհիշյալ հարցադրման շրջանակներում Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ազատության իրավունքի վերաբերյալ սահմանադրական, կոնվենցիոն և քրեադատավարական մի շարք նորմեր, դրա կապակցությամբ իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները, գտել է, որ պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիության հարցի լուծումն անմիջականորեն ենթադրում է մեղադրյալին մեղսագրվող գործողությունների՝ հիմնավոր կասկածի տեսանկյունից գնահատում: Հետևաբար, հիմնավոր կասկածը գնահատման չենթարկելու պարագայում (այն, թե արդյոք անձն առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը և արդյոք դեպքը, իրադարձությունը, որի կատարման մեջ անձը մեղադրվում է, առերևույթ համընկնում է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին) դատարանն իրեն փաստացի զրկում է պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիության, մասնավորապես՝ վերջինիս կողմից առերևույթ կատարված գործողությունները նրա կարգավիճակից բխելու կամ չբխելու հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից:

12.2. Արդյունքում Վճռաբեկ դատարանը եկել է եզրահանգման, որ Վերաքննիչ դատարանը, Հանրապետության նախկին նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը գնահատման չենթարկելով և, միևնույն ժամանակ, քննարկման առարկա դարձնելով Ռ.Քոչարյանի գործառութային անձեռնմխելիության, մասնավորապես՝ վերջինիս կողմից առերևույթ կատարված գործողությունները նրա կարգավիճակից բխելու կամ չբխելու հարցը, փաստացի իրեն զրկել է այդ հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից:

12.3. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների՝ հիմք են ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում բողոքաբերների մնացած փաստարկներին հնարավոր է անդրադառնալ արձանագրված խախտումները վերացնելուց հետո: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ

նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է գնահատման ենթարկի ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռ.Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը, և միայն դրա առկայությունը հավաստելու պարագայում անդրադառնա Ռ.Քոչարյանի անձեռնմխելիության հարցին: Կալանավորման պայմանների առկայությունը հաստատված համարելու դեպքում Վերաքննիչ դատարանը պետք է քննության առարկա դարձնի կալանավորման հիմքերի հարցը:

Դատավոր Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումը

13. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի և պաշտպանների բողոքները, ծանոթանալով վարույթում առկա նյութերին, ինչպես նաև դատախազի բողոքը մասնակի բավարարելու, իսկ պաշտպանների բողոքը մերժելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չեմ Ռ.Քոչարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշման պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ, ներքոշարադրյալ պատճառաբանություններով:

Հանրապետության նախագահի անձեռնմխելիության հարկանիշի և կալանավորման մյուս պայմանի՝ հիմնավոր կասկածի հարաբերակցության կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում նշել հետևյալը.

14. Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ *կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը:* Որպես կալանավորման պայմաններ առանձնացվում են համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը, հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածը *(տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը, կետեր 19, 21):* Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ իրավական հետևանքների տեսանկյունից վերոթվարկյալ պայմաններից որևէ մեկը մյուսի նկատմամբ որև առավելություն չունի. դրանցից որևէ մեկի բացակայությունն ինքնին իմաստազրկում է մնացածին, ինչպես նաև կալանավորման հիմքերին անդրադառնալու նպատակը:

15. Եվրոպական դատարանի, ինչպես նաև վերջինիս վրա հիմնված Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում հիմնավոր կասկածը՝ որպես կալանավորման պայման, ենթադրում է փաստերի կամ տեղեկու-

թյունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լիներ հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում *(Տե՛ս Fox, Campbell and Hartley v. The United Kingdom գործով Մեծ պալատի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32, Murray v. The United Kingdom գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատթիվ 14310/88, կետ 55, Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը, կետ 22*):

Այսինքն, հիմնավոր կասկածը որպես կալանավորման պայման իրենից ենթադրում է անձի կողմից իրեն վերագրվող արարքը կատարած լինելու ***կասկածի այնպիսի աստիճանը***, որը հնարավորություն կտա անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է կատարած լինի հանցանքը:

16. Ինչ վերաբերում է որոշակի խումբ անձանց անձեռնմխելությունը հաղթահարված լինելուն՝ ապա որպես կալանավորման պայման վերջինիս գնահատումը ձևական բնույթ է կրում, քանի որ դատարանի խնդիրն է ստուգել ոչ թե անձեռնմխելիությունից զրկելու կամ չզրկելու վերաբերյալ համապատասխան նորմատիվ ակտի իրավաչափությունը, այլ սոսկ դրա առկայության հավաստումը: Ընդ որում որոշակի խումբ անձանց անձեռնմխելիությունից զրկելու համար հանցանք կատարած կասկածի աստիճանին առաջադրվող պահանջներ նախատեսված չեն օրենսդրությամբ: Այլ խոսքով՝ կալանավորման համար անհրաժեշտ կասկածի աստիճանը որոշակի իրավիճակներում ընդհանրապես իրավական նշանակություն չունի անձին անձեռնմխելիությունից զրկելու հարցի որոշման համար: Ընդ որում՝ իրավասու սուբյեկտների կողմից որոշակի անձի անձեռնմխելիությունից զրկելու հանգամանքը ինքնին չի կարող պայմանավորել հիմնավոր կասկածի՝ որպես կալանավորման պայմանի հաստատումը:

16.1. Անխոս անձին վերագրվող արարքը էական նշանակություն ունի վերջինիս գործառութային անձեռնմխելիության առկայության, այն է՝ անձին վերագրվող արարքի՝ նրա պաշտոնական դիրքից բխելու հանգամանքը որոշելիս, սակայն դրա գնահատմանը չի կարող առաջադրվել հիմնավոր կասկածի չափանիշին համապատասխանելու պահանջ: Այսինքն՝ անձի գործառութային անձեռնմխելիություն ունենալու հարցի որոշումը, որպես կանոն, պետք է իրականացվի նրան վերագրված արարքին վարույթն իրականացնող մարմնի կողմից տրված փաստական և իրավական նկարագրության հիման վրա: Եթե վերջինից առերևույթ հետևվում է, որ տվյալ անձն օգտվում անձեռնմխելիությունից, ապա կալանավորման բովանդակային

բնույթի այնպիսի պայմանի, ինչպիսին է հիմնավոր կասկածը, դատարանն իրավասու չէ անդրադառնալ:

Հակառակ մոտեցման դեպքում, հնարավոր է իրավիճակ, երբ **դատարանը հաստատված համարի** անձի կողմից իրեն վերագրված արարքը կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը, որը կարող է ուղղորդող կամ էթիկական տեսանկյունից կաշկանդող նշանակություն ունենալ անձեռնմխելիությունից զրկելու հարցը որոշելու իրավասություն ունեցող սուբյեկտների համար: Ավելին՝ անձեռնխելությունից զրկելուց հետո կալանքի հարցի կրկին քննարկման դեպքում առկա կլինի օրինական ուժ ունեցող դատարանի որոշում, որով հաստատված լինի հիմնավոր կասկածի առկայությունը, ինչը կարող է սահմանափակել համապատասխան որոշում կայացնող դատարանին, կամ առնվազն՝ կասկածներ առաջացնել դատական ակտի հեղինակության կապակցությամբ:

17. Վերոհիշյալ դիրքորոշումներից ելնելով անընդունելի եմ համարում Վճռաբեկ դատարանի մեծամասնության իրավական դիրքորոշումներն այն մասին, որ *«գործառութային անձեռնմխելիության հարցի լուծումն անմիջականորեն ենթադրում է մեղադրյալին մեղսագրվող գործողությունների՝ հիմնավոր կասկածի տեսանկյունից գնահատում: Հետևաբար, հիմնավոր կասկածը գնահատման չենթարկելու պարագայում (այն, թե արդյոք անձն առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը և արդյոք դեպքը, իրադարձությունը, որի կատարման մեջ անձը մեղադրվում է, առերևույթ համընկնում է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին) դատարանն իրեն փաստացի զրկում է պաշտոնաթող Նախագահի գործառութային անձեռնմխելիության, մասնավորապես՝ վերջինիս կողմից առերևույթ կատարված գործողությունները նրա կարգավիճակից բխելու կամ չբխելու հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից»*:

Պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիության մեկնաբանման կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում նշել հետևյալը.

18. Մեջբերելով ՀՀ նախագահի կարգավիճակի և անձեռնմխելիության վերաբերյալ սահմանադրական նորմերը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *«Պաշտոնավարման ավարտից հետո Նախագահը իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար չի օգտվում անձեռնմխելիության երաշխիքից և ենթարկվում է պատասխանատվության ընդհանուր հիմունքներով: Մասնավորապես, որպես այդպիսին՝ պետք է դիտարկվեն ոչ միայն հակաօրինական արարքները, որոնք Նախագահին իրականացնում է որպես մասնավոր անձ, քաղաքացի և որոնք կապված չեն նրա գործառնական դերի հետ, այլև այնպիսի գործողությունները, որոնց կատարման իրավասությամբ Նախագահը սահմանադրորեն օժտված չէ կամ կատարում է դրանք՝ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ:*

(…) անձեռնմխելիության կիրառումը չի կարող դիտվել որպես մեխանիկական գործընթաց: Պարզելու համար՝ արդյոք կատարված գործողությունները բխել են Նախագահի կարգավիճակից, թե ոչ, չպետք է առաջնորդվել ձևական մոտեցմամբ և հիմք ընդունել միայն այն հանգամանքը, որ ենթադրյալ արարքը կատարելու ժամանակ անձը հանդես է եկել որպես Նախագահ: Կատարված գործողությունը Նախագահի կարգավիճակից բխելու կամ չբխելու և համապատասխանաբար անձեռնմխելիության ինստիտուտը կիրառելու հարցը լուծելիս անհրաժեշտ է համակողմանի գնահատման ենթարկել իրականացված գործողությունների բնույթը, այն է՝ բացահայտել դրանց՝ Նախագահի՝ որպես պետության գլխի գործառույթների կենսագործմանն ուղղված լինելու, Նախագահի առջև դրված խնդիրները՝ Սահմանադրությամբ վերջինիս վերապահված լիազորությունների միջոցով իրականացնելու հանգամանքները, ինչպես նաև պարզել համապատասխան գործողության հիմքում ընկած շահը, նպատակը: Մասնավորապես, եթե Հանրապետության նախագահը գործել է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, նրա գործողությունները պայմանավորված են եղել իր գործառույթների իրացման անհրաժեշտությամբ և առաջնորդվել է հանրային շահով, ապա վերջինս նման գործողությունների համար անձեռնմխելի է և ենթակա չէ հետապնդման ու պատասխանատվության նաև լիազորությունների ավարտից հետո, քանի որ այդպիսիք համատեղելի են Նախագահի կարգավիճակի հետ և բխում են վերջինից: Մինչդեռ եթե Նախագահը լիազորություններն իրականացնելիս առաջնորդվել է իր մասնավոր, անձնական շահով կամ չի ունեցել համապատասխան գործողությունն իրականացնելու լիազորություն կամ դա իրականացրել է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների անցմամբ, ապա նման գործողությունները չեն կարող առնչություն ունենալ Նախագահի կարգավիճակի հետ և պետք է գնահատվեն որպես Նախագահի կարգավիճակի հետ չկապված»:

18.1. Վճռաբեկ դատարանի կողմից նախագահի գործառութային անձեռնմխելիության սահմանների որոշմանը տրված հիշյալ մեկնաբանությունն անընդունելի է և չի բխում գործառութային անձեռնմխելիության գաղափարախոսությունից: Վերջինս իրենից ներկայացնում է անձի կողմից համապատասխան արարքը կատարելիս որպես պաշտոնատար անձ հանդես գալիս և պաշտոնական լիազորություններ իրականացնելիս պատասխանատվության ենթարկվելու արգելք կամ բարդացված ընթացակարգ: Գործառութային անձեռնմխելիության տարբերությունը անձնական անձեռնմխելիությունից դրսևորվում է հենց ի պաշտոնե իրականացված արարքների նկատմամբ կիրառելիության մեջ: Հետևաբար դրա շրջանակների այնպիսի մեկնաբանությունը, որ պաշտոնատար անձը (սույն դեպքում Նախագահը) ի պաշտոնե գործելիս չի օգտվում անձեռնմխելիությունից այն

արարքների համար, որոնք իրականացնում է իր պաշտոնական լիազորությունների անցմամբ, որի դրսևորում է նաև իրավական ակտով համապատասխան լիազորությամբ օժտված չլինելը, չի բխում համապատասխան պաշտոնատար անձին տրված քննարկվող սոցիալական երաշխիքի բովանդակությունից: Վերջինիս կարևորությունը և առկայության նպատակը ընդգծվել է նաև Վճռաբեկ դատարանի կողմից, սակայն արդյունքում դրա շրջանակների անհարկի նեղ մեկնաբանության հետևանքով, ըստ էության, բովանդակազրկվել է:

Հարկ է նկատել, որ գործառութային անձեռնմխելիությանը Վճռաբեկ դատարանի կողմից տրված հիշյալ մեկնաբանությունը չնայած կատարվել է պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիության առնչությամբ, սակայն հավասարապես վերաբերելի է նաև նույնաբովանդակ անձեռնմխելիությունից օգտվող մնացած պաշտոնատար անձանց նկատմամբ:

18.2. Այս կապակցությամբ հետաքրքրական է, որ գործառութային անձեռնմխելիության շրջանակների կապակցությամբ միջազգային իրավունքում նկատվում է որոշակի, սակայն ոչ կայուն մոտեցում ի պաշտոնե կատարված գործողությունների հասկացության շրջանակից միջազգային հանցագործությունները բացառելուն ուղղված: Վերջինս պայմանավորված է հիշյալ հանցագործություններով պատասխանատվության անխուսափելիության բացարձակ կանոնի *(jus cogens)* սահմանմամբ: Սակայն հեղինակավոր դոկտրինալ աղբյուրներում նման մոտեցումն անընդունելի է գնահատվել, քանի որ հակասում է գործառութային անձեռնմխելիության ավանդաբար ձևավորված գաղափարախոսությանը:

Վերջինսի համատեքստում առավել է ընդգծվում ի պաշտոնե գործելիս միջազգային չհամարվող այլ հանցագործությունները, որոնք կարող են դրսևորվել նաև պաշտոնական լիազորությունների չարաշահմամբ, պաշտոնական լիազորությունների սահմանազանցմամբ, գործառութային անձեռնմխելիության երաշխիքի շրջանակներից բացառելու անթույլատրելիությունը:

18.3. Վերոհիշյալով պայմանավորված լիովին կիսում եմ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ. «(…) ***պարտադիր չէ, որպեսզի Նախագահը գործի հստակ իր լիազորությունների շրջանակներում և դրանցից դուրս չգա, կարևորն այն է, որ վերջինի կատարած այդպիսի արարքը բխի իր՝ որպես Նախագահի կարգավիճակից և պայմանավորված լինի Նախագահին վերապահված լիազորությունների իրականացմամբ***: *Հակառակ մոտեցման դեպքում, եթե պայմանականորեն ընդունենք, որ «կարգավիճակից բխող գործողություններ» հասկացության տակ պետք է հասկանալ Նախագահին վերապահված իրավունքների և պարտականությունների անշեղ կատարումը, ապա այդ դեպքում Նախագահի անձեռնմխելիության իրավունքի նախապատեսումն անիմաստ կլինի, քանի որ ոչ միայն*

նախագահը, այլ նաև ցանկացած պաշտոնատար անձ և անհատ չի կարող հետապնդվել կամ քրեական պատասխանատվության [ենթարկվել] իր օրինական գործողությունների համար»:

19. Ինչպես Վերաքննիչ դատարանը, այնպես էլ Վճռաբեկ դատարանն իրավացիորեն արձանագրել են, որ ՀՀ Սահմանադրությունը պաշտոնաթող Նախագահի դեպքում նրա գործառութային անձեռնմխելիությունը հաղթահարելու ընթացակարգ չի ամրագրել: Այլ կերպ՝ վերջինս իր կարգավիճակից բխող գործողությունների կատարման համար օժտված է քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությամբ:

20. Վերոհիշյալ դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի նկատմամբ գտնում եմ, որ Ռ.Քոչարյանին մեղսագրված արարքի նկարագրությունից ակնհայտորեն հետևում է, որ նրան վերագրված արարքները վերաբերում են որպես Նախագահ իր կարգավիճակին, այլ ոչ որպես մասնավոր անձ կատարած գործողություններին: Հետևաբար, սույն դեպքում Ռ.Քոչարյանն օգտվում է պաշտոնաթող նախագահի համար ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառութային անձեռնմխելության երաշխիքից:

Վերոգրյալի համատեքստում պետք է կրկին փաստել, որ կալանավորման պայմանն առկա չէ, եթե անձեռնմխելիության հատկանիշը կրող սուբյեկտը շարունակում է այն պահպանել: Այլ խոսքով՝ եթե անձեռնմխելիության հատկանիշով սուբյեկտը օրենսդրությամբ սահմանված կարգով անձեռնմխելիությունից չի զրկվել, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելը իրավաչափ չէ:

21. Այն դեպքում, երբ անձը օգտվում է քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից, դատախազը պետք է համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմի համապատասխան մարմիններին, եթե գտնում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն առկա են: Ընդ որում, խնդրո առարկա քրեադատավարական նորմը (136-րդ հոդվածի 2-րդ մաս) սահմանում է, որ մատնանշված ընթացակարգի պահպանումը, այլ խոսքով՝ համաձայնություն ստանալու միջնորդությամբ համապատասխան մարմիններին դիմելը, պարտադիր է ցանկացած այն անձի դեպքում, ով օգտվում է քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից: *Սակայն գործառութային անձեռնմխելիության հաղթահարման ընթացակարգ ՀՀ Սահմանադրությունը պաշտոնաթող Նախագահի դեպքում փաստացի չի ամրագրել:*

22. Վերոգրյալներից ելնելով արձանագրենք հետևյալը.

1) Անձեռնմխելիությունը լինելով անձին պատասխանատվությունից զրկելու նախապայման՝ այն առանցքային երաշխիք է կամայականորեն ազատությունից զրկվելուց պաշտպանվելու համար:

2) Անձեռնմխելիության պայմանի հաղթահարումը պետք է նախորդի

հիմնավոր կասկածի առկայության ստուգմանն ու գնահատմանը: Այլ խոսքով՝ եթե անձեռնմխելիության պայմանը հաղթահարված չէ, քրեական հետապնդման և կալանավորման գործընթացը իմաստազրկվում են: Ուստի անձեռնմխելիության պայմանի հաղթահարումից հետո է միայն հնարավոր անդրադառնալ առերևույթ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի հավաստմանը:

3) Պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի բացակայությունը բացառում է քրեական հետապնդման հարուցումը (մեղադրանք առաջադրելը), ուստի նաև խափանման միջոցի՝ կալանքի հարցի քննարկումը:

Կալանավորման պայմանն առկա չէ, եթե անձեռնմխելիության հատկանիշը կրող սուբյեկտը շարունակում է այն պահպանել:

4) ՀՀ Սահմանադրությունը և օրենսդրությունը պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգ չի սահմանել: Այս առումով գտնում եմ, որ առկա է սահմանադրաիրավական բաց, որը հնարավոր չէ հաղթահարել իրավակիրառ պրակտիկայում:

5) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն դրույթը, ըստ որի *«Քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության դեպքում դատախազը համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմում է համապատասխան մարմիններին»* իրագործելի չէ, քանի որ ՀՀ օրենսդրությունը պաշտոնաթող Նախագահի համար այդպիսի մարմին չի նախատեսել:

Մինչդեռ, անձեռնմխելիության հատկանիշով օժտված առանձին կատեգորիայի հատուկ սուբյեկտների վերաբերյալ (ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ, Սահմանադրական դատարանի անդամներ, դատավորներ) ՀՀ Սահմանադրությունը և համապատասխան սահմանադրական օրենքները նախատեսել են տվյալ անձանց անձեռնմխելիությունը հաղթահարելու կառուցակարգ:

Հարկ եմ համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ գլխում սահմանված են միայն դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունները: Բացի այդ, առկա է քրեադատավարական բաց նաև նույն օրենսգրքի 35-րդ հոդվածում այն առումով, որ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների շարքում Նախագահի անձեռնմխելիությունը նշված չէ (եթե Նախագահի անձեռնմխելիության հատկանիշը պահպանված է):

Հարկ է նշել, որ տարբեր երկրների օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու կառուցակարգը հստակեցված է (տես, օրինակ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլուխը):

6) Պաշտոնաթող Նախագահին անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ օրենսդրական կարգավորման բացակայությունը հակասում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներում ամրագրված համաչափության և որոշակիության սկզբունքներին:

Հետևաբար՝

– պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիությունը բովանդակող Սահմանադրական նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած դատողությունները համոզիչ չեն և չեն բխում գործառութային անձեռնմխելության գաղափարախոսությունից,

– Վճռաբեկ դատարանը հանգել է սխալ հետևության, որ սկզբում պետք է ստուգել հիմնավոր կասկածի առկայությունը, որից հետո անդրադառնալ անձեռնմխելիության հաղթահարման հարցին: Գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանի տվյալ եզրահանգումը չի բխում հիմնավոր կասկածի վերաբերյալ Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի ձևավորված կայուն նախադեպային որոշումների, ինչպես նաև անձեռնմխելիության ինստիտուտի օրենսդրական կարգավորումների տրամաբանությունից:

23. Նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմերի առնչությամբ Վերաքննիչ դատարանի ձևավորած և մատնանշված դատողությունները, հաշվի առնելով այդ դատողությունների առնչությամբ ՀՀ գլխավոր դատախազի և պաշտպանների՝ վճռաբեկ բողոքներում ներկայացված փաստարկները, ՀՀ գլխավոր դատախազի բողոքի առնչությամբ պաշտպանի պատասխանը, Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև համադրված վերլուծության ենթարկելով հատուկ կարծիքում մեջբերված իրավանորմերն ու արտահայտված դիրքորոշումները՝ իմ համոզմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունն այնքանով, որքանով անձեռնմխելիության հաղթահարման պահանջ է ենթադրում նաև պաշտոնաթող Նախագահի համար, չի համապատասխանում 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածի 2-րդ մասին և 57-րդ հոդվածին (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածի 2-րդ մասին և 141-րդ հոդվածին, ինչպես նաև 78-րդ և 79-րդ հոդվածներին):

Այսպիսով, հիմնավոր կասկածներ ունեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության սահմանադրականության վերաբերյալ: Գտնում եմ, որ Նախագահի անձեռնմխելիության, ինչպես նաև պաշտոնանկման սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում քրեադատավարական հիշյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը և դրա՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցի որոշումն անհրաժեշտ պայման է սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցերի լուծման համար:

Ուստի մինչ ՀՀ գլխավոր դատախազի և պաշտպանների կողմից Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցերին վերջնական իրավական գնահատական տալը, գտնում եմ, որ առկա էր բողոքների վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտություն՝ կիրառման ենթակա նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով: Տվյալ դիրքորոշումը պայմանավորվում է նաև ինչպես ՀՀ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմնարար դրույթով, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Մասնավորապես՝ թիվ ՍԴՈ-1114 որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ դատողությունը. *«(…)[Ի]րավանքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն: Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մտահոգությունը չի կարող փարատվել հայեցողական մոտեցմամբ, որովհետև այն պահանջում է «գնահատման» դատավարական համապատասխան ընթացակարգ և դրա իրականացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կխախտվեն այդ իրավունքները» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1114 որոշման 9-րդ կետը):*

24. Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանել է քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիմքով, այն պատճառաբանությամբ, որ թույլ է տրվել էական դատական սխալ, որը ազդել է գործի ելքի վրա: Համաձայն չեմ Վճռաբեկ դատարանի հիշյալ եզրահանգման հետ, քանի որ Վճռաբեկ դատարանը հաշվի չի առել, որ դատական սխալի հիմքով Վճռաբեկ դատարանը դատական ակտը կարող է բեկանել միայն այն դեպքում, երբ այդ սխալը իր բնույթով հիմնարար խախտում է, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը: Որոշման մեջ համապատասխան խախտման՝ հիմնարար լինելու վերաբերյալ որևէ պատճառաբանություն կամ հիմնավորում առկա չէ:

25. Հաշվի առնելով վերոշարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով՝ գտնում եմ, որ անհրաժեշտ էր ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի, մեղադրյալ Ռ.Քոչարյանի պաշտպաններ Հ.Ալումյանի, Ռ.Սահակյանի, Ա.Օրբելյանի և Հ.Խուդոյանի բողոքների վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել

ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համապատասխանությունը 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 56.1-րդ հոդվածի 2-րդ մասին և 57-րդ հոդվածին (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածի 2-րդ մասին և 141-րդ, ինչպես նաև 78-րդ, 79-րդ հոդվածներին)։

Դատավոր՝ Ս.Ավետիսյան

53. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0036/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դիմող՝ Ա.ԱՎԵՏՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 6-ի որոշման դեմ դիմող Արմենուհի Սարգսի Ավետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի հետաքննության բաժանմունքի հետաքննիչ Մ.Ավետիքյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ՝ Արմենուհի Ավետյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ա.Ավետյանի բողոքը Լոռու մարզի դատախազ Ա.Մարտիրոսյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ մերժվել է:

2. Դիմող Ա.Ավետյանի բողոքի քննության արդյունքում Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝

Առաջին ատյանի դատարան) 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ բողոքը մերժել է:

3. Դիմող Ա.Ավետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մարտի 6-ի որոշմամբ բողոքը մերժել է, Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ա.Ավետյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

5. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Արմենուհի Ավետյանը ՀՀ գլխավոր դատախազին ուղղված 2017 թվականի հունիսի 9-ի իր դիմումում, ի թիվս այլոց, նշել է, որ իր նկատմամբ տեղի են ունեցել որոշակի հետապնդումներ, նույնիսկ 5 օր պահվել է ձերբակալված անձանց պահման վայրում: Այնուհետև իրեն գրանցել են Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, որի մասին ինքն իմացել է 2008 թվականին, իսկ համապատասխան փաստաթղթերին ծանոթացել՝ 2016 թվականին, որոնցից հետևում է, որ դիսպանսերում իրեն գրանցելը կրել է անօրինական բնույթ, ինքը երբևէ դիսպանսեր չի հաճախել և որևէ բուժում չի ստացել[1]:

7. Հետաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման համաձայն՝ *«(…) Նյութերի նախապատրաստման ընթացքում (…) պարզվել և հիմնավորվել է, որ Արմենուհի Ավետյանին հոգեբուժական հիվանդանոցում որևէ մեկն ապօրինի չի տեղավորել կամ պահել, վերջինս Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերում հաշվառվել է՝ հիմնվելով նրա մոտ հայտնաբերված «պարանոիդ համախտանիշ» ախտորոշման հիման վրա և հետագայում 2009 թվականին իրականացված ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությամբ ևս հիմնավորվել է Արմենուհի Ավետյանի մոտ հոգեկան հիվանդության առկայությունը: (…)»*[2]:

8. Լոռու մարզի դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշման համաձայն՝ *«(…) նյութերով քրեական գործ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, ուստի վարույթն իրականացնող մարմինն իրավացիորեն մերժել է քրեական գործ հարուցելը և այդ որոշումը վերացնելու իրավական հիմքեր առկա չեն, հետևաբար Արմենուհի Ավետյանի բողոքն անհիմն է և*

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 2-3:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 34-36:

ենթակա է մերժման»[1]:

9. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Դատարանը, դատական սրճուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, ներկայացված նյութերի հետազոտման արդյունքում արձանագրում է, որ հիմնավոր է (…) հետևությունն այն մասին, որ Ա.Ավետյանի հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական սրճուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն հավաստելու, որ առկա են քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը:*

Բացի այդ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս հետաքննիչի կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով անձի իրավունքների և ազատությունների խախտումներ առկա չեն:

Դատարանը փաստում է, որ բողոքաբերի կարծիքը՝ հետաքննիչի կողմից ոչ հիմնավոր որոշում կայացնելու մասին, անհիմն է և չի բխում ներկայացված նյութերից (…)»[2]:

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Վերաքննիչ դատարանը՝ առաջին ատյանի դատարանի՝ 07.12.2017 թվականի որոշման օրինականության ու հիմնավորվածության սրճուգման արդյունքում գալիս է այն համոզման, որ Դատարանը՝ մերժելով հետաքննիչի 09.12.2017 թվականի որոշման դեմ դիմող Ա.Ավետյանի բողոքը, մանրամասնորեն քննարկման առարկա է դարձրել դիմողի (…) բողոքի յուրաքանչյուր փաստարկ և դրան տվել է պատշաճ իրավական գնահատական, ղեկավարվել է քրեադատավարական իրավանորմերով և հանգել ճիշտ իրավական հետևության այն մասին, որ առկա չեն քրեական գործի հարուցման բավարար հիմքեր:*

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում հետաքննության մարմինն իր լիազորությունների սահմաններում դիմող Արմենուհի Ավետյանի դիմումը սրանալու պահից 10 օրվա ընթացքում, ենթադրյալ հանցագործության դեպքը բացահայտելու հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը հավաստող փաստական տվյալների վերհանման նպատակով արդեն իսկ կատարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակ թվով առաջնային քննչական գործողություններ, սակայն նյութերի նախապատրաստության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներով չի հաստատվում, որ Ա.Ավետյանը Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր չի հաճախել և իրեն այնտեղ գրանցելը կրել է անօրինական բնույթ, որի պայմաններում հետաքննության մարմինն իրավաչափ որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով մերժելու մասին:

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 7-8:
[2] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 23-24:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտի ստուգման արդյունքում հաշվի առնելով վերոշարադրյալ պայմաններն ու հանգամանքները, հանգում է այն եզրահանգման, որ դիմող Արմենուհի Ավետյանի դիմումի կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռքբերված փաստական տվյալները բավարար չեն փաստելու, որ հաղորդման մեջ նշված հանգամանքները պարունակում են հանցագործության հատկանիշներ, Դատարանը՝ մերժելով եզրաքննիչի որոշման դեմ բերված դիմողի բողոքը, պահպանել է նյութական և դատավարական օրենսդրության պահանջները, ինչի հետևանքով չեն խախտվել դիմող Արմենուհի Ավետյանի իրավունքներն ու օրինական շահերը, հետևաբար՝ դիմող Ա.Ավետյանի վերաքննիչ բողոքի փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 07-ի որոշումը բեկանելու համար: (…)» [1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոք բերած անձի պնդմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը պատճառաբանված չէ, քանի որ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել իր կողմից բարձրացված հարցերին՝ արդյունքում կայացնելով անհիմն որոշում:

Մասնավորապես բողոքաբերը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը չի կատարել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չեն պարզվել դիսպանսերում իրեն ապօրինի հաշվառման վերցնելու հանգամանքները, չեն հարցաքննվել իրեն հոգենյարդաբանական դիսպանսեր ուղեկցած և դիսպանսերում իրեն հաշվառման վերցրած անձինք: Ավելին՝ բողոքի հեղինակը նշել է, որ թերի քննության արդյունքում ո՛չ հետաքննության մարմնի, ո՛չ էլ դատախազի որոշմամբ անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, որ ինքը 5 օր պահվել է ձերբակալված անձանց պահման վայրում: Արդյունքում՝ համապատասխան անձանց արարքներին չի տրվել իրավական ճիշտ գնահատական:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է պարտավորեցնել վերացնել հետաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ, դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշմամբ, ինչպես նաև ստորադաս դատարանների որոշումներով իր իրավունքների և օրինական շահերի խախտումները:

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 76-82:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք դիմող Արմենուհի Ավետյանի հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ *«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին (…)»:*

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

15. Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ս.Գևորգյանի* գործով և արձանագրել, որ. *«(…) [Ք]րեական գործի հարուցման փուլի իրավական նշանակությունն*

այնպիսի դատավարական կարգի ապահովման մեջ է, որի պայմաններում կբացառվի քրեադատավարական գործիքակազմի անհիմն և աննպատակահարմար կիրառումը, հետևաբար նաև՝ ոչ հանցավոր իրադարձությունների կապակցությամբ անձանց իրավունքների ու օրինական շահերի սահմանափակումները և հանրային ռեսուրսների վատնումը: Դրանով պայմանավորված՝ քննարկվող փուլի առաջնային խնդիրներից է քրեական գործ հարուցելու առիթի օրինականության, ինչպես նաև հիմքերի բավարարության պարզումը:

Քրեական գործ հարուցելու առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեությունը[1]: Առիթն օրենքով սահմանված այն աղբյուրն է, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին[2]: Ընդ որում, քրեական գործ հարուցելու առիթը պետք է բավարարի օրենքով նախատեսված և՛ ձևական (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-179-րդ հոդվածներով նախատեսված), և՛ բովանդակային պահանջներին[3]:

Քրեական գործ հարուցելու հիմքը հանցագործության հատկանիշների առկայության մասին վկայող փաստերն են: Ընդ որում, քրեական գործ կարող է հարուցվել միայն հանցագործության հատկանիշների վերաբերյալ փաստերի բավարարության դեպքում: Դրանց բավարարության գնահատման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է ոչ թե հանցակազմի բոլոր տարրերի, այլ սոսկ հանցագործության արտաքին հատկանիշների առկայության հավաստումը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ենթադրությունն օբյեկտիվորեն կրում է հավանական բնույթ, քանի որ դրա վերջնական հաստատումը գործի քննության հետագա փուլերի խնդիրն է: Քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ենթադրում է հանցագործության հատկանիշների վերաբերյալ փաստերի այնպիսի համակցություն, որն օբյեկտիվ դիտորդին հնարավորություն կտա ենթադրություն կատարել հանցագործության հավանական առկայության վերաբերյալ: Հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ

---

[1] Տե՛ս *Էմմա Կարապետյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը:

[2] Տե՛ս *Ռուզաննա Նիազյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշման 20-րդ կետը:

[2] Մանրամասն տե՛ս *Էմմա Կարապետյանի*, ինչպես նաև *Ռուզաննա Նիազյանի* գործերով Վճռաբեկ դատարանի վերը հիշատակված որոշումները:

կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ (քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում), քանի որ նման կասկածները կարող են վերացվել միայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության միջոցով, ինչն էլ հնարավոր է հարուցված քրեական գործի պայմաններում: Այսինքն՝ քրեական գործի հարուցման հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ղեկավարվի նման կասկածները հօգուտ լիարժեք քննություն իրականացնելուն մեկնաբանելու սկզբունքով»[1]:

15.1 Միևնույն ժամանակ անդրադառնալով քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններին՝ Վճռաբեկ դատարանը նույն որոշմամբ նշել է, որ պայմանավորված դատական վերահսկողության խնդիրներով դրանք ընդգրկում են հետևյալ հարցադրումները.

«ա) արդյոք պահպանվել են «Քրեական գործ հարուցելը» վերտառությունը կրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում զետեղված պահանջները,

բ) արդյոք վիճարկվող որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումները համապատասխանում են նրա կողմից ձեռք բերված տվյալների ամբողջությանը,

գ) արդյոք ձեռք են բերվել ողջամիտորեն անհրաժեշտ տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար,

դ) վեր հանված խախտումներն արդյոք հանգեցրել են անձի իրավունքների կամ օրինական շահերի խախտման»[2]:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Ա.Ավետյանը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված 2017 թվականի հունիսի 9-ի դիմումով հաղորդում է ներկայացրել այն մասին, որ իր նկատմամբ տեղի են ունեցել որոշակի հետապնդումներ, 5 օր պահվել է ձերբակալված անձանց պահման վայրում, այնուհետև ապօրինի վերցվել հաշվառման Վանաձորի հոգենյարդաբանական դիսպանսերում[3]:

Ներկայացված դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով հետաքննության մարմինը քրեական գործի հարուցումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ Արմենուհի Ավետյանին հոգեբուժական հիվանդանոցում որևէ մեկն ապօրինի չի տեղավորել կամ պահել, վերջինս Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերում հաշվառվել է՝ հիմնվելով նրա մոտ հայտնաբերված «պարանոիդ համախտանիշ» ախտորոշման հիման վրա, և հետագայում 2009 թվականին իրականացված ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությամբ ևս հիմնավորվել է Արմենուհի Ավետյանի մոտ

[1] Տե՛ս *Սիրվարդ Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԼԴ/0018/11/16 որոշման 12-րդ կետը:
[2] Տե՛ս նույն որոշման 13-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հոգեկան հիվանդության առկայությունը[1]:

Լոռու մարզի դատախազը բողոքը մերժելու մասին որոշմամբ նշել է, որ նյութերով քրեական գործ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, ուստի վարույթն իրականացնող մարմինն իրավացիորեն մերժել է քրեական գործ հարուցելը, և այդ որոշումը վերացնելու իրավական հիմքեր առկա չեն, հետևաբար Արմենուհի Ավետյանի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման[2]:

Առաջին ատյանի դատարանը, դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, գտել է, որ Ա.Ավետյանի հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն հավաստելու, որ առկա են քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը: Դատարանը փաստել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս հետաքննիչի կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով անձի իրավունքների և ազատությունների խախտումներ առկա չեն[3]:

Վերաքննիչ դատարանը ևս, վերանայելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, գտել է, որ առկա չեն քրեական գործի հարուցման բավարար հիմքեր, և նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներով չի հաստատվում, որ Ա.Ավետյանը Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր չի հաճախել, և իրեն այնտեղ գրանցելը կրել է անօրինական բնույթ, որի պայմաններում հետաքննության մարմինն իրավաչափ որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով մերժելու մասին: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով հետաքննիչի որոշման դեմ բերված դիմողի բողոքը, պահպանել է նյութական և դատավարական օրենսդրության պահանջները, ինչի հետևանքով չեն խախտվել դիմող Արմենուհի Ավետյանի իրավունքներն ու օրինական շահերը, հետևաբար դիմող Ա.Ավետյանի վերաքննիչ բողոքի փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը բեկանելու համար[4]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, հաստատելով դիմող Ա.Ավետյանի իրավունքների և օրինական շահերի խախտման բացակայու-

[1] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

թյան փաստը, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, որ ներկայացված հաղորդման կապակցությամբ նյութերը նախապատրաստվել են թերի:

Մասնավորապես, հետաքննության մարմնի կողմից քննություն է իրականացվել միայն դիմողին Վանաձորի հոգենյարդաբանական դիսպանսերում հաշվառման վերցնելու հանգամանքները պարզելու ուղղությամբ: Սակայն նախապատրաստված նյութերով քննություն չի իրականացվել դիմողի հաղորդմամբ նշված այն հանգամանքի շուրջ, որ վերջինս 5 օր ապօրինի պահվել է անազատության մեջ:

Մինչդեռ նշված հանգամանքն առերևույթ կարող է վկայել հանցագործության հատկանիշների առկայության մասին: Ընդ որում, թեև այդ դատողությունը ենթադրական բնույթի է, քանի որ նշված տեղեկատվության ճշտումը, դեպքի հանգամանքների պարզումը և ըստ անհրաժեշտության՝ համապատասխան քրեաիրավական գնահատական տալը գործով հետագա քննության խնդիրն է, սակայն տվյալ պահին, այդ կապակցությամբ քննություն չիրականացնելու պայմաններում, այն բավարար է դիմողի իրավունքների խախտումն արձանագրելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու համար: Ուստի ենթադրյալ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածը (նկատի ունենալով նաև քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայությունը) կարող է վերացվել միայն հարուցված քրեական գործի պայմաններում: Այսինքն՝ տվյալ պարագայում Ա.Ավետյանի ներկայացրած հաղորդմամբ նշված ենթադրյալ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ կասկածը ենթակա է մեկնաբանման հօգուտ լիարժեք քննության:

Հետևաբար, նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Արմենուհի Ավետյանի հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմենուհի Ավետյանի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար: Միևնույն ժամանակ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

անհրաժեշտ է վերացնել ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի հետաքննության բաժանմունքի հետաքննիչ Մ.Ավետիքյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Արմենուհի Սարգսի Ավետյանի բողոքի հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 6-ի որոշումները բեկանել և փոփոխել: Դիմող Արմենուհի Ավետյանի բողոքը բավարարել՝ վերացնելով ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի հետաքննության բաժանմունքի հետաքննիչ Մ.Ավետիքյանի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

54. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0042/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշման դեմ ամբաստանյալներ Սուրեն Ֆելիքսի Սարգսյանի և Հարություն Հակոբի Դանոյանի պաշտպան Ե.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի օգոստոսի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 12800914 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումներով Սուրեն Սարգսյանը և Հարություն Դանոյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի ապրիլի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջան-

ների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալներ Ս.Սարգսյանի ու Հ.Դանոյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում, և վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

3. Մեղադրող Է.Հարությունյանի և տուժող Հ.Հակոբյանի ներկայացուցիչ Ի.Պետրոսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունվարի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է, ամբաստանյալներ Հ.Դանոյանին և Ս.Սարգսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում և համապատասխանաբար որպես պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալներ Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի պաշտպան Ե.Սարգսյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցներից վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել մեղադրող Է.Հարությունյանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի որոշումը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի կողմից Ս.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ. *«(...) [Ե/ա կնոջից՝ Անահիտ Բունիաթյանից, տեղեկանալով, որ հուլիսի 24-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, քույրը՝ Կարինե Սարգսյանը, Ա.Բունիաթյանը և վերջինիս մանկահասակ երեխան «Օպել» մակնիշի տաքսի ավտոմեքենայով Երևան քաղաքի Թումանյան փողոցի վրա գտնվող «Էֆորիա» հանութ սրահի մոտակայքից Երևան քաղաքի Նոր Արեշ 26 փողոցի 97 տուն վերադառնալու ժամանակ նշված ավտոմեքենայի մեջ են մոռացել Ա.Բունիաթյանի «iPhone 5S» տեսակի բջջային հեռախոսը, պարզել է տաքսու վարորդի ինքնությունը և փորձել ընկերների միջոցով վերադարձնել այն: Սակայն տեսնելով, որ տաքսու վարորդը հերքում է բջջային հեռախոսը տաքսու մեջ թողնելու հանգամանքը, կնոջը պատկանող բջջային հեռախոսը գտնելու և վերադարձնելու նպատակով, տաքսու վարորդ Հայկ Էդուարդի Հակոբյանին առևանգելու*

վերաբերյալ նախնական համաձայնության գալով իր ընկեր՝ Հարություն Դանոյանի և քննությամբ դեռևս չպարզված անձանց հետ, 2014 թվականի հուլիսի 26-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, բջջային հեռախոսով, պայմաններ կատարելու պայմանավորվել, Հ.Դանոյանի ծանոթ՝ Արփինե Հունանյանը, որը տեղյակ չի եղել Հ.Հակոբյանին առևանգելու նպատակի վերաբերյալ Ս.Սարգսյանի պահանջով զանգահարել և խաբեությամբ Հ.Հակոբյանին կանչել է Երևան քաղաքի Տիգրան Մեծ փողոցում գտնվող թիվ 119 դպրոցի մոտ, որտեղից նրան սպասող քննությամբ դեռևս չպարզված հանցակցի ուղեկցությամբ, խաբեությամբ տեղափոխել են Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի փողոցի վրա գտնվող ավտոշուկայի տարածք, որտեղ պահանջել են վերադարձնել Ա.Բունիաթյանի կողմից տաքսի ավտոմեքենայի մեջ թողնված բջջային հեռախոսը: Հ.Հակոբյանը խոստացել է գտնել և վերադարձնել բջջային հեռախոսը, եթե իրեն տրամադրեն բջջային հեռախոսի տուփը, որից հետո պայմանավորվածություն ձեռք բերելով տուփը փոխանցելու վերաբերյալ, վերջինիս ազատ են արձակել (...)»[1]:

5.1. Նախաքննության մարմնի կողմից Հ.Դանոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ. *«(...) [Ն]ա ընկերոջից՝ Սուրեն Սարգսյանից տեղեկանալով, որ հուլիսի 24-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Կարինե Սարգսյանը, Ա.Բունիաթյանը և վերջինիս մանկահասակ երեխան «Օպել» մակնիշի տաքսի ավտոմեքենայով Երևան քաղաքի Թումանյան փողոցի վրա գտնվող «Էֆորիա» խանութ սրահի մուտակայքից Երևան քաղաքի Նոր Արեշ 26 փողոցի 97 տուն վերադառնալու ժամանակ նշված ավտոմեքենայի մեջ են մոռացել Ա.Բունիաթյանի «iPhone 5S» տեսակի բջջային հեռախոսը, Ս.Սարգսյանը պարզել է տաքսու վարորդի ինքնությունը և փորձել ընկերների միջոցով վերադարձնել այն: Սակայն տեղեկանալով, որ տաքսու վարորդը հերքում է բջջային հեռախոսը տաքսու մեջ թողնելու հանգամանքը, Ս.Սարգսյանի կնոջը պատկանող բջջային հեռախոսը գտնելու և վերադարձնելու նպատակով, տաքսու վարորդ Հայկ Էդուարդի Հակոբյանին առևանգելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով Սուրեն Սարգսյանի և քննությամբ դեռևս չպարզված անձանց հետ, 2014 թվականի հուլիսի 26-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, բջջային հեռախոսով, պայմաններ կատարելու պայմանավորվել, իր ծանոթ՝ Արփինե Հունանյանը, որը տեղյակ չի եղել Հ.Հակոբյանին առևանգելու նպատակի վերաբերյալ, Ս.Սարգսյանի պահանջով զանգահարել և խաբեությամբ Հ.Հակոբյանին կանչել է Երևան քաղաքի Տիգրան Մեծ փողոցում գտնվող թիվ 119 դպրոցի մոտ, որտեղից նրան սպասող քննությամբ դեռևս չպարզված հանցակցի ուղեկցությամբ, խաբեությամբ տեղափոխել են Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի փողոցի վրա գտնվող ավտոշուկայի տարածք, որտեղ պահանջել են վերադարձնել*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 68:

Ա.Բունիաթյանի կողմից տաքսի ավտոմեքենայի մեջ թողնված բջջային հեռախոսը: Հ.Հակոբյանը խոստացել է գտնել և վերադարձնել բջջային հեռախոսը, եթե իրեն տրամադրեն բջջային հեռախոսի տուփը, որից հետո պայմանավորվածություն ձեռք բերելով տուփը փոխանցելու վերաբերյալ, վերջինիս ազատ են արձակել (...)»[1]:

6. Ամբաստանյալ Ս.Սարգսյանը և Հ.Դանոյանն ըստ էության նույնաբովանդակ նախաքննական ցուցմունքներում հայտնել են, որ պատահական հանդիպմանը Ս.Սարգսյանը Հ.Դանոյանին պատմել է կնոջ հեռախոսի հափշտակության մասին, ապա խնդրել է իր հեռախոսով զանգահարել տաքսու վարորդին: Սակայն Հ.Դանոյանն իր հեռախոսի մարտկոցը նստած կամ հեռախոսահամարն արգելափակված լինելու պատճառով չի կարողացել զանգահարել, Ս.Սարգսյանն էլ Հ.Դանոյանին խնդրել է զանգել տաքսու վարորդին վերջինիս հետ սրճարանում գտնվող Արփինեի հեռախոսով և պատվեր ձևակերպել «Կայարանի» դպրոցի մոտ: Դրանից հետո իրենք Արփինեին ճանապարհել են և միասին դուրս են եկել սրճարանից՝ հիշյալ դպրոցի մոտ գնալու համար: Ճանապարհին Արփինեն զանգահարել է Հ.Դանոյանին և հայտնել, որ մեքենան տեղում է, իսկ վերջինս Արփինեին ասել է, որ հեռախոսով տաքսու վարորդին հայտնի, որ այլևս մեքենա հարկավոր չէ: Այդ ժամանակ Ս.Սարգսյանի ընկեր Արթուրը, իջնելով իրենց մեքենայից, նստել է Արփինեի կողմից պատվիրված տաքսի մեքենայի առջևի՝ վարորդի կողքի նստատեղին, որից հետո զանգահարել է իրենց և հայտնել, որ տաքսու վարորդը համաձայն է հեռախոսի հարցի շուրջ գնալ ցանկացած վայր և զրուցել: Հասնելով ավտոշուկայի մոտ՝ իրենք իջել են ավտոմեքենայից և գնացել տաղավար զրուցելու: Ամբաստանյալները պնդել են, որ տաքսու վարորդին Արթուրը հայտնել է, որ պատվերը կատարվել է իրենց խնդրանքով՝ հեռախոսի հետ կապված խոսելու համար, ինչը Հ.Հակոբյանը չի մերժել: Իրենք տաքսու վարորդին առևանգելու նպատակ չեն ունեցել, վերջինս նախապես իմացել է, թե ուր է գնում և ինչ հարցի շուրջ պետք է զրուցեն[2]:

6.1 Տուժող Հայկ Հակոբյանն իր դատաքննական ցուցմունքում ըստ էության հայտնել է, որ ճանապարհին ուղևորն իրեն ոչինչ չի ասել հեռախոսի շուրջ զրուցելու հետ կապված: Հասնելով ավտոշուկայի մոտ, ընկերոջը վերցնելու պատրվակով, ուղևորը խնդրել է մեքենան կանգնեցնել: Երբ մեքենան կայանել է, անմիջապես իր մեքենայի առջևի հատվածում՝ ճանապարհը փակելով, կանգնել է «Տոյոտա Պրադո» մակնիշի ավտոմեքենա, իսկ հետևի հատվածում՝ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա: Այդ ժամանակ պատվիրատուն, իջնելով մեքենայից, հրահանգել է, որ ինքը ևս իջնի: Չհասկանալով՝ ինչ է կատարվում, ինքն իջել է մեքենայից, որից հետո

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 65:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 152-155, 191-193:

ուղևորը, իր ձեռքից բռնելով, առաջարկել է գնալ զրուցելու: Երբ ինքը շրջվել է, որպեսզի մեքենայից հանի բանալիները, տեսել է, որ մի քանի երիտասարդներ, որոնք իջել են իր մեքենայի առջևի և հետևի մեքենաներից, ստուգում են իր մեքենայի սրահը: Նույն ժամանակ ուղևորը, բռնելով իր ձեռքից, առաջարկել է զրուցելու նպատակով գնալ փողոցից փոքր-ինչ հեռու գտնվող տաղավար: Այդ պահին նոր հասկացել է, որ իրեն խաբեությամբ բերել են տվյալ վայր՝ հեռախոսի հետ կապված հարցի պարզաբանման համար[1]:

6.2 Վկա Գրիգոր Դայանն իր դատաքննական ցուցմունքում ըստ էության հայտնել է, որ Հայկ Հակոբյանն իրեն պատմել է, որ նրան խաբեությամբ առևանգել, ծեծել են և ձեռքից վերցրել են 100.000 ՀՀ դրամ գումար[2]:

6.3 Վկա Օնիկ Գևորգյանն իր դատաքննական ցուցմունքում ըստ էության հայտնել է, որ այն պահին, երբ քայլել են սրճարանի մոտով, Հարություն Դանոյանը, ով հանդիսացել է Սուրեն Սարգսյանի ընկերը, նստած է եղել իրեն անծանոթ մի աղջկա հետ: Հ.Դանոյանն իրենց հրավիրել է սեղանի շուրջ, ապա Ս.Սարգսյանը և Հ.Դանոյանն առանձնացել են: Որոշ ժամանակ անց նրանք վերադարձել են սեղանի մոտ, և այդ ժամանակ նրանցից մեկը, սակայն, թե ով հստակ չի հիշում, Հ.Դանոյանի հետ նստած աղջկան առաջարկել է նրա հեռախոսով զանգահարել և տաքսի պատվիրել: Ինքը հասկացել է, որ խոսքը գնում է նույն տաքսու վարորդի մասին, ով գողացել է Ս.Սարգսյանի կնոջ հեռախոսը: Հ.Դանոյանի ընկերուհին զանգահարել և տաքսի է պատվիրել «Կայարանի» դպրոցի մոտ: Դրանից հետո իրենք միասին դուրս են եկել սրճարանից, Հ.Դանոյանը ճանապարհել է այդ աղջկան, իսկ իրենք Ս.Սարգսյանի «Տոյոտա Պրադո» մակնիշի մեքենայով գնացել են հանդիպելու տաքսու վարորդին: Հասնելով հիշյալ վայր՝ ժամանել է նաև պատվիրված տաքսին: Այդ ժամանակ Ս.Սարգսյանի ընկերը, իջնելով իրենց մեքենայից, նստել է տաքսի մեքենայի մեջ՝ վարորդի կողքի նստատեղին: Որոշ ժամանակ անց այդ տղան զանգահարել է Ս.Սարգսյանին, նրանք ինչ-որ բան են խոսել, որից հետո Ս.Սարգսյանը նրան ասել է, որ ավելի լավ կլինի գնալ ավտոշուկա, որտեղ գտնվել է նրա մեքենան: Հասնելով ավտոշուկայի մոտ՝ իրենք բոլորով իջել են մեքենայից և զրուցելու համար գնացել տաղավար[3]:

6.4 Վկա Հովհաննես Միրզոյանն իր դատաքննական ցուցմունքում ըստ էության հայտնել է, որ Հայկ Հակոբյանի հետ խոսելիս վերջինս հայտնել է, որ մի անծանոթ հաճախորդ է նստել իր մեքենան, խնդրել տեղափոխել ինչ-որ տեղ, ապա վերջինիս ընկերոջը ճանապարհից վերցնելու պատրվակով, ուղևորի ասելով, կայանել են, որի ժամանակ իրեն ծեծել են ու իր մեքենայից գումար վերցրել[4]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 50-53:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 103-104:
[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 16-17:
[4] Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 124-125:

6.5 Վկա Արթուր Գևորգյանն իր դատաքննական ցուցմունքում ըստ էության հայտնել է, որ զանգահարել է Սուրեն Սարգսյանին, և նա իրեն ասել է, որ գտնվում է ավտոշուկայի մոտ, խոսակցություն ունի տաքսու վարորդի հետ, ով գողացել է հեռախոսը: Գնացել է ավտոշուկա և, փողոցում տեսնելով Ս.Սարգսյանին, իջել և մոտեցել է նրան: Վերջինս եղել է իր ընկերներ Արթուրի, Օնիկի և Հարութի հետ: Այդ ժամանակ Սուրենը, մատնացույց անելով փոքր-ինչ հեռու կայանված տաքսի մեքենան, որի կողքը կանգնած է եղել մի տղամարդ, ասել է, որ նա է գողացել հեռախոսը[1]:

6.6 Վկա Արփինե Հունանյանն իր նախաքննական ցուցմունքում ըստ էության հայտնել է, որ երբ ինքը գնացել էր Հարություն Դանոյանից պարտքով գումար խնդրելու, վերջինս իրենց սեղանի մոտ է հրավիրել այգով պատահական անցնող երեք տղաների և նրանց հետ ինչ-որ խոսակցություն ունեցել, որի ընթացքում նրանցից մեկը՝ թուխ մաշկով, միջին հասակի, թմբլիկ կազմվածքի տղան, Հ.Դանոյանին ասել է, որ զանգում է, սակայն չի պատասխանում, ինչից ինքը հասկացել է, որ ինչ-որ մեկի հետ չեն կարողանում կապ հաստատել: Այդ ժամանակ նույն տղան խնդրել է Հ.Դանոյանի հեռախոսը, սակայն մարտկոցը պարպված լինելու պատճառով վերջինս այն չի տրամադրել, և նրանք երկուսով իրեն առաջարկել են թույլ տալ իր հեռախոսահամարից զանգ կատարել, ինչին ինքը չի առարկել: Ապա վերջիններիս խնդրանքով զանգահարել է իրեն տրամադրած հեռախոսահամարով և տեղեկանալով, որ խոսում է տաքսու վարորդի հետ, տաքսի է պատվիրել «Կայարանի» դպրոցի մոտ, ինչպես որ իրեն ասել են: Այնուհետև, քանի որ շտապելիս է եղել, ցանկացել է դուրս գալ, սակայն Հ.Դանոյանը և հիշյալ տղան խնդրել են մի փոքր ավել մնալ՝ մինչև տաքսու վարորդը հետ զանգահարի իրեն: Տեսնելով, որ տաքսու վարորդի զանգն ուշանում է, ինքը դուրս է եկել սրճարանից՝ աշխատանքի գնալու համար: Նշված տղաները, այդ թվում նաև Հ.Դանոյանը, դուրս են եկել փողոց, նստել են այնտեղ կայանած արծաթափայլ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան և հեռացել: Ճանապարհին հիշյալ տաքսու վարորդը զանգահարել է իրեն և հայտնել, որ տեղում է: Այդ մասին ինքը հեռախոսով հայտնել է Հ.Դանոյանին: Մի քանի րոպե անց Հ.Դանոյանը զանգահարել է իրեն և խնդրել կրկին զանգահարել տաքսու վարորդին և փոխանցել, որ այլևս մեքենա պետք չէ, ինչն ինքը կատարել է: Այնուհետև, երբ «ՍՄՍ» հաղորդագրություն է ուղարկել Հ.Դանոյանին՝ պարզելու իր խնդրանքը՝ պարտքով գումար տալու հարցը լուծվել է, թե ոչ, վերջինս իրեն պատասխանել է, որ այլևս իրեն չզանգահարի ու չգրի: Դրանից շուրջ 10 օր անց, Հ.Դանոյանը նույն տղաների հետ գնացել է իր աշխատանքի վայր: Նրանցից այն նույն թմբլիկ կազմվածքով տղան իրեն խնդրել է հեռախոսն անջատել կամ տալ իրեն՝ ասելով, որ տաքսու վարորդն իրենց գումար է պարտք եղել, չի տվել, նրան ծեծել են ու վերջինս դիմել է

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 124-125:

ոստիկանություն: Ինքը մերժել է այդ տղայի առաջարկը, որից հետո վերջինս խնդրել է, որ եթե իրեն ոստիկանությունից անհանգստացնեն, այդ մասին անհապաղ տեղյակ պահի Հ.Դանոյանին կամ իրեն՝ միաժամանակ տրամադրելով հեռախոսահամար, որն ինքը կորցրել է: Իր կարծիքով Հ.Դանոյանն այդ օրն իրեն սրճարան է հրավիրել ոչ թե գումար տալու, այլ տաքսու վարորդին զանգահարելու և կանչելու համար[1]:

6.7 Վկա Արփինե Հունանյանին լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու արձանագրության համաձայն՝ վկան ճանաչել է ամբաստանյալ Սուրեն Սարգսյանին[2]:

6.8 093-60-60-66 և 077-10-00-08 բջջային հեռախոսահամարների վերծանումների զննության արձանագրությունների համաձայն՝ դեպքի կատարման ժամանակահատվածում Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի նշված հեռախոսահամարները սպասարկվել են Խ.Դաշտենցի փողոցից մինչև Նուբարաշենի «Ավտոշուկայի» մոտակայքը, դրանցից կատարվել են մուտքային և ելքային զանգեր[3]:

7. Առաջին ատյանի դատարանը, Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին արդարացնելով առաջադրված մեղադրանքում, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«(…) Սույն քրեական գործով ձեռք բերված և ենթադրյալ արարքում ամբաստանյալներ Հարություն Դանոյանի և Սուրեն Սարգսյանի մեղքը հիմնավորող միակ և ուղղակի ապացույցը գործով շահագրգիռ կողմ հանդիսացող տուժող Հայկ Հակոբյանի ցուցմունքներն են, որոնք նախաքննության ընթացքում բազմակի հակասական փոփոխություններ են ենթարկվել, իսկ գործում առկա նյութերը, գործով ձեռք բերված փաստական տվյալներն ու դատաքննության ընթացքում տուժողի արտահայտած դիրքորոշումները, դատարանին՝ վերջինիս կողմից տված ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ դնելու հիմքեր են տալիս:*

(…) Տուժողի այս հակասական, իրարամերժ և անարժանահավատ ցուցմունքների համատեքստում հարկ է նշել, որ ամբաստանյալներ Սուրեն Սարգսյանն ու Հարություն Դանոյանը, ինչպես նաև վկա Օնիկ Գևորգյանն իրենց ցուցմունքներում բազմիցս հայտնել են, որ երբ իրենց ընկեր Արթուրը դպրոցի մոտ նստել է տաքսու վարորդի կողքի նստատեղին, տաքսիստին ասել է, որ իրականում պատվերի համար զանգած աղջիկը զանգել է իրենց համար, որից հետո նրան հայտնել է, որ հեռախոսի կորստի հետ կապված խոսելու բան ունեն նրա հետ և տաքսու վարորդը համաձայնվել է: Արթուրն անմիջապես զանգել է իրենց և ասել, որ տաքսիստը համաձայն է հանդիպել և գրուցել իրենց հարմար ցանկացած վայրում: Քանի որ Սուրենի մյուս ավտոմեքենան գտնվել է Նուբարաշենի ավտոշուկայում, իսկ ավտոմեքենայի

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 231-234:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 106:
[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 106:

մեջ են գտնվել իրենց իանութի բանալիները և մոտեցել է այն փակելու ժամը, հետևաբար որոշել է հանդիպումը կազմակերպել հենց ավտոշուկայի մուտակայքում:

(...) [Առաջին ատյանի] դատարանը արձանագրում է, որ նախաքննական մարմինը մեղադրանքի հիմքում դրել է միայն տուժողի այս խիստ հակասական և անարժանահավատ ցուցմունքները, համաձայն որի տուժողը չի իմացել, թե ինչ նպատակով է գնում ավտոշուկայի տարածք, ինչն էլ դիտել է որպես առևանգում, այնինչ՝ ակնհայտ է, որ մեղադրանքի մեջ ներառված այս կարևորագույն հանգամանքի վերաբերյալ միայն տուժողի նման ցուցմունքները չեն կարող մեղադրանքը հաստատելու համար բավարար ապացույց համարվել (...)»[1]:

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելով և Ս.Սարգսյանին ու Հ.Դանոյանին մեղավոր ճանաչելով առաջադրված մեղադրանքում, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նախ՝ դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասի ուսումնասիրությունից պարզվել է, որ Առաջին ատյանի դատարանը, թեև ձևականորեն շարադրել է գործով առկա ապացույցները, սակայն դրանց մանրամասն վերլուծություն չի իրականացրել, այդ թվում չի գնահատել դրանք համակցության մեջ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ և 126-127-րդ հոդվածներով նախատեսված պահանջները: (...)*

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տուժողի (...) ցուցմունքները հաստատվում են հետևյալ ածանցյալ ապացույցներով, որոնք անտեսվել են Առաջին ատյանի դատարանի կողմից գործի քննության ժամանակ:

Այսպես՝

Գործով վկա Արտակ Պապոյանը ցուցմունք է տվել, որ աշխատում է ՀՀ Ո Մաշտոցի բաժնին կից պահպանության բաժնում: Տուժողին ճանաչում է պայմանավորված նրանով, որ վերջինս իրեն հաճախակի տաքսի ծառայություններ է մատուցում: 2014 թվականի ամռանը տուժող Հ.Հակոբյանը զանգահարել է իրեն և խնդրել գտնել կորցված հեռախոսը, որին ի պատասխան ինքը հայտնել է, որ անհրաժեշտ է հեռախոսի տուփը և դրա տիրոջ դիմումը: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ վկայի ցուցմունքով հաստատվում է այն, որ տուժողն իրոք միջոցներ է ձեռնարկել հեռախոսի հայտնաբերման կապակցությամբ, այդ թվում դիմել է ՀՀ Ո աշխատակցի:

Անդրադառնալով գործով մյուս վկայի Գրիգոր Դայանի ցուցմունքներին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դրանցով հաստատվում է տուժողին առևանգելու և ծեծելու փաստը, ավելին՝ Վերաքննիչ դատարանը նաև ընդգծում է, որ, եթե տուժողի մյուս ցուցմունքները արժանահավատ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 109-111, 114-116:

ճանաչվեր, ապա ինչո՞վ պետք է պայմանավորված լիներ վերջինիս նման վարքագիծը, որը դրսևորվել է նրանում, որ տուժողը պատրաստ է ընկերոջը՝ հեռախոսի և իրեն առևանգելու ու ծեծի ենթարկելու մասին: Այսինքն՝ եթե շարժվենք Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունների տրամաբանությամբ և արժանահավատ ճանաչենք տուժողի նախաքննական ցուցմունքներն, այնքանով որքանով, իրեն չեն առևանգել, այլ ինքն իր կամքով է գնացել ամբաստանյալների հետ խոսելու, նախապես իմանալով թե ուր է գնում, ապա ինչո՞ւ է վերջինս պատրաստ եղելությունն իր ընկերոջն այն կերպ ինչպես ցուցմունք է տվել Առաջին ատյանի դատարանում դատաքննության ժամանակ:

Պետք է նշել, որ տուժողի դատաքննության ժամանակ տված ցուցմունքների արժանահավատությունը, բացի վերը նշված վկաների ցուցմունքների հաստատվում է նաև գործով վկա Հովհաննես Միրզոյանի ցուցմունքներով, համաձայն որոնց՝ ինքը հանդիսանում է տուժողի ընկերը և նրա հետ գտնվում է նորմալ հարաբերությունների մեջ: 2014 թվականի ամռանը տուժող Հ.Հակոբյանը իրեն ասել է, որ իր ուղևորներից մեկը մեքենայում հեռախոս է թողել, սակայն ինքն որևէ հեռախոս չի տեսել: Դրանից հետո տուժողը զանգահարել է վկային և ասել, որ իրեն ծեծել են և պահանջել հեռախոսը հետ վերադարձնել, իսկ հետագայում տուժողը վկային պատմելով եղելությունն ասել է, որ մի անծանոթ երիտասարդ է նստել մեքենան խնդրել տեղափոխել ինչ-որ տեղ, ապա հաճախորդի ընկերոջը վերցնելու պատրվակով կայանել, որի ժամանակ իրեն ծեծել են և մեքենայից գումար վերցրել: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նախորդ պարբերության մեջ նշված հետևությունների տրամաբանությամբ վերոնշյալ վկայի ցուցմունքներով նույնպես հաստատվում են տուժող Հ.Հակոբյանի դատաքննության ժամանակ տված ցուցմունքների արժանահավատությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը ցանկանում է ևս մեկ հարցադրում կատարել, եթե տուժող Հ.Հակոբյանը չի առևանգվել ամբաստանյալների կողմից նախապես մշակված ծրագրի համաձայն, և նա գնացել է վերջիններիս հետ խոսելու նախապես իմանալով, թե ինչ թեմայի և ինչ վայրում պետք է տեղի ունենա խոսակցությունն, ապա ինչո՞ւ չի իր մտերիմներին հայտնել եղելության վերաբերյալ հենց այդ լույսի ներքո և չի ասել, որ իրեն ոչ թե առևանգել են, այլ երիտասարդը, որը նստել է իր ավտոմեքենան նախապես իրեն հայտնել է այդ հանգամանքների մասին և ինքն էլ համաձայն է գնալ իրենց հետ, որի արդյունքում տեղի է ունեցել եղելությունը: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տուժողի ցուցմունքների հակասական լինելու և դրանց արժանահավատության աստիճանը պետք է քննության առարկա դարձվեր հենց այս հանգամանքների ներքո: (...)»[1]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 38, 48-49:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումն օրինական, հիմնավորված, պատճառաբանված չէ, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, հետևաբար այն ենթակա է բեկանման:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ տուժող Հայկ Հակոբյանի ցուցմունքները և դրանցից բխող մյուս ապացույցները «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշով չեն հաստատում ամբաստանյալների մեղավորությունը և ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքները:

Բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ Սիրակ Սաքանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին մեղավոր ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են [պատանդ վերցնելու] հանցագործության հատկանիշները՝*

(…)

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

(…)»:

13. Մարդուն առևանգելն ազատության դեմ ուղղված հանցագործություններից է: Տվյալ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն անձի անձնական, ֆիզիկական ազատությունն է: Որպես լրացուցիչ օբյեկտ հանդես է գալիս մարդու կյանքը, առողջությունը և այլն:

Մարդուն առևանգելու հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է անձին իր կամքին հակառակ կամ առանց իր կամքը հաշվի առնելու գաղտնի կամ բացահայտ բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս հանելով, այլ վայր տեղափոխելով և այնտեղ պահելով: Եթե անձին իր կամքին հակառակ առևանգելու դեպքում տուժողի կամքը ճնշվում է բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով, ապա առանց անձի կամքը հաշվի առնելու առևանգելու դեպքում տուժողի կամքը հաշվի չի առնվում և վերջինս առևանգվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Ընդհանուր առմամբ, հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունից հետևում է, որ անձը կարող է առևանգվել խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով:

13.1 Առևանգման վերոնշյալ եղանակներից խաբեությունը դրսևորվում է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով կամ որոշակի փաստեր, հանգամանքներ, իրադարձություններ թաքցնելով՝ նպատակ հետապնդելով տուժողին ապակողմնորոշելու, ներգործելու իր գտնվելու վայրն ընտրելու ազատ կամաարտահայտության վրա՝ այդ կերպ նաև խուսափելով նրա հնարավոր դիմադրությունից: Մասնավորապես, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով՝ հանցավորը նպատակ է հետապնդում գաղտնի՝ երրորդ անձանց բացակայությամբ, կամ բացահայտ՝ վերջիններիս ներկայությամբ, անձին իր կամքով գտնվելու վայրից տեղափոխելու և պահելու այլ վայրում: Տվյալ եղանակով առևանգման հանցակազմի հատկանիշների առկայությունը հաստատված համարելիս էական նշանակություն ունի տուժողի և հանցավորի փոխհարաբերությունների, առևանգմանն անմիջապես նախորդող հանգամանքների, տուժողին իր գտնվելու վայրից հանցավորի կողմից ընտրված վայր հասցնելու համար գործադրված միջոցի, տուժողին հայտնված՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության համակողմանի գնահատումը:

13.2 Սուբյեկտիվ կողմից առևանգումը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի անձին առևանգելու՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանա իր գործողություններով անձին իր գտնվելու վայրից խաբեությամբ, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով գաղտնի կամ բացահայտ տեղափոխել այլ վայր և այնտեղ պահել: Որպես հանցագործության սուբյեկտ կարող է հանդես գալ 14 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

15. Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանն *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով* ընդգծել է, որ ապացույցի արժանահավատությունը վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա[1]:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալներ Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում[2] արդարացնելիս նշել է, որ ամբաստանյալների մեղքը

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.3-րդ կետը:

[2] Տե՛ս սույն որոշման 5-5.1-րդ կետերը:

հիմնավորող միակ և ուղղակի ապացույցը գործով շահագրգիռ կողմ հանդիսացող տուժող Հայկ Հակոբյանի հակասական և անարժանահավատ ցուցմունքներն են: Դրանց համաձայն՝ տուժողը չի իմացել, թե ինչ նպատակով է գնում ավտոշուկայի տարածք, ինչն էլ դիտել է որպես առևանգում, այնինչ՝ ակնհայտ է, որ մեղադրանքի մեջ ներառված այս կարևորագույն հանգամանքի վերաբերյալ միայն տուժողի նման ցուցմունքները չեն կարող մեղադրանքը հաստատելու համար բավարար ապացույց համարվել[1]:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի հետ, բեկանել է վերջինիս կայացրած դատավճիռը և ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին մեղավոր ճանաչել՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը, թեև ձևականորեն շարադրել է գործով առկա ապացույցները, սակայն դրանց մանրամասն վերլուծություն չի իրականացրել, այդ թվում՝ չի գնահատել դրանք համակցության մեջ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ և 126-127-րդ հոդվածներով նախատեսված պահանջները[2]:

17. Սույն որոշման նախորդ, ինչպես նաև 6-6.8-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական գնահատականի արժանացնելով տուժողի և հանցավորի ունեցած փոխհարաբերության, առևանգմանն անմիջապես նախորդող հանգամանքների, իր գտնվելու վայրից հանցավորի կողմից ընտրված վայր տուժողին հասցնելու համար գործադրված միջոցի, վերջինիս հայտնված իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության վերաբերյալ գործով ձեռքբերված ապացույցների համակցությունը, իրավաչափորեն գտել է, որ դրանք հիմնավորում են տուժողի դատաքննական ցուցմունքների արժանահավատությունը և ըստ այդմ՝ ամբաստանյալների մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում:

Մասնավորապես, ամբաստանյալների մեղքն առաջադրված մեղադրանքում հիմնավորվում է ոչ միայն տուժող Հ.Հակոբյանի դատաքննական ցուցմունքով այն մասին, որ ճանապարհին ուղևորն իրեն ոչինչ չի ասել հեռախոսի շուրջ զրուցելու հետ կապված, և վերջինս միայն տեղ հասնելուց է հասկացել, որ իրեն խաբեությամբ բերել են տվյալ վայր՝ հեռախոսի հետ կապված հարցի պարզաբանման համար, այլ նաև վկաներ Ա.Հունանյանի, Օ.Գևորգյանի, Գ.Դայանի, Հ.Միրզոյանի, Ա.Գևորգյանի ցուցմունքներով, լուսանկարով Ս.Սարգսյանին ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ,

[1] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ամբաստանյալների հեռախոսահամարների վերծանումների զննության արձանագրությամբ: Դրանց, ինչպես նաև ամբաստանյալներ Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի նախաքննական ցուցմունքների համադրված վերլուծությունից հետևում է, որ ամբաստանյալները նախնական համաձայնությամբ տաքսու վարորդ՝ գործով տուժող Հ.Հակոբյանին խաբեությամբ են տեղափոխել իրենց կողմից ընտրված՝ Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի փողոցի վրա գտնվող ավտոշուկայի տարածք և առևանգել:

Այսպես՝ վերը նշված ապացույցներից հետևում է, որ տաքսու կեղծ պատվերը վկա Ա.Հունանյանի միջոցով կատարվել է ամբաստանյալների խնդրանքով, տաքսու վարորդին իրենց կողմից ընտրված վայր հասցնելու և ենթադրաբար հափշտակված հեռախոսի շուրջ նրա հետ զրուցելու համար: Ընդ որում, տաքսու պատվերը վկա Ա.Հունանյանի կողմից, վերջինիս հեռախոսով կատարելու կապակցությամբ ամբաստանյալների ներկայացրած պատճառաբանությունները՝ հեռախոսի մարտկոցը պարպված լինելու կամ հեռախոսահամարն արգելապակված լինելու վերաբերյալ, հերքվել են ինչպես ամբաստանյալների հեռախոսահամարների վերծանումների զննության արձանագրությամբ, այնպես էլ հենց ամբաստանյալների ցուցմունքներով, որոնց համաձայն՝ դեպքի օրը նրանց հեռախոսները եղել են ակտիվ և նրանք հեռախոսային կապի մեջ են գտնվել ինչպես տաքսու պատվերը կատարած Ա.Հունանյանի, այնպես էլ այդ պատվերով տաքսի նստած ուղևոր Արթուրի հետ:

Ավելին՝ տաքսու կեղծ պատվեր կատարելու և այդ եղանակով տուժողին ամբաստանյալների կողմից ընտրված վայր հասցնելու մասին է վկայում ապացույցներով հաստատված նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալներ Հ.Դանոյանը, Ս.Սարգսյանը և վերջինիս ընկերները «Կայարանի» դպրոցի մոտ գնացել են իրենց ավտոմեքենայով, սակայն ամբաստանյալ Ս.Սարգսյանի ընկերներից մեկը, իջնելով այդ մեքենայից, նստել է տաքսի մեքենան և պատվիրել ուղևորվել ամբաստանյալ Ս.Սարգսյանի կողմից մատնանշված այն նույն վայրը՝ ավտոշուկան, որտեղ իրենց ավտոմեքենայով գնացել են մյուսները:

Վերոնշյալը համադրելով ամբաստանյալներ Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի նախաքննական ցուցմունքների, ինչպես նաև գործի նյութերում առկա այլ փաստական տվյալների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին մեղավոր ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են:

18. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի

դատավճիռը բեկանելու և փոփոխելու, ամբաստանյալներ Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

19. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել՝ առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց (…)»:*

Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Սույն օրենքի կատարումը վերապահել (…) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ (…)»:*

Վերոնշյալ իրավադրույթների հաշվառմամբ, նկատի ունենալով, որ ամբաստանյալներ Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի նկատմամբ նշանակված պատիժները չեն գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքի կիրառմանը խոչընդոտող հանգամանք, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա ամբաստանյալներ Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին պետք է ազատել նշանակված պատիժները կրելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալներ Սուրեն Ֆելիքսի Սարգսյանի և Հարություն Հակոբի Դանոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը թողնել

օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Սուրեն Ֆելիքսի Սարգսյանին և Հարություն Հակոբի Դանոյանին ազատել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշմամբ նշանակված պատժից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ԵԷԴ/0042/01/16

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Դատավոր՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

Ամբաստանյալներ Սուրեն Ֆելիքսի Սարգսյանի և Հարություն Հակոբի Դանոյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ նաև Վճռաբեկ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի վերաբերյալ:

Գործի դատավարական նախապատմությունը և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. 2014 թվականի օգոստոսի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 12800914 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումներով Սուրեն Սարգսյանը և Հարություն Դանոյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի ապրիլի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալներ Ս.Սարգսյանի ու Հ.Դանոյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում, և վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

3. Մեղադրող Է.Հարությունյանի և տուժող Հ.Հակոբյանի ներկայացուցիչ Ի.Պետրոսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունվարի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է, ամբաստանյալներ Հ.Դանոյանին և Ս.Սարգսյանին

մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում և համապատասխանաբար որպես պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: Ընտրված խափանման միջոց գրավը վերացվել է:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալներ Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի պաշտպան Ե.Սարգսյանը: Բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի արդարացման դատական ակտին:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցներից վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել մեղադրող Է.Հարությունյանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել և օրինական ուժի մեջ թողնել Վերաքննիչ դատարանի որոշումը:

5. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը մերժվել է: Ամբաստանյալներ Սուրեն Ֆելիքսի Սարգսյանի և Հարություն Հակոբի Դանոյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Սուրեն Ֆելիքսի Սարգսյանը և Հարություն Հակոբի Դանոյանը ազատվել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշմամբ նշանակված պատժից:

6. Հատուկ կարծիք եմ հայտնում սույն գործով կայացրած Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման դեմ՝ միջնորդելով պաշտպանի բողոքը բավարարել՝ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի արդարացման դատավճռին:

7. Նախաքննության մարմնի կողմից Ս.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«(...) Ն/ա կնոջից՝ Անահիտ Բունիաթյանից, տեղեկանալով, որ հուլիսի 24-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, քույրը՝ Կարինե Սարգսյանը, Ա.Բունիաթյանը և վերջինիս մանկահասակ երեխան «Օպել» մակնիշի տաքսի ավտոմեքենայով Երևան քաղաքի Թումանյան փողոցի վրա գտնվող «Էֆորիա» հանութ սրահի մոտակայքից Երևան*

քաղաքի Նոր Արեշ 26 փողոցի 97 տուն վերադառնալու ժամանակ նշված ավտոմեքենայի մեջ են մոռացել Ա.Բունիաթյանի «iPhone 5S» բջջային հեռախոսը, պարզել է տաքսու վարորդի ինքնությունը և փորձել ընկերների միջոցով վերադարձնել այն: Սակայն տեսնելով, որ տաքսու վարորդը հերքում է բջջային հեռախոսը տաքսու մեջ թողնելու հանգամանքը, կնոջը պատկանող բջջային հեռախոսը գտնելու և վերադարձնելու նպատակով, տաքսու վարորդ Հայկ Էդուարդի Հակոբյանին առևանգելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով իր ընկեր՝ Հարություն Դանոյանի և քննությամբ դեռևս չպարզված անձանց հետ, 2014 թվականի հուլիսի 26-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, բջջային հեռախոսով, պատվեր կատարելու պատրվակով, Հ.Դանոյանի ծանոթ՝ Արփինե Հունանյանը, որը տեղյակ չի եղել Հ.Հակոբյանին առևանգելու նպատակի վերաբերյալ Ս.Սարգսյանի պահանջով զանգահարել և խաբեությամբ Հ.Հակոբյանին կանչել է Երևան քաղաքի Տիգրան Մեծ փողոցում գտնվող թիվ 119 դպրոցի մոտ, որտեղից նրան սպասող քննությամբ դեռևս չպարզված հանցակցի ուղեկցությամբ, խաբեությամբ տեղափոխել են Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի փողոցի վրա գտնվող ավտոշուկայի տարածք, որտեղ պահանջել են վերադարձնել Ա.Բունիաթյանի կողմից տաքսի ավտոմեքենայի մեջ թողնված բջջային հեռախոսը: Հ.Հակոբյանը խոստացել է գտնել և վերադարձնել բջջային հեռախոսը, եթե իրեն տրամադրեն բջջային հեռախոսի տուփը, որից հետո պայմանավորվածություն ձեռք բերելով տուփը փոխանցելու վերաբերյալ, վերջինիս ազատ են արձակել (...)»[1]:

7.1. Նախաքննության մարմնի կողմից Հ.Դանոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ. *«(...) [Ն]ա ընկերոջից՝ Սուրեն Սարգսյանից տեղեկանալով, որ հուլիսի 24-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Կարինե Սարգսյանը, Ա.Բունիաթյանը և վերջինիս մանկահասակ երեխան «Օպել» մակնիշի տաքսի ավտոմեքենայով Երևան քաղաքի Թումանյան փողոցի վրա գտնվող «Էֆորիա» խանութ սրահի մոտակայքից Երևան քաղաքի Նոր Արեշ 26 փողոցի 97 տուն վերադառնալու ժամանակ նշված ավտոմեքենայի մեջ են մոռացել Ա.Բունիաթյանի «iPhone 5S» բջջային հեռախոսը, Ս.Սարգսյանը պարզել է տաքսու վարորդի ինքնությունը և փորձել ընկերների միջոցով վերադարձնել այն: Սակայն տեղեկանալով, որ տաքսու վարորդը հերքում է բջջային հեռախոսը տաքսու մեջ թողնելու հանգամանքը, Ս.Սարգսյանի կնոջը պատկանող բջջային հեռախոսը գտնելու և վերադարձնելու նպատակով, տաքսու վարորդ Հայկ Էդուարդի Հակոբյանին առևանգելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով Սուրեն Սարգսյանի և քննությամբ դեռևս չպարզված անձանց հետ, 2014 թվականի*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 68:

հուլիսի 26-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, բջջային հեռախոսով, պատվեր կատարելու պատրվակով, իր ծանոթ՝ Արփինե Հունանյանը, որը տեղյակ չի եղել Հ.Հակոբյանին առևանգելու նպատակի վերաբերյալ, Ս.Սարգսյանի պահանջով զանգահարել և խաբեությամբ Հ.Հակոբյանին կանչել է Երևան քաղաքի Տիգրան Մեծ փողոցում գտնվող թիվ 119 դպրոցի մոտ, որտեղից նրան սպասող քննությամբ դեռևս չպարզված հանցակցի ուղեկցությամբ, խաբեությամբ տեղափոխել են Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի փողոցի վրա գտնվող ավտոշուկայի տարածք, որտեղ պահանջել են վերադարձնել Ա.Բունիաթյանի կողմից տաքսի ավտոմեքենայի մեջ թողնված բջջային հեռախոսը: Հ.Հակոբյանը խոստացել է գտնել և վերադարձնել բջջային հեռախոսը, եթե իրեն տրամադրեն բջջային հեռախոսի տուփը, որից հետո պայմանավորվածություն ձեռք բերելով տուփը փոխանցելու վերաբերյալ, վերջինիս ազատ են արձակել (…)»[1]:

8. Ամբաստանյալ Ս.Սարգսյանը և Հ.Դանոյանն ըստ էության նույնաբովանդակ նախաքննական ցուցմունքներում հայտնել են, որ պատահական հանդիպմանը Ս.Սարգսյանը Հ.Դանոյանին պատմել է կնոջ հեռախոսի հափշտակության մասին՝ նշելով, որ դեպքի օրը՝ 2014 թվականի հուլիսի 24-ին՝ ժամը 19.00-ի սահմաններում, իր կինը՝ Անահիտ Բունիաթյանը, պատմել է, որ տաքսու ավտոմեքենայի մեջ մոռացել է «iPhone 5S» տեսակի բջջային հեռախոսը, որից հետո դուրս է եկել փողոց ու փորձել է կանգնեցնել վարորդին, գոռացել է նրա հետևից, սակայն վերջինս հեռացել է իրենց փողոցից:

Գտնելով տաքսու վարորդի հեռախոսահամարը՝ խնդրել է Հ.Դանոյանին իր հեռախոսով զանգահարել տաքսու վարորդին: Սակայն Հ.Դանոյանն իր հեռախոսի մարտկոցը նստած կամ հեռախոսահամարն արգելափակված լինելու պատճառով չի կարողացել զանգահարել, Ս.Սարգսյանն էլ Հ.Դանոյանին խնդրել է զանգել տաքսու վարորդին վերջինիս հետ սրճարանում գտնվող Արփինեի հեռախոսով և պատվեր ձևակերպել «Կայարանի» դպրոցի մոտ: Դրանից հետո իրենք Արփինեին ճանապարհել են և միասին դուրս են եկել սրճարանից՝ հիշյալ դպրոցի մոտ գնալու համար: Ճանապարհին Արփինեն զանգահարել է Հ.Դանոյանին և հայտնել, որ մեքենան տեղում է, իսկ վերջինս Արփինեին ասել է, որ հեռախոսով տաքսու վարորդին հայտնի, որ այլևս մեքենա հարկավոր չէ: Այդ ժամանակ Ս.Սարգսյանի ընկեր Արթուրը, իջնելով իրենց մեքենայից, նստել է Արփինեի կողմից պատվիրված տաքսի մեքենայի առջևի՝ վարորդի կողքի նստատեղին, որից հետո զանգահարել է իրենց և հայտնել, որ տաքսու վարորդը համաձայն է հեռախոսի հարցի շուրջ գնալ ցանկացած վայր և զրուցել: Հասնելով ավտոշուկայի մոտ՝ իրենք իջել են ավտոմեքենայից և գնացել տաղավար՝

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 65:

զրուցելու: Ամբաստանյալները պնդել են, որ տաքսու վարորդին Արթուրը հայտնել է, որ պատվերը կատարվել է իրենց խնդրանքով՝ հեռախոսի հետ կապված խոսելու համար, ինչը Հ.Հակոբյանը չի մերժել: Իրենք տաքսու վարորդին առևանգելու նպատակ չեն ունեցել, վերջինս նախապես իմացել է, թե ուր է գնում, և ինչ հարցի շուրջ պետք է զրուցեն:

Նուբարաշենի ավտոշուկայի մոտ գնացել են այն պատճառով, որ այնտեղ գտնվող իր ավտոմեքենայից վերցնի խանութի բանալին:

Հայկ Հակոբյանի ավտոմեքենայից ընկերներից մեկը հայտնաբերել է 100.000 դրամ, իրենք համոզվել են, որ դա հեռախոսի վաճառքի գումարն է, բայց Հակոբյանը պատասխանել է, որ դա նախատեսված է եղել ավտոմեքենայի վերանորոգման համար: Հայկը խոստացել է հեռախոսը գտնել՝ նշված գումարը թողնելով իրենց: Սակայն հեռախոսն այդպես էլ չեն գտել, որից հետո դիմել է ոստիկանություն[1]:

9. Վկաներ Անահիտ Բունիաթյանի և Սուրեն Սարգսյանի ցուցմունքների համաձայն՝ *«(…) 2014թ. հուլիսի 24-ին, ժամը 1900-ի սահմաններում գտնվել են Երևան քաղաքի Սարյան փողոցում և տուն վերադառնալու նպատակով կանգնեցրել են պատահական տաքսի ավտոմեքենա, որով վերադարձել են տուն: Մեքենայում բոլորը նստել են հետևի նստատեղին, ու քանի որ երեխան անհանգիստ է եղել, «Այֆոն 5» տեսակի բջջային հեռախոսը խաղալու համար տվել են նրան, ով ամբողջ ճանապարհին զբաղվել է դրանով: Հասնելով իրենց տան մոտ, երեքով իջել են մեքենայից և մտել տան բակ: Այդ ժամանակ, հիշելով, որ մեքենայում մնացել հեռախոսը, անմիջապես դուրս են եկել փողոց ու տեսել, որ իրենցից 15 մետր հեռավորության վրա՝ նույն տաքսին շրջադարձ է կատարում: Այն պահին, երբ տաքսին հասել է իրենց մոտ, ձեռքով կանգնեցրել են մեքենան՝ նույնիսկ ձայն են տվել, սակայն տաքսին չի կանգնել և շարունակել է ընթացքը:Այդ ժամանակ, ձեռքով երկու անգամ հարվածել են մեքենայի բեռնախցիկին, սակայն վարորդը արագացնելով մեքենայի ընթացքը՝ հեռացել է: Իրենք նայել են մեքենայի հաշվառման համարանիշները, սակայն մոռացահել են միայն առջևի և հետևի 2-ական թվերը՝ 29 և 01, մնացած տվյալները չեն կարողացել հիշել: Դրանից հետո, զանգահարել են 094-97-97-50 հեռախոսահամարին, որն այդ պահին տեղադրված է եղել մեքենայում մոռացված հեռախոսի մեջ, սակայն զանգերին պատասխանող չի եղել, ապա մի քանի զանգից հետո՝ հեռախոսն անջատվել է: Հեռախոսը մեքենայում թողնելու վերաբերյալ հայտնել են Սուրեն Սարգսյանին, ով խոստացել է, որ անձամբ կզբաղվի դրա հայտնաբերման հարցով, ուստի իրենք ոստիկանություն չեն դիմել: Այնուհետև, 27.07.2014թ. Ս.Սարգսյանն իրենցից տեղեկացել է հեռախոսի տուփի գտնվելու վայրի վերաբերյալ: Իրենք ունեն երկու հատ «Տոյոտա Պոադո» մակնիշի ավտոմեքենա, որոնք վարում*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 152-155, 191-193:

են իրենց տրան անդամները (...)»։[2]

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշման պատճառաբանությունները հիմնականում հանգում են հետևյալի. *«(...)* Մարդուն առևանգելն ազատության դեմ ուղղված հանցագործություններից է: Տվյալ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն անձի անձնական, ֆիզիկական ազատությունն է: Որպես լրացուցիչ օբյեկտ հանդես է գալիս մարդու կյանքը, առողջությունը և այլն:

Մարդուն առևանգելու հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է անձին իր կամքին հակառակ կամ առանց իր կամքը հաշվի առնելու գաղտնի կամ բացահայտ բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս հանելով, այլ վայր տեղափոխելով և այնտեղ պահելով: Եթե անձին իր կամքին հակառակ առևանգելու դեպքում տուժողի կամքը ճնշվում է բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով, ապա առանց անձի կամքը հաշվի առնելու առևանգելու դեպքում տուժողի կամքը հաշվի չի առնվում, և վերջինս առևանգվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Ընդհանուր առմամբ, հոդվածի դիսպոզիցիայի նկարագրությունից հետևում է, որ անձը կարող է առևանգվել խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով:

Առևանգման վերոնշյալ եղանակներից խաբեությունը դրսևորվում է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով կամ որոշակի փաստեր, հանգամանքներ, իրադարձություններ թաքցնելով՝ նպատակ հետապնդելով տուժողին ապակողմնորոշելու, ներգործելու իր գտնվելու վայրն ընտրելու ազատ կամաարտահայտության վրա՝ այդ կերպ նաև խուսափելով նրա հնարավոր դիմադրությունից: Մասնավորապես, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով՝ հանցավորը նպատակ է հետապնդում գաղտնի՝ երրորդ անձանց բացակայությամբ, կամ բացահայտ՝ վերջիններիս ներկայությամբ, անձին իր կամքով գտնվելու վայրից տեղափոխելու և պահելու այլ վայրում: Տվյալ եղանակով առևանգման հանցակազմի հատկանիշների առկայությունը հաստատված համարելիս էական նշանակություն ունի տուժողի և հանցավորի փոխհարաբերությունների, առևանգմանն անմիջապես նախորդող հանգամանքների, տուժողին իր գտնվելու վայրից հանցավորի կողմից ընտրված վայր հասցնելու համար գործադրված միջոցի, տուժողին հայտնված՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության համակողմանի գնահատումը:

Սուբյեկտիվ կողմից առևանգումը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի անձին առևանգելու՝

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 39-42, 57-59, հատոր 2-րդ, թերթեր 115, 116:

հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանա իր գործողություններով անձին իր գտնվելու վայրից խաբեությամբ, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով գաղտնի կամ բացահայտ տեղափոխել այլ վայր և այնտեղ պահել: Որպես հանցագործության սուբյեկտ կարող է հանդես գալ 14 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը»:

(…)

Մասնավորապես, ամբաստանյալների մեղքն առաջադրված մեղադրանքում հիմնավորվում է ոչ միայն տուժող Հ.Հակոբյանի դատաքննական ցուցմունքով այն մասին, որ ճանապարհին ուղևորն իրեն ոչինչ չի ասել հեռախոսի շուրջ զրուցելու հետ կապված, և վերջինս միայն տեղ հասնելուց է հասկացել, որ իրեն խաբեությամբ բերել են տվյալ վայր՝ հեռախոսի հետ կապված հարցի պարզաբանման համար, այլ նաև վկաներ Ա.Հունանյանի, Օ.Գևորգյանի, Գ.Դայանի, Հ.Միրզոյանի, Ա.Գևորգյանի ցուցմունքներով, լուսանկարով Ս.Սարգսյանին ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ, ամբաստանյալների հեռախոսահամարների վերծանումների զննության արձանագրությամբ: Դրանց, ինչպես նաև ամբաստանյալներ Ս.Սարգսյանի և Հ.Դանոյանի նախաքննական ցուցմունքների համադրված վերլուծությունից հետևում է, որ ամբաստանյալները նախնական համաձայնությամբ տաքսու վարորդ՝ գործով տուժող Հ.Հակոբյանին խաբեությամբ են տեղափոխել իրենց կողմից ընտրված՝ Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի փողոցի վրա գտնվող ավտոշուկայի տարածք և առևանգել:

Այսպես՝ վերը նշված ապացույցներից հետևում է, որ տաքսու կեղծ պատվերը վկա Ա.Հունանյանի միջոցով կատարվել է ամբաստանյալների խնդրանքով, տաքսու վարորդին իրենց կողմից ընտրված վայր հասցնելու և ենթադրաբար հափշտակված հեռախոսի շուրջ նրա հետ զրուցելու համար: Ընդ որում, տաքսու պատվերը վկա Ա.Հունանյանի կողմից, վերջինիս հեռախոսով կատարելու կապակցությամբ ամբաստանյալների ներկայացրած պատճառաբանությունները՝ հեռախոսի մարտկոցը պարպված լինելու կամ հեռախոսահամարն արգելափակված լինելու վերաբերյալ, հերքվել են ինչպես ամբաստանյալների հեռախոսահամարների վերծանումների զննության արձանագրությամբ, այնպես էլ հենց ամբաստանյալների ցուցմունքներով, որոնց համաձայն՝ դեպքի օրը նրանց հեռախոսները եղել են ակտիվ, և նրանք հեռախոսային կապի մեջ են գտնվել ինչպես տաքսու պատվերը կատարած Ա.Հունանյանի, այնպես էլ այդ պատվերով տաքսի նստած ուղևոր Արթուրի հետ:

Ավելին՝ տաքսու կեղծ պատվեր կատարելու և այդ եղանակով տուժողին ամբաստանյալների կողմից ընտրված վայր հասցնելու մասին է վկայում ապացույցներով հաստատված նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալներ Հ.Դանոյանը, Ս.Սարգսյանը և վերջինիս ընկերները «Կայարանի» դպրոցի

մոտ գնացել են իրենց ավտոմեքենայով, սակայն ամբաստանյալ Ս.Սարգսյանի ընկերներից մեկը, իջնելով այդ մեքենայից, նստել է տաքսի մեքենան և պատվիրել ուղևորվել ամբաստանյալ Ս.Սարգսյանի կողմից մատնանշված այն նույն վայրը՝ ավտոշուկան, որտեղ իրենց ավտոմեքենայով գնացել են մյուսները:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ *«(…)* Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու, ամբաստանյալներ Ս.Սարգսյանին և Հ.Դանոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները*(…)*»[1]:

Վճռաբեկ դատարանի դատավոր Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումը և եզրահանգումը.

11. Ծանոթանալով Սուրեն Ֆելիքսի Սարգսյանի և Հարություն Հակոբի Դանոյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0042/01/16 գործի նյութերին, ստորադաս դատարանների դատական ակտերին, վերջիններիս պաշտպանի ներկայացրած վճռաբեկ բողոքին և Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմանը՝ սույն հատուկ կարծիքով հայտնում եմ իմ անհամաձայնությունը՝ վերոնշյալ որոշման պատճառաբանական հատվածում առկա որոշ եզրահանգումների և եզրափակիչ մասի վերաբերյալ, ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում մարդուն առևանգելու, այն է՝ խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելու համար, եթե բացակայում են սույն օրենսգրքի 218-րդ հոդվածով /Պատանդ վերցնելը/ նախատեսված հանցագործության հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը քրեական պատասխանատվություն է նախատեսում նույն գործողությունը կատարելու համար՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Նշված հանցագործության հիմնական օբյեկտը մարդու անձնական ազատությունն է, ինչը նշանակում է, որ ՀՀ տարածքում յուրաքանչյուրին երաշխավորվում է տեղաշարժի, գտնվելու և կեցության վայրի ազատությունը:

Տուժողը կարող է լինել ինչպես մասնավոր, այնպես էլ՝ պաշտոնատար անձ: Հանցագործությունն օբյեկտիվ կողմից դրսևորվում է գործողության

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 250-251, 253-255

միջոցով. տուժողին, իր կամքին հակառակ, տեղափոխելով այն վայրից, որտեղ նա գտնվել է՝ վերջինիս ազատության հետագա սահմանափակմամբ:

Առևանգումը կարող է լինել գաղտնի, բացահայտ, բռնության կամ բռնության սպառնալիքի կիրառմամբ, խաբեությամբ, վստահությունը չարաշահելու միջոցով, մարդու վիճակն օգտագործելու միջոցով, որի դեպքում վերջինս չէր կարող ամբողջությամբ հասկանալ հանցավորի գործողությունների բնույթը:

«Կամքին հակառակ» արտահայտությունը նշանակում է, որ տուժողի կամքը բացահայտորեն ճնշվում է, իսկ նրա ցուցաբերած դիմադրությունը հաղթահարվում է բռնություն կամ դրա գործադրման սպառնալիքի միջոցով: Դա կարող է դրսևորվել առևանգվողին կապկպելով, հարկադրաբար տրանսպորտային միջոցի մեջ տեղավորելով, սպանության կամ առողջությանը վնաս պատճառելու սպառնալիք գործադրելով և այլն:

Տուժողի կամքը հաշվի չառնելու դեպքում նրա կամքն անտեսվում, և նա տեղափոխվում է իր բնական միկրոսոցիալական միջավայրից խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով:

Խաբեություն ասելով՝ տվյալ հանցակազմի իմաստով նախևառաջ պետք է հասկանալ իրականությունը դիտավորյալ խեղաթյուրելը կամ այն գիտակցաբար թաքցնելը, դիմացինին որոշակի փաստերի, հանգամանքների, իրադարձությունների վերաբերյալ ապակողմնորոշելը՝ իր գտնվելու վայրն ընտրելու նրա ազատ կամարտահայտության վրա ներգործելու և հնարավոր դիմադրությունից խուսափելու նպատակով: Մարդուն ազատությունից զրկելն այնպիսի վայրում, ուր նա գտնվելիս է եղել սեփական կամքով, չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով:

Տուժողի գտնվելու նոր վայրը կարող է լինել ինչպես գաղտնի, այնպես էլ հայտնի լինի տուժողի մերձավորներին կամ երրորդ անձանց: Մարդու համաձայնությունն այլ վայր տեղափոխելու վերաբերյալ բացառում է առևանգելու հանցակազմի առկայությունը: Մարդուն առևանգելը տևող հանցագործություն է:

Ազատության սահմանափակման ժամկետը կարող է հաշվվել ժամերով, օրերով, ամիսներով, տարիներով:

Հանցագործությունն ավարտված է տուժողին այն վայրից տեղափոխելու պահից, որտեղ նա գտնվել է:

Հանցագործությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցի տուժողին առևանգելու հանգամանքը, ցանկանա տուժողի կամքին հակառակ նրան տեղափոխել այլ վայր և այնտեղ պահել:

11.1. Վերոշարադրյալի համատեքստում հարկ եմ համարում նշել, որ խաբեության եղանակով մարդու առևանգման հանցակազմի հատկանիշների

առկայությունը հաստատելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ, մասնավորապես.

- Անձի տեղափոխությունը մի վայրից մյուսը պետք է իրականացվի նրա կամքին հակառակ: Հետևապես, մարդու համաձայնությունն այլ վայր տեղափոխելու վերաբերյալ բացառում է տվյալ հանցակազմի առկայությունը (օրինակ, այն դեպքում, երբ հանցավորը, տաքսու վարորդից թաքցնելով մի վայրից մյուս վայր տեղափոխվելու իրական նպատակը, արդյունքում վերջինիս կյանքի, առողջության կամ սեփականության դեմ ուղղված հանցանք է գործում, ապա նրա արարքը պետք է որակել փաստացի կատարած գործողությունների համար, առանց ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով լրացուցիչ որակելու, այն հաշվառմամբ, որ քաղաքացիներին մի վայրից մյուս վայր տեղափոխելը տվյալ վարորդների աշխատանքային բնույթն է):

- Հանցավորի կողմից տուժողին իր գտնվելու վայրից ընտրված վայր հասցնելը ենթադրում է, որ տուժողը չի իմացել և գործի փաստական հանգամանքների բերումով չէր կարող իմանալ տեղափոխման իրական դրդապատճառների և հանցավորի նպատակի մասին:

Այլ խոսքով՝ երբ տուժողը իմացել է (կամ գիտակցել է) իր գտնվելու վայրից այլ վայր տեղափոխվելու հանցավորի նպատակի մասին, արարքը չի կարող որակվել որպես խաբեությամբ զուգորդված մարդու առևանգում:

- Հանցավորը հետապնդում է անձին այլ վայրում պահելու նպատակ: Ուստի, եթե այդպիսի հատուկ նպատակը չի հաստատվում, ապա արարքը չի կարող որակվել նշված հոդվածով:

- Նոր վայր տեղափոխելու և նոր վայրում փաստացի գտնվելու ժամանակահատվածում անձը չպետք է հնարավորություն ունենա ազատ տեղաշարժվելու կամ իր հայեցողությամբ տարբեր գործողություններ կատարելու հնարավորություն:

11.2. Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ հանցավորի արարքը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է մարդուն առևանգելու հանցակազմը սահմանազատել այլ, մասնավորապես ինքնիրավչության հանցակազմից, որը բնորոշվում է օրենքով կամ այլ նորմատիվ-իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքների ինքնակամ (ինքնագլուխ) իրականացում, որն էական վնաս է պատճառում օրենքով սահմանված շահերին (ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդված):

Օրինակ՝ անձը բռնությամբ կամ այլ եղանակով վերցնում է ուրիշի գույքը պարտքի փոխարեն, ենթադրյալ հափշտակված գույքի դիմաց անձի կամքին հակառակ վերցնում է այլ գույք կամ համարժեք դրամական միջոցներ և այլն:

Հետևապես, կոնկրետ գործի փաստական տվյալներով պայմանավորված, պետք է հստակ պարզել գործի բոլոր հանգամանքները և

հանցավորի արարքին տալ ճիշտ քրեաիրավական որակում:

11.3. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հասարակ և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված որակյալ հանցակազմերին՝ հարկ եմ համարում ընդգծել, որ արարքը ծանրացնող հատկանիշով որակելու համար անհրաժեշտ է նախ պարզել, հավաստել, որ առկա են հասարակ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները: Այլ կերպ՝ եթե անձի արարքում բացակայում է առևանգման հասարակ (հիմնական) հանցակազմի պարտադիր հատկանիշներից որևէ մեկը, ապա այն այլևս չի կարող որակվել ծանրացնող հատկանիշով:

Միևնույն ժամանակ, երբ անձի արարքում առկա են հասարակ հանցակազմի բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերն ու դրանց բնութագրող հատկանիշները, արարքը որակյալ (ծանրացնող) հատկանիշով կարող է որակվել միայն այդ հատկանիշի առկայությունը հիմնավորող բավարար ապացույցների առկայության դեպքում:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործութունը սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

Հանցանքը համատեղ կատարելու մասին նախնական պայմանավորվածությունը պետք է հաստատված լինի գործին վերաբերող բավարար փաստական տվյալներով: Մարդուն առևանգելու հանցակազմի դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրանք առաջադրելիս պարտավոր է հիմնավորել, թե համակատարողների կոնկրետ որ գործողություններն են վկայում այն մասին, որ նրանք անմիջական մասնակցությունն են ունեցել մարդուն առևանգելու օբյեկտիվ կողմի իրականացմանը: Համապատասխան ապացույցների բացակայության դեպքում հանցակիցների արարքը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

12. Սույն քրեական գործով ձեռք բերված և ենթադրյալ արարքում ամբաստանյալներ Հարություն Դանոյանի և Սուրեն Սարգսյանի մեղքը հիմնավորող միակ և ուղղակի ապացույցը գործով շահագրգիռ կողմ հանդիսացվող տուժող Հայկ Հակոբյանի ցուցմունքներն են, որոնք նախաքննության ընթացքում բազմակի հակասական փոփոխությունների են ենթարկվել, իսկ գործում առկա նյութերը, գործով ձեռք բերված փաստական տվյալներն ու դատաքննության ընթացքում տուժողի արտահայտած դիրքորոշումները, վերջինիս կողմից տված ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ դնելու հիմքեր են տվել Առաջին ատյանի դատարանի համար:

Մասնավորապես՝ տուժող Հայկ Հակոբյանը, ի թիվս այլ հանգամանքների, իր ցուցմունքներում հայտնել է նաև, որ չի բացառվում, որ Ֆրանսիական դպրոցի մոտից իր մեքենան նստած ուղևորը ճանապարհին հայտնած լինի, որ գնում են Սովետաշեն՝ հեռախոսի հետ կապված հարցի մասին խոսելու համար:

Այդ առումով ուշագրավ են Սուրեն Սարգսյանի և տուժող Հայկ Հակոբյանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 26-ի, Հարություն Դանոյանի և Հայկ Հակոբյանի՝ 2015 թվականի հունվարի 26-ի, վկա Օնիկ Գևորգյանի և Հայկ Հակոբյանի՝ 2015 թվականի մարտի 9-ի առերեսման արձանագրությունները՝ տուժողի ցուցմունքները, ինչպես նաև 2015 թվականի հունվարի 26-ի և մայիսի 11-ի՝ տուժողի լրացուցիչ հարցաքննության արձանագրությունները, որոնք Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատության չի ենթարկել:

Հարկ է նշել, որ նախաքննական մարմինը 2015 թվականի մայիսի 11-ին լրացուցիչ հարցաքննել է տուժողին և ակնհայտ սուտ մատնություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված լինելով՝ տուժողը 2014 թվականի հունիսի 31-ին հանցագործության մասին հաղորդում է տվել, սակայն հետագայում՝ ամբաստանյալների հետ առերեսումների ժամանակ, հաղորդման մեջ նշված հանգամանքներին հակասող ցուցմունքներ է տվել: Քննիչն առաջարկել է պարզաբանել այդ հակասությունները, որին տուժողը պատասխանել է, որ տվել է իրականությանը համապատասխանող հաղորդում և ցուցմունքներ՝ պարզաբանելով որ երբ ուղևորը նստել է իր ավտոմեքենան, սկզբից չի ասել, թե ինչ թեմայով պետք է զրուցեն, սակայն չի բացառվում, որ ճանապարհի կեսից ասած լինի, որ գնում են հեռախոսի կամ այլ թեմայի վերաբերյալ զրուցելու: Հարյուր հազար դրամը նրանք են վերցրել իր ավտոմեքենայից, առանց իրեն հարցնելու, սակայն դրանից հետո ինքն է առաջարկել, որ գումարը մնա նրանց մոտ, քանի որ ցանկացել է իր ծանոթի միջոցով գտնել հեռախոսը, պարզել իրական գողացողին և ապացուցել իր անմեղությունը: Ինչ վերաբերում է նրան, որ հաղորդման մեջ նշել է, որ 10-15 հոգով էին եղել, ապա ներկայումս ևս չի բացառում, քանի որ ավտոշուկայի «բիսետկայում» և հարակից տարածքում եղել են մեծ քանակությամբ անձինք, սակայն չի կարող ասել, թե նրանք եղել են Սուրեն Սարգսյանի և Հարություն Դանոյանի հետ, թե ուղղակի եղել են անցորդներ:

12.1. Տուժողի այս հակասական և իրարամերժ ցուցմունքների համատեքստում Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալներ Սուրեն Սարգսյանն ու Հարություն Դանոյանը, ինչպես նաև վկա Օնիկ Գևորգյանն իրենց ցուցմունքներում բազմիցս հայտնել են, որ երբ իրենց ընկեր Արթուրը դպրոցի մոտ նստել է տաքսու վարորդի կողքի նստատեղին, տաքսիստին ասել է, որ իրականում պատվերի համար զանգած

աղջիկը զանգել է իրենց համար, որից հետո նրան հայտնել է, որ հեռախոսի կորստի հետ կապված խոսելու բան ունեն նրա հետ, և տաքսու վարորդը համաձայնել է: Արթուրն անմիջապես զանգել է իրենց և ասել, որ տաքսիստը համաձայն է հանդիպել և զրուցել իրենց հարմար ցանկացած վայրում: Քանի որ Սուրենի մյուս ավտոմեքենան գտնվել է Նուբարաշենի ավտոշուկայում, իսկ ավտոմեքենայի մեջ են գտնվել իրենց խանութի բանալիները և մոտեցել է այն փակելու ժամը, հետևաբար որոշել է հանդիպումը կազմակերպել հենց ավտոշուկայի մոտակայքում:

12.2. Առաջին ատյանի դատարանը տուժողի ցուցմունքներում առկա էական հակասությունները պատճառաբանել է նաև այն հանգամանքով, որ ամբաստանյալներ Սուրեն Սարգսյանի և Հարություն Դանոյանի հետ առերեսումների ժամանակ, ինչպես նաև դատաքննության ընթացքում տուժող Հայկ Հակոբյանը հայտնել է, թե իբր, երբ իրեն խաբեությամբ տարել են ավտոշուկայի տարածք, այնտեղ ավտոմեքենայի բանալիներից և 100.000 ՀՀ դրամից բացի, վերցրել են նաև իր բջջային հեռախոսը:

Բջջային հեռախոսը վերցնելու հանգամանքը հայտնելով՝ տուժողը նպատակ է հետապնդել հիմնավորել, որ իրեն իրականում առևանգել են, այլապես անհասկանալի կլիներ, որ առևանգված անձի մոտից հեռախոսը չվերցնեին, այլ թողնեին, որ նա ազատ օգտագործի այն:

Սակայն դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հիմնավորվել է, որ ավտոշուկայի տարածքում գտնվելու ժամանակ Հայկ Հակոբյանը նաև իր հեռախոսով է հեռախոսազրույցներ ունեցել: Մասնավորապես՝ ինքն իրեն հակասելով՝ հենց տուժող Հայկ Հակոբյանն է իր ցուցմունքում հայտնել, որ վիճաբանության ժամանակ իր հեռախոսով հեռախոսազրույց է ունեցել իր ընկեր՝ քրեական գործով վկա Գրիգոր Դայանի հետ, որպիսի հանգամանքը հաստատվել է նաև հենց վկա՝ Գրիգոր Դայանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներով,[1] ինչն էլ իր հերթին ևս հերքում է այն հանգամանքը, որ տուժողն առևանգված է եղել:

Բացի այդ, տուժողն իր 2014 թվականի օգոստոսի 21-ի ցուցմունքում հայտնել է հետևյալը. «055-23-03-78 հեռախոսահամարը պատկանում է ընկերոջս՝ Գրիգոր Դայանին, որը վեճի ժամանակ զանգահարեց և ես անջատելու փոխարեն միացրեցի հեռախոսը և նա լսեց ձայները»:

Ի հակառակ տուժողի այս ցուցմունքի՝ գործով վկա Գրիգոր Դայանը 2014 թվականի նոյեմբերի 7-ի տված ցուցմունքով հայտնել է հետևյալը. «Ձեր հարցին պատասխանում եմ, որ որքանով հիշում եմ, երբ ես այդ օրը զանգեցի Հայկին, նա ինձ ասել է, որ հետո կզանգի, որից հետո անջատել է հեռախոսը: Ես նրա ձայնի մեջ որևիցե արտառոց բան չեն նկատել, կողքից ձայներ չեմ լսել»:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 113-114, դատական նիստի արձանագրություն

12.3. Հարկ է նկատել, որ տուժող Հ.Հակոբյանն ի սկզբանե իր ցուցմունքներում նշել է, որ իր ավտոմեքենայի մեջից հայտնաբերված 100.000 ՀՀ դրամը Սուրեն Սարգսյանը վերցրել է և ասել, որ այն կվերադարձնի միայն այն բանից հետո, երբ ինքը հետ կտա կնոջ բջջային հեռախոսը: Հետագա ցուցմունքներում տուժող Հայկ Հակոբյանը հայտնել է, որ ինքն է առաջարկել, որ այդ 100.000 ՀՀ դրամ գումարը որպես իր անմեղության ապացույց մնա Սուրեն Սարգսյանի մոտ, որպեսզի ինքն այդ ընթացքում գտնի բջջային հեռախոսը և հետ ստանա իր գումարը:

Մինչդեռ վերը նշվածի վերաբերյալ հատկանշական է, որ դեռևս նախաքննության ընթացքում՝ 2016 թվականի մարտի 29-ին կայացված քրեական հետապնդում չհրականացնելու մասին որոշմամբ նախաքննական մարմինն անարժանահավատ է գնահատել տուժողի ցուցմունքների գերակշիռ մասը: Մասնավորապես՝ հաստատված չի համարել տուժողի ցուցմունքներն առ այն, որ իրեն պատկանող 100.000 ՀՀ դրամը Սուրեն Սարգսյանն իր կամքին հակառակ է վերցրել, որ իրեն բազմաթիվ անձինք են հարվածել և ծեծի ենթարկել, այդ թվում՝ Սուրեն Սարգսյանը և Հարություն Դանոյանը, ուստի նշված որոշմամբ որոշել է.

1. Սուրեն Սարգսյանի կողմից Հայկ Հակոբյանից 100.000 դրամ գումար վերցնելու դրվագով Ս.Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդում չհրականացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2. Սուրեն Սարգսյանի կողմից Հայկ Հակոբյանին ծեծի ենթարկելու դրվագով քրեական հետապնդում չհրականացնել՝ Ս.Սարգսյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

3. Հարություն Դանոյանի կողմից Հայկ Հակոբյանին ծեծի ենթարկելու դրվագով քրեական հետապնդում չհրականացնել՝ Հ.Դանոյանի արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Այդ որոշումը չի վերացվել նախաքննության նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից, ինչպես նաև չի բողոքարկվել տուժող Հայկ Հակոբյանի կողմից և մտել է օրինական ուժի մեջ:

13. Սույն գործի փաստական հանգամանքները վերլուծելով հատուկ կարծիքում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

1) Տուժող Հ.Հակոբյանին առևանգելու փաստը հաստատող արժանահավատ և բավարար ապացույցներ ձեռք բերված չեն:

2) Հ.Հակոբյանը՝ որպես տաքսու վարորդ Կայարան թաղամասի Ֆրանսիական դպրոցի մոտից Նուբարաշենի ավտոշուկայի տարածք մեկնել է իր կամքով: Այն հանգամանքը, որ վերջինս նախապես իմացել է, թե ինչ հարցի շուրջ պետք է խոսեն, հերքված չէ: Այդ մասով ամբաստանյալների ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ առնելու բավարար հիմքեր գործում չկան:

3) Հ.Հակոբյանը նշված վայր մեկնել է գործով չպարզված անձանց հետ: Ամբաստանյալներն այդ ընթացքում մարդու առևանգմանը բնորոշ գործողություններ չեն կատարել:

4) Տուժողի առևանգումը նախնական հանցավոր համաձայնության գալու և համատեղ իրականացնելու մասին վկայող բավարար ապացույցներ առկա չեն:

5) Տուժողին առևանգելու և նրան նշված վայրում ապօրինի պահելու նպատակը ապացուցված չէ:

6) Մարդաշատ դեպքի վայրում Հ.Հակոբյանը հնարավորություն է ունեցել ազատ տեղաշարժվելու և ինքնուրույն գործողություններ կատարելու (մասնավորապես, զանգել է ընկերոջը՝ Գրիգոր Դայանին, դեպքի վայրից հեռացել է առանց խոչընդոտի և այլն):

Այսպիսով, Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով՝ ինչպես վկաների, այնպես էլ տուժողի ցուցմունքներով, հնարավոր չէ միանշանակ հետևություն անել առ այն, որ ամբաստանյալներ Սուրեն Ֆելիքսի Սարգսյանը և Հարություն Հակոբի Դանոյանը Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայում գտնվող թիվ 119 դպրոցի մոտից, քննությամբ դեռևս չպարզված անձանց ուղեկցությամբ տուժող Հ.Հակոբյանին խաբեությամբ տեղափոխել են Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի փողոցի վրա գտնվող ավտոշուկայի տարածք:

Առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով ապացույցները գնահատելու վերաբերյալ օրենքում ամրագրված կանոններով և Վճռաբեկ դատարանի նախադեպային մի շարք որոշումներով[1], հանգել է ճիշտ հետևության և ամբաստանյալներին արդարացրել՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը՝ ամբաստանյալների արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ, համոզիչ չեն:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ եթե նույնիսկ ամբաստանյալների գործողություններում առկա են հանցանշաններ, ապա իմ կարծիքով դրանք կարող են համապատասխանել ինքնիրավչության հանցակազմին, որին, սակայն, այդ առումով նախաքննական մարմինը և դատարանները որևէ գնահատական չեն տվել:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով «Հայաստանի

[1] Տե՛ս, mutatis mutandis, *Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13, *Միրակ Սաքանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշումները:

Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ, 29-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 361.1-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով՝

ԳՏՆՈՒՄ ԵՄ

Պաշտպանի բողոքը պետք է բավարարել՝ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 16-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի արդարացման դատավճռին:

Դատավոր՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

55. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ1/0070/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Հ. ԻՇԽԱՆՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Գևորգ Աղվանի Մանգասարյանի պաշտպան Համլետ Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի մարտի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 238-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90956017 քրեական գործը:

2017 թվականին մարտի 31-ին Գևորգ Մանգասարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 238-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի մայիսի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ի դատավճռով Գ.Մանգասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-238-րդ հոդվածի 1-ին մասով: Գ.Մանգասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-238-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 34-238-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Գ.Մանգասարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով՝ պատժի ժամկետի մեջ հաշվակցելով արգելանքի տակ գտնվելու ժամկետը՝ 3 (երեք) օրը: Գ.Մանգասարյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով:

3. Վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել մեղադրողը և ամբաստանյալի պաշտպան Հ.Դավթյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի մարտի 20-ի որոշմամբ պաշտպանի բողոքը մերժվել է, իսկ մեղադրողի բողոքը բավարարվել մասնակի. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ի դատավճիռը բեկանվել և փոփոխվել է, Գ.Մանգասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Գ.Մանգասարյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: Պատժի ժամկետի մեջ հաշվակցելով Գ.Մանգասարյանի արգելանքի տակ գտնվելու 3 (երեք) օրը՝ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 2 (երկու) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Մանգասարյանի պաշտպան Հ.Դավթյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ

ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Մանգասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 238-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ *«(…) [Ն]ա, հանդիսանալով ՊԲ 46677 զորամասի 3-րդ տանկային գումարտակի 9-րդ տանկային վաշտի 2-րդ դասակի նշանառու օպերատոր, ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2017թ. մարտի 12-ի ժամը 18:00-ից մինչև մարտի 13-ի ժամը 18:00-ն ընդգրկված լինելով նույն գումարտակի ներքին վերակարգում՝ որպես գումարտակի օրապահ, մարտի 13-ին՝ ժամը 08:15-ի սահմաններում, նույն գումարտակի զորանոցի դռան վանդակաճաղերի արանքով ձեռքը մտցնելով ներս և բացելով զինանոցում գտնվող ատրճանակների պահման չկողպված արկղը՝ այնտեղից հափշտակել է նույն վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Նարեկ Եղիշեի Դանիելյանին ամրակցված, հրազեն հանդիսացող, «Մակարով» տեսակի «ԿԳ-3048» համարի ատրճանակը, որը տեղափոխելով և նույն զորամասի սպորտավանի տարածքում հողի տակ թաքցնելով՝ ապօրինի պահել է մինչև 2017թ. մարտի 23-ը, իսկ նշված օրը՝ ժամը 20:00-ի սահմաններում, երբ արդեն ատրճանակի հափշտակման փաստը հայտնի էր դարձել զորամասի հրամանատարությանը և իրավապահ մարմիններին, գիտակցելով իր կողմից կատարած արարքները բացահայտվելու անխուսափելիությունը, ձևացնելով դրա պատահական գտնելը՝ հանել է թաքցված տեղից և հանձնել զորամասի հրամանատարությանը»*[1]:

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը գտնում է, որ Գևորգ Մանգասարյանի արարքը հանդիսանում է հրազենի հափշտակության փորձ և այն պետք է վերաորակվի ՀՀ քրեական օրենսգրքի 34-238-րդ հոդվածի 1-ին մասով:*

Այսպես, Դատարանը (…) գտնում է, որ ապացուցված է, որ Գևորգ Մանգասարյանը (…) գումարտակի զորանոցի դռան վանդակաճաղերի արանքով ձեռքը մտցնելով ներս և բացելով զինանոցում գտնվող ատրճանակների պահման չկողպված արկղը և այնտեղից վերցնելով «Մակարով» տեսակի «ԿԳ-3048» համարի ատրճանակը, ըստ էության փորձել է հափշտակել այն: Սակայն իր հանցավոր մտադրությունը ավարտին չի հասցրել, քանի որ նրան այդպես էլ չի հաջողվել հրազենը դուրս հանել զորամասի տարածքից:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 105-106:

Դատարանի համոզմամբ զորամասի զինանոցից զենքի հափշտակությունը չի կարող ավարտված համարվել, քանի դեռ զենքը չի հանվել զորամասի տարածքից: Դատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ զորամասի տարածքը պաշտպանված է պարիսպով, զորամասի մուտքը և ելքը գտնվում է մշտական հսկողության տակ: Նման պայմաններում զենքը զորամասի տարածքից ապօրինի դուրս հանելը իրենից լուրջ բարդություն է ներկայացնում և մինչև այն դուրս չհանվի զորամասի տարածքից, հանցավորը մշտապես գտնվում է բացահայտվելու՝ բռնվելու իրական առկա «վտանգի» ներքո: Նման պայմաններում թե օբյեկտիվորեն, թե հանցավորի սուբյեկտիվ ընկալման առումով, հանցագործություն իրականացնող անձն ազատորեն չի տնօրինում և չի տիրապետում հափշտակության առարկա հանդիսացող զենքը և շարունակում է գտնվել հանցագործության կատարման փուլում:

Դատարանը գտնում է, որ հիմնագուրկ է պաշտպանական կողմի այն փաստարկը, որ Գևորգ Մանգասարյանի արարքը չի կարող որակվել որպես հափշտակություն, քանի որ Գևորգ Մանգասարյանը զինանոցից հրազենը «վերցրել» է ավագ լեյտենանտ Նարեկ Եղիշեյի Դանիելյանին վատություն անելու շարժառիթով: Դատարանը գտնում է, որ պաշտպանական կողմի ներկայացված վարկածը, որ Գ.Մանգասարյանը զինանոցից հրազենը «վերցրել» է ավագ լեյտենանտ Նարեկ Եղիշեյի Դանիելյանին վատություն անելու շարժառիթով արժանահավատ չէ, քանի որ Գևորգ Մանգասարյանը որևէ լուրջ պատճառ չի նշում, որը կարող էր հիմք հանդիսանալ իր կողմից Նարեկ Դանիելյանի նկատմամբ վրեժի կամ ատելության զգացումով լցվելու և դրանից ելնելով նման արարք կատարելու համար:

(...)

Դատարանը գտնում է, որ Գևորգ Մանգասարյանի արարքը պարունակում է հրազեն ապօրինի պահելու հանցակազմի բոլոր հատկանիշները և առկա չէ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք հանդիսացող հրազենի կամովին հանձնումը:

(...)

Գևորգ Մանգասարյանը զենքի թաքստոցը բացահայտելուն աջակցել է այն ժամանակ, երբ բացահայտված է եղել զինանոցից զենքի անհայտանալու հանգամանքը և զորամասի հրամանատարությունն ու իրավապահ մարմինները սկսել են որոնողական աշխատանքների կատարումը, որպիսի պայմաններում զորամասի տարածքում թաքցված զենքը կարող էր հայտնաբերվել, իսկ կատարված հանցագործությունը բացահայտվել: Նման իրավիճակում Գևորգ Մանգասարյանի կողմից զենքի թաքստոցը ցույց տալը չի կարող գնահատվել, որպես զենքի կամովին հանձնում, քանի որ նրա այդ գործողությունը թելադրված է ոչ թե իր ազատ կամքով, այլ իրավապահ

մարմինների գործողություններով և իրադրությամբ: Սակայն կարող է գնահատվել որպես հանցագործության բացահայտման գործում ցուցաբերած աջակցություն, ինչը հանդիսանում է ոչ թե քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմք, այլ Գևորգ Մանգասարյանի արարքի և նրա անձի հանրային վտանգավորությունն էապես իջեցնող՝ մեղմացնող հանգամանք, ինչը պետք է հաշվի առնվի նրան պատժի և պատասխանատվության ենթարկելու հարցերը քննարկելիս:

(…)

Անդրադառնալով ամբաստանյալ Գևորգ Մանգասարյանի կատարած հանցագործության համար պատասխանատվության և պատժի հարցերին, Դատարանը արձանագրում է հետևյալը. ամբաստանյալ Գևորգ Մանգասարյանի անձը բնութագրող տվյալներ են զորամասի հրամանատարության կողմից դրական կողմերով բնութագրվելը, նախկինում արատավորված՝ դատապարտված չլինելը:

Դատարանը գտնում է, որ Գևորգ Մանգասարյանի կողմից կատարած արարքների պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ են կատարածի համար զղջալը և հանցագործության բացահայտմանը ակտիվորեն աջակցելը:

Վերը նշված անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները Գևորգ Մանգասարյանի կատարած բոլոր արարքներով էլ առկա են: Գևորգ Մանգասարյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

(…)

Դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Գևորգ Մանգասարյանի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ հանցագործության կատարման հանգամանքները ու նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ նա, չլինելով կալանավորված՝ չի խուսափել քննությունից ու դատից և չի կատարել այլ հանցավոր արարքներ, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Գևորգ Մանգասարյանի ուղղվելը հնարավոր է առանց նրա կողմից ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու, այսինքն՝ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (…)»[1]:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Վերաքննիչ դատարանը (…) գտնում է, որ ամբաստանյալ Գևորգ Մանգասարյանի արարքը որպես հրազենի հափշտակության փորձ՝ ՀՀ*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 95-104:

քրեական օրենսգրքի 34-238-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

(...)

Վերաքննիչ դատարանը (...) արձանագրում է, որ Գևորգ Մանգասարյանն ապրճանակը զինանոցում գտնվող արկղից հանելուց, զորամասի տարածքում գտնվող սպորտավանում հողի տակ թաքցնելուց հետո այն շուրջ 10 օր ապօրինի պահել է այնտեղ: Այդ ընթացքում Գևորգ Մանգասարյանը կարող էր ապրճանակը հանել թաքցված տեղից, օգտագործել կամ գործադրել զորամասի տարածքում կամ դուրս բերել զորամասից: Այսինքն, Գևորգ Մանգասարյանը նշված գործողությունները կատարելու իրական հնարավորություն ունեցել է, հետևաբար ապրճանակը փնտրելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել:

Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ Գևորգ Մանգասարյանի կողմից ապրճանակը զինանոցի արկղից հանելը, այն զորամասի սպորտավան տեղափոխելը և այնտեղ թաքցնելը հրազենի ավարտված հափշտակություն է: Հետևաբար Առաջին ատյանի դատարանի հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գևորգ Մանգասարյանին մեղսագրված արարքը պետք է վերաորակվի ՀՀ քրեական օրենսգրքի 34-238-րդ հոդվածի 1-ին մասով, հիմնավորված չեն:

(...)

Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկն առ այն, որ գործով առկա չէ փաստական հանգամանք, որ Գևորգ Մանգասարյանը գործել է շահադիտական նպատակով, և գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն Գևորգ Մանգասարյանի կողմից Նարեկ Դանիելյանին վախություն անելու շարժառիթով զինանոցից հրազեն «վերցնելու» հանգամանքը համարել է անարժանահավատ:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ Գևորգ Մանգասարյանը տաս օրից ավելի ժամանակով հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի ապրճանակն ապօրինի պահել է զորամասի սպորտավանի տարածքում, այն զորամասի հրամանատարությանը հանձնել է, երբ արդեն ապրճանակի հափշտակման փաստը հայտնի էր դարձել զորամասի հրամանատարությանը և իրավապահ մարմիններին, այսինքն, դա արել է բացահայտվելու մտավախությունից դրդված, այդ որոշումը չի եղել ազատ և գիտակցված ընտրության արդյունք, հետևաբար հանձնումը կամովին համարվել չի կարող, և ամբաստանյալը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատման ենթակա չէ:

Այս պայմաններում Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն նշված հանգամանքը դիտել է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք՝ հանցագործության բացահայտմանն ակտիվորեն աջակցելը:

(…)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Գևորգ Մանգասարյանին մեղսագրված արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով նվազ կարևոր դիտարկելու և հանցագործություն չհամարելու պայմաններն առկա չեն, քանի որ դրանք պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ և 235-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված հանցակազմերի հատկանիշներ և ներկայացնում են հասարակական վտանգավորություն:

Այս առումով վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում պաշտպանի վերաքննիչ բողոքի դեմ ներկայացված պատասխանում նշված պատճառաբանությունն այն մասին, որ Գ.Մանգասարյանի կատարած արարքների հանրային վտանգավորությունը կայանում է նրանում, որ նշված հրազենը դրվել է ապօրինի շրջանառության մեջ, շուրջ 10 օր դուրս մնացել հսկողությունից, նպաստավոր պայմաններ ստեղծել դրա օգտագործմամբ հանցավոր արարքների կատարման համար՝ իրական վտանգ ստեղծելով մարդկանց կյանքի և առողջության համար: Այս վտանգն առկա լինելու մասին խոսում է նաև այն հանգամանքը, որ մինչև զորամասի հրամանատարությանը հրազենի անհետացման փաստը հայտնի դառնալը Գ.Մանգասարյանն այն կամովին հանձնելու մտադրություն չի ունեցել, այլ դա կատարել է միայն դեպքի մասին հրամանատարությանը հայտնի դառնալու օրը, այն էլ բացահայտվելու մտավախությունից դրդված:

(…)

Քննության առնելով ամբաստանյալ Գևորգ Մանգասարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը Գևորգ Մանգասարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս պատշաճ գնահատման չի ենթարկել կատարված արարքների հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները:

(…)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (…) առաջին ատյանի դատարանի 2017 թվականի նոյեմբերի 10-ի դատավճիռը պետք է բեկանել և փոփոխել՝ Գևորգ Մանգասարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի և 235-րդ հոդվածի 1-ին մասերով, և նշանակված ազատազրկման ձևով պատիժը թողնել կրելու՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման (…)»[1]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 171-181:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի էական խախտումներ՝ արդյունքում կայացնելով ապօրինի և անհիմն դատական ակտ:

Մասնավորապես բողոքաբերն ընդգծել է, որ հափշտակությանը բնորոշ է ինչպես ապօրինի, այնպես էլ անհատույց և շահադիտական նպատակներով գույք ձեռք բերելը, մինչդեռ Գ.Մանգասարյանի արարքում շահադիտական դրդումները բացակայում են, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածը բացակայում է: Ուստի անհրաժեշտ է պարզաբանել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածում «հափշտակություն» հասկացությունն արդյո՞ք պետք է այլ բովանդակություն ունենա, քան սահմանվել է Վճռաբեկ դատարանի՝ *Գ.Ղլիջյանի* վերաբերյալ որոշմամբ: Վճռաբեկ դատարանը պետք է նաև պարզաբանի՝ արդյո՞ք կարելի է ավարտված հանցագործություն համարել զենքի հափշտակությունը, եթե այն թաքցվել է զորամասի տարածքում, այդ տարածքը սահմանափակ է, իսկ ելումուտը վերահսկվում է:

Բացի այդ, ըստ բողոք բերած անձի՝ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ *Հ.Բաղդասարյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտած իրավական այն դիրքորոշմանը, որ երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մոտ նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Սույն գործով Գ.Մանգասարյանի մոտ զենքի առկայության մասին իրավապահ մարմինները տեղյակ չեն եղել, ուստի զենքի հափշտակման փաստը հայտնի դառնալը և բացահայտվելու մտավախությունից դրդված զենքն ինքնակամ հանձնելը չպետք է արդյոք դիտարկվի որպես զենքի կամովին հանձնում:

Միևնույն ժամանակ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվեր Վճռաբեկ դատարանի կողմից *Ն.Արմենակյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով, քանի որ փաստական հանգամանքները նույնանման են, մինչդեռ Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կարճելու փոխարեն արձանագրել է, որ Գ.Մանգասարյանին մեղսագրված արարքները ներկայացնում են հասարակական վտանգավորություն:

9. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Գ.Մանգասարյանը հանցանք կատարել է առաջին անգամ, նրան մեղսագրվող արարքները դասվում են միջին ծանրության հանցանքների շարքին, վերջինս բնութագրվում է դրական, խոստովանել է արարքների կատարումը, ինքնակամ հանձնել է զենքը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն: Հետևաբար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելն

անթույլատրելի ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի էական խախտում:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի որոշումը և կարճել քրեական գործի վարույթը, կամ փոփոխել այն՝ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, կամ օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 10-ի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված՝ զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու հանցակազմի հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Գ.Մանգասարյանի արարքում առկա են զենքի ավարտված հափշտակության հատկանիշներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում հրազեն, դրան համալրող դետալներ, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու համար:

Մեջբերված նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Դ.Սիմիդյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում՝ ի թիվս այլնի արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անցակազմի անմիջական օբյեկտը հրազենի և հոդվածում նշված այլ առարկաների շրջանառության համար սահմանված կարգը խախտելու հետ կապված՝ անձի և հասարակության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում սեփականության հարաբերությունները:*

Հանցակազմի առարկա են հրազենը, ինչպես նաև հոդվածում նշված մյուս առարկաները (հրազենին համալրող դետալները, ռազմամթերքը, պայթուցիկ նյութերը կամ պայթուցիկ սարքերը) (...)»[1]:

Քննարկվող հանցագործությունն օբյեկտիվ կողմից կատարվում է հափշտակության կամ շորթման միջոցով:

[1] Տե՛ս *Դավիթ Սիմիդյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշման 23-րդ կետը:

13. Հափշտակության՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության հասկացությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր նախկինում կայացված որոշումների շրջանակներում՝ այն ընորոշելով որպես ուրիշի գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել[1]:

Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը սահմանել է հափշտակության պարտադիր հատկանիշները, որոնցից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է անձի արարքում հափշտակության ցանկացած եղանակի բացակայություն: Մասնավորապես օբյեկտիվ կողմից այն դրսևորվում է ուրիշի գույքն *ապօրինի և անհատույց վերցնելով* կամ հանցավորինը կամ այլ անձինը *դարձնելով* (կախված նրանից, թե որ եղանակով է կատարվում), իսկ սուբյեկտիվ կողմից՝ *շահադիտական դրդումներով*, հետևաբար՝ միայն ուղղակի դիտավորությամբ: Հափշտակությունը համարվում է ավարտված, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել (բացառությամբ ավազակության, որը նկարագրված է ձևական հանցակազմով):

Հափշտակության առարկան գույքն է՝ այն իրը (առարկան), որում արտացոլվում է մարդկային աշխատանք և որն իրենից նյութական արժեք է ներկայացնում, ինչպես նաև դրամական միջոցները, արժեթղթերն ու գույքային իրավունքները:

14. Միևնույն ժամանակ սահմանափակ շրջանառության կամ շրջանառությունից հանված որոշ առարկաների հափշտակության դեպքում սահմանվում է պատասխանատվության տարբերակված կարգ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հափշտակության այնպիսի հատուկ տեսակներին, ինչպիսիք են զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի (238-րդ հոդված), ռադիոակտիվ նյութերի (234-րդ հոդված), թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի (269-րդ հոդված) հափշտակությունը և այլն: Նշված առարկաների հափշտակությունն օժտված է առավել բարձր հանրային վտանգավորությամբ, քանի որ դրանց ապօրինի շրջանառության դեպքում նախ և առաջ վտանգվում են անձի և հասարակության անվտանգության, բնակչության առողջության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, ուստի վերոնշյալ հանցանքների համար նախատեսված է ավելի խիստ պատասխանատվություն, քան սեփականության դեմ ուղղված հանցագործությունների:

[1] Տե՛ս *Դ.Ղամբարյանի* և մյուսների վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշման 31-րդ կետը, *Գրիգոր Ղլիջյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ5/0005/01/14 որոշման 12-րդ կետը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված՝ զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի հափշտակությանը (այսուհետ՝ զենքի հափշտակություն)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն ընդգրկված է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքում: Նշված առարկաների ապօրինի շրջանառության դեպքում առաջնային վնասվում են անձի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանվածությունն ապահովող հասարակական հարաբերությունները, իսկ սեփականության հարաբերությունները մղվում են երկրորդ պլան՝ հանդես գալով որպես հանցագործության լրացուցիչ օբյեկտ:

14.1. Հիմք ընդունելով սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերում կատարված վերլուծությունը և հաշվի առնելով հափշտակության վերոնշյալ տեսակների առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պարտադիր հանդիսացող և Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված հափշտակության որոշ հատկանիշներ չեն կարող պարտադիր դիտարկվել հափշտակության հատուկ տեսակների, այդ թվում՝ զենքի հափշտակության դեպքում:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հափշտակությունների՝ անհատույց լինելուն և շահադիտական դրդումներով կատարելուն: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ հատկանիշներն առավել բնութագրական են գույքի հափշտակություններին՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործությունների: Այսպես՝ հանցավորը, հափշտակելով ուրիշի գույքը, ձգտում է նյութական օգուտ ստանալ՝ առանց դրա դիմաց հատուցում կատարելու՝ դրանով իսկ վնաս պատճառելով գույքի սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողին: Այլ կերպ՝ նյութական շահ ստանալն այն հիմնական մղիչ ուժն է, որը դրդում է հանցավորին հափշտակելու ուրիշի գույքը՝ փոխարենը չկատարելով դրա դիմաց որևէ փոխհատուցում:

Ինչ վերաբերում է զենքի հափշտակությանը, ապա նյութական շահ ստանալը միշտ չէ, որ կարող է ընկած լինել հանցանքի կատարման հիմքում: Շահադիտական դրդումների բացակայությունը չի փոխում կատարված արարքի բնույթը, չի նվազեցնում հանցագործության հանրային վտանգավորությունը, հետևաբար դրա՝ որպես պարտադիր հատկանիշ դիտարկվելու պարագայում արհեստականորեն կնեղացվեն հանցակազմի սահմանները: Այսպես՝ զենքի կամ այլ առարկաների հափշտակության դեպքում խախտվում է դրանց շրջանառության օրենքով սահմանված կարգը՝ իրական սպառնալիք ստեղծելով անձի և հասարակության անվտանգության համար՝ անկախ նրանից հանցավորը շահադիտական նպատակներ է հետապնդել, թե ոչ:

15. Ինչ վերաբերում է հափշտակությունների օբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշներին, ապա դրանք վերաբերելի են նաև զենքի հափշտակու-

թյանը: Մասնավորապես օբյեկտիվ կողմից այն դրսևորվում է հափշտակության եղանակներից որևէ մեկով և ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը հափշտակված զենքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել (բացառությամբ ավազակության):

Տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորության մասին կարող է խոսք գնալ միայն այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ազատորեն, իր հայեցողությամբ վարվելու հափշտակված զենքի հետ, որոշելու դրա «ճակատագիրը», ինչպես նաև ցանկացած ժամանակ օգտագործելու այն ըստ նպատակի: Հափշտակության ավարտման պահը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է մանրամասն վերլուծության ենթարկել գործի բոլոր հանգամանքները՝ հաշվի առնելով, մասնավորապես, հանցավորի դիտավորության ուղղվածությունը, նպատակն ու շարժառիթը, հանցագործության կատարման վայրն ու ժամանակը, ինչպես նաև գործի լուծման տեսանկյունից նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Մանգասարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 08:15-ի սահմաններում, դռան վանդակաճաղերից ձեռքը մտցնելով ներս և բացելով զինանոցում գտնվող ատրճանակների պահման չկողպված արկղը, այնտեղից հափշտակել է նույն վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Նարեկ Դանիելյանին ամրակցված, հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի «ԿԳ-3048» ատրճանակը, որը տեղափոխելով և նույն զորամասի սպորտավանի տարածքում հողի տակ թաքցնելով՝ ապօրինի պահել է մինչև 2017 թվականի մարտի 23-ը[1]:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ նախաքննության մարմինը, Գ.Մանգասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելով, արարքի իրավական որակման հարցում սխալ եզրահանգման է եկել: Մասնավորապես Գ.Մանգասարյանը *փորձել է* հափշտակել «Մակարով» տեսակի ատրճանակը, սակայն հանցավոր մտադրությունն *ավարտին չի հասցրել*, քանի որ նրան չի հաջողվել հրազենը դուրս հանել զորամասի տարածքից: Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ զորամասի զինանոցից զենքի հափշտակությունը չի կարող ավարտված համարվել, քանի դեռ զենքը չի հանվել զորամասի տարածքից[2]:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ ատրճանակը զինանոցում գտնվող արկղից հանելուց, զորամասի տարածքում գտնվող սպորտավանում հողի տակ թաքցնելուց հետո, Գ.Մանգասարյանն այն շուրջ 10 օր ապօրինի պահել է այնտեղ: Այդ ընթացքում վերջինս կարող էր ատրճանակը հանել թաքցված տեղից, օգտագործել կամ գործադրել զորամասի տարածքում կամ դուրս բերել զորամասից, այսինքն՝ ատրճանակը

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել [3]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում կատարված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր են Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ ամբաստանյալ Գ.Մանգասարյանի արարքում առկա են զենքի ավարտված հափշտակության հատկանիշներ: Այսպես՝ ամբաստանյալը, ապօրինի վերցնելով «Մակարով» տեսակի ատրճանակը, այն տեղափոխելով և նույն զորամասի սպորտավանի տարածքում թաքցնելով հողի տակ և այդ կերպ տաս օր շարունակ ապօրինի պահելով, իրական հնարավորություն է ունեցել առնվազն այն օգտագործելու սեփական հայեցողությամբ:

Հետևաբար, անհիմն են Առաջին ատյանի դատարանի այն դատողությունները, որ զորամասի զինանոցից զենքի հափշտակությունը չի կարող ավարտված համարվել, քանի դեռ զենքը չի հանվել զորամասի տարածքից: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում, երբ հափշտակությունը կատարվում է պահպանվող օբյեկտի տարածքում, որոշելու համար՝ առկա են անձի արարքում ավարտված հափշտակության հատկանիշներ, թե ոչ, անհրաժեշտ է նախ և առաջ գնահատման ենթարկել հանցավորի դիտավորությունը, նպատակն ու շարժառիթը, հափշտակված գույքի բնույթը, հանցանքը կատարելու վայրն ու ժամանակը և էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Գ.Մանգասարյանի արարքում առկա են զենքի ավարտված հափշտակության հատկանիշներ, հիմնավոր են:

18. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Գ.Մանգասարյանի արարքում շահադիտական դրդումները բացակայել են, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածը ևս բացակայում է, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում ստորադաս դատարանների այն դիրքորոշմանը, որ պաշտպանության կողմի այն վարկածը, որ Գ.Մանգասարյանը վատություն անելու շարժառիթով է զինանոցից վերցրել հրազենը, արժանահավատ չէ: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 14.1-րդ կետում կատարված վերլուծությունը, ընդգծում է, որ զենքի հափշտակության դեպքում հանցանքի կատարման շարժառիթը կարող է տարբեր լինել, ինչը որևէ կերպ չի ազդում արարքի իրավական գնահատականի վրա:

Ինչ վերաբերում է Գ.Մանգասարյանի կողմից զենքը կամովին հանձնելու, *Ն.Արմենակյանի* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0231/01/14

[3] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

որոշումը սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելի լինելու, ինչպես նաև ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անհրաժեշտության վերաբերյալ բողոքի հեղինակի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն, և Վերաքննիչ դատարանը վերոնշյալ հարցերի կապակցությամբ եկել է ճիշտ եզրահանգման:

19. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է այն թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

20. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Գ.Մանգասարյանի նկատմամբ կիրառելի է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ *«Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել՝ (…) առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց»:*

Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Սույն օրենքի կատարումը վերապահել (…) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ»:*

Նկատի ունենալով, որ Գ.Մանգասարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 2 (երկու) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով, ինչպես նաև քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքի կիրառմանը խոչընդոտող որևէ հանգամանք, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Մանգասարյանին պետք է ազատել նշանակված պատիժը կրելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Գևորգ Աղվանի Մանգասարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Գևորգ Աղվանի Մանգասարյանին ազատել նշանակված պատժից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

56. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ3/0299/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
պաշտպան՝ Ա.ԱՊՐԵՍՅԱՆԻ
տուժողի իրավահաջորդ՝ Է.ՍԱՖԱՐՅԱՆԻ
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ Կ.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արայիկ Արամի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Է.Սաֆարյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի փետրվարի 28-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90854415 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մարտի 4-ի որոշմամբ Արայիկ Սուքիասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ երկու դրվագով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ Ա.Սուքիասյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ երկու դրվագով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ Ա.Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2015 թվականի դեկտեմբերի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 19-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Սուքիասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ երկու դրվագով և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ յուրաքանչյուր դրվագով, պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Սուքիասյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 3 (երեք) ամիս ժամկետով և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանվելով փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Միհրան Կարոյի Հովակիմյանը և Գևորգ Սմբատի Ղազարյանը:

3. Տուժողի իրավահաջորդ Է.Սաֆարյանի և վերջինիս ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի, ամբաստանյալներ Գ.Ղազարյանի, Մ.Հովակիմյանի և վերջիններիս պաշտպանների վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ ամբաստանյալների և նրանց պաշտպանների վերաքննիչ բողոքները մերժել է, իսկ տուժողի իրավահաջորդ Է.Սաֆարյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 19-ի դատավճիռը՝ ամբաստանյալներ Մ.Հովակիմյանի և Գ.Ղազարյանի նկատմամբ նշանակված պատժի մասով փոփոխել է: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել տուժողի իրավահաջորդ Է.Սաֆարյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Ա.Սուքիասյանի պաշտպան Ա.Ապրեսյանը՝ նշելով, որ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վճռաբեկ բողոքն անհիմն է, և բացակայում են բողոքը վարույթ ընդունելու դատավարական հիմքերը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով (1-ին դրվագ) մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. *«(…) [Ն]ա, հանդիսանալով ՊԲ 49971 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ վաշտի ավագ, կոչումով ենթասպա, ՊԲ 49971 զորամասի հրամանատարի հրամանով նշանակված լինելով մարտական հերթապահության, նույն զորամասի պահպանության տակ գտնվող թիվ 135 մարտական դիրքում որպես դիրքի ավագ, հանդիսանալով պաշտոնատար անձ, պետ, 2015 թվականի փետրվարի 24-ին ժամը 11:30-ի սահմաններում, դիրքի գետնափոսակի մոտ սրոտգաբես անցկացնելու նպատակով շարել է դիրքի անձնակազմը և տեսնելով, որ իր նկատմամբ սրորադաս, նույն մարտական դիրքում որպես դիտորդ նշանակված ժամկետային զինծառայող շարքային Ալբերտ Էմիլի Սաֆարյանի ենթաօձիքը կեղտոտ է, ՋՈՒ Կարգապահական կանոնագրքի 5-րդ և 29-րդ հոդվածներով իրեն վերապահած կարգապահական իրավունք կիրառելու փոխարեն, իր գերակայությունը հաստատելու և ենթակաների շրջանում խստապահանջ պետի տպավորություն թողնելու շարժառիթներով, խախտելով ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 76-րդ, 77-րդ և ՋՈՒ Կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածների պահանջները կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ հայհոյանքներ է տվել և ծեծի ենթարկել վերջինիս՝ բազմաթիվ ապտակներ հասցնելով նրան (…)»*:

Բացի այդ, Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով (2-րդ դրվագ) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) [Նա,] հանդիսանալով ՊԲ 49971 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 2-րդ վաշտի ավագ, կոչումով ենթասպա, ՊԲ 49971 զորամասի հրամանատարի հրամանով նշանակված լինելով մարտական հերթապահության, նույն զորամասի պահպանության տակ գտնվող թիվ 136 մարտական դիրքում որպես դիրքի ավագ, հանդիսանալով պաշտոնատար անձ, պետ, իր նկատմամբ սրորադաս, նույն մարտական դիրքում որպես դիտորդ հերթապահության նշանակված ժամկետային զինծառայող, շարքային Խանամիր Գառնիկի Ավդալյանի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ 2015 թվականի փետրվարի 27-ին ժամը 08:30-ի սահմաններում, թիվ 135 մարտական դիրքի*

առաջնագծում դիտորդի պարտականությունները կատարելու ժամանակ, նույն վաշտի հրամանատարի պաշտոնի ժամանակավոր կատարող, կապիտան Հայկ Սարգսյանի ներկայանալը չնկատելու պատճառով, ՋՈՒ Կարգապահական կանոնագրքի 5-րդ և 29-րդ հոդվածներով իրեն վերապահված կարգապահական իրավունք կիրառելու փոխարեն, իր գերակայությունը հաստատելու և ենթակաների շրջանում խստապահանջ պետի տպավորություն թողնելու շարժառիթներով, խախտելով ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 76-րդ, 77-րդ և ՋՈՒ Կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածների պահանջները կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, 2015 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, թիվ 136 մարտական դիրքի գետնափնակի մոտ հայհոյանքներ է տվել և ապտրակներ հասցրել՝ ծեծել Խանամիր Գառնիկի Ավդալյանին (...)»[1]:

6. Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ երկու դրվագով առաջադրված մեղադրանքում Ա.Սուքիասյանին մեղավոր ճանաչելով, իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. *«(...) [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ (...) թույլատրելի և վերաբերելի ապացույցների բավարար համակցությամբ, մասնավորապես՝ Արայիկ Սուքիասյանի ինքնախոստովանական ցուցմունքներով, ամբաստանյալներ Գևորգ Ղազարյանի և Միհրան Հովակիմյանի ցուցմունքներով, տուժող Խանամիր Ավդալյանի ցուցմունքներով, վկաներ Արսեն Սարգսյանի, Միքայել Մարքարյանի, Կարեն Ազարյանի, Արթուր Խաչատրյանի ցուցմունքներով, ապացուցված է, որ 2015 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, դիրքի գետնափնակի մոտ ուրուգարեա անցկացնելու ժամանակ դիրքի ավագ, ենթասպա Արայիկ Արամի Սուքիասյանը զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ հայհոյանքներ է տվել և ծեծի ենթարկել իր նկատմամբ ստորադաս, նույն մարտական դիրքում որպես դիտորդ նշանակված ժամկետային զինծառայող շարքային Ալբերտ Էմիլի Սաֆարյանին՝ բազմաթիվ ապտրակներ հասցնելով նրան:*

(...) [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ (...) թույլատրելի և վերաբերելի ապացույցների բավարար համակցությամբ, մասնավորապես՝ Արայիկ Սուքիասյանի ինքնախոստովանական ցուցմունքներով, ամբաստանյալներ Գևորգ Ղազարյանի և Միհրան Հովակիմյանի ցուցմունքներով, տուժող Խանամիր Ավդալյանի ցուցմունքներով, վկաներ Արսեն Սարգսյանի, Միքայել Մարքարյանի, Կարեն Ազարյանի, Արթուր Խաչատրյանի ցուցմունքներով, ապացուցված է, որ 2015 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 08:30-ի սահմաններում, ենթասպա Արայիկ Արամի Սուքիասյանը զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցու-

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4-ին, թերթեր 244-245:

թյամբ հայհոյանքներ է տվել և ծեծի ենթարկել իր նկատմամբ ապորադաս, նույն մարտական դիրքում որպես դիպորդ նշանակված ժամկետային զինծառայող շարքային Խանամիր Գառնիկի Ավդալյանին՝ բազմաթիվ ապտակներ հասցնելով նրան։

(...) Ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի անձը բնութագրող տվյալներ են զորամասի հրամանատարության և բնակության վայրի կողմից միայն դրական կողմերով բնութագրվելը, ամուսնացած լինելը, թվով 1 պատվոգրով և 1 մեդալով պարգևատրվելը, նախկինում արատավորված՝ դատապարտված չլինելը։ Ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ պետք է դիտել խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխաների առկայությունը, ինքնախոստովանական ցուցմունքներ տալը և կատարածի համար զղջալը։

Ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն։

(...) [Առաջին ատյանի] դատարանը, հաշվի առնելով Արայիկ Սուքիասյանի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, նրա անձը, նրան բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված է պատիժ նաև ազատազրկման ձևով, գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներն ապահովելու համար նրա նկատմամբ կատարած արարքներից յուրաքանչյուրի համար պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով (...)։

(...) [Առաջին ատյանի] դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ հանցագործության կատարման հանգամանքներն ու նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող վերը նշված հանգամանքները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանգում է այն եզրահանգման, որ ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի ուղղվելը հնարավոր է առանց նրա կողմից ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու, այսինքն՝ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (...)»[1]։

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 79/15 եզրակացության համաձայն՝ «Ալբերտ Էմիլի Սաֆարյանը*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 36-37։

կենդանության օրոք չի տառապել որևէ հոգեկան հիվանդությամբ: Ալբերտ Էմիլի Սաֆարյանի մոտ կենդանության օրոք առկա չեն եղել անձի այնպիսի փոփոխություններ, որոնք կարող էին նրան հակելու ինքնասպանության, ստեղծված իրավիճակը չի զրկել նրան իր գործողությունների բնույթը գիտակցելու և ղեկավարելու հնարավորությունից, սակայն միևնույն ժամանակ սուիցիդենտի անձի անհատական հոգեբանական ուսումնասիրման վերլուծությունը, ինչպես նաև նրա շուրջ ծավալված իրավիճակի ուսումնասիրությունը, հնարավորություն է տալիս ենթադրել, որ Ալբերտ Էմիլի Սաֆարյանի մոտ դելիկտի կատարման կամ դրան նախորդող պահին զարգացել է ևևրոտիկ դեպրեսիվ վիճակ առկա հոգետրավմատիկ ֆոնի վրա, որը նրա մոտ կարող էր որոշում առաջացնել ինքնասպանություն կատարել:

(...) Քրեական գործի ուսումնասիրությունից պարզվում է նաև, որ մեղադրյալ Արայիկ Արամի Սուքիասյանի արարքի և Ալբերտ Էմիլի Սաֆարյանի կողմից ինքնասպանություն կատարելուն նախորդող հոգեվիճակի մեջ առկա չէ ուղղակի պատճառահետևանքային կապ»:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի արարքի և Ալբերտ Սաֆարյանի կողմից ինքնասպանություն կատարելուն նախորդող հոգեվիճակի մեջ ուղղակի պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքը առկա լինելու կամ չլինելու մասին դատարանի հետևությունները, ի թիվս այլոց, պետք է հիմնված լինեն դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 79/15 եզրակացության հիման վրա, որը համարվում է ապացույցի ինքնուրույն տեսակ:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ [Ա]ռաջին ատյանի դատարանը վերը նշված փորձաքննության եզրակացությունը քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատել է արժանահավատության և հիմնավորվածության տեսանկյունից և ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի արարքներին տվել է ճիշտ քրեաիրավական գնահատական:

Ինչ վերաբերում է տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքի փաստարկին այն մասին, որ դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 79/15 եզրակացությունը թերի է, քանի որ նշված փորձաքննության կատարման ժամանակ տուժող Ա.Սաֆարյանի ծնողի հարուցած մարմնական վնասվածքի ծանրության վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը ներկայացված չի եղել, մինչդեռ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը փորձաքննության նշանակումից հետո ցուցմունք է տվել, որ կեղտոտ ենթաօձիք կրելու պատճառով 23.02.2015 թվականին ծեծի է ենթարկել Ա.Սաֆարյանին և բռնություն գործադրել վերջինի նկատմամբ, ինչի հետևանքով կորկրվել է տուժողի ծնոտը, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

Թեև հոգեբան-հոգեբույժ փորձագետները հետմահու դատահոգեբուժական-դատահոգեբանական համալիր փորձաքննության կատարման ժամանակ տեղեկություններ չեն ունեցել տուժող Ա.Սաֆարյանի մարմնական վնասվածքի (ծնոտի կոտրվածքի) ծանրության աստիճանի մասին, սակայն մատնանշված հանգամանքը չի կարող կասկածի տակ դնել դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 79/15 եզրակացությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված փորձաքննության եզրակացության վերաբերյալ փորձագիտական հանձնաժողովի նախագահ Հ.Հակոբյանն [Ա]ռաջին ատյանի դատարանում տվել է պարզաբանումներ այն մասին, որ տուժող Ա.Սաֆարյանի մարմնական վնասվածքի ծանրությունը, ըստ էության, էական նշանակություն չի ունեցել Ալբերտ Սաֆարյանի ինքնասպանություն կատարելու դիտավորության ձևավորման գործում, այլ՝ պայմանավորված է եղել վերջինիս հոգեբանական ճնշվածությամբ:

Անդրադառնալով տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքի փաստարկին այն մասին, որ տուժող Ալբերտ Սաֆարյանի ենթաօձիքը կեղտոտ լինելու պատճառով Ա.Սուքիասյանը տագնապ է հայտարարել վաշտին, ինչի հետևանքով տուժողը ենթարկվել է ծեծի՝ վաշտին իր մեղքով տագնապի մեջ պահելու համար, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մատնանշված հանգամանքը պատճառահետևանքային կապի մեջ չի կարող գտնվել տուժող Ա.Սաֆարյանի ինքնասպանություն գործելու հետ, չի կարող դիտարկվել որպես հակահրավական կամ հակաօրինական արարք:

(…)

Ամփոփելով վերոշարադրյալ բոլոր հանգամանքներն իրենց համակցությամբ՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ [Ա]ռաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Սուքիասյանին վերագրվող արարքների որակման առումով հիմնավոր հետևության հանգելու համար, անհրաժեշտ և բավարար վերլուծության ու գնահատության է ենթարկել գործի լուծման համար անհրաժեշտ բացահայտման ենթակա հանգամանքները, որի արդյունքում ամբաստանյալի հանցավոր արարքին տրվել է ճիշտ քրեահրավական գնահատական և կիրառվել է քրեական իրավունքի այն նորմը, որը ենթակա է եղել կիրառման, ուստի տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի վերաքննիչ բողոքի փաստարկները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալ Ա.Սուքիասյանի մասով գործը ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու համար:

(…) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս և նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցերը քննելիս, [Առաջին ատյանի] դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ

հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բավարար չափով ուշադրման և բազմակողմանի քննության է ենթարկել ամբաստանյալին մեղսագրված հանցանքների բնույթը, հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը հրամանատարության և բնակության վայրի կողմից բնութագրվում է դրական, ամուսնացած է, պարգևատրվել է մեկ պատվոգրով և մեկ մեդալով, նախկինում արատավորված՝ դատապարտված չի եղել, խնամքին են գտնվում մինչև 14 տարեկան երկու երեխաները, դեպքի կապակցությամբ տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, զղջացել է կատարած հանցանքների համար, և չարձանագրելով ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող որևէ հանգամանք, վերջինիս նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված երկու դրվագներով հանցանքներ կատարելու համար, նույն օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, նշանակել է արդարացի և համաչափ պատիժ:

(…) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Արայիկ Արամի Սուքիասյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով (երկու դրվագներով) [Ա]ռաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական է ու հիմնավորված, նշանակված պատիժը՝ համաչափ, հետևաբար վերջինիս մասով դատավճիռը պետք է թողնել օրինական ուժի մեջ (…)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքո-հիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հանգեցրել են ամբաստանյալ Ա.Սուքիասյանի նկատմամբ ակնհայտ անհիմն դատական ակտ կայացնելուն:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքի հեղինակն ընդգծել է, որ քրեական գործում առկա են բավարար ապացույցներ Ա.Սուքիասյանի կողմից իրեն առաջադրված մեղադրանքներից զատ այլ հանցանքներ կատարելու վերաբերյալ: Այս կապակցությամբ Առաջին ատյանի դատարանի կողմից չի կատարվել օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ավելին՝ դա տեսանելի է եղել նաև քրեական գործի նախապատրաստական փուլում, և այն պետք է վերադարձվեր մեղադրողին՝ մեղադրանքը Ա.Սուքիասյանի մասով վերաձևակերպելու համար, որը չի արվել, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից դատական ստուգման ժամանակ անտեսվել է:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 60, 62-63, 66:

Բողոքաբերի կարծիքով թույլ է տրվել նաև Ա.Սաֆարյանի կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

8.1. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ստորադաս դատարանները պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնեին հանցագործության վտանգավորությունն ու բնույթը: Բացի այդ, ամբաստանյալ Ա.Սուքիասյանի անձը բնութագրող հանգամանքները գնահատվել են ընդհանրական, մինչդեռ հանգամանքներից յուրաքանչյուրը պատիժը խստացնելու հարցում պետք է ազդող լիներ պատժաչափն առավել խիստ ընտրելու առումով:

Անդրադառնալով ամբաստանյալ Ա.Սուքիասյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը չի կարող ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրացումը:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը Ա.Սուքիասյանի մասով բեկանել և ուղարկել նոր քննության, կամ Ա.Սուքիասյանի նկատմամբ նշանակել խիստ պատիժ՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանվա՞ծ են արդյոք Ա.Սուքիասյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության և պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմնավորվածության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. Մինչ սույն որոշման նախորդ կետում բարձրացված իրավական հարցին անդրադառնալը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ երկու դրվագով: Հաշվի առնելով այն, որ վճռաբեկ բողոք է ներկայացվել տուժող Ա.Սաֆարյանի իրավահաջորդի ներկայացուցչի կողմից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման շրջանակներում քննարկման առարկա է դարձվելու միայն *առաջին դրվագով* ամբաստանյալ Ա.Սուքիասյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության հարցը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեահրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝*

համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործություններ կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (...)»:

Մեջբերված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա՝ ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից[1]:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է եզրահանգման, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

Սույն քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանը բազմիցս վերլուծության է ենթարկել և մշտապես վերահաստատել է դիրքորոշումն առ

[1] Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության սահմանների վերաբերյալ mutatis mutandis տե՛ս *Նարեկ Սարգսյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, *Գառնիկ Գալստյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14, *Էդվարդ Ադամյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշումները:

այն, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն անհրաժեշտ է դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու. նման հետևությունները պետք է հիմնված լինեն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի[1] ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, հանցավոր վարքագծի դրսևորմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցագործության եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները և այլն[2]:

14. Անդրադառնալով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ զինվորական ծառայության կարգի պահպանումը, որի միջոցով ապահովվում է ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստականությունը, բոլոր զինծառայողների, հատկապես պետերի (հրամանատարների) պարտականությունն է: Զինծառայողները, զինվորական պետերը (հրամանատարները) պարտավոր են միմյանց և ենթակաների նկատմամբ հարգանք դրսևորել, պահպանել նրանց անձնական արժանապատվությունը և զինվորական քաղաքավարության կանոնները: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելիս և դրա կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանն արարքի բնույթի հանրային վտանգավորության և աստիճանի համատեքստում այլ տվյալների հետ մեկտեղ պետք է պատշաճ գնահատման ենթարկի նաև հանցանքի կատարմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, տուժողի վարքագիծը և այլն[3]:

---

[1] Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* վերաբերյալ գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

[2] Տե՛ս, ի թիվս այլնի, թիվ ԵԿԴ/0039/01/15, թիվ ԱՐԴ/0031/01/15, թիվ ԵԱԴԴ/0038/01/15, թիվ ԵԿԴ/0130/01/15, թիվ ՍԴ/0094/01/15, թիվ ՍԴ3/0201/01/15, թիվ ԵԱՔԴ/0078/01/09, թիվ ԵԿԴ/0115/01/16, թիվ ԵՄԴ/0027/01/14, թիվ ԳԴ/0014/01/14, թիվ ՇԴ/0097/01/13 գործերով որոշումները:

[3] Տե՛ս *Հրանտ Պարանյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԴ/0132/01/13 որոշման 15-րդ կետը, *Նիկոլայ Զաքմազյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշման 17-րդ կետը:

Ս.Խաչատրյանի վերաբերյալ գործով որոշման շրջանակներում քննարկման ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում պատիժ նշանակելու առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն ոտնձգում է ոչ միայն անձի կյանքի և առողջության դեմ, այլև խախտում զինվորական կանոնագրքերով սահմանված ենթակայության կարգը՝ վկայելով հանցանք կատարած անձի կողմից զինվորական ծառայության նկատմամբ ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին, որն էլ վերջին հաշվով բացասական ազդեցություն է գործում զինվորական կարգապահության, ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածության վրա[1]:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով (1-ին դրվագ) մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ՊԲ 49971 զորամասի հրամանատարի հրամանով նշանակված լինելով մարտական հերթապահության, 2015 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, դիրքի գետնատնակի մոտ ստուգատես անցկացնելու նպատակով շարել է դիրքի անձնակազմը և տեսնելով, որ որպես դիտորդ նշանակված ժամկետային զինծառայող շարքային Ա.Սաֆարյանի ենթաօձիքը կեղտոտ է, իր գերակայությունը հաստատելու և ենթակաների շրջանում խստապահանջ պետի տպավորություն թողնելու շարժառիթով, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ հայհոյանքներ է տվել և ծեծի ենթարկել վերջինիս՝ բազմաթիվ ապտակներ հասցնելով նրան[2]:

Առաջին ատյանի դատարանն Ա.Սուքիասյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և առաջին դրվագով պատիժ է նշանակել ազատազրկում՝ մեկ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Սուքիասյանի նկատմամբ վերջնական նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի 3 (երեք) ամիս ժամկետով ազատազրկումը, պայմանականորեն չի կիրառվել: Պատիժ նշանակելիս և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև Ա.Սուքիասյանի կատարած արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը[3]:

Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Սուքիասյանի մասով անփոփոխ թողնելով ստորադաս դատարանի դատական ակտը, արձանագրել է, որ

[1] Տե՛ս *Սարգիս Խաչատրյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշման 13-15-րդ կետերը:
[2] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցում Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության, և վերջինիս նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացմանը[1]:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ առաջին դրվագով Ա.Սուքիասյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, պատշաճ գնահատականի չեն արժանացրել վերջինիս կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, մասնավորապես՝

ա) հանցագործության եղանակը և իրադրությունը, այն է՝ այլ զինծառայողների *ներկայությամբ* տուժող Ա.Սաֆարյանին *բազմաթիվ ապտակներ հասցնելը*, որոնք զուգորդվել են *հայհոյանքներ տալով*,

բ) հանցագործության վայրը՝ հանցանքը կատարվել է *մարտական դիրքում*,

գ) անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի նկատմամբ՝ հանցանքը կատարվել է *ուղղակի դիտավորությամբ*,

դ) հանցագործության շարժառիթը, այն է՝ իր գերակայությունը հաստատելու և ենթակաների շրջանում խստապահանջ պետի տպավորություն թողնելու շարժառիթով,

ե) խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը, ՊԲ 49971 զորամասի հրամանատարի հրամանով նշանակված լինելով մարտական հերթապահության, հանդիսանալով պետ, բռնություն է գործադրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող անձի նկատմամբ, ինչը վկայում է հանցանք կատարած անձի կողմից զինվորական ծառայության նկատմամբ ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեջբերված փաստական տվյալները վկայում են Ա.Սուքիասյանի կատարած արարքի հանրային բարձր վտանգավորության մասին, որպիսի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով՝ առաջին դրվագով նշանակված մեկ տարի ժամկետով ազատազրկումն ու այն պայմանականորեն չկիրառելը համաչափ չի կարող լինել կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանին ու բնույթին և ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրացումը:

[1] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Սուքիասյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության և պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմնավորվածության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

18. Անդրադառնալով բողոքաբերի կողմից սույն որոշման 8-րդ կետում բարձրացված այն փաստարկին, որ քրեական գործում առկա են բավարար ապացույցներ Ա.Սուքիասյանի կողմից իրեն առաջադրված մեղադրանքներից զատ այլ հանցանքներ կատարելու վերաբերյալ, ապա Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածը, արձանագրում է, որ գործի քննությունը դատարանում կատարվում է անձին առաջադրված մեղադրանքի սահմաններում, և թե՛ առաջին ատյանի դատարանը, թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանը գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից[1]:

Ինչ վերաբերում է բողոքաբերի պնդմանն այն մասին, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստության փուլում պետք է վերադարձվեր մեղադրողին՝ մեղադրանքը Ա.Սուքիասյանի մասով վերաձևակերպելու համար, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ դատարանն ընդհանրապես, այդ թվում՝ դատական քննության նախապատրաստության փուլում, իրավասու չէ հանդես գալու առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու նախաձեռնությամբ: Նման նախաձեռնությունը կհանգեցնի մրցակցության և անմեղության կանխավարկածի սկզբունքների խախտման, ինչն էլ իր հերթին կբերի արդար դատական քննության հիմնարար արժեքի առարկայազրկմանը[2]:

19. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, Ա.Սուքիասյանի մասով օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-399-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք Վերաքննիչ դատարանի դատական ակտը Ա.Սուքիասյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանելու և բեկանված մասով գործը նոր քննության ուղարկելու հիմք են:

[1] Դատական քննության սահմանների վերաբերյալ mutatis mutandis տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Սերոբյանի* վերաբերյալ գործով 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07, *Արկադի Պապյանի* վերաբերյալ գործով 2010 նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշումները:

[2] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 10-17-րդ կետերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և ամբաստանյալի նկատմամբ համաչափ պատիժ նշանակելու հարցը քննարկելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հանգի համապատասխան հետևության:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Արայիկ Սուքիասյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, պետք է թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով, որ այդ խափանման միջոցի կիրառման հիմքերն ու պայմանները չեն վերացել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արայիկ Արամի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը՝ պատժի մասով բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արայիկ Արամի Սուքիասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

57. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ/0104/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ ամբաստանյալ՝ Ռ.ՔԱՐԱՄՅԱՆԻ
պաշտպան՝ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
դատախազ՝ Հ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռոբերտ Ռադիկի Քարամյանի պաշտպաններ Ս.Հարությունյանի և Լ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ոստիկանության Կապանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի և 38-268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 41158317 քրեական գործը:

Նախաքննական մարմնի՝ 2017 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Ռոբերտ Քարամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, որը 2017

թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ լրացվել է և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով:

Նախաքննական մարմնի՝ 2017 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Սամվել Սարգիսի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի նոյեմբերի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի դատավճռով Ռ.Քարամյանը, արագացված դատաքննության կարգի կիրառմամբ, մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով և յուրաքանչյուր դրվագով նշանակված պատիժները լրիվ գումարելով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա, նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել կալանք՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Ս.Սարգսյանը:

3. Ամբաստանյալներ Ռ.Քարամյանի և Ս.Սարգսյանի պաշտպան Լ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մարտի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը Ռ.Քարամյանի մասով մերժել է՝ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ռ.Քարամյանի պաշտպաններ Ս.Հարությունյանը և Լ.Գրիգորյանը, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ռ.Քարամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջներն ու սահմանափակումները և չունենալով բժշկական նպատակներով, բժշկի նշանակմամբ կամ օրենքով սահմանված թույլատրելի այլ նպատակով և կարգով թմրամիջոցների շրջանառություն իրականացնելու իրավունք, նախապես պայմանավորվածություն ձեռք բերելով Սամվել*

Սարգիսի Սարգսյանի հետ միջոցներ ձեռնարկելու եղանակով իր կողմից համատեղ օգտագործման նպատակով թմրամիջոցների պատրաստմանն օժանդակելու վերաբերյալ, վերջինիս կողմից ձեռք բերված «Պիրալգին» տեսակի դեղահաբերի, յոդի, բենզինի և այլ պարագաների խառնուրդի վերամշակման եղանակով 2017 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի 26-րդ շենքի հարևանությամբ գտնվող չգործող ջրատարի տարածքում առանց իրացնելու նպատակի ապօրինի պատրաստել և պահել է զգալի չափերով՝ 0.05092 գրամ ընդհանուր քաշով «կոդեին» տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, Ռ.Քարամյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջներն ու սահմանափակումները և չունենալով բժշկական նպատակներով, բժշկի նշանակմամբ կամ օրենքով սահմանված թույլատրելի այլ նպատակով և կարգով թմրամիջոցների շրջանառություն իրականացնելու իրավունք, 2017 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի 26-րդ շենքի հարևանությամբ գտնվող չգործող ջրատարի տարածքում «Պիրալգին» տեսակի դեղահաբերի, յոդի, բենզինի և այլ պարագաների խառնուրդի վերամշակման եղանակով առանց իրացնելու նպատակի ապօրինի պատրաստել և պահել է զգալի չափերով՝ 0.031 գրամ ընդհանուր քաշով «կոդեին» տեսակի թմրամիջոց»[1]:

6. Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ի դատական նիստի ընթացքում ամբաստանյալ Ռ.Քարամյանն իր համաձայնությունն է հայտնել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքն (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) իր նկատմամբ կիրառելուն:

<u>Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքները բերվել են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

7. Բողոքաբերների կարծիքով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների խախտումներ, կայացված դատական ակտերը հակասում են Վճռաբեկ դատարանի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ մի շարք գործերով արտահայտված իրավական դիրքորոշումներին, ուստի ենթակա են բեկանման:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակները նշել են, որ ստորադաս դատարանները պատժի կրման նպատակահարմարության

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 262-263:

հարցը որոշելիս, ի թիվս այլ հանգամանքների, բազմակողմանի վերլուծության ու գնահատման չեն ենթարկել հանցավորի անձը: Մասնավորապես՝ հաշվի չեն առել այն հանգամանքները, որ ամբաստանյալ Ռ.Քարամյանին մեղսագրվում է միջին ծանրության հանցագործություն, նա բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված և արատավորված չի եղել, բացակայում են պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները և այլն:

7.1 Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակները խնդրել են ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշումը և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

8. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցը վերաբերում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն: Սակայն, հիմք ընդունելով դատական վերանայման սահմաններով կաշկանդված չլինելու հիմքերի վերաբերյալ Մ.Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները[1]՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է դուրս գալ վճռաբեկ բողոքարկման սահմաններից:

8.1. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք առկա է ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով (երկրորդ դրվագով) քրեական հետապնդումը բացառող հանգամանք:

9. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

10. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր

[1] Տե՛ս *Մ.Էլոյանի* և մյուսների վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը:

ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունք-ների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կամ վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում), կամ մեղմացնում է պատիժը, կամ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի գործողությունը տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն[1]:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առանց իրացնելու նպատակի **զգալի** չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը (...)»:*

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը (2018 թվականի հունիսի 27-ը) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում «կոդեին» տեսակի թմրամիջոցի համար որպես զգալի չափ է սահմանված եղել **0.02 գրամից մինչև 0.2 գրամը ներառյալ:**

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով «կոդեին» տեսակի թմրամիջոցի համար որպես զգալի չափ է սահմանվել **0.05 գրամից մինչև 0.25 գրամը ներառյալ:**

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Քարամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով (երկրորդ դրվագով) մեղադրանք է առաջադրվել զգալի չափերով՝ **0.031 գրամ** ընդհանուր քաշով «կոդեին» տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի 2017 թվականի օգոստոսի 9-ին ապօրինի պատրաստելու և պահելու համար[2]:

Առաջին ատյանի դատարանը, դատաքննության արագացված կարգ կիրառելով, Ռ.Քարամյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գասպար Պողոսյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ1/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

[2] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

268-րդ հոդվածի 1-ին մասով՝ վերոնշյալ դրվագով առաջադրված մեղադրանքում[1]:

Վերաքննիչ դատարանը պաշտպան Լ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ամբաստանյալ Ռ.Քարամյանի մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ[2]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները վերացնում են Ռ.Քարամյանին մեղսագրված արարքի հանցավորությունը:

Մասնավորապես, «կոդեին» տեսակի թմրամիջոցի զգալի չափի նվազագույն և առավելագույն սահմանների օրենսդրական փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրանք վերացնում են **0.031 գրամ** «կոդեին» տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի ապօրինի պատրաստելու և պահելու արարքի հանցավորությունը: Ուստի, այդ փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և դրանց գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը կատարված հանցանքի վրա:

Վերոգրյալի պայմաններում Ռ.Քարամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով (երկրորդ դրվագով) քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այն է՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Համաներման մասին օրենքն ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով (առաջին դրվագով) քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առանց իրացնելու նպատակի **զգալի** չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

[1] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

(…)

13) ընդունվել է համաներման մասին օրենք:

(…)

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:

6. Սույն հոդվածի առաջին մասի (…) 13-րդ [կետում նշված հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«(…) [Հ]արուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անմիջականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է տուժողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝*

1) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ ոչ ավելի, քան չորս տարի ժամկետով ազատազրկում (…)»:

Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «*Սույն օրենքի կատարումը վերապահել՝*

(…)

3) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ (…)»:

16. Համաներման մասին օրենքի ընդունման, որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանքի, վերաբերյալ Վճռաբեկ դատարանը *Թադևոս Գևորգյանի* գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Հ]ամաներման ակտի ընդունումը քրեական դատավարության ցանկացած փուլում բացառում է քրեական գործի վարույթը: Համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի վերոնշյալ պարտականությունը, սակայն, որոշակի վերապահում ունի, մասնավորապես՝ համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը ենթակա է կարճման այն դեպքում, երբ մեղադրյալը դրա դեմ չի առարկում:*

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, (…) որ համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործ չհարուցելու, քրեական հետապնդում չիրականացնելու և հարուցված քրեական գործը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի լիազորության իրականացման

համար անհրաժեշտ իմպերատիվ պահանջ է հանդիսանում անձի համաձայնությունը: Համաներման ակտի կիրառման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու դեպքում անձի համաձայնությունը հանդիսանում է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք և կապված է բացառապես իր նկատմամբ համաներման ակտ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ անձի ցանկության հետ: Հետևաբար, համաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն ենթադրում է, որ վերջինս յուրաքանչյուր դեպքում պարտավոր է քննարկման առարկա դարձնել համաներման ակտի կիրառման հարցը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ ամբաստանյալը համաձայն չէ համաներման ակտի կիրառման հետ, պարտավոր է բացառել դրա կիրառումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իր նկատմամբ համաներման ակտի կիրառման դեպքում անձի համաձայնությունը վերաբերում է բացառապես նշված ակտի կիրառմանը, և դրա բացակայության դեպքում գործի վարույթը շարունակվում է ընդհանուր կանոններով՝ հնարավորություն տալով անձին հասնելու ամբողջական «reաբիլիտացիայի»: Հետևաբար, Համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի վարույթի կարճման հնարավորության դեպքում որևէ այլ, այդ թվում անձի կողմից հանցանք կատարելն ընդունելու կամ չընդունելու հիմքով համաներման ակտի չկիրառումը հանդիսանում է անձի իրավունքների խախտում (...)»[1]:

17. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն դեպքում, երբ համաներման մասին օրենքն ընդունվում է գործը դատական քննության փուլում գտնվելու ժամանակահատվածում, այդ հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելու պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում: Մասնավորապես, այն դեպքում, երբ ամբաստանյալը համաձայն է, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի համաներման մասին օրենքի ընդունման հիմքով, և առկա են նաև այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու համար անհրաժեշտ օրենքով նախատեսված վավերապայմանները, ապա դատարանը, կաշկանդված չլինելով բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, պարտավոր է անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Քարամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ (առաջին դրվագով) մեղադրանք է առաջադրվել զգալի չափերով՝ 0.05092

[1] Տե՛ս *Թադևոս Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԼԴ/0203/01/11 որոշման 16-18-րդ կետերը:

գրամ ընդհանուր քաշով «կոդեին» տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի 2017 թվականի հուլիսի 10-ին ապօրինի պատրաստելու և պահելու համար[1]:

Առաջին ատյանի դատարանը, դատաքննության արագացված կարգ կիրառելով, Ռ.Քարամյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ վերոնշյալ դրվագով առաջադրված մեղադրանքում [2]:

Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ռ.Քարամյանի մասով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ[3]:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ՝

ա) ամբաստանյալ Ռ.Քարամյանը մեղադրվում է **2017 թվականի հուլիսի 10-ին** կատարված հանցագործության մեջ**,**

բ) ամբաստանյալ Ռ.Քարամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող հանցագործության համար որպես պատիժ է նախատեսված **ազատազրկում՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով,**

գ) ամբաստանյալ Ռ.Քարամյանը **համաձայնություն է հայտնել** իր նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառմանը[4]:

Այսինքն՝ վերը նշված հանգամանքների համակցությունից հետևում է, որ Ռ.Քարամյանը մեղադրվում է հանցագործություն կատարելու մեջ, որը տեղի է ունեցել մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը և որի համար նախատեսված պատիժը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, ամբաստանյալը համաձայն է իր նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառմանը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա են ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման անհրաժեշտ վավերապայմանները: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքն ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ կիրառելուն խոչընդոտող որևէ հանգամանք:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Համաներման մասին օրենքն ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

(առաջին դրվագով) քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, այն է՝ Համաներման մասին օրենքի ընդունման հիմքով:

20. Վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանելու և փոփոխելու Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկրորդ դրվագով առաջադրված մեղադրանքում ճանաչելու Ռ.Քարամյանի անմեղությունը և այդ մասով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ առաջին դրվագով առաջադրված մեղադրանքով Ռ.Քարամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի՝ Համաներման մասին օրենքի ընդունման հիմքով:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Ռ.Քարամյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված՝ չհեռանալու մասին ստորագրությունը, ենթակա է վերացման:

21. Նշված պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի՝ սույն որոշման 7-րդ կետում բարձրացված փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի որոշումը՝ ամբաստանյալ Ռոբերտ Ռադիկի Քարամյանի մասով բեկանել ու փոփոխել:

2. Ամբաստանյալ Ռոբերտ Քարամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկրորդ դրվագով առաջադրված մեղադրանքում արդարացնել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ

քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա Ռոբերտ Քարամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ առաջին դրվագով քրեական հետապնդումը դադարեցնել:

4. Ամբաստանյալ Ռոբերտ Ռադիկի Քարամյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

5. Դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

58. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0120/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով մեղադրյալ Ներսես Մանուկի Շիրինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 5-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2018 թվականի հունվարի 8-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13151218 քրեական գործը:

2018 թվականի հունվարի 22-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 13157618 քրեական գործը:

2018 թվականի փետրվարի 1-ին որոշում է կայացվել թիվ 13151218 քրեական գործը թիվ 13157618 քրեական գործին միացնելու մասին:

Բացի այդ, 2018 թվականի փետրվարի 14-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 13169118 քրեական գործը:

2018 թվականի փետրվարի 28-ին որոշում է կայացվել թիվ 13169118 քրեական գործը թիվ 13157618 քրեական գործին միացնելու մասին:

2. 2018 թվականի փետրվարի 27-ին որոշում է կայացվել Ներսես Շիրինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Նույն օրը մեղադրյալ Ն.Շիրինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, և հայտարարվել է հետախուզում:

2018 թվականի մարտի 3-ին Ն.Շիրինյանը հայտնաբերվել և նեկայացվել է վարույթն իրականացնող մարմին ու նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

3. Նախաքննական մարմինը 2018 թվականի մարտի 26-ին միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) թիվ 13157618 քրեական գործով մեղադրյալ Ն.Շիրինյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը 2 (երկու) ամիս ժամկետով կիրառելու մասին, որն Առաջին ատյանի դատարանի նույն օրվա որոշմամբ մերժվել է:

4. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի մայիսի 5-ի որոշմամբ մերժվել է, բողոքարկված դատական ակտը՝ թողնվել անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 5-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Ն.Շիրինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ *«(...) [Ն/ա, առանց իրացնելու նպատակի, իր անձնական օգտագործման համար ապօրինի ձեռք է բերել և պահել խոշոր չափերով՝ 0.44 գրամ «Մեթամֆետրամին» տեսակի թմրամիջոց, որը 2017 թվականի դեկտեմբերի 29-ին հայտնաբերվել է ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների կողմից:*

Այսպես.

Ներսես Մանուկի Շիրինյանը քննությամբ չպարզված ժամանակ և հանգամանքներում, անհայտ անձից, առանց իրացնելու նպատակի՝ իր գործածման համար, ապօրինի ձեռք բերելով խոշոր չափերով՝ 0.44 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց՝ հետագա գործածման համար պահել է իր մոտ:

2017 թվականի դեկտեմբերի 29-ին, ժամը 16:45-ի սահմաններում, Ներսես Մանուկի Շիրինյանը ԲՄՎ մակնիշի ավտոմեքենան Երևան քաղաքի Վարդանանց - Երվանդ Քոչար փողոցների խաչմերուկում՝ արգելված վայրում կայանելու հարցի շուրջ վիճաբանել է ոստիկանության ՊՊԾ գնդի աշխատակիցների հետ, ապա, դիմելով փախուստի, Վարդան Մամիկոնյանի արձանի մոտ գրպանից հանել է կլորից դրամապանակը և նետել գետնին: Դեպքի վայրի զննությամբ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի աշխատակիցները հայտնաբերել և վերցրել են կլորից դրամապանակը, որի մեջ առկա է եղել պոլիէթիլենային փաթեթ, խոշոր չափերով՝ 0.44 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց»[1]:

7. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշումներով Ն.Շիրինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը[2] և հայտարարվել է հետախուզում[3]: 2018 թվականի մարտի 3-ին հետախուզման մեջ գտնվող Ն.Շիրինյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին[4]:

7.1. Հարցաքննության կանչելու վերաբերյալ ծանուցագրի համաձայն՝ Ն.Շիրինյանը հրավիրվել է քննիչի մոտ որպես մեղադրյալ հարցաքննության 2018 թվականի մարտի 6-ին՝ ժամը 09:00-ին: Հիշյալ ծանուցագրի վրա առկա է հետևյալ ձեռագիր գրառումը՝ *«չեմ կարող ներկա գտնվել և խնդրում եմ քննիչին՝ կանչել 10.03.2018թ.* [ստորագրություն]»[5]:

Հարցաքննության կանչելու վերաբերյալ մեկ այլ ծանուցագրի համաձայն՝ Ն.Շիրինյանը հրավիրվել է քննիչի մոտ որպես մեղադրյալ հարցաքննության 2018 թվականի մարտի 15-ին՝ ժամը 14:30-ին: Հիշյալ ծանուցագրի վրա առկա է հետևյալ ձեռագիր գրառումը՝ *«ստացա օրինակը* [ստորագրություն]»[6]:

«Բերման ենթարկելու մասին» քննիչի որոշման համաձայն՝ պատշաճ ծանուցված, սակայն առանց հարգելի պատճառների հարցաքննության չներկայացած Ն.Շիրինյանին հարկ է բերման ենթարկել քննիչի մոտ՝ 2018 թվականի մարտի 20-ին, ժամը 13:00-ին[7]:

---

[1] Տե՛ս նյութեր, թերթեր 42-43:
[2] Տե՛ս նյութեր, թերթեր 44-45:
[3] Տե՛ս նյութեր, թերթեր 46-47:
[4] Տե՛ս նյութեր, թերթ 52:
[5] Տե՛ս նյութեր, թերթ 60:
[6] Տե՛ս նյութեր, թերթ 61:
[7] Տե՛ս նյութեր, թերթ 62:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետին հասցեագրված գրության համաձայն՝ Ն.Շիրինյանին հնարավոր չի եղել բերման ենթարկել քննչական բաժին, քանի որ բնակարանի դուռը գտնվել է փակ վիճակում[1]: Գրությանը կից ուղարկվել է նաև կազմված արձանագրությունը[2]:

Վերաքննիչ դատարանը թիվ 11339/18 գրությամբ ծանուցել է մեղադրյալ Ն.Շիրինյանին 2018 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 15:30-ին տեղի ունենալիք դատական նիստի մասին, սակայն փոստային ծրարը «չպահանջված» նշումով հետ է վերադարձվել[3]:

7.2. Թիվ ԵԴ/0684/01/18 քրեական գործն ըստ մեղադրանքի Ներսես Շիրինյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 2018 թվականի սեպտեմբերի 7-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: 2018 թվականի դեկտեմբերի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը Ն.Շիրինյանի նկատմամբ կիրառել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նրա նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցրել է[1]:

8. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում արձանագրվել է հետևյալը. *«Համաձայն նախաքննության մարմնի ներկայացված միջնորդության և դրան կից փաստաթղթերի ակնհայտ է դառնում, որ մեղադրյալ Ն.Շիրինյանը բնակության հասցեից չի բացակայում, հայտնի է նրա գտնվելու վայրը, միջնորդությանը կից փաստաթղթերում առկա չէ հավաստագիր այն մասին, որ մեղադրյալ Ն.Շիրինյանը պատշաճ կարգով ծանուցվել է հարցաքննության ներկայանալու համար, սակայն չի ներկայացել: Միաժամանակ դատարանն արձանագրում է, որ քննիչի կողմից չեն ձեռնարկվել օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցառումները մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ և նյութերի ուսումնասիրությամբ էլ պարզ է դառնում, որ մեղադրյալի հետախուզումը ձևական բնույթ է կրում:*

Միջնորդություն հարուցած անձի փաստարկներն այն մասին, որ մեղադրյալ Ն.Շիրինյանը խախտել է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, երկու անգամ առանց հարգելի պատճառների չի ներկայացել վարույթն իրականացնող մարմին, վերջինիս հնարավոր չի եղել

[1] Տե՛ս նյութեր, թերթ 63:
[2] Տե՛ս նյութեր, թերթ 64:
[3] Տե՛ս նյութեր, թերթ 97:
[4] Տե՛ս www.datalex.am, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգ:

նաև ներկայացնել՝ բնակության վայրից բացակայելու պատճառով՝ համաձայն 19.03.2018թ. բերման ենթարկելու մասին որոշմանն ի պատասխան գրության և արձանագրության, անհիմն են, չեն բխում ներկայացված նյութերից: Համաձայն ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի պետի 21.03.2018թ. գրության՝ «Ներսես Շիրինյանին հնարավոր չի եղել բերման ենթարկել Կենտրոն և Նորք-Մարաշ քննչական բաժին, քանի որ ք. Երևան, Կողբացի 1 շենք, բն. 89 հասցեի դուռը գտնվել է փակ վիճակում»:

Դատարանը հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, մեղադրյալի անձը, այն, որ [նրան] մեղսագրվում է միջին ծանրության հանցավոր արարք, ունի մշտական բնակության վայր, հայտնի է նրա գտնվելու վայրը, աշխատում է «Ռոսթ Նեվթ» ՍՊ ընկերությունում որպես փնօրեն, նախկինում դատված չի եղել, ըստ էության պատշաճ կարգով ծանուցված չի եղել վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու համար՝ դատարանը գտնում է, որ միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման (...)»[1]:

9. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Եվրոպական դատարանի ձևավորած չափանիշներից ակնհայտ է դառնում, որ անձի նկատմամբ կարող է որոշում կայացվել խափանման միջոց կալանավորում ընտրելու մասին, եթե անգամ գտնվում է հետախուզման մեջ, սակայն նրա հայտնաբերվելու դեպքում իրավասու մարմինները պարտավոր են ապահովել ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված դատավորի մուտ անհապաղ տանելու պահանջի կատարումը:*

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի կողմից ձևավորած այս դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Տ.Վահրադյանի վերաբերյալ որոշմամբ փորձեց լուծել ինչպես ՀՀ քրեադատավարական օրենսդրության և ՄԻԵԿ 5-րդ հոդվածի միջև առկա հակասությունը, այլև երաշխավորել ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմպերատիվ պահանջի կատարումը:

(...)

Արդյունքում ձևավորվել է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, երբ առանց մեղադրյալի մասնակցության դատարանում քննարկվում է նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը և, եթե դատարանի կողմից բավարարվում է քննիչի միջնորդությունը, ապա նրա ի հայտ գալու և քննիչի տրամադրության տակ հայտնվելու դեպքում՝ քննիչը 72 ժամվա ընթացքում կրկին միջնորդություն է ներկայացնում դատարան կալանավորման հարցը կրկնակի քննարկելու համար:

Համաձայնելով Վճռաբեկ դատարանի ձևավորած դիրքորոշումների հիման վրա ձևավորված դատական պրակտիկային, Վերաքննիչ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ այն պետք է ենթարկել որոշակի

[1] Տե՛ս նյութեր, թերթեր 70-73:

սահմանափակումների և կիրառելի դարձնել միայն այն դեպքում, երբ անձը գտնվում է միջազգային (միջպետական) հետախուզման մեջ, քանի որ մնացած բոլոր դեպքերում, երբ անձը գտնվում է ներպետական (տեղական) հետախուզման մեջ, քրեադատավարական օրենսդրությունն ունի այնպիսի կառուցակարգ, որը ճիշտ մեկնաբանելու և կիրառելու դեպքում կարող է բացառել՝ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը:

Այլ կերպ ասած՝ բացառապես այն դեպքում պետք է առանց մեղադրյալի մասնակցության քննարկել նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը, երբ նա գտնվում է միջազգային (միջպետական) հետախուզման մեջ, իսկ այն դեպքում, երբ նա գտնվում է ներպետական (տեղական) հետախուզման մեջ, ապա նրա նկատմամբ կալանավորման հարցի քննարկում չպետք է իրականացվի նրա բացակայությամբ կամ հեռակա կարգով:

Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը նախևառաջ պայմանավորված է ՀՀ կողմից վավերացրած միջազգային իրավական ակտերի և մասնավորապես՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի և 07.10.2002թ. Քիշնևի կոնվենցիաների (այսուհետ՝ Մինսկի և Քիշնևի կոնվենցիա), ինչպես նաև 13.12.1957 թվականի «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Հանձնման մասին կոնվենցիա) պահանջներով:

Բանն այն է, որ Մինսկի, Քիշնևի և Հանձնման մասին կոնվենցիաների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հետախուզման մեջ գտնվող անձի հանձնման մասին պահանջը կարող է կատարվել, եթե առկա է կալանավորման մասին դատարանի որոշումը (...):

Այսպիսով, միջազգային (միջպետական) հետախուզում հայտարարելու դեպքում առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը իրավաչափ է և պայմանավորված է առնվազն ՀՀ կողմից վավերացրած Մինսկի, Քիշնևի և Հանձնման մասին կոնվենցիաների պահանջների կատարման անհրաժեշտությամբ, քանի որ առանց կալանավորման մասին իրավասու մարմնի որոշման հնարավոր չէ իրականացնել մեղադրյալի միջազգային հետախուզում, նրա կալանավորում և հանձնում հայցող պետությանը: Հետևաբար, միջպետական հետախուզումն այն եզակի դեպքն է, որը թույլ է տալիս անձի նկատմամբ կալանավորման հարց քննարկել նրա բացակայությամբ: Ի դեպ, հենց այս հանգամանքով էր պայմանավորված Եվրոպական դատարանի Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով վճռում ձևավորած մոտեցումը, որով դատարանը հնարավոր է համարում միջազգային հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ առանց նրա

մասնակցության նրա նկատմամբ կիրառել կալանավորումը որպես խափանման միջոց, սակայն պայմանով, որ նրա ի հայտ գալու և իրավասու մարմինների տրամադրության տակ հայտնվելու դեպքում անհապաղ տարվի դատավորի մոտ:

Թեև այս կանոնը ՀՀ վճռաբեկ դատարանը տեղայնացրեց՝ ապահովելու համար ինչպես անձի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրավունքի իրացումը, այնպես էլ վերացնելու ՀՀ օրենսդրության և Կոնվենցիայի միջև եղած հակասությունը, սակայն չկարանջատեց հետախուզման տեսակը, արդյունքում ստացվեց այնպես, որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումներին համապատասխան՝ էական չէ, թե անձի նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, թե ներպետական՝ նրա նկատմամբ կալանավորման հարցը քննարկվում է նրա բացակայությամբ և, եթե դատարանը բավարարում է կալանավորումը, ապա նրա ի հայտ գալու դեպքում քննիչը կրկին միջնորդություն է ներկայացնում դատարան կալանավորման հարցը վերստին քննարկելու համար:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ նման պրակտիկան ոչ միայն իրավաչափ չէ և ըստ էության քրեադատավարական օրենսդրությունը շրջանցելու միջոց է, այլև դրա արդյունքում ավելորդ ծանրաբեռնվում և կրկնակի աշխատանք են կատարում, թե նախաքննության մարմինները, թե դատարանները, ավելին՝ հաճախ վտանգվում են անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ ամրագրված է այնպիսի կառուցակարգ, որը հնարավորություն է տալիս առանց հեռակա կարգով կալանավորում կիրառելու՝ լուծել ներպետական հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ նրա ներկայությունն ապահովելու հարցերը: Այլ կերպ ասած՝ ներպետական (տեղական) հետախուզման դեպքում առկա է քրեադատավարական այլ կառուցակարգ, որը կարող է լիարժեք փոխարինել հեռակա կալանավորմանը, խոսքը մասնավորապես վերաբերում է Օրենսգրքի 259-րդ հոդվածով նախատեսված մեղադրյալին հետախուզելու և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելու կառուցակարգերին:

(...)

Վերոգրյալի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ մեղադրյալը գտնվում է հետախուզման մեջ և նրա նկատմամբ կալանավորում կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվում դատարան, ապա պետք է ներկայացվեն լրացուցիչ նյութեր առ այն, որ մեղադրյալի նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, եթե նման նյութեր չեն ներկայացվում, ապա դատարանն իրավունք ունի մերժելու կալանավորման կիրառումը հենց այդ պատճառաբանությամբ: Մնացած

բոլոր դեպքերում, այսինքն՝ երբ հայտարարվում է ներպետական հետախուզում, ապա անհրաժեշտություն չկա առանց անձի որոշում կայացնել նրա նկատմամբ կալանավորում կիրառելու մասին, իսկ նրան հայտնաբերելուց հետո՝ կրկին միջնորդություն ներկայացնել դատարան արդեն իսկ ընտրված խափանման միջոց կալանավորման հարցը կրկին քննարկելու համար՝ ինչպես սահմանել է ՀՀ վճռաբեկ դատարանը Տ.Վահրադյանի վերաբերյալ որոշմամբ:

Դատարանի այս հետևության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ հաճախ արհեստականորեն հետախուզում հայտարարելու հիմքեր են ստեղծվում, այնուհետև ձևական հետախուզում հայտարարվում՝ ինչպես արձանագրել է սույն դեպքում առաջին ատյանի դատարանը և հենց այդ պատճառաբանությամբ կալանավորման միջնորդություն է ներկայացվում դատարան, որպեսզի դատարանը որոշում կայացնի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, քանի որ հետախուզում հայտարարելու փաստն ինքնին բավարար է անձի ոչ պատշաճ վարքագծի մասին հետևություն անելու համար:

Այլ կերպ ասած՝ հետախուզում հայտարարելու դեպքում կալանավորման մասին միջնորդության բավարարումը առավել մեծ հավանականություն ունի, քան առանց դրա, ուստի ձևական, առանց բավարար հիմքերի հետախուզում հայտարարելու, այնուհետև նաև այդ հիմքով կալանավորման միջնորդությունը բավարարելու ակնկալիքով անձանց իրավունքների անհիմն սահմանափակումները բացառելու նպատակներից ելնելով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պետք է բացառել ներպետական հետախուզում հայտարարելու դեպքում կալանավորման մասին հարցի քննարկումը:

(...)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 131-րդ հոդվածում ամրագրված մեղադրյալին ձերբակալելու կանոնը, թեև ամրագրված է, որպես իրավունք, այլ ոչ թե պարտականություն, սակայն բոլոր այն դեպքերում, երբ քննիչը միջնորդություն է ներկայացնում դատարան խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, ապա ձերբակալումը դառնում է պարտադիր, եթե անձի նկատմամբ հայտարարված չէ միջազգային հետախուզում:

Վերոգրյալ իրավական վերլուծության լույսի ներքո անդրադառնալով բողոքարվող որոշման օրինականությանը և հիմնավորվածությանը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ թեև այն ըստ էության գործը ճիշտ լուծող դատական ակտ է, սակայն թերի է պատճառաբանված:

Բանն այն է, որ դատարանը մերժելով քննիչի միջնորդությունը և արձանագրելով, որ հետախուզումը կրել է ձևական բնույթ, քննիչի կողմից չեն ձեռնարկվել օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցառումները

մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ՝ չի մանրամասնել, թե ինչ միջոցների մասին է խոսքը (որպիսի հարցադրում արել է բողոքաբերը):

Վերաքննիչ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ քննիչը թեև միջնորդության մեջ նշել է, որ մեղադրյալի նկատմամբ հայտարարել է հետախուզում և ըստ այդմ՝ առաջին ատյանի դատարանը միջնորդության քննարկումն իրականացրել է առանց մեղադրյալի մասնակցության, սակայն միջնորդությանը կից դատարանին չի ներկայացրել հետախուզում հայտարարելու մասին որոշումը, որպեսզի դատարանը հնարավորություն ունենար գնահատելու, թե իրականում նման որոշում կայացվել է, թե ոչ, եթե այո, ապա մեղադրյալի նկատմամբ հայտարարված է միջազգային, թե ներպետական հետախուզում:

Այսպիսով, նկատի ունենալով, որ առանց միջազգային հետախուզում հայտարարելու խոսք չի կարող լինել մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության քննարկման մասին, իսկ միջազգային հետախուզում հայտարարելու հանգամանքը պետք է ապացուցի միջնորդություն ներկայացրած անձը, իսկ այս դեպքում՝ քննիչը որևէ ապացույց չի ներկայացրել դատարանին այդ հանգամանքը ապացուցելու համար, ուստի իրավացի է դատարանի այն պատճառաբանությունը, որ հետախուզումը ձևական բնույթ է կրել, իսկ քննիչը օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները չի ձեռնարկել մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու համար:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն դեպքում քննիչը փոխարենը ղեկավարվեր Օրենսգրքի 131-րդ և 259-րդ հոդվածներով և լուծեր մեղադրյալին ձերբակալելու, այնուհետև, եթե անհրաժեշտություն կառաջանար նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, ապա նման միջնորդություն ներկայացնելու հարցերը, դրսևորելով շտապողականություն և շրջանցելով ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված և վերևում նշված մեղադրյալին հետախուզելու և ձերբակալելու կառուցակարգերը՝ միանգամից միջնորդություն է ներկայացրել դատարան կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու խնդրանքով, ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հենց քննարկվող միջոցառումների չկատարման հանգամանքն է արձանագրել առաջին ատյանի դատարանը, երբ նշել է, որ հետախուզումը կրել է ձևական բնույթ, քննիչի կողմից չեն ձեռնարկվել օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցառումները մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ և այլն:

(...)

Անդրադառնալով բողոքի մյուս փաստարկներին, Վերաքննիչ դատա-

բանն արձանագրում է, որ թեև հիմնավոր են բողոքաբերի այն պնդումները, որ առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել և քննարկման առարկա չի դարձրել հիմնավոր կասկածի հարցը, որը համարվում է կալանավորման կիրառման առաջնային պայմանը, քանի որ դատարանը մինչև կալանավորման հիմքերին անդրադառնալը պարտավոր էր քննարկել հիմնավոր կասկածի առկայության հարցը, այդուհանդերձ այս խախտումը սույն դեպքում, ինքնին, բավարար չէ դատական ակտը բեկանելու համար, քանի որ դատարանի որոշման վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ դատարանը փաստացի և ըստ էության հաստատած է համարել հիմնավոր կասկածի առկայությունը և քննարկել է միայն կալանավորման հիմքերի հարցը:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ եթե առաջին ատյանի դատարանը բավարարած լիներ քննիչի միջնորդությունը և անձի նկատմամբ կիրառած լիներ կալանավորումը որպես խափանման միջոց, իսկ բողոքը ներկայացրած լիներ պաշտպանական կողմը, ապա այդ խախտումը ներկայացնելը կլիներ իրավաչափ և միաժամանակ բավարար դատական ակտը բեկանելու համար, մինչդեռ դատախազի բողոքի հիման վրա և այն դեպքում, երբ դատարանը միջնորդությունը մերժել է կալանավորման հիմքերի բացակայության պատճառաբանությամբ, դատարանի կողմից թույլ տրված խախտումը հիմք չի կարող հանդիսանալ դատական ակտը բեկանելու համար, իսկ դատախազի բողոքն այս մասով կրում է զուտ ձևական բնույթ:

Անդրադառնալով կալանավորման կիրառման անհրաժեշտության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են և բավարար չեն առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և քննիչի միջնորդությունը բավարարելու համար:

Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդությունը մերժելու հիմքում դրել է նաև այն, որ քննիչի փաստարկներն այն մասին, որ մեղադրյալ Ն.Շիրինյանը խախտել է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, երկու անգամ առանց հարգելի պատճառների չի ներկայացել վարույթն իրականացնող մարմին, վերջինիս հնարավոր չի եղել նաև ներկայացնել՝ բնակության վայրից բացակայելու պատճառով՝ անհիմն են, չեն բխում ներկայացված նյութերից:

Դատարանը նման եզրակացություն է արել հիմնվելով՝ 19.03.2018 թ. բերման ենթարկելու մասին որոշմանն ի պատասխան ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի պետի 21.03.2018թ. գրության և կազմած արձանագրության այն մասին, որ Ներսես Շիրինյանին հնարավոր չի եղել բերման ենթարկել Կենտրոն և Նորք-Մարաշ քննչական բաժին, քանի որ ք. Երևան, Կողբացի 1 շենք, բն. 89 հասցեի դուռը գտնվել է փակ վիճակում:

Բողոքաբերն իր անհամաձայնությունն արտահայտելով դատարանի նման պնդումներին, այդուհանդերձ չի հիմնավորել որևէ փաստական տվյալով, որ իրականում մեղադրյալը պատշաճ կարգով եղել է ծանուցված, իսկ դատարանը սխալ հետևություն է արել:

Ինչ վերաբերում է քննիչի կողմից կայացրած բերման ենթարկելու մասին որոշումը չկատարելուն այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալի բնակության հասցեի դուռը եղել է փակ վիճակում՝ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ չի նշանակում, որ մեղադրյալը թաքնվում է քննությունից: Դեռ ավելին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նման պատճառաբանությամբ հետախուզում հայտարարելը և խափանման միջոց կալանավորում ընտրելու մասին միջնորդություն ներկայացնելը դատարան՝ ակնհայտ անհիմն է, քանի որ, ինչպես նշվեց վերևում, օրենքով քննիչն ուներ այլ կառուցակարգեր մեղադրյալին հայտնաբերելու համար, որից քննիչն առանց բավարար հիմնավորումների և պատճառաբանությունների չի օգտվել, իսկ այն պայմաններում, երբ մեղադրյալն ունի մշտական բնակության վայր, հայտնի է նրա աշխատանքի վայրը, մեղադրվում է միջին ծանրության հանցագործության կատարման մեջ, նախկինում դատված չի եղել և այլն, ուստի հիմնավոր է առաջին ատյանի դատարանի կողմից քննիչի միջնորդությունը մերժելը:

Դատարանը չի անդրադառնում բողոքաբերի մնացած փաստարկներին, քանի որ վերոգրյալը բավարար է հետևություն անելու առ այն, որ առաջին ատյանի դատարանի որոշումը օրինական է և հիմնավորված, իսկ վերաքննիչ բողոքը՝ անհիմն (...)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը գտել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավորված չեն, չեն բխում գործի նյութերից:

Մասնավորապես անդրադառնալով միջազգային և ներպետական հետախուզում հայտարարելու դեպքում անձին կալանավորելու առանձնահատկությունների վերաբերյալ Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ բողոքի հեղինակը նշել է, որ նման մոտեցումը չի բխում հենց Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված ինչպես Վճռաբեկ դատարանի, այնպես էլ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների էությունից: Այդ որոշումների տրամաբանությունը հանգում է նրան, որ ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրավունքի ապահովման հարցում էականն այն է, որ անձն ազատությունից փաստացի

[1] Տե՛ս նյութեր, թերթեր 114-119:

զրկվելու դեպքում անհապաղ տարվի դատավորի մոտ: Դատավորի մոտ տարվելու և լսվելու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու՝ պետության պարտականությունը մեղադրյալի նկատմամբ իրականացվող հետախուզման տեսակի հետ կապելու տրամաբանությունն առնվազն հասկանալի չէ, առավել ևս պետության՝ միջազգային պարտավորությունները վկայակոչելով:

10.1. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ ներպետական հետախուզման դեպքում առկա է քրեադատավարական այլ կառուցակարգ, որը կարող է լիարժեք փոխարինել հեռակա կալանավորմանը, այն է՝ մեղադրյալին հետախուզելու և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելու կառուցակարգը: Մինչդեռ ըստ բողոքաբերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ, 259-րդ և 285-րդ հոդվածներով սահմանված նորմերին Վերաքննիչ դատարանի տված մեկնաբանությունները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Վահրադյանի, Ասլան Ավետիսյանի, Արամ Ճուղուրյանի, Գագիկ Միքայելյանի վերաբերյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ 2018 թվականի մարտի 6-ին հարցաքննության հրավիրելու նպատակով ծանուցագիր է տրվել մեղադրյալ Ն.Շիրինյանին, ով ծանոթանալով դրան, ձեռագիր գրառում է կատարել, որ չի կարող նշված օրը ներկայանալ հարցաքննության՝ խնդրելով իրեն հարցաքննության հրավիրել 2018 թվականի մարտի 10-ին, սակայն այդ օրը չի ներկայացել՝ չներկայանալու պատճառների մասին վարույթն իրականացնող մարմնին տեղյակ չպահելով: Դրանից հետո՝ 2018 թվականի մարտի 15-ին, հարցաքննության հրավիրվելու նպատակով Ն.Շիրինյանը ստացել է համապատասխան ծանուցագիր, սակայն կրկին առանց հարգելի պատճառների չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնին: 2018 թվականի մարտի 19-ին մեղադրյալ Ն.Շիրինյանին բերման ենթարկելու մասին որոշում է կայացվել: Ոստիկանությունից ստացված գրության համաձայն՝ վերջինիս հնարավոր չի եղել բերման ենթարկել՝ տան դուռը փակ լինելու պատճառով:

Բողոքաբերն ընդգծել է, որ քննիչի կողմից ներկայացված միջնորդությամբ և դրան կից ներկայացված նյութերով հիմնավորվել է Ն.Շիրինյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանքը, հետևաբար նաև նրա նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կալանավորմամբ փոխարինելու անհրաժեշտությունը, և հակառակ դրան՝ դատարանի այն հետևությունը, որ քննիչի կողմից չեն ձեռնարկվել բոլոր հնարավոր միջոցառումները մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ, հիմնավոր չեն, քանի որ, անհասկանալի է, թե ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրված լինելու պայմաններում մեղադրյալին վարույթն իրականացնող մարմին հրավիրելու համար համապատասխան ծանուցագրեր ուղարկելուց,

բերման ենթարկելու մասին որոշում կայացնելուց բացի, օրենքով սահմանված ինչ այլ միջոցառումներ պետք է ձեռնարկեր վարույթն իրականացնող մարմինը, որոնք չի ձեռնարկել:

11.1. Ն.Շիրինյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելուց հետո հայտարարվել է հետախուզում, վերջինս հայտնաբերվել և ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին, ապա հարցաքննության ներկայանալու նպատակով երկու անգամ անձամբ ծանուցվել է, ծանուցագրերի վրա ձեռագիր գրառումներ է կատարել, որոնք վկայում են հարցաքննության օրվա, ժամի և տեղի մասին անմիջականորեն տեղեկացված լինելու մասին, սակայն առանց հարգելի պատճառների չի ներկայացել: Վերոնշյալն արդեն իսկ վկայում է, որ Ն.Շիրինյանը, չներկայանալով վարույթն իրականացնող մարմնին, այդ կերպ թաքնվել է քննությունից և խոչընդոտել քննությանը:

Միևնույն ժամանակ բողոքի հեղինակը նշել է, որ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ դեպքի օրը ավտոմեքենան սխալ կայանելու հարցի շուրջ ոստիկանության աշխատակիցների հետ առաջացած վիճաբանության ժամանակ Ն.Շիրինյանը դիմել է փախուստի, որպիսի հանգամանքը ևս բնութագրում է նրա վարքագիծը, այսինքն՝ վկայում է այն մասին, որ ենթադրյալ հանցագործության կատարումից հետո քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով վերջինս ի սկզբանե դիմել է փախուստի, նման վարքագիծը նրա կողմից դրսևորվել է քրեական գործի նախաքննության ամբողջ ընթացքում, նույնիսկ ընտրված խափանման միջոցի պայմաններում, ինչն էլ բավարար հիմք է հանդիսացել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը կալանավորմամբ փոխարինելու վերաբերյալ նախաքննական մարմնի կողմից միջնորդություն ներկայացնելու համար:

11.2. Բացի այդ, բողոքաբերը փաստարկել է, որ հիմնավոր կասկածի առկայության հարցը Առաջին ատյանի դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձվել, մինչդեռ դատարանը պարտավոր էր քննարկել հիմնավոր կասկածի առկայության հարցը, որից հետո միայն անդրադառնալ կալանավորման հիմքերին:

12. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 5-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը

պետք է քննարկել բացառապես այն դեպքում, երբ նա գտնվում է միջազգային (միջպետական) հետախուզման մեջ, իսկ այն դեպքում, երբ նա գտնվում է ներպետական (տեղական) հետախուզման մեջ, նրա նկատմամբ կալանավորման հարցի քննարկում չպետք է իրականացվի նրա բացակայությամբ կամ հեռակա կարգով:

14. Նախքան 2018 թվականի սեպտեմբերի 11-ին «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«(…) [Ք]ննիչի որոշման հիման վրա, սույն օրենսգրքով սահմանված կարգով, հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց»:*

2018 թվականի սեպտեմբերի 11-ին «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Մեղադրյալի հետախուզումը նրա գտնվելու տեղի բացահայտումն է, մեղադրյալին ձերբակալելը և վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելը:*

2. Եթե մեղադրյալի գտնվելու վայրը պարզ չէ, կամ մեղադրյալը թաքնվում է քննությունից, ապա քննիչն իր որոշմամբ հետախուզում կայտարելը հանձնարարում է հետաքննության մարմիններին՝ երկօրյա ժամկետում նշված որոշման հետ միաժամանակ վերջիններիս ուղարկելով քրեական գործ հարուցելու, անձին որպես մեղադրյալ ներգրավելու, խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումների պատճենները, հետախուզվողի դատվածության ստուգման պահանջագիրը, հետախուզվողի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«(…) Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին (…)»:*

Մեջբերված նորմերի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախկին խմբագրությամբ 259-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի) վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը *Տ.Վահրադյանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է. *«(…) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ (…) նշված իրավադրույթները, հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության առումով, չեն բխում*

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից: Նշված իրավանորմերը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրել անձի բացակայության պայմաններում առանց հնարավորություն ընձեռելու, որ հետախուզման արդյունքում հայտնաբերված անձը ներկայանա դատարան, և անձի կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ:

(…) Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը հիմնվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Այսպես, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը՝ Եվրոպական դատարանը Լադենտն ընդդեմ Լեհաստանի գործով վճռում նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն այն պահանջից, որ անձը ձերբակալվելիս կամ կալանավորվելիս պետք է բերվի դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ (Ladent v. Poland, 2008թ., գանգատ N 11036/03, կետ 75): Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում Եվրոպական դատարանի դիրքորոշումը հետևյալն է. այն, որ դատարանը հեռակա որոշում է կայացրել անձին կալանավորելու մասին այն պայմաններում, երբ անձը թաքնվում էր արդարադատությունից և գտնվում էր միջազգային հետախուզման մեջ, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին: Սակայն Թուրքմենստանից դիմումատուի վերադառնալուց և Ռուսաստանում ձերբակալվելուց հետո, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա, նա պետք է անհապաղ հասցվեր դատավորի մոտ (Garabaev v. Russia, 2007թ., բողոք N 38411/02, կետ 101):

(…)

Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ներպետական օրենդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում:

(…) Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ (…)»[1]:

[1] Տես *Տիգրան Վահրադյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշման 30-31-րդ և 33-34-րդ կետերը:

14.1. Այսպիսով, *Տ.Վահրադյանի* վերաբերյալ գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորում կիրառելու օրենսդրական նորմը այնքանով, որքանով չի երաշխավորում անձին հայտնաբերելուց հետո, արդեն վերջինիս ներկայությամբ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկում դատարանում, հակասում է ազատությունից զրկված անձին անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) հստակ ամրագրված և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջին:

15. Վերոնշյալ իրավական դիրքորոշումը համահունչ է Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկային: Այսպես՝ Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխավորված՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձի անհապաղ դատավորի մոտ տարվելու իրավունքին, ընդգծել է, որ քրեական հանցագործության կասկածանքով ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է պաշտպանված լինի դատական վերահսկողության միջոցով: Ընդ որում վերահսկողությունը պետք է բավարարի որոշակի չափանիշների, այն է՝ լինի *անհապաղ*, ինչը թույլ կտա բացահայտելու վատ վերաբերմունքի ցանկացած դեպք և նվազագույնի հասցնելու անձի ազատությանը ցանկացած չարդարացված միջամտություն, պետք է իրականացվի *ավկրումատ կարգով* և չի կարող կախված լինել կալանավորված անձի դիմումից, ինչով էլ սույն նորմը տարբերվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետից, որը կալանավորված անձին իրավունք է վերապահում դիմելու ազատ արձակվելու խնդրանքով[1]:

Ընդ որում, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ վերոնշյալ չափանիշները կիրառելի են նաև այն դեպքում, երբ քրեական հանցանք կատարելու մեջ կասկածվող և քննությունից ենթադրաբար թաքնվող անձն արգելանքի է վերցվում կալանավորելու մասին որոշման հիման վրա, որը դատարանը կայացրել է նրա բացակայությամբ: Դատարանի կողմից արդարադատությունից թաքնվող անձին հեռակա կարգով (in absentia) կալանավորելու հնարավորությունն *ըստ էության (per se) չի հակասում Կոնվենցիայի դրույթներին*, եթե վերջինս հայտնաբերվելու դեպքում անհապաղ տարվում է դատավորի մոտ, ինչպես որ պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչից որևէ հնարավոր բացառություն նախատեսված չէ[2]:

[1] Տե՛ս *Լադենպուն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի մարտի 18-ի վճիռը, կետեր 72-74, *Վախիտովը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի վճիռը, կետեր 46-48:

[2] Տե՛ս *Վախիտովը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի վճիռը, կետեր 50-51:

Վերոնշյալ դիրքորոշումը Եվրոպական դատարանն արտահայտել է նաև *Պողոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռով՝ փաստելով, որ հետախուզման մեջ գտնվող անձին ձերբակալելուց հետո դատարան չներկայացնելու պրակտիկան ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ճանաչվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքների խախտում [1]:

15.1. Վերահաստատելով *Տ.Վահրադյանի* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հիմք ընդունելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հնարավորություն նախատեսող իրավակարգավորումն ինքնին վիճահարույց չէ, եթե անձին հայտնաբերելու դեպքում ապահովվում է վերջինիս դատարանի առջև կանգնելու և լսվելու իրավունքը, ինչպես որ երաշխավորված է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով:

Այլ կերպ՝ առկա օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կալանքն ընտրել որպես խափանման միջոց նրա բացակայությամբ, ընդ որում, այդ հնարավորությունն օրենսդիրը չի պայմանավորում հետախուզման տեսակով:

16. Սույն գործով Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցին, արձանագրել է, որ այն հնարավոր է, երբ անձը գտնվում է միջազգային (միջպետական) հետախուզման մեջ, իսկ այն դեպքում, երբ նա գտնվում է ներպետական (տեղական) հետախուզման մեջ, ապա նրա բացակայությամբ կամ հեռակա կարգով նրա նկատմամբ կալանավորման հարցի քննարկում չպետք է իրականացվի: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ միջպետական հետախուզումն այն **եզակի դեպքն** է, որը թույլ է տալիս անձի նկատմամբ կալանավորման հարցը քննարկել նրա բացակայությամբ [2]:

16.1. Սույն որոշման 14-15.1-րդ կետերում կատարված վերլուծության լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի՝ սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դրանք չեն բխում առկա օրենսդրական կարգավորումներից:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումն ընտրել որպես խափանման միջոց: Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկան, արձանագրել է, որ նշված նորմը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին այն առումով, որ հնարավորություն չի ընձեռում հետախուզման արդյունքում հայտնաբերված

[1] Տե՛ս *Պողոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, կետ 70:
[2] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

անձին ներկայացնելու դատարան և կալանավորման հարցի քննարկումն իրականացնելու նրա ներկայությամբ:

Այլ կերպ՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ նրա բացակայությամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացնելն ինքնին խնդրահարույց չէ, եթե վերջինիս ի հայտ գալու դեպքում ապահովվում են նրա՝ դատարանի առջև կանգնելու և լսվելու հիմնարար իրավունքները, ինչը համապատասխանում է նաև Եվրոպական դատարանի կողմից ձևավորած չափանիշներին[1]:

Ընդ որում, օրենսդիրը մեղադրյալին հեռակա կարգով կալանավորելու հնարավորությունը որևէ կերպ հետախուզման տեսակով չի պայմանավորում: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը վերաբերում է քննիչի կողմից *հետախուզում* հայտարարելու մասին որոշում կայացնելուն, ուստի անհասկանալի է Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը հետախուզման տեսակներով պայմանավորված՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցում առանձնացված կարգավորումներ նախատեսելու վերաբերյալ:

16.2. Նման պայմաններում առնվազն անհիմն է Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ միջպետական հետախուզումն այն եզակի դեպքն է, որը թույլ է տալիս անձի նկատմամբ կալանավորման հարցը քննարկել նրա բացակայությամբ, և որ առանց միջազգային հետախուզում հայտարարելու խոսք չի կարող լինել մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման մասին, առավել ևս անընդունելի է, որ ըստ Վերաքննիչ դատարանի՝ այդ հանգամանքով էր պայմանավորված Եվրոպական դատարանի՝ *Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության* գործով վճռում ձևավորած մոտեցումը, որով դատարանը հնարավոր է համարում միջազգային հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ առանց նրա մասնակցության կիրառել կալանավորումը որպես խափանման միջոց, սակայն պայմանով, որ նրա ի հայտ գալու և իրավասու մարմինների տրամադրության տակ հայտնվելու դեպքում անհապաղ տարվի դատավորի մոտ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն որոշման 15-րդ կետում մեջբերված՝ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային դիրքորոշումներից բխում է, որ Եվրոպական դատարանը, չտարանջատելով հետախուզման տեսակները, ինքնին ընդունելի է համարում հետախուզվող մեղադրյալի կալանավորումը նրա բացակայությամբ, եթե վերջինիս հայտնաբերման դեպքում ապահովվում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքները: Իսկ ինչ վերաբերում է *Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության* գործով վճռում Եվրոպական

[1] Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

դատարանի կողմից միջազգային հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը շեշտադրելուն, ապա դա պայմանավորված է տվյալ գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններով, այն է՝ մեղադրյալը գտնվել է միջազգային հետախուզման մեջ:

16.3. Վերաքննիչ դատարանն ընդգծել է նաև, որ *միջազգային հետախուզում* հայտարարելու դեպքում *առանց մեղադրյալի մասնակցության* նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելն *իրավաչափ է* և առնվազն պայմանավորված է ՀՀ կողմից վավերացրած «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի և Քիշնևի կոնվենցիաների (այսուհետ՝ նաև Մինսկի և Քիշնևի կոնվենցիա), ինչպես նաև «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Հանձնման մասին կոնվենցիա) պահանջների կատարման անհրաժեշտությամբ, քանի որ առանց կալանավորման մասին իրավասու մարմնի որոշման հնարավոր չէ իրականացնել մեղադրյալի միջազգային հետախուզում, նրա կալանավորում և հանձնում հայցող պետությանը:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ մեղադրյալը գտնվում է հետախուզման մեջ և նրա նկատմամբ կալանավորում կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվում դատարան, ապա պետք է ներկայացվեն լրացուցիչ նյութեր առ այն, որ մեղադրյալի նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, եթե նման նյութեր չեն ներկայացվում, ապա դատարանն իրավունք ունի մերժելու կալանավորման կիրառումը հենց այդ պատճառաբանությամբ:

Քիշնևի մասին կոնվենցիայի 69-րդ հոդվածի *(Անձի հետախուզումը նախքան հանձնման վերաբերյալ հարցումն ստանալը)* համաձայն՝ *«(…) 3. Հետախուզումը իրականացնելու վերաբերյալ հանձնարարությանը **կցվում են հետախուզվող անձին կալանքի վերցնելու մասին հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու արդարադատության հիմնարկի որոշման կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հաստատված պատճենը,** պատժի չկրած մասի մասին տեղեկությունները, ինչպես նաև լուսանկարը և մատնահետքերը (եթե այդպիսիք կան):*

(…)»:

Այսպիսով, Քիշնևի կոնվենցիայի մեջբերված նորմից երևում է, որ նախքան հանձնման վերաբերյալ հարցումն ստանալը անձի հետախուզումը կարող է իրականացվել, եթե հետախուզման վերաբերյալ հանձնարարությանը կից ներկայացվի հետախուզվող անձին կալանքի վերցնելու մասին համապատասխան որոշումը:

Վերաքննիչ դատարանն իրավամբ արձանագրելով, որ ըստ մեջբերված միջազգային կոնվենցիաների՝ մեղադրյալի նկատմամբ միջազգային հետախուզում իրականացնելու համար անհրաժեշտ է կալանավորման մասին որոշում, միաժամանակ նշել է, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի

նկատմամբ կալանավորում կիրառելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելիս պետք է ներկայացվեն լրացուցիչ նյութեր առ այն, որ մեղադրյալի նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, ինչը ոչ միայն չի բխում առկա իրավակարգավորումներից, այլ նաև գործնականում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել:

17. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ հաճախ արհեստականորեն հետախուզում հայտարարելու հիմքեր են ստեղծվում, այնուհետև ձևական հետախուզում հայտարարվում և հենց այդ պատճառաբանությամբ կալանավորման միջնորդություն է ներկայացվում դատարան, որի դեպքում մեծանում է միջնորդությունը բավարարելու հավանականությունը, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանի պարտականությունն է գնահատման ենթարկելու վերոնշյալ հանգամանքները, և եթե հետախուզման հայտարարումը ձևական բնույթ է կրում, իրականում անձը չի թաքնվում քննությունից կամ նրա գտնվելու վայրը հայտնի է, ապա դատարանը պետք է մերժի ներկայացված միջնորդությունը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձի հայտնաբերման դեպքում ապահովվում է վերջինիս՝ դատարանի առջև անհապաղ կանգնելու և լսվելու իրավունքի իրացումը, ուստի դատարանը, գնահատելով կալանավորման հիմքերն ու պայմանները, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին: Նման պայմաններում անհիմն է Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի հեռակա կալանավորման դեպքում վտանգվում են վերջինիս իրավունքներն ու օրինական շահերը:

17.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրությամբ ամրագրված է այնպիսի կառուցակարգ, որը հնարավորություն է տալիս առանց հեռակա կարգով կալանավորում կիրառելու լուծել ներպետական հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ նրա ներկայությունն ապահովելու հարցերը՝ նկատի ունենալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածով սահմանված՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելու և վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելու հնարավորության նախատեսումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ նորմը որևէ կերպ չի խոչընդոտում վարույթն իրականացնող մարմնին հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ ընտրելու խափանման միջոց, այդ թվում՝ կալանավորում կիրառելու միջնորդությամբ դիմելու դատարան: Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ ձևավորված պրակտիկան իրավաչափ չէ և ըստ էության քրեադատավարական օրենսդրությունը շրջանցելու միջոց է, անհիմն է:

Համապատասխանաբար առկա օրենսդրական կարգավորումներից չի բխում նաև Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում ամրագրված մեղադրյալին ձերբակալելու կանոնն ամրագրված է որպես իրավունք, այլ ոչ թե պարտականություն, սակայն բոլոր այն դեպքերում, երբ քննիչը միջնորդություն է ներկայացնում դատարան խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, ապա ձերբակալումը դառնում է պարտադիր, եթե անձի նկատմամբ հայտարարված չէ միջազգային հետախուզում:

18. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ թեև համաձայն է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների հիման վրա ձևավորված դատական պրակտիկային, այնուամենայնիվ *այն պետք է ենթարկել որոշակի սահմանափակումների* և կիրառելի դարձնել միայն այն դեպքում, երբ անձը գտնվում է միջազգային (միջպետական) հետախուզման մեջ. մնացած բոլոր դեպքերում *անհրաժեշտություն չկա* առանց անձի որոշում կայացնել նրա նկատմամբ կալանավորում կիրառելու մասին, իսկ նրան հայտնաբերելուց հետո կրկին միջնորդություն ներկայացնել դատարան արդեն իսկ ընտրված խափանման միջոց կալանավորման հարցը կրկին քննարկելու համար՝ *ինչպես սահմանել է ՀՀ վճռաբեկ դատարանը Տ.Վահրադյանի վերաբերյալ որոշմամբ:*

18.1. ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:*

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Նույնանման փաստերով այլ գործով վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը»:*

ՀՀ Սահմանադրության, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մեջբերված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, ՀՀ վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի որոշումներում իրավական նորմերին տրված մեկնաբանությունները պարտադիր են ստորադաս դատարանների համար նույնանման փաստերով այլ գործերով, բացառությամբ եթե ստորադաս դատարանը իրավական նորմին Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում հիմնավորում է օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

19. Վերոշարադրյալի լույսի ներքո անդրադառնալով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված Վերաքննիչ դատարանի դատողություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը կարող էր նույնանման փաստերով այլ գործով իրավական նորմին տալ Վճռաբեկ դատարանի կողմից կոնկրետ նորմին տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն՝ հիմնավորելով Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը, սակայն որևէ դեպքում իրավասու չէր սահմանափակելու Վճռաբեկ դատարանի որոշման կիրառելիությունը՝ արձանագրելով, որ տվյալ նորմն այսուհետ անհրաժեշտ է կիրառել այլ մեկնաբանությամբ: Վճռաբեկ դատարանի համոզմամբ վերոնշյալը խախտում է դատարանների միջև առկա գործառութային կապը:

20. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը պետք է քննարկել բացառապես այն դեպքում, երբ նա գտնվում է միջազգային (միջպետական) հետախուզման մեջ, իսկ այն դեպքում, երբ նա գտնվում է ներպետական (տեղական) հետախուզման մեջ, ապա նրա նկատմամբ կալանավորման հարցի քննարկում չպետք է իրականացվի նրա բացակայությամբ կամ հեռակա կարգով, իրավաչափ չէ:

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք մեղադրյալ

Ն.Շիրինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով Ն.Շիրինյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը, արձանագրել է, որ համաձայն միջնորդության և դրան կից փաստաթղթերի՝ մեղադրյալ Ն.Շիրինյանը բնակության հասցեից չի բացակայել, հայտնի է նրա գտնվելու վայրը, միջնորդությանը կից փաստաթղթերում առկա չէ հավաստագիր այն մասին, որ մեղադրյալը պատշաճ կարգով ծանուցվել է հարցաքննության ներկայանալու մասին, սակայն չի ներկայացել:

Միաժամանակ քննիչի կողմից չեն ձեռնարկվել օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցառումները մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ, իսկ մեղադրյալի հետախուզումը ձևական բնույթ է կրել[1]:

Վերաքննիչ դատարանը, մերժելով ներկայացված բողոքը, արձանագրել է, որ միջնորդությանը կից դատարանին չի ներկայացվել հետախուզում հայտարարելու մասին որոշումը, որպեսզի դատարանը հնարավորություն ունենար գնահատելու, թե իրականում նման որոշում կայացվել է, թե ոչ, եթե այո, ապա մեղադրյալի նկատմամբ հայտարարված է միջազգային, թե ներպետական հետախուզում: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ քննիչը փոխարեն ղեկավարվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ և 259-րդ հոդվածներով և լուծեր մեղադրյալին ձերբակալելու, այնուհետև, եթե անհրաժեշտություն կառաջանար, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն ներկայացնելու հարցերը, դրսևորելով շտապողականություն և շրջանցելով ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված կառուցակարգերը՝ միանգամից միջնորդություն է ներկայացրել դատարան, ուստի հենց քննարկվող միջոցառումները չկատարելու հանգամանքն է արձանագրել Առաջին ատյանի դատարանը, երբ նշել է, որ հետախուզումը կրել է ձևական բնույթ, քննիչի կողմից չեն ձեռնարկվել օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցառումները մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ:

Անդրադառնալով կալանավորման կիրառման անհրաժեշտության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ դրանք անհիմն են և բավարար չեն Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար: Վերաքննիչ դատարանը նշել է, որ բողոքաբերը որևէ փաստական տվյալով չի հիմնավորել, որ իրականում

[1] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

մեղադրյալը պատշաճ կարգով եղել է ծանուցված: Ինչ վերաբերում է քննիչի կողմից կայացրած բերման ենթարկելու մասին որոշումը չկատարելուն այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալի բնակության հասցեի դուռը եղել է փակ վիճակում, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ չի նշանակում, որ մեղադրյալը թաքնվում է քննությունից: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ մեղադրյալն ունի մշտական բնակության վայր, հայտնի է նրա աշխատանքի վայրը, մեղադրվում է միջին ծանրության հանցագործության կատարման մեջ, նախկինում դատված չի եղել, ուստի Առաջին ատյանի դատարանի կողմից քննիչի միջնորդությունը մերժելը հիմնավոր է[1]:

23. Սույն գործի փաստական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

- 2018 թվականի փետրվարի 27-ի որոշումներով Ն.Շիրինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը և հայտարարվել է հետախուզում: 2018 թվականի մարտի 3-ին հետախուզման մեջ գտնվող Ն.Շիրինյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին[2],

- 2018 թվականի մարտի 6-ին՝ ժամը 09:00-ին, Ն.Շիրինյանը հրավիրվել է քննիչի մոտ հարցաքննության: Հարցաքննության կանչելու ծանուցագրի վրա Ն.Շիրինյանը ձեռագիր գրառում է կատարել, որ չի կարող ներկա գտնվել՝ չնշելով որևէ պատճառ, և խնդրել է քննիչին հրավիրել 2018 թվականի մարտի 10-ին, սակայն այդ օրը ևս չի ներկայացել,

- 2018 թվականի մարտի 15-ին՝ ժամը 14:30-ին, Ն.Շիրինյանը հրավիրվել է քննիչի մոտ որպես մեղադրյալ հարցաքննության: Հարցաքննության կանչելու ծանուցագրի վրա Ն.Շիրինյանը կատարել է «ստացա օրինակը» գրառումը, սակայն չի ներկայացել,

- «Բերման ենթարկելու մասին» քննիչի որոշման համաձայն՝ պատշաճ ծանուցված, սակայն առանց հարգելի պատճառների հարցաքննության չներկայացած Ն.Շիրինյանին անհրաժեշտ է բերման ենթարկել քննիչի մոտ, սակայն դա հնարավոր չի եղել կատարել, քանի որ բնակարանի դուռը գտնվել է փակ վիճակում,

- Վերաքննիչ դատարանը թիվ 11339/18 գրությամբ ծանուցել է մեղադրյալ Ն.Շիրինյանին 2018 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 15:30-ին տեղի ունենալիք դատական նիստի մասին, սակայն փոստային ծրարը «չպահանջված» նշումով հետ է վերադարձվել[3]:

Վերոնշյալ տվյալները գնահատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված ստորադաս դատարանների դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանների փաստարկներն

[1] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը որևէ փաստական տվյալով չի հիմնավորել, որ իրականում մեղադրյալը պատշաճ կարգով եղել է ծանուցված և չի ներկայացել՝ դրանով խախտելով իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, անհիմն են և չեն բխում սույն գործի հանգամանքներից:

Ընդհակառակը, գործում առկա տվյալները վկայում են, որ Ն.Շիրինյանը խախտել է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, երկու անգամ առանց հարգելի պատճառի չի ներկայացել հարցաքննության, թեև պատշաճ կերպով ծանուցված է եղել հարցաքննության օրվա, ժամանակի և վայրի մասին, նրա ներկայությունը հնարավոր չի եղել ապահովել նաև բերման ենթարկելու միջոցով, որպիսի հանգամանքներն իրենց համակցության մեջ բավարար են հետևություն անելու մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վերաբերյալ:

24. Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությանը, որ քննիչի կողմից չեն ձեռնարկվել օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցառումները մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ, իսկ մեղադրյալի հետախուզումը ձևական բնույթ է կրել, և Վերաքննիչ դատարանի այն մեկնաբանմանը, որ Առաջին ատյանի դատարանը, նման հետևության գալով, նկատի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ և 259-րդ հոդվածներով նախատեսված կառուցակարգերը, որոնք թույլ են տալիս լուծել մեղադրյալին ձերբակալելու, այնուհետև, եթե անհրաժեշտություն կառաջանա, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն ներկայացնելու հարցերը, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ կառուցակարգերը թեև թույլ են տալիս վարույթն իրականացնող մարմնին ձերբակալելու խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալին, այնուհետև նրան կալանավորելու մասին միջնորդություն ներկայացնելու դատարան, այնուամենայնիվ որևէ կերպ չեն սահմանափակում վերջինիս իրավասությունն առանց ձերբակալելու կալանավորման միջնորդություն ներկայացնելու բոլոր այն դեպքերում, երբ մեղադրյալի գտնվելու վայրը հայտնի չէ, և վերջինս գտնվում է հետախուզման մեջ: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պատճառաբանությամբ հետախուզումը ձևական համարելու ստորադաս դատարանների փաստարկներն իրավաչափ չեն:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 11.2-րդ կետում բարձրացված փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրա վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններն իրավաչափ են[1]:

25. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ն.Շիրինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

[1] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ն.Շիրինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու քննիչի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն որոշման 7.2-րդ կետում մատնանշված փաստական հանգամանքների պայմաններում, ստորադաս դատարանների դատական ակտերի բեկանումը չի կարող առաջացնել իրավական հետևանքներ (դրանք, ունենալով ժամանակավոր բնույթ, կորցրել են իրենց իրավական նշանակությունը), ուստի ներկայացված բողոքը պետք է բավարարել մասնակիորեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Ներսես Մանուկի Շիրինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 5-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

59. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ3/0010/12/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով դատապարտյալ Արմեն Հրաչիկի Եղոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 26-ի դատավճռով Արմեն Հրաչիկի Եղոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ դատապարտվել է ազատազրկման՝ 12 (տասներկու) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2010 թվականի փետրվարի 26-ից:

2. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Եղոյանի վերաբերյալ նախկինում

կայացված դատավճիռները վերանայվել են, նրան մեղսագրված արարքների քրեաիրավական որակումը համապատասխանեցվել է 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-143-Ն օրենքին, և Ա.Եղոյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով:

Պատժի սկիզբը հաշվվել է 2010 թվականի փետրվարի 26-ից:

3. 2018 թվականի հունվարի 22-ին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկը սպասարկող անկախ հանձնաժողովը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար դատապարտյալ Ա.Եղոյանի պատշաճ վարքագիծը և նոր հանցագործություն կատարելու հավանականությունը բնորոշող հանգամանքների վերաբերյալ տվել է բացասական եզրակացություն:

2018 թվականի հունվարի 23-ին Ա.Եղոյանը տվել է իր համաձայնությունը՝ վերոնշյալ եզրակացությունը դատարան ներկայացնելու համար:

4. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի մարտի 6-ին կայացրած որոշմամբ դատապարտյալ Ա.Եղոյանին պայմանական վաղաժամկետ ազատել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ նշանակված 10 (տասը) տարի ազատազրկում պատժից դատապարտյալի կողմից չկրած 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 22 (քսաներկու) օր ժամկետով ազատազրկում պատիժը կրելուց:

5. Վերոնշյալ դատական ակտի դեմ դատախազ Գ.Մինասյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 6-ի որոշումը՝ թողնվել անփոփոխ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Դատապարտյալ Արմեն Հրաչիկի Եղոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ*

հոդվածի 1-ին մասով կատարած արարքը, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն, դասվում է ծանր հանցագործությունների շարքին: Հանցագործությունը կատարելու համար դատապարտյալը փաստացի պատիժ է կրում 26.02.2010 թվականից:

Սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Արմեն Հրաչիկի Եղոյանը կրել է իր նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատժից 8 տարի 8 օր և ունի կրելու 1 տարի 11 ամիս 22 օր ազատազրկում պատիժ, հետևաբար արդեն իսկ կրել է նշանակված պատժի 2/3-ից ավելին:

Դատարանը գտնում է, որ Արմեն Հրաչիկի Եղոյանը պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, քանի որ պատիժը կրելու ընթացքում մասնակցություն է ցուցաբերել մարզական միջոցառումներին, օգտվել է հիմնարկի գրադարանից, վարքագծում նկատվել է դրական դինամիկա և 26.12.2017 թվականին հանվել է ինքնավնասում բացասական հակումը: Պատիժը կրելու ընթացքում խրախուսանքի չարժանանալը և 22 անգամ կարգապահական տույժի ենթարկվելը փվյալ պայմաններում դատարանը չի դիտում որպես ոչ պատշաճ վարքագծի դրսևորում, քանի որ վերջին անգամ կարգապահական պատասխանատվության է ենթարկվել 28.10.2016 թվականին՝ 1 տարուց ավելի ժամանակ առաջ:

Դատարանը գտնում է նաև, որ Արմեն Հրաչիկի Եղոյանի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է, քանի որ նա հանցագործությունը կատարելու պահին եղել է 28 տարեկան, իսկ հիմա 39 տարեկան է, ընդունում և զղջում է կատարած հանցանքի համար, քաղ[աքացիական] հայց չունի, քրեական ենթամշակույթի նկատմամբ անտարբեր է, ընտանիքի, արտաքին աշխարհի հետ կապը կայուն է, մասնակցություն է ցուցաբերում վերասոցիալականացման միջոցառումներին, ցանկանում է շփվել դրական ուղղվածություն ունեցող դատապարտյալների հետ, վատառողջ է: Ինչ վերաբերում է ագրեսիվության և կոնֆլիկտայնության հակում ունենալուն, դատարանը հարկ է համարում նշել, որ քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչն իր բացատրության մեջ նշեց, որ այդ հակումները դատապարտյալի հաշվառումից հանելու նպատակով համապատասխան զեկուցագիր է ներկայացվել հիմնարկի ղեկավարին: Անդրադառնալով առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայությանը՝ դատարանը հարկ է համարում նշել, որ այն վերը թվարկվածի պարագայում ինքնին չի կարող դիտվել հանցանք կատարելու հավանականությունը բարձր գնահատող հանգամանք: (...) Արմեն Հրաչիկի Եղոյանը պատիժը կրելու ընթացքում հրաժարվելով քրեական ենթամշակույթից ամուսնացել է, պատժի կրման վերջին շրջանում աչքի է ընկել միայն դրական կողմերով և դատարանն արձանագրում է, որ Արմեն Հրաչիկի Եղոյանի կողմից կրած պատիժը ուղղել է նրան:

Հաշվի առնելով այն, որ Արմեն Հրաչիկի Եղոյանը փաստացի կրել է նշանակված պատժի 2/3-ից ավելին, չնայած առկա է պատիժը կրելուց

պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի բացասական եզրակացությունը, պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է, դատարանը գտնում է, որ դատապարտյալը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: (...)»[1]:

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Առաջին ատյանի դատարանի կողմից ըստ էության պատշաճ ուսումնասիրության և գնահատման են ենթարկվել դատապարտյալ Արմեն Եղոյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները: Մասնավորապես այն, որ նա պատիժը կրելու ընթացքում մասնակցություն է ցուցաբերել մարզական միջոցառումներին, օգտվել է հիմնարկի գրադարանից, վարքագծում նկատվել է դրական դինամիկա և 26.12.2017 թվականին հանվել է ինքնավնասում բացասական հակումը:*

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Առաջին ատյանի դատարանի իրավական դիրքորոշումը, ևս գտնում է, որ դատապարտյալի կողմից 22 անգամ կարգապահական տույժի ենթարկվելը ևս չի կարող դիտվել որպես ոչ պատշաճ վարքագծի դրսևորում, քանի որ Արմեն Եղոյանը վերջին անգամ կարգապահական պատասխանատվության է ենթարկվել 2016 թվականի հոկտեմբերի 28-ին՝ 1 տարուց ավելի ժամանակ առաջ /մնացած տույժերը սպացել է շուրջ 7 տարի առաջ/:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ բողոքի այն պատճառաբանությանը, համաձայն որի թեև հանվել է «Ինքնավնասում» բացասական հակումը, սակայն ագրեսիվության և կոնֆլիկտայնության հակումները չեն հանվել, ինչը նշանակում է, որ այդ մասով քրեակատարողական հիմնարկի անելիքները չեն ավարտվել, և դատապարտյալի մոտ դեռ շարունակվում են առկա լինել այդ բացասական հակումները, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանում դատական քննության ժամանակ քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչը նշել է, որ այդ հակումները դատապարտյալի հաշվառումից հանելու նպատակով համապատասխան զեկուցագիր է ներկայացվել հիմնարկի ղեկավարին, այսինքն՝ դատապարտյալ Արմեն Եղոյանն այլևս համարվում է բացասական հակումներ չունեցող, ուստի վերաքննիչ բողոքն այդ մասով ևս անհիմն է:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Արմեն Եղոյանի պատժի հետագա կրման աննպատակահարմարության վերաբերյալ հանգել է ներկայացված նյութերից բխող ճիշտ եզրահանգման և նրան պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելով՝ թույլ չի տվել գործի

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 26-28:

ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, այդ թվում՝ նաև՝ նյութական իրավունքի խախտում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դատապարտյալ Արմեն Եղոյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավոր է և իրավաչափ, բողոքարկված դատական ակտը կայացնելիս Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ և կայացրել է ճիշտ լուծող դատական ակտ, որը բեկանելու իրավաչափ հիմքեր չկան: Ուստի Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը պետք է մերժել: (...)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ, 76-րդ, 77-րդ հոդվածների պահանջները, բողոքարկվող որոշման մեջ կատարված եզրահանգումները հակասում են *Արմեն Ղազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԱԴ/0002/12/16 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

9.1 Բողոքաբերը փաստարկել է, որ պատժի կրման ընթացքում դատապարտյալ Ա.Եղոյանի կողմից դրսևորած վարքագիծը դատարանները գնահատել են որպես պատշաճ՝ նշելով, որ վերջինս մասնակցություն է ցուցաբերել մարզական միջոցառումներին, օգտվել է հիմնարկի գրադարանից, նրա վարքագծում նկատվել է դրական դինամիկա և 2017 թվականի դեկտեմբերին հանվել է «Ինքնավնասման հակում ունեցողի» բացասական հաշվառումը: Մինչդեռ պատժի կրման ընթացքում խրախուսանքի չարժանանալը և 22 անգամ կարգապահական տույժի ենթարկվելը դատարանները չեն դիտել որպես ոչ պատշաճ վարքագծի դրսևորում, քանի որ վերջին անգամ Ա.Եղոյանը կարգապահական պատասխանատվության է ենթարկվել 2016 թվականի հոկտեմբերի 28-ին՝ 1 տարուց ավելի ժամանակ առաջ:

Բողոքաբերը փաստարկել է, որ դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս պետք է հաշվի առնվեր Ա.Եղոյանի վարքագիծը ոչ թե վերջին 1 տարվա ընթացքում, այլ պատժի կրման ամբողջ ընթացքում:

9.2 Բողոքաբերն ընդգծել է, որ դատապարտյալի կատարած արարքը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, պատժի կրման ընթացքում 2 անգամ հանցանք է կատարել և դատապարտվել ազատազրկման, նույնիսկ դիմել է փախուստի ազատազրկման վայրից:

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 52-61:

Բողոքաբերը նշել է, որ թեև 2017 թվականի դեկտեմբերի 26-ին հանվել է «ինքնավնասման հակում ունեցողի» բացասական հաշվառումը, սակայն «ագրեսիվության և կոնֆլիկտայնության հակումներ ունեցողի» բացասական հաշվառումը հանված չլինելը նշանակում է, որ այդ մասով քրեակատարողական հիմնարկի անելիքները չեն ավարտվել:

Բողոքաբերի պնդմամբ՝ թեև ստորադաս դատարանը գտել է, որ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայությունն ինքնին չի կարող դիտվել հանցանք կատարելու հավանականությունը բարձր գնահատող հանգամանք, սակայն վերոնշյալ հանգամանքների համատեքստում այս փաստը ևս վկայում է, որ Ա.Եղոյանի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը բարձր է, և նա դեռ չի ուղղվել:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումները և Ա.Եղոյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը մերժել:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների հետևությունները՝ պատժի կրումից դատապարտյալ Ա.Եղոյանին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի *(դատապարտյալ Ա.Եղոյանին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննարկման պահին գործող խմբագրությամբ)* համաձայն՝ *«1. Ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պատժի նվազագույն ժամկետը կրելուց հետո դատարանի կողմից կարող է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը սույն հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի (այսուհետ՝ անկախ հանձնաժողով) եզրակացության կամ կարգապահական գումարտակի հրամանատարի միջնորդագրի քննարկման արդյունքում հանգում է հետևության, որ ուղղվելու համար դատապարտյալը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի, քանի որ՝*

1) պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, և

2) դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է:

(…):

1.1. Դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) պատժի կրման ընթացքում խրախուսանքի առկայությունը.

2) պատժի կրման ընթացքում կարգապահական տույժի առկայությունը.

3) պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն.

4) պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, կամ եթե չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով.

5) դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

1.2. Դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) դատապարտյալի տարիքը, դատապարտյալի տարիքը հանցագործություն կատարելու պահին.

2) հանցագործության բնույթը և հանրային վտանգավորությունը.

3) ռեցիդիվի առկայությունը.

4) իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը.

5) հանցագործությամբ պատճառած վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը կամ պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը.

6) նրա վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ.

7) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները.

8) մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում անձնական զարգացման միջոցառումներին.

9) ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը.

10) սոցիալական միջավայրը.

11) առողջական, այդ թվում հոգեկան առողջության վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և հարկադիր բուժման արդյունքը.

12) դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ:

(...)

3. Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

(...)

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը.

(...)»:

13. Վերլուծելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ վերոշարադրյալ քրեաիրավական նորմերը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատապարտյալին վաղաժամկետ ազատելու համար անհրաժեշտ է, որ՝

1) դատապարտյալը փաստացի կրած լինի իր նկատմամբ նշանակված պատժի՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված նվազագույն ժամկետը.

2) օրենքով նախատեսված հանգամանքների վերաբերյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի եզրակացության քննարկման արդյունքում դատարանը հանգի հետևության, որ ուղղվելու համար դատապարտյալը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

Ընդ որում, վերը նշված երկրորդ պայմանի հետ կապված՝ օրենսդիրը սահմանել է այն հիմնական չափանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է գալ եզրահանգման դատապարտյալի՝ պատժի հետագա կրման աննպատակահարմարության վերաբերյալ, այն է՝ պատժի կրման ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելը և դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականության ցածր լինելը: Դեռ ավելին, օրենսդիրը ոչ միայն սահմանել է պատժի հետագա կրման նպատակահարմարությունը որոշելու հիմնական չափանիշները, այլև մանրամասնել է այն հանգամանքները, որոնք դատարանը պարտավոր է պատշաճ վերլուծության ենթարկել այդ չափանիշներից յուրաքանչյուրի առկայության կամ բացակայության մասին օրինական և հիմնավորված եզրահանգում անելու համար:

13.1 Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող ինստիտուտի գործադրմամբ անձը պատժից ազատվում է պայմանական (ազատվող դատապարտյալի վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին որոշում կայացնել), ինչը ենթադրում է, որ պատժի նպատակները, ներառյալ՝ անձի ուղղումը, դեռ լիովին իրականացած չեն: Հետևաբար, պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա է այն դատապարտյալը, ում անձի, դրսևորած վարքագծի վերաբերյալ տվյալների և այլ հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նա կանգնած է ուղղման ճանապարհին: Այլ խոսքով՝ դատարանը պետք է համոզվի, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում անձի կողմից օրինապահ վարքագիծ դրսևորելու հավանականության աստիճանը բավարար է թե՛ հասարակական անվտանգության և թե՛ հասարակությունում նրա վերաինտեգրման տեսանկյունից, իսկ պատժի նպատակները հնարավոր է վերջնականապես իրագործել համապատասխան վերահսկողության ներքո

դատապարտյալի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման արդյունքում դատարանի կայացրած որոշումը պետք է հիմնված լինի օրենքով սահմանված պայմանների և չափանիշների ու դրանցից բխող պատճառաբանված եզրահանգումների վրա: Ընդ որում, պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և փաստական տվյալներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա՝ իր մեջ չընդրգկելով վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ, քանի որ հակառակ պարագայում այդպիսի դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին[1]:

13.2 Վճռաբեկ դատարանը վերահաստատում է նաև իր նախադեպային իրավունքում ձևավորած պահանջն այն մասին, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը լուծելիս դատապարտյալի ուղղված լինելու մասին դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի գտնված լինելու ամբողջ ժամանակահատվածում վերջինիս վարքի մասին տվյալների բազմակողմանի ուսումնասիրության վրա: Դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա վարքագծի, այլ նաև անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա[2]:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ Ա.Եղոյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկը սպասարկող անկախ հանձնաժողովը Ա.Եղոյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով 2018 թվականի հունվարի 22-ին տվել է բացասական եզրակացություն: 2018 թվականի հունվարի 23-ին Ա.Եղոյանը տվել է իր համաձայնությունը՝ վերոնշյալ եզրակացությունը դատարան ներկայացնելու համար[3]:

Առաջին ատյանի դատարանը դատապարտյալ Ա.Եղոյանին պայմանական վաղաժամկետ ազատել է չկրած 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 22 (քսաներկու) օր ժամկետով ազատազրկում պատիժը կրելուց՝ իր դիրքորոշումը հիմնավորելով նրանով, որ դատապարտյալ Ա.Եղոյանը կրել է իր նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատժի 2/3-ից ավելին, պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, քանի որ պատիժը կրելու ընթացքում մասնակցություն է ցուցաբերել մարզական միջոցառումներին,

[1] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Ղազարյանի* գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԱԴ/0002/12/16 որոշումը:

[2] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Վարդան Մուխսիխաչոյանի* գործով 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-212/07 և Արամայիս Միրիբյանի գործով 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-213/07 որոշումները:

[3] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

օգտվել է հիմնարկի գրադարանից, վարքագծում նկատվել է դրական դինամիկա, և 2017 թվականի դեկտեմբերի 26-ին հանվել է «ինքնավնասում բացասական հակումը»: Պատիժը կրելու ընթացքում խրախուսանքի չարժանանալը և 22 անգամ կարգապահական տույժի ենթարկվելն Առաջին ատյանի դատարանը չի դիտել որպես ոչ պատշաճ վարքագծի դրսևորում, քանի որ վերջին անգամ նա կարգապահական պատասխանատվության է ենթարկվել 2016 թվականի հոկտեմբերի 28-ին՝ 1 տարուց ավելի ժամանակ առաջ: Առաջին ատյանի դատարանը գտել է նաև, որ Ա.Եղոյանի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է, քանի որ նա հանցագործությունը կատարելու պահին եղել է 28 տարեկան, իսկ հիմա 39 տարեկան է, զղջում է կատարած հանցանքի համար, քրեական ենթամշակույթի նկատմամբ անտարբեր է, ամուսնացել է, ընտանիքի, արտաքին աշխարհի հետ կապը կայուն է, մասնակցություն է ցուցաբերում վերասոցիալականացման միջոցառումներին, ցանկանում է շփվել դրական ուղղվածություն ունեցող դատապարտյալների հետ, պատժի կրման վերջին շրջանում աչքի է ընկել միայն դրական կողմերով, վատառողջ է: Անդրադառնալով ագրեսիվության և կոնֆլիկտայնության հակում ունենալուն՝ Առաջին ատյանի դատարանը հիմնվել է քրեակատարողական հիմնարկի ներկայացուցչի այն բացատրության վրա, որ այդ հակումները դատապարտյալի հաշվառումից հանելու նպատակով համապատասխան զեկուցագիր է ներկայացվել հիմնարկի ղեկավարին: Անդրադառնալով առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայությանը՝ Առաջին ատյանի դատարանը վերոգրյալի համատեքստում այն չի դիտարկել ինքնին որպես հանցանք կատարելու հավանականությունը բարձր գնահատող հանգամանք: Առաջին ատյանի դատարանն արդյունքում գտել է, որ չնայած առկա է անկախ հանձնաժողովի բացասական եզրակացությունը, այդուհանդերձ Ա.Եղոյանը պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է, ուստի դատապարտյալը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի[1]:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից ըստ էության պատշաճ ուսումնասիրության և գնահատման են ենթարկվել դատապարտյալ Ա.Եղոյանին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները[2]:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.2-րդ կետերում ներկայացված օրենսդրական կարգավորումների և դրանց վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Եղոյանին պատիժը կրելուց

[1] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 5-րդ և 8-րդ կետերը:

պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ստորադաս դատարանների որոշումները հիմնված չեն օրենքով սահմանված չափանիշների ու դրանց հիմքում դրած հանգամանքների վերաբերյալ պատշաճ պատճառաբանված եզրահանգումների վրա: Ստորադաս դատարանների դիրքորոշումները կառուցված չեն փաստական տվյալներից բխող համոզիչ հետևությունների վրա, իրենց մեջ ընդգրկում են վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ, որոնց առկայությունը վկայում է պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին: Ստորադաս դատարանները մանրակրկիտ ուսումնասիրության և վերլուծության չեն ենթարկել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, չեն հիմնավորել, որ ուղղվելու համար դատապարտյալ Ա.Եղոյանը նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատժի կրման ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելու և դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնված չեն քրեակատարողական հիմնարկում դատապարտյալ Ա.Եղոյանի գտնված լինելու ամբողջ ժամանակահատվածում վերջինիս վարքագծի, նրա անձի և նրան մեղսագրված հանցագործության մասին տվյալների բազմակողմանի ուսումնասիրության վրա:

16. Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ ստորադաս դատարաններն առավելապես հիմք են ընդունել վերջին մեկ տարվա, այլ ոչ թե պատժի կրման ամբողջ ընթացքում Ա.Եղոյանի վարքագիծը[1]: Ըստ այդմ, ստորադաս դատարանները Ա.Եղոյանի կողմից պատիժը կրելու ընթացքում քսաներկու անգամ կարգապահական տույժի ենթարկվելը ոչ իրավաչափորեն չեն դիտել որպես ոչ պատշաճ վարքագծի դրսևորում:

16.1 Բացի այդ, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում բողոքաբերի այն դիրքորոշումը, որ ստորադաս դատարանները, անտեսելով այն հանգամանքները, որ Ա.Եղոյանի կատարած արարքը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, որ նա պատժի կրման ընթացքում երկու անգամ հանցանք է կատարել և դատապարտվել ազատազրկման, դիմել է փախուստի ազատազրկման վայրից, հանգել են չհիմնավորված հետևության, որ դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է[2]:

16.2 Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ Ա.Եղոյանը համարվում է բացասական հակումներ չունեցող, քանի որ Առաջին ատյանի դատարանում քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչը նշել է, որ կոնֆլիկտայնության և ագրեսիվության հակումները հանելու նպատակով

[1] Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 9.2-րդ կետը:

համապատասխան զեկուցագիր է ներկայացվել հիմնարկի պետին, ապա Վերաքննիչ դատարանի այս եզրահանգումը ևս անհիմն է, քանի որ բացասական հակում ունեցողի հաշվառումը հանելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետին զեկուցագիր ներկայացնելը դեռևս չի նշանակում, որ բացասական հակման հաշվառումը պարտադիր հանվելու է:

16.3 Վերոնշյալ հանգամանքների համատեքստում գնահատելով առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության փաստը՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում ստորադաս դատարանների դիրքորոշումն այն մասին, որ դրա առկայությունը չի կարող դիտարկվել որպես նոր հանցանք կատարելու բարձր հավանականության մասին վկայող հանգամանք:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Եղոյանի՝ պատժի կրման ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելու և նոր հանցանք կատարելու հավանականության՝ ցածր լինելու, արդյունքում նրան պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Եղոյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն անփոփոխ թողնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, արդյունքում թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ: Այսպիսով, ստորադաս դատարանները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, թույլ են տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում և քրեադատավարական օրենքի էական խախտում, որոնք հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և դատապարտյալ Ա.Եղոյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Արմեն Հրաչիկի Եղոյանի վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 6-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշումները բեկանել և փոփոխել:

2. Դատապարտյալ Արմեն Հրաչիկի Եղոյանին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

60. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0040/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ամբաստանյալներ՝ Ա.ԱՅՎԱԶՅԱՆԻ
Ք.ՋԱՄԱԼՅԱՆԻ
Է.ՋԱՄԱԼՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 24-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Ալեքսանդր Արտեմի Այվազյանի, Քրիստինա Ռաֆայելի Ջամալյանի և Էդգար Ռաֆայելի Ջամալյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի փետրվարի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի, 312-րդ հոդվածի 1-ին մասի, 313-րդ հոդվածի 1-ին մասի, 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 375-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90150215 քրեական գործը:

2015 թվականի փետրվարի 18-ին Ալեքսանդր Արտեմի Այվազյանը և Քրիստինա Ռաֆայելի Ջամալյանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ Ք.Ջամալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Այվազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 15-ի որոշմամբ Էդգար Ռաֆայելի Ջամալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

2016 թվականի մարտի 21-ի որոշմամբ թիվ 90150215 քրեական գործից Ա.Այվազյանի, Ք.Ջամալյանի և Է.Ջամալյանի մասով անջատվել և առանձին վարույթում է առանձնացվել թիվ 90151116 քրեական գործը:

2016 թվականի ապրիլի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 1-ի դատավճռով Ա.Այվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերով և դատապարտվել տուգանքի՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ հաշվակցվել է Ա.Այվազյանին կալանքի տակ պահելու 8 (ութ) ամիս 24 (քսանչորս) օրը, նրա նկատմամբ նշանակված պատիժը մեղմացվել է, և վերջնական պատիժ է սահմանվել տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Ք.Ջամալյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել տուգանքի՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ հաշվակցվել է Ք.Ջամալյանին կալանքի տակ պահելու 9 (ինը) ամիս 24 (քսանչորս) օրը, նրա նկատմամբ նշանակված պատիժը մեղմացվել է, և վերջնական պատիժ է սահմանվել տուգանք՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ Ք.Ջամալյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի է բռնագանձվել 220.000 (երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ գումար՝ որպես հանցագործության կատարման արդյունքում ստացված օգուտ:

Նույն դատավճռով ճանաչվել և հոչակվել է Է.Ջամալյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ հանցակազմի բացակայության հիմքով:

3. Ամբաստանյալ Ա.Այվազյանի պաշտպան Մ.Գրիգորյանի և մեղադրող Վ.Հարությունյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 1-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Այվազյանի պաշտպան Ա.Մելքոնյանը և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքի կապակցությամբ պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Ա.Այվազյանը՝ փաստելով, որ վճռաբեկ բողոքն անհիմն է:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 4-ի որոշումով ամբաստանյալ Ա.Այվազյանի պաշտպան Ա.Մելքոնյանի բողոքը վերադարձվել է՝ բողոքի ձևական սխալները շտկելու և կրկին ներկայացնելու համար:

Ամբաստանյալ Ա.Այվազյանի պաշտպան Ա.Մելքոնյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը վարույթ ընդունելը մերժվել է Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ:

Վճռաբեկ դատարանի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ալեքսանդր Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա՝ *«(…) զբաղեցնելով Երևանի բժշկական համալսարանի թերապիայի թիվ 1 ամբիոնի վարիչի պաշտոնը և ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի՝ թիվ 1112-Ն որոշմամբ ընդգրկված լինելով կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմում, հանդիսանալով պաշտոնատար անձ, Աշտարակի տարածքային զինկոմիսարիատում հաշվառված զորակոչիկ Գրիգոր Դավթի Դավթյանի օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություն կատարելու՝ նրա վերաբերյալ ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու հիմք հանդիսացող եզրակացություն տալու համար, 2014 թվականի դեկտեմբեր ամսվա վերջերին Գրիգոր Դավթյանի ազգական, «Էրեբունի» ԲԿ-ի բուժքույր Գայանե Ղուկասյանից, վերջինիս աշխատասենյակում, պահանջել է խոշոր չափի՝ 688.950 ՀՀ դրամին համարժեք 1500 ԱՄՆ դոլար կաշառք (…)»*[1]:

5.1. Քրիստինա Ջամալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա՝

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 106-126:

«(…) աշխատելով «Էրեբունի» բժշկական կենտրոնում որպես ալերգոլոգիական ծառայության ղեկավար, բժշկական կենտրոնի գլխավոր տնօրենի՝ 19.09.2014թ. թիվ 321 հրամանով ընդգրկված լինելով 2014թ. ձմեռային զորակոչի ընթացքում զինապարտների հետազոտություն և փորձաքննություն իրականացնող բժշկական հանձնաժողովի կազմում, հանդիսանալով պաշտոնատար անձ, կաշառքի դիմաց Էրեբունու զինկոմիսարիատում հաշվառված և նույն զինկոմիսարիատի կողմից «Էրեբունի» ԲԿ ստուգիչ հետազոտման ուղեգրված զորակոչիկ Մերուժան Սամսոնի Խաչատրյանի օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություններ կատարելու՝ նրա վերաբերյալ տարկետման իրավունք վերապահող ախտորոշմամբ առողջական վիճակի հետազոտման ակտ տալու և տարկետում տրամադրելու հերթական գործընթացը կազմակերպելու հարցի շուրջ 2014թ. դեկտեմբերի սկզբին իր աշխատասենյակում տեղի ունեցած զրույցի ժամանակ համաձայնություն է ձեռք բերել միջնորդ Ալեն Գագիկի Բաբայանի հետ և նրա միջոցով պահանջել է առանձնապես խոշոր չափի՝ 1.331.490 ՀՀ դրամին համարժեք 3000 ԱՄՆ դոլար կաշառք, այնուհետև պայմանավորվել է Ալեն Բաբայանի հետ կաշառքի գումարն իր եղբորը՝ Էդգար Ռաֆայելի Ջամալյանին, հանձնելու վերաբերյալ և 2014թ. դեկտեմբերի 8-ին վերջինիս օժանդակությամբ ստացել այդ գումարից 220.000 ՀՀ դրամը, որն Ալեն Բաբայանը ոստիկանության Կենտրոնական բաժնի վարչական շենքի հարակից տարածքում տվել է Էդգար Ջամալյանին (…)»[1]:

5.2. Էդգար Ջամալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա՝ *«(…) օժանդակել է իր քրոջը՝ «Էրեբունի» բժշկական կենտրոնի ալերգոլոգիական ծառայության ղեկավար, բժշկական կենտրոնի զինապարտների հետազոտություն և փորձաքննություն իրականացնող բժշկական հանձնաժողովի անդամ Քրիստինա Ջամալյանին, առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալու մեջ, այն է՝ տեղյակ լինելով, որ Քրիստինա Ջամալյանը համաձայնություն է ձեռք բերել միջնորդ Ալեն Գագիկի Բաբայանի հետ 1.331.490 ՀՀ դրամին համարժեք 3000 ԱՄՆ դոլար կաշառքի դիմաց «Էրեբունի» ԲԿ ստուգիչ հետազոտման ուղեգրված զորակոչիկ Մերուժան Սամսոնի Խաչատրյանի վերաբերյալ տարկետման իրավունք վերապահող ախտորոշմամբ առողջական վիճակի հետազոտման ակտ տալու և տարկետում տրամադրելու հետագա գործընթացը կազմակերպելու հարցի շուրջ, պայմանավորվածության համաձայն՝ 2014թ. դեկտեմբերի 8-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, ոստիկանության Կենտրոնական բաժնի վարչական շենքի հարակից տարածքում հանդիպել է Ալեն Բաբայանին և նրանից ստացել կաշառքի գումարից 500 ԱՄՆ դոլարին համարժեք 220.000 ՀՀ դրամը (…)»*[2]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 106-126:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 106-126:

5.3. ՀՀ առողջապահության նախարարի՝ 2014 թվականի սեպտեմբերի 16-ի՝ «2014 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում պետության կողմից երաշխավորված՝ անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննություն և բուժում իրականացնող բժշկական կազմակերպություններում հանձնաժողովների նախագահներ նշանակելու մասին» N 2164-Ա հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային և ցերեկային ստացիոնարի պայմաններում հետազոտումը, փորձաքննությունն ու բուժումն իրականացնողներին հանձարարվել է հրամանն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում ՀՀ առողջապահության նախարարի հաստատմանը ներկայացնել բժշկական փորձաքննություն և հետազոտում իրականացնող հանձնաժողովների կազմում ընդգրկվող թեկնածու բժիշկ-մասնագետների անվանացանկը[1]:

Վերը նշված հրամանի հիման վրա տրված՝ «Էրեբունի ԲԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի՝ «2014թ. ձմեռային զորակոչի ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննությունն և բուժում իրականացնող բժշկական կազմակերպություններում հանձնաժողովների նախագահներ նշանակելու մասին» թիվ 321 հրամանին կից ներկայացված ցանկի 5-րդ կետի համաձայն՝ 2014 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննությունն և բուժումն իրականացնող բժշկական կազմակերպություններում հանձնաժողովների նախագահ նշված է գործադիր տնօրեն Ա.Ռոստոմյանը, իսկ ալերգոլոգիական հիվանդությունների գծով հանձնաժողովի անդամների կազմում ընդգրկված է Ք.Ռ.Ջամալյանը[2]:

5.4. Ք.Ջամալյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2001 թվականից աշխատում է «Էրեբունի» ԲԿ-ում որպես ալերգոլոգիական բաժանմունքի վարիչ, ծառայության ղեկավար: Ք.Ջամալյանն իր ցուցմունքներում նշել է, որ զորակոչային տարիքի հասած անձանց փորձաքննության հետ կապված իր գործունեությունը ներառել է բաժանմունք դիմած զինակոչիկների փաստաթղթերը զննելը, գանգատները լսելը, վերջիններիս հիվանդության պատմության տվյալների հիման վրա հետազոտություն իրականացնելը և դրա արդյունքները հանձնաժողովի նախագահին ներկայացնելը, ում որոշմամբ էլ դրանք ուղարկվել են Կենտրոնական բժշկական հանձնաժողով[3]:

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 9-10:
[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 227-228:
[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթ 35:

5.5. Ք.Ջամալյանի, Է.Ջամալյանի և Ա.Բաբայանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումների ձայնագրությունների համաձայն՝ 2014 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ժամը 10:35-ին, Է.Ջամալյանի հետ հեռախոսազրույցի ժամանակ վերջինս Ք.Ջամալյանին հայտնում է, որ պայմանավորվել է հանդիպել Ա.Բաբայանի հետ: Նույն օրը՝ ժամը 19:21-ին, Է.Ջամալյանը Ք.Ջամալյանի հետ հեռախոսազրույցի ընթացքում հայտնում է, որ Ա.Բաբայանն իրեն ոստիկանական բաժանմունքի մոտ է կանչել, միաժամանակ մտահոգություն հայտնում, թե կարող է իրեն ոստիկանությանը հանձնի, ապա շարունակում, որ կասի՝ Ա.Բաբայանը գումարը պարտքով է տալիս: Հանդիպումից հետո՝ ժամը 19:30-ին, Ա.Բաբայանն Է.Ջամալյանի հեռախոսով Ք.Ջամալյանի հետ հեռախոսազրույցի ընթացքում հարցնում է, թե որքան գումար պետք է փոխանցի, իսկ Ք.Ջամալյանը պատասխանում է՝ 2.500 (երկու հազար հինգ հարյուր) և 500 (հինգ հարյուր): Սակայն Ա.Բաբայանը համաձայնում է տալ միայն հինգ հարյուրը՝ պայմանավորվելով, որ մյուս մասով կհանդիպեն ու լրացուցիչ կխոսեն: Նշված հեռախոսազրույցից անմիջապես հետո՝ նույն օրը՝ ժամը 19:33-ին, Է.Ջամալյանի և Ք.Ջամալյանի միջև հեռախոսազրույցի ժամանակ Ք.Ջամալյանը կշտամբում է Է.Ջամալյանին հեռախոսով նման հարցեր քննարկելու համար: Հաջորդ օրը՝ ժամը 14:48-ին, Ք.Ջամալյանը Է.Ջամալյանին հայտնում է, որ Ա.Բաբայանը գնացել է իր մոտ, և ինքը նրանից պահանջել է տալ նաև գումարի մյուս մասը, սակայն նա չի համաձայնել՝ ասելով, որ անձամբ է ուզում դա անել[1]:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(…) [Քրիստինա Ջամալյանի] [մ]եղադրանքի հիմքում դրված՝ 19.09.2014թ. «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի՝ թիվ 321 հրամանն ուսումնասիրելով՝ [Առաջին ատյանի դատարանը] պարզեց, որ այն վերնագրված է՝ «2014թ. ձմեռային զորակոչի ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննություն և բուժում իրականացնող բժշկական կազմակերպություններում հանձնաժողովների նախագահներ նշանակելու մասին», այսինքն, ըստ էության, պետք է վերաբերի հանձնաժողովների նախագահներ նշանակելուն, և նրա բովանդակությունում Քրիստինա Ջամալյանին վերաբերելի որևէ դրույթ կամ նշում առկա չէ: Ավելին, նշված հրամանով առհասարակ որևէ հանձնաժողովի կազմ հաստատված չէ, ուստի մեղադրանքի այն մասը, որ Քրիստինա Ջամալյանն ընդգրկված է եղել «բժշկական կենտրոնի գլխավոր տնօրենի 19.09.2014թ. թիվ 321 հրամանով 2014թ. ձմեռային զորակոչի ընթացքում զինապարտների հետազոտություն և փորձաքննություն իրականացնող բժշկական հանձնաժողովի կազմում», հիմնավորված չէ:*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 119-121:

(...) [Առաջին ատյանի դատարանը] հանգում է հետևության, որ [թիվ 321 հրամանն] անհատական իրավական ակտ է, հետևաբար պարտադիր կերպով ենթակա է ծանոթացման: Եթե նախաքննության մարմինը գտել է, որ հրամանը վերաբերելի է եղել Քրիստինա Ջամալյանին, ապա քրեական գործում պետք է առկա լիներ նաև ապացույց՝ վերջինիս կողմից այդ հրամանին ծանոթացված լինելու մասին: Քրեական գործում նման ապացույցի բացակայությունը փաստում է, որ նշված հրամանը միանշանակորեն Քրիստինա Ջամալյանի համար պարտադիր կատարման ենթակա լինել չէր կարող: Նման հանգամանքների առկայությամբ, նշված հրամանը Ք.Ջամալյանի համար պարտադիր լինել չէր կարող նույնիսկ այն դեպքում, եթե նրա անունը որևէ կերպ նշված լիներ հրամանի տեքստում (...):

19.09.2014թ. «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի թիվ 321 հրամանի ուսումնասիրությամբ [Առաջին ատյանի դատարանը] պարզեց նաև, որ հրամանի հիմքում դրվել է ՀՀ ԱՆ 16.09.2014թ. հմ. 2164-Ա հրամանը: Նշված հրաման[ի] (...) անբաժանելի մասը կազմող հավելվածում, ալերգոլոգիական հիվանդությունների մասով, «Էրեբունի» ԲԿ-ից ընդգրկվել և հաստատվել է միայն Ա.Ա.Ռուստոմյանը: Նշված հրամանում և դրան կից հավելվածում Քրիստինա Ջամալյանի անվանական տվյալները ևս բացակայում են:

(...) [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված՝ բժշկական հանձնաժողովի նախագահի և կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմի գոյության պայմաններում, զորակոչային գործընթացում սահմանված որևէ հատուկ լիազորություն չունեցող՝ ոչ պետական մարմնի, տվյալ դեպքում «Էրեբունի» ԲԿ փակ բաժնետիրական ընկերությունում աշխատող Քրիստինա Ջամալյանը չէր կարող կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձ հանդիսանալ (...):

(...) Ըստ գործով հաստատված փաստական տվյալների, զորակոչիկ Մերուժան Խաչատրյանի հիվանդությունների վերաբերյալ Քրիստինա Ջամալյանը նախապես տեղեկացել է Ալեն Բաբայանից: (...) [Զ]որակոչիկ Մ.Խաչատրյանն «Էրեբունի» ԲԿ-ում հետազոտման է ենթարկվել 04.12.2014թ-ին, ինչը հիմնավորում է, որ մինչև գումարը ստանալը Քրիստինա Ջամալյանին արդեն հայտնի է եղել զորակոչիկի առողջական վիճակի մասին տվյալը, և նա համոզված է եղել զորակոչիկի հիվանդության և տարկետում ստանալու հնարավորության մասին: Գործով ձեռք բերված դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ ևս հաստատվեց, որ զորակոչիկի ախտորոշված հիվանդությունը ճիշտ է եղել, այսինքն՝ վերջինս իրականում տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը նրան զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունք է վերապահում:

Այսինքն՝ դատաքննությամբ ձեռք բերված՝ բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտության ենթարկված ապացույցները և սույն գործի

փաստական հանգամանքները թույլ են տալիս հանգել հետևության, որ Քրիստինա Ջամալյանը, գիտակցելով իր կողմից տարկետման իրավունք վերապահող ախտորոշմամբ առողջական վիճակի հետազոտման ակտ տալու և տարկետում տրամադրելու հետագա գործընթացի կազմակերպումն իրագործելու լիազորություններ չունենալու հանգամանքը, բժշկական փաստաթղթերով համոզմունք ձեռք բերելով, այնուհետև բժշկական հետազոտության արդյունքում լիովին համոզվելով զորակոչիկ Մ.Խաչատրյանին տարկետման հնարավորություն տվող հիվանդության առկայության մասին, օգտագործել է այդ հանգամանքը և խաբեության միջոցով ցանկացել է իրեն դիմած Ալեն Բաբայանի միջոցով հափշտակել զորակոչիկ Մերուժան Խաչատրյանի հոր՝ Սամսոն Խաչատրյանի ԱՄՆ 3000 դոլարին համարժեք ՀՀ 1.301.070 դրամը, որից ԱՄՆ 500 դոլարին համարժեք ՀՀ 220.000 դրամը հաջողվել է ստանալ, իսկ մնացածը չի հաջողվել՝ իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ Ալեն Բաբայանը չի տվել:

(…) «2014 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության 16.10.2014թ. թիվ 1112-Ն որոշման 3-րդ կետով որոշվել և թիվ 3 հավելվածով հաստատվել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմը, որի կազմում հաստատվել է նաև թերապևտ Ալեքսանդր Այվազյանը:

(…) [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ Ալեքսանդր Այվազյանը (…) [ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված] հանցագործության կատարման համար կարող է «պաշտոնատար անձ» դիտարկվել, հետևաբար հանցագործության պատշաճ սուբյեկտ է հանդիսանում:

(…) [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ ամբաստանյալ Ա.Այվազյանը, լինելով ՀՀ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմում, թեև ձևական առումով զորակոչիկների վերաբերյալ եզրակացություններ տալու իրավասություն ունեցել է, սակայն կոնկրետ զորակոչիկ Գրիգոր Դավթյանի վերաբերյալ, որևէ՝ իր լիազորությունների սահմաններում և դրանից բխող գործառույթ չի իրականացրել: Բացի այդ, [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ ըստ գործի փաստական տվյալների, դրա անհրաժեշտությունը չի եղել, քանի որ զորակոչիկն իրականում տառապել է այնպիսի հիվանդություններով, որոնք իրեն զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք են վերապահել:

Վկա Գայանե Ղուկասյանի կողմից տրված ցուցմունքները գործի մյուս ապացույցների և փաստական հանգամանքների հետ համադրելու արդյունքում հիմնավորվեց, որ Ա.Այվազյանի և Գ.Ղուկասյանի միջև ԱՄՆ 1500 դոլար կաշառք պահանջելու շուրջ խոսակցությունը տեղի է ունեցել զորակոչիկ Գրիգոր Դավթյանին հետազոտելուց և նրան զինվորական ծառայությունից ազատելու և պահեստազոր հաշվառելու եզրակացությունը տալուց օրեր անց:

(…) Այսինքն, թեև ամբաստանյալ Ա.Այվազյանը հանդիսանում է իրեն մեղսագրվող հանցակազմի սուբյեկտ, սակայն զինակոչիկ Գ.Դավթյանի

օգտին որևէ գործողություն չկատարելու փաստի ուժով հիմնավորվում է հանցակազմում տարրերից մեկի՝ հանցագործության օբյեկտիվ կողմի բացակայությունը, իսկ հանցակազմի տարրերից թեկուզ մեկի բացակայության պայմաններում հանցագործության բացառման կանոնի համաձայն, [Առաջին ատյանի դատարանը] փաստում է, որ վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

(…) [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ Ալեքսանդր Այվազյանի արարքում առկա են կաշառք ստանալու պատրվակով խոշոր չափերով խարդախություն կատարելու չավարտված հանցակազմը (…):

(…) 2014թ. դեկտեմբերի սկզբին, Քրիստինա Ջամալյանի և Ալեն Բաբայանի միջև կայացած համաձայնության կայացման և կաշառք պահանջելու պահից, Քրիստինա Ջամալյանի հանցավոր արարքն ավարտված է համարվել՝ ձևական հանցակազմով հանցագործության ավարտման պահի կանոնի համաձայն, և հանցանքն ավարտված համարելու համար ոչ միայն պարտադիր, այլև էական չէ կաշառքի առարկան ստանալու պահի ավարտն արձանագրելը: Ինչպես արդեն [Առաջին ատյանի դատարանն] արձանագրել է, Էդգար Ջամալյանը «կաշառքի առարկան» ստացել է 08.12.2014թ-ին, այսինքն՝ հանցանքն արդեն ավարտված լինելու պայմաններում: Փաստորեն, նախաքննության մարմինն Էդգար Ջամալյանին մեղադրանք է առաջադրել արդեն ավարտված հանցագործությանն օժանդակելու համար:

(…) Դատաքննությամբ որևէ՝ ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ձեռք բերված վերաբերելի, թույլատրելի և հավաստի ուղղակի ապացույց ձեռք չբերվեց, որը կհիմնավորեր, որ ամբաստանյալ Էդգար Ջամալյանը տեղեկացված է եղել նախապատրաստվող հանցագործության մասին, կամ նախապես խոստացել է օժանդակել հանցագործությանը, այսինքն՝ բացակայում է վերջինիս կողմից կատարված հանցագործությանն օժանդակելու հիմնավոր կասկածը: Որևէ փաստական տվյալով չի հաստատվում, որ Ալեն Բաբայանի ու Քրիստինա Ջամալյանի խոսակցության մասին Էդգար Ջամալյանը տեղյակ է եղել, որ վերջինս իմացել է այն մասին, որ փոխանցվող գումարը գինակոչիկ Մերուժան Խաչատրյանի հետազոտության հետ կապ ունի:

(…) [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ գաղտնալսումների վերծանումներում առկա տեղեկությունը բավարար չէ՝ կատարված հանցագործության մեջ Էդգար Ջամալյանի մեղավորությունը հաստատելու համար: Հատկապես, որ այդ հանգամանքը չհիմնավորվեց նաև ամբաստանյալների կողմից տրված ցուցմունքներով ևս:

(…) [Առաջին ատյանի դատարանը] հանգում է այն հետևության, որ [ապացույցները] բավարար չեն ամբաստանյալ Էդգար Ջամալյանի

անմեղության կանխավարկածը հաղթահարելու համար, նաև հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ նա կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունը, հաշվի առնելով նաև այն, որ վերջինիս առաջադրվել է արդեն ավարտված հանցակազմով հանցագործությանը օժանդակելու մեղադրանք: (...):

(...) Էդգար Ջամալյանի գործողություններում բացակայում են նաև որևէ այլ հանցագործության կամ դրան օժանդակելու հատկանիշները, այդ թվում խարդախության: (...)»[1]:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ք.Ջամալյանի արարքին ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով իրավական գնահատական տալն օրինական է և հիմնավորված, իսկ դրա վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններն իրավաչափ են, ուստի մեղադրող Վ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի պահանջն՝ ամբաստանյալ Ք.Ջամալյանին մեղսագրվող արարքին նույն օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասին 2-րդ կետով իրավական գնահատական տալու վերաբերյալ, անհիմն է և չի բխում սույն որոշման մեջ արտացոլված փաստական տվյալների բովանդակությունից:*

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) Ա.Այվազյանի արարքին իրավական գնահատական պետք է տրվի ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով, ինչի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանը ևս հանգել է իրավաչափ հետևության: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով մեղադրող Վ.Հարությունյանի և ամբաստանյալ Ա.Այվազյանի վերաքննիչ բողոքների պահանջներին, գտնում է, որ նշված պահանջներն անհիմն են և չեն բխում [որոշմամբ] նշված փաստական տվյալների բովանդակությունից:

(...) Սույն գործի հանգամանքները վկայում են [այն] մասին, [որ] Էդ.Ջամալյանը (...) Ա.Բաբայանից 220.000 ՀՀ դրամ գումարը վերցնելու գործընթացին ներգրավվել է գիտակցելով թե վերջինս իրեն տալու է քրոջ պարտք մնացած գումարը, այլ ոչ թե հանցավոր ճանապարհով ձեռք բերվածը: Այսինքն՝ նման պարագայում (...) բացակայում է հանցակցության դիտավորությունը, իսկ առանց հանցակիցներից յուրաքանչյուրի՝ կատարվող հանցանքին դիտավորյալ մասնակցության (...) հանցակցության մասին խոսք չի կարող լինել:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) ամբաստանյալ Է.Ջամալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-311 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում անպարտ ճանաչելու և արդարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններն օրինական են

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 32-51:

և հիմնավոր, իսկ մեղադրող Վ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի պահանջն՝ ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 38-311 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղավոր ճանաչելու և քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անհիմն է և չի բխում վերը նշված պատճառաբանությունների տրամաբանությունից (…)»[1]:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով ստորադաս դատարանները, վերաորակելով ամբաստանյալներ Ա.Այվազյանի, Ք.Ջամալյանի արարքներն ու արդարացնելով Է.Ջամալյանին, թույլ են տվել նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են ամբաստանյալներին մեղսագրվող արարքների քրեաիրավական որակման և համապատասխան հանցակազմերի հատկանիշների առկայության վերաբերյալ սխալ հետևությունների:

8.1. Մասնավորապես, բողոքի հեղինակը վկայակոչել է զինապարտների բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարի և «Էրեբունի» բժշկական կենտրոնի տնօրենի հրամանները և փաստել, որ անհիմն են Ք.Ջամալյանի՝ զորակոչային գործընթացում լիազորություն չունեցող ոչ պետական մարմնի՝ փակ բաժնետիրական ընկերության աշխատակից լինելու և տվյալ ընկերության տնօրենի հրամանով որպես պաշտոնատար անձ հանդես գալու անհնարինության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները: Ինչ վերաբերում է «Էրեբունի» բժշկական կենտրոնի տնօրենի հրամանին Ք.Ջամալյանի ծանոթացված լինելու վերաբերյալ ապացույցների բացակայությանը, ապա այս պնդումը, ըստ բողոք բերած անձի, հերքվում է գործի դատաքննությամբ հետազոտված ապացույցներով, այդ թվում՝ հենց Ք.Ջամալյանի ցուցմունքներով:

Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքաբերը, վերլուծելով Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0002/01/13 և թիվ ՏԴ/0053/01/12 գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները և համադրելով դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ, արձանագրել է, որ հիմնազուրկ են Ք.Ջամալյանին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետից նույն օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով վերաորակելու մասին Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատողությունները: Բողոքի հեղինակը նշել է, որ Ք.Ջամալյանի արարքում կաշառք ստանալու հանցակազմի առկայության պարզումը և զորակոչիկի օգտին համապատասխան գործողությունների կատարման հնարավորության

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 40-95:

ու հավանականության աստիճանը միմյանց հետ կապված չեն:

8.2. Բողոք բերած անձի կարծիքով վերը նշված պատճառաբանությունները վերաբերելի են նաև ամբաստանյալ Ա.Այվազյանին, քանի որ նրա պարագայում ևս ստորադաս դատարանները սխալ են որոշել կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ առանց վերլուծելու ու գնահատելու գործում առկա ապացույցները:

8.3. Անդրադառնալով ամբաստանյալ Է.Ջամալյանի վերաբերյալ արդարացման դատավճիռ կայացնելուն՝ բողոքի հեղինակը մեջբերել է Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, վերլուծել գործի նյութերը և եզրահանգել, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններն անտեսել են այն բոլոր փաստական տվյալները, որոնք հիմնավորում են Է.Ջամալյանին մեղսագրվող արարքը: Մասնավորապես, բողոքաբերը վկայակոչել է հեռախոսային խոսակցությունների ձայնագրառումներն ու դրանց վերծանման նպատակով նշանակված դատահամակարգչատեխնիկական փորձաքննության եզրակացությունը՝ գտնելով, որ այդ ապացույցներն ունեն բարձր արժանահավատություն, որպիսի հանգամանքն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

9. Վերոգրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է ամբաստանյալներ Ա.Այվազյանի, Ք.Ջամալյանի և Է.Ջամալյանի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ու այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված՝ կաշառք ստանալու հանցակազմի հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալներ Ք.Ջամալյանին և Ա.Այվազյանին առաջադրված մեղադրանքները վերաորակելու, իսկ ամբաստանյալ Է.Ջամալյանին առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի համաձայն՝ *«Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի*

նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝

պատժվում է (...):

(...) 3. Նույն արարքը, որը կատարվել է՝

3) խոշոր չափերով

պատժվում է (...):

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

(...) 2) առանձնապես խոշոր չափերով,

պատժվում են (...)»:

I. Հիմնավո՞ր են արդյոք Ք.Ջամալյանին մեղսագրված արարքում կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները.

13. ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասից ուղղակիորեն բխում է, որ կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտ կարող է լինել բացառապես պաշտոնատար անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«(...) [Պ]աշտոնատար անձինք են՝*

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք»:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը *Հ.Սահակյանի* գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող են համարվում այն պետական ծառայողները, ովքեր ղեկավարում են իրենց ենթակայության տակ գտնվող ծառայողների գործունեությունը: Այս առումով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ է հանդիսանում յուրաքանչյուր պետական ծառայող, ով իր ենթակայության տակ այլ ծառայողներ ունի, ղեկավարում է նրանց գործունեությունը:

(…) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ դիտելու համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք նրանք օժտված են իրավական նշանակություն ունեցող, իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթուղթ տրամադրել քաղաքացիներին և դրանով կարգավորել նրանց վարքագիծը:

Ջուտ մասնագիտական գործառույթներ իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում: Սակայն, եթե նշված անձինք օժտված են նաև կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական լիազորություններով, ապա, այդ լիազորություններն իրականացնելիս հանդիսանում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ (…)»[1]:

14. Վերոշարադրյալ իրավական կարգավորումների և դիրքորոշումների հիման վրա անդրադառնալով այն իրավական հարցին, թե արդյոք բժշկական գործունեության ոլորտի աշխատողը (բուժաշխատողը) կարող է համարվել պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերջինս զուտ իր մասնագիտական գործառույթներն իրականացնելիս պաշտոնատար անձի կարգավիճակ չունի: Սակայն բժշկական գործունեության ոլորտում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք կարող են քննարկվող կարգավիճակն ունենալ:

Բժշկական գործունեության ոլորտում կազմակերպական-տնօրինչական գործառույթները մասնավորապես ներառում են պետական մարմնի, պետական կամ տեղական հիմնարկի (դրա կառուցվածքային ստորաբաժանման) աշխատանքային կոլեկտիվի կամ իր ծառայողական ենթակայության ներքո գտնվող անձանց ղեկավարումը, կադրային կազմի ձևավորման կամ աշխատանքային գործառույթների, ծառայություն անցնելու կարգի սահմանումը, խրախուսման և պարգևատրման միջոցների, կարգապահական տույժերի կիրառումը, ինչպես նաև իրավական նշանակություն ունեցող կամ իրավական հետևանքներ առաջացնող որոշումների ընդունումը (օրինակ՝

[1] Տե՛ս *Համլետ Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշման 16-րդ կետը:

անձի աշխատունակության, առողջական վիճակի վերաբերյալ փաստաթուղթ տալը, փորձագիտական հանձնաժողովի կամ զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու հետ կապված լիազորություններ իրականացնելը):

15. Այսպիսով, բժշկական գործունեության ոլորտում նույն սուբյեկտը կարող է իրականացնել թե՛ մասնագիտական և թե՛ կազմակերպական-տնօրինչական ու վարչատնտեսական լիազորությունների հետ կապված գործառույթներ, ուստի կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտի քննարկվող հատկանիշի առկայությունը փաստելիս կարևոր է պարզել, թե արդյոք տվյալ անձը կոնկրետ դեպքում պաշտոնական, թե բացառապես մասնագիտական գործառույթներ է իրականացրել, որն էլ կարող է հիմք հանդիսանալ բուժաշխատողին պաշտոնատար անձ դիտարկելու կամ չդիտարկելու համար: Ընդ որում, կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտի այս հատկանիշի առկայությունը փաստելու համար բավարար կարող է լինել ոչ միայն մշտապես կամ ժամանակավորապես, այլ նաև հատուկ լիազորությամբ կազմակերպատնօրինչական լիազորությունների իրականացումը, այդ թվում՝ իրավական նշանակություն ունեցող կամ իրավական հետևանքներ առաջացնող կոնկրետ որոշման ընդունման կամ դրա ընդունմանը մասնակցելու առանձին դեպքը:

16. Սույն գործի նյութերի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը, փաստելով Ք.Ջամալյանին մեղսագրվող արարքում կաշառք ստանալու սուբյեկտի հատկանիշների բացակայությունը, իր դիրքորոշումը հիմնավորել է նրանով, որ ՀՀ առողջապահության նախարարի N 2164-Ա հրամանում և «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի թիվ 321 հրամանում Ք.Ջամալյանի վերաբերյալ որևէ նշում չկա, և որ նախարարի հրամանով հաստատված՝ բժշկական հանձնաժողովի նախագահի և կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմի գոյության պայմաններում, զորակոչային գործընթացում սահմանված որևէ հատուկ լիազորություն չունեցող, ոչ պետական մարմնում՝ «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ում աշխատող Ք.Ջամալյանը չէր կարող կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձ համարվել: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Ք.Ջամալյանը պաշտոնական դրության ուժով իրեն մեղսագրվող արարքը՝ զորակոչիկի օգտին տարկետման իրավունք վերապահող ախտորոշմամբ առողջական վիճակի հետազոտման ակտ տալու և տարկետում տրամադրելու հետագա գործընթացը կազմակերպելու լիազորություն չի ունեցել[1]:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով ստորադաս դատարանի դատական ակտը, իր համաձայնությունն է արտահայտել Առաջին ատյանի դատարանի դիրքորոշման հետ[2]:

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

16.1. Անդրադառնալով ՀՀ առողջապահության նախարարի՝ 2014 թվականի սեպտեմբերի 16-ի N 2164-Ա հրամանում Ք.Ջամալյանի վերաբերյալ նշումների բացակայության մասին ստորադաս դատարանների հետևություններին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հրամանի ուսումնասիրությունից բխում է, որ դրանով ոչ միայն հաստատվել է 2014 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննություն և բուժում իրականացնող բժշկական կազմակերպություններում ձևավորված հանձնաժողովների նախագահների ցանկը, այլև նախատեսվել է, որ հրամանի ուժի մեջ մտնելուց հնգօրյա ժամկետում ՀՀ առողջապահության նախարարի հաստատմանը պետք է ներկայացվեն նաև բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների կազմում ընդգրկվող թեկնածու բժիշկ-մասնագետների ցանկը: Ի կատարումն նշված հրամանի՝ «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 19-ին արձակվել է թիվ 321 հրամանը, որին, չնայած դրա վերտառությանը, կցվել է ոչ միայն համապատասխան հանձնաժողովների նախագահի, այլ նաև դրանց անդամների ցանկը: Նշված ցանկում որպես հանձնաժողովների նախագահ է նշվել «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ա.Ռոստոմյանը, ինչպես նաև սահմանվել են հանձնաժողովների անդամները՝ ըստ բժշկական ոլորտների: Մասնավորապես, այդ ցանկի 5-րդ կետը վերաբերում է ալերգոլոգիական հիվանդությունների գծով հանձնաժողովին, որի կազմում ուղղակիորեն նշված է Ք.Ջամալյանի անունը[1]:

16.2. Անդրադառնալով զորակոչային գործընթացում լիազորություն չունեցող ոչ պետական մարմնի՝ փակ բաժնետիրական ընկերության աշխատակից լինելու և տվյալ ընկերության տնօրենի հրամանով որպես պաշտոնատար անձ հանդես գալու անհնարինության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների կազմում ընդգրկվող թեկնածու բժիշկ-մասնագետների ցանկը սահմանելու լիազորությունը բխում է ՀՀ առողջապահության նախարարի արդեն իսկ հիշատակված հրամանից: Բացի այդ, «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի և դրա կազմում ընդգրկված բժիշկ-մասնագետների՝ զորակոչային գործընթացում որոշակի գործառույթներ իրականացնելու լիազորությունն ուղղակիորեն բխում է նաև «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանի 37-րդ կետից, համաձայն որի՝ երբ զորակոչային հանձնաժողովի բժիշկները դժվարանում են վերջնականորեն որոշել զորակոչիկի առողջական վիճակը, նա հետազոտման

[1] Տե՛ս սույն որոշման 5.3-րդ կետը:

է ուղարկվում քաղաքացիական բուժհիմնարկ. ուղեգրում նշվում է նրա նախնական ախտորոշումը և հատկապես՝ ինչ պետք է ճշտել հետազոտության ժամանակ, ուղեգրին կցվում է առողջական վիճակի հետազոտման ակտը: Բուժհիմնարկում հետազոտությունից հետո լրացվում է զորակոչիկի առողջական վիճակի հետազոտման ակտը, որը ստորագրվում է տվյալ բուժհիմնարկում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմած փորձաքննական հանձնաժողովի կողմից և հաստատվում բուժհիմնարկի կնիքով: Ակտը ներկայացվում է զինկոմիսարիատ, որի հիման վրա տրվում է եզրակացություն՝ զորակոչիկի պիտանիության մասին:

16.3. Ինչ վերաբերում է քննարկվող հրամանի մասին պատշաճ ծանուցված չլինելու վերաբերյալ ստորադաս դատարանների փաստարկներին[1], ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Ք.Ջամալյանը դատաքննության ընթացքում տված իր ցուցմունքներում նշել է, որ զորակոչային տարիքի հասած անձանց փորձաքննության հետ կապված իր գործունեությունը ներառել է իրենց բաժանմունք դիմած զինակոչիկների փաստաթղթերը զննելը, գանգատները լսելը, վերջիններիս հիվանդության պատմության տվյալների հիման վրա հետազոտություն իրականացնելը և դրա արդյունքները հանձնաժողովի նախագահին ներկայացնելը, ում որոշմամբ էլ դրանք ուղարկվել են Կենտրոնական բժշկական հանձնաժողով[2]:

17. Այսպիսով, սույն որոշման 13-15-րդ կետերում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով որոշման 16-16.3-րդ կետերում ներկայացված գործի փաստերը և դրանց տրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ք.Ջամալյանին մեղսագրված արարքում կաշառք ստանալու հանցակազմի սուբյեկտի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

II. Հիմնավո՞ր են արդյոք Ք.Ջամալյանին և Ա.Այվազյանին մեղսագրված արարքներում կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները.

18. Կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Է.Զաքարյանի ու այլոց* գործով որոշմամբ և իրավական դիրքորոշում արտահայտել այն մասին, որ. *«(…) [Օ]բյեկտիվ կողմից քննարկվող հանցագործությունը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն*

ա) ստանալով կամ,

բ) պահանջելով կամ,

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

[2] Տե՛ս սույն որոշման 5.4-րդ կետը:

գ) ստանալու խոստմամբ կամ,

դ) առաջարկն ընդունելով:

(…) [Հ]անցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից պահանջ ներկայացնելով, որը հանդիսանում է կաշառք տվողի օգտին որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու անվերապահ պայման: (…):

Քննարկվող հանցագործությունը ձևական է և ավարտված է համարվում պահանջ ներկայացնելու պահից՝ անկախ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության ձեռքբերման, կաշառքի առարկան հետագայում ստանալու կամ չստանալու, պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի օգտին պայմանավորված գործողությունները կատարելու կամ չկատարելու հանգամանքից: (…):

(…) [Հ]անցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, որպեսզի ներկայացվող պահանջը լինի կոնկրետ, առկա և իրական, իսկ այս չափանիշներին չհամապատասխանող, զուտ անձի դիտավորությունը բացահայտող պահանջ ներկայացնելը չի կարող հանցագործություն համարվել: Կաշառք տալու միայն կոնկրետ և իրական պահանջի դեպքում է խոսք գնում հանրորեն վտանգավոր, հակաիրավական, գիտակցված և կամային այնպիսի արարքի (գործողության) կատարման մասին, որն ուղղված է կոնկրետ օբյեկտի՝ պետական ապարատի բնականոն գործունեության դեմ, այդ հարաբերություններում առաջացնում է բացասական փոփոխություններ, հեղինակազրկում է պետական իշխանությունը, վտանգում դրա նորմալ գործունեությունը (…)»[1]:

19. Վերահաստատելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումը և անդրադառնալով կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմի մյուս հատկանիշներին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի օբյեկտիվ կողմի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանցակազմն առկա է նաև որոշակի գույքային առավելության դիմաց պաշտոնատար անձի կողմից ***իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու դեպքում***, այլ կերպ՝ պաշտոնատար անձի կողմից թեկուզև օրինական գործողություն կատարելու համար գումար պահանջելը կամ ստանալը նույնպես կարող է որակվել որպես կաշառք ստանալ: Ինչ վերաբերում է ակնհայտ ապօրինի գործողության համար կաշառք ստանալուն, ապա որպես քննարկվող հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք՝ այն նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասում:

19.1. Պաշտոնատար անձի կողմից իր իրավասության շրջանակում որոշակի գույքային առավելության դիմաց օրինական գործողության կատարման

[1] Տե՛ս *Էդուարդ Զաքարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0002/01/13 որոշման 20-22-րդ կետերը:

համար ևս քրեական պատասխանատվություն սահմանելու գաղափարն ամրագրված է նաև Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայում[1] (այսուհետ՝ նաև Կոնվենցիա): Կոնվենցիայով նախատեսված՝ կաշառակերության (ակտիվ կամ պասիվ) համար քրեական պատասխանատվություն նախատեսելու պահանջի տեսանկյունից, այդ նույն Կոնվենցիայի բացատրական զեկույցի համաձայն, անհրաժեշտ չի համարվում պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունները խախտելու լրացուցիչ տարրի նախատեսումը: Նշված զեկույցի համաձայն՝ այս իրավախախտման հիմնական տարրը ոչ թե պաշտոնատար անձի՝ այս կամ այն կերպ գործելու լիազորության առկայությունը կամ բացակայությունն է, այլ այն, որ դրա համար պաշտոնատար անձը ստացել, կամ վերջինիս առաջարկվել կամ խոստացվել է կաշառք: Ընդ որում, բացատրական զեկույցից բխում է, որ այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրությամբ նախատեսված է վերը հիշատակված լրացուցիչ տարրը, այնուամենայնիվ, պետք է ապահովվի Կոնվենցիայի 2-րդ հոդվածում տրված՝ կաշառակերության բնորոշման իմպլեմենտացումն այն հաշվով, որ չվտանգվի դրա քրեականացման նպատակը[2]:

19.2. Կաշառք ստանալու հանցակազմն առկա է նաև այն դեպքում, երբ պաշտոնատար անձը, առանց նախնական պայմանավորվածության, որպես նվեր գույքային առավելություն է ստանում իր լիազորությունների մեջ մտնող արդեն իսկ կատարված գործողության (անգործության) համար:

Կառավարման հանրային ապարատի նորմալ գործունեության բովանդակությունը կազմող հասարակական հարաբերությունների բաղկացուցիչ տարրերից մեկը պաշտոնատար անձանց ծառայողական գործունեության վարձատրման հանրային-իրավական բնույթն է, այսինքն՝ վարձատրությունը միայն օրենքով սահմանված կարգով ու չափով: Եթե պաշտոնատար անձն ապօրինի վարձատրություն է ստանում՝ հասկանալով, որ այն տրվում է իրեն իր որոշակի ծառայողական գործունեության համար, ապա դրանով իսկ նա խախտում է վերը նշված հասարակական հարաբերությունները, ինչը կարող է պատասխանատվություն առաջացնել կաշառք ստանալու համար, որի էությունը հենց պաշտոնատար անձի կողմից ապօրինի վարձատրություն ստանալն է:

20. Սույն գործի նյութերի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը Ք.Ջամալյանին մեղսագրվող արարքում կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը հիմնավորել է նրանով, որ բժշկական

[1] Տե՛ս Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (ընդունվել է 27.01.1999թ., ուժի մեջ է մտել 01.07.2002թ., Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 01.05.2006թ.), ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր 2006.12.28/8(16)2:

[2] Տե՛ս Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի բացատրական զեկույցի 39-րդ կետը:

փաստաթղթերով համոզմունք ձեռք բերելով, այնուհետև բժշկական հետազոտության արդյունքում լիովին համոզվելով զորակոչիկ Մ.Խաչատրյանին տարկետման հնարավորություն ընձեռող հիվանդության առկայության մասին, Ք.Ջամալյանն օգտագործել է այդ հանգամանքը և խաբեության միջոցով ցանկացել է իրեն դիմած Ա.Բաբայանի միջոցով հափշտակել զորակոչիկ Մ.Խաչատրյանի հոր՝ Ս.Խաչատրյանի 3000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.301.070 ՀՀ դրամը, որից 500 ԱՄՆ դոլարին համարժեք 220.000 ՀՀ դրամը հաջողվել է ստանալ, իսկ մնացածը չի հաջողվել՝ իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ Ա.Բաբայանն այն չի տվել: Առաջին ատյանի դատարանն իր դիրքորոշումը հիմնավորել է նաև նրանով, որ Մ.Խաչատրյանի հիվանդ լինելու հանգամանքը հաստատվել է դատաբժշկական փորձաքննությամբ, և որ այդ հիվանդության ախտորոշման կապակցությամբ իրականացվող հետազոտությունների ու դրանց արդյունքների ամրագրման կարգը գրեթե բացառել է փոփոխման (կեղծման) հավանականությունը[1]:

Վերաքննիչ դատարանն էլ իր համաձայնությունն է արտահայտել Առաջին ատյանի դատարանի այս դիրքորոշման հետ[2]:

21. Սույն որոշման 19-19.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումը կիրառելով սույն գործի՝ նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանների կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ Ք.Ջամալյանի կողմից տարկետման իրավունք վերապահող հիվանդության ախտորոշմամբ հետազոտման ակտ տալու և տարկետում տրամադրելու հետագա գործընթացը կազմակերպելու համար 3000 ԱՄՆ դոլար պահանջելը և հետագայում համապատասխան ակտ տրամադրելու համար պահանջած գումարից 500 ԱՄՆ դոլարին համարժեք 220.000 ՀՀ դրամ ստանալը, անկախ այդ գործողությունների օրինական կամ անօրինական բնույթից, կազմում է կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմը:

Այն հանգամանքը, որ Մ.Խաչատրյանի հիվանդ լինելու հանգամանքը հաստատվել է դատաբժշկական փորձաքննությամբ, և որ այդ հիվանդության ախտորոշման կապակցությամբ իրականացվող հետազոտությունների ու դրանց արդյունքների ամրագրման կարգը գրեթե բացառել է փոփոխման (կեղծման) հավանականությունը, վկայում է համապատասխան հիվանդությամբ հետազոտման ակտ տրամադրելու իրավաչափության մասին, ինչը, սակայն, չի բացառում այդ գործողության համար գումար պահանջելը՝ որպես կաշառք ստանալ դիտարկելը: Բացի այդ, կաշառքի առարկան ստանալու պահանջ ներկայացնելու պահից հանցակազմը համարվում է ավարտված՝

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

անկախ այն գործողությունների կատարման կամ չկատարման հանգամանքից, որոնց համար պահանջվում է կաշառքը:

22. Սույն գործի նյութերի համաձայն՝ ստորադաս դատարանները Ա.Այվազյանին մեղսագրվող արարքում կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը հիմնավորել են նրանով, որ Ա.Այվազյանը, լինելով ՀՀ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմում, թեև ձևական առումով զորակոչիկների վերաբերյալ եզրակացություններ տալու իրավասություն ունեցել է, սակայն կոնկրետ զորակոչիկ Գ.Դավթյանի վերաբերյալ, որևէ՝ իր լիազորությունների սահմաններում և դրանից բխող գործառույթ չի իրականացրել, դրա անհրաժեշտությունը նաև չի եղել, քանի որ զորակոչիկն իրականում տառապել է այնպիսի հիվանդություններով, որոնք իրեն զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք են վերապահել: Ստորադաս դատարանները հաշվի են առել նաև այն հանգամանքը, որ Ա.Այվազյանի և Գ.Ղուկասյանի միջև 1500 ԱՄՆ դոլար կաշառք պահանջելու շուրջ խոսակցությունը տեղի է ունեցել զորակոչիկ Գ.Դավթյանին հետազոտելուց և նրան զինվորական ծառայությունից ազատելու և պահեստազոր հաշվառելու եզրակացությունը տալուց օրեր անց[1]:

23. Սույն որոշման 18-րդ և 19.2-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի՝ նախորդ կետում վկայակոչված փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով Ա.Այվազյանի կողմից 1500 ԱՄՆ դոլար պահանջելու, այսինքն՝ կոնկրետ և իրական պահանջի առկայությունը, ինչն արդեն իսկ բավարար է կաշառք ստանալու հանցակազմն ավարտված համարելու համար՝ անկախ որոշակի գործողություններ կատարելու կամ չկատարելու հանգամանքից, միևնույն ժամանակ ոչ իրավաչափ եզրահանգում են արել Ա.Այվազյանի արարքում կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայության մասին: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ զորակոչիկն իրականում տառապել է այնպիսի հիվանդություններով, որոնք իրեն զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք են վերապահել, ապա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ օրինական գործողության համար որոշակի գույքային առավելություն պահանջելը չի բացառում կաշառք ստանալու հանցակազմի առկայությունը և չի կարող դիտարկվել որպես անձի օգտին որևէ գործողության չկատարում:

24. Այսպիսով, հաշվի առնելով սույն որոշման 18-19.2-րդ կետերում արտահայտված դիրքորոշումները և 20-23-րդ կետերում ներկայացված՝ գործի փաստերն ու դրանց վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն Ք.Ջամալյանին և Ա.Այվազյանին մեղսագրված արարքներում կաշառք ստանալու հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

III. Հիմնավո՞ր են արդյոք Է.Ջամալյանին մեղսագրված արարքում հանցակազմի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

25. ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող»:*

26. Վերոշարադրյալ իրավական նորմերից բխում է, որ այն դեպքում, երբ հատուկ սուբյեկտի հատկանիշներ չունեցող անձը մասնակցում է նման սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողության կատարմանը, ապա վերջինիս արարքը ենթակա է որակման հանցակցության կանոններով:

27. Սույն գործի նյութերի համաձայն՝ Է.Ջամալյանին մեղսագրված արարքում հանցակազմի բացակայության մասին դիրքորոշումն Առաջին ատյանի դատարանը հիմնավորել է նրանով, որ Է.Ջամալյանը «կաշառքի առարկան» ստացել է 2014 թվականի դեկտեմբերի 8-ին՝ Ք.Ջամալյանի և Ա.Բաբայանի միջև համաձայնության կայացման և կաշառք պահանջելու պահից հետո, այսինքն՝ հանցանքն արդեն ավարտված լինելու պայմաններում: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ քրեական գործում առկա ապացույցները, այդ թվում՝ գաղտնալսումների վերծանումներում առկա տեղեկությունը, բավարար չեն հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ նա կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործությունը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Է.Ջամալյանի գործողություններում բացակայում են նաև որևէ այլ հանցագործության կամ դրան օժանդակելու հատկանիշները, այդ թվում՝ խարդախության[1]:

Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ[2]:

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

28. Վերոշարադրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև կաշառք ստանալու հանցակազմն ավարտված է համարվում համապատասխան պահանջ ներկայացնելու պահից, այդուհանդերձ, քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև կաշառքի առարկան փաստացի ստանալով: Մինչդեռ սույն գործով ստորադաս դատարանները ոչ իրավաչափորեն հանցակազմի օբյեկտիվ կողմից դուրս են թողել կաշառքի ստացման բուն գործողությունը: Ստորադաս դատարանների դիրքորոշումից բխում է, որ եթե անգամ հաստատված համարվեր, որ Է.Ջամալյանը կաշառքի առարկան ստացել է, այդուհանդերձ նրա արարքում բացակայելու էին համապատասխան հանցագործության օժանդակության հատկանիշները՝ կաշառքի առարկան պահանջելու պահից հանցանքն ավարտված լինելու պատճառաբանությամբ:

29. Ինչ վերաբերում է ապացույցների անբավարարության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին, ապա այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ապացույցների գնահատման քրեադատավարական կանոններին: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

2. Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս:

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

30. Անդրադառնալով ապացույցների բավարարության պահանջին՝ Վճռաբեկ դատարանը *Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի* գործով որոշման մեջ

իրավական դիրքորոշում է արտահայել այն մասին, որ. *«(…) [Ա]պացույցների բավարարությունը որոշելու չափանիշները սերտորեն փոխկապակցված են և փոխադարձաբար պայմանավորում են միմյանց: Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում: (…)»*[1]:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցի արժանահավատության և առանձին ապացույցների ապացուցողական նշանակության վերաբերյալ հարցերին և զարգացնելով *Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի* գործով որոշմամբ դրանց վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները, *Ա.Հակոբյանի* գործով նշել է, որ. *«(…) [Ա]պացույցի առանձին տեսակներ, պայմանավորված ապացուցողական տեղեկատվության ձեռք բերման միջոցներով և դրանց արդյունքների՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ամրագրված լինելու հանգամանքով (օրինակ՝ տեսանկարահանումների, լուսանկարահանումների, հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները և այլն), օժտված են բարձր արժանահավատություն ունեցող ապացույց համարվելու համար անհրաժեշտ չափանիշներով և կարող են այս կամ այն փաստական հանգամանքի հաստատման կամ հերքման առումով անփոխարինելի նշանակություն ունենալ: Հետևաբար, այդպիսի ապացույցների արժանահավատությունը չի կարող կասկածի տակ դրվել այնպիսի ապացույցով, որն իր ապացուցողական արժեքի տեսանկյունից ունի դրանցից պակաս նշանակություն: Այլ կերպ՝ քննարկման առարկա ապացույցներով հաստատվող փաստական տվյալները կարող են հերքվել ոչ այլ կերպ, քան այդ ապացույցներին արժանահավատությամբ չգիջող ապացույցով կամ ապացույցների համակցությամբ (…)*[2]*»*:

Անդրադառնալով դատական ակտի պատճառաբանվածության խնդրին՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իր նախադեպային իրավունքում ձևավորած մոտեցումներն առ այն, որ. *«(…) [Դ]ատարանը պարտավոր է դատական ակտում ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները: Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա*

[1] Տե՛ս *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 33-րդ կետը:

[2] Տե՛ս *Արամայիս Հակոբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 16-րդ կետը:

արդյունքում դատարանի ներքին համոզմունքի ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ և կհանգեցնեն կամայականության: Դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստին դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (...)»[1]:

31. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով Է.Ջամալյանի և Ք.Ջամալյանի հեռախոսային խոսակցություններին, ընդհանրական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ գաղտնալսումների վերծանումներում առկա տեղեկությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Է.Ջամալյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը[2]:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործի հանգամանքները վկայում են, որ Է.Ջամալյանը մտածել է, թե վերցնում է քրոջ պարտքի գումարը[3]:

32. Սույն որոշման 29-30-րդ կետերում ներկայացված կարգավորումների և իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել Ք.Ջամալյանի, Է.Ջամալյանի և Ա.Բաբայանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման ձայնագրությունները, իսկ դրանց՝ գործի լուծման տեսանկյունից ոչ բավարար լինելու հանագամանքը չեն հիմնավորել հստակ, որոշակի և համոզիչ հետևություններով: Այսպես՝ ստորադաս դատարանները պատշաճ չեն վերլուծել Ք.Ջամալյանի և Է.Ջամալյանի հեռախոսազրույցների բովանդակությունը, մասնավորապես Է.Ջամալյանի հայտնած մտահոգությունն առ այն, որ Ա.Բաբայանի հետ հանդիպելու է ոստիկանության բաժանմունքի մոտ, ապա դրան հաջորդած նրան այն հայտարարությունը, թե կասի, որ Ա.Բաբայանը գումարը պարտքով է տալիս, Է.Ջամալյանի հեռախոսով Ք.Ջամալյանի և Ա.Բաբայանի միջև փոխանցվելիք գումարի շուրջ խոսակցությունից անմիջապես հետո Ք.Ջամալյանի կողմից Է.Ջամալյանին նախատելն իր հետ հեռախոսով այդ հարցը քննարկելու համար, Ա.Բաբայանի հետ կրկին հանդիպելու և գումարի չփոխանցված մասի շուրջ խոսակցություն ունենալու մասին Ք.Ջամալյանի կողմից Է.Ջամալյանին տեղեկացնելը[4]:

[1] Տե՛ս *Արամայիս Հակոբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված որոշման 17.1-րդ կետը, mutatis mutandis, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված որոշման 32-րդ կետը, *Արսեն Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը:

[2] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

[3] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

[4] Տե՛ս սույն որոշման 5.5-րդ կետը:

33. Վերոշարադրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հիմնավորված չեն Է.Ջամալյանին մեղսագրված արարքում հանցակազմի բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

34. Հաշվի առնելով սույն որոշման 17-րդ, 24-րդ և 33-րդ կետերում արված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն ամբաստանյալներ Ք.Ջամալյանին և Ա.Այվազյանին առաջադրված մեղադրանքները վերաորակելու, իսկ ամբաստանյալ Է.Ջամալյանին առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

35. Այսպիսով, Առաջին ատյանի դատարանը, Ք.Ջամալյանի և Ա.Այվազյանի արարքները վերաորակելով, Է.Ջամալյանին առաջադրված մեղադրանքում արդարացնելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես, ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածը, ինչպես նաև խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում և քրեադատավարական օրենքի էական խախտում են, ուստի հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Ալեքսանդր Արտեմի Այվազյանի, Քրիստինա Ռաֆայելի Ջամալյանի և Էդգար Ռաֆայելի Ջամալյանի վերաբերյալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 1-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու

մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Ալեքսանդր Արտեմի Այվազյանի և Քրիստինա Ռաֆայելի Ջամալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված գրավը թողնել անփոփոխ:

3. Ամբաստանյալ Էդգար Ռաֆայելի Ջամալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

61. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0063/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի դեկտեմբերի 25-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Անդրիաս Մարատի Ղուկասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 5-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի հուլիսի 12-ին քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Անդրիաս Մարատի Ղուկասյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, 34-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 34-235-րդ հոդվածի 3-րդ մասով ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. 2017 թվականի դեկտեմբերի 19-ին ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով Ա.Ղուկասյանի նկատմամբ թույլատրելի ճանաչել այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը՝ սահմանելով դրա չափը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 23-ի որոշմամբ պաշտպանի միջնորդությունը մերժվել է:

3. Հիշյալ որոշման դեմ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մարտի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 23-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 19-ի դատական նիստի (ժամը 17:47-ից) արձանագրության համաձայն՝ նախագահող դատավորը հայտարարել է աշխատանքային օրվա ավարտի հետ կապված դատական նիստը սահմանափակելու մտադրության մասին: Պաշտպանական կողմը միջնորդել է մինչև դատական նիստը սահմանափակելն անդրադառնալ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառմանը: Նախագահող դատավորը հայտարարել է, որ դատական նիստը կսահմանափակի, քանի որ հաջորդ օրվանից գտնվելու է արձակուրդում և միջնորդությանն անդրադառնալ չի կարող՝ միաժամանակ հայտարարելով, որ հաջորդ դատական նիստը կկայանա տոներից հետո, երբ կվերադառնա արձակուրդից: Ի պատասխան պաշտպանի՝ դեռևս ժամանակ լինելու վերաբերյալ հայտարարության՝ նախագահող դատավորը հայտնել է, որ հաջորդ դատական նիստը կկայանա 2018 թվականի հունվարի 16-ին՝ նշված դատական նիստը հայտարարելով փակված[1]:

5.1. Նույն օրը՝ ժամը 17:56-ին ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանն այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարանի գրասենյակ[2]:

5.2 2018 թվականի հունվարի 16-ին նշանակված դատական նիստը չի կայացել և ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի միջնորդությունն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավի կիրառման վերաբերյալ քննության է առնվել 2018 թվականի հունվարի 23-ին[3]:

[1] Տե՛ս հավելված, հատոր 1-ին, դատական նիստի արձանագրության լազերային կրիչը, թերթ 45
[2] Տե՛ս հավելված, հատոր 1-ին, թերթ 12:
[3] Տե՛ս հավելված, հատոր 1-ին, թերթեր 91-102:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 23-ի որոշման համաձայն՝ *«(…) 2017 թվականի դեկտեմբերի 19-ին դատարանի գրասենյակ մուտքագրված և քննության առարկա հանդիսացող [այլընտրանքային հափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ] միջնորդությունում նշված բոլոր իրավական հիմքերը և փաստարկները նույնաբովանդակ են պաշտպան Կ.Մեժլումյանի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 10-ին դատարանին ներկայացված միջնորդությունում նշված իրավական հիմքերին, որոնցից զատ պաշտպան Կ.Մեժլումյանի կողմից նոր փաստարկներ կամ իրավական հիմքեր չեն նշվել:*

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ դեպքի կոնկրետ հանգամանքները, ամբաստանյալ Ա.Ղուկասյանին վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանականությունն առ այն, որ նա, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս ազատության մեջ մնալով (…) կարող է լուրջ վտանգ ներկայացնել հանրային կարգին և խոչընդոտել գործի քննությանը քրեական դատավարության մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Ամբաստանյալի հավանական վարքագծի վերաբերյալ դատարանի հետևությունը բխում է ինչպես սույն գործի հանգամանքներից, առաջադրված մեղադրանքների էությունից, այնպես էլ հիմքերից, որ գործի դատաքննությունը դեռևս նախնական փուլում է, գործով դեռևս չեն հարցաքննվել տուժողները, վկաների մեծ մասը և ազատության մեջ մնալով ամբաստանյալ Ա.Ղուկասյանը կարող է անօրինական ազդեցություն գործադրել դատավարության փխյալ մասնակիցների վրա, ուստի անդրադառնալով ամբաստանյալ Ա.Ղուկասյանի շահերի պաշտպան Կ.Մեժլումյանի միջնորդությանը՝ որպես կալանավորմանն այլընտրանքային հափանման միջոց գրավ կիրառելու մասին, դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման (…):

(…) [Մ]ատնդրադառնալով պաշտպան Կ.Մեժլումյանի կողմից առաջ քաշված այն հարցին, որ սույն միջնորդությունը պետք է քննության առնվեր անհապաղ, ապա դատարանը փաստում է, որ միջնորդությունը դատարանի գրասենյակ է ներկայացվել 2017 թվականի դեկտեմբերի 19-ին՝ ժամը՝ 17:56–ին, այսինքն՝ աշխատանքային օրվա ավարտին փխյալ օրվա դատական նիստից հետո, այն մուտքագրվել և նախագահող դատավորի աշխատակազմին է հանձնվել հաջորդ աշխատանքային օրը՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ին, երբ նախագահող դատավորը գտնվել է արձակուրդում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝ միջնորդությունները քննության են առնվում անհապաղ դատական նիստերի ընթացքում, ուստի դատարանը չէր կարող արձակուրդում գտնվելու ընթացքում արտադատարարանական կարգով անդրադառնալ դատարանի գրասենյակ ներկայացված միջնորդությանը, այդ իսկ պատճառով այն

քննության է առնվել առաջին իսկ դատական նիստում՝ 2018 թվականի հունվարի 23-ին»[1]:

7. Վերաքննիչ դատարանն իր՝ 2018 թվականի մարտի 5-ի որոշմամբ փաստել է. *«(...) Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի պատճառաբանությունների այն մասին, որ պաշտպանության կողմը 2017 թվականի դեկտեմբերի 19-ի դատական նիստին գրավոր միջնորդություն է ներկայացրել՝ Ա.Ղուկասյանին գրավով ազատ արձակելու մասին, դատարանը հրաժարվել է այն ընդունել, ուստի սրիպված է եղել նույն օրն այն դատարանին հանձնել՝ դատարանի գրասենյակ մուտք անելով, դատարանը միջնորդությունն անհապաղ քննության չի առել՝ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով երաշխավորված Ա.Ղուկասյանի իրավունքը, ապա [Վ]երաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 19-ի դատական նիստի ձայնային արձանագրության ուսումնասիրությունից երևում է, որ դատարանի կողմից ժամը 17:51-ին՝ աշխատանքային օրվա ավարտի հետ կապված, դատական նիստն ավարտելու ընթացքում պաշտպանը դիմել է դատարանին գրավի միջնորդությամբ, սակայն դատարանը հայտնել է, որ հաջորդ օրվանից գտնվելու է արձակուրդի մեջ, չի կարող անդրադառնալ պաշտպանի միջնորդությանը, նիստը նշանակել է 2018 թվականի հունվարի 16-ին՝ ժամը 12:00-ին:*

(...) Վերոգրյալի համատեքստում [Վ]երաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ Առաջին ատյանի դատարանը, գրասենյակ մուտքագրված պաշտպանի միջնորդությունը քննության առնելով առաջին իսկ դատական նիստում, դատական սխալ թույլ չի տվել:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը նշված հարցին արդեն իսկ անդրադարձել է՝ որոշմամբ արձանագրելով, որ միջնորդությունում նշված բոլոր իրավական հիմքերը և փաստարկները նույնաբովանդակ են պաշտպան Կ.Մեժլումյանի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 10-ին ներկայացված միջնորդությունում նշված իրավական հիմքերին, որոնցից զատ նոր փաստարկներ կամ իրավական հիմքեր չեն նշվել:

(...) Վերոշարադրյալ հիմքերով [Վ]երաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը որոշումը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան, այն չի հակասում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթներին, իսկ վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ որոշումը բեկանելու համար»[2]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի մայիսի 7-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի

[1] Տե՛ս հավելված, հատոր 1-ին, թերթեր 3-13:
[2] Տե՛ս հավելված, հատոր 1-ին, թերթեր 49-54:

պաշտպան Կ.Մեժլումյանի միջնորդությունը՝ ամբաստանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխելու մասին, բավարարվել է, և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել՝ չհեռանալու մասին ստորագրությունը[1]:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 136-րդ հոդվածների, 2007 թվականի ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի խախտումներ: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշման իրավական դիրքորոշումները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի գործով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ 2017 թվականի դեկտեմբերի 19-ին Առաջին ատյանի դատարան գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին միջնորդություն է ներկայացրել, որն այդ դատարանի կողմից չի ընդունվել՝ դատավորի՝ հաջորդ օրվանից արձակուրդում լինելու պատճառաբանությամբ: Ինչ վերաբերում է գրասենյակ մուտքագրված նույն միջնորդությանը, ապա Առաջին ատյանի դատարանն այն քննության է առել միայն 2018 թվականի հունվարի 23-ին: Բողոքի հեղինակն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Ղուկասյանին ազատ արձակելու հարցին անդրադարձել է նշված հարցին նախորդ անգամ անդրադառնալուց 3 ամիս 13 օր անց, որպիսի պայմաններում խախտվել է ամբաստանյալի անձնական ազատության իրավունքը:

10. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ իրավաչափ չէ գրավի կիրառման միջնորդությունը մերժելը նոր իրավական կամ փաստական հիմք ներկայացված չլինելու պատճառաբանությամբ:

11. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպան Կ.Մեժլումյանը խնդրել է բեկանել և վերացնել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 5-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ, այն է՝ ճանաչել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտման փաստը և Ա.Ղուկասյանի նկատմամբ թույլատրելի ճանաչել այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերի դեմ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի

[1] Տե՛ս հավելված, հատոր 1-ին, թերթեր 103-109:

պաշտպան Կ.Մեժլումյանի վճռաբեկ բողոքը քննության առնելը պայմանավորված է ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության ընթացքում կայացրած որոշման իրավաչափությունը Վերաքննիչ դատարանի կողմից քննության առարկա դարձնելու հանգամանքով[1], ինչպես նաև դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքն ապահովելու և մարդու իրավունքների ու ազատությունների առերևույթ հիմնարար խախտումն արձանագրելու անհրաժեշտությամբ: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ անձին ազատությունից զրկելու իրավաչափության վերաբերյալ սեղմ ժամկետում դատարանի կողմից որոշում կայացնելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

12.1. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի կողմից արդյո՞ք ապահովվել է ազատությունից զրկելու իրավաչափության վերաբերյալ սեղմ ժամկետում որոշում ստանալու՝ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի իրավունքը:

13. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:*

(…)»:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:*

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: (…)»:*

[1] Կալանավորումը չփոփոխելու մասին առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության ընթացքում կայացված որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու առումով մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հևոն Սողոմոնյանի* վերաբերյալ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0274/01/15 որոշումը:

ՀՀ Սահմանադրության 27-րդ և Կոնվենցիայի 5-րդ հոդվածներով նախատեսված է անձի՝ իրեն ազատությունից զրկելը դատական կարգով վիճարկելու իրավունքը: Սույն իրավունքի ապահովման երաշխիքներից՝ կալանքի տակ պահելու իրավաչափությունը դատական քննության ընթացքում ստուգման ենթարկելու առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանքի տակ գտնվող ամբաստանյալը կարող է որոշակի պարբերականությամբ վիճարկել իրեն կալանքի տակ պահելու իրավաչափությունը, ինչն առաջ է բերում դատարանի՝ դրա վերաբերյալ սեղմ ժամկետում դատական ակտ կայացնելու պարտականությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա դատական ակտը սեղմ ժամկետում կայացնելու երաշխիքը բովանդակում է երկու բաղադրիչ՝

- համապատասխան միջնորդությունը սեղմ ժամկետում քննության առնելու պահանջը (եթե այդպիսի միջնորդությունը ներկայացվում է դատական նիստի ընթացքում, ապա այն ենթակա է անհապաղ քննության),

- այդպիսի միջնորդության քննության արդյունքներով սեղմ ժամկետում դատական ակտ կայացնելու և այն շահագրգիռ անձին տրամադրելու պահանջը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատական քննության ժամանակ նշված գործողությունները սեղմ ժամկետում կատարելու պահանջը չի կարող կամայական գնահատման ենթարկվել. յուրաքանչյուր դեպքում դատարանները պետք է հաշվի առնեն ռիսկի գործոնը՝ նկատի ունենալով, որ բարձրացված հարցը վերաբերում է անձի ազատության իրավունքին, մասնավորապես՝ անազատության մեջ պահելու իրավաչափությանը: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ստուգման ժամանակահատվածը պետք է պայմանավորված լինի օբյեկտիվ բնույթի գործոններով. սեղմ ժամկետում դատական ստուգում չիրականացնելը չի կարող արդարացվել այնպիսի հանգամանքներով, որոնց հիմքում ընկած շահը ստորադաս է անձնական ազատության՝ որպես հիմնարար իրավունքի ապահովումը երաշխավորելու անհրաժեշտության նկատմամբ:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) **2017 թվականի դեկտեմբերի 19-ի** դատական նիստի ավարտին նախորդող ժամանակահատվածում՝ **ժամը 17:47-ին**, պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ[1],

բ) դատական նիստը նախագահող դատավորը հայտնել է, որ աշխատանքային օրն ավարտվում է, հաջորդ օրվանից գտնվելու է արձակուրդում, ուստի միջնորդությանը չի կարող անդրադառնալ, իսկ հաջորդ դատական նիստը կկայանա **2018 թվականի հունվարի 16-ին**, երբ

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

կվերադառնա արձակուրդից[1],

գ) 2018 թվականի հունվարի 16-ին նշանակված դատական նիստը չի կայացել և ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի՝ միջնորդությունը այլընտրանքային խափանման միջոց՝ գրավի կիրառման վերաբերյալ քննության է առնվել **2018 թվականի հունվարի 23-ին**[2]**,**

դ) Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 23-ի որոշմամբ՝ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին ամբաստանյալ Ա.Ղուկասյանի պաշտպան Կ.Մեժլումյանի միջնորդությունը մերժվել է, ի թիվս այլոց, իրավական և փաստական հիմքերով պաշտպանության կողմի 2017 թվականի հոկտեմբերի 10-ին ներկայացված միջնորդությանը նույնաբովանդակ լինելու և որևէ նոր հիմք չներկայացնելու պատճառաբանությամբ[3]**,**

ե) Վերաքննիչ դատարանն իր հերթին, մերժելով վերաքննիչ բողոքը, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեադատավարական օրենսդրության, Կոնվենցիայի դրույթների խախտումներ[4]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի իրավունքների խախտման բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման չի արժանացրել այն, որ ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է 2017 թվականի դեկտեմբերի 19-ին, իսկ Առաջին ատյանի դատարանը ներկայացված միջնորդությունը քննության է առել և որոշում կայացրել 2018 թվականի հունվարի 23-ին:

Հաշվի առնելով այն, որ ներկայացված միջնորդությունն իր բնույթով այնպիսին է, որ պահանջում է քննության առնելու անհապաղություն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում միջնորդության ներկայացման պահից մեկ ամսից ավելի ժամկետում դատական ստուգում չիրականացնելը չի կարող արդարացվել այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են այդպիսի միջնորդությունը դատական նիստի ընթացքում, սակայն աշխատանքային օրվա ավարտին նախորդող ժամանակահատվածում ներկայացնելը և հաջորդ օրվանից դատավորի՝ արձակուրդում գտնվելը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձին անազատության մեջ պահելու իրավաչափության հարցը մեկ ամսից ավելի ժամկետում չքննարկելն

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը:
[3] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

այդպիսի հանգամանքներով պայմանավորելը չի կարող ծառայել որպես օբյեկտիվ հիմք՝ գերակայելով անձնական ազատության՝ որպես հիմնարար իրավունքի ապահովումը երաշխավորելու անհրաժեշտության նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում Առաջին ատյանի դատարանի կողմից չի ապահովվել ազատությունից զրկելու իրավաչափության վերաբերյալ սեղմ ժամկետում որոշում ստանալու՝ ամբաստանյալ Ա.Ղուկասյանի իրավունքը:

15.1. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացրած փաստարկին, ապա Առաջին ատյանի դատարանի դատողությունների՝ իրենց ամբողջության մեջ վերլուծությունից բխում է, որ գրավի կիրառման միջնորդության մերժման հիմքում դրվել է այն, որ միջնորդությունում նշված բոլոր իրավական հիմքերը և փաստարկները նույնաբովանդակ են եղել նախկինում ներկայացված միջնորդության մեջ մատնանշված պատճառաբանություններին, և դրանցից զատ նոր փաստարկներ կամ իրավական հիմքեր չեն նշվել: Ավելին՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս ոչ թե բավարարվել է վերը մատնանշված հանգամանքների արձանագրմամբ, այլ ներկայացրել է նաև համապատասխան հիմնավորումներ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը չկիրառելու վերաբերյալ:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի պահանջների խախտում: Սակայն, հաշվի առնելով, որ Ա.Ղուկասյանն ազատ է արձակվել[1], Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և սույն գործով ճանաչել ամբաստանյալ Ա.Ղուկասյանի իրավունքների խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

[1] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

2. Ճանաչել ամբաստանյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի իրավունքների խախտման փաստը:

3. Ամբաստանյալ Անդրիաս Մարատի Ղուկասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 5-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

62. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0023/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնփակ դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշման դեմ մեղադրյալ Ռուբեն Սարիբեկի Աղաբաբյանի պաշտպան Ս.Խչեյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում 2017 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13118117 քրեական գործը:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնում 2017 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 10850617 քրեական գործը, որը 2017 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ միացվել է թիվ 13118117 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 13118117 համարի ներքո:

1.1 ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում 2017 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13118417 քրեական գործը, որը 2017 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ միացվել է թիվ 13118117 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 13118117 համարի ներքո:

1.2 ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում 2017 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13118817 քրեական գործը, որը 2017 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ միացվել է թիվ 13118117 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 13118117 համարի ներքո:

1.3 Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ թիվ 13118117 քրեական գործով Ռուբեն Աղաբաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Ռ.Աղաբաբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ Ռ.Աղաբաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով:

2. Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ մեղադրյալ Ռ.Աղաբաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշմամբ մեղադրյալ Ռ.Աղաբաբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ Ռ.Աղաբաբյանի պաշտպան Ս.Խչեյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունվարի 31-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ռ.Աղաբաբյանի պաշտպան Ս.Խչեյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ռ.Աղաբաբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(…) [անչափահաս տարիքում] ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2017 թվականի հոկտեմբերի 24-ի ժամը 21:00-ից մինչև հոկտեմբերի 25-ը՝ ժամը 13:00-ն ընկած ժամանակահատվածում տեխնիկական միջոցի գործադրմամբ բացելով Երևան քաղաքի Վարդանանց 5 հասցեում գործող «Արմեն Սարկիսյան» Ա/Ձ-ին պատկանող, շինություն հանդիսացող դաջվածքի սրահի մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել և գաղտնի հափշտակել խոշոր չափերով՝ ընդհանուր 4000 ԱՄՆ դոլարին համարժեք 1.929.120 ՀՀ դրամ արժողության համակարգչային սարքավորումներ. «Պլեյստեյշն 4» տեսակի համակարգիչ, 3 հատ մազահեռացման սարքավորում:*

Բացի այդ, Ռ.Աղաբաբյանը սույն թվականի հոկտեմբերի 26-ի ժամը 22:00-ից մինչև հոկտեմբերի 27-ը՝ ժամը 09:00-ն ընկած ժամանակահատվածում ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ ապօրինի մուտք է գործել շինություն հանդիսացող Երևան քաղաքի Աբովյան 60 հասցեում գործող «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությանը պատկանող դեղատուն, որտեղից գաղտնի հափշտակել է 75.000 ՀՀ դրամին համարժեք թվով 3 հատ ճնշման սարքավորում, 7.000 ՀՀ դրամին համարժեք «Ալկապել» մոդելի բջջային հեռախոս 7.500 ՀՀ դրամին համարժեք «Օրբիթ» տեսակի մապուկներ և 1.000.000 ՀՀ դրամին համարժեք տարբեր ապրանքանիշերի ակնոցներ՝ պատճառելով խոշոր չափի՝ ընդհանուրը՝ 1.082.500 ՀՀ դրամի նյութական վնաս:

[Բացի այդ, Ռ.Աղաբաբյանը] շինություն ապօրինի մուտք գործելու եղանակով, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորության շուրջ, նախնական համաձայնության գալով գործով չպարզված 3 անձանց հետ՝ 2017 թվականի հոկտեմբերի 21-ին՝ ժամը 05:20-ի սահմաններում, իր մոտ գտնվող մետաղյա գործիքի գործադրմամբ բացել է Անահիտ Սլավիկի Գրիգորյանին պատկանող՝ Երևան քաղաքի Հալաբյան 5/2 հասցեում գտնվող մթերային խանութի եվրոպարտադրության մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել ներս, որտեղ ծխախոտների վաճառքի ցուցափեղկից գաղտնի հափշտակել է 354.500 ՀՀ դրամ արժողության

տարբեր ապրանքանիշերի և տեսակի ծխախոտներ, ինչպես նաև ընդհանուրը 5.000 ՀՀ դրամ արժողության թվով 25 հատ կրակայրիչներ, 60.000 ՀՀ մետաղադրամներ, 80.000 ՀՀ դրամ արժողության կոնֆետներ և մեկ հայելի՝ 1.700 ՀՀ դրամ արժողության, Անահիտ Գրիգորյանին պատճառելով խոշոր չափի՝ 501.200 ՀՀ դրամի գույքային վնաս»[1]:

6. Կալանավորման ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշման համաձայն՝ *«(...) Դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում առկա է վերագրված արարքին մեղադրյալ Ռ.Աղաբաբյանի առնչությունը հաստատող փոխկապակցված ապացույցների բավարար ամբողջություն, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնից ստացված 2017թ. հոկտեմբերի գրության, կասկածյալ Ռուբեն Աղաբաբյանի լրացուցիչ հարցաքննության 2017թ. նոյեմբերի 14-ի արձանագրության, կասկածյալ Ռուբեն Աղաբաբյանի լրացուցիչ հարցաքննությունների 2017թ. նոյեմբերի 15-ի արձանագրությունների, վկա Հայկ Ղազարյանի հարցաքննության 2017թ. հոկտեմբերի 30-ի արձանագրության, դեպքի վայրի զննության 2017թ. նոյեմբերի 15-ի արձանագրության, Ռուբեն Աղաբաբյանի բնակարանի խուզարկության 2017թ. հոկտեմբերի 31-ի և 2017թ. նոյեմբերի 7-ի արձանագրությունների, հեռախոսազանգերի վերծանումները զննելու մասին արձանագրության պատճենները:*

Սույն միջնորդությունը բավարարելիս Դատարանը նաև հաշվի է առնում այն, որ պահպանվում են մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանին կալանքի տրակ պահելու հիմքերը, այն է՝ թեև վերագրված արարքները կատարելու պահին չի լրացել Ռ.Աղաբաբյանի 18-ամյակը, սակայն նրան մեղսագրվում է ըստ բնույթի և վտանգավորության ապտիճանի միջին ծանրության հանցագործությունների կատարում, որոնց համար օրենքը պատիժ է նախատես[ում] նաև ազատազրկման ձևով՝ 2-ից 5 տարի ժամկետով: Նման պայմաններում բարձր է ռիսկայնությունն առ այն, որ հայտնվելով ազատության մեջ՝ մեղադրյալ Ռ.Աղաբաբյանը կարող է կատարել քրեական օրենքով արգելված նոր արարքներ, խուսափել վարույթն իրականացնող մարմնից և քրեական պատասխանատվությունից, ինչպես նաև խոչընդոտել արդարադատության իրականացմանը՝ անօրինական ազդեցություն գործելով վարույթի մասնակիցների նկատմամբ:

Սույն միջնորդությունը բավարարելիս Դատարանը հաշվի է առնում նաև այն, որ թեև մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանն անազատության մեջ է 2017թ. նոյեմբերի 13-ից, նախաքննական մարմինը բարդ և մեծածավալ քրեական գործով դրսևորել է անհրաժեշտ ջանասիրություն՝ կատարելով վերը նշված քննչական և դատավարական գործողությունները:

Դատարանը նաև փաստում է որ մեղադրյալ Ռ.Աղաբաբյանի անձը

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 19-20:

դրականորեն բնութագրող փվյալները (որի վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվել են սույն միջնորդության քննարկման ժամանակ) քննիչի հարուցած միջնորդությունը մերժելու բավարար և հիմնավոր փաստարկներ չեն, նրա պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել վերջինիս նկատմամբ առավել խիստ վերոնշյալ խափանման միջոցը՝ կալանավորումն ընտրելու (երկու ամսով երկարացնելու) պայմաններում (...)»[1]:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշման համաձայն՝ *«Անդրադառնալով մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանի՝ (...) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործի նյութերում առկա փաստական տվյալներն ու տեղեկություններն (այդ թվում նաև՝ կասկածյալ Ռուբեն Աղաբաբյանի լրացուցիչ հարցաքննությունների, վկա Հայկ Ղազարյանի հարցաքննության, դեպքի վայրի զննության, խուզարկություն (առգրավում) կատարելու մասին արձանագրությունների լուսապատճենները) իրենց համակցությամբ վարույթի տվյալ փուլի համար՝ ողջամտորեն բավարար են շարունակելու հիմնավորված համարել՝ Ռուբեն Աղաբաբյանի առնչությունն իրեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով մեղսագրվող ենթադրյալ հանցագործություններին (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած):*

(...) Անդրադառնալով մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության կամ բացակայության հարցին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ռուբեն Աղաբաբյանին մեղսագրվող հանցագործությունների բնույթը, քանակը, դրանց վրանգավորության աստիճանը, կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, սպառնացող հնարավոր պատժի խստությունը, համակցության մեջ մեծացնում են հավանականությունն առ այն, որ մնալով ազատության մեջ՝ նա կարող է խուսափել վարույթն իրականացնող մարմնից, կրկին կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Վերը շարադրվածից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս կալանավորման հիմքերի առկայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավոր է, դրա հետ չհամաձայնելու հիմքեր չկան:

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 209-210:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ գործում չկան այնպիսի ապացույցներ, որոնք կհիմնավորեին, որ ազատության մեջ լինելու դեպքում մեղադրյալը կարող է կատարել քրեական օրենքով արգելված նոր արարքներ, խուսափել վարույթն իրականացնող մարմնից և քրեական պատասխանատվությունից, ինչպես նաև խոչընդոտել արդարադատության իրականացմանը՝ անօրինական ազդեցություն գործելով վարույթի մասնակիցների նկատմամբ, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա, և ոչ միայն արդեն իսկ կատարված գործողությունները հավաստող փաստերի վրա: Բացի այդ, տվյալ դեպքում մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանի ազատության մեջ լինելու դեպքում վերջինիս հավանական գործողությունների և մասնավորապես՝ քրեական օրենքով արգելված նոր արարքներ կատարելու վտանգի մասին հետևությունը հիմնված է նաև մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանի կողմից մի քանի նույնական հանրորեն վտանգավոր արարքներ ենթադրաբար կատարած լինելու փաստի վրա:

(...)

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ թեև մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանն անչափահաս է, սակայն հիմք ընդունելով վերոհիշյալը, ևս գտնում է, որ նախաքննության տվյալ փուլում մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել միայն նրա համար ծայրահեղ հանդիսացող կալանավորում խափանման միջոցի կիրառմամբ:

Ամփոփելով (...) [վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտումներ, ուստի կայացված դատական ակտը բեկանելու որևէ իրավաչափ հիմք չկա: Հետևաբար՝ այն պետք է թողնել օրինական ուժի մեջ (...)»[1]:

8. 2018 թվականի ապրիլի 16-ին Ռ.Աղաբաբյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

[1] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 25-27:

9. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ երաշխավորված մի շարք իրավունքներ և սկզբունքներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որպիսի պարագայում կայացված որոշումը ենթակա է բեկանման:

10. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերում բացակայում են փաստական տվյալներ մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցագործությունները կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ:

11. Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, կալանավորման ժամկետը երկարացնելով, իսկ Վերաքննիչ դատարանն այն օրինական ուժի մեջ թողնելով, պատշաճ չեն գնահատել գործով ձեռք բերված նյութերը, անչափահաս տարիքում ենթադրաբար հանցանք կատարած մեղադրյալ Ռ.Աղաբաբյանին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը՝ անտեսելով «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշումը՝ մեղադրյալ Ռ.Աղաբաբյանին անհապաղ ազատ արձակելով կալանքից:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված բողոքում բարձրացվել են ըստ էության երկու իրավական հարցեր, որոնցից առաջինը վերաբերում է մեղադրյալ Ռ.Աղաբաբյանի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առնչությամբ ստորադաս դատարանների դատական ակտերի պատճառաբանվածությանը: Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի ներկայացրած փաստարկը[1] հիմնավոր չէ՝ հաշվի առնելով, որ Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հունվարի 9-ի և Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հունվարի 31-ի որոշումներով գործի փաստական տվյալների վկայակոչմամբ պատճառաբանել են մեղադրյալ Ռ.Աղաբաբյանին մեղսագրվող արարքների կատարման հիմնավոր կասկածի առկայությունը[2]:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցին՝ անչափահաս տարիքում ենթադրաբար հանցանք կատարած մեղադրյալ Ռ.Աղաբաբյանին կալանքի տակ պահելու անհրաժեշտության գնահատման վերաբերյալ, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անչափահաս տարիքում ենթադրաբար հանցանք

[1] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

[2] Տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը:

կատարած անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս կամ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս հաշվի առնվող հանգամանքների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք անչափահաս տարիքում ենթադրաբար հանցանք կատարած Ռ.Աղաբաբյանի՝ ազատության իրավունքի սահմանափակման անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անչնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած (…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի [է] առնվում (…) տարիքը (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«[Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները սահմանող] գլխի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածի համաձայն՝ *«Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում»:*

16. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել է քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Այսպես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս էական նշանակություն ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հանգամանքների գնահատումը[1], որոնց շարքին է դասվում նաև անձի տարիքը:

17. Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հաշվի առնելով անչափահաս մեղադրյալների կյանքի և դաստիարակության պայմանները, ծնողների հետ ունեցած հոգեբանական փոխկապվածությունը, հոգեկան զարգացվածության աստիճանը, ընդհանուր զարգացման և առողջական վիճակը՝ նրանց մասնակցությամբ քրեական վարույթն անցկացվում է հատուկ իրավական երաշխիքների ապահովմամբ: Դրանց համատեքստում իր հիմնարար բնույթով առանձնանում է անչափահաս մեղադրյալի ազատության իրավունքի պաշտպանությունը, որի գերակայությունից ելնելով անչափահասի վարքագծի պատշաճությունն ապահովելու նպատակով սահմանվում է կալանավորումը որպես ծայրահեղ միջոց կիրառելու պահանջը:

18. Մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված պահանջների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել բացառիկ դեպքերում, երբ այլընտրանքային միջոցների կիրառմամբ հնարավոր չէ երաշխավորել մեղադրյալի վարքագծի պատշաճությունը:

Այսպես, «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն՝ *«Մասնակից պետություններն ապահովում են, որ. (...) ոչ մի երեխա չզրկվի ազատությունից անօրինական կամ կամայական*

[1] Տես *Ասլան Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշում, կետեր 24, 26:

կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ ազատազրկումն իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում են միայն որպես ծայրահեղ միջոց և որքան հնարավոր է՝ կարճ ժամանակամիջոցով (...)»[2]:

Բացի այդ, «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 13.1-րդ կետի համաձայն՝ *«[Անչափահասներին] մինչև դատը կալանքի տակ պահելը կիրառվում է միայն որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակաընթացքի համար»* [1]:

Նույն կանոնների 13.2-րդ կետի համաձայն՝ «*Մինչև դատը կալանքի տակ պահելը հնարավորին չափ փոխարինվում է այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են մշտական հսկողությունը, դաստիարակչական ակտիվ աշխատանքը կամ ընտանիքում, դաստիարակչական հաստատություններում կամ ուղղիչ տանը տեղավորելը*»[2]:

Բացի այդ, «Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնների («Հավանայի կանոններ») 13-րդ կետի համաձայն՝ «*(...) Ինչքանով հնարավոր է անհրաժեշտ է խուսափել մինչև դատավճռի կայացումը անչափահասին կալանքի տակ պահելուց և ապավինել դրան միայն բացառիկ դեպքերում: Այդ պատճառով ամեն եղանակով պետք է ձգտել այլընտրանքային միջոցներ կիրառելուն (...)*»[3]:

18.1 Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական պահանջները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում ևս նշել է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս խիստ կարևոր հանգամանք է մեղադրյալի տարիքը, անչափահաս մեղադրյալների նկատմամբ մինչդատական կալանքը կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամանակահատվածով [4]:

19. Սույն որոշման 17-18.1-րդ կետերում վկայակոչված պահանջների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական

---

[2] Տես *«Երեխաների իրավունքների մասին»* Նյու-Յորքի 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1992 թվականի հունիսի 1-ին) 37-րդ հոդվածը:

[1] Տես *«Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ»* ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (*«Պեկինյան կանոններ»*), Գլխավոր ասամբլեայի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձև, կետ 13.1:

[2] Տես նույն տեղում, կետ 13.2:

[3] Տես *«Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ»* ՄԱԿ-ի կանոններ (*«Հավանայի կանոններ»*), Գլխավոր ասամբլեայի՝ 1990 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 45/113 բանաձև, կետ 13:

[4] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Selçuk v. Turkey* գործով 2006 թվականի հունվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 21768/02, կետեր 35-36, *Nart v. Turkey* գործով 2008 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 20817/04, կետեր 31, 33, *Korneykova v. Ukraine* գործով 2012 թվականի հունվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ 39884/05, կետ 44:

վարույթի ընթացքում անչափահաս մեղադրյալի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել բացառիկ դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքներով կիերքվի այլընտրանքային միջոցներով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը չեզոքացնելու հնարավորությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ չափահաս մեղադրյալների համեմատ անչափահասների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս պահանջվում է առավել ծանրակշիռ փաստական հանգամանքների համակցություն, որը համոզիչ կերպով կհիմնավորի անչափահաս մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու կանխավարկածը հաղթահարելու անհրաժեշտությունը: Այդ համատեքստում դատարաններն անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը գնահատելիս գործի շրջանակներում պետք է հաշվի առնեն սույն որոշման 17-րդ կետում թվարկված՝ անչափահասին հատուկ իրավական երաշխիքներ տրամադրելու հիմքում ընկած պայմանները, ինչպես նաև հիմնավորեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում մատնանշված՝ կալանավորման հիմքերի կանխատեսելիության առավել բարձր աստիճանը: Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանավորման հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի դատողությունները չեն կարող հիմնված լինել միայն մեղսագրվող հանցագործության բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի գնահատման վրա, այլ անչափահասի անձը բնութագրող տվյալների հաշվառմամբ և կոնկրետ փաստական հանգամանքների վկայակոչմամբ պետք է հիմնավորեն անչափահասին կալանքի տակ պահելու բացարձակ անհրաժեշտությունը:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Աղաբաբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել անչափահաս տարիքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված միջին ծանրության հանցանքների կատարման համար[1]:

2017 թվականի նոյեմբերի 16-ին մեղադրյալ Ռ.Աղաբաբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հունվարի 9-ի որոշմամբ երկարացնելով Ռ.Աղաբաբյանի կալանավորման ժամկետը, ի թիվս այլոց, արձանագրել է, որ պահպանվում են մեղադրյալ Ռուբեն Աղաբաբյանին

[1] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

կալանքի տակ պահելու հիմքերը: Դատարանը նշել է, որ թեև հանցավոր արարքները կատարելու պահին չի լրացել մեղադրյալի 18 տարին, նրա անձը դրական է բնութագրվում, սակայն նրան մեղսագրվում է ըստ բնույթի և վտանգավորության աստիճանի միջին ծանրության հանցագործությունների կատարում, որոնց համար օրենքը պատիժ է նախատեսում նաև ազատազրկման ձևով՝ 2-ից 5 տարի ժամկետով: Նման պայմաններում, ըստ դատարանի, բարձր է ռիսկայնությունն առ այն, որ հայտնվելով ազատության մեջ՝ մեղադրյալ Ռ.Աղաբաբյանը կարող է կատարել քրեական օրենքով արգելված նոր արարքներ, խուսափել վարույթն իրականացնող մարմնից և քրեական պատասխանատվությունից, ինչպես նաև խոչընդոտել արդարադատության իրականացմանը՝ անօրինական ազդեցություն գործելով վարույթի մասնակիցների նկատմամբ[1]:

Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հունվարի 31-ի որոշմամբ իր համաձայնությունը հայտնելով Առաջին ատյանի դատարանի եզրահանգումների հետ՝ նշել է, որ Ռ.Աղաբաբյանին մեղսագրվող հանցագործությունների բնույթը, քանակը, դրանց վտանգավորության աստիճանը, կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, սպառնացող հնարավոր պատժի խստությունը համակցության մեջ մեծացնում են հավանականությունն առ այն, որ մնալով ազատության մեջ՝ նա կարող է խուսափել վարույթն իրականացնող մարմնից, կրկին կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք՝ պայմանավորված մի քանի նույնական հանրորեն վտանգավոր արարքներ ենթադրաբար կատարած լինելու փաստով, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ չնայած մեղադրյալ Ռ.Աղաբաբյանն անչափահաս է, սակայն նախաքննության տվյալ փուլում մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել միայն նրա համար ծայրահեղ հանդիսացող կալանավորում խափանման միջոցի կիրառմամբ[2]:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-19-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև ստորադաս դատարաններն արձանագրել են, որ հաշվի են առնում, որ Ռ.Աղաբաբյանին մեղսագրվում են անչափահաս տարիքում ենթադրաբար կատարված միջին ծանրության հանցանքներ և վերջինս օգտվում է անչափահասների համար սահմանված իրավական

[1] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[2] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

երաշխիքներից, այնուամենայնիվ Ռ.Աղաբաբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս չեն մատնանշել որևէ ծանրակշիռ փաստական հանգամանք, որը համոզիչ կերպով կհիմնավորեր նրա՝ ազատության մեջ գտնվելու կանխավարկածը հաղթահարելու անհրաժեշտությունը: Դատարանները չեն գնահատել սույն որոշման 17-րդ կետում թվարկված՝ անչափահասին հատուկ իրավական երաշխիքներ տրամադրելու հիմքում ընկած պայմանները, չեն հիմնավորել կալանավորման հիմքերի կանխատեսելիության առավել բարձր աստիճանը, այլ հիմք են ընդունել բացառապես մեղսագրվող միջին ծանրության հանցագործությունների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Ավելին, արձանագրելով, որ մեղսագրվող հանցագործությունների համար օրենքը որպես պատիժ է նախատեսում նաև ազատազրկման ձևով՝ 2-ից 5 տարի ժամկետով, Առաջին ատյանի դատարանն ուշադրության չի արժանացրել այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասի նկատմամբ միջին ծանրության հանցագործության համար նշանակվող ազատազրկման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել երեք տարին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ անչափահաս տարիքում ենթադրաբար հանցանք կատարած Ռ.Աղաբաբյանի՝ ազատության իրավունքի սահմանափակման անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

22. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ Ռ.Աղաբաբյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության համար ուղարկված է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[1], ուստի բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք եղել են ժամանակավոր և կորցրել իրենց իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

[1] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Ռուբեն Սարիբեկի Աղաբաբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

2018 թվական

Հատոր X

Թուղթը՝ օֆսետ: Չափսը՝ 60x84/16:
Տպագրական 59.5 մամուլ:
Տպաքանակ՝ 500:

Կոմպյուտեր Սերվիս

COMPUTERS